



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

**You are free to:**

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԻԺ, ԿՈՆՏ-ԹԻՂՈՅՄ ԳՐԱՐԱՆ

101

№ 101

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈԲՅԱՆ - ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ.

ԹԻՖԼԻՍ

Ի Գրոց, Հարսույնեպի, Մե-րոյժե-տե-րէ-լ:

19 NOV 2010 20

Հրատարակ. Ս. Յարութիւնեանի գրավանս.

№ 4.

891.85

Տ. ԵՏ.

101

Ե-24 սր.

# ԼՈՒՍԵՂԻՄԻՆ

Թարգ. Մ. Բարխուդարեանի.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԵՂՐՈՒԹԻՒՆ



Բ Ա Վ Ո Ւ

Տպարան Ս. Անսօնեանցի:

1904



Handwritten purple notes on the left page.

Handwritten purple notes on the left page.

Handwritten purple notes on the left page.

Handwritten purple notes on the left page.

05.04.2013

16004



ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՅ.


ՄԻՍԿԻՆԻՍԻԱՆ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 17 окт. 1903 г.



3496  
40

Մեր վեպիկը վերաբերում է Բուդդայի վերածնության մեզ ժամանակակից շրջանին: Այդ պատճառով էլ հեղինակը սխալում էրա կամ հրաժարու էր պատմական իրողությունների ճշգրիտ նկարագրությանից, կամ հանդիս հանել էր բերել միևնույն պայմանում ունեցող անձնաւորություններ: Մանաւանդ վերջինից կանեաւորով խոյս տալ, մեկի օգուտ քաղելիս պատմությանից, առնելով միայն պատկերի գունը, էւ աշխատեցանիս, որքան հրեւար էր, ճշգրիտ կերպով դուրս բերել յայնի պատմական ժամանակակիցի վիճակը: Գործող անձինքներից մի քանիսը պատմական իրողութեան, ծնունդ ալն պայմանների մէջ, որոնց շնորհիւ վաղուց արդէն մոռացուած էր սրում ազգը յանկարծ երեւան էր գալիս քաղաքական կեանքում: Մեր վեպիկում գործիչներն ուր տեղի անունները փոփոխում են: Հեղինակը գիտաւորապէս կանեաւոր պահպանել տեղական գոյնը, պատկերացնել մի անբող պատմական շրջանի ներքին կողմը, իսկ նոյն հետ ծանօթանալով անհետաքրքրական չի լինիլ, քանի որ խօսքը մեզ ազգակից ժողովրդի մասին է: Հեղինակը կարեւոր հանարեց դնել այս մի քանի տողը իւր վեպիկի սկզբում ընթերցողին նախազգուշացնելու համար. բո՛ղ նա չորոնէ վեպիկիս մէջ ո՛չ պատմական, ո՛չ էլ քանսագիտ. հեղինակը միայն տալիս է այն շարժման ընդհանուր պատկերը, որ տեղի ունեցաւ բուդդայական ազգի մէջ իւր հիւնդ դարուայ ինից արքանաւորը շուտաքաղի:



*Faint, mostly illegible Armenian text, likely bleed-through from the reverse side of the page.*



ԼՈՒՍԱԴԻՄԻՆ

I.

Տիեառուսալ Իգորեւիչը մի ժամանակ խիստ  
հաւանում էր Բուլղարիան: Եւ դա զարմանալի  
չէ. Եւրոպայի ամենասիրուն տեղերից մէկն է նա:  
Բալկանեան լեռների երկու սարրոտների վերայ  
է փռւած՝ մի կողմից—դէպի Էգէյեան ծովը,  
միւս կողմից—դէպի Գանուր գետը: Անկանոն  
աստիճաններով է ցած իջնում, այնպէս որ եր-  
բեմն բլուրներ, երբեմն էլ ահադին լեռնադաշ-  
տակներ և հովիտներ են երևան գալիս, ուր կար-  
կաչելով առուններ ու վտակներ են հոսում: Ազ-  
բիւրները կարկաչում են, լեռնային վտակները  
փրփրապատ հոսում են քարերի միջից, մինչև  
որ հեզասահ գետակ են դառնում: Այդպիսի  
գետակներից մէկի անունն է Եանտրա: Նա իւր  
սկիզբն առնում է Շիպկա անցքի մօտ, որ այն-  
քան հոշակուեցաւ վերջին պատերազմի ժամա-  
նակ, և ահա այդ գետակի ափին երկու քա-  
ղաք հաստատուեցան, որ մեծ նշանակութիւն  
ունին Բուլղարիայի համար. առաջինն է Տրոնո-  
վօ, Բուլղարիայի նախկին մայրաքաղաքը. իսկ  
երկրորդը, Տրոնովոյից փոքր ինչ վեր, սարերի

մէջ, — Գաբրիօ, մտաւոր շարժման կենտրոնն ու մայրաքաղաքը, ուր երկարատե քնից յետոյ առաջին անգամ արթնացան: Եանտրան, ալ ու ձախ կողմից բազմաթիւ ճիւղեր ունենալով, թափվում է Դանուբ գետը՝ Սիստովոյից փոքր ինչ ստորեւ, Սիստովոյից Ռուչչուկ տանող ճանապարհի երրորդ մասի չափ տարածութեամբ հեռու:

Նրջակայ տեղերի համար Եանտրան կարևոր նշանակութիւն ունի: Նորա հովտի միջով է անցնում Բալկանից Կազանլըկ, Էսքի-Չագրու և ապա Ազրիանուպոլիս տանող ճանապարհը: Գետաբերանի մօտ կարում է նորան փոստի ճանապարհը, որ միաւորում է Ռուչչուկ, Սիստովո, Նիկոպոլի, Ռագուօ, երկու Պալանկա և Վիդզին քաղաքները: Այս տեղ տաճիկները շինել են մի քարէ կամուրջ, և մի ցինցար էլ հիմնել է մեխանէ (կայարան). մի քանի մարդ էլ շինել են այս տեղ խրճիթներ. այսպէս կազմուել է մի շէն, որ ստացել է Կրիվենա անունը: Այս անունը չեն տուել, այլ ինքն իրեն է ստացուել երևի, նորա համար, որ այս տեղ ճանապարհը ծովում է, կամ նորա համար, որ այս տեղ, կարծես, լեռներն այլանդակուած են, բայց և կարող է լինել նորա համար, որ ինքն Եանտրա գետը՝ կամրջից ցած, ծովում է գէպի ալ և, ասես, թէ տատանվում է, թափէ՞ արդեօք իւր ջուրը Դանուբ գետը, թէ զուգահեռաբար հոսի նորա հետ ուղիղ գէպի ծովը: Բայց եթէ Կրիվենան

երբ և իցէ մի մեծ, հարուստ ու նշանաւոր քաղաք գառնայ, այն ժամանակ՝ հազար տարուց յետոյ, կարող են երևան գալ պատմաբաններ, որոնք կը հետաքրքրուին այս շէնի անուան ծագումով: Այսպիսի ենթադրութիւն անելու համար ոչինչ անկարելի բան չկայ: Մի՞թէ, օրինակի համար, հարիւր տարի առաջ Օդեսսան ձրկնորսների մի շէն չէր: Սակայն այժմ այդ ապագայի հարց է, և արդի Կրիվենան էլ ոչ հարուստ է, ոչ յայտնի և մինչև անգամ քաղաք էլ չէ: Նորա բոլոր արժանիքն այդ կայարանն է, որ ուղղահաւատների համար սրճատուն է, իսկ ոչ ուղղահաւատների համար — գինետուն: Մեխանէի այս կրկնակի բնաւորութիւնը կախուած է նուրանից, որ տէրը ոչ ուումանացի է, որ ասես, ուումանացի է, ոչ էլ բուլղար է, որ մարդ ասէ, թէ բուլղար է. կարծես, թէ փաղիշահի հաւատարիմ հպատակներիցն է, բայց այդ էլ այնքան ճիշդ չէ: Նա խօսում է ուումանական, բուլղարական, տաճկական և մի քանի այլ լեզուներ, իւր գործը շատ լաւ գիտէ, լաւ էլ կատարում է և բացի դորանից պարապում է մի քանի այլ բաներով. սակայն դորա մասին ոչ Ռուչչուկի նահանգապետը, ոչ Սիստովոյի գայմազամը և ոչ մի զափթի պիտի չիմանայ, և չեն էլ իմանում: Ոչ ոքի գլուխն անգամ չէր կարող գալ թէ նա կարող է որ և է կասկածելի «միստիչուզ» անել: Նորան մեխանէջի էին կոչում, թէ-

պէտ նորա կայարանը իսկապէս մեխանէ չէր, սրովհետեւ այնտեղ ոչ գոմ՝ կար և ոչ յարդանոց: Այդ շինութեան արտաքին տեսքը՝ որի կտուրը յարգով էր ծածկած, մի առանձին բան չէր ներկայացնում: Իսկ ներքինը բաժանուած էր երկու հաւասար մասի: Նախասենեակի աջ կողմում մի մեծ, ընդարձակ սենեակ կար, ուր գտնվում էր մի վառարան, կահ—կարասիք, փայտէ աթոռներ, վանդակապատ վաճառասեղան, որ պահպանում էր մահմեդականների աչքից ռախին ու մաստիկան, որոնք շիշերով շարուած էին տախտակի վերայ և նոյա հետ էլ սրուակներ ու բաժակներ: Սենեակի մէջ լոյսը թափանցում էր քառակուսի պատուհաններից, ուսկից և ներս էր մտնում օդը, որովհետեւ ոչ ապակին, ոչ էլ մի որ և է բան արգելք էին լինում դորան: Զմեռը նոքա ծածկում են այդ ծակերը գոմշի փամփուշտներով պատած չրջանակներով, իսկ ամառը հանում են և պահում վերնատանը: Գիշերները նոքա փակվում են ներսից շինած փակեղներով:

Մեր մեխանէշի Պէտօն գլխաւորապէս յոյս էր դնում զնացող-եկողներից ստացուող օգտի վերայ, թէպէտ և Կրիվենայի բնակիչներն իրենց կողմից չէին հրաժարվում հարկ վճարելու, գոնէ երբեմն նորա մխած գումարի երկու հարիւր տոկոսը: Այնու ամենայնիւ նոյանից ստացուող աննշան գումարը, որ մտնում էր մեխանէշիի գրպանը, կազմում էր Սիստովոյի տօնա-

վաճառի ժամանակ ստացուածի փոքրիկ մասը: Բոլոր մահմեդականներն ու քրիստոնեաները, որոնք գալիս էին Եանարայի աջակողմեան ափից և գնում էին Սիստովօ, կամ եթէ վերադառնում էին, մտնում էին մեխանէն՝ մէկը մի ֆինջան սուրճ խմելու, միւսը մի քիչ օդի խմելու, որպէս զի տօնավաճառի ժամանակ արթուն ու ժիր լինեն: Տօնավաճառի ժամանակ Պէտօն առաւօտից մինչև երեկոյ զբաղուած էր լինում: Բաւական չէ՝ որ ինքը դէս ու դէն էր վազվզում, այլ և Կրիվենայից օրով մօմչէ (տղայ) էր վարձում: Ուրիշ ժամանակ նա ինքն էլ միայն կարողանում էր իւր գործը տեսնել,—բայց և օր էր լինում, որ ոչ ոք ոտ չէր դնում նորա մեխանէն: Այդպիսի օրերին Պէտօն նիրհում էր, երազում և, վեատալեան կանանց պէս, նայում, որ վառարանի կրակը չմարի, բայց մի և նոյն ժամանակ լսում էր և այնչափ վարժել էր իւր լողութիւնը, որ հեռուից արդէն որոշում էր եկող այցելուներին: Երբ լսում էր, որ սարի յետևից սայլի ճրոտց է գալիս, իսկոյն մօտենում էր վառարանին, ածուխ էր աւելացնում, վեր էր առնում փուքսը և արծարծում կրակը:

Այն օրը, որից սկսում է մեր պատմութիւնը, Պէտօն բոլորովին անգործ էր: Նա նստած էր աթոռի վերայ, ձեռքերը կրծքին ծալած, աչքերը փակ, միայն երբեմն-երբեմն ճանճ էր քշում: Նա հակառակ չէր, որ ճանճերը ման գան իւր



երեսին, բայց արդեւում էր միայն մօտենալ քթի  
այն մասին, որ միանում է վերին շրթունքի հետ։  
Երբ նոցանից մէկը մօտենում էր ունգներին,  
նա իսկոյն զարթնում էր և բարկացկոտ կերպով  
ձեռը շարժում, իսկ երբեմն մինչև անգամ հայ-  
հոյում էր և մտածում. ինչո՞ւ համար են ճան-  
ճերը մտնում տեսնելու, թէ ինչ կայ քթի մէջ։  
Ո՛հ արհաւիրք, նա նոցանից էլ կասկածում էր,  
որ կարող են լրտեսութիւն անել։

— «Փեղէվէ՛նկ»... — հայհոյեց նա, մատներով  
ուռնգը արորելով։

Պատահանի առաջ մի ինչ որ բան երևեց։  
Պէտճն վեր կացաւ և գնաց վառարանի մօտ։  
Ներս մտաւ առաջ մէկը, յետոյ միւսը, երրորդը,  
չորրորդը, հինգերորդը, վեցերորդը և եօթներ-  
որդը։ Պէտճն յետ չնայեց և, կարծես, ուշ ու  
միտքը կրակի հետ էր, բայց իսկապէս նա ոչ մի-  
այն համարեց ներս մտնող հիւրերին, այլ և տե-  
սաւ նոցա. դուրս այն գնդի «նիզամներն» էին,  
որոնք տեղաւորուել էին Գանուբի այս կողմի  
քաղաքներում։ Դոցանից առաջինը սպայի նշա-  
նազգեստով էր, և նորա լանջին փայլում էր մի  
սպայական նշան, կողքից կախուած էր մի կարճ  
թուր, գօտիի մէջ խրած էր մի ուէփօլլէր, գլխին  
դրած ունէր կարմիր ֆէս նշանազգեստին համա-  
պատասխան նշանակած փնջով, իսկ ոտներին ու-  
նէր կապոյններով ամրացրած հողաթափներ։ Միւս-  
ները զինուորական զգեստով էին, բայց մէկի

չորը ցոյց էր տալիս, որ տասնապետ (օնբաշի)  
էր։ Նոցա հետ եկած սպան իւր դիրքով համա-  
պատասխանում էր եւրոպական զօրքի ամենա-  
վերջին, ամենաստոր աստիճանին, — մի խօսքով,  
դա միլեազիմ էր։ Նա նստաւ աթոռի վերայ, հա-  
նեց մաշիկներն և ծալապատիկ բազմեց։ Նոյնը  
կրկնեց տասնապետը, բայց կանխապէս հանեց  
իւր պայուսակը, իսկ հրացանը դրեց դռան մօտ։  
Մնացեալները մէկը միւսի յետևից կրկնեցին  
տասնապետի արածը։ Այդպէս բազմելով նստա-  
րանի վերայ, նոցանից իւրաքանչիւրը հանեց ծո-  
ցից ծխամորճը, քսակը և արագ արագ լցրեց։

— Աթէ՛շ (կրակ), — ասաց նա, որ արդէն  
լցրել էր իւր ծխամորճը։

Մեխանէջին արդէն կրակը արել էր և, մեծ  
սրճամանը դնելով թեթացած ածուխների վերայ,  
հանեց գօտիից ունեւիքը, առաւ կրակ և տարաւ  
տաճկին։ Նոյնը նա կրկնեց երկրորդի, երրորդի,  
չորրորդի ու մնացեալների վերաբերմամբ։ Եօթը  
բերան մուխ էր դուրս տալիս եօթը ծխամորճից։

— Բիւր ալ զա հ վ է (մի քիչ սուրճ), — աս-  
աց միլեազիմը անփոյթ կերպով։

Մեխանէջին մեծ թիթեղեայ սրճամանից մի  
քիչ տաք. ջուր ածեց աւելի փոքր պղնձէ սրճա-  
մանի մէջ և դրեց կրակի վերայ։ Երբ ջուրը եփ  
եկաւ, նա մի գդալ աղած սուրճ ձգեց մէջը և  
կրկին գրեց կրակի վերայ։ Մի երկու — երեք ան-  
գամ եփ տուեց, յետոյ առաւ մատուցարանը,

գրեց մի պզտիկ ֆինլան, իսկ միւս ձեռով սըր-  
ճամանը առնելով, մօտեցաւ միլեադիմին, ածեց  
և նորան տուեց այդ խմիչքը, որ ոմանք նեկաա-  
րի հետ են համեմատում: Տաճիկը զգուշութեամբ  
առաւ ֆինլանը, կռացաւ և, առանց շրթունքնե-  
րը կպցնելու, ներս ծծեց օդը, որի հետ միասին  
և ներս գնաց սուրճի վերին խաւը: Գրանից յե-  
տոյ նա մի քանի անգամ բերանը չփչիացրեց,  
որպէս մի ընտիր ճաշակի տէր մարդ, որ անուշ  
է անուճ մի առանձին համեղ բան: Յետոյ նա  
մի քանի անգամ ձեռքով իւր լանջը շոյեց և ըս-  
կսեց ծխելով, կում—կում խմել սուրճը:

Հպատակները հետևեցին իրենց առաջնորդի  
օրինակին, և մէկը միւսի յետից սուրճ պատ-  
ուիրեցին: Մեխանէջին՝ բոլորի պահանջին բաւա-  
րարութիւն տալուց յետոյ՝ կանգնեց վառարանի  
մօտ, ձեռքերը ծալեց կրծքի վերայ և սպասեց  
նոր պատուէրի կամ խօսակցութեան: Նոր պատ-  
ուէր չեղաւ, բայց կարճ միջոցից խօսակցութիւն  
բացուեցաւ նորա և միլեազիմի մէջ, որ սկսուեց  
սովորական «բարոյներէ» զաշ գէլգըն և  
սիֆօտ գէլգըն, — իսկ դրանից յետոյ միլեա-  
զիմը հարցրեց.

— Նէ վար, նէ եօք (ի՞նչ կայ, ինչ չկայ):

— Սէն բիլիր, էֆէնդըմ (դու գիտես,  
էֆէնդի), — պատասխանեց Պէտօն:

Միլեազիմը առաւ ծխամորճը, քաշեց, ծու-  
խը բաց թողեց և կրկին հարցրեց.

— Շա՞տ մարդ է լինում սրճարանում:

— Ի՛հ... մի օր շատ է լինում, մի օր քիչ:

— Իսկ ովքե՞ր են եղողները:

— Աւելի շատ... — նա տուեց շրջակայ գիւ-  
ղերի անունները:

— Բայց դու ճանաչո՞ւմ ես հիւրերիդ:

— Մի քանիսին ճանաչում եմ, միւսներին չէ:

— Ձե՞ս ճանաչում:.. հա՞:

Պէտօն ուսերը վեր քաշեց, հասկանալ տա-  
ւով, որ անծանօթների մասին ոչինչ չէ կարող տեսլ:

— Բայց հօ՞... — միլեազիմը կամենում էր  
բան իմանալ:

— Մի՞թէ Եանտրան մի բան հարցնում է  
այն ոչխարներից, որ գալիս են ջուր խմելու:

— Ճիշտ է, — համուձայնեց միլեազիմը, — բայց  
դու հօ Եանտրան չե՞ս:

— Այդպէս էլ մարդիկ հօ ի՛նձ մօտ չեն գա-  
լիս, այլ մանում են սուրճ խմելու:

— Նոյնպէս և օղի խմելու:

— Ուղղահաւասանները մի ֆինլան սուրճ խմե-  
լու, իսկ ուայեան — օղի խմելու:

— Եւ ոայեան լո՞ւռ է խմում:

— Երբեմն լուռ, երբեմն էլ չէ:

— Իսկ երբ որ լուռ չէ, ի՞նչ է անում:

— Այն ժամանակ խօսում է, էֆէնդի:

— Գու հօ յիմար չես... — վճռեց միլեազիմը,  
որ ուզում էր մի ինչ որ բան իմանալ: — Գու խե-  
լօք ես և գիտես լսել:

— Ի հարկէ, — պատասխանեց Պէտօն ինքնագոհ ժպիտով:

— Դէ ի՞նչ ես լսել:

— Օ՛ր, էֆէնդի, — պատասխանեց մեխանէջին, անփոյթ կերպով ձեռքը շարժելով, — թէ ես այնքան փարա ունենայի, որքան խօսք իմ մի ազանջն է մտնում և միւսից դուրս գալիս, այն ժամանակ ես աշխարհիս ամենահարուստ մարդը կըլինէի:

— Հը՛մ... — գլուխը շարժեց տաճիկը:

— Լսում եմ, բայց ականջ չեմ դնում... այդ իմ բանը չէ:

— Հը՛մ... — մըթմըթաց միլեազիմը. — բայց... նայո՞ւմ ես:

— Ի հարկէ նայում եմ:

— Է՞հ... — շարունակեց տաճիկը իւր հարցու փորձը:

Մեխանէջին կրկին ուսերը վեր քաշեց:

— Բայց դու չե՞ս տեսել «կօմիտան»:

— Այդ ի՞նչ է, — հարցրեց Պէտօն:

— Կօմիտան... հըմ... ես ինքս էլ լաւ չեմ իմանում, — պատասխանեց միլեազիմը և հարցական հայեացք ձգեց զինուորների վերայ:

— Կօմիտան... — ասաց մէկը, ծխամորճը ծրծեւով:

— Կօմիտան... — կրկնեց միւսը, փոքր ինչ կըռանալով և ծխամորճը նստարանին խփելով:

— Կօմիտան... — արտասանեց երրորդը մտածելով:

— Դա, երևի, մի տեսակ էսն ա ֆէ (արհեստ), — լըջամիտ կերպով ասաց միլեազիմը:

Զինուորները իրենց գլխի շարժումով հաւանութեան նշան էին տալիս, իսկ մեխանէջին ոչ գլխի էր ընկնում, ոչ էլ ընդունում էր նոցա ասածը: Նորա դէմքի արտայայտութիւնը բոլորովին անտարբեր էր. նա սպասում էր:

— Դա մի տեսակ էսն ա ֆէ, — կրկնեց միլեազիմը, դառնալով Պէտոյին:

— Կարող է լինել, որ էմնաֆէ է... — պատասխանեց Պէտօն:

— Գիտե՞ս այժմ:

— Ինքդ գիտես, էֆէնդի:

— Ս... — խորհրդաւոր կերպով շնչեց տաճիկը և գլուխը շարժեց: — Այդ էմնաֆի համար հապս (բանտ) են նստեցնում, կախում են և գլխատում... գիտե՞ս այժմ:

— Պա՛հ... — զարմացաւ Պէտօն, գլուխը շարժելով: — Իսկ ես կարծում էի, թէ դա մի որ և է աւլաֆրանկա արհեստ է:

— Չէ՛... էդ քո ասածը չի:

— Հապա ի՞նչ է:

— Երևի, աւլաֆրանկա մի բան է... մի տեսակ միստիչուզ է... մի խօսքով կօմիտա:

— Հը՛մ... — ախ քաշեց մեխանէջին:

— Մենք դորա համար էլ ուղարկուած ենք

և կրմնանք քո մեխանէում, որ տեսնենք այդ կօմիտան:

Պէտճն ոչինչ չպատասխանեց. սենեակում լըռու թիւն տիրեց, որ միլեաղիմը ընդհատեց դառնալով տասնապետին.

— Այնտեղ, սիրելիս, պահապաններ կանգնեցրու և պատմիր, թէ ինչ և ինչպէս պէտք է...

— Հէ՞... — ատարակուտում էր տասնապետը. — ի՞նչ է պէտք և ինչպէ՞ս...

— Թող նայի կամրջի վերայ և երբ կօմիտայի պէս մի բան տեսնէ, թող կանգնեցնէ և միւսներին էլ կանչէ... Հասկանում ես:

— Հասկանում եմ, էֆէնդի, — պատասխանեց տասնապետը և խոկոյն կանչեց մի զինուոր, որ վեր կացաւ, հագաւ կօշիկները, ձեռքն առաւ հրացանը և սպասեց հրամանին: Տասնապետը նորա հետ դուրս եկաւ, և լսում էր, ինչպէս նա կարգադրութիւն էր անում կօմիտայի մասին. յետոյ նա վերադարձաւ:

— Հը՞... — հարցրեց միլեաղիմը: — Ամեն բան իւր տեղումն է, էֆէնդի: Կամուրջը այսպէս է, իսկ պահապաններն — ահա՛ այսպէս, — այս խօսքերը նա արտասանեց համապատասխան շարժումներով: — Մուկն անգամ չէ կարող աննկատելի անցնել պահակի կողքից:

— Թող մկներն, շներն, կատուններն և մինչև անգամ մարդիկ անցնեն, միայն օր կարողանանք կօմիտան բռնել...

— Չի՛ անցնիլ, — պատասխանեց տասնապետը, նստելով աթոռի վերայ. — եթէ ուրիշ ճանապարհով չգնայ:

— Ամեն տեղ, սիրելիս, պահապաններ պէտք է կանգնեցնել:

Տիրեց երկարատե լուռութիւն, որին տաճիկները անձնատուր են լինում զարմանալի վարպետութեամբ: Նոքա մտածում էին, աստիճանաբար պատի տակ շարուած: Մեխանէլին ֆինջանները տեղը դրեց, կրակը տակն ու վրայ արաւ, մոխիր ցանեց ածուխի վերայ, շուրջ այնպէս դրեց, որ իւր շերմութիւնը չկորցնէ, դուրս նայեց բայ դռնից, ինչեց գողնացի մէջ, ծխամորճը լցրեց, կպցրեց, նստաւ միլեաղիմի կողքին և ոգոյ հանեց:

— Յա՛ւ է, էֆէնդի:

— Ի՞նչ է:

— Ապրելը վատացել է:

— Ինչո՞ւ:

3496  
40

— Հասկա ի՞նչ. մարդիկ սկսել են այնպիսի արհեստներով պարապել, որ բանտ են նստեցնում, կախում են, գլխատում են:

— Հա՛, պարապում են:

— Առաջ այդպիսի բաներ չէին լինում:

— Այո՛, չէին լինում:

— Բանա, արդարեւ, նստեցնում և գլխատում էին աւազակներին:

— Ճշմարիտ է:



— Ուրեմն կարող է լինել, որ կօմիտանն աւաւաղակութիւնը մի և նոյն բաներն են:

— Սա... — պատասխանեց միլեաղիմը. — չէ, մի և նոյնը չէ:

— Իսկ եթէ մի և նոյնը չէ, ապա ինչո՞ւ համար են կախում և բանտ ձգում:

— Չանըմ, այդպէս է հրամայում փաղիշահը... — Իսկ ինչպէս նա հրամայէ, այնպէս էլ պէտք է անել...

— Իէ ի հարկէ, — իւր համաձայնութիւնը տուեց մեխանէլին:

— Եթէ ինձ, Չանըմ, հրամայէին կարել ջո գլուխը, կ'առնէի տապարը և կըկտրէի, ա՛յ ինչ...

— Է՛հ... ո՞ւմ է պէտք իմ գլուխը:

— Այդպէս մի ասիլ, Չանըմ:

— Փաղիշահը չէ՞ որ ինձ չէ ճանաչում:

— Ինչպէ՛ս չէ ճանաչում, — բողոքեց միլեաղիմը:

— Նա ինձ աչքովս էլ չէ տեսել:

— Լսի՛ր, ես քեզ բացատրեմ. զափթին հօքեղ ճանաչօ՞ւմ է:

— Ճանաչում է, — պատասխանեց Պէտօն:

— Տեսնում ես, այսպէս է լինում. զափթին ասում է ջո մասին աղային, աղան — մուղուրին, մուղուրը — գայմագամին, գայմագամը — փաշային, փաշան — մեծ վէզիրին, իսկ մեծ վէզիրն էլ — փաղիշահին: Այսպէս փաղիշահը ճանաչում է ամենքին և իմանում ամեն բան, և եթէ նա կամենար

քո գլուխը, կ'ասէր միայն վէզիրին. «կրիվենացի մեխանէլիի գլուխը», և իսկոյն տոպրակի մէջ նա Ստանբուլ կըգնար: Ի ի լի բ ս է ն (հասկանօ՞ւմ ես):

— Հասկանում եմ... — պատասխանեց Պէտօն և այնպէս շարժուեց, կարծես, ուղղւմ էր ցոյց տալ, թէ պիտի վեր կենայ:

— Կա՛ց, — բռնեց նորան միլաղիմը. — գնա՛ գիւղ չօրբալիի մօտ (տանուտէր) և պատ՛ նորան, թէ միլեաղիմը եկել է վեց նիզամի հետ, և կրիվենան պիտի կերակրէ նոցա, որովհետև նոքա նորա համար չեն ծառայում փաղիշահին, որ քաղցած մնան:

— Լաւ, — պատասխանեց մեխանէլին:

Տաճիկների տիրապետութեան ժամանակ գոյութիւն ունէր այնպիսի սովորութիւն, որ անցորդը, ներկայացնելով տանուտէրին իւր թէս կերէն (անցագիրը), երեք օր կարող էր ապրել համայնքի հաշուով. հասարակութիւնը պարտաւոր էր նորան բնակարան և կերակուր տալու: Այս սովորութիւնից միշտ օգուտ էին քաղում քաղաքացիական և զինուորական պաշտօնեաները: Զօրքը ստանում էր իւր կերակուրը զինուորանոցում. իսկ բոլոր ուղարկուած գնաւորին կերակրում էր հասարակութիւնը, որ իւր կողմից հերթ էր նշանակում բնակիչներին: Միլեաղիմը՝ այսպէս ուղարկելով նորան տանուտէրի մօտ, հասկանալ էր անպիս Պէտոյին՝ կրիվենայի

բնակչին, որ նա էլ մասնակից պիտի լինի հերթին, և, որպէս տան աէր, ուր իջել են հիւրերը, պիտի կերակրէր: Մեխանէլին հասկայաւ, թէ բանը ինչու՞ն է, չգնաց տանուաէրի մօտ, այլ դուրս եկաւ միայն նախասենեակը և զգուշացրեց իւր կնոջ, թէ կերակուր պէտք է պատրաստել զինուորներին համար: Կինն ու աղջիկը խսկոյն և եթ սկսեցին կերակուր պատրաստել:

Տան միւս կէտը, ուր մեխանէլի ընտանիքն էր տեղաւորուած, իւր կահ-կարասիքով զանազանվում էր կապիւլիտնի մասից: Դա մի ընդարձակ սենեակ էր, ուր ո՛չ բազմոց կար, որ սովորաբար ունեւոր մարդկանց բնակարանում լինում է, ո՛չ աթոռ, ո՛չ էլ մի որ և է բան նստելու համար: Միայն մի կոթ սեղան կար, պատին թեք ընկած և աման-չամանների մի զուլար: Գզգզած խտիրը հազիւ հազ ծածկում էր յատակը, իսկ պատի մօտ դարսած էին մի քանի յարդով ու բրդով լցրած երկայն բարձեր, որոնք դրսի մի կողմից կարուած էին մանիշակադոյն ծաղկաւոր շիտով, որի մաքրութիւնը խիստ կասկածելի էր: Մի պատի մօտ գտնվում էր հնոցը, ուր չլթաներով ամրացրած էին կաթսաները: Սենեակը շէմքի մօտ մի հասա փայտից կախուած էր ջրի կաթսան և թիթեղեայ ըմբանակը: Ահա այսպէս էր այն կահաւորուած սենեակը, որ մի և նոյն ժամանակ և խոհանոց էր, և ննջարան, և սեղանատուն, և ընդունարան:

Այդ սենեակում երեք կին կար, որոնցից իւրաքանչիւրը առանձին հասակի ներկայացուցիչ էր— ծերութեան, հասունութեան ու պատանեկութեան: Պառաւը յատակին նստած բուրդ էր մանոււմ, պատանեկութեան տրժանի ներկայացուցիչը՝ տան և ինն կամ քսան տարեկան գեղեցիկ օրիորդը, որի երեսից երևում էր, որ և՛ առողջ է և՛ ուժեղ, նստած պառաւի կողքին և բրդէ գործուածքի վերայ կարմիր թելով մի ինչ որ բան էր դուրս բերում: Վերջապէս միջին հասակի կինը տնտեսական գործերով էր զբաղուած:

Երբ նիզամները ներս էին մտնում, սենեկի գուռը բաց էր: Տան տիկինն փակեց նորան:

— Ինչո՛ւ ես փակում,— հարցրեց պառաւը:

— Ասկէրլար (զինուորներ),— եղաւ պատասխանը:

Պառաւը անհանգիստ կերպով նայեց մատղաշ օրիորդին: Երեքն էլ ուշի ուշով ահանջ էին գնում և յուզուած ծածուկ նայում էին դռան վերայ, որ գտնվում էր վերջին պատի մէջ, բայց երբ նախասենեակում կտրուեցաւ նոցա քայլերի ձայնը, նորա հանգստացան:

— Երևի, Սիստովոյից Ռուչչուկ են գնում կամ Ռուչչուկից Սիստովո, — նկատեց տան տիկինը:

— Սուրճ կըխմեն և կըհեռանան:

— Աստուած տայ, — պատասխանեց պառաւը, — բայց...

— Ի՞նչ է, բաբա (տատ), — հարցրեց օրիորդը, տեսնելով որ պառաւը խօսքը չի վերջացնում:

— Զինուորի գալը միշտ անբախտութիւն է...

— պատասխանեց նա:

— Այսինքն երբ նա կողոպտում է:

— Զինուորի գալը միշտ անբախտութիւն է...

— կրկնեց պառաւը:

— Նորա հօ կրգնա՞ն:

— կրգնա՞ն... գուցէ և գնան... սա՛յ Աստուած... Բայց նոցա երևելը, ինչպէս և մեռածի երևելը, երբ նա դագաղից դուրս է գալիս և գալիս կենդանիների մօտ — չարագուշակ նշան է:

— Բաբա, բաբա. — կրկնեց վախեցած օրիորդը:

— Եւ ինչո՞ւ դորա չեն նստում Սիստովոյում կամ Ռուչչուկում, եթէ այնտեղ լաւ է:

— Չէ որ Սիստովոյից Ռուչչուկ տանող ճանապարհը մեր կողքիցն է անցում, — նկատեց տան տիկինը, որ, երևի, նախատեսնելով որ նիզամների համար կերակուր պէտքէ պատրաստել պարտքով էր օջախի մօտ:

— Զինուորի գալը միշտ անբախտութիւն է,

— վճռեց պառաւը և լռեց: Նա մինչև անգամ չպատասխանեց տան տիկնոջ, երբ սա՛ քայլերի ձայն լսելով նախասենեակում, պատուհանից նայեց և ասաց, թէ մեխանէի առաջ պահապան են գրել: Պառաւը միայն ախ քաշեց:

Երբ Պէտոն նախասենեակ եկաւ, գիմեց կնոջը:

— կերակուր եօթը զինուորի համար: Թող Մարիլկան երեկոյեան գնայ Իրագանիցա:

Տան տիկինը բոլոր անհրաժեշտ պաշարը պատրաստի ունէր. պէտք էր միայն հոգս քաշել լաւաչի մասին: Այդ էլ շուտով պատրաստ եղաւ: Մինչ կերակուր էին պատրաստում, օրիորդը խմորը ունցեց և մի մեծ լաւաշ թխեց: Տան տիկինը խիտ-խիտ ծակձկեց փայտէ գդալի կոթով, յետոյ օջաղի մէջ տեղը մաքրեց, դրաւ լաւաշը, ալիւրով ծածկեց և սկսեց սեղանը պատրաստել: Սեղանի պատրաստութիւնն էլ այս էր. սփռոցը ձգեց, դրաւ մի մատուցարան, որ համարեա նորա շափ էր, իսկ մատուցարանի վերայ շարեց՝ աղ ու պղպեղ, մի քանի մանր-մունր ափսէ, որոնցից մէկում խորոված սիսեռ էր, իսկ միւսում — ձիթապաուղ, գրեց նոյնպէս մի քանի փայտէ գդալ, իսկ մէջ տեղում փլաւ: Երբ ամեն ինչ պատրաստ էր, տան տիկինը դառնալով մօրը ասաց:

— Մո՛յկա:

Պառաւը դժուարանալով տեղից վեր կացաւ, մի կողմ դրեց թեղանը, առաւ սեղանը կերակրների հետ միասին և դուրս եկաւ նախասենեակ: Այնտեղ պատահեց մեխանէջիին:

— Իուրօր պիտի հաց ուտեն, — ասաց նա:

Պառաւը կանգնեց և սպասեց, մինչև որ ա-

մենքը մօտից անցան: Ամենից վերջը դուրս եկող միլեազիմը նայեց պառաւի վերայ և ասաց, դառնալով Պէտոյին.

— Ի՞նչ է, դու ոչ երիտասարդ կ'ին, ոչ էլ մոմից ա (օրիորդ) չունի՞ս:

— Չէ, էֆէնդի:

— Դու հօ, ջանս, երևի, պատկուած ես, — հարց ու փորձ արաւ տաճիկը, ուղղելով իւր քայլերը դէպի ստուերախիտ ընկուղենին, որ կանգնած էր մեխանէի մօտ:

— Հէբէթ, էֆէնդի, — պատասխանեց Պէտօն:

— Ինչո՞ւ համար կ'ինդ չէ բերում մեղ կերակուր:

— Իմ պառաւը տկար է:

Նա շեշտեց «պառաւ» խօսքը, կամենալով հասկացնել նորան, որ կ'ինը ջահել չէ, որոնց համար տաճիկները մեռած են, դերագասելով նոցա մինչև անգամ օրիորդներից: Աբդուլ-Մէջլի թարջիմանի հրատարակութիւնից յետոյ, օրէնքը պաշտպանում էր օրիորդներին, հետևաբար և մի որ և է հասարակ սպայ, ինչպէս մեր միլեազիմն էր, երկիւղ պիտի կրէր նոցա յետեւից ընկնելուց: Աւելի բարձր աստիճան ունեցողները, ի հարկէ, կարող էին չկատարել օրէնքը, իսկ միլեազիմը մի այդպիսի բանի համար կարող էր ըստ արժանոյն տուժել: Մի քանի օրինակելի պատիժներ սանձեցին այդ պարոնների տրամբըննա ստիպեցին նոցա զգոյշ լինել դոնէ օ-

րիորդների հետ: Այս օրէնքին չէին ենթարկվում մարդու գնացածները, որոնք, ինչպէս ենթադրում էր տիրապետող տէրութիւնը, լիովին կարող էին պատկանել ընդհանուրին:

Միլեազիմը և բոլոր նիզամները շրջան կաղմելով նստան ընկուղենու ստուերի տակ. այն ժամանակ մեխանէջին՝ առնելով պառաւի ձեռքից սեղանը, դրեց բաղձականների մէջ տեղ: Պառաւը բերաւ շորի մէջ փաթած լուաչը, իսկ մեխանէջին զնաց սապոն, ջուր և կօնք բերելու: Չեռները լուացին: Լուաչը առին միլեազիմին, որ առաւ, կտրատեց և իւրաքանչիւր նիզամի առաջ միմի տաք կտոր դրեց: Տաճիկները՝ մատները փչելով, մանրեցին լուաչը և թիքա շինելով սկսեցին ուտել: Մէկը կերաւ մի երկու թիքա, միւսը — երեք: Վերջապէս միլեազիմը սկսաւ ձեռքով փլաւ ուտել, որով և նշան տուեց հպատակներին իւր օրինակին հետևելու, և սոքա վրայ տուին: Ամենքը ուտում էին և երբեմն երբեմն ջուր խմում, ձեռքից ձեռք տալով կուժը:

II.

Կրիլենայի մեխանէի մօտ՝ ընկուղենու ըստեւրի տակ, յուլթանի զինուորները պարտ ու պատշաճ կերպով կաշքուրվում էին: Պէտօն չէր զննում, ամեն բան տալիս էր, թէ և հաստատ



գիտէր, որ այդ բոլորի համար մի փարօ էլ չէ  
 ստանալու: Տան տիկինը միայն փլաւ այնքան էր  
 պատրաստել, որ եօթը մարդ կարող էին ուտել  
 և կշտանալ: Բայց փլաւը դեռ առաջինն էր. նո-  
 բանից յետոյ բերին շորուա, մի տեսակ թթուաչ  
 ապուր մսի կտորներով. դորանից յետոյ բերին  
 տապակած միս՝ ծեծած, տաճկական պղպեղով  
 համեմած, յետոյ—խաշած ձու նոյնպէս տաճկա-  
 կան պղպեղով, իսկ ձուից յետոյ—տապակած  
 այծի միս: Տաճիկները ոչ միայն նշանազգեալ  
 կոճակները քակեցին, այլ և ամեն բան, ինչ որ  
 կարելի էր, և կամաց-կամաց. բայց շտահով լա-  
 փեցին Աստուծոյ պարգևը, աշխատելով որ ա-  
 մաններում բան չմնայ: Հեշտ բան չէր այդ, բայց  
 առ այժմ նոցա ուժը պատում էր: Նոքա փօփը-  
 սում էին, ոգւոց հանում, բայց կրկին իրենց դործը  
 առաջ էին տանում: Նոցա սպասաւորում էր պա-  
 ռաւը և ինքը մեխանէջին. պառաւը ամանները  
 տանում էր բերում, իսկ Պէտօն հաւաքում էր  
 դատարկները և դնում լիքը:

Ուտելու ժամանակ յանկարծ կամրջի վե-  
 յրայ մի քանի մարդ երևեց: Ամենից առաջ տաս-  
 նապետը նկատեց. նա զգուշութեամբ ձեռով ի-  
 մաց արաւ միլեազիմին:

— Տե՛ս, — ասաց նա:

— Ի՞նչ է, սիրելիս, — հարցրեց նա, հայեաց-  
 քը կամրջի վերայ ձգելով. — ինչ որ մարդիկ են...

— Կօմիտան հօ չէ՞, — շնչեց տանապետը...

— Կրտսեններ... Հօ մեր կողքից պիտի ան-  
 ցնեն:

Անցորդները շուտով մօտեցան: Այդ խում-  
 բում 12 մարդ կար զանազան սեռի և հասակի:  
 Երեք երեխայ իրենք էին գնում. երկուսին շա-  
 լակած և շորերի մէջ փաթաթած կանայք էին  
 տանում. էլի երեք կին հագիւ հազ քաշում էին  
 կեղտոտ տապճակներում շինած բեռները, իսկ  
 մի զառամեալ պառաւ՝ կրթնած երկար ձեռնա-  
 փայտին, առաջ էր դնում. մի տղամարդ էջն էր  
 քշում, երկուսն էլ կողքից էին գնում:

— Չին գոն ի ե ար (գնչուններ), — ասաց տաս-  
 նապետը:

— Տեսնում ես հօ, որ կօմիտան չէ, — պա-  
 տասխանեց միլեազիմը:

Գնչունները բաւական մօտեցան և կանգնե-  
 ցին: Կանայք ցած դրին իրենց բեռները: Բար-  
 բեքեան շարուեցան տաճիկների առաջ. իսկա-  
 պէս այդ շարուածքում ոչ կարգ կար և ոչ կա-  
 նոն, այլ խառն ի խառն, ձեր և երխասարգ,  
 այլ և կին, մի խօսքով, ամենքն ուղղել էին ի-  
 րենց հայեացքը դէպի այն սեղանը, որի շուրջը  
 նստաւած էին սուլթանի զինուորները:

— Հ՞ը — հարցական կերպով արտասանեց տաս-  
 նապետը:

Միլեազիմը, որ այդ միջոցին սակր էր կրը-  
 ծում, ձգեց գնչուններին, որոնք ազահութեամբ  
 յարձակուեցան նորա վերայ: Ամենից առաջ սա-

կըր առաւ երեխաներից մէկը, բայց նորա ձեռքից խոյց կանանցից մէկը. աղայ մարդիկն էլ իրեն կողմից՝ բռնելով կնկայ ձեռքը, աշխատեցին կորզել այդ համեղ պատառը: Տասնապետը նետեց երկրորդ ոսկրը, զինուորներից մէկը— երրորդը. իսկ միւսը— այժի գլուխը: Գնչուների մէջ մեծ իրարանցումն տեղի ունեցաւ: Այս տեսարանը սաստիկ դուարձացնում էր տաճիկներին. նոքա նայում էին և ծիծաղում. երբ գնչուները փոքր ինչ հանդարտեցան, նոքա մի նոր կտոր ձգեցին, որի առթիւ նոր կռիւ ծագեց: Գնչուներն աւ գնչուհիները թաւալում էին դեանի վերայ, իսկ տաճիկները հրհռում էին և քաջալերում կռուողներին:

— Ա՛յ զօշազ կին, չյաղթուես... խեղդիր դորան... ա՛յ, այդպէս, բողաղից բռնիր:

— Ա՛յ աամի՛կ... ծեծիր կնոջը...

Երբ նոքա կռվում և թաւալում էին դեանի վերայ, նոցա մարմինը այնպիսի դիրք էր բռնում, որ ոչ միայն վիրաւորում էր մարդու քաղաքափարութիւնը, այլ և բարոյականութիւնը: Այդ ժամանակ զինուորները ախտաբորբոք նաշյում էին. նոքա ծիծաղից թուլանում էին և բացականչում.

— էլի՛, էլի՛...

Այդ նպատակի համար նոքա աւելի առատացան: Մեխանէջին զայմաղ, հալվա և ռահաթօխում բերաւ: Ղայմազը ձգեցու համար ան-

յարմար էր, իսկ հալվան ու ռահաթօխումը տաճիկները համարեա չկերան, բոլորը գնչուների առաջը ձգեցին:

Վերջապէս մեխանէջին այլ ևս նոր բան չբերաւ: Գնչուները միախմբուած, ասես, մի բանի էին սպասում:

Ուշիմ գիտողը կարող էր նկատել, որ այդ բոլորը գնչուների կողմից շինովի բան էր, այդտեղ ճշմարիտ, բնական բան չկար: Նոքա խեղկատակութիւններ էին անում, որ ստանան նոցա սեղանի փշրանքը: Որովհետեւ այլ ևս ուտելու բան չկար, այդ պատճառով տեսարանն էլ վերջացաւ: Պառաւ գնչուհին՝ բաժանուելով խմբից, մօտեցաւ սեղանին և, կանգնելով միւլեազիմի առաջ, ինչ որ բան փափսաց:

— Հըմ... ես տեսնում եմ, որ փարս ես ուզում, ա՛յ պատաւ,— նկատեց սպան:

Ողորմութիւն արէք, պարսն... խղճացէք... Ալլահն էլ ձեզ կը սայ միւս աշխարհում:

— Միթէ մենք քի՞չ կերակուր տուինք ձեզ:

— Ինձ չէ, ինձ չէ... ես ծեր քաւթառ եմ... ա՛յ, տեսնում ես... այս երիտասարդները բոլորը խլեցին: Ողորմութիւն արէք պառաւիս, իսկ Մօնլեախը և Նանիկիրը բոլորը կը դրեն և կը յիշեցնեն ձեզ, մինչև անգամ եթէ դուք մուսայած լինիր:

— Ի՞նչ է ձրի՞ տանք ինչ...— հարցրեց զինուորներից մէկը:

— Զէ՛, սիրելի, չէ, չէ՛, ևս այնպիսի մի խօսք գիտեմ, որ ինչպէս էլ ցայտես, կրկին անվտանգ կը մնաս... ամեն տեսակ հիւանդութիւններ բուժել գիտեմ և հմայութիւն անել: — Տաճիկները այնքան էլ հուշատ չեն ընծայում հմայութիւններին. ինչ որ գրքերում գրած է, ասում են նորա, այն էլ կը լինի, իսկ ինչ որ չի գրած, չի լինիլ: Այդ պատճառով էլ միլեադիմը սկզբում անտարբերութեամբ էր լսում, իսկ յետոյ՝ ցոյց տալով պառաւի ընկերների վերայ, հարցրեց.

— Երաժշտական գործիքներ ունի՞ն դորա:

— Կայ, ջանքով: — պատասխանեց պառաւը:

— Է՛... — Նա նայեց զիւրերներին և առաջարկեց. ուսի չիմե՞նք:

Տասնապետը հառաչեց, հառաչեցին և զիւրերները:

— Հը՞, ի՞նչ էք կարծում: — հարցրեց վերստին միլեադիմը:

— Վատ չի լինիլ, — պատասխանեցին միևնրը:

— Ռախին հօ շէրապ չէ, — մրթմրթաց գընչուհին:

Ուղղահաւատներին մարգարէն արգելել է գինի խմել, իսկ օղու մասին խօսք չկայ դուրասնում:

— Ուրեմն ահա ինչ, — սկսեց միլադիմը: — Մեխանէջին թո՛ղ օղի բերէ մեզ համար, իսկ

գնչուները թո՛ղ նուագեն, երգեն և պարեն... այն ժամանակ, — շարունակեց նա իւր խօսքը, տեսնելով, որ պառաւը դեռ կանգնած է, — կարող է լինել, որ փող էլ գտնուի:

— Լաւ, սիրելիս... — նորա կրնուագեն և կը պարեն, — ասաց պառաւը և հեռացաւ:

— Ի՞նչ տեսակ օղի էք ուզում, — հարցրեց Պէտօն: — Մաստիկա, — պատասխանեց միլեադիմը և ոչ ոք չհակառակեց:

Մի քանի բուպէից յետոյ սեղանի վերայ դրած էր օղու շիշը, իւրաքանչիւրի համար առանձին սրուակ և մի կուժ ջուր: Մեխանէջին առաւ շիշը, պայծառ հեղուկից ածեց իւրաքանչիւր սրուակի երրորդ մասը, ջուր աւելացրեց և դրանից յետոյ հեղուկը պզտորուեց և կաթի գոյն ստացաւ: Այս հեղուկից -- ասենք փակագծում՝ որ շատ համով է և կարի հոտ ունի -- արեւելցիները սաստիկ շատ են գործ ածում, իսկ նորա սպիտակ գոյնը, որ անմեղութեան նշան է, վտանգաւոր է դարձնում նորան: Տաճիկները շատ են սիրում այդ խմիչքը:

Հէնց որ սեղանի վերայ երևեց մաստիկան, լսուեց և գնչուների երաժշտութիւնը: Դա հունգարացի գնչուների երաժշտութիւն չէր, որոնք նուագում են մարչեր, շարդաներ և մինչև անգամ Լիստի շարագրութիւնները, այլ մի նահապետական, միատեսակ մեղեդու կրկնութիւն էր: Նոցա գործիքները հասարակ թմբուկ և շուի

էին: Գնչուներից մեկը շուն բերանը տարաւ, իսկ միւսը թմբկահարեց, և լսուեցին անախորժ, ականջ խլացնող ձայներ: Կարծատե նախերգանքից յետոյ սկսուեց մի տխուր երգ, որի իւրաքանչիւր տուն սկսում էր և վերջանում «աման» (աւաղ) խօսքով, որ մի քանի անգամ էր կրկնւում:

«Աման, աման, աման»...—ճշում էր երգելը.— «Սև աչերով աղջիկը... աման, աման, աման... աման, աման, աման աման, ածուխի պէս սև աչերը, աման, աման, աման... և այլն: Սև աչերը երգելիս դուրս եկաւ գնչուհիներից մէկը և շրջան անելով կանգնեց այն տեղ, ինչ տեղից դուրս էր եկել. իսկոյն դուրս եկաւ երկրորդը, երրորդը, չորրորդը և հինգերորդը, և ամենքը նոյնը կրկնեցին: Յնցոտի հագած այդ հինգ կանանցից երկուսը օրիորդի դէմքը ունէին: Ամենքը նիհար էին, նուազ, արևառ դէմքով, սպիտակ շրթունքներով, տենդային կրակով վառ աչերով և սև խառնապրիւ մազերով: Դուրս գալուց յետոյ նորս սկսում էին թռչկոտել, սաները դեռնին խփելով և մարմնով անվայել ժարժումներ անելով: Տաճիկները մեծ հաճութեամբ էին նայում այդ բոլորի վերայ, մանաւանդ երբ կանայք էին պատվում և բօրիկ սաները դարձում էին մերկ տեղերին: Ս.յս հարուածների ձայնը, որ ապտակի ձայն էր յիշեցնում, նոցա բերկրութիւն էր պատճառում: Տեսարանը կրկին վեր-

ջացաւ, և գնչուհին նորից մօտեցաւ սեղանին:

—Փարա՞ ես ուզում,—հարցրեց միլեազիմը —փարա՞... ինչո՞ւ արձ չունիք:

—Սատկեց, ջանում, մեր արջը սատկեց,— պատասխանեց պառաւը հառաչելով:

—Եթէ արջի վերայ էլ նայէինք, այն ժամանակ զրուշ էլ կըգանուէր:

—Ես էլ կըտայի...—յարեց զինուորներից մէկը:

—Ես էլ կըտայի,—կրկնեց զինուորներից իւրաքանչիւրը:

Յանկարծ տասնապետը նորից խփեց միլեազիմի կողքին և ցոյց տուեց կամուրջը:

—Հ՞ը... ի՞նչ է,—հարցրեց սպան:

—Մի ինչ որ մարդ է... Կօմիտան հօ չէ՞:

Միլեազիմը նայեց և, ցոյց տալով զինուորներից մէկի վերայ, հրամայեց, որ պահապանութիւն անէ: Նիդամը հրամանը կատարեց. վերկացաւ, կոճկեց զգեստը, առաւ հրացանը, հազիւ կանգնեց իւր տեղում, և ահա մեխանէին մօտեցաւ մի անցորդ, որի արտաքին տեսքը նորան բոլորովին կասկածելի չլթուեց: Նա հագին ունէր արեխներ, հաստ մահուդէ կապայ, մորթէ փափախ, որ նմանեցնում էր նորան շարժուող սունկի: Նա այնպէս անճոռնի էր, որ մինչև անգամ կարելի էր կարծել, թէ արհեստական է, իսկ դէմքի յիմար արտայայտութիւնը բոլորովին

չէր համապատասխանում աչքերի լուրջ և մինչև անգամ խելացի արտայայտութեան:

— Երբ անցորդը՝ իւր հաստիկ ոտների վերայ բազի պէս տատանուելով մօտեցաւ, պահապանը բացականչեց.

— Դո՛ւր (կանգնի՛ր)... այս տեղ արի՛:

Անցորդը կանգնեց, աչքի տակից նայեց պահապանի վրայ և, կարծես, ինքն էլ չէր իմանում, թէ ինչ անէր:

— Իէլ բուրգա (այստեղ եկ), — նորից կրկնեց պահապանը:

Գիւղացին հնազանդեց: Պահապանը բռնելով նորա օձիքից, քարշ տալով բերաւ սեղանի մօտ և բաց թողեց: Միլեազիմը նայեց, և եթէ մաստիկա խմած չլինէր, ի հարկէ, կընկատէր, ինչպէս գիւղացին աչքի տակից նայեց մեխանէշի վերայ և ինչպէս մեխանէշին էլ նայեց նորա վերայ: Հայեացքների այս փոխանակութիւնը բաւական պերճախօս էր և փոխարինեց հարց ու փորձը: Բայց այս բանը ոչ ոք չնկատեց, և ոչ ոք բացի գնչուհուց չէր էլ կարող նկատել: Գընչուհին նայում էր գիւղացու վերայ, բայց, կարծես, բան չէր նկատում:

— Ի՞նչ տեղացի ես, — հարցրեց միլեազիմը:

Գիւղացին ոտքը փոխեց և գլուխը շարժելով ասաց.

— Ես պ-պ-պ-պօեան-ն-ն-նից եմ:

Նա սաստիկ կակազում էր:

— Ինչո՞վ ես պարապում:

— Ես հով-վ-վիւ եմ:

— Բբբ... պպպ... բբբ...

Նա ոչինչ չկարողացաւ արտասանել:

— Գիտե՞ս, ինչ բան է կօմիտան:

— Չչչ... չչ:

Պատասխանելիս նա այնպիսի շարժումներ էր անում և այնպիսի ռեխ էր շինում, որ նորան գիտող տանապետը ասաց.

— Ա՛յ արջ:

— Ճիշդ որ արջ է, — կրկնեց միլեազիմը:

Այդ միջոցին գիւղացին հառաչեց, և նորա հառաչանքում մի ինչ որ գազանային բան կար:

Ա՛յ արջ, — ասաց միլեազիմը, դառնալով գնչուհուն, — թող պարէ... ձեզ եմ ընծայում սորան... — Պարի՛ր, — ասաց նա գիւղացուն. — թէ չէ ես քեզ կօմիտա կըշինեմ և բանտ կըդնեմ...:

Երբ նա արտասանում էր վերջին խօսքերը, գիւղացին և մեխանէշին վերստին փոխանակեցին հայեացքները, և գորանից յետոյ գիւղացին արջի պէս գոռաց.

— Առէք դօրան... թո՛ղ պարէ: Պարի՛ր, արջ, պարեցէ՛ք, դնչուներ: Լ՛աւ պարեցէ՛ք — աղաղակեց միլեազիմը, որի քէֆը տեղն էր մաստիկայից, որովհետև մեխանէշին անընդհատ լցնում էր նորա բաժակը:

Այս շատ պարզ հրամանը իսկոյն և եթ կատարեցին: Գնչուներից մէկը մօտացաւ գիւ-

դացուն և տուեց նորա ձեռը մի փայտ, յետոյ վիզը թօկ անց կացրեց, իսկ երկու ուրիշները նուազելով առաջ եկան: Լսուեցան շուրի շըւփոցը և թմբկի ձայնը. գնչուհիները առաջուայ պէս դուրս եկան, և կրկին սկսուեց վայրենի պարը միայն այն գանազանութեամբ, որ այն շըլանի կենտրոնում, ինչտեղ պարում էին, թըռչկոտում էր և արջի պէս մրթմրթում բուլղար գիւղացին: Զինուորները ծիծաղից մեռնում էին, և երբեմնակի այդ բոլոր ձայների հետ միախառնվում էր նոցա խրախուսական բացականչութիւնը: Ազաղակում էր միլեազիմը, գոռում էին նորա ստորագրեալները, և այդ ուրախութիւնը տեեց համարեա կէս ժամ, իսկ դորանից յետոյ տաճիկները հաստատ մնացին իրենց խօսքին և վարձատրեցին գնչուներին: Եւ ահա ինչպէս եղաւ այդ: Երբ պառաւ գնչուհին կրկին մօտեցաւ, միլեազիմը հանեց գրպանից քսակը, հանեց ստակ և մօտ կանչեց գնչուհուն, սա կրուացաւ, իսկ միլեազիմը փողը մի կողմից սաստիկ թըռտ արաւ և կայրեց պառաւի ճակատին: Նոյնը կրկնեց տասնապետը և զինուորներից իւրաքանչիւրը: Գնչուհին ճակատին կպցրած փողերով վեր կացաւ, թափ տուեց փողերը ձեռքի մէջ, տուեց տղամարդկանցից մէկին, և գնչուները պատրաստուեցան հեռանալու: Բայց նախ քան գնալը, նոքա խմբուեցան դռան առջև և խմելու ջուր խնդրեցին: Մեխանէջին բերաւ մի

գոյլ ջուր, խմելու աման, բացի դորանից էլ հաց: Նոքա շնորհակալ եղան, գովեցին նորա բարութիւնը, մաղթեցին նորան բոլոր երկրային բարիքը և շտապեցան հեռանալ, շտապում էին նրա համար, որ գողացել էին ջուր խմելու ամանը և աշխատում էին հեռանալ, մինչև որ Պէտօն կընկատէ գողութիւնը: Ի ջուր էին նոքա երկիւղ կրում: Երբ որ նոքա գողութեամբ էին պարապած, մեխանէջին զբաղուած էր արջի գերկատարող գիւղացիով: Նա աշխատում էր թագցնել նորան նիզամների աչքից: Գնչուների անհետանալուն պէս անհետացաւ և գիւղացին: Միայն նիզամները մնացին ընկուզենու տակ, բայց շուտով նոցա էլ անհետացած կարելի էր համարել, որովհետև մաստիկան՝ նախ քան արևի մուտքը, խաւարեցրել էր նոցա ուշնու միտքը և բոլոր զգայարանքը: Մեխանէջին բերաւ խրճիթից բարձ, և նոքա քնեցին. մինչև անգամ պահապանը քնեց և չէր հսկում: Եօթը քիթ մոծակների տղազոցի, բզէզների բզզոցի, դորտերի կռնչիւնի, շների հաշոցի և անասնոց բառաշիւնի հետ միասին քնի երաժշտութիւնն էին կատարում, իսկ գետը խաղաղ կերպով հոսում էր:

Կերած-խմած զինուորները քնել էին խոր քնով: Հազիւ թէ թնդանօթների որոտումը և մինչև անգամ Գաբրիէլ հրեշտակապետի գոչման փողը զարթեցներ նոցա: Նոցա քունն աւելի սաստկացաւ այն ժամանակ, երբ հօրիզոնի արե-

լեւեան կողմում երևեց վերջաբառի պայծառ  
 շերտը: Այն ժամանակ հաստամորթերի սեռի  
 ներկայացուցիչներին մէկը մտեցաւ միլեազիմի  
 գլխին և, խրխուացնելով, հոստեց նորա քիթն  
 ու բերանը, անմիջապէս դունչը կայցնելով. յետոյ  
 սկսեց մի ինչ որ բան որոնել միլեազիմի գլխա-  
 տակին, դլուխը դնչով դէն հրելով: Միլեազիմը  
 միայն միթմրթում էր և առանց արթնանալու  
 քացականչում.

—Նուագի՛ր... պարի՛ր... պարի՛ր—վերջա-  
 պէս ձեռքը մեկնեց, և խողը հեռացաւ:

Այս տեսարանին ականատես էին մեխանէ-  
 ջին, տանտիկինը, նորա պառաւ մայրը, օրիորդը  
 և մի երիտասարդ տղայ՝ վերարկու հագած,  
 ֆէսը գլխին, աւա-ֆրանկա վարտիկով և կօ-  
 չիկներով: Չարմանալի է, թէ դա ի՞նչ տեղից  
 դուրս եկաւ:

Ահա ինչպէս:

Վերը նկարագրած պարից յետոյ, երբ գըն-  
 չուները զբաղուած էին ջրամանը գողանալով,  
 արջի գեր կատարող գիւղացին ներս մտաւ մե-  
 խանէն և գնաց ոչ թէ սրճարանը, այլ տիրոջ  
 բնակարանը: Հէնց որ ներս մտաւ, գրկեց նորան  
 տանտիկինը, որ գիւղացուն Ստօեան անուանեց,  
 սա էլ նորան՝ մայր: Պառաւին էլ նա մայր էր  
 կանչում, միայն «մեծ» մայր: Երբ պառաւը  
 հարցրեց, թէ ինչու այսքան ժամանակ չէր գա-  
 լիս, նա պատասխանեց առանց կակազելու.

—Բան չառ կար... և ես միայն մի տեղ  
 չէի:

—Բաս ահա կէս տարի է, որ դու չես ե-  
 րևում:

—Եւ այս կէս տարում ես դեռ չառ բան  
 չեմ արել:

—Ինչ տե՞ղ էիր,—հարցրեց օրիորդը:

—Ինչ տեղ ասես. Ռումելիայում, Մակե-  
 դոնիայում, Սերբիայում, Ռումանիայում... բայց  
 Բուլղարիան էլ տակն ու վրայ արի:

—Բայց դու յագնած ես և քաղցած,—նկա-  
 տեց տանտիկինը:

—Յողնած էլ եմ, քաղցած էլ եմ,—պա-  
 տասխանեց նա.—այսօր առաւօտեանից եմ ճա-  
 նապարհ ընկել և հանգստանալու փոխարէն տա-  
 ճիկների առաջ ստիպուած եղայ խեղկատակու-  
 թիւններ անելու... ամենից շատ այդ ինձ զայ-  
 րացրեց:

—Որդի՛ս... սիրելի՛ս...—քացականչեց մայ-  
 րը, բարձր բուխարու առաջ դնելով:—Ահա՛,  
 նի՛ստ այստեղ և հանգստացիր:

—Չէ, առաջ դեռ ես շորերս կրփոխեմ,—  
 և այս ասելով նա հանեց իւր գլխարկը, որ բո-  
 լորովին փոխեց նորա արտաքին տեսքը:  
 Թրթուրը թիթեռնիկ դարձաւ: Նա այնքան գե-  
 ղեցիկ չէր, բայց տգեղ էլ չէր—սևորակ, կանո-  
 նաւոր դէմքի գծեր, իսկ որ գլխաւորն է,—խե-  
 լացի արտայայտութիւն ունէր, որ տգեղ մար-

դուն էլ համակրելի, զրաւիչ է դարձնում: Նորա մազերը խուզած էին, իսկ ընչացքները ցոյց էին տալիս, որ երիտասարդութեան տարիները արդէն անցել են: Վրան նայելով կարելի էր ասել, որ նա քսան հինգ, քսան ութ տարեկան է:

— Դու ուզում ես շորերդ փոխե՞լ, — հարցրեց տանտիկինը փոքր ինչ անհանգիստ կերպով:

— Այո՛, բոլորովին հալից ընկել եմ:

— Իսկ եթէ զինուորները քեզ տեսնե՞ն:

— Նոքա հօ այստեղ չեն դալ:

— Չէ... ես վախենում... պէտք է հարցնել տեսներ, հայրդ ինչ կա՞սէ... — Տատիկ, — դիմեց նա պառաւին, գնա, հարցրու:

Պառաւը գնաց և կարճ միջոցից յետոյ եկաւ Պէտօն: Տանտիկինը հասկացրեց նորան, թէ բանը ինչու՞մն է և յարեց, թէ վախենու է:

— Է՛հ... — արհամարհանքով պատասխանեց Պէտօն. — այժմ կօմիտան կարելի է միլեազիմի քթին էլ նստեցնել, և նա չի նկատիլ:

— Ուրեմն նոքա այստեղ եկել են կօմիտէտի՞ համար. — հարցրեց Ստօեանը:

— Հա, ի հարկէ, բայց իրենք էլ չգիտեն, թէ դա ինչ արհեստ է:

— Արհե՞ստ:

— Հա, հա, նոքա կարծում են, թէ դա արհեստ է:

— Ինչո՞ւ համար են այստեղ պահապան դրել:

— Նոցա խօսքերից ես եզրակացրի, որ Սիստովոյի գայմագամը Ռուշուկից հրաման է ստացել Նանտրայի բոլոր կամուրջների վերայ պահապաններ նշանակել — և ահա այստեղ է եկել միլեազիմը վեց նիզամի հետ... Բայց արդէն պէտք է գնալ տաճիկների մօտ... պէտք է ստիպել, որ նոքա ամբողջ շիշ մաստիկան խմեն. այն ժամանակ հանգիստ կը լինինք: Այն ժամանակ ամբողջ կօմիտեաը երաժշտութեամբ կարելի է անց կացնել նոցա առաջից, և դարձեալ բան չեն նկատիլ: Թող շորերը փոխէ, — ասաց նա կնկան և դուրս եկաւ:

Ստօեանը նստաւ բարձի վերայ և սկսաւ հանուել:

— Ես քեզ կ'օգնեմ, — ասաց քոյրը, մօտենալով նորան:

— Լաւ, միայն զգուշ յետ արա ոտիս փաթեթները. այնտեղ շատ թուղթ կայ որ պէտք է զգուշութեամբ պահել:

Օրիորդը սկսեց հանգիստ կերպով յետ տալ թօկն ու կապոցները: Երևեցին ծրարներում նամակներ, և գրոտած հասարակ թղթի կտորներ: Այդ ծրարներն ու թղթի կտորները մեծ չէին, բայց մանր տառերով էին գրուած: Ինչ որ դուրս էր գալիս, նա տալիս էր եղբօրը, իսկ սա գնում էր կողքին: Մի օտի փաթեթները ետ տալուց յետոյ նա սկսեց միւսը. այդտեղ էլ թրդ-



թեր գտաւ: Երբ այդ էլ վերջացրեց, առաւ եղբօր ոտները, կռացաւ և համբուրեց նոցա:

— Մարի՛յկա, ի՞նչ ես անում,— բացականչեց երիտասարդը, որը ետ քաշելով:

Աղջիկը ոչինչ չը պատասխանեց: Վեր կացաւ և ակօսեց նայել վառարանի կողմը:

— Ի՞նչ է, գժուե՞ր ես ինչ... — դարձաւ նորան եղբայրը:

— Ձէ, ես մտածեցի, որ քո ոտները... քեզ տանում ես:

— Ամէն մարդու էլ ոտներն են տանում:

Այո՛, բայց ոչ ամենքին այնտեղ, ուր քո ոտները քեզ են տանում... Ա՛խ, Ստօեա՛ն, — հառաչեց օրիորդը:

— Ի՞նչ մեծ բան... ես միայն պարտակա՛նութիւնս եմ կատարում:

— Պարտականութի՞ւնդ — զարմանալով հարցրեց պառաւը, նստելով նորա կողքին: — Դու հօբուղար չես:

— Իսկ դու, նանի, նոյնպէ՞ս բուլղարուհի չես:

— Ե՛ս... ի հարկէ բուլղարուհի եմ:

— Իսկ մա՞յրս:

— Հա, նա էլ բուլղարուհի է:

— Ես էլ, հայրս էլ բուլղարական կաթով, բուլղարական հացով ենք սնուած, մենք այստեղ ենք մեծացել. մի՞թէ մենք ոչ մի բան չենք

պարտական այն երկրին, որ ընդունել է մեզ, որպէս իւր հարազատ սրգկերանց:

— Պէտք է օրիել... — պատասխանեց պառաւը:

— Բայց ի՞նչ կ'ասէիր դու այն մարդուն՝ որ ընդունուած լինելով մի ընտանիքի մէջ՝ հըրդեհի ժամանակ ձեռքերը ծալած կանգնէր և իւր օրոյ մասին խօսէր: Ձէ՛, նանի, դու այդպէս չէիր անիլ:

— Ի՛նչ համար եմ վախենում, որդիս, — հառաչելով պատասխանեց պառաւը:

— Դա արդէն ուրիշ հարց է, և այժմ ես կ'ասեմ քեզ, որ պէտք չէ վախենալ:

— Ձէ որ քեզ պէսներին տածիկները գլխատում են:

— Բայց մի՞թէ չգիտես, որ մահը կենդանութիւն է ծնեցնում: Այդպիսի պատիժներով տածիկները իրենց են վնասում,

— Իսկ իմ կարծիքով, աւելի լաւ կըլինէր, եթէ դու առևտրով պարապէիր:

— Եւ ես կըպարապէի: Բայց մի անյաղթելի զօրութիւն ինձ կապում է այդ երիտասարդութեան հետ, որ՝ սեպհական կեանքի վտանգն աչքի առաջ ունենալով, ապատութեան սերմն է ցանում մարդկանց մէջ և համոզուած է, որ դա կըտայ գեղեցիկ հունձ:

— Աստուած տայ... Բրիտանոս օգնական լինի ձեզ, — յարեց պառաւը և լռեց:

—Մարի՛յկա, շորերս բե՛ր,—ասաց Ստօեանը իւր բրոյը:

Օրիորդը մօտեցաւ պատի մէջ շինած պահարանին, բաց արեց և սկսեց փնտռել: Այդ միջոցին Ստօեանը հանեց գիւղացու շորերը և նոցա տակից էլ հանեց ռէփօլփէրը: Երբ քոյրը բերաւ հարկաւոր բաները, նա սկսեց հաղնուել և շտտով արդէն պատրաստ էր: Արջի դեր կատարող գիւղացին այժմ ոչ մի բանով չէր նմանում նորան: Ստօեանը կօշիկներ էր հագել, վերարկու ձգել, և միայն ֆէսն էր ցոյց տալիս, որ նա տաճկահագատակ է: Մինչև անգամ եւրօպացիք, որոնք Տաճկաստանում են ապրում, ֆէս են դնում, որ անյարմար դիտարկ է. արևից չէ պաշտպանում, բայց... դործ են ածում, և ամենքը հետևում են սովորութեան:

Ստօեանը շորերը փոխեց, նստաւ բարձի վերայ և ասաց.

—Այժմ կարծես թէ հանգստացայ:

Տանտիկինը ընթրիքի պատրաստութեամբ էր զբաղուած և միայն ժամանակ առ ժամանակ սիրով նայում էր իւր որդու վերայ:

—Կարծես, թէ մեծացել ես,—ասաց նա:

—Բայց հօ չեմ երկարացել,—պատասխանեց որդին:

—Ի հարկէ չէ, բայց ինձ թւում է, թէ...

—Ձէ, չի մեծացել,—ասաց պառաւը: Ա՛խ, նա մեծացել է, մեծացել,—չչնչեց օրիորդը:

—Գու էլ կ'ասես հա՛... չէ, չի մեծացել... —պատասխանեցին նորան պառաւն ու մայրը:

—Մեծացել է...—պնդում էր իւր ասածը օրիորդը, նայելով եղբօր վերայ մի այնպիսի հայեացքով, որի մէջ կարելի էր կարգալ նորա խօսքերի նշանակութիւնը: Նա ինքն էլ չէր կարողանալ խօսքերով արտայայտել իւր հայեացքի իմաստը, բայց զգում էր, որ եղբայրը բարոյապէս մեծացել էր:

—Է՛հ...—բացականչեց Պէտօն, որ ներս մտաւ,—այժմ զինուորները սաղ գիշերը վեր չեն կենալ: Ինքը սուլթանը չի կարող նոցա վեր կացնել—ա՛յ, ինչպէս է ազդել նոցա վերայ մաստիկան:

Նա նստաւ վառարանի առաջ և մի առ ժամանակ մարմնով զանազան շարժումներ էր անում, ինչպէս մի անհանգիստ ձի, յետոյ հանգստացաւ, հանեց ծոցից քսակը, լցրեց ծխամորճը և քսակը որդուն տուեց:

—Պէտը չէ,—ասաց Ստօեանը:

—Այնտեղ ծխախոտի թուղթ կայ:

—Ես չեմ ծխում:

—Ի՞նչ է... չէ՞ որ առաջ ծխում էիր:

—Ծխում էի և թողի:

—Բր...բր...—զարմանում էր Պէտօն: Նա առաւ կրակ, կպցրեց ծխամորճը և հարցրեց.— ինչո՞ւ համար ծխելը թողել ես:

—Ես հաշուեցի, որ երեք ամսուայ ընթաց

քում ծխախոտի համար տուած փողով կարելի է գիրք կամ ունեւորութիւն գնել:

ՀՀ — Գիրք կամ ունեւորութիւն... — կրկնեց մեխանէշին. — միթէ դա մի և նո՞յն բանն է:

— Այո՛, նոքա ընհդանուր շատ բան ունին. երկուսն էլ տաճիկների դէմ կուուելու միջոցներ են... Ես հետո միշտ ունեւորութիւն, և նորանո՞վ իմ անձս կրպաշտպանեմ, եթէ զապալիները կամենան ձերբակալել ինձ. իսկ գրքով մենք փորում ենք տաճկաց տէրութեան հիմքը:

— Եւ յոյս ունիք, որ կրփորէք:

— Ի հարկէ, եթէ չփորենք, չենք էլ հասնիլ մի բանի, — պատասխանեց երիտասարդը:

— Այո՛, ճիշդ է... ճիշդ. — պատասխանեց մեխանէշին: — Ձեռքերը ծալած ոչ մի բանի չէ կարելի հասնել: Այդ ճիշդ է:

— Տաճիկները գրքերի դէմ զէնք չունին:

— Բայց ունեւորութիւնների դէմ հօ կա՞յ:

— Հա, առ այժմ կայ:

ՀՀ — Ես միայն զարմանում եմ, — նկատեց Պետոն, — թէ ինչո՞ւ նոքա ձեր գրքերի հետ չեն կուուում իրենց գրքերով:

— Նոքա գրքեր ունին, բայց նոցա լցնելու բան չունին: Ռեւոլուցիոնը կարելի է լցնել գնդակով և վառօդով, իսկ գիրքը — արդարութեամբ և ճշմարտութեամբ:

— Ուհո՛ւ... — մըթմըթաց մեխանէշին: — Գուցէ նա չհասկացաւ այն համեմատութիւնը, որով

որդին կամենում էր պարզել իւր միտքը:

Օրիորդը ի հարկէ հասկացաւ եղբօրը. նա ակնապիշ նայում էր եղբօր վերայ և հետևում իւրաքանչիւր խօսքին: Նա անշարժ կանգնած էր, կիսով չափ ինքն իրեն մոռացած և, Աստուած գիտէ, թէ որքան կրկանգներ այսպէս, եթէ մայրը մի և նոյն բանը երկու անգամ կրկնելուց յետոյ մատով չհրէր նորան, կրկնելով նոյնը երրորդ անգամ:

— Սեղանը:

Օրիորդը, ասես, քնից զարթնեց, վազեց բաժակ բերելու և սկսեց ընթրիքի պատրաստութիւն տեսնել: Մի քանի րոպէից յետոյ սեղանն արդէն պատրաստ էր, նոքա նստոտեցին նորա շուրջը և սկսեցին ընթրել:



III

ՀՀ Բուլղարիայի վիճակը հետաքրքրական չափ բան է ներկայացնում: Մի ժամանակ, ինչպէս յայտնի է, նա ոչ միայն հասարակ թագաւորութիւն, այլ և մեծ պետութիւն էր, յետոյ ընկաւ, և դորանում զարմանալի բան չկայ — այդպէս է մեծ պետութիւնների վիճակը: Անկուսից յետոյ ամենքը մոռացան նորան, և ինքն էլ մոռացաւ իրեն: Նորան այնպէս հիմնովին մոռացան,

որ ո՛չ պատմութեան, ո՛չ աշխարհագրութեան, ո՛չ վիճակագրութեան, ո՛չ ազգագրութեան, ո՛չ էլ գրականութեան մէջ էին անունը տալիս: Բուլղարներին համեմատում էին ուրիշ կիսակիրթ ու վայրենի ազգերի հետ, իսկ ուսումնականները համարում էին նոցա Հերոդոտից յայտնի Սկիւթիայի բնակիչներ, և տաճկական նահանգի անունը լոկ վարչական անուն էին համարում: Մի խօսքով, ամենքը մոռացան Բուլղարիան, բայց գլխաւորն այն է, որ ինքն էլ մոռացել էր իրեն: Ներկայ դարուս սկզբում բուլղարացին իրան բուլղարացի չէր համարում: նա իրաւունքով, պարտականութեամբ, ծննդով մի հասարակ «նայեա» էր, և նորանից լաւ ոչ ոք չէր հաշտվում կատարուող փաստերի հետ և ոչ ոք չէր ընտելանում հանգամանքներին:

Կ, Վիճակի հետ ի՞նչ կարելի է անել. բուլղարն էլ օրինակելի հպատակութեամբ հաշտվում էր և փաղիչահի հաւատարիմ հպատակ ծառան էր: Վրդովում և բողոքում էին յոյները, սերբերը, այբանացիները. բուլղարների երկիրը պատերազմի դաշտ էր ներկայանում: Տաճկաստանը սկսում էր քայքայուել իսկ բուլղարները կրկին հլու հպատակ էին, և միայն 1850 թ. մօտ սկսեց նոցա մէջ յղանալ ազատութեան անհրաժեշտութիւնը: Բայց պէտք էր, որ միայն յղանար, և կեանքը սկսեց արագ քայլերով առաջ դնալ: Ժողովրդի անկախութեան սերմը, որ թագնուած էր

մի խոր սեղ, չէր ծլում հինգ դար շարունակ, և այժմ միայն բողոքը սկսեց աճել զարմանալի արագութեամբ և ուժով, իսկ մամուլի օգնութեամբ նա սկսեց արմատներ և ճիւղեր տարածել սոջ երկրում: Սկսեցին առաջ դալ բարբոսներն ու հարցեր: Բուլղարները սկսեցին խօսել ժողովրդական եկեղեցու և քաղաքական իրաւունքների մասին: Առաջին հարցով զբաղուեց Պօլսի մամուլը, իսկ երկրորդ հարցը արժարժուեցաւ և զարգացաւ գրքերում, բրոշուրներում և արտասահմանում հարտարակուող թերթերում: Թէ ներսից և թէ դրսից ամեն բան սկսեց արթնացնել ժողովուրդը դարևոր քնից. բայց իսկապէս նա ինքն էր արթնանում: Զարթնում էին զանազան հասարակական դասերը, իսկ գլխաւորապէս կենդանացան գիւղացիները և վաճառականները, և ժողովրդի մէջ երևան եկաւ մի նոր, անծանօթ զգացմունք: սէ՛ր դէպի հայրենիքը: Հայրենիք: Այս իդէան մինչև 1850 թ. գոյութիւն չունէր բուլղարների համար: Հետեւեալ տասնամեակում նա սկսեց յղանալ: 1860—1870 թթ. գործով ցոյց տուեց իրեն, իսկ 70-ական թուականներին արիւն թափեց: Երեսուն տարուայ ընթացքում նա այնպէս մեծացաւ, զօրացաւ և ծաղկեց, որ երիտասարդութիւնն անմիա կերպով յափշտակվում էր նորանով, ամբողջապէս անձնատուր լինելով այն կախարդիչ ուսմանախիղճի ազդեցութեան, որ զօհեր էր պահանջում և բնաւորութիւններ հաստատում:

44 Մի այդպիսի ուսմանտիկ էլ կրիվենայի պան-  
 դոկապետի որդի Ստօեանն էր: Հաջի Դիմիտրիի  
 (1868) չմտածած, յանդուգն բողոքի ժամանակ  
 նա դեռ մանուկ էր և չմասնակցեց գործին մի-  
 այն իրենից անկախ պատճառներով: Այն ժամա-  
 նակ նա սովորում էր Բուքարեշտում, իսկ նորան  
 վաղորօք իմաց չէին տուել, որովհետև երեխայ  
 էին համարում: Բայց նա ինքն իրեն բողոքովին  
 ընդունակ էր համարում հայրենիքի բարօրու-  
 թեան համար անձը զոհելու: Իմանալով, որ ձեռ-  
 նարկութիւնը ցաւալի հետևանք է ունեցել,  
 Ստօեանը դնաց բուլղարական մասնաժողովի ան-  
 դամներից մէկի մօտ, որ Ռուսմանիոյ մայրաքաղա-  
 քումն էր գտնվում, և հարցրեց:  
 — Ինչո՞ւ իւր ժամանակին ինձ իմաց չտուիր:  
 — Դու տասնեօթ, տասնութ տարեկանից ա-  
 ւելի չե՞ս հօ:  
 — Բայց չէ՞ որ ես առողջ եմ և ամուր:  
 — Սակայն, — յարե՞ս մասնաժողովի անդամը,  
 — դա անմիտ ձեռնարկութիւն էր:  
 — Անմիտ ձեռնարկութիւն... — բացականչեց  
 նա զայրացած:  
 — Նոքա ի զուր կորան:  
 — Ի զո՞ւր...  
 — Նա աւելի ևս կատաղեց, դուրս եկաւ, լա-  
 ցեց և երկար ժամանակ չկարողացաւ հանգստա-  
 նալ: Ինչո՞ւ նա չկարողացաւ վիճակակից լինել  
 44 հաջի Դիմիտրիին և նորա ընկերներին. այդ նո-

րան ցաւ էր պատճառում, զայրացնում էր. այս  
 զգացումները յատկացան նորա բնաւորութեան: Նա  
 մեծանում էր նոցանից անբաժան, յայտնեց նոցա հօ-  
 րը, մօրը, տատին, քրոջը, երբ Բուքարեշտից վերա-  
 գարձաւ: Այսպէս նա վարակեց հայրենասիրու-  
 թեամբ ընտանիքը և բոլոր գիւղը, իսկ նոցանից նա  
 սովորեց երկրի հետ կապուած լինել, որին նշանա-  
 կութիւն չեն տալիս կօսմօպօլիտիկական հայեացք-  
 ները: Նա կրթուել էր Բուքարեշտում, Եւրոպական  
 քաղաքում. հայրը ոչ մի բան նորան չէր մեր-  
 ժում. այդ պատճառով էլ նա ապրում էր լաւ,  
 լինում էր լուսաւորուած մարդկանց շրջանում և  
 լիովին կարողանում էր գնահատել քաղաքակր-  
 թուած քաղաքի և մեխանիկ կեանքի մէջ եղած  
 զանազանութիւնը, եթէ նորանում չյղանար ազ-  
 գասիրութեան զգացումը— նա էլ ի հարկէ կ'ան-  
 ջատուէր իւր շրջանից և կըմտածէր միայն և եթ  
 իւր մասին: Միայն իւր սրտում ապրող և խել-  
 քին տիրած գաղափարի շնորհիւ Ստօեանը բո-  
 լորովին մոռանում էր իւր անձը: Սակայն դորա  
 փոխարէն հայրն էր մտածում նորա մասին, և  
 երբ նա, ուսումն աւարտելուց յետոյ՝ վերադար-  
 ձաւ տուն, ծերունին ուղղակի հարցրեց որդուն.  
 — Այժմ ի՞նչ պիտի լինի:  
 — Ինչպէ՞ս թէ ինչ պիտի լինի, — որդին էլ  
 իւր կողմից հարցրեց:  
 — Ի՞նչ ես մտադիր անելու:  
 — Ինքս էլ դեռ չգիտեմ:

— Չե՞ս ուզում մեխանէում իմ տեղ լինել:

— Չէ... չեմ ուզում:

— Ես ինքս էլ սիրով չէի տալ քեզ այդ գործը: Ես դեռ քսան տարի կարող եմ գործը յառաջ տանել և սուրճ պատրաստել: Իսկ երկուսիս համար այստեղ անելու բան չկայ, որովհետև միայն տօնավաճառի ժամանակ ինձ օգնան նախան է հարկաւոր լինում:

Կ — Ես գնալու եմ:

— Ո՞ւր, ինչո՞ւ համար:

— Չգիտեմ... թէ ուր... Կ'որոնեմ ինձ համար մի բան:

— Բայց չե՞ս ուզում ձեռնամուխ լինել արդէն պատրաստ գործի:

— Ուստի թեամբ:

ԿԿ — Ճանաչո՞ւմ ես Ռուչչուկցի հաջի Խրիստոսին: Ես արդէն խօսել եմ նորա հետ և նա համաձայն է յանձնելու քեզ իւր հաշուէպահութիւնը և գերմանական և ռումանական լեզուներով թղթակցութիւնները:

Ստօեանն ընդունեց անաշարկութիւնը և մի քանի օրից յետոյ տեղափոխուեց Ռուչչուկ: Նա ստիպուած եղաւ առևտրով պարապել: Հաջի Խրիստոսի յարաբերութիւնները շատ մեծ էին և տարածվում էր մինչև Տրանսիլվանիա: Ստօեանը նորան դուր եկաւ: Բայց առևտուրն այնչափ չէր գրաւում Ստօեանին. այնու ամենայնիւ քանի որ քաղաքական շարժումները չէին սկսուել, նա գոր-

ծով էր պարապում. այդ շարժումները շարունակութիւն էին այն սկսած գործին, որ տաճիկները նոր էին ճնշել: Որովհետև խաղաղութիւնը չ'ոչնչացրեց շարժման նպաստող պատճառները, ուստի վերստին երևան պիտի գար մի այլ շարժում, որ և իրօք տեղի ունեցաւ:

ԿԿ — Տաճկաց տէրութեան սահմաններից դուրս՝ Բուքարէշում, Բէլգրադում և ուրիշ տեղերում գործում էին զանազան դադանի ընկերութիւններ, որոնք տեսակ տեսակ անուններ էին կրում: այսպէս՝ կենտրոնական, յեղափոխական, ժողովրդական, սլաւոնական ընկերութիւն, մակեդոնական դաշնակցութիւն և այլ համանման ընկերութիւններ: Նոցա լրագրները, հրաւէրները, պրօկլամացիաները — բոլորը կարգացվում էին, բայց այդ բոլորը միայն խորհուրդների, ցուցմունքների նշանակութիւն ունէին: Բուն գործունէութիւնը պիտի կատարուէր տաճիկների աչքի առաջ, երկրի մէջ: Նա կենտրոնացած էր քաղաքներում, ուսումնարաններում, եկեղեցիներում և ընթերցարաններում, ինչտեղ որ դուքա կային:

Կ — Ռուչչուկում կար մի այդպիսի ընթերցարան, և Ստօեանը նորա մշտական յաճախողներից էր:

Ընթերցարանը, որ պահպանում էին քաղաքի մեծամեծները, բարգաւաճ դրութեան մէջ էր: Այնտեղ ոչ միայն լրագիրներ ու ամսագիրներ կային, այլ և մատենադարան, ինչ տեղից կարելի էր դիրք առնել և տուն տանել կարգաւոր

համար: Նա գտնվում էր բուլղար համայնքի չոր-  
բաջիի հսկողութեան ներքոյ, որ փաշայի առաջ  
պատասխանատու էր այն բարոյական սնունդի  
համար, որ բուլղարները ստանում էին գրագա-  
րանից: Այդ սնունդի չափը որոշվում, ղեկավար-  
վում էր «Գանուբ» լրագրով, որ հրատարակ-  
վում էր Ռուչչուկում և նշանակուած էր բնա-  
կիչներին զգուշացնելու օտար վնասակար ազդե-  
ցութիւնից և նոցա մէջ յարգանք հաստատելու  
գէշի օրէնքը: Մատենադարանի պաշտօնական  
կոչումը այս էր: Նորա պահարանում, ոչ էլ սե-  
զանի վերայ չկար մի որ և է կասկածելի բան:  
Տաճկաստանում հրատարակուող ֆրանսիական,  
իտալական, յունական, տաճկական լրագրները  
փոստով ուղղակի ընթերցարան էին գալիս. իսկ  
արտասահմանի հրատարակութիւններն առաջ տա-  
նում էին մի առանձին պաշտօնէի մօտ, որ նա-  
յում էր և բռնում այն համարները, որոնք մի  
որ և է բանով կասկածելի էին: Գորա համար էլ  
ինչ որ գալիս էր ընթերցարան, բարեմիտ և բա-  
րեացակամ էր նախ և առաջ իրեն սուլթանին,  
յետոյ փաշաներին, մեծ և փոքր պաշտօնեանե-  
րին և վերջապէս բոլորին, իսկ մասնաւորապէս  
բուլղարներին:

Տաճկաց տիրապետութեան վերջին ժամա-  
նակները, Ռուչչուկը՝ երկաթուղու շնորհիւ, որ  
ամենակարճ ճանապարհն էր միջին Եւրոպայից  
արևելք գնալու համար, սկսաւ եւրոպական քա-

ղաք դառնալ, և որովհետեւ, բացի դորանից, փա-  
շան և վիլայէթի կառավարիչը այն տեղ էին կե-  
նում, ուստի նա մայրաքաղաքի բնաւորութիւն ըս-  
տացաւ: Քաղաքում սկսեցին եւրոպական ճաշա-  
կով քարէ տներ շինել, երևան եկան հիւրանոց-  
ներ, ու խանութներ, և կանխապէս կարելի էր  
գուշակել, որ արևմուտքը, ախրապետելով նախ  
և առաջ մեծ փողոցին, որ կայարանից նաւա-  
հանգիստ էր տանում, կամաց-կամաց դուրս կ'անէ  
տաճիկներին և մնացեալ փողոցներից: Նոյնպէս  
կարելի էր նկատել ժողովրդի մէջ փոփոխութիւն-  
ներ, որոնք գուշակում էին, որ Եւրոպան կ'յաղթէ  
Ասիային: Այս տեղ քրիստոնեայ ժողովուրդը հե-  
տևեալներն էին. ռումանացիք, բուլղարներ, յոյ-  
ներ և հայեր. ոչ քրիստոնեաներն էին — տաճիկ-  
ներ, չէրքէսներ և հրէաներ: Բացի չէրքէսներից,  
միւսները կամաց-կամաց քաղաքակրթվում էին.  
մինչև անգամ տաճիկ կանայք հետաքրքրական էին  
դառնում, իսկ քրիստոնեայ կանայք սիրով հագնում  
էին եւրոպական զգեստ, տղամարդիկը նոյնպէս: Իս-  
կ էլ մի տեսակ բողոք էր, որի շնորհիւ բնիկները երկու-  
բանակի բաժանուեցան. մի քանիսը զգուշութիւնից  
հաւատարիմ էին մնում սովորութեան, միւսները չէ-  
ին հպատակվում նորան, կամենալով խզել կապը  
անցեալի հետ, որ ստրկութեան նշան էին համա-  
րում: Քաղաքացիների՝ թէ տղամարդկանց և թէ  
կանանց մէջ կազմուեցաւ պճնասէրների շրջան,  
որին միանալու լիովին իրաւունք ունէր Ստօեանը,

Հ,

որպէս Բուքարեշտում կրթուած: Մեխանէլի որդի լինելը այս բանում ոչինչ խոչընդոտ չէր ներկայացնում: Հասարակութիւնը, որ հասկացողութիւն չունէր տոհմական իրաւունքների և արտոնութիւնների մասին, ուշադրութիւն չէր դարձնում ծագման և տիպոսների վերայ: Բուլղարիայում ոչ կոմս կար, ոչ բարոն, և միայն Վագորիդէսն իրեն իշխան էր համարում, բայց նա էլ շուտով ոչ յոյն էր, ոչ էլ ռումանացի:

Սակայն Ստոեանը չէր յափշտակվում հասարակութիւնով, թէպէտ խոյս էլ չէր տալիս նորանից. նա մի ինչ որ ուրիշ բան էր որոնում:

Ընթերցարանում նա ծանօթացաւ տեղական ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ: Դոքա ամենքը մի և նոյն բնաբանի մասին էին դատողութիւններ անում.—Ստտուած տայ, որ աւելի վատ չլինի, գուցէ այն ժամանակ աւելի լաւ լինի:

ՀՀ, Հաջի Խրիստոն էլ այս իսկ սկզբունքն ունէր, ինչպէս և միլլինուի (քաղաքային խորհրդարանի) բոլոր անգամները, որոնց ընտրել էր համայնքը: Նոյն իսկ հայեացքն ունէր խոշոր մեծամասնութիւնը: Սկզբում դա գրաւեց Ստոեանի ուշադրութիւնը: Նա լուռ ու մունջ լսում էր այս կամ այն հասարակական հարցի մասին վիճաբանութիւններ, որ բուզարների գատողութեան սիրելի նիւթերն էին: Լսում էին նոյնպէս և ուրիշ երիտասարդներ: Դոցա մէջ կար մէկը՝ քսան տա-

4

44

ըեկան մի երիտասարդ, որ սովորաբար շաբաթօրերն էր գալիս և մնում ընթերցարանում ամբողջ կիւրակի օրն էլ: Ստոեանը նկատեց, որ այդ երիտասարդը զարմանալի ուշադրութեամբ լսում է խօսակցութիւնները, և աւելի ևս ուշի ուշով կարդում է: Կիրակի օրերը, երբ գայիք ընթերցարան, կրտեսնէիք, որ նա նստած կարդում է: Նորա հագուստը ազբատ էր և տարօրինակ, որովհետև կիսով չափ բուլղարական էր, կիսով չափ եւրոպական: Կարելի էր ենթադրել, որ նորա հագուստը կազմուած է առանձին նուիրած կտորներից: Ոտներին տրեխներ էին: Մի անգամ Ստոեանը հարցրեց նորա մասին ընթերցարանի կառավարչից:

—Սա ո՞վ է:

—Չգիտեմ,—եղաւ պատասխանը:—Նորան Նիկոլա են կոչում: Ծաբաթ երեկոյեան գալիս է, իսկ երկուշաբթի առաւօտեան գնում:... Թոյլտուութիւն խնդրեց:

—Ուրեմն երկու գիշեր նա ընթերցարանումն է մնում:

—Հա, բայց դորա փոխարէն յանձնառու եղաւ յատակը լուանալ: Հետը ճրագ է բերում, և, ինչպէս երևում է, գիշերները կարդում է:

—Հետաքրքրական մարդ է:

Նիկոլան սաստիկ շարժեց Ստոեանի հետաքրքրութիւնը: Սա կամեցաւ ծանօթանալ նորա հետ, և այդ նպատակով մի օր երեկոյեան բա-



ւական արդէն ուշ, եկաւ ընթերցարան: Պատուհանի փակեղների ճեղքից լոյս էր երևում: Ընթերցարանում բացի Նիկոլայից ոչ ոք չկար: Սեղանին կռայած նա մի ինչ որ բան էր գրում:

— Բարև, — ողջունեց նորան Ստեանը:

— Բարև, — պատասխանեց Նիկոլան:

— Գիշերները դու ի՞նչ ես գրում:

Երիտասարդը գլուխը բարձրացրեց, նայեց Ստեանի վերայ և պատասխանեց:

— Յերեկը ես ժամանակ չունիմ:

Ստեանը ժօտեցաւ և տեսաւ, որ Նիկոլայի առաջ մի բառարան է:

— Ի՞նչ ես գրում:

— Ես արտագրում եմ:

— Բառարանը:

— Այո՛, բառարանը:

— Ինչո՞ւ համար:

— Գնելու միջոց չունիմ, իսկ սովորել ուզում եմ:

Բառարանը ֆրանսերէնից սերբերէն էր, 1846 թուին հրատարակուած Բէլգրադում: Նիկոլան փոխադրում էր նորան այբուբենական կարգով բուլղարերէնից ֆրանսերէն, սակայն չէր գրում ամեն մի բառ: Ստեանը ուշադրութեամբ նայեց, տեսաւ, որ բառերը գրած են մի որոշ սխալութեամբ: Երևում էր, որ արտագրելիս մի և նոյն ժամանակ գործում էր և նորա միաբը:

— Ուրեմն դու ֆրանսերէն ես սովորում:

— Այո՛, սովորում եմ, — պատասխանեց Նիկոլան:

— Սովորում ես բառերը:

— Ի հարկէ. բառերը որ սովորեմ, կը սկսեմ և խօսել:

— Բացի դորանից պէտք է իմանալ նոցա արտասանութիւնը և թէ ինչպէս պէտք է շարկապել:

— Այդ ի՞նչ է որ:

— Կարդա՛ այս բառը: — Ստեանը ցոյց տուեց «pain» բառը: Նիկոլան «պահն» կարդաց:

— Թէպէտ այդպէս է գրվում, բայց ուրիշ կերպ պէտք է արտասանել: — Ստեանը արտասանեց խօսքը, ինչպէս պէտք էր: — Ա՛յ, տեսնում ես, դու բոլորովին սխալ կը սովորէիր:

— Ա՛խ, Տէ՛ր-Աստուած, — հառաչեց երիտասարդը:

— Ի՞նչ է, դու ուզում ես խօսե՞լ սովորել:

— Եւ խօսել, և գրքեր կարդալ:

— Այն ժամանակ դու պիտի ծանօթանաս քերականութեան հետ. իսկ մի ուրիշը արտասանել պիտի սովորեցնէ քեզ:

— Դա ի՞նչ բան է քերականութիւնը:

— Նա խօսել ու գրել է սովորեցնում:

— Ա՛խ, ինչպէս ես կ'ուզէի սովորել:

— Ինչպէ՞ս է քեզանում զարգացել այդ սէրը:

— Ինչպէ՞ս... ճշմարիտ, ես ինքս էլ չգիտեմ:

— պատասխանեց Նիկոլան:

— Ինչով ես պարապում:  
 — Աբաջիի (դերձակ) մօտ բան եմ անում:  
 — Վաղո՞ւց:  
 — Շուտով ահա մի տարի կը լինի:  
 — Ի՞նչ տեղից ես:  
 — Կօտլից:  
 — Իսկ տանը, ձեր տեղում դու սովորե՞ր ես դերձակի մօտ:  
 — Ձէ, ես չեմ սովորել այդ արհեստը: Դերձակի մօտ մտայ Ռուշչուկ գալուց յետոյ:  
 — Իսկ առա՞ջ ինչով էիր պարապում:  
 — Ոչխար էի արածեցնում:  
 Բայց հօ կարգալ-գրել գիտե՞ս:  
 — Հա, ես դեռ երեխայ ժամանակս կարգալ-գրել սովորել եմ, բայց յետոյ...  
 — Յետոյ ի՞նչ:  
 — Ես գրքեր ունէի, և կարդում էի դաշտում ոչխար արածացնելիս:  
 — Ի՞նչ գրքեր ունէիր:  
 Նիկոլան տուեց մի քանի գրքի անուն՝ բոլորն էլ կրօնական բովանդակութեամբ: Սկզբում բուլղարացոց գրականութիւնը բացառապէս այգալիսի գրքերից էր բաղկացած: Դիւստորապէս այդ գրքերը տարածուած էին այն շրջանում, ուր բացի գրել-կարդալուց ուրիշ բան չէին սովորեցնում: Այդ շրջանին էր պատկանում և Նիկոլան:  
 — Ես կարդում էի այդ գրքերը և կարծում,

թէ այլ ևս ուրիշ գրքեր չկան... Դաշտում ինքս մենակ էի կարդում, իսկ գիւղում պատահում էր, որ ուրիշներին էլ էի կարդում... Բայց մի անգամ, երբ ես գառնուկներին քշեցի դէպի Վառնայի շուկան, ստիպուած էի տանել ֆրանսիացոց հիւպատոսի գնած գառը, և այնտեղ տեսայ անթիւ գրքեր... Այդ ժամանակից էլ չկարողացայ հանգստանալ... Թողի հովուի պաշտօնս, եկայ Վառնա և սկսեցի խնդրել, որ հիւպատոսի մօտ ինձ տեղ տան, բայց չընդունեցին: Բաւական ժամանակ ես թափառեցի քաղաքում և վերջապէս իմացայ, որ Ռուշչուկում գրքեր կան:  
 — Երևի, Վառնայում մի՞այն ֆրանսիացոց հիւպատոսի մօտ չեն գրքեր:  
 — Կարող է լինել... բայց Վառնայում ես սկսել էի արդէն քաղցած մնալ: Ես յոյս ունէի, որ հիւպատոսի մօտ տեղ կը գտնեմ, բայց խաբուեցայ և գործ էլ չունէի:  
 — Իսկ չփորձեցի՞ր ուրիշ տեղ որոնել:  
 — Փորձեցի, և տեղ էլ բացուեցաւ, բայց գրքեր չկային:  
 — Իսկ դու անպատճառ գի՞րք էիր ուզում:  
 — Դէհ ի հարկէ, — պատասխանեց Նիկոլան. — ես միշտ նոցա մասին էի մտածում, մինչև անգամ երազումս էի տեսնում... ինձ այնպէս էր թւում, թէ առանց գրքերի պիտի մեռնեմ:  
 — Եւ ինչպէ՞ս է վարդացել քո մէջ մի այգալիսի սէր:

— Ասում են, թէ գրքերից ամեն բան կարելի է սովորել:

Հրմ... բայց ինչպէ՞ս եկար Ռուշչուկ:

— Մի պատանի ինձ ասաց, թէ այստեղ հարուստ ընթերցարան կայ:

— Աւելի ոչինչ... — հետաքրքրութեամբ հարցնում էր Ստեփանը:

— Էլ ի՞նչ է պէտք որ... Այդպէս, ես էլ վառնայից եկայ Ռուշչուկ:

— Ոտո՞վ:

Հա... մի փարա էլ չունէի, որ կարողանայի երկաթուղու տոմսակ գնել... Չորս օր ճանապարհ էի գալիս և կերակրվում ողորմութիւն ինդրելով. այդպէս էլ եկայ: Հարցրի, թէ ինչտեղ է ընթերցարանը, ցոյց տուին, և փառք Աստուծոյ, դուրս եկաւ մի դերձակ, որ համաձայնեց ինձ արհեստ սովորեցնել, բայց այժմ միայն կերակուրս է աշխատանքիս փոխարէնը... Ամբողջ շաբաթը գործում եմ, իսկ շաբաթ երեկոյեան գալիս եմ ընթերցարան, և այսպէս ես ազատ եմ լինում ամբողջ կիրակի օրը և երկու գիշեր: Կարդում եմ բուլղարերէն, բայց կ'ուզենայի և ֆրանսերէն կարդալ:

— Ուրեմն սովորելու դու այդչափ փափա՞գունիս, — հարցրեց Ստեփանը:

— Ա՛հ, ինչպէ՞ս եմ ուզում, — պատասխանեց նա բորբոքուած \*):

\*) Հովուի անձնաւորութիւնն ուղղակի կեանքից է առած: Երան. հեղ:

— Ուզո՞ւմ ես, ես քեզ կը սովորեցնեմ:

Նիկողան նայեց նորան խորին շնորհակալութեան զգացումով: Ստեփանը նստաւ և սկսեց պատմել նորան ֆրանսերէն լեզուի արտասանութիւնը: Այս դասը կէս ժամ տևեց և վերջացաւ հետևեալ խօսակցութիւնով.

— Ինչո՞ւ ես կամենում սկսել քո ուսումը ֆրանսերէն լեզուից, — հարցրեց Ստեփանը:

— Որովհետև, ինչպէս լսել եմ, ամենից շատ ֆրանսերէն լեզուով են գրքերը:

— Ուրեմն դու կարդալ սիրում ես և ուզում ես ֆրանսերէն սովորել, որ աւելի շատ գիրք կարդաս:

— Չէ՛, միայն այդ չէ... — պատասխանեց երիտասարդը:

— Բայց էլի ի՞նչ ես կամենում:

— Ես մտածում եմ, արդեօք գրքերում մի որ և է միջոց չի լինիլ...

— Ի՞նչ բանի համար:

— Տաճիկների դէմ, որ նոցա վռնդենք մեր հայրենիքից:

— Բայց դու դորա մասին մտածո՞ւմ ես, — զարմացաւ Ստեփանը:

— Եւ ինչո՞ւ ես չեմ կարող մտածել: Ես լսել եմ, որ գրքերում այնպիսի բառեր են լինում, որ ազդում են բոլոր թշուառութիւնների դէմ... Ես այդպիսի բառեր դեռ չեմ գտել... Ես ուզում եմ որոնել և ուրիշ գրքերում:

Ստօեանը մտածմունքի մէջ ընկաւ և ապա պատասխանեց.

— Բանը բառերի մէջ չէ, այլ գիտութիւնների, որոնք ամեն բանի դէմ պիտանի միջոցներ են ցոյլ տալիս:

— Գիտութիւններս՞ւմ է... Ես սովորել եմ:

— Ի՞նչ:

— Կարգալ-գրել... Այժմ ահա ես կարող եմ բուլղարերէն կարգալ-գրել, իսկ որ ֆրանսերէն էլ սովորեմ...

— Դա միայն սկիզբն է: Իււրաքանչիւր լեզու իմանալը, որոնց թիւը շատ շատ է, դեռ գիտութիւն չէ, այլ միջոց գիտութիւն ձեռք բերելու համար:

— Հապա այդ ի՞նչ բան է գիտութիւնը:

Ստօեանը տուեց մի քանիսի անունը և աշխատեց բացատրել նորան, թէ ինչումն է կայանում զանազան գիտութիւնների խնդիրը: Նիկօլան նորանից աչքը չէր պսկում:

— Սովորեցրո՞ւ, — վերջապէս բացականչեց նա:

— Լաւ, բայց այնքան ժամանակ կ'ունենա՞ս:

— Շաբաթ օրերը դաս առւր ամբողջ շաբաթուայ համար:

— Բայց ուսումը չի՞ խանգարիլ քեզ արհեստովդ պարապելու:

— Բոլորովին: Ես կարում եմ և միևնոյն ժամանակ մտածում: Կարը վերջացնում եմ, նայում

թէ ինչ եմ գրել, և կրկին մտածելու բան լինում է:

— Դէ որ այդպէս է, լաւ, — կրկնեց Ստօեանը:

Այժմ Ստօեանը ունէր պարապմունք, որ նորան շատ էր հետաքրքրում: Այդ հովիւը նորա առաջ մի նոր աշխարհ բաց արաւ, որի հետ նա մինչև այժմ հարեանցի էր ծանօթ, չնայելով, որ պատահել էր այդպիսի բանի հօր մեխանէում եղած ժամանակ: Նա չէր էլ ենթադրում, որ այս խաւերում Նիկօլայի պէս անձնաւորութիւններ են լինում: Տաճկի տիրապետութիւնից ազատուել կամենալն աւելի դիւրին էր բացատրել: Մի կողմից Սերբիան ազատուեց նորանից, միւս կողմից Ռումանիան: Այդ նպատակով պատերազմներ էին լինում, և ամբօխի մէջ տարածվում էին զանազան նախագուշակութիւններ և վերջապէս հաջի Գիմիտրիի (1868) ապստամբութիւնը և նորա ճնշելը բոլորովին չնպատակեցին մտքերի խաղաղութեան: Այնու ամենայնիւ այս բոլորը չէ կարող բացատրել Նիկօլայի պէս տիպերի երևան գալը: Ի՞նչ էր արդեօք դորա պատճառը:

Նիկօլան շատ ընդունակ էր. նա հեշտութեամբ էր հասկանում, իւրացնում և յիշում: Իւրաքանչիւր դասին Ստօեանը աւելի և աւելի դօհ էր լինում: Նա պատմեց նորան երկրի ձեւ մասին, ցոյց տուեց քարտէզը, և Նիկօլան բոլորը

մի անգամից հասկացաւ և վերջերքում արդէն ինքն էր սովորում աշխարհագրութիւն։ Մեծ հետաքրքրութեամբ նա ուսումնասիրում էր քարտէզի վերայ սարերի ու գետերի ուղղութիւնը, ուշի ուշով նայում էր ցամաքի գծագրութեան, իւրացնում էր տէրութիւնների սահմանները։ Նոյնպէս յաջողեց նորան գիւրութեամբ սովորել թուաբանութիւն։ Կարծես թէ այդ մարդու գլխում գտնուում էր անկանոն կերպով ձեռք բերած գիտութիւնների մի անագին պաշար և այժմ պէտք էր նոցա միայն կարգի բերել։ Կէս տարում նա սովորեց՝ հասարակ ու տասանորդական կոտորակները, յարաբերութիւնը, պրոպորցիան, երրորդական կանոնը և կարող էր սկսել տառահաշուութիւնն ու երկրաչափութիւնը։ Բայց ամենից շատ պատմութիւնն էր հաւանում և համարեա կլանում էր։ Պրանսերէն լեզուից նոյնպէս մեծ յառաջադիմութիւն ցոյց տուեց, ուսումնասիրեց առողջանութիւնը, բաւական շատ խօսք սովորեց և սկսեց պարապել քերականութիւնով։ Մի շաբաթ օր ուսուցիչը լաւ տրամադրութեան մէջ տեսաւ իւր աշակերտին։

- Ի՞նչ է եղել, հարցրեց Ստօեանը։
- Թողի դերձակիս։
- Էլ ինչո՞ւ ես դրա համար այդչափ ուրախացել։
- Ինչ՞ու չուրախանամ։ Ես այժմ մտել եմ Փարիզից եկած այն tailleur-ի մօտ։ Նորա կըր-

պակի յուցակն էլ ֆրանսերէն է, այնտեղ էլ ֆրանսերէն են խօսում։

Եւ իրօք նա ուրախանալու պատճառ ունէր. նախ և առաջ՝ նախկին դերձակը չէր վարձատրում նորան, իսկ սա տալիս էր. երկրորդ՝ բացի նորանից օր նոր դերձակի մօտ նա կարող էր խօսել իւր յանկալի լեզուն, աւելի շատ էլ ժամանակ ունէր իրեն համար։ Բուլղար դերձակի մօտ նա գիշեր-ցերեկ պիտի լինէր, իսկ ֆրանսիացին գիշերները բաց էր թողնում նորան։ Ստօեանը ուշագրութեամբ լսեց նոր տեղի առաւելութիւնները։

Հ Բայց դու բնակարան ունի՞ս, — հարցրեց Ստօեանը։

- Չէ, ես ուզում եմ խնդրել քեզ...
- Որ միասին ապրենք։ Լա՛ւ։
- Չէ, ես կը կամենայի գիշերել ընթերցարանում... Մարկօն (ընթերցարանի կառավարիչը) ինձ թոյլ է տալիս շաբաթ և կիւրակէ գիշերները այստեղ մնալ։
- Խօսիր նորա հետ։
- Ես արդէն խօսել եմ, և նա մերժում է։ Նա հաւատացնում է, որ հաջի Խրիստոն կը բարկանայ, եթէ իմանայ, որ ես այստեղ գիշերում եմ։
- Ուրեմն ես հաջի Խրիստոյի հետ կը խօսեմ։
- Խնդրեմ, խօսիք, — աղաչեց Նիկօլան։

— Հաջի Խրիստոն, որ ընթերցարանի կառա-  
 վարութեան նախանդամն էր, չէր սիրում մեր-  
 ժեղ Ստօեանի որ և է խնդիրը, իւր կողմից բա-  
 ւական հիւժք ունենալով այդ բանի համար: Սա-  
 կայն հարցն էլ աննշան էր և ոչ մի բանով չէր  
 հակասում ընթերցարանի կանոնադրութեան, ու-  
 րովհետև կանոնադրութեան ոչ մի յօդուածը չէր  
 արդելում ընթերցարանում քնելը, եթէ մէկը  
 խնդրէ այդ մասին կառավարութիւնից: Ինչ որ  
 չէ արդելուած՝ կարելի է թոյլատրել: Այդ  
 հիման վերայ հաջի Խրիստոն ասաց Ստօեանին,  
 որ յայտնէ Մարկոյին, թէ Նիկոլան կարող է գի-  
 շերել ընթերցարանում, բայց դորա փոխարէն  
 ամեն օր գնալուց առաջ պիտի աւելէ ընթեր-  
 ցարանը: Այդպիսով երկու կողմն էլ շահուեցան.  
 թէ ընթերցարանը և թէ Նիկոլան: Նիկոլայի հա-  
 մար խիստ կարևոր էր այն հանդամանքը, որ  
 իւր պարապմունքներն աւելի կանոնաւոր լինին:  
 Ամեն օր՝ արևը մայր մանելուց մինչև 12 ժա-  
 մը, նա սովորում էր. և ոչ ոք չէր խանգարում  
 նորա պարապմունքը, որովհետև Ռուչչուկում  
 թէպէտ սկսել էին երեւել եւրոպական քաղա-  
 քակրթութեան նշոյլները, բայց դեռ շարունակ-  
 վում էր տաճկական կարգը, որ արդելում էր  
 բնակիչներին մութը կոխելուց յետոյ ման գալ  
 փողոցներում: Այդ պատճառով էլ՝ երբ մթնում  
 էր, ամենքը դուրս էին գալիս ընթերցարանից,  
 և նախկին հովիւը բոլորովին ազատ կարող էր

կարողալ գրել մինչև անգամ բարձրաձայն ասել,  
 ինչ որ կամենում էր: Օրեկան համարեա երեք  
 ժամ պարապում էր. բայց շատ բան կարելի է  
 սովորել, եթէ մարդ եռանդով, ի հարկէ, պա-  
 րապի, թէ և օրական երեք ժամ: Նա սովորում  
 էր, բայց կեանքից յետ չէր մնում, որովհետև  
 ցերեկը միշտ ներկայ էր լինում տաք վիճաբա-  
 նութիւններին, որոնք հասարակական հարցերին  
 էին վերաբերում, և բացի դորանից, Նիկոլան  
 լրագրների միջոցով հետևում էր իրողութիւննե-  
 րի ընթացքին, և այդպիսով միշտ կեանքում գոր-  
 ծադրում էր գիտութիւններից նոր ձեռք բերա-  
 ծը:

Ի հարկէ, նորա ձեռք բերած գիտութիւն-  
 ները տարրականից աւելի չէին, բայց կեանքում  
 միշտ գործադրելը կենդանացնում և լրացնում  
 էր նոցա: Իւր ձեռք բերած բոլոր գիտնական  
 տեղեկութիւնները նա ենթարկում էր զուտ անձ-  
 նական գնահատութեան. նա կամենում էր ամեն  
 բանից օգուտ քաղել Բուլղարիոյ համար: Նորա  
 հոգում այսպէս ծնաւ, զարգացաւ և ամրացաւ  
 նախանձախնդիր հայրենասիրութիւնը: Այս զգաց-  
 ման ազդեցութեան շնորհիւ մարդս ընդունակ  
 է լինում դաշնակից լինելու իւր ճնշողների ա-  
 մեն մի թշնամու հետ: Հալածելու տրամաբա-  
 նութիւնը այսպէս է պահանջում: Երբ որ  
 բուլղարները մտածեցին իրենց յարաբերու-  
 թեան մասին Տաճկաստանի հետ, նոցա մէջ

սկսեց դարձանալ այդպիսի ազգասիրութիւնս. նիկօլան դոցանից մէկն էր:

Նա շուտով ծանօթացաւ ընթերցարանի և միւս կողմի հետ: Ճշմարիտ է, սեղանի վերայ փռուած էին լրագրներ, պահարաններում դարստտած էին գրքեր՝ թոյլատրած տաճկաց գրաքննչից, սակայն բացի դոցանից երևում էին և ձեռքէ ձեռք պտտում չթոյլատրած լրագրներ, արգելուած գրքեր, մանաւանդ ուսերէն, նոյնպէս և սերբերէն ու բուլղարերէն, որ հրատարակվում էին Բուքարեշտում և Բրախլում: Այդ բոլոր հրատարակութիւնները կարգացվում էին մինչև անգամ ընթերցարանի բարեմիտ յաճախողներից: Ինչպէ՞ս էին նոքա ընկնում ընթերցարան: Դանուբի ափերին կանգնած էին տաճիկ պահապաններ, որոնք ոչ ոքի չէին թողնում առանց անցագրի և կանխապէս նայելու, մինչդեռ արգելուած լրագրներ ու գրքեր անընդհատ գալիս էին ու գալիս:

IV.

Ինչտեղի՞ց էին ընկնում արգելուած հրատարակութիւնները Ռուշշուկի ընթերցարանը՝ այդ ոչ Սասեանը գիտէր, ոչ Նիկօլան, ոչ էլ Մարկօն: Սա յաճախակի դորա համար յանդիմանու-

թիւնների էր արժանանում հաջի Խրիստոյի կողմից:

— Այս ո՞վ է բերել, — հարցրեց նախագահը, երբ նորա ձեռք ընկաւ արգելուած հրատարակութիւններից մէկը:

— Ես ի՞նչ գիտեմ, — պատասխանեց կառավարիչը:

— Լա՛ւ նայիր:

— Ես հօ նայում եմ... ամէն մի օրինակի վերայ նայում եմ փոստի կնիքը:

— Եւ փոստից այսպիսի բան չէ՞ ստացվում:

— Ոչինչ:

— Երևի, մէկը ձգում է այստեղ, — բանի էութիւնը հասկացաւ հաջի Խրիստոն: -- Դու միայն նկատիր, թէ ով է. իմացիր, իսկ ես նորան կը սովորեցնեմ: Աստուած մի՛ արասցէ, եթէ փաշան իմանայ, ամէնքիս կըհասնի, և ընթերցարանն էլ կըփակեն:

Վերջին փաստը խիստ համոզեցուցիչ երևեց Մարկոյին և նա սաստկացրեց իւր հսկողութիւնը: Բայց ի զուր անցաւ նորա ջանքը: Ի՞նչ կարելի է անել: Յաճախողները գալիս էին, նստում, ծխում, կարում և խօսում: Ինչպէ՞ս կարելի էր նկատել, արդեօք մէկը հետը չի բերել մի արգելուած գիրք կամ լրագիր և չի գրել սեղանի վերայ գանուածների մօտ: Ի զուր էր Մարկօն ժամերով նայում, նա ոչ ոքի չէր կարողանում տեսնել ու տեղը բռնել: Արգելուածի ներկա-

յուլթիւնը նկատելի էր և նրանից, որ մեծ եռանդով կարդում էին: Ամեն մէկը շտապում էր կարդալ, իսկ կարդացողի գէմքը ստանում էր մի այնպիսի արտայայտութիւն, որ համապատասխանում էր կարդացածից ստացած զգացման: Մէկը ժպտում էր, միւսի գէմքը կնճռոտավում էր, երրորդը զայրանում էր և մինչև անգամ հայհոյում էր: «Արգելուածը» ձեռքից ձեռք էր պտտում, և ընթերցողների հեռանալուց յետոյ՝ Մարկօն գտնում էր նորան սեղանի վերայ: Նա առիթ չունէր սորա կամ նորա եախից բռնելու. Մնում էր միայն ոչնչացնել corpus delicti և լռել, մինչ գեռ հաշի Խրիստոն աւելի և աւելի շեշտելով ասում էր նորան.

— Տես հա՛, լա՛ւ նայիր, — թէ չէ բանդ վատ կը լինի:

Պէտք էր մի հնարք գտնել վտանգից ազատուելու համար, և Մարկօն վճռեց, ինչպէս էլ լինի, բռնել յանցաւորին կամ յանցաւորներին. այդ նպատակին հասնելու համար նա մի օր «արգելուածը» պահեց և դիմեց Նիկօլային, երբ սա իւր սովորութեան համեմատ երեկոյեան ընթերցարան եկաւ:

— Գիտես այստեղ ի՞նչ է լինում, — հարցրեց նա:

— Ի՞նչ է լինում:

— Ընթերցարանը կարող են փակել:

— Բայց ինչո՞ւ համար:

— Բոլորովին լաւ բան չի լինիլ, եթէ փակեն:

— Ի հարկէ, լաւ բան չի լինիլ:

— Որ այդպէս է, վտանգի առաջը պիտի առնենք:

— Ինչպէ՞ս, — հարցրեց Նիկօլան:

— Տե՛ս, — պատասխանեց Մարկօն, տալով լրագիրը, որ պահել էր յատուկ նորան ցոյց տալու համար:

Նիկօլան՝ ուշ գալով ընթերցարան, մինչև այդ ժամանակ չէր տեսել «արգելուած լրագիրը»: Այդ պատճառով էլ առաջին օրինակը, որ նորա ձեռն ընկաւ, սաստիկ մեծ ազդեցութիւն ունեցաւ նորա վերայ: Նա շտապով աչքի անց կացրեց լրագիրը և հարցրեց.

— Դու կարդացե՞լ ես այս, Մարկօ:

— Ե՞ս... ո՛չ... ես չեմ կարդում:

— Ինչո՞ւ:

— Ինչպէ՞ս թէ ինչու... Ես միայն այն եմ անում, ինչ որ յանձն եմ առել, իսկ կարդալ ես յանձն չեմ առել:

— Գոնէ հետաքրքրութիւնից կարդայիր:

— Ինձանից հետաքրքրութիւն չեն պահանջում: Իմ գործը դիտելն է, ես էլ դիտում եմ, — բայց այնու ամենայնիւ անընդհատ երևում են հրատարակութիւններ, որ ընթերցարանում պիտի չլինին:

— Էլ ինչի՞ է պէտք ընթերցարանը:

— Ընթերցարանում պիտի լինին այն հրատարակութիւնները, որոնց վերայ կնիք կայ, իսկ



սա, — նա աչքով ցոյց տուեց «արդելուածի» վերայ, որ Նիկոլայի ձեռին էր — մէկը ձգուով է այստեղ... Ա՛յ, դու ողջ կերակրի օրը նստած ես լինում սեղանի մօտ, պէտք է որ օգնես ինձ:

— Բռնե՞մ ձգողին, — զարմանալով հարցրեց Նիկոլան:

— Ի հարկէ... Դու միայն իմացիր... և ինձ ասա... աւելի բան պէտք չէ:

— Ի՞նչ կ'անես նորան:

— Հաջի Խրիստոն, ինչ որ պէտք է, կ'անէ... Պէտք է աշխատել, եղբայր, որ տաճիկները չփակեն ընթերցարանը... Յաւալի՛ կըլինի, ցաւալի:

— Ի հարկէ... — պատասխանեց Նիկոլան. — բայց նոյնպէս ցաւալի կըլինի, եթէ այսպիսի հրատարակութիւններ այլ ևս չլինին:

Սակայն Մարկօն չհասկացաւ բանի էութիւնը: Նա պատկանում էր այն մարդկանց դասին, (որ այն ժամանակ Բուլղարիայում՝ յաճախ էր պատահում), որոնք կարդալը մի մեքենայական բան էին համարում. նոքա կարդում էին, որովհետեւ այբուբէն և վանկեր կապել զիտէին:

— Ահա լի՛ր, — ասաց Նիկոլան, և տաք տաք կարդաց «արդելուածից» մի կտոր, ուր ցոյց էին տալիս տաճկական տիրապետութեան անիրաւութիւնը Բուլղարիայում:

— Հասկանում ես, — հարցրեց նա, երբ վերջացրեց:

— Հա էլի... — պատասխանեց Մարկօն:

— Դու երբ և իցէ մտածե՞լ ես դորա վերայ:

— Չէ, չեմ մտածել:

— Եւ երբէք էլ չէիր իմանալ, եթէ ես քեզ չկարդայի:

— Չէի իմանալ:

— Դէ տեսնում ես, որ ընթերցարանում պիտի լինին այդպիսի հրատարակութիւններ... ձիջա չէ:

— Ի հարկէ... այդպէս է... Բայց ի՞նչ անեմ հաջի Խրիստոյի հետ:

— Դու ոչ թէ հաջի Խրիստոյի վերայ պիտի մտածես, այլ փաշայի: Պէտք է այնպէս անել, որ փաշան չիմանայ, և որ նորա լրտեսները մէկը լուրը չհասցնէ նորան:

Ճիշդ է ասածդ, — պատասխանեց Մարկօն:

— Բայց այստեղ լինո՞ւմ են այդպիսի մարդիկ:

— Լինում են... — Ընթերցարանի կառավարիչը տուեց մի քանիսի անունը:

— Շա՛տ լաւ... Ասա՛ հաջի Խրիստոյին, որ «արդելուածը» նոքա են ձգում:

— Բայց... այդ ինչպէ՞ս կարելի է... — տարակուսում էր Մարկօն:

— Մի՛ հաւատացնիլ, բայց միայն ասա այնպէս, իբրու թէ քեզ այդպէս է թւում... և իբրօք, շատ կարող է լինել... Դուցէ, նոքա դիտմամբ են անում այդ բանը, որ ընթերցարանը փակուի:

—Եւ ճշմարիտ, կարող է լինել,—արդէն համարեա համոզուած ասաց Մարկօն:

Բոլորովին առանց մեղք գործելու կարելի է ասել որ այդպէս էլ է:

Ս.յո՛, այդպէս էլ պէտք է լինի:

Մարկօն, տրամաբանօրէն դարդացնելով նիկոլայի յայտնած միտքը, բոլորովին համոզուեցաւ, որ «արգելուածը» փաշայի լրտեսներն են ձգում: Հաջի Խրիստոյին առաջին անգամ պատահածին պէս նա յայտնեց, թէ ընթերցարանում այս ինչ մարդիկն են տարածում արգելուած հրատարակութիւնները, և տուեց մի քանի լրտեսի անուն:

—Հա՛...—զարմացաւ Խրիստոն, մտածմունքի մէջ ընկաւ և, մի քանի վերայ մտածելով, արտասանեց.—հ՛րմ...:

—Երևի, նոքա ուզում են, որ ընթերցարանը փակուի,—բացատրեց Մարկօն:

—Բայց դիտե՞ս, թէ ինչպէս կարելի է առաջն առնել:

—Ընթերցարան չթողնել նոցա:

—Չէ, այդ չէ կարելի. բայց պէտք է այդպիսի հրատարակութիւններն ոչնչացնել, որպէս զի խուզարկութեան ժամանակ զափթիւները չգրտնեն նոցանից: Հասկանո՞ւմ ես:

—Հասկանում եմ,—պատասխանեց Մարկօն:

—Պէտք է կամաց-կամաց ոչնչացնել, առանց աղմկի:

—Մինչև այժմ այդպէս էլ անում էի... Սովորաբար նոքա կիւրակէ օրերն են երևում, և ես, երբ երեկոյեան սեղանը հաւաքում եմ, անում եմ և իսկոյն այրում:

—Պէտք չէ սպասել մինչև երեկոյ. հէնց որ տեսնում ես, ա՛ռ և այրիր:

—Իսկ եթէ...—սկսեց Մարկօն:

—Ի՞նչ:

—Եթէ ուղղակի դէ՞ն ձգեմ:

—Ինչպէս ուզում ես, արա, միայն որ խալաբալը (անսխորթութիւն) չբերես մեր գլխին:

Ս.յսպէս ընթերցարանի կառավարիչը carteblanche ստացաւ, որի հիման վերայ նա կարող էր նախազգուշութեան համար ամեն մի ուղած միջոցի դիմել: Դորանից յետոյ մաքուր խղճով դիմեց նիկոլային խորհուրդ հարցնելու, իսկ սա անյապաղ բոլորը պատմեց Ստօեանին:

Ստօեանը այդպիսի հրատարակութիւններ շատ էր կարդացել Բուքարեշտում, ուր նոքա արգելուած չեն, և այդ պատճառով այն տեղ նոքա կորցնում են արգելուած պողի համը և հանգիստ կարդացվում են: Նիկոլան բերկրութեամբ պատմեց իւր առաջնորդին այն տպաւորութիւնը, որ ստացել էր «արգելուածը» կարդալուց:

Ստօեանը ընդունեց նորա ասածը. նա էլ համախոհ էր, որ Տաճկաստանում արգելուած հրատարակութիւններում ճշմարիտ և իրաւացի

բան շատ կայ, բայց նա այդ բոլորին այնպէս էր վերաբերում, ինչպէս երաժշտութիւն սիրողը իրեն լաւ յայտնի մի օպերայի ներկայացման:

— Այո՛, — պատասխանեց նա, — այդ բոլորն իրաւացի է և լաւ է գրած:

— Ուրեմն կարելի՞ է այս բաներն ոչնչացնել:

— Ո՞վ է ոչնչացնում:

— Հաջի Խրիստոն հրամայե՛լ է Մարկոյին այրել կամ դէն ձգել: Ես լինէի, այդպիսի լրագիրը ոսկէ շրջանակի մէջ կը դնէի, իսկ ձգողին, կ'ոսկէզօծէի:

— Ո՞վ է բերողը:

— Չեմ իմանում, երեւի անլախներից մէկըն է:

Երբ որ Սոսեանն այս նորութիւնն իմացաւ՝ ուրախացաւ: Նա իսկոյն գլխի ընկաւ, որ կայ մի գաղտնի գործունէութիւն, և կրկին նորանում արթնացաւ այն անպարտելի սէրը, որ տիրել էր նորան պատանեկութեան հասակում և մինչև այժմ դեռ բաւականութիւն չէր ստացել: Նա հասկացաւ, որ այդ հրատարակութիւնները փախցնովի են բերում Ռուշչուկ: Նա ցանկացաւ իմանալ Տաճկաստանի դէմ դաւադրութեան մասնակցողներին ոչ թէ սին հետաքրքրութիւնից, այլ օգնելու նպատակով:

Նիկոլան նոյնպէս կամեցաւ բռնել մասնակցողներին, բայց նորա այդ ցանկութիւնը փոքր

ինչ ուրիշ բնաւորութիւն բռնէր: Նա չէր մտածում մասնակից լինել, բայց կամենում էր յայտնել իւր յարգանքը արգելուած հրատարակութիւնները ընթերցարան բերողին: Այդ մարդուն նա հերոս էր երեւակայում ոչ թէ նորա համար, որ արգելուած հրատարակութիւնները բերում էր ընթերցարան, այլ նորա համար, որ ճարպիկ կերպով էր բերում, և կարողանում էր տաճկաց պահապանների աչքը կապել: Ինչպէ՞ս էր անում: Նա, երևի, գալիս է գրքեր տանելու, ստից մինչև գլուխ զինավառուած. նա պիտի ունենայ և՛ դանակ, և՛ հրացան, և՛ ատրճանակ. նա ենթարկվում է ամեն տեսակ վտանգի և, հաւանօրէն, դէպք եղած ժամանակ կռվում է թշնամու հետ: Նիկոլան ուզում էր այս բոլորը իմանալ, որ յայտնէ հերոսին իւր խորին յարգանքը: Նա յիշեց Սցեվոլային, որի մասին կարգացել էր: Անծանօթ հերոսը, հաւանական է, նոյնպէս կ'այրէր իւր ձեռք, եթէ պահապանները բռնէին նորան:

Այսպէս, Սոսեանն էլ, Նիկոլան էլ, թէպէտ դանազան պատճառներից գրգռուած, կամեցան իմանալ բերողին և սկսեցին հսկել: Դորա համար շատ ժամանակ պէտք չեկաւ. մի քանի օրից յետոյ հասան իրենց նպատակին, և երկուսը միասին տեղի ու տեղը բռնեցին յանցաւորին: Նոր էին սկսում մարդիկ հաւաքուել, իսկ դռա երկուսը նստած միասին ուշադրութեամբ նայում էին ամեն մի նորեկի

վերայ: Շուտով նորա տեսան, ինչպէս մէկը հանեց թևից մի լրագիր և դրեց սեղանի վերայ ձգած լրագրների տակ, յետոյ հեռացաւ և նրստաւ: Նիկողան արմունկով խփեց Ստեանին և սասց ականջին.

— Բոլորովին չէի՞ սպասում:

Ստեանը ուսերը վեր քաշեց:

Նիկողան չէր սպասում, որ իւր երևակայած հերոսը այդքան անգոյն լինէր: Արտաքին կողմից խիզախութեան ոչ մի նշան չէր երևում. դա համեստ, հեղ, մի քիչ էլ կաղ Ստանկո Բաղովը էր, որ կրտսեր վարժապետի պաշտօն էր կատարում քաղաքային ուսումնարանում, և յանկարծ սա է այն յանցաւորը, որ այնքան հրճուեցնում էր Նիկողային:

«Երևի, — մտածեց Նիկողան, — սա չէ գնում Դանուբի միւս կողմը և կովում տաճիկների հետ: Սա իւր ձեռքը չէր այրիլ:

— Չէ, Ստանկոյից ես այս բանը չէի սպասում, — փսփսաց նա Ստեանի ականջին:

— Ինչո՞ւ, — հարցրեց Ստեանը:

— Շատ է աննշան:

— Արտաքինը աննշան է, բայց շատ ազնիւ հոգի է:

— Հա կարող է լինել, — պատասխանեց Նիկողան, և իսկոյն Ստանկոն նորա աչքում փոխուեց: Երիտասարդի վառ երևակայութիւնը ընդունակ էր մի և նոյն բոպէին, մի և նոյն աւար-

կան դանազան կերպ երևակայելու, որ կախուած էր արտաքուստ ստացած զարկից: Այդպէս էլ այժմ: աննշան ուսուցիչը բոլորովին փոխուեց նորա աչքում: Սակայն Ստանկոն առանց մի բան կասկածելու լրագրներ էր կարդում, երբեմնակի աչքի տակովը նայում էր հասարակութեան վերայ, բայց շուտ հեռացաւ: — Գնա՞նք նորա յետևից, — փսփսաց Նիկողան Ստեանին: Նորա վերկադան միասին և առանց դժուարութեան հասան Ստանկոյին, սրովհետև սա բոլորովին չէր շտապում: Ստեանը բարևեց նորան, իսկ Նիկողան ուղղակի սկսեց.

— Դու հերո՞ս ես, Ստանկո:

— Ե՞ս. — հարցրեց նա համարեա զարմացած:

— Ի հարկէ դու... Դու հօ գնո՞ւմ ես Դանուբի միւս կողմը:

— Կեանքումս ես չեմ եղել Դանուբի այն կողմում:

— Բայց հօ այն հրատարակութիւնները, որ դու բերում ես ընթերցարան, Դանուբի այն կողմո՞ւմն ես առնում:

Այս խօսքերը փոքր ինչ շփոթեցրին Ստանկոյին. նա նայեց Նիկողային և հարցրեց.

— Դու այդ տեսե՞լ ես:

— Մենք երկուսս տեսանք:

— Ուրեմն... այլ ևս չեմ բերիլ:

Հերոսը իսկոյն ընկաւ Նիկողայի աչքից: Սա-

կայն Ստօեանը, որ ուրիշ կերպ էր նայում գործի վերայ, պատասխանեց.

—Մենք հսկում էինք քեզ ո՛չ թէ նորա համար, որ սկսածը թողնես, այլ նորա համար, որ օգնենք քեզ... Եւ տեսնում ես, դու բռնուեցար այն պատճառով, որ մենակ ես, իսկ մենք քեզ կըպահպանենք, պէտք եղած տեղը կ'օգնենք էլ...

—Մենք քեզ կ'օգնենք,—բացականչեց նիկոլան յափշտակութեամբ:

—Սը՛ս...—ասաց Ստանկօն.—մի՛ աղաղակիլ փողոցում:

—Սը՛ս...—կրկնեց նիկոլան, ձեռքով իւր բերանը ծածկելով:

—Գնանք ինձ մօտ,—ասաց Ստօեանը:—Ես առանձին սենեակ ունիմ... այնտեղ մենք կարող ենք ազատ խօսել:

Ստօեանը բնակվում էր հաջի Խրիստոյի տանը, որ գտնվում էր բուլղարների թաղում և փողոցի մեծ մասն էր բռնում: Տան յետևում գտնվում էր մի մեծ, բարեկարգ պարտէզ, ուր ամեն տեսակ պտղատու ծառեր կային: Այստեղ բուսնում էին այնպիսի բալ, սալոր, խընձոր ու տանձ, որ սուլթանուհիք չէին հրաժարուիլ նոցանից և, բացի դոցանից, կային նաև ու նուշ: Ծառերը բուսնում էին առանց որ և է համաչափութեան, և բոլորը միասին մի ստուերախիտ պուրակ էին կազմում, ուր փռուած էր կանաչ արօտ, որ տեղ-տեղ գոյնգոյն ծաղկանց

ածունքով էր զարդարուած: Այդտեղ բազմաթիւ վարդի թփեր կային և բիւրաւոր տեսակ տեսակ ծաղիկներ: Բուլղարիան կարող է վարդերի հայրենիք համարուել. նոցա վերայ այստեղ աւելի հոգս են տանում, քան թէ միւսների վերայ, և նոքա երկրի հարստութիւնից մէկը կարող են համարուել: Ածունքի և ծառերի մէջ ձգվում էին ոտներով կոխտուած ուղիներ, որ տանում էին դէպի խաղողի թփերով պատած հովանոցները: Հովանոցներից մէկը պարտիզի մուտքի մօտ էր, իսկ միւսը—միւս կողմում: Ծառերը, հովանոցներն ու թփերը ծածկում էին գաղտնի դռներն ու ապաստանները, որ բուլղարները շինում էին իրենց տներում՝ տաճիկների տիրապետութեան ժամանակ: Հաջի Խրիստոյի երկյարկանի փայտէ տան մուտքը բակի ներսից էր, որ շրջապատած էր բարձր քարէ պարսպով: Ամբողջ բակը ամբարների, մառանների, յարդանոցների, գոմերի և ախոռների շինութիւններով էր բռնուած: Գոմերում ու ախոռներում ձիեր, կովեր ու խոզեր էին, բայց այնպէս էին տեղաւորուած, որ չուտով կարելի չլինի նկատել: Բակի մի անկիւնը արաղ քաշելու համար էր յարմարեցրած:

Տան ներքին յարկում խոհանոցն ու մառանըն էին, վերևում մինչև տասը սենեակ կար, որ լաբերինթի էր նմանում և յայտնի էր միայն տանեցոյ: Ներքին պատերը պահարաններից էին

բաղկացած, իսկ մի սենեակից միւս սենեակ տանող դուռը, ինչպէս և պահարանների դռները, դիմակաւորուած էին: Տան ներքին կողմի հետանձանօթները մտնում էին նախասենեակ սանդուղքներով, իսկ այստեղից մի ընդարձակ վեց պատուհանով սենեակ, որ կոչւում էր միւսաֆիրլըղ (հիւրասենեակ): Այս սենեակի յատակը դորգերով էր ծածկած, իսկ չորս կողմը պատի մօտ փափուկ, լայն բաղձօցներ էին շարած, ապրեչումի կտորով ծածկած: Պատուհաններից կախուած էին թանկագին փարագոյրներ, իսկ դռները ծածկած էին արհեստական քանդակով: Այստեղ ամեն ինչ վկայում էր տանտիրօջ հարստութիւնը:

Ստօեանը հիւրերին միւսաֆիրլըղ շտարաւ: Բակը մտնելուց յետոյ նա կանգ առաւ և կարծես ինքն իրեն ասաց.

— Պատերը լսում են:

Այո՛, պատերը լսում են. իսկ պատուհանները տեսնում. ապացոյցը պնտրաստ էր. Ստօեանը յետ նայեց և իսկոյն նկատեց, որ պատուհաններից մէկում՝ որ դէպի բակն էր նայում, կանգնած էր մի կին: Ստօեանը բարեկեց նորան, իսկ նա ժպտեց, և այդ ժպիտը այն գիւթիչ զօրութիւնն ունէր, որ մարդուս դէպի իրեն է գրւաւում: Այդ ժպիտի անմիջական հետեանքն այն եղաւ, որ Ստանկօն և Նիկօլան նորան նայեցին, և բերանները բաց մնաց: Հեղաբարոյ այբուբէն

սովորեցնող վարժապետը և վառվռուն էքս-հովիւր, իսկ այժմեան դերձակը, յանկարծակի յափշտակուեցան և համարեա թէ կուրացան: Նոքա իրենք չէին կարողանում հաշիւ տալ, թէ ինչ տեղից դուրս եկաւ այդ տեսիլը: Նայում էին, և հազիւ լսեցին Ստօեանի հարցը.

— Կարելի՞ է գնալ պարտէղ:

— Ի հարկէ կարելի է, — պատասխանեց օրիորդը, որի ձայնը Ստանկոյին և Նիկօլային մի ըսքանչելի մեղեդի թուեց:

— Այնտեղ ոչ ո՞ք չկայ, — հարցրեց Ստօեանը:

— Կարծեմ, ոչ ոք, — եղաւ պատասխանը:

— Գնա՛նք, — ասաց Ստօեանը ընկերներին:

Նոքա գնացին պարտէղ: Մուտքի մօտ Նիկօլան նորից յետ նայեց դէպի պատուհանը, բայց այս անգամ նա ոչ ոքի չտեսաւ, բացի պատուհանի շրջանակներից:

Բերելով նոցա հովանոցը, Ստօեանը նստեցրեց, նախ և առաջ տուեց ծխախոտ և թուղթ, իսկ յետոյ սկսեց.

— Այստեղ կարելի է աղատ խօսել... Ի՞նչ կ'ասես, Ստանկօ:

— Ի՞նչ է որ... — հարցրեց ուսուցիչը:

— Այ, մենք քօ օգնականները կըլինինք:

— Իսկ ես կըգերադասէի, որ դուք ինձ փոխարինէիք:

— Ի՞նչպէս:

— Ահաւասիկ, թէ ինչպէս. առէք, տարածե-

ցէք, բաժանեցէք, իսկ ես մի կողմը կըքաշուեմ:

— Լաւ, — պատասխանեց Ստօեանը:

— Եթէ լաւ, ուրեմն էլ խօսելու բան չկայ:

— Բայց ցոյց տուր, թէ ինչ տեղից պէտք է առնել:

— Ա՛... դորա մասին դեռ ինքս պիտի տեղեկանամ և հարցնեմ ում որ հարկն է... Այդ հօ ինձանից չէ կախուած:

— Իսկ ումնի՞ց է կախուած:

— Այդ բանը ես չեմ կարող ասել:

— Դէ, լա՛ւ, ասա, — համոզում էր նորան Ստօեանը:

— Զէ՛, չէ՛, — ընդհատեց նորան Սաանկօն. — ոչ ոքի չէ կարելի, ոչ ձեզ, ոչ էլ մի ուրիշին, ոչ բարեկամաբար, ոչ էլ տաճիկների երկիւղից, եթէ նորա մինչև անգամ այրեն ինձ... Ես խօսք եմ առել, իսկ խօստումը սուրբ բան է:

Նա խօսում էր չափազանց պարզ, հանգիստ, կարծես, բանը բոլորովին չէր վերաբերում կրակին, և այդ այնպէս բնական էր դուրս գալիս, որ կարծես, թէ կրակի վերայ նստելը քիչ բանով է դանազանվում հովանոցում նստելուց:

— Այո՛, ես խօսք եմ տուել, — կրկնեց նա:

— Ի՞նչ է, դու երգո՞ւմ ես կերել, — հարցրեց Ստօեանը:

— Զէ... խօստացել եմ, ահա բոլոր բանը... ինձ հարցրին. «չե՞ս ասիլ», — ահա բոլորը... բայց... — և նա յանկարծ խօսքը կտրեց, որովհետև այդ

րոպէին հովանոց մտաւ այն օրիորդը, որ կանգնած էր պատուհանի մօտ: Նա բերաւ մի մատուցարան, որի վերայ բաժակներ, սկահներ և բաժակակալներ էին դրած: Սկահներում քաղցրաւենի էր, բաժակներում շուր, իսկ փոքրիկ ամսէների վերայ՝ դդալ:

Օրիորդը մատուցարանը ձեռին մօտեցաւ ուսուցչին և ասաց.

— Պօֆֆի մէ:

Այս ոճը, որ ռուսական լեզուից է առած, ֆրանսերէն թարգմանվում է. «s'il vous plait», հունգարերէն՝ «teszek», լեհերէն՝ «prosze» (համեցէք): Օրիորդի առաջարկով թիւնը ընդունեց այբուբէն սովորեցնող վարժապետը, դդալով առաւ քաղցրաւենի, դրեց բերանը, վրայից շուր խմեց և բաժակը դրեց մատուցարանի վերայ: Օրիորդը մօտեցաւ նիկօլային, որ նոյնպէս դդալը առաւ, բայց խրելով քաղցրաւենու մէջ, չկարողացաւ կրկին դուրս հանել: Բարձրացնում է դդալը, քաղցրաւենին էլ իւր ամանովն է բարձրանում: Փորձեց մի անգամ, փորձեց երկրորդ անգամ, վերջապէս կամենալով մի կերպ վերջ տալ դորան, այնպէս քաշեց դդալը, որ մատուցարանից քաշեց քաղցրաւենու ամանը, որ վէր ընկաւ, թողնելով դդալը նիկօլայի ձեռքում: Ամանը, ի հարկէ, շարդուեց և ապակու փշուրտանքը դէս ու դէն թռան:

Առաջին նուագ նիկօլան ինքն էլ չէր իմանում, թէ ինչ անէր, յետոյ՝ մի խուլ հառաչանք

արձակելով կրծքից, կռացաւ, երկու ձեռով առաւ քաղցրաւենին, բայց կրկին չէր իմանում, թէ ինչ անէր:

—Ձարար եօք (մնաս չունի),— մխիթարեց նորան մատաղահաս օրիորդը, և նորա առջն կանգնած՝ վերստին քաղցրաւենի առաջարկեց ասելով:

—Պօֆֆիմ:

Սորանով նա կամեցաւ ասել, որ մի ուրիշ քաղցրաւենու համը տեսնէ և վրայից ջուր խմէ. բայց նիկօլան չէր կարող անել այդ նախ և առաջ այն պատճառով, որ շատ կոտորուել էր և ապա՝ ձեռքին բռնած ունէր տարաբախտ քաղցրաւենին:

—Ձարար եօք,— կրկին մխիթարեց նորան օրիորդը, բայց այս մխիթարանքը չազատեց մեր երիտասարդին նեղ դրութիւնից:

—Դէ ձգի՛ր էլի,— ասաց Ստօեանը:

Նիկօլան չվստահացաւ կատարել իւր բարեկամի խորհուրդը. նա կարծում էր, թէ քաղցրաւենին պէտք է դնել մատուցարանի վերայ: Նա այնպէս շուտ արաւ այդ բանը, որ օրիորդը չկարողացաւ արգելել նորան, և քաղցրաւենին դրեց իւր ամանի տեղում: Օրիորդը ժպտեց և վերստին դիմելով նիկօլային՝ ասաց.

—Պօֆֆիմ:

—Ձէ, այժմ էլ պէտք չէ...— վճռողաբար պատասխանեց նիկօլան, լիզելով մատներին կպած

քաղցրաւենին:—Միայն ջուր կըխմեմ: Իսկ ինչ վերաբերում է ամանին... մի՛ անհանգստանաք. այդ իմ գործն է:— Նա ասաց այս համապատասխան շարժում անելով, յետոյ ջուր խմեց, և ապա կարծես ինքն իրեն շարունակեց:

—Շնորհքս լա՛ւ ցոյց տուի: Ստօեանան գիտէ, թէ այնպիսի քաղցրաւենի էլ կայ, որի մէջ գգալը խրվում է և դուրս չէ գալիս: Սա ինձ խրատ կըլինի:

Օրիորդը մօտեցաւ Ստօեանին, և սա իւր պարտականութիւնը ամենից լաւ կատարեց:

Օրիորդը դնաց: Երբ նա հեռանում էր, նիկօլան մի ծանր ախ քաշեց:

—Աման, աման...— ախ քաշեց նա:— Լա՛ւ շնորհքս ցոյց տուի օրիորդի առաջ:

—Է՛հ, ի՞նչ մեծ բան...— պատասխանեց Ստօեանը:

—Ի՞նչ պիտի մտածէ իմ մասին:

—Ի՞նչ ուզում է, թող մտածէ:

—Ի՞նչ գեղեցիկն է...

Արդարեւ, այդ ազնիւր, կարծես, հէնց նորա համար էր ստեղծուած, որ մարդիկ հիանային: Բուլղարահիւները առ հասարակ գեղեցիկ են, — իսկ սա բոլոր գեղեցկուհիների թագուհին էր: Նորա արտաքին տեսքում մի փոքրիկ բան անգամ չկար, որ արժանի լինէր որ և է պախարակութեան. ոչ մանիշակագոյն աչերը, ոչ ապրշումի պէս ցոլուն պայծառ մազերը, որից հաստ ծամեր



էին հիւսուած, ոչ դէմքի գծագրութիւնը, ոչ կազմուածքի ամբողջ ձևը, որ պատկերանում էր փոքր ինչ փոփոխուած տաճկական շորերի տակից: Նա հազին ունէր վարտիկ տաճկական կերպասից կարած՝ գոյնգոյն բարակ շերտերով, ուսն ու իրանը ծածկուած էին խաշաթով, ապրշումէ գօտիով կապած: Այս շորը պարզ ու որոշակի ցոյց էր տալիս իրանի ճկունութիւնը և դուրս ցցուած տեղերը:

— Ինչպէ՞ս գեղեցիկ է, — հիանում էր Նիկօլան, ձեռները լիզելով: — Սորա պէսը ես կեանքումս դեռ չեմ տեսել. ո՞վ է:

— Աղջիկը, — պատասխանեց Ստօեանը:

— Ո՞ւմ:

— Հաջի Խրիստոյի:

— Չէ՞... Իսկ անունը ի՞նչ է:

— Իլենկա:

— Հօ ինքը սուլթանը դորան կըհաւանէր, եթէ տեսնէր:

— Ի հարկէ, — պատասխանեց Ստանկօն:

— Ա՛խ, ինչ գեղեցիկ աղջիկ է: Թո՛ղ նա հոգս չբաշէ ամանի մասին... Այդ նորա գործը չէ:

Գուցէ նա շարունակէր իւր խօսքը այս ձևով, բայց Ստանկօն ընդհատեց նորան:

— Ուրեմն ես կ'ասեմ, որ դուք ամեն բան կ'անէք: Աւելի լաւ: Ես չէի ուզում խառնուել այդ գործերի մէջ, բայց որովհետև ուրիշ մարդ չկար, — ես էլ յանձն առայ: Հայրենիքիս համար

ես ամեն բան կ'անեմ, բայց գերադասում եմ, որ իմ փոխարէն ուրիշներն անեն, որովհետև կեանքս ինձ համար դեռ թանկ է: Իսկ դուք, — հարցրեց նա, — պատրաստ էք ձեր կեանքը զոհելու:

— Այո՛, — պատասխանեց Ստօեանը, — ես միշտ պատրաստ եմ գլուխս տալու:

— Ե՛ս նոյնպէս, — բացականչեց Նիկօլան:

— Ուրեմն ես կ'ասեմ ձեր մասին և յետոյ ձեզ կըյայտնեմ, իսկ առ այժմ ձեզանից մէկին կըյանձնեմ այն հրատարակութիւնները, որ նշանակուած են ընթերցարանի համար:

— Ինձ տուր, — բացականչեց Նիկօլան:

— Ինձ համար մի և նոյնն է, — պատասխանեց Ստանկօն:

— Ուրեմն ես երեկոյեան քեզ մօտ կըգամ:

— Շաբաթն երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ օրերը: Հասկանո՞ւմ ես:

— Չհասկանալու ի՞նչ կայ որ: Պէտք է միայն յիշել. չորեքշաբթի, շաբաթ. չորեքշաբթի, շաբաթ... — կրկնում էր ինքն իրեն Նիկօլան:

V.

Գուցէ Իլենկայի գեղեցկութիւնը չունենար այդպիսի ազդեցութիւն Նիկօլայի վերայ, եթէ քաղցրաւենու ամանը չկոտորուէր, որ միշտ օրիորդին յի-

չել էր տալիս: Յայտնի է, որ աննշան բաներից երբեմն մեծ բաներ են ծագում: Քաղցրաւենու ամանի ջարդուելը երբէք մի մեծ եղելութիւն չի կարելի համարել. դա սովորական բաներից մէկն է: Նիկոլային դուր եկաւ զեղեցիկ օրիորդը, իսկ այդ անցքն աւելի սաստկացրեց նորա զգացմունքը:

— Ես քաղցրաւենու ամանը կտարեցի, — կրկնեց ինքն իրեն Նիկոլան. — Ես անբաւականութիւն պատճառեցի նորան... նորան...

Կերբ մի երիտասարդ սկսում է յաճախակի խօսել զեղեցիկ սեռի մի ներկայացուցչի մասին, դա պարզ ցոյց է տալիս, թէ կայ մի անձնաւորութիւն, որ եթէ լիովին չէ տիրել նորա սրտին, անշուշտ կարող է տիրել:

— Նա... նա...

Պերճակի խանութում այս դերանունը հանգստութիւն չէր տալիս Նիկոլային. իսկպէս նա մտածում էր ամանի վերայ: Այժմ Նիկոլան այնքան էր աշխատում, որ ամսական կարողանում էր 10 դրուշ (2 ֆր.) յետաձգել: Նա հաշուեց և տեսաւ, որ մինչև 20 ֆրանկ փող ունի: Այդ փողը նա հաւաքել էր շոր գնելու համար:

— Է՛հ... շոր... — ասաց նա ինքն իրեն: — Շորը չի փախչիլ: Բայց ամանը պէտք է գնել: — Կոտրուած ամանը միշտ նորա աչքի առաջ էր, և հաւատացած էր, որ ապակեղէններ ծախող խանութում անպատճառ կը գտնէ նորա պէտք: Տասն

և երկու ժամին տէրը արձակում էր մի ժամով: Նիկոլան օգուտ քաղեց ժամանակից և գնաց խանութ:

— Քաղցրաւենու համար աման ունի՞ք:

Ծախողը նայեց նորան և հարցրեց. — Քեզ համար է:

— Չէ, ես ուրիշներ կտարել եմ և պիտի գնեմ:

— Ինչպէ՞սն ես ուզում:

— Ինչպէ՞ս... լաւը:

Ծախողը ցոյց տուեց մի հասարակ ապակիից շինածը:

— Չէ, սա էն չի, — ասաց Նիկոլան:

Վաճառողը ցոյց տուեց դունաւորները. կանաչ, կապոյտ, վարդագոյն, բայց Նիկոլան միշտ կրկնում էր. — Չէ, էն չի:

— Ի՞նչ է, դու յղկածն ես ուզում. թէ ամենամաքուր ապակիից, — փոքր ինչ բարկացած հարցրեց վաճառականը:

— Երևի, ամենամաքուր ապակիից, — պատասխանեց Նիկոլան:

— Իսկ որքա՞ն փող ունիս:

— Յիսուն դրուշ:

— Ի՞նչ որ էդպէս է, գնա, մի յիսունն էլ բեր, այն ժամանակ կը խօսենք: — Մի քանի ուրիշ խանութներում նորան մի և նոյնը կրկնեցին:

Խանութպաններից մէկը ցոյց տուեց ճիշդ այն տեսակիցը, որ նա կտարել էր. բայց դորա համար նորանից վախժսուն և հինգ դրուշ պա-

հանջեց: Գուցէ խանութպանը մի բան էլ զիջա-  
նէր, բայց որովհետեւ Նիկոլան չհամոզուած չէր,  
թէ դա ճիշդ այն տեսակիցն է, որ ինքը կոտ-  
րել է, չ՛վստահացաւ գնել: Այդ բանը նորան  
շատ էր հետաքրքում և հանգստութիւն չէր տա-  
լիս: Նա ինքն իրեն կշտամբում էր, որ չէր հա-  
ւաքել այն ամանի կտորտանքը. գոնէ այժմ կա-  
րող էր համեմատել: Նա ման էր գալիս գլխա-  
կոր և միշտ մտածում կամ կոտորած ամանի, կամ  
օրիորդի վերայ:

Բայց տեսէք, թէ առաջիկայ կիւրակի օրը  
ինչ է լինում. երբ երիտասարդը ըստ սովորու-  
թեան նստած էր ընթերցարանում, եկաւ Սոս-  
եանը և, կողքին նստելով, մի ինչ որ բան փըս-  
փսաց.

— Եղա՞ր Ստանկոյի մօտ:

— Ա՛յ, չէ՛, մոռացայ.— պատասխանեց Նիկոլան:

— Ա՛յ տեսնում ես:

— Չգիտեմ, ճշմարիտ, ինչ է եղել ինձ, բո-  
լորովին մոռացայ:

— Բայց երեկ շաբաթ էր:

— Այո՛... շաբաթ էր: Չորեքշաբթի, շաբաթ...  
չորեքշաբթի, շաբաթ... Մոռացայ... ես այսօր  
կըզնամ:

— Տա՞նը կըլինի:

— Բոլորովին չեմ հասկանում, թէ ինչպէ՞ս  
մոռացայ ես:— Յետոյ արելի ևս ձայնը մեղմաց-  
նելով՝ հարցրեց.— Բայց իլենկա՞ն:

— Ի՞նչ.— հարցրեց Սոսեանը փոքր ինչ զար-  
մացած:

— Նա վրաս չէ՞ բարկանում:

— Ինչո՞ւ համար:

— Էն նղովեալ ամանի համար:

— Ի՞նչ...— հանգստացրեց նորան Սոսեանը:

Նիկոլան ախ քաշեց և իսկոյն էլի հարցրեց.

— Բայց կարելի՞ է նորան տեսնել:

— Ինչու չի կարելի:

Մի քանի րոպէից յետոյ նա դուրս եկաւ  
ընթերցարանից և իւր քայլերը ուղղեց դէպի  
հաջի Խրիստոյի տունը: Բակը մտնելուց յետոյ նա  
չգիտէր, թէ ինչպէս անէր, որ տեսնուէր օրիոր-  
դի հետ: Նորա բախտից ախաղինը դուրս եկաւ,  
և Նիկոլան ինգրեց, որ իլենկային կանչէ:

— Ինչո՞ւ համար, — հարցրեց աղախինը:

— Պէտք է, բան ունիմ ասելու:

— Ի՞նչ բան:

— Քաղցրաւենու ամանի մասին:

— Ա՛յ, այնտեղ է, — ասաց աղախինը, ցոյց  
տալով դուռը, — իսկ ես իմաց կըտամ նորան:

Նիկոլայի մտած սենեակը կահաւորուած էր  
բազմոցներով, բայց ուրիշ զարդարանք չկար: Դա  
միւսաֆիրլըղն էր, ուր թողնում էին հասարակ  
եկողներին, որոնց հետ հաջի Խրիստոն զանազան  
մանր գործերի համար պայմաններ ունէր: Այդ-  
տեղ և հաջի Խրիստոյի կինը խօսում էր զանա-  
զան վաճառականների, վաճառականուհիների

հետ: Այդ սենեակը կարելի էր տեսակցութեան սենեակ անուանել: Աղախինը ենթադրեց, որ օրիորդը կամենում է խօսել ապակեղէն ծախող խանութապանի գործակատարի հետ, գորա համար էլ Նիկոլային այդ սենեակը ուղարկեց: Հագլիւ թէ Նիկոլան նստաւ բազմոցի վերայ, իսկոյն ներս մտաւ Իլենկան: Նիկոլան վեր կացաւ:

— Ա... — արտասանեց նա մասամբ զարմացած, մասամբ հարցական եղանակով:

— Ես եկայ, — սկսեց նա:

— Բարո՞վ եկար:

— Ես միայն մի րոպէ, գործի համար...

— Ի՞նչ գործի:

— Ահա... տեսնում ես, — թօթովեց նա, — այս ամանը:

— Ի՞նչ աման: Երևի, դու կտարածի մասին ես ասում:

— Այո՛, այո՛: Ես չեմ ուզում ասել, այլ հարցնել. չունի՞ք նորա զոյգը:

— Կայ, — պատասխանեց օրիորդը մի քիչ զարմացած:

— Ծիշտ և ճիշտ այնպէ՞սը:

— Ծիշտ և ճիշտ:

— Ես կ'կուղենայի տեսնել:

Օրիորդը նայեց նորան և ապա պատասխանեց.

— Լաւ... փոքր ինչ սպասիր, ես քաղցրաւենի և ջուր կըբերեմ... այն ժամանակ կըտեսնես:

— Չէ, — պատասխանեց Նիկոլան, ձեռքը մեկ-

նելով:— Ես ոչ քաղցրաւենի կ'ուտեմ, ոչ էլ ջուր կը խմեմ. ես միայն ուզում եմ տեսնել ամանը, որ ուրիշը չգնեմ.

— Ուրեմն դու այդքան հաւանե՞լ ես այն:

— Ես նորա համար չեմ կամենում գնել, որ հաւանել եմ:

— Իսկ ինչո՞ւ համար:

— Որ քեզ մնաս չտամ: Կտորեցի, — ուրեմն պէտք է գնել:

— Է՞դ ինչ ես մտածել, — պատասխանեց Իլենկան:— Այդ էր պակաս:

— Հօ ես կտորեցի:

— Մենակ հօ դու չէիր:

— Ինչպէ՞ս թէ ես չէի:

— Ինձ հետ միասին... Դու և ես. երկուսս միասին...

— Դու և ես, երկուսս միասին, — կրկնեց երիտասարդը, ասես, թէ յափշտակուած լինէր այս խօսքերի միաւորութիւնից:

— Կտորեցինք, — վերջացրեց Իլենկան:

— Ո՛հ, չէ՛, — պատասխանեց Նիկոլան:

— Միթէ իմ պարտականութիւնս չէր դգուշացնել ձեզ, տեսնելով, որ դուք դգալի հետ ամանն էլ էք բարձրացնում. ես մինչև անգամ աւելի մեղաւոր եմ:

— Է՛հ, — պատասխանեց Նիկոլան, — դա դատարկ բան է... Ես կտորեցի, ես էլ պիտի գնեմ.

այդպէս է պահանջում արդարութիւնը, այդ իմ պարտականութիւնս է:

Հ—Պարտականութիւնդ, — լըջօրէն կրկնեց օրիորդը:— Դու բացի դորանից էլ պարտականութիւններ ունիս. ծառայիր Բուլղարիային— ահա ւասիկ քո պարտականութիւնը:

—Մ, — բացականչեց Նիկօյան, — ինչ տեղից դու մտածեցիր այդ բանն ինձ ասելու:

— Մտօեանը պատմել է մեզ քո մասին, դուրս համար էլ կարծում եմ, որ դու չպիտի մըտածես ամանի վրայ: Ի՞նչ արժէ այդ ամանը մէմլէքէթի (հայրենիք) համեմատութեամբ:

— Ի հարկէ, անտարակոյս, — կրկնեց Նիկօյան:

— Մոռացիր ամանը:

— Կրմոռանամ, կրմոռանամ, բայց...

— Ի՞նչ է որ, — հարցրեց օրիորդը մեղմօրէն նայելով նորան:

— Քե՛ղ չեմ մոռանալ...

Օրիորդը աչքերը վայր ձգեց, լռեց, յետոյ փոքր ինչ շիփօլուած ասաց.

— Մի՞թէ ես մէմլէքէթին համեմատած ամանից աւելի արժեմ:

— Ի՞նչ... մէմլէքէթին համեմատած... չեմ... իմանում... չեմ... իմանում:

— Եթէ դու իսկ բուլղարացի ես, մէմլէքէթի համար կեանքդ պիտի տաս:

— Իսկ քեզ համար կեանքս չէ՞ր զոհիլ... հա՞:

— Բուլղարացին այդպէս չպիտի խօսի, — պատասխանեց օրիորդը, կամենալով գնալ:

— Կա՛ց, — կանգնեցրեց նորան Նիկօյան:

Նա կանգնեց և յետ նայեց:

— Կը մոռանամ ամանը... քեզ էլ կ'աշխատեմ մոռանալ, բայց... չգիտեմ, կըկարողանա՞մ արդեօք: Սակայն կըփորձեմ. քեզանից աւելի թանկ Բուլղարիան կըլինի ինձ համար... Տեսնենք, ի՞նչ կըլինի վերջը... իսկ առ այժմ... այ ինչ... հէ՛, — նա գլուխը շարժեց և կարծես մի ինչ որ միտք հեռացնում էր իրենից. — չէ... Մնա՛ս բարեալ:

— Մնաս բարեալ, — պատասխանեց իլենկան:

Իլենկան արագ արագ վեր բարձրացաւ, գընաց միւսաֆիրլըղ և կանգնելով վարագոյրի յետև պատուհանից նայում էր Նիկօյային, որ բակից դուրս գալով, շտապ շտապ հեռացաւ: Մի բան նորան ստիպում էր շտապել, և նա վազում էր: Նա այնպէս էր գնում, որ եթէ ճանապարհին ջրանցք պատահէր, կը թռչէր վրայից, եթէ ցանկ պատահէր — կը թռչէր, տաճկի պատահէր — կը գլորէր: Նա խիզախացել էր: Բարեբաղդաբար ոչ խրամի պատահեց, ոչ ցանկի, ոչ էլ տաճկի, վազեց ընթերցարան և այն ժամանակ միայն ուշքի եկաւ:

— Ի՞նչ էի ես այդպէս վազում, — հարցրեց ինքն իրեն:

Ակներև էր, որ նա յօգնած էր, և ընթերցարանում բոլոր գտնուողները զարմանքով նա-

յում էին նորա վերայ. նա սաստիկ կարմրեց, և չկարողացաւ զսպել իւր ստէպ ստէպ շնչառութիւնը:

— Չափազանց վազե՞լ ես, — ասաց նորան հարեանը: ...

— Ես չեմ վազել, — պատասխանեց Նիկոլան:

— Բե՞ռն ես կրել, ի՞նչ է:

— Չէ, չեմ կրել:

— Բայց ինչո՞ւ ես այդպէս հեռում և կարմրել:

— Ա՛խ, — հառաչեց Նիկոլան:

— Այսօր հօ շոգ չէ:

— Բայց ես շոգում եմ:

— Ձերմո՞ւմ ես, ինչ է:

— Ա՛խ, չէ՛... էնպէս բան է պատահել:

— Գնա՛ հէքիմի մօտ, որ աղօթք անի...

Նիկոլան ձեռքով արաւ, ախ քաշեց և աշխատեց ընթերցանութեամբ փարատել իւր այդ դրութիւնը: Առաւ լրագրներից մէկը, միւսը, երրորդը. կարգում էր բոլորը, բայց ոչինչ չէր հասկանում: Նա տեսնում էր բառեր, տառեր և տողեր, բայց նոքա ոչ մի մտապատկեր չէին ներկայացնում, — բոլորովին մեքենայաբար էր կարգում, — վեջապէս սկսեց չորս կողմը նայել, կարծես թէ մէկին որոնում լինէր: Արդարև, որոնում էր Ստօեանին, բայց նա այնտեղ չէր:

«Երևի տուն է գնացել», — մտածեց Նիկոլան և ինչպէս մինչև այժմ մեքենայաբար կարգում

էր, նոյնպէս էլ այժմ վեր կացաւ, որպէս մի ինքնաշարժ, և քաղաք դնաց:

Այժմ նա այլ ևս չէր շտապում. գնում էր դանդաղ, ամեն մէկին ճանապարհ էր տալիս, մտածում էր մի բանի վերայ, բայց ինքն էլ չէր իմանում, թէ ուր էր գնում, և այնքան գնաց, մինչև որ ստիպուած եղաւ կանգնել: Նորան կանգնեցրեց բնական սահմանը — մի անդունդ, որի եզերքին էր հասել: Դուրսը վեր բարձրացրեց և տեսաւ Դանուբը, իսկ Դանուբի միւս կողմում — մի մեծ անհուն մակերևոյթ, որ կանաչադոյն ծովի էր նմանում: Հեռուում այդ ծովի վրայ զանազան պսպղուն կէտեր կային, բայց նոցա վերայ Նիկոլան ուշադրութիւն չդարձրեց: Այնքան նա նայեց, որ էլ բան չէր տեսնում: Նա ծալապատիկ նստաւ անդունդի եզերքին, արմունկները դրեց ռաների վրայ, իսկ ծնօտը բռունցքի մէջ և այդպէս մնաց մի ժամ, գուցէ և անելի: Կարծես նա խորասուզուել էր մտածմունքի մէջ. իսկ եթէ մէկը հարցնէր, թէ ինչի վերայ էր մտածում, նա չէր կարողանալ պատասխանել: Զանազան պատկերներ էին նորան երևում, երազի պէս նորան մի բան էր թւում, երևում... Ամենից որոշ կերպով նա Բուլղարիան էր տեսնում, որ ներկայանում էր նորան, որպէս մի շիկահեր օրիորդ և շատ նման Իլենկային: Սակաւ առ սակաւ կանոնաւորվում էին նորա մտքերը, և վերջապէս նա սկսեց պարզ կերպով հասկանալ իւր տրամադ-

րութիւնը, որ և նա այս խօսքերով արտայայտեց-

— Եթէ նա (Բուրղարի<sup>Թ</sup>ան թէ Իլենկան) հրամայէր ինձ այս տեղից Դանուբ թռչել... ես կըթռչէի:

Նա հառաչեց:

Այս ձեռնարկութիւնը անմիտ էր այն պատճառով, որ այդ տեղից անկարելի էր թռչել Դանուբ. անդունդի ստորոտի և գետափի մէջ գլտնւ վում էր գոնէ մինչև վաթսուն քայլ լայնութեամբ տարածութիւն: Ամենալու մարմնամարդն անգամ չէր կարող այդպիսի մի ոստիւն անել: Սակայն այդպիսի ոստիւնները պատկանում են այն կարգին, որ լինում են սրտի առաձգականութիւնից, որ սովոր չէ ի նկատ առնել տարածութիւնը: Ինչ և իցէ, այս անմտութիւնը ապացուցանում էր, որ Նիկոլայի մտքերը այժմ խառնաշփոթուած չէին իրար հետ, այլ որոշ ուղղութիւն էին ստանում: Այդ ուղղութեան հետևանքն եղաւ մի ուրիշ, աւելի ևս մեծ անմտութիւն, որ ցոյց էր տալիս, թէ նա դեռ ևս իգէալիստ էր, աւելի ևս վատ—ուսմանտիկ էր, չնայելով որ իրօք առաջ հովիւ էր եղել, իսկ այժմ գերձակի մօտ, չնայելով որ նա մեծ ճիգ էր թափել իւր գիտութիւնները ձեռք բերելու և գործնական շրջանի մէջ ընկղմելու համար:

Նիկոլան տեսաւ, որ հեռուում պորերի մի մեծ երամ է թռչում: Կապոյտ երկնակամարում այդ երամը մի սպիտակ շերտ էր կազմում, և

նորա կարգով, ինչպէս մի դօրք, թռչում էին: Նիկոլան նայեց, երկար նայեց և դարձաւ պորերին, ասելով:

— Ո՛հ, պորե՛ր, պորե՛ր, եթէ ես էլ կարողանայի ձեզ հետ միասին թռչել:

Եւ ինչո՞ւ համար այդ բանը ծագեց նորա գլխում: Դա այն ֆանտաստիկական ուղղութեան հետևանքն էր, որ Նիկոլայի կարգի ընկնող մըտքերը ստանում էին. նա սկսաւ աւելի որոշ բան կամենալ, բայց ոչնչով չզսպուած կերպով... Եթէ նա կարողանար թռչել պորերի հետ, այն ժամանակ նա նոցա ճանապարհ ցոյց կըտար ոչ թէ դէպի կանաչ ճահիճները, այլ դէպի Կ. Պօլիս, ուղղակի գէպի սուլթանի ապարանքը... Ահա սուլթանը զբօսնում է պարտիզում: Պորերը թռչելով գալիս են և յանկարծակի տասնեակ հազարներ՝ ահագին բազմութեամբ ընկնում են նորա վերայ: Այն ժամանակ Աբդուլ-Ազիզն էր թագաւորում, որ հռչակուած էր իւր դուրս ընկած աչքերով և նորանով, որ թագաժառանգ եղած ժամանակ սիրում էր զուարճանալ հնդկահաւեր գլխատելով: Սագըղ փաշայի ասելով նա մեծ մարդ էր: Այնու ամենայնիւ, եթէ անսպասելի կերպով տասնեակ հազար պորեր յարձակուէին վրան, նորա բանը վատ կըլինէր:

— Ո՛հ, պորե՛ր, պորե՛ր,— կըլինեց Նիկոլան:

Եւ իրաւ, ի՞նչ կ'անէր սուլթանը իւր բոլոր մեծութիւնով, եթէ ամեն մի պոր մի անգամ

կմշտէր նորան: Ի հարկէ, նա իրեն կը պաշտպանէր, նոցա գլուխը կը կտրատէր, բայց դորանից հօ նորա դրուժիւնը չէր լաւանալ, և վերջ ի վերջոյ ստիպուած կը լինէր բացականչել. ամա՛ն, ամա՛ն, ի՞նչ էք ուզում ինձանից, այ պորե՛ր: Այն ժամանակ դուրս կը գար Նիկօլան, պատրաստ ֆիրմանը ձեռին և կ'ասէր.

— Կամ այս թուղթը ստորագրելի... կամ թո՛ղ պորերը քեզ կտցահարեն...

Անտարակոյս, սուլթանը թուղթը կը ստորագրէր:

Ֆիրմանում հրաման կը լինէր բոլոր փաշաներին, գայմագամներին, միւզիւրներին և առ հասարակ բոլոր քաղաքական և զինուորական աստիճանաւորներին իսկոյն և եթ հեռանալ Բուլղարիայից: Ահա, թէ ինչի մասին էր երազում երիտասարդը. սակայն այդ նորա ցնորքների միայն սկիզբն էր: Յետոյ հանդէս եկաւ Իլենկան: Նա կանգնեց օրիորդի առաջ ֆիրմանը ձեռին և այսպէս խօսեց.

— Ահա, տեսնում ես... Ե՛ս գտայ մեր դաշնակիցներին, թռչուններին... Ո՛հ, պորե՛ր, պորե՛ր — բացականչեց նա, տեսնելով, թէ ինչպէս սպիտակ ժապաւէնը ցած է ընկնում Դանուբի ձահիճների վերայ: Յանկարծ նա արթնացաւ:

Մէկը հարցնում էր նորանից.

— Ի՞նչ ես անում այստեղ:

Նա յետնայեց: Կողքին, փոքր ինչ հեռու, մի կին

էր կանգնած, որ կարծես, կանգ էր առել մօտից անցնելիս: Այս կնոջը նա առաջ պատահեց էր:

Նիկօլան նայեց նորան և պատասխանեց.

— Այնպէս, նստած եմ էլի...

— Այստեղ մի՛ նստիլ, որդի:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա:

— Սա լաւ տեղ չէ. այստեղ մարդու գլուխը կարող է պտտիլ... իսկ քո գլուխը չպտտուե՞ց:

— Չէ, — պատասխանեց նա զարմացած այդ հարցից:

— Իսկ դու պորերին էիր կանչում... ի՞նչ ես ուզում նոցանից:

Այս հարցը շփոթեց մեր հերոսին:

— Հը՛մ... — շարունակեց կինը. — Հանգիստ թող պորերին... Դու նոցանից ոչինչ չսպասես:

— Մի՞թէ ես նոցանից բան էի խնդրում:

— Դու այնպէս էիր կանչում նոցա, կարծես, թէ ինձ գիմելով, ասացիր. «պառաւ Մօկրա»:

Հանգիստ թող նոցա... և մի՛ նստիլ այստեղ... Մի՞թէ բան չունիս անելու:

— Ե՛ս... բան չունի՛մ անելու:

— Տեսնում ես... գիշերը վրայ է հասնում:

— Պառաւը ցոյց տուեց երկինքը, որի արեւմտեան կողմում մեծ շառագոյն արեգակը մայր էր մանում:

— Ահա արդէն երեկոյ է, — կրկնեց պառաւը, օրը վերջանում է, իսկ օրը վերջանալուն պէս



ամեն մէկն իւր գործն էլ պիտի վերջացնէ: Մի՞թէ դու բան չես սկսել, — հարցրեց պառաւը:

Նիկօլան վեր կացաւ, նայեց պառաւին և պատասխանեց.

— Ես սկսել եմ ծառայել:

— Այ տեսնում ես: — պատասխանեց պառաւը:

— Գնա՛ ծառայութիւնդ անելու, իսկ այստեղ մի՛ նստիլ: Սակայն եթէ բեղ թոյլ կըտան...

Պառաւ Մօկրան մի անգամից սկսեց խօսել Նիկօլայի հետ այնպէս, ասես, թէ բարոյապէս գերազանցում լինէր, ուստի և հակաճառութիւն տեղի ունենալ չէր կարող: Գորա համար էլ Նիկօլան անխօս հնազանդուեց:

Պառաւը մնաց, իսկ Նիկօլան դնաց:

Պառաւին պատասխանելով, թէ սկսել է ծառայել, Նիկօլան ի նկատի ունէր Բուլղարիային ծառայելը, որի մասին խօսում էր իլինկան: Այս խօսակցութիւնը ազդեց Նիկօլայի վերայ. նորա մտքերը խառնակուեցան և յետոյ նոցա կարգի բերելու ժամանակ նա կրկնակի մի անմտութիւն արաւ:

Գորա ի հարկէ գործնական տեսակէտից անմտութիւններ էին: Բայց այս անմտութիւնները ոչնչով վատ չէին նոցանից, որոնց շնորհիւ մարդկութիւնը ամբողջ դարեր է ապրել, հաւատալով հրաշայիւքների և ամեն տեսակ կողմնակի միջամտութիւնների մարդկանց առօրէական գործերի մէջ: Մարդկութիւնն էլ հօ մանուկ ու երիտա-

սարդ է եղել. նա էլ հաւատալիքներ է ստեղծել և անսահման կերպով ապաւինել նոցա: Նիկօլան նրանով էր զանազանփում մարդկութիւնից, որ նա չէր ստեղծել սեպհական հաւատալիքներ, այլ միայն երազում էր՝ և այն՝ պայմանաւոր կերպով: Եթէ օրիորդը հրամայէր, կըթռչէր, եթէ նա պոր դառնար — կըբերէր սուլթանի ֆիրմանը: Նա չէր հաւատում, այլ միայն երազում էր: Եթէ պառաւը չխանդարէր, նա այնտեղ կըմնար՝ և գուցէ ամբողջ գիշերը: Այն ժամանակ նորա երազները գիշերուայ մթութեան ազդեցութեան տակ թերևս ուրիշ գոյն ստանային: Բայց պառաւը եկաւ, հրամայեց — նա հնազանդուեց, գնաց, և երբ արդէն բաւական հեռացել էր անդունդից, ինքն իրեն հարցրեց, ինչո՞ւ լսեց, ինչո՞ւ ենթարկուեց պառաւի բարոյական ազդեցութեան: Պառաւ Մօկրա, նա մի ինչ որ բան լսել էր նորա մասին, բայց ոչինչ չկարողացաւ մտաբերել:

Այսպէս մտածելով նա դնաց Ստանկոյի բընակարանը «արգելուածը» ստանալու:

Ստանկօն բնակում էր ուսումնարանում, կամ ուսումնարանն էր նորա բնակարանը, որ բաղկացած էր երկու սենեակից — դասարանից և խոհանոցից: Դասարանում ոչ սեղաններ կային, ոչ էլ նստարաններ: Միայն մի քանի շարք գրքերը, տախտակը և պատից կախած Եւրոպայի քարտէզը, որ հրատարակուած էր այս դարու սկզբում,

ցոյց էին տալիս սենեակի դասարան լինելը: Աշակերանները նստում էին յատակի վերայ: Որովհետև օրը կիրակի էր, դասարանում Ստանկոյի ընտանիքն էր տեղաւորուած՝ կինը և հինգ երեխաները, որոնցից ամենամեծ աղջիկը ութը տարեկանից աւելի չէր լինիլ:

— Բարև ձեզ, — ասաց Նիկօլան ներս մտնելով:

Ստանկօն ևս բարևեց, բայց տեղից վեր չըկացաւ. երեխաներից մէկը նորա ձեռին էր, միւսը նստած էր ծնկներին, իսկ երրորդը փաթաթուել էր նորան:

— Ես քեզ երեկ էի սպասում, — ասաց Ստանկօն:

— Մեղաւոր եմ, — պատասխանեց Նիկօլան, նստելով մօտը և ձեռքը ճակատին խփելով շարունակեց. — Էս գլուխս է մեղաւոր... մոռացայ:

— Ի՞նչ ես ինքդ քեզ վերայ բարկանում... ամենքս էլ մարդ ենք... յիշողութի՞ւն... հրմ... Միայն եօթներորդ անգամ յիշողութիւնը մնում է մարդու գլխում: Դու դեռ առաջին անգամն ես մոռացել... և ես բոլորովին չզարմացայ... Բայց ա՛յ ինչ. ես ենթադրում էի, թէ դու խօսքիցդ յետ ես կանգնել:

— Է՛դ էր պակաս, — բողոքեց Նիկօլան:

— Դու գիտես, որ դա մեծ քայլ է, և ամեն մէկը ընդունակ չի կեանքը զոհ բերելու:

— Դու հօ զոհում էիր, թէ և որդկերանց տէր ես:

— Հր՛մ... — պատասխանեց Ստանկօն. — դա ուրիշ հարց է:

— Ինչպէ՞ս թէ ուրիշ հարց է:

— Դա իմ էսնաֆն է (արհեստ): Սկսում եմ այբուբենից, յետոյ՝ քանի գնում է, խորն ու խորը... Տղաներին սովորեցնում եմ. այբ, բէն... աւելի մեծերին ասում եմ. կարդացէ՛ք... այդպէս էլ գնում է, և այժմ տարածում եմ հրատարակութիւններ, որոնց մարդիկ վախենում են ձեռտալ... Բայց ես չեմ ուզում գլուխս փորձանքի տակ ձգել... Եւ ինձ թւում է թէ դու էլ կեանքից չես զզուել:

— Ի հարկէ չեմ զզուել:

— Ուրեմն մտածիր. գուցէ չընդունես:

— Եթէ ես չընդունեմ, կրկին դու յանձնառու պիտի լինիս:

— Չէ... ինձ արդէն նկատեցին:

— Մէկը հօ պէ՞տք է լինի...

— Այո՛, պէտք է, բայց պէտք է այնպիսին լինի, որ, ինչպէս ես արդէն ասացի հաջի խրիտոյի պարտիզում, եթէ շամիրով էլ դողեն, իմացածը չասէ:

— Դորա մասին մենք հօ խօսեցինք:

— Ճիշտ է. բայց դու լաւ մտածե՞լ ես:

— Մի քիչ մտածել եմ:

— Իսկ ամբողջ շաբաթը մտածե՞լ ես դորա մասին:

Այս հարցը այնքան էլ դուր չեկաւ նիկոլային: Սորան նա չպատասխանեց: Ստանկօն կըրկնեց իւր հարցը փոքր ինչ փոփոխած:

— Այս ամբողջ շաբաթն ինչի՞ վերայ էիր մտածում:

— Ամանի վերայ, — պատասխանեց նիկօլան:

— Հա՛... — զարմացաւ սակաւ ինչ Ստանկօն:

— Որ ես կտարեցի:

— Այդքան ուրեմն նա քո ուշ ու միտքդ գրաւե՞ց:

— Ուզում էի ճիշտ այնպիսին գնել:

— Յետոյ:

— Ոչ այնքան փող ունէի, ոչ էլ կարողացայ ընտրել, ինչպէս հարկն է, այսօր գնացի հաջի Խրիստոյի մօտ, որ ցոյց տան ինձ նորա պէսը:

— Յետո՞յ,

— Յետոյ, որ այժմ երկար ու բարակ մտածելու բան չկայ, միթէ ես կ'ասեմ, թէ կուզ շամփուրով էլ գաղեն:

— Գեղեցիկ օրիորդ է, նկատեց Ստանկօն:

— Բայց դու նորա հետ ոչինչ չխօսեցիր թէ իմ' և թէ արգելուածի մասին:

— Մի խօսք:

— Էդ լաւ է: Ուրեմն եթէ դու վճուել ես, պէտք է փոքր ինչ սպասես, մինչև որ թոյլտուութիւն ստացուի:

— Թոյլտուութի՞ւն... — կրկնեց նիկօլան. — այսօր երկրորդ անգամն է, որ ինձ թոյլտուութեան մասին են ասում:

— Ինչպէ՞ս:

— Այժմ դու ասացիր, իսկ մի քանի ըսպէս առաջ մի և նոյնն ասաց ինձ Մօկրա պառաւը:

— Դու ի՞նչ տեղ տեսար նորան:

— Անդունդի եզերքին նստած էի, նա մօտեցաւ և հրամայեց, որ հեռանամ, և աւելացրեց, թէ ինքն էլ կարող կըլինէր նստել այնտեղ, եթէ թոյլ տային...

— Հըմ... — մրթմրթաց Ստանկօն... — Բայց

դու նորան ճանաչո՞ւմ ես:

— Մի ինչ որ բան լսել եմ նորա մասին:

— Դա մի քիչ տարօրինակ, բայց խելացի կին է: Ամբողջ Ռուչչուկը նորան ճանաչում է, նա ո՛չ աղայից է վախենում, ո՛չ էլ փաշայից:

— Այդ իսկոյն երևում է:

Ստանկօն էլի մի բան էր ուզում ասել, բայց միայն գլուխը շարժեց և կանչեց կնոջը, որ այդ ժամանակ խոհանոցում ընթրիք էր պատրաստում:

— Ա՛ռ երեխային, — ասաց նորան Ստանկօն, — տալով քնած երեխային: — Ես գրքերը պիտի վերջացնեմ:

Կինն առաւ երեխային. Ստանկօն վեր կացաւ և գնաց, բայց շուտով վերադարձաւ, և ձեռքում, կարծես, բան չկար. սակայն նստելով նի-

կօլայի կողքին, թեից հանեց մի լրագիր, որ մի քանի անգամ ծայած էր, և մի փոքրիկ բրօշուր: Դնելով այդ բաները Նիկոլայի առաջ, նա ասաց.

— Ա՛յո այս բաները և դի՛ր թեիդ մէջ:

Նիկոլան կատարեց հրամանը:

— Իսկ փողոցով անցնելիս զգոյշ կաց, որ զափթիները քեզ չձերբակալեն և բանտ չդնեն:

— Ինչո՞ւ պիտի ձերբակալեն ինձ:

— Ինչո՞ւ: Կասկածելի կարող ես թուիլ նոցա: Նորա կրճերբակալեն քեզ, դրպաններդ կրփնտռեն, ամեն բան կրխլեն և եթէ փարա գտան, կրճերբակալեն և առանց փարայի բաց կրթողնեն: Եթէ «արգելուածը» գտնեն, այն ժամանակ բանտից դատարան քաշ կրտան, դատարանից բանա, հարց ու փորձ կանեն, կրունկներիդ կրխլիեն, սոված կրպահեն, կրչարչարեն և վերջապէս կամ կրկախեն, կամ Ա.ք.քէայում կրփթեցնեն (St. Jean—d'Acrc)... Հասկանո՞ւմ ես:

— Իէ՛հ ի հարկէ—ասաց Նիկոլան, յօնքերը կիտելով:

— Այժմ՝ դիտե՛ս, թէ ինչ քայլ արիր:

— Ի հարկէ գիտեմ:

— Ուրեմն զգո՛յշ կաց, և Աստուած թող օգնական լինի քեզ:— Մտի՛ր չորեքշաբթի, իսկ այժմ լսո՞ւմ ես,—ցուցամատով նա դարձրեց Նիկոլայի ուշադրութիւնը մուէղէնի ողբագին և երկարածիգ երգեցողութեան վրայ, որ գալիս էր մօտակայ մինարէթից, —երեկոյեան նամազն է...

Կէս ժամից յետոյ կարող են ման գալ կատուները, շներն ու զափթիները... Շտապիր:

Նիկոլան վեր թռաւ ու վազեց:

Փողոցում մեծ իրարանցում էր, որովհետեւ ամեն ոք տուն էր շտապում: Այդ ժամանակ, մանաւանդ տօն ու կիւրակի օրերը, յաճախ գալիս էին գիշերուայ պահապանները, հաւաքում հարբածներին և ձերբակալում կասկածելիներին: Նիկոլան իրեն կասկածելի էր համարում և հեշտութեամբ կարող էր բռնուել եթէ մի որ և է զափթի ուշադրութեամբ նայէր նորան: Սակայն բազդը չդաւաճանեց նորան: Նա անփառնգ հասաւ և եռանդով սկսեց իւր նոր ծառայութիւնը:

VI.

Կէս ժամու Մօկրան մի տարօրինակ կին էր: Տասը տարի առաջ նա այրիացաւ և ժառանգեց մի շատ նշանաւոր կարողութիւն: Նա երեք օրդէ ունէր և մի աղջիկ: Հանգուցեալին Ռուշուկում ամենահարուստ վաճառականներից մէկն էին համարում, և այդ պատճառով նա վայելում էր մեծ յարգանք ոչ միայն իւր քաղաքացիներից, այլ և պաշտօնեաները նորա մասին լաւ կարծիք ունէին: Վերջին տարիները միշտ նա էր չորբաջի ընտրվում և այս պաշտօնը կատարում էր այնպէս, ինչպէս վայել է մի պատուելի և արդարամիտ

մարդու: Տաճիկները նորան լիովին բարեմիտ էին համարում և բոլորովին չէին դատապարտում նորան այն բանի համար, որ որդիքը արտասահման էին կրթութիւն ստանում: Մի այդպիսի հարուստ մարդու այդ ներելի էր, մանաւանդ որ իրենք տաճիկները ուղարկում էին իրենց մուսուլման երիտասարդներին գեաւորների մօտ կրթութիւն ստանալու՝ Փրանսիա, Գերմանիա և մինչև անգամ Չուիցերիա:

Մահից մի թէ երկու տարի առաջ Մօկրայի մարդը արտասահման ուղարկեց իւր ամենափոքր որդուն, երբ ամենամեծն արդէն աւարտում էր իւր ուսումը: Նա ուսանում էր վաճառականական ուսումնարանում և վերադառնալուց հօր տեղը պիտի բռնէր, բայց սրովհետև հայրը շուտ մեռաւ, Մօկրան ինքը սկսեց կառավարել բոլոր գործերը և այն ուղղութեամբ էլ շարունակեց, ինչպէս հանդուցեալի կենդանութեան ժամանակ էր: Այլ մի անբարեմիտ բանի հետ չչիօւելով, նա միայն փողի, փարայի մասին էր մտածում, և դորա մէջ էր տեսնում կեանքի միակ նպատակը, միակ գեղեցկութիւնը: Թէպէտ նա անգրագէտ էր, բայց այդ չէր արգելում նորան կոպէկներ հաւաքել ամենայն յաջողութեամբ, և կարճ միջոցում նա էլ այնպիսի յարգելի անձնաւորութիւն դարձաւ, ինչպէս և իւր հանդուցեալ մարդը: Ամենքը ասում էին, թէ Մօկրան շատ խելօք է և, արդարև, նա հիա-

նալի կերպով տանում էր իւր գործերը. խօսքի համար սար ու ձոր չէր ընկնում և ոչ ոքից էլ չէր վախենում: Նա այնքան համարձակ, այնքան անձնապատան էր, որ նոյն իսկ սուլթանի առաջ չէր շփոթուի: Այսպէս մի երկու տարի նա ստիպուեցաւ սպասել մեծ որդու վերադարձին:

— Է՛հ, փառք Աստուծոյ, որ եկար, — ասաց նա՝ որդուն բարևելուց յետոյ: — Կառավարիր ամենը, ինչպէս կամենում ես. ծախի՛ր, ինչ ուզում ես և ինչպէս կամենում ես, միայն գործը խելացի կերպով տար, որ ամօթով չմնաս, երբ փոքր եղբայրներդ հաշիւ պահանջեն.

— Ա՛խ, մայրի՛կ, — պատասխանեց երիտասարդը, — ես դեռ չեմ կամենում սկսել վաճառականութիւն:

— Ինչո՞ւ, — հարցրեց մայրը:

— Ես ուրիշ գործ ունիմ... իսկ երկու բան միասին չէ կարելի առաջ տանել:

— Այո՛, ասածդ ճիշտ է. դու էլ երկու գործ մի անիլ, — պատասխանեց մայրը առանց հարցնելու, թէ ինչով է մտադիր որդին պտրապելու: Երիտասարդը, որ բոլորովին ընաերացել էր արեմտեան կեանքին, յաճախակի պատմում էր մօրը ժողովրդի անկախութեան մասին, խօսում էր, թէ հարստահարողների դէմ անպատճառ թողլերը պիտի մաքառեն և ուրիշ հազար ու մի տեսակ բան էր ասում, որ մայրը չէր հասկանում և չէր էլ ուզում հասկանալ:

— Ինչ ինչ, — ասում էր մայրը, — քանի որ դա ընդհանուր բան չունի ոչ ճարպի, ոչ սապոնի, ոչ էլ իւրի հետ: Հօ ապրանքների գները կախումն չունին այդ փիլիսոփայութիւններից, ուրեմն ես էլ գործ չունիմ դրանց հետ...

Որդին մի քանի օր մնաց տանը: Մօկրան առաջարկեց նորան փաշայի հետ ծանօթանալ... նա էլ աշխատեց և քանակ է:

— Նա շատ էր հետաքրքրուում, — ասում էր որդին, — նա միայն մեր հայրենիքի ճնշողն է:

Մօկրան այս էլ չհասկացաւ: Իսկն ասած, նա վախենում էր տաճիկներից. գիտէր, որ նոցա հետ միշտ զգոյշ պէտք է լինել, որովհետև իշխանութիւնը նոցա ձեռքին է: Նա հաւատացած էր, որ այդ բոլորը Աստուծոյ կամքովն է եղել և ուրիշ կերպ չի էլ կարող լինել, ուստի յարմարվում էր. ընտելացել էր ամեն բանի և կարողանում էր իրեն յատուկ հումորով հեռացնել խոշոր անբաւականութիւնները լաւ փորձած միջոցների շնորհիւ: Նա միշտ կատակ էր անում, կաշառք էր տալիս աստիճանաւորներին, և սոքա սիրում էին նորան: Այս կինը ոչ մի կերպով չէր կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ իւր որդին խոյս է տալիս տաճիկներից, ինչո՞ւ է կանչում իւր մօտ բուրլարացի երիտասարդներին և խօսում նոցա հետ զուիցերացիների, հոլլանդացիների, սպանացիների, իտալացիների և ուրիշ շատ բաների մասին, որոնք բոլորովին կապ չունէին

ասուելորի հետ: Որդու «պատմածներից» նա մի քանի բան յիշում էր, բայց բոլորովին չէր կարող անում հասկանալ, թէ դոցանից ինչ գործնական կիրառութիւն կարող է լինել:

Մի անգամ որդին մօրից խնդրեց երկու հարիւր սօկի:

— Ինչի՞դ է պէտք, — հարցրեց մայրը: — Ռէվօլվերներ գնելու, — պատասխանեց երիտասարդը:

— Երևի, արժան է գնումս:

Նա համոզուած էր, որ որդին ծախելու համար է գնում ռէվօլվերները: Երկու հարիւր սօկով կարելի է երեսուն կամ քառասուն ռէվօլվեր գնել — ինչո՞ւ համար է նա այդքան գրնում, եթէ ոչ ծախելու համար: Նա անուշաբիտը և սպանում էր փոխադրութեան, իսկ որդին պատրաստուեցաւ ճանապարհ ընկնելու:

— Ո՞ւր ես գնումս:

— Ռումանիա: Եղբայր ամբողջ քան իմ:

— Երկար ժամանակով:

— Չէ, երկար ժամանակով չեմ գնում... Ես մենակ չեմ վերադառնալ, — աւելացրեց որդին:

— Ի՞նչ է, գուցէ այնտեղ քեզ համար աղջիկ ես պատրաստել, — հարց ու փորձ արեց Մօկրան մայրական սիրով, որից երևում էր, թէ նոքա, մայրերը, կամենում են շուտով իրենց թոռներին մասին էլ խնամք տածել:

— Դեռ ես ժամանակ չունիմ աղջկերանց վերայ մտածելու, — պատասխանեց երիտասարդը...

Մինչ Մօկրան սպասում էր իւր օրդուն, Բուլղարիայում լուր տարածուեցաւ յուղմունքների մասին, որ տեղի էին ունեցել Ռումանիոյ սահմանը անցնելիս: Այս լուրերը փոքր ինչ անհանգստացրին Մօկրային. սակայն նա անհանգիստ էր լինում նորա համար, որ իւր օրդին գտնվում էր հէնց այնտեղ, ինչտեղ ծագել էր յուղմունքը: Այս հանդամանքները զուգադիպութիւնը նորան պատահական էր թւում, բայց կրկին նա անհանգիստ էր և ազահու թեամբ լըսում էր ամեն մի նոր լուր:

Որովհետեւ նա գիտէր, որ ամենաճիշտ տեղեկութիւնը կ'ունենան իշխանութիւն ունեցողները, ուստի առաջին դէպքը առիթ բռնելով նա գնաց ոստիկանատուն: Հէնց այդ ժամանակ դուրս է գալիս, որ նա գործ ունէր մաքսատանը, որ պահանջում էր փաշայի աջակցութիւնը, և նա վճռեց գնալ փաշայի մօտ: Իսկոյն և եթ նրան ընդունեցին: Նա մեկնեց փաշային իւր առևտրական գործը և մտածեց, թէ ինչպէս անէ որ մի բան իմանայ, — բայց յանկարծ ինքը փաշան հարցրեց նորան.

— Ի՞նչ կայ, ինչ չկայ:  
— Դու աւելի լաւ կ'իմանաս, էֆէնդի, թէ ինչ կայ, ինչ չկայ:

Փաշան ժպտելով պատասխանեց.  
— Դու էլ այնպիսի ականջներ ունիս, ինչպէս և ես:

Մօկրան պատասխանեց դէմքի միմիկայով, լեզուն չըրկացնելով և գլուխը շարժելով, իսկ յետոյ ասաց.

— Իմ ականջներս կապած են, իսկ քոնր բաց: Դորա համար էլ ես միայն այն եմ լսում, ինչ որ բարձր ձայնով են ասում:

— Օրինակի համար, ինչ:  
— Օրինակի համար, էֆէնդի, որ դու շաքարի պէս քաղցր ես:

— Էլի՞ ինչ:  
— Ատում են, թէ ինչ որ աւաղակներ են երևել:  
— Չէ, դուքա աւաղակներ չեն, — նկատեց փաշան:

— Եթէ աւաղակներ չեն, ապա ի՞նչ են:  
— Խռովարկուներ, ջանմ:

— Ի՞նչ բան է խռովարկու:  
Այդ բանը դու աւելի լաւ կ'իմանաս, երբ յայտնուի, որ քս օրդին էլ նոցա մէջ է:

— Իմ օրդին: Նա՞ ինչ բան ունի այնտեղ:  
— Ո՞ւր է նա, — հարցրեց փաշան:  
— Թէսկէրէ (անցագիր) առաւ և անցաւ գնաց Դանուբի միւս կողմը:

— Ինչո՞ւ համար:  
— Առևտրական գործով, բայց, գուցէ, և աղջկայ համար:

Նա աղջիկ խօսքը յիշեց, որ խօսակցութեան կատակի ճև տայ, սակայն չարագուշակ նախագդացումը ճմլում էր նորա սիրտը:

— Ի՞նչ է, քո որդին մի բան գնե՞լու թէ ծախելու է գնացել, — հարցրեց փաշան:

— Ճարպի մասին էր ուզում տեղեկութիւն հաւաքել: — Նա արտասանեց՝ «ճարպի մասին», բայց մտածեց ուէփօլիէրների վերայ, այդ ընտելին նա շատ բան հասկացաւ, ինչ որ առաջ չէր հասկանում:

— Եթէ արդարև քո որդին գնացել է ճարպի մասին տեղեկութիւն հաւաքելու, դա շատ լաւ բան է:

— Իսկ եթէ աղջկա՞յ համար լինի:

— Այդ հօ աւելի լաւ: Հաւաստի եմ, որ ինձ էլ կը կանչես հարսանիք: Այն ժամանակ արդէն կը խմեմ ջահեղների կենացը:

— Իսկ ես, էֆէնդի, ջուր կ'անուանեմ այն գինին, որով քեզ կը հիւրասիրեմ:

— Կարող ես հոգս չքաշել դորա համար. նստեցրու ինձ այնպէս, որ ծործրակա դէպի արևելք լինի, այն ժամանակ մարդարէն չի տեսնիլ, ջուր եմ խմում, թէ գինի... Իսկ ե՞րբ ես սպասում որդուդ վերագարձին:

— Գուցէ այսօր կամ վաղը դայ:

— Երբ նա վերագառնայ, ասա նորան, որ ինձ մօտ դայ. գործ ունիմ հետը:

Մօկրան դուրս եկաւ ոստիկանատնից: Նա

սկսաւ աւելի և աւելի անհանդստանալ, և վերագառնալիս մի քանի խանութ մտաւ բան իմանալու նպատակով: Նորան ասացին, թէ Ռուչուկից ուղարկուած է մի գունդ գինուոր և գալիթի, և թէ քաղաքից անհետացել են մի քանի երիտասարդ, որոնք յուսահատութեան մէջ են թողել իրենց ընտանիքները: Նորան տուին այդ երիտասարդների ազգանունները և հարցրին, «Իսկ քո որդի՞ն»: Պատահեցաւ նորան այն մայրերից մէկը, որի որդին անհետացել էր: Հէնց որ այդ կինը տեսաւ Մօկրայն, իսկօյին վազեց և սկսեց ազալակել:

— Եթէ իմ որդին չվերագառնայ, ես կը դառնա գատուեմ Ասածուն քո որդուց:

Կամաց կամաց Մօկրան այն եզրակացութեան հասաւ, որ իւր որդին միացել է այդ խումբին: Նա սկսեց նախատել իրեն նախ և առաջ նորա համար, որ թողեց որդուն գնալ: Իսկ յետոյ մտածեց, «Ես միջոց ունե՞լի՞ նորան չթողնելու»: Այս հարցի մասին խորհրդածելուց յետոյ՝ նա բողբոջին այլ եզրակացութեան եկաւ անցեալի վերաբերմամբ և ինքն իրեն հարցրեց.

— Ինչո՞ւ նա յիմարը երկու հարիւրի տեղ երկու հազար դուկատ չառաւ ուէփօլիէրների համար:

Որպէս մի թունդ վաճառուհի, նա հաւատում էր փողի զօրութեանը և հասկանալով բանի էութիւնը՝ մտածեց, որ եթէ աւելի մեծ գումար մսխուէր, անտարակոյս, գործը աւելի



յաջող էրք կ'ունենար: Միւս կողմից նա ենթադրու-  
 րում էր, որ իւր որդին՝ քանի որ այսքան տարի  
 սովորել է արտասահմանում, լաւ հաշտած կրկի-  
 նի, թէ որքան փող է պէտք, որ... ի՞նչ: Նորա-  
 խելքն ու միտքը սկսեց զբաղուել այդ հարցի  
 պատասխանով և մասամբ ենթադրութիւններով,  
 մասամբ էլ նախազգացութեամբ հարթում էր այդ  
 հարցը վճռելու ուղին: Յիշելով իւր որդու «պատ-  
 մածները», որ դեռ մօտ անցեալում չէր հաս-  
 կանում, Մօկրան սկսեց մի բան զգալ, որ իրեն  
 բոլորովին նոր բան էր թւում: Բայց իրօք նորա  
 մէջ իրենք իրենց զարթնում էին այն զգացում-  
 ները, որ հինգ դար առաջ ճնշուել էին այդ ժո-  
 դովրդի մէջ տաճկական զէնքից: Մի ինչ որ բա-  
 րոյական «ատավիզմի» շնորհիւ նորա հոգու մէջ  
 ցոլացաւ նախնիքների հոգին, որոնց անունները  
 անյայտ էին պատմութեան: Առաջ նա ինքն էլ  
 չէր հասկանում իւր դրութիւնը: Ակներև է, որ  
 այս կինը ենթարկուեցաւ հոգեբանական պրօցէսի,  
 որ շատ նման էր այն ազդեցութեան, որի ներ-  
 քոյ էր և Նիկոյան: Թէ սա և թէ այդ կինը ըս-  
 կզբում չէին իմանում, թէ ինչու մն է չարիքի  
 էութիւնը: Բուլղարիային վիչեց միայն ազատու-  
 թեան հոյժը, և նորա ազդեցութեան շնորհիւ ո՛չ  
 միայն կերպարանաւորուեցաւ երիտասարդների  
 բնաւորութիւնը, այլ և ծերերը վերածնուեցան:  
 Մօկրան մեծ անհանգստութեամբ լսում էր  
 բոլոր լուրերը, որոնք ամեն բոպէ գալիս էին և

սարսափ էին ձգում Բուլղարիայի բնակիչներին վե-  
 րայ: Սակայն բոլոր լուրերն էլ աննպատակ չէին:  
 Այսպէս օրինակի համար, ասում էին, թէ Պա-  
 նուբի մօտ՝ Ռուչչուկից տօրև, Վիրգիլի և Ռուչ-  
 չուկի մէջ տեղում, քառորդ ժամ տարածութիւն  
 միմեանցից հեռու՝ Բուլղարիայի եզերքը անցել  
 է մի չէթ ա և ամեն մի չէթ ա շին երեք ուե-  
 փօլվերով: Այստեղ կարևոր է ասել և այն, որ  
 այդ ժամանակ ուեփօլվերները մեծ յարգանք էին  
 վայելում Բուլղարիայում: Բայց որովհետև չէթ ա-  
 ջիների թիւը մինչև քսան հազար էին հաշվում,  
 ակներև է, որ նոքա ուեփօլվերների մեծ քանա-  
 կութիւն պիտի ունենային: Մի քանի ժամանակ  
 այս լուրը խարխիսի դեր էր կատարում, որ յու-  
 սոյ նշան է: Սակայն շուտով եկան շարաքաստիկ  
 լուրեր և այդ լուրերը ստացվում էին աւելի և  
 աւելի յաճախ, որոշակի ու հաստատ, և վերջա-  
 պէս ապացուցուեցաւ փաստերով, երբ ուղարկ-  
 ուած զափթիւնները սկսեցին վերադառնալ և բե-  
 րել իրենց հետ արիւնաշաղախ գերիներին՝ եր-  
 կուսիններեքին միասին կաշկանդած: Բնիկները  
 դուրս էին դալիս նոցա առաջ: Քաղաքի դրօն-  
 քից մինչև բանտը՝ փողօցները լցուած էին արև-  
 րամած, լուռ ամբօխով, ուր երբեմն-երբեմն  
 լսվում էր մայրերի աղամայ հառաչանքը, երբ  
 արիւնազանգ և ծեծուած գերիների մէջ ճանա-  
 չում էին իրենց որդկերանց: Զափթիւնների առա-  
 ջին գունար գերիներին էր ուղեկցում, իսկ եր-

կրորդը—տանում էր կտրած գլուխները: Յազ-  
թանակով վերադարձող այս հերոսները բռնած ու-  
նէին գլուխները մազից և, վեր բարձրացնելով,  
բացականչում էին.

—Տեսէ՛ք և ճանաչեցէ՛ք:

Մօկրան լեղատառու և սրտաճմլիկ կանգ-  
նած ամբօխի մէջ՝ բոլորովին չէր կարող են-  
թաղբել, որ իւր որդին կարող էր շինել  
գեղիներ թւում: Նորա համար անկարելի էր,  
որ մի այդպիսի մատաղ, քնքոյշ երիտասարդ,  
ինչպէս իւր որդին է, հաւասարուի նոցա, որոնց  
չլիթաներով կաշկանդած բանտ էին տանում: Չէ,  
նա չէր կարող մի այդպիսի բան երեւակայել. նո-  
րան թւում էր, թէ ինքը Բուլղարիան չէր կա-  
րող պահանջել իւր որդուց մի այդպիսի ծան-  
կոհ:

«Բուլղարիա» — այս նոր դադարիսրը ծնաւ  
նորա գլխում, երբ տեսաւ արիւնաներկ, կաշկան-  
դուած, շարքուած գեղիներին... Կտրած, գունատ  
գլուխները, որ բռնած ունէին դափթիները, գրոշ-  
մեցին նորա սրտում այդ դադարիսրը: Նա ազա-  
հուծեամբ նայում էր այս կենդանի իրեն ան-  
ծանօթ պատկերի վերայ. նորա շրթունքը դող-  
դողում էին, աչքերը վառվում էին տենդային  
կրակով:

Չափթիները միմեանց յետևից անցնում էին:  
Ահա նորից անցնում է մէկը, ցոյց է տալիս ամ-  
բօխին մի գլուխ և հարցնում. «ճանաչո՞ւմ էք»:

Նա բարձրացնում էր, ցածացնում, նորից բարձ-  
րացնում և միշտ առաջ գնում: Ահա նա հասաւ  
Մօկրային, բայց չկարողացաւ գեռ հարցնել, երբ  
Մօկրան իսկոյն ազաղակեց.

—Որդի՛ս:

Նա ազաղակեց, ձեռքերը դլխին տարաւ և  
ոչ կիսամեռ էր, ոչ էլ աղօթում էր, բայց նո-  
րա շրթունքը մրմնջում էին.

—Բուլղարիա... Բուլղարիա... Բուլղարիա...

—Ճանաչ՞ում ես,—հարցրեց նորան զափ-  
թին, բարձրացնելով մազերից բռնած գլուխը:

—Ճանաչում եմ, պատասխանեց Մօկրան.  
արդէն հանգիստ կերպով.—տո՛ւր ինձ:

Գնա՛ ոստիկանատուն, այնտեղ կըստանաս  
քո պարգևը:

Մօկրան անհետացաւ ամբօխի մէջ:

—Նա սովորեցնում էր երիտասարդներին.—  
չչնջում էին Մօկրայի շուրջը.—ինքը ի զուր կու-  
րաւ և ուրիշներին էլ կորցրեց:

—Չէ, ի զո՛ւր չէ,—պատասխանում էր նա,  
անցնելով ամբօխի միջից:

—Մի քանի ժամից յետոյ Մօկրայի տան-  
առջև խոնուեցաւ հեծկրտող և աղիողորմ լացող  
կանանց մի խումբ. մի քանիօր որդիքն էին մեռած,  
միւսներինը—բանտը ձգած: Նոքա եկել էին այդ-  
տեղ իրենց վիշտը թափելու. հայհոյում էին, ա-  
նիծում Մօկրային և Ասածուն էին դիմում, որ  
պատժէ իրենց վիշտ պատճառող այդ կնոջը:

Այ տե՛ս, թէ ինչպէս ես կրթել նորան, — աղաղակում էին կանայք, — նա սովորեցրեց, տարաւ նոցա և բոլորին էլ կորցրեց:

Մօկրան դուրս եկաւ և հանգիստ կերպով հարցրեց.

— Մի՞թէ նա ինքը չկորա՞ւ:

— Այո՛, բայց նա էր նոցա սովորեցնողը, կանչողը:

— Բայց մի՞թէ նորան ո՞չ ոք չէր կանչում:

— Ասա, ասա՛ շուտով մեզ, ո՞վ էր, — շտապով հարցնում էին կանայք, որոնք պատրաստ էին պատառոտելու իրենց վիշտ պատճառողին:

— Նա, ով որ կանչեց նորան, — ասաց Մօկրան, — ահա այնտեղ է. — նա ցուցամատը բարձրացրեց դէպի երկինք:

Նա այնպէս հանդիսաւոր կերպով ասաց այդ խօսքերը, որ ազդեցութիւն ունեցաւ ամբոխի վերայ: Կանայք այլ ևս չանիծեցին Մօկրային, մտածելով, որ նա էլ իրենցից պակաս չէ տանջվում: Ասածուն վերագրելով իրենց թշուառութեան պատճառը, նոքա սկսեցին ցրուել, գնալ իրենց տները և միայն լալիս էին:

Մօկրան նոյնպէս լաց էր լինում և աղօթում, երբ նորան ոչ ոք չէր տեսնում, իսկ հետեւաւ օրը, երբ ընդունում էին, նա դնաց օստիկանատուն: Օգնականները նորան տեսնելիս շատ դարմացան: Նախ և առաջ նորա համար,

որ նա եկել էր, իսկ ապա՝ որ բոլորովին հանգիստ էր: Նոցանից մէկը հարցրեց,

— Ինչո՞ւ համար ես եկել:

— Փաշային տեսնելու, ջանմ, — պատասխանեց նա:

— Մի՞թէ դու չգիտե՞ս, թէ ինչ է պատահել:

— Բեզանից էլ, փաշայից էլ առաջ իմացայ:

— Չգիտեմ, փաշան կ'ընդունի քեզ:

— Եթէ չգիտես, հարցրու:

Օգնականը հեռացաւ, շուտով վերագարձաւ և ասաց, թէ նորին գերագանցութիւնը խնդրում է Մօկրային ներս շնորհ բերել:

Այդ ժամանակուայ փաշան պատկանում էր տաճկական աստիճանաւորների այն կարգին, որոնք նոր ուղղութիւնների ազդեցութեան ներքոյ սաստկացնում էին առանց այն էլ տաճիկներին յատուկ մեղմ յարաբերութիւնը: Նա երբէք չէր բարկանում և ինքն իրեն կորցնում: Ժպիտը երեսին նա բարեւում էր հիւրերին և խնդրատուններին, ընդունում նոցա և այդպէս էլ ժպիտը երեսին ստորագրում էր մահուան դատաւճիռները և հաւանական է, որ այդպէս էլ ժպտելով դատապարտում էր մարդկանց զաղուխի անցնել և այլ տեսակ մահուան պատիժների ենթարկել: Այդ ժպիտը համապատասխանում էր նորա գեղեցիկ, պատկառելի գէմքին, որ կրում էր նոյնպիսի մեղամաղձութեան կնիք, որ մի քանիսը նրկատում են գերեզմանատանը բուսնող նոճիկների

վերայ: նա քաղաքավարի կերպով ողջունեց Մօկրային, ցոյց տուեց, որ նստի բազմոցի վերայ իրեն մօտ և սկսեց խօսակցութիւնը առճիկներին յատուկ ներածութեամբ.

— Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ:

Սորան սովորաբար պատասխանում են. «ինքզիտես, էֆէնդի»:— Մօկրան էլ սովորակաւ նախադասութիւնով պատասխանեց, բայց այս դէպքում դա յաջող պատասխան էր:

— Ահա տեսնում ես, թէ արտասահմանի գիտութիւնը ինչտեղ հասցրեց որդուդ...

— Խզմէթն (վիճակ, բախտ) է, փաշա էֆէնդի... երևի, ճակատին այդպէս էր գրած:

— Ի հարկէ... Բայց, երևի, այդ օրին չէր հասնիլ, եթէ նստէր Ռուշչուկում և իրեն համար ոչխարի ճարպով առևտուր անէր... Մեր ինչին է պէտք Ֆրանսիան, Զուիցերիան:

— Խզմէթն է, փաշա էֆէնդի, — կրկնեց Մօկրան:

— Հրմ... — արտասանեց փաշան, անկարող լինելով պատասխանել այդ հիմնական խօսքին, որ առած էր մահմեդական կրօնից:

— Ինձ վիճակուած չէր քեզ հիւրասիրել հարսանիքին... — ասաց Մօկրայն:

— Ափսոս... իսկ ես պատրաստվում էի խմել այն գինին, որ քո խօսքով շուր պիտի դառնար:

— Իմ խօսքը միշտ կարող է այդպիսի փոփոխութիւններ անել... կարող եմ հաւատացնել քեզ:

Ես ինքս էլ կրկամենայի յոյս դնել քո խօսքի վերայ, որի համար և եկել եմ:

— Հր... — հարցրեց նա համապատասխան շարժում անելով:

— Թոյլ տուր, փաշա...

— Որդուդ գլուխը անեմ:

— Չէ, ես գիտեմ, որ միւսների հետ նա էլ նշանակուած է ցոյց տալու համար... Թող այդպէս լինի:

— Ոչ թէ ցոյց տալու համար, — ուղղեց փաշան, — այլ վախեցնելու համար:

— Մէկերին վախեցնելու, միւսներին ցոյց տալու: Է՛հ, բանը դորանում չէ: Բայց որ խօսք բացուեց դորա մասին, թոյլ տուր, փաշա, նորա երեսը լուանամ, մագերը սանտրեմ, չէ որ որդուս գլուխն է:

Նորա սիրտը պատուվում էր վերջին խօսքերն արտասանելիս, և թէպէտ ըստ երևոյթին հանգիստ արտասանեց, բայց նորա կրծքում մեծ փոթորիկ կար:

— Եթէ դու ինձ թոյլ տաս այդ անելու, ես քեզ էվալահ (չնորհակալութիւն) կ'ասեմ... Բայց դորա համար չեմ եկել: Ես եկել եմ իրաւունք ինդրելու, որ ամեն օր բանտ մտնեմ:

Փաշան սաստիկ զարմացած հարցրեց.

— Ի՞նչ պիտի անես բանտում:

— Եթէ դու լսէիր, փաշա էֆէնդի, թէ երեկ

մայրերը ինչպէս էին ինձ անիծում, — չէիր հարցնել դորա մասին:

— Ինչո՞ւ համար էին անիծում, — համակրելով հարցրեց փաշան:

— Իմ որդիս է սովորեցրել նոցա որդոց... Ես կրկամենայի հագուստ ու կերակուր տալ այն երիտասարդներին, որոնք բանա են ընկել իմ որդու պատճառով... Ես կրկամենայի դէժ փոքր ինչ մխիթարել այդ թշուառ մայրերին:

Այս կերպով արտայայտած նորա խնդիրը նոյնքան էլ արգարացի էր, որքան և խելացի: Սակայն փաշան չպատասխանեց մի անգամից: Փոքր ինչ մտածելուց յետոյ նա ասաց.

— Դու ուզում ես լուանալ և սանտրել որդուդ գլուխը... հը՞մ. Ուզում ես բանտարկեալներին հագուստ և կերակուր տանել... հը՞մ... Նա թեթև կերպով գլուխը շարժեց: — Ինչ արած, թող ասածդ լինի:

Նա ծափ տուեց և ներս մանող օգնակալին պարտ ու պատշաճ կարգադրութիւններն անելուց յետոյ դարձաւ Մօկրային և ասաց. — Սա կըտանէ քեզ, ուր որ պէտք է:

Օգնակալներ նախ և առաջ տարաւ նորան ժանդարմների բնակարանը, որ գտնվում է ոստիկանատան ներքին յարկում, մի քանի խօսք ասաց օրապահ զափթիին, իսկ սա ցոյց տուեց Մօկրային այն պատը, որի մօտ գտնվում էին հինգ մարդու գլուխ: Մօկրան մտեցաւ պատին, նա-

յեց գլուխներին, ձեռքերը խաչեց լանջի վերայ և աշխատեց ամեն կերպ արտասուքը զսպել:

— Նայիր հա, այստեղ ոռնալու տեղ չէ — զգուշացրեց նորան օրապահ զափթիին:

— Զանձ, մի՛ վախենալ, — պատասխանեց Մօկրան: — Դու լաց լինելս չես լսիլ: Տուր ինձ միայն մի երեսօրբիչ և մի կուժ ջուր:

Գտնուեցաւ մի երեսօրբիչ, կար և մի կուժ. այս առարկաները տաճիկները միշտ ունենում են ձեռքի տակ: Մօկրան կանգնեց բաց-կապտագոյն գլուխների մօտ, որոնք խճբծուած էին չորացած արիւնով, իսկ մաղերը փոշուց և արիւնից կպած էին միմեանց. պարանոցի ողնները դուրս էին ցցուած, ատամները ամուր միմեանց սեղմած. մի քանիսի կոպերը փակ էին, միւսներինը բաց: Աւելի ևս սարսափելի էր մեռելային արտայայտութիւնը նորա համար, որ մարմնից անջատուած այդ գլուխները ցոյց էին տալիս բռնութիւն, որ գործել էին այդ գիտկների վերայ: Կարծես թէ այդ բռնութիւնը թողել էր իւրաքանչիւր գլխի վերայ բողբոլի հետք, դէմքի իւրաքանչիւր գծում գրոշմուել էր անսահման կարեկցութիւն:

Ծնկաչոք Մօկրան հայեացքը ձգեց առաջևն ընկած գլուխների վերայ և ձեռքը մեկնեց իւր որդու գլխին, բայց կանգ առաւ. նա խոր հառաչանք արձակեց և սկսեց մի ուրիշ գլուխ լուանալ: Լուաց, սրբեց, մաղերը սանտրեց և սկսեց լուանալ մի ուրիշը. այդպէս նա շարունակեց,

լուաց երրորդը, չորրորդը, վերջապէս մնաց միայն իւր որդու գլուխը:

— Որդի՛ս... սիրելի՛ որդիս... — շնչեց նա: — Նա քանի գնում, աւելի և աւելի էր յուզվում և վերջ ի վերջոյ խեղճ կիներ հազիւ կարողանում էր իրեն բռնել. կրճքից անընդհատ հառաչանք էր դուրս թռչում, որ նա ճիգն էր թափում զրուպել. ձեռքերը դողում էին, բայց նա ստիպեց նոցա հնազանդուել, լուաց շրթունքը, թշերը, ձակաաը, ականջները, վիզը, յետոյ սկսեց մտղերը սանտրել, օձեց անուշահոտ իւզով և շորունակեց մազերը կարգի բերել, բայց բաշ-չաուշը աղաղակեց վրան.

— Բաւակա՛ն է, ժամանակ է վերջ դնելու: Մօկրան յետ կանգնեց և տեսաւ, որ բաշչաուշը բերել է հինգ սրածայր ձող, դռան շեմքին կանգած հինգ զափթի. տեսաւ, թէ ինչպէս նոյանից իւրաքանչիւրը հեռանում էր բաշչաուշից ստանալով մի մի ձող՝ ծայրին մի գլուխ ցցած: Թշուառ կիներ նայեց այս բոլորի վերայ առանց մի կաթիլ արցունք թափելու: Նա միայն յօնքերը կիտեց, ատամները սեղմեց, բռունցք շինեց. երբ ամենը վերջացաւ, դուրս եկաւ այդ տեղից: Բակում տեսարանից հրճվում էին զինուորները, աստիճանաւորները, ծառայողները, քաղաքացիքը. իսկ տեսարանը կազմում էին հինգ ձողի վերայ ցցած գլուխները: Այդ ձողերը բըռնող զափթիները երկար չսպասեցին հրամանին:

Նշան տրուեցաւ և նոցա մտեցաւ մի գունդ հետևակ զօրք: Շուտով հրաման տրուեցաւ, և զափթիները ձողերը բռնած՝ զօրքով շրջապատուած՝ դուրս եկան բակից: Առաջից գնում էին երկուսը, որոնք իսկոյն սկսեցին թմբկահարել: Այսպէս նոքա գնում էին այն փողոցով, որ տանում էր դէպի քաղաքի դրունքից մէկը:

Մօկրան հետևեց զօրքին և գնաց տաճիկ լակոտների հետ, որոնց թիւը աւելի և աւելի էր շատանում, այնպէս որ քաղաքի դրունքի մօտ ահագին բազմութիւն էին կազմում: Նոքա վազում էին առջևից և աղաղակում.

— Գեաուրլեա՛ր, գեաուրլեա՛ր:

Անցնողները կանգ էին առնում: Տաճիկները թքում էին, իսկ քրիստոնեաները — երեսները խաչակնքում: Դարպասի մօտ, ուր կանգնած էր մի պահապան, զափթիներից մէկը անկեց իւր ձողը, և ամբօխը վերադարձաւ քաղաք, ուսկից գնացին դէպի միւս դարպասները: Այսպէս նոքա հինգ անգամ պատեցին գլուխները քաղաքի մէջ զանազան ուղղութեամբ: Մօկրան երեք անգամ հետևեց դոցա, որովհետև միայն երրորդ անգամից յետոյ նոքա անկեցին այն ձողը, որի վերայ գտնվում էր նորա որդու գլուխը: Նա չօքեց, ձեռներով սեղմեց կուրծքը, նայեց որդու գլխին և շնչելով կրկնեց.

— Որդի՛ս... որդի՛ս... որդի՛ս...

Յետոյ վեր կացաւ, նորից նայեց որդու գլու

խին և ինքն իրեն յաղթելով՝ հեռացաւ։ Նա ուղ-  
ղակի բանս զնաց։ Եթէ բանտապետը ամենա-  
լաւ Ֆիզիոզոսովստը լինէր, ոչ մի կերպ չէր կա-  
րող իմանալ, թէ այդ կինը այսօր որքան է տան-  
ջուել։ Նա մինչև անգամ չէր կարծիլ, թէ տան-  
ջուել է։ Նորա գէմքը բոլորովին հանգիստ էր,  
խսկ ձայնը—հաւասար և բնական. նա ասաց իւր  
ազգանունը։

—Մօկրա,—պատասխանեց բանտապետը.—  
գիտեմ, գիտեմ։ Փաշան խաբէր (լուր) է տուել  
մեզ ձեր մասին։

—Նա թո՞յլ է տուել ինձ տեսնուել արգել-  
ուածների հետ։

—Այո՛, թոյլ է տուել... թոյլ է տուել...  
բայց ոչ բոլորովին։

—Ձանձ, մի վախենալ,—բարեսրտութեամբ  
նկատեց Մօկրան։—Ես նորա համար չեմ խըն-  
դրել փաշայի թոյլտուութիւնը, որ քեզ վերաու-  
րեմ։

—Ուրեմն պէտք էլ չէր աշխատել իրաւունք  
ստանալու։

—Ես չէի կամենում, որ դու ինքնագլուխ  
անէիր։

—Բայց լաւ,—բանտապետը ժպտեց և հարց-  
րեց.—որդի՞դ է այստեղ թէ եղբայրդ։ Ո՞ւր  
համար ես դու այդքան ցաւում։

—Ինձ համար ամենքը թանկ են։ Չե՞ս  
տեսնում, որ ես պառաւ եմ։ Պառաւները սի-

րում են ուրիշի որդիներանց, ինչպէս իւրեանցին։

—Էդ էդպէս է։ Բայց քո որդու մասին  
կարելի է դեռ խօսել,—շարունակեց բանտա-  
պետը համոզեցուցիչ եղանակով։

—Լաւ, կըխօսենք, պատասխանեց Մօկրան,  
հասկանալով որ մի օրոշ գումարով կարելի կը-  
լինի ազատել բանտարկեալներէրց մէկին։

—Գէ գնանք,—ասաց բանտապետը, տեղից  
վեր կենալով։

—Մի փոքր սպասիր,—պատասխանեց Մօկ-  
րան, ձեռը մեկնելով։—Առաջ ես զնամ ուտե-  
լու բան բերեմ նոցա համար, ես չեմ ուզում  
դատարկ ձեռներով գնալ բաղլամների մօտ։

—Պէտք էր պաշարով եկած։

—Ուրիշ գործերով էի զբաղուած։  
Չանցաւ կէս ժամ և ահա Մօկրան վերա-  
դարձաւ ձեռքին մի մեծ զամբիւղ. անմիջապէս  
նորան թողին բանտը, որ հին ատձկական բան-  
տերի բոլոր արժանիքն ունէր. խոնաւութիւն,  
խեղդուկ օդ, կեղտ և զուրկ ամեն տեսակ յար-  
մարութիւններից։ Մինչև անգամ յատակի վերայ  
յարդ չկար։ Հաստ բարէ պատերը փախչելու  
մասին մտածել անգամ չէին տալիս. օդը ներս  
էր մտնում բարձր վանդակապատ ծակերից։  
Բանտապետը տարաւ Մօկրային ցած, բաց ա-  
րաւ երկաթի դուռը, և նոքա դուրս եկան ե-  
րիտասարդների մօտ, որոնցից մի քանիսը առողջ  
էին, միւսները վիրաւորուած։ Բոլորքեան զար-

մանքով նայեցան Մօկրային, իսկ ոմանք ճանաչեցին նորան: Նա բարեւոյց երիտասարդներին:

— Տեղն է, — շարունակեց Մօկրան. — ահա ձեզ բուրդարական թագաւորութիւն...

— Հա՛... հա՛... հա՛... — ծիծաղեց բանտապետը:

— Ոգորմած փաշան, — ասաց պառոււր, — իրաւունք տուեց՝ որ ձեզ ուտելու բան բերեմ, — և այս խօսքերը արտասանելիս նա սկսեց հանել զամբիւղից հաց, պանիր, միս, պտուղներ և շիշեր:

— Այս ո՞վ է ուղարկում, — հարցրեց բանտարկեալներից մէկը:

— Քե՞զ ինչ կեր և Ասաուծուն փառք տուր: Բանտարկեալները՝ սոված լինելով՝ ազահու թեամբ սկսեցին ուտել: Զամբիւղի տակին ծխախոտ էլ կար, թուղթ, լուցիկ և մի քանի կտոր սպիտակեղէն:

VII.

Քանի որ բանտապետը ներկայ էր, Մօկրան ասաց և լսեց մի քանի ընդհանուր նախադասութիւն: Նոքա, որոնց ընտանիքը, ծնողները մուշուկում էին գտնուում, յանձնարարութիւն արին նորան: Բերած կերակուրը ի դէպ էր. նոյն իսկ Մօկրայի ներկայութիւնը շատ օգտակար եղաւ,

որովհետեւ, քանի որ նա բանաւում էր, բաց դռնից մաքուր օդ էր ներս մտնում: Երևի այդ պատճառով էլ Մօկրան չէր շտապում հեռանալ և պատրաստ էր էլի մնալու, բայց բանտապետը հարկաւոր համարեց նկատել:

— Բաւական է, այդ էլ հերիք է ձեզ:

— Բաւական է, թող բաւական լինի, — սրտախանկեղ պառուր: Երբ պառուր հեռացաւ, բանտապետը մի դուկատ ստացաւ:

— Հետեւեալ անգամ կարող ես աւելի մնալ, — ասաց բանտապետը՝ շարժուած պառուրի ուշադրութիւնից. — դու, ինչպէս երեւում է, գիտես, թէ ում ինչ է պէտք:

Հետեւեալ անգամ բանտապետը ոչ միայն թողեց, որ նա աւելի մնայ բանաւում, այլ և ինքը դուրս եկաւ և նորան թողեց բանտարկեալների հետ: Մօկրան օդուտ քաղեց հանգամանքից:

— Չեզանից ս՞ով, — սկսեց նա, — պիտի հաստատ կախուի:

— Ես, պատասխանեց երիտասարդներից մէկը. — եթէ կախելու լինին, առաջինն ինձ պիտի կախեն:

— Իսկ իմ որդուն կը կախէի՞ն, և թէ տաճիկները նորան կհնդանի ձերբակալէին:

— Ի հարկէ կը կախէին:

— Որ էդպէս է, ասա՛, ի՞նչ անեմ և ինչպէս անեմ... Ասա՛ ինձ այնպէս, ինչպէս որդիս



կ'ասէր: Ես ուզում եմ ձեզանից յետոյ եկողներին ճանապարհը հարթել:

— Բայց կըլինի՞ն... — նկատեց վհատեալներէս մէկը:

— Միթէ ձեզանով էլ կը վերջանա՞յ, — պատասխանեց պառւար: — Մտածեցէք, թէ դուք ինչ տեղից դուրս եկաք:

Վհատեալը լռեց, իսկ նորա ընկերներից մի քանիսը սկսեցին խօսել իրենց գործերի, եղած անյաջող ապստամբութեան մասին: Նորա բացատրում էին Մօկրային իրենց գործերը, խորհուրդ էին տալիս, միջոցներ էին ցոյց տալիս: Հէնց որ բանտապետը երևեց, խօսակցութիւնը փոխեցին, իսկ հետևեալ օրը նորից սկսեցին, և այդ այնքան տևեց, մինչև որ կայացաւ դատաստանական վճիռը: Մօկրայի հոգատարութեան շնորհիւ համեմատաբար մեղմ դատավճիռ կայացաւ: Նա դիտէր աածիկների հետ վարուելու ձևը. բայց որովհետև այս դէպքում նա ոչ մի ջանք չխնայեց, դրա համար էլ հազաւ իւր նըպատակին, — դատաստանը ոչ ոքի մահուան չբատարտեց: Կախաղանի սպասող երիտասարդը դատապարտուեցաւ առ միշտ բանտարկուելու, բայց երբ պիտի ուղարկէին նորան իւր պատժատեղին, նախընթաց օրը, յայտնի չէ, թէ ինչպէս անհետացաւ բանտից: Քննութիւնից երևեց, որ բանտարկեալի փախուստը չէր կարող լինել առանց որ և է գերբնական ուժի, որ կա-

յանում էր Մօկրայի բանտապետին տուած կաշառքում: Մինչ որոնում էին փախստականին, նահանգիստ նստած էր Մօկրայի տանը, իսկ յետոյ նորա օգնութեամբ անցաւ Դանուբի միւս կողմը:

Այդ ժամանակից սկսած Մօկրան ամբողջապէս անձնատուր եղաւ գաղանի գործունէութեան: Նա փողով ազատեց ապստամբաւորների գլխաւորին, որպէս զի նպատակ այն գործին, որի համար իւր որդին զոհ գնաց, և Մօկրայի աջակցութեան շնորհիւ գործը ոչ միայն շարունակվում էր, այլ և օրէ ցօր տարածվում: Նա քաջալերում էր երիտասարդներին, իսկ սուներ եղաւ ապստամբողների գլխաւոր կենտրոնը, և մի և նոյն ժամանակ ոչ գաղանի, ոչ էլ յայտնի ոստիկանութիւնը երբէք կասկած չէր կարող ունենալ:

Մօկրայի սուներ շատ լաւ յարմարեցրած էր այդ նպատակին: Նորա սուներ շատ հեռի չէր այն անդունդից, ուր Նիկոլան նստած երազում էր: Պարտիզի քարէ պարսպի, որ զուգահեռաբար գնում էր Դանուբի հետ, և անդունդի մէջ տեղ մի նեղ տարածութիւն էր մնում. այդ տեղից անցնելը վտանգաւոր էր, որովհետև զաւիւկի ստորոտում սրածայր քարեր էին ցցուած: Այս քարերից յետոյ Դանուբի ափը ցած էր լինում, և միայն գետի մօտ մի ոլորապտոյտ տեղ կար: Այսպէս Մօկրայի պարտէզը գտնվում էր Դանուբի անմատչելի ափին: Այս պարտէզը չէր

զանազանվում տեղական միւս պարտէզներից։  
 Կային այստեղ և պտղատու ծառեր, և ածուներ,  
 և մորենիներ, և հովանոցներ, և գաղտնի անց-  
 քեր, գաղտնի ապաստաններ, ուր կարելի էր  
 թաք կենալ տիրապետող բնակիչներից, մի խօս-  
 քով կար այն ամենը, ինչ որ և ուրիշ պարտէզ-  
 ներում։ Միակ զանազանութիւնն այն էր, որ մի  
 ջրհոր կար, վերան անիւ, որից կախուած էին  
 երկու շղթայակապ դոյլ և այնպէս էր շինուած,  
 որ երբ մէկը բարձրացնում էին, միւսը ցած էր  
 իջնում։ Այս շատ պարզ և հասարակ մեքենան,  
 որ բաւական տարածուած է Բուլղարիայում, չէր  
 կարող մի մեծ զանազանութիւն լինել, և չէր  
 էր իրաւ է, ջրհորը այստեղ բոլորովին անպէտք  
 էր, սրովհետեւ տան կողքին կար մի ուրիշը, բա-  
 րէ ջրհոր, որ ջուր էր մատակարարում բոլոր  
 հարեան տներին։ Սակայն նորա ներկայութիւնը  
 ոչ ոքին չէր զարմացնում, աւելի ևս տաճիկնե-  
 րին, որոնք համոզուած էին, թէ երբէք աւե-  
 լորդ ջուր չի լինում։ Այս հայեացքի շնորհիւ,  
 տաճկաց տէրութեան հպատակ եղած բոլոր եր-  
 կիրներում շինվում էին լաւ ջրհորներ։ Այս մի-  
 ակ բանն է, որի համար նոցա յիշում են և գոհ  
 լինում

Այսպէս Մոկրայի պարտիզում կար ջրհոր,  
 որի ներկայութիւնը զանազանում էր նորա պար-  
 տէզը ուրիշ պարտէզներից։ Նորա տունն էլ ոչ  
 մի բանով չէր զանազանվում միւս բուլղարական

տներից։ Ներքին կազմակերպութիւնը մի լաբերինթ-  
 էր ներկայացնում, ուր գաղտնի անցքեր կային,  
 ծածուկ սանդուղքներ և ապաստաններ, որոնք  
 այժմ շինվում էին աւելի սովորութիւնից, քան  
 թէ անհրաժեշտութիւնից, որովհետեւ արդէն  
 անցել էր այն ժամանակը, երբ Ռուշչուկի պէս  
 քաղաքում տաճիկները յարձակվում էին արու-  
 դաւակների վերայ ենիչերիներ շինելու, իսկ մա-  
 տաղ օրիորդներին հարեմ ուղարկելու համար։  
 Վերջին ժամանակներիս բարենորոգութիւնները  
 պաշտպանում էին նոցա, բայց արմատախիլ չէին  
 անում արմատացած երկիւղը, և տները շինվում  
 էին առաջուայ պէս, առաջուայ պէս էլ ծածուկ  
 անցքեր էին շինում պարտէզների մէջ, որպէս զի  
 կարելի լինի մէկի տանից միւսի տունը գնալ։

Այն թաղում, ուր Մօկրայի տունն էր, ա-  
 ւանդութիւն կար, թէ ամենալաւ ապաստանը  
 գտնվում է նորա պարտիզում։ Մինչև անգամ  
 պատմում էին, թէ մի անգամ ամբողջ շաբաթ-  
 այնտեղ թագնուեցան բոլոր կանայք իրենց որդ-  
 կերանց հետ և բոլոր օրիորդները, և տաճիկնե-  
 րը ամենևին չկարողացան գտնել, թէպէտ և  
 ման եկան բոլոր տներն ու պարտէզները։ Բայց  
 դա շատ վաղուցուայ բան է։ Այժմ ոչ ոք չգի-  
 տէր, թէ ինչ տեղ էր գտնվում այդ ապաս-  
 տանը, գուցէ միայն Մօկրան կարողանար պատ-  
 մել։ Այս պարտիզի միակ զանազանութիւնը  
 ջրհորն էր—բայց ի՛նչ բան է որ ջրհորը։ Այն-

տեղ ջուր է էլի... բայց ոչ բոլորովին: Բանը նորանում է, որ ջրհորի պատերից մէկում կար մի անցք, որի մօտից ցած էր իջնում գոյլերից մէկը: Այդ անցքը վերեւից չէր կարելի նկատել, բայց նա տանում էր դէպի մի ներքնայարկ, որ դուրս էր գալիս անդունդի մօտ: Դուրս գալու տեղը Դանուբի կողմից շատ բաւ ծածկուած էր սրածայր սպառաժով, որ մօտաւորապէս գրանվում էր խորխորատի կիսում: Ոչ վերեւից կարելի էր մօտենալ այս ժայռին, ոչ էլ ցածից: Անցքի երկայնութիւնը կը լինէր մինչև 150 մետր. նորա աջ ու ձախ կողմից անցքեր կային, որ տանում էին դէպի ընդարձակ սենեակները, որոնք յիշեցնում էին հնագոյն կատակօմքների դահլիճները: Այս բոլոր ներքնատունը, որ հաւանական է, շատ հին բան էր, աւելի ևս յիշեցնում էր հնագոյն կատակօմքները նորանով, որ դահլիճներն ու անցքերը շինած էին քարէ կամարներով և մէջտեղում յենվում էին նոյնպէս քարէ սիւների վերայ: Բուլղարիայում յաճախ են պատահում այդպիսի հին շինութիւններ: Հաստատ կարելի է ասել, որ տաճկաց տիրապետութեան ժամանակ չեն շինել բուլղարները ոչ այդ անցքերը, ոչ էլ դահլիճները, թէպէտ և նորա շինում էին ստորերկրեայ անցքերը ոչ միայն քաղաքներում, այլ և գիւղերում: Նորա ստիպուած էին լինում ամեն տեսակ միջոցներ գտնել, որպէս զի մի կերպ կարողանան ընդիմադրել առձ-

կական անիշխանութեան ու ամեն մի չարագործութեան: Գոյութեան կռուի ժամանակ ոչ միայն կենդանիները, այլ և բոյսերը պաշտպանուելու միջոցներ են որոնում, և բնութիւնը տալիս է մէկին այս ինչ յատկութիւնը, միւսին—այն ինչ, այնպէս որ թոյլերն էլ կարողանում են կռուել ուժեղների դէմ: Ներկայ դէպքում Մօկրան պատրաստի տեղ ունէր, որից երբեմն օգտվում էին բնիկները, բայց նորան գործ ածելը վաղուց արգէն մտաացել էին, և ոչ ոք չէր մտածում: Սկզբում Մօկրան ինքն էլ չգիտէր, թէ ինչի կարող է պէտք գալ այդ սպաստունը: Նա առաջ մտածում էր այստեղ ան ժամանակ տեղաւորել կաշառքով ազատած բանտարկեալին, բայց յետոյ բոլորովին աւերորդ համարեց: Բանտարկեալը մի քանի օր համեստ կերպով մնաց նորա տանը, յետոյ դէմքը փոխեց, շարերը նոյնպէս և ուրիշի անցագրով, որ գաել էր նորա համար Մօկրան, անփորձ հասաւ Ռումանիա, և ոչ ոք նորան չճանաչեց: Նա առաջինը ծանօթացրեց Մօկրային գլխաւորների հետ, որոնք շարունակում էին այդ գործունէութիւնը, որ սկսուած էր անյաջող ապստամբութիւնից առաջ, երբ և մեռաւ պառաւի որդին: Նորա այժմ պարապում էին բացառապէս սպագրութեամբ: Մօկրան յանձն առաւ արգելում հրատարակութիւնները տեղ հասցնել և այդ յաջողվում էր նորան շնորհիւ Բուլղարէշտի հետ ունեցած առև-

որի: Ապրանքի հետ գալիս էր «արգելումը», որ և ստանում էր Ստանկոն: Սակայն դա բաւականութիւն չէր տալիս պառաւին: Նա միշտ երազում էր այն, ինչ որ իւր մեծ որդին և ոչ միայն արդարացի էր, այլ և անհրաժեշտ, ոչ միայն անհրաժեշտ, այլ և բոլորովին իրագործելի:

Նա կարելի էր համարում համայն Բուլղարիայի ապստամբութիւն տաճկական լծի դէմ ու սորա խորտակումն, և այդ պատճառով նա հաշտվում էր ամենաժանր, ամենաարիւնահեղ զոհերի հետ: Այս միտքը նա յայտնում էր բանտարկեալներին: մի և նոյնը կրկնում էր նա նախնան, որին բանտից ազատեց:

— Դուք աւելի քիչ զբաղուեցէք գրելով և գրքեր տպելով, բայց դորա փոխարէն աւելի շատ ուէլօլվէրներ գնեցէք:

— Միայն ուէլօլվէրներով շատ բան չես աւնիլ,— պատասխանում էր երիտասարդը:

— Դանակներ էլ գնեցէք:

— Դանակներ էլ ունէինք:

— Հապա ի՞նչ էր պակաս, գուցէ հրացան:

— Հա, կարելի է ասել հրացան պակաս էր, բայց աւելի ևս մարդ:

— Երևի, ձեզանից ոչ ոք չէր կարողանում կառավարել:

— Բանն էլ հէնց այդ է:

Մօկրան մտածմունքի մէջ ընկաւ և ապա շարունակեց.

— Ճշմարիտ ես ասում, ճշարիտ: Տեղեակ և ուսումով մարդիկ են պէտք: Մեծ որդիս, որին սպանեցին, առևտրական բաներ էր սովորել, իսկ փոքրիկը՝ Պեօարը փիլիսոփայութիւն: Իսկ ի՞նչ է, փիլիսոփայութիւնը կարո՞ղ է պէտք դալ թուրքերին հեռացնելու դործում:

Պեօարը Մօկրայի երկրորդ որդին էր, որ ուսանում էր գերմանական համալսարաններից մէկում: Պառաւը հասկացողութիւն չունէր, թէ ինչ կարելի է սովորել համալսարանում: Փախատականը նոյնպէս քիչ տեղեկութիւն ունէր գիտութիւններից, ուստի և պատասխանեց.

— Չգիտեմ, գուցէ և պէտք գայ:

— Որ այդպէս է, դու գնա՛ նորա մօտ և ասա՛ ինձանից, թէ թող այն գիտութիւնները սովորէ, որոնք կարող են նպաստել թուրքերին քշելու: Եղիլ իմ պատգամաւորը,— ասաց Մօկրան նախկին բանտարկեալին: Նա փող սուեց սորան և հրամայեց աղջկան նամակ գրել եղբօրը: Այդ ժամանակից Մօկրան սկսեց սպասել միւս որդուն և սահմանափակեց իւր դործունէութիւնը արգելում հրատարակութիւնները ստանալով, որոնք շաբաթը մի կամ երկու անգամ էին գալիս, իսկ Ստանկոն գալիս էր դոցա ստանալու: Ռուչ չուկում համարեա ոչ ոք չէր կարող մի այդպիսի բան կատարել: Տարրական ուսման արանի հետեւաբարոյ, հանդարտ, աղքատ ուսուցիչ Ստանկոն, որ ունէր և մի քանի փոքր երեխայ, բոլորովին

կասկածանքի տեղիք չէր տալիս, և տեղական պաշտօնեաները անընդունակ էին նորան գրող գիշներին մէկը համարելու: Թուրքերը աւելի շուտով աշխարհի վերջը կըսպասէին, քան թէ Ատանկոյին վասնդաւոր մարդ կըհամարէին: Նուքա էլ մասամբ իրաւացի էին. Ստանկօն գործում էր ո՛չ թէ իւր սեփական նախաձեռնութեամբ, այլ Սօկրայի ճիշտ և եռանդուն գործիքն էր, և ուրիշ բան չէր կարող անել, բացի արգելուած հրատարակութիւնները տարածելուց:

— Իու ինքդ աշխատէիր բացատրել այն, ինչ որ գրած է, — համոզում էր նորան Մօկրան:

Այդ ժամանակ Ստանկօն միայն ուտելու վեր էր քաշում:

— Իու հօ ուսումով ես, ինքդ ուսուցիչ ես:

— Ծիշտ է — բայց ես երեխաներին եմ սովորեցնում:

— Միթէ յիմար ծերերը մի և նոյն երեխաները չեն:

— Չէ, մի և նոյնը չեն: Ծերի ականջից չես քաշիլ, եթէ ասածդ չհասկանայ:

Մօկրան չխտահացաւ հերքել այդ կշիռ ունեցող փաստը: Նա սպասում էր տեղեկութիւններ բանտից սպասուածից, իսկ սա՛ արգելուած հրատարակութիւնները այս կողմը ուղարկելու բանը շինելով, իմաց տուեց Սօկրային, թէ գընում է Բուքարեշտից, իսկ յետոյ հետքն էլ կորաւ: Անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ,

իսկ նորանից լուր չկայ ու չկայ: Պառաւը շատ էր ուղում իմանալ, թէ նա ինչ է անում, իսկ աւելի ևս, թէ ինչ է որդին անում: Սա գրում էր նամակ իւր մօրը, բայց կամ տեղեկութիւն էր տալիս իւր առողջութիւնից կա՛մ խնդրում էր փող ուղարկել, երբմն էլ իւր քննութիւնների մասին էր գրում: Նամակները սովորաբար Ստանկօն էր կարգում և բացատրում անհասկանալի նախադասութիւնները, բայց ինքն էլ շատ բան չէր հասկանում և այնքան սրտաբաց էր, որ այդպիսի դէպքերում ուղղակի խոստովանում էր:

— Չգիտեմ, Մօկրա, թէ սա ինչ է նշանակում, չեմ հասկանում: Ինչ որ խրթին բան է:

Սակայն աւելի մատչելի էին նորան Սօկրայի փոքր որդու՝ Դրագանի նամակները, որ նմանապէս սովորում էր արտասահմանում: Եղբօր ողբերգական մահից յետոյ նա էր վերագարծել, բայց մօր թախանձանքով կրկին գնացել էր արտասահման ուսանելու: Սակայն դիտութիւնը հեշտութեամբ չէր մտնում նորա գլուխը: Դորա պատճառը, երևի, եղբօր մահն էր, որ սաստիկ ազդեցութիւն էր արել նորա վերայ: Նա խօսում էր և կրակվում: Ռուշուկում նորա կարճատե եղած միջոցին՝ մայրն ինքն էլ չգիտէր, թէ ինչ անէր: Որդին ամեն մի լոպէ պատրաստ էր յարձակուել ամեն մի թուրքի վերայ և ինքն իւր գլուխը փանդի ենթարկել: Մայրը շտապեց որդուն արտասահման ուղարկել, ենթադրելով, որ

ուսումը կը հանգստացնէ նորան: Թէպէտ նամակներում նա աշխատում էր զգոյշ լինել, բայց չէր կարողանում զսպել իրեն վտանգաւոր ակնարկութիւններ անելուց, որ Ստանկօն շատ լաւ էր հասկանում և որոնք հրճուեցնում էին Մօկրային:

— Այ իմ Դրագանս, — ասում էր նա, — թող մի մեծանայ, նա կ'իմանայ, թէ թուրքերի հետ ինչպէս պէտք է վարուել:

Մի բան միայն անհանգստացնում էր Մօկրային. ինչո՞ւ Դրագանը երկար չէ կարող նստել մի և նոյն տեղում: Նախ և առաջ գնաց Օգեսսա, այնտեղ էր ուղում սովորել, բայց շուտով վիճենա գնաց, այն տեղից ժընեփ, Փարիզ և վերջապէս Բէլգրադ, որ մտնի զինուորական ուսումնարան: Վերջին երկու բաւերիս տակը նա էր գծել նամակում: Ստանկօն կարդալուց բացականչեց.

— Կարելի՞ է այսպիսի բաներ գրել:

— Ինչ է որ, — հարցրեց պառաւը:

— Զինուորական ուսումնարան:

— Ինչո՞ւ չէ կարելի:

— Իսկ եթէ թուրքերը կարգայի՞ն այս նամակը:

— Ի՞նչ կը լինէր:

— Բէլգրադի զինուորական դպրոցում սովորեցնում են, թէ ինչպէս պէտք է թուրքերի հետ պատերազմել, որ քչերնք նոցա մեր հայրենիքից, ա՛յ, այնպէս, ինչպէս սերբերը նոցա վռնդեցին:

— Եւ Դրագանը կը սովորի՞ այդ, — հարցրեց պառաւը բերկրութեամբ:

— Եթէ մտել է զինուորական ուսումնարան, ակներև է, որ սովորում է, իսկ թէ կը սովորի՞, ինչպէս հարկն է, այդ չգիտեմ, կը տեսնենք:

— Երևի, կը սովորի... կը սովորի, իմ աղաւնեա՛կս, իմ որդի՛ս... կարիճ կը լինի աղաս:

Այս լուրը շատ ուրախացրեց Մօկրային: Նորան ամենափոքր որդին ամենից շատ էր դուր գալիս իւր բնաւորութեամբ, և մայրը երազում էր այն մեծամեծ գործերը, որ պիտի անէր որդին: Նա հաւատացած էր, որ Դրագանը ստեղծուած է մի արտասովոր գործի համար, և առաջուց հպարտանում էր նորա ապագայ սխրագործութիւններով:

— Երևի նորան երգերում կ'երգեն, — երազում էր Մօկրան:

Այս ուրախալի լուրից յետոյ շուտով Ստանկօն պատմեց իւր անյաշողութիւնը:

— Բռնուեցայ, — ասաց նա:

— Ի՞նչ բանի մէջ, — հարցրեց պառաւը:

— Նկատեցին, ինչպէս ես «արգելուածը» տանում եմ ընթերցարան... —

— Ո՞հ, — բացականչեց Մօկրան: — Մեր գըլխին մի ցաւ չլինենք:

— Աստուած գիտէ, թէ ինչպէս կը վերջանայ:

Ստանկօն պատմեց, թէ ինչպէս եղաւ, և

նորա սկսեցին խորհուրդ անել: Այդ խորհուրդա-  
ծութեան եզրակացութիւնն այն եղաւ, թէ Ստան-  
կօն ինչ յարաբերութիւն պիտի ունենայ Նիկոլայի և  
Ստօեանի հետ: Համեստ ուսուցիչը չմտացաւ  
պատմել, թէ ինչպէս հաւաքուել էին հաջի Խրիս-  
տոյի պարտիզում:

Մօկրան քիչ-շատ լսել էր Ստօեանի մասին:

— Հա՛, — բացականչեց նա, — դա Կրիվենայի  
մէխանէշիկի որդին է: Նորա մասին լսել եմ: Նո-  
րա հայրը բուլլարացի չէ, բայց և այնպէս հա-  
բուստ և լաւ մարդ է: Արդին սովորում էր Բու-  
քարեշտում: Կարծեմ, հաջի Խրիստօն մտածում է  
նորան իւր փեսան շինելու:

— Բայց ի՞նչ սիրուն աղջիկ ունի հաջի Խր-  
րիստօն:

— Հա, շատ գեղեցիկ է, — համաձայնեց պա-  
ռաւը: — Նա երբեմն իմ Աննայիս մօտ է դալիս:  
Եսկ երկրորդը ո՞վ է:

— Նորա անունը Նիկօլա է, մի աղքատ ե-  
րիտասարդ, ֆրանսիացի գերձակի աշակերտը,  
այն որ հրապարակում խանութ է բաց արել:

— Էս տեղացի՞ է:

— Կարծեմ, չէ: Բայց ես դեռ չեմ տեսել,  
որ մէկը նորա պէս եռանդով կարգայ:

— Ի՞նչ է կարգում:

— Ամեն բան, ինչ որ գտնում է ընթերցա-  
րանում: Յիշում եմ, ինչպէս նա առաջին անգամ  
եկաւ, մի թէ մէկ ու կէս տարի առաջ. ոչինչ

չէր իմանում, իսկ այժմ այնպէս խելօք է: Այն-  
պէս է խօսում Բուլլարիայի մասին, աես, թէ  
գիրք լինի կարգում:

— Վստահելի՞ մարդ կը լինի:

— Ստուած գիտէ: Կարծես, բաւական ե-  
ռանդօտ է, վատ բան չեմ լսել նորա մասին:

Մօկրայի ցանկութեամբ նա մանրամասնօրէն  
նկարագրեց Նիկօլայի արտաքինը, ասաց մինչև  
անդամ, թէ ինչպէս է հագնուած և ինչ գլխարկ  
է դնում: Այս նկարագրութիւնից Մօկրան ճա-  
նաչեց Նիկօլային, որ Իլենկայի հետ ունեցած  
խօսակցութիւնից յետոյ նստել էր անդունդի ե-  
զերքին:

— Բայց գիտե՞ս — ասաց յետոյ Մօկրան, պա-  
տահելով Ստանկօյին, — ես ճանաչեցի այդ երի-  
տասարդին: Նա ինձ էլ դուր եկաւ: Իսկ դու  
բաւակա՞ն ես նորանից:

— Այո՛, բաւական եմ: Նա այժմ շատ կանո-  
նաւոր է դալիս հրատարակութիւնները ստա-  
նալու, տանում է ընթերցարան և, եթէ հաւա-  
տանք նորա խօսքին, պատրաստ է հայրենիքի  
համար կրակի մէջ էլ ընկնել... եռանդօտ, շատ  
եռանդօտ աղայ է,

Այս խօսակցութիւնից մի քիչ ժամանակ յե-  
տոյ՝ Պետրից նամակ ստացուեցաւ, ուր ի միջի  
այլոց գրած էր. «այլ ևս չեմ գրում, որովհետև  
բոլորը կ'իմանաք Դրագանից, որ շուտով Ռուշ-

չուկ կըգայ: Այս լուրը շատ հետաքրքրեց Մօկ-  
րային:

— Բայց ո՞ւր մնաց զինուորական ուսումնա-  
րանք: Միթէ երեք ամսում կարելի՞ է աւարտել  
ուսումը:

— Կարելի է, — պատասխանեց Ստանկօն, —  
միայն ոչ թէ աւարտել. այլ թողնել... դուցէ  
Դրադանը ուզում է ժամանակաւորապէս դալ,  
յետոյ կրկին վերադառնալ:

— Դէս ու դէն գնալու համար նա շատ փող  
է մտնում, — նկատեց պառաւը: — Գուցէ այդպէս  
էլ պէտք է: Բայց ի՞նչպէս նա պիտի դալ Բէլ-  
գրադից:

— Ամենից լաւը՝ դերմանական շոգենաւով:

— Իսկ ուրիշ ճանապարհ չկա՞յ:

— Կայ, միայն դերմանական շոգենաւը ամե-  
նայարմարն է և ամենարժանք:

Յայտնի էր, թէ աւստրիական շոգենաւերը  
երբ էին դալիս Ռուշչուկ:

— Ես կըսպասեմ նորան, — ասաց Մօկրան և  
ապա շարունակեց. — սրտիհետև Դրադանը դալիս  
է, ես կ'ուզենայի այդ նիկօլային ինձ մօտ առ-  
նել:

— Նա դերձակի մօտ սովորում է, — պատաս-  
խանեց Ստանկօն:

— Ի՞նչ է, նա դերձակից հեռանալ չէ՞ կա-  
րող:

— Կարող է, բայց գուցէ այդ արհեստով կա-  
մենում է մի կտոր հաց ճարել:

— Ինձ մօտ էլ նա սոված չի մեռնիլ, բայց  
մի և նոյն ժամանակ կ'ընտելանայ առևտրական  
գործերին: Այ, դու հարցրու նորան, համաձայն  
կը լինի մտնել ինձ մօտ: Ես կըկամենայի, որ երբ  
Դրադանը կըգայ, մեզ մօտ մի երիտասարդ լի-  
նէր, որ ինձ լսէր և վստահելի էլ լինէր... Կար-  
ծեմ նիկօլան յարմար է այդ նպատակի համար:

— Կարծեմ, — պատասխանեց Ստանկօն: — Ես  
կըխօսեմ նորա հետ շաբաթ օր:

Ասածն ու արածը մի եղաւ: Շաբաթ օր  
Ստանկօն խօսեց նիկօլայի հետ, իսկ կիւրակէ  
օր նիկօլան եկաւ Մօկրայի մօտ: Նոցա մէջ շատ  
շուտով համաձայնութիւն կայացաւ:

— Դու համաձայն ես թողնել դերձակին:

— Ես մտայ նորա մօտ մի կտոր հացի հա-  
մար:

— Իմ առևտրական գործերում դու աւելի  
փող կըստանաս, քան թէ դերձակի մօտ... մի-  
այն թէ հաւատարմութեամբ ծառայիր:

— Արձակ-համարձակ կարող ես վստահա-  
նալ իմ հաւատարմութեանս:

Մօկրան առաջարկեց իւր պայմաները, որ  
նիկօլան իսկոյն և եթ ընդունեց: Սակայն ոչ մի  
խօսք չեղաւ ոչ արգելուած հրատարակութիւն-  
ների, ոչ էլ մի ուրիշ բանի մասին, որ կապ ու-  
նենար հայրենասիրական զաղափարի հետ: Պա-



աւար ուզում էր նախապէս լաւ ճանաչել Նիկո-  
լային: Նա միայն ասաց, թէ սպասում է իւր որ-  
գունն Բէլգրադից:

— Բէլգրադից, — հարցրեց երիտասարդը, —  
նա ի՞նչ է շինում այնտեղ:

— Սովորում է զինուորական ուսումնարա-  
նում:

— Որ թուրքերին ծեծէ՞:

— Սը՛ս... կամաց... Գորա մասին չառ մի  
խօսիլ: Ես միտենում եմ, որ մի թշուառութիւն  
չպատահի նորան: Գիտե՞ս, — շարունակեց նա, —  
որ ես արդէն մէկին կորցրի:

Նիկոլան ոչ մի խօսք չասաց, բայց միայն  
նայեց նորան անկեղծ կարեկցութեան հայեացքով:

Հետեւեալ օրուանից Նիկոլան սկսեց իւր նոր  
պաշտօնը: Նա ունէր բնակարան, ճաշ և մի փոք-  
րիկ ամսական ռոճիկ, որ ժամանակով պիտի  
չատանար: Այսպէս նա կանգնեց այն ճանապար-  
հին, որի վերայ կանդնած փոքր ի շատէ խելքը  
գլխին մարդը, ինչպէս էլ լինի նա, մեծ կա-  
րողութիւն է գիշում և ժամանակով հասնում  
ամեն տեսակ պատուի: Այս բոլորին նա էլ կա-  
րող էր հասնել — պէտք էր միայն չղբաղուել  
կողմնակի գործերով: Հէնց այս պայմանը չկա-  
տարեց Նիկոլան: Սկզբում նա աշխատեց չղբաղ-  
ուել կողմնակի գործերով և ամբողջ շաբաթը չը-  
գնաց ընթերցարան: «Սրգելուածը» նա յանձնում  
էր Ստօեանին: Սակայն շուտով նա զգուեց այս

կեանքից և խօսեց դորա մասին Մօկրայի հետ:  
Ինչի՞ դ է պէտք ընթերցարանը, — հարցրեց  
Մօկրան: — Ընթերցարանը միթէ քեզ հաց կը առ՞ջ:

— Նա ինձ հաց չի տալ... բայց այնտեղ կար-  
գալ կարելի է: Ես էլ կարգում եմ, սովորում: Իմա-  
նում եմ, թէ մարդիկ ինչի վերայ են մտածում:  
— Ի՞նչ ես սովորել դու այնտեղ:

— Ահա ի՞նչ եմ սովորել. ես իմացայ, թէ  
ինչու համար է մեռել քո որդին և թէ ինչու  
համար նորա արիւնը ի զուր չէ կորել:

Վերջին խօսքերը արտասանելիս մի բան  
խայթեց Մօկրայի սիրտը: Նա խորը հաւաչեց և  
ասաց:

— Գէ՛հ, որ էգպէս է, զնա՛ ամեն օր մի  
ժամուայ՝ կէս օրին, իսկ կիւրակի օրերը ես քեզ  
բոլորովին կ'արձակեմ:

Նիկոլան սկսեց յաճախել ընթերցարան և  
ամեն օր անցնում էր հաջի Խրիստոյի տան մօ-  
տից: Մի բան քարշում էր նորան դէպի այդ  
կողմը: Ամեն անգամ ընթերցարան գնալիս մի  
բոսկէ կանգ էր առնում այդ տան առաջ, նայ-  
ում էր վերան և շարունակում իւր ճանապարհը:  
Նայել կրկնում էր և վերադառնալիս:

Մօկրան գնում էր նաւահանգիստ որդուն  
դիմաւորելու, բայց որդին չէր գալիս: Վերջա-  
պէս սկսեց մտածել, թէ երևի չի գայ: Գուցէ  
մտադրութիւնը փոխել է, վճուել է չգալ. թերևս  
չէ՞ կամեցել ընդհատել ուսումը: Նա սպասում

էր նամակի և շուտով ստացաւ. Դրագանը գը-  
րում էր, թէ շուտով պիտի դայ և խնդրում  
էր, որ ոչ ոք չսպասի իրեն նաւահանգստում,  
որովհետեւ «ես չեմ գալու», աւելացրել էր նա:

— Այս ինչ է նշանակում: «ես չեմ գալու»,  
— հարցրեց պառաւը Ստանկոյին:

— Ի՞նչ է նշանակում: գուցէ ուզում է շո-  
րերը փոխած գալ, որ չճանաչեն:

— Նա այդպիսի յիմարութիւն անելու ըն-  
դունակ է, — նկատեց Սօկրան:

— Թուրքերը չեն սիրում այն բուլղարացիներ-  
ին, որ սովորում են զինուորական ուսումնա-  
րանում, — ասաց Ստանկոն:

Սօկրան մի ծանր նախազգացման անգիտու-  
թեան տակ խոր հառաչանք արձակեց: «Տայ  
Աստուած, որ ոչ մի բան չպատահի», — մտա-  
ծեց պառաւը:

Նա սկսեց չզնայ նաւահանգիստ, բայց երբ  
մտեցաւ շոգենաւի գալու ժամը, նա գնաց գետ-  
եզրը Նիկոլայի հետ և կանգնեց այնպիսի մի  
տեղ, ուսկից շատ լաւ կարելի էր տեսնել նա-  
ւահանգիստը: Նիկոլային հետը տարաւ, որ Դրա-  
գանին ցոյց տայ, եթէ նորան մարդ պէտք լի-  
նի բաները կրելու համար: Առաջին օրը նորա ի  
զուր սպասեցին: Եկողները ըստ սովորականին  
ցած էին իջնում շոգենաւից, ժանդարմների  
մօտից անցնում էին գնում մաքսատուն. այնտեղ  
նայում էին նոցա իրեղէնները, անցադրերը և

բաց թողնում: Դոցա մէջ Դրագանը չկար: Երկ-  
րորդ անգամ մի և նոյնը կրկնուեց: Սօկրան  
ուշադրութեամբ նայում էր, այնատեղով ճանա-  
չել որդուն: Եկողները կամաց կամաց անցնում  
էին կարգով կանգնած ժանդարմների մօտից,  
որոնք ամենքին թողնում էին: Յանկարծ գալի-  
թիւները շրջապատեցին մի վերարկու հագած և  
գլխին ցիլինդր դրած մարդու: Յիլինդրը գլխից  
մի կողմը թռու, երբ նա կամեցաւ փախչել:  
Ժանդարմներից մէկը բռնեց փախչողի վերար-  
կուից. այն ժամանակ այդ անձանթ մարդը  
կայծակի պէս հանեց գրպանից ուձիւթերը, խը-  
փեց իրեն բռնող ժանդարմին, իսկ ինքը վազեց  
դէպի քաղաք: Վիրաւորուած ժանդարմը ընկաւ,  
իսկ ուրիշները վազեցին փախստականին կալա-  
նաւորելու: Սկսեցին աղաղակելով և հրացաններ  
արձակելով դէս ու դէն վազել: Անձանթը յետ  
էր նայում և ուձիւթեր արձակում մօտեցողների  
վերայ: Ժանդարմներն էլ հրացան էին արձա-  
կում: Կռիւը շատ շուտ վերջացաւ և տխուր  
հետեւանքով եկւորի համար: Նա ընկաւ բոլորս-  
վին վիրաւորուած, ժանդարմները վրայ հասան,  
ծեծեցին և քարչ քարչ տարան: Այս բոլորը մի  
քանի տասնեակ ակնթարթ տևեց: Սօկրան սա-  
ռած մնաց: Կրծքում ընդհատուեցաւ նորա շըն-  
չառութիւնը: Ճշմարիտ է, այդ մարդու արտա-  
քին տեսքը՝ մօրտաքով և ակնոցով, նման չէր Դը-

բաղանին, բայց նախադգացմունքը ասում էր, թէ նա է,

Հէնց որ Նիկիոյան կախարհական ահաբեկումը պատահեցաւ, զլիսապատահաբար ցած վազեց: Ինքն էլ չէր իմանում, թէ ինչու էր վազում: Մի բուն ցանկութիւն յղացաւ նորանում եկեօրին պաշտպանելու: Բայց որ տեղ հասաւ, արդէն ուշ էր պաշտպանելը: Ծողեհաւ էին նստում Գանուբի ստորեր գնացողները՝ դէպի Բրախլ և Գալաց, իսկ ավին կանգնած էին խումբ-խումբ մարդիկ, որոնք կամացուկ խօսում էին միմեանց հետ: Մարդիկ ամենից շատ հաւաքուել էին այնտեղ, ուր անձանթ պարսնն էր վայր ընկել: Այստեղ արեան բծեր կային: Նիկիոյան մտեցաւ և, նայելով արեան հետքին, լսեց մարդկանց խօսակցութիւնը:

— Երևի, կօմիտաջիներից (ապտասմոզներից) մէկն է, — կռուի ժամանակ ընկաւ: Նորակեղծ միբուքը:

Միբուքը, — հարցրեց միւսը:

Ես տեսայ, ինչպէս ընկաւ միբուքը, երբ սկսեցին նորա գլխին տալ:

— Ինչ արին միբուքը:

— Ձափթիները տարան:

— Է... է... — զարմանում էր ամեն մէկը, գլուխը շարժելով:

— Վեց անգամ արձակեց:

— Ձէ... հինգ անգամ... ուղղեց միւսը:

Գորա առթիւ սկսեցին վիճել, բայց շուտով

ընդհատուեցաւ, որովհետեւ ամենքը սկսեցին լըսել նոր տեղեկութիւնները:

— Մի ձեռքով արձակում էր, իսկ միւսով ինչ որ թղթեր էր դնում բերանը և կուլ տալիս:

Ո՛հ... ո՛հ... — զարմանում էին խօսողները:

Նիկիոյան մտեցաւ մի ուրիշ խմբի և սկսեց ականջ դնել, արդեօք մէկը չի տալ անյայտի անունը: Բայց ոչ ոք չգիտէր աներկիւղ եկեօրի անունը: Նիկիոյան սպասեց, մինչև որ շողենաւ դնաց, և ապա վերադարձաւ Մօկրայի մօտ: Նա դեռ կանգնած էր միկնոյն տեղում:

— Հ՞ը, ինչ է, — հարցրեց Մօկրան, երբ Նիկիոյան վերադարձաւ:

— Ես ուզում էի իմանալ, թէ ով է այդ մարդը, — պատասխանեց երիտասարդը:

— Ո՞վ է:

— Ասում են, թէ կօմիտաջիներից մէկն է: Իմ Դրագանը, — արտասանեց պառաւր ծանր կերպով:

— Ո՛հ, չէ, — պատասխանեց Նիկիոյան:

— Մի պատասխանիլ, ես նորան ճանաչեցի:

— Դէ՛հ... ուրեմն... — մրթմրթաց Նիկիոյան:

Մօկրան ձեռքը թափ տուեց և ասաց. —

էլ չեմ կարող սորան ևս ազատել թուրքերի ձեռքից... թո՛ղ... — նա խոր հառաչեց — սա էլ կը կորչի:

— Այսպէս, անողորմ է, — բացականչեց Նիկիոյան:

— Զէ, անօգուտ չէ, — պատասխանեց պառուարը: Նա յիմարութիւն արաւ, իսկ Աստուած ներում է այդպիսի յիմարութիւն:

VIII.

Մօկրան իրաւ էր: Նաւահանդստի մօտ պատահածի պատճառը նորա որդին էր: Ոստիկանանստնից սրան իմաց տուին և եկան կանչելու փաշայի մօտ: Փաշան՝ նստեցնելով նորան իւր մօտ, քաղցր ժպիտով հարցրեց.

— Ի՞նչ է, այժմ դո՞՛հ ես որդկերանցդ արտասահմանում ուսումն տալուց:

Իսրզմէթն է (բախտ), փաշա էֆէնդըմ, — պատասխանեց պառուարը:

— Դու այդ անկե՞ղծ ես ասում:

— Ես այն եմ ասում, ինչ որ դու ինքդ ինձ ասացիր իբր բացատրութիւն այն անբախտութեան, որ ահա երկրորդ անգամն է զլխիս դալիս: Եթէ ես չասէի այդ, ինչ որ ասացի, այն ժամանակ սախպուած կ'լինէի քեզանից հարցնել, և դու կըպատասխանէիր. իսրզմէթն է:

— Ինչո՞ւ ես այդպէս կարծում:

— Եթէ, օրինակի համար, ես քեզ հետ այսպէս խօսէի, դա հօ չափահաս չէ, համարեա եւրախայ է: Տո՛ւր ինձ նորան:

— Ես նորան չէի տալ քեզ, բայց կըթողնէի,

որ գնաս բանտ նորան այցելելու և համոզելու, որ ամեն բան ճիշտն ասէ:

— Միթէ նա կենդանի՞ է, — հարցրեց Մօկրան:

— Կենդանի է, գնա՛ նորա մօտ: Դու խելօք կին ես, ինքդ էլ կըհասկանաս, թէ ինչ և ինչպէս մենք պիտի անենք, որ նորան դարձնենք դէպի ուղիղ ճանապարհը: Իւր ցուցմունքներից կախուած կըլինի նորա պատիժը, որ պիտի կրէ:

— Միթէ նա դեռ չէ՞ պատժուած. կարծեմ, անչափահաս երեխային բաւական է և այն պատիժը, որ նա ստացաւ:

— Այդ երեխան երկու ժանդարմ է վիրաւորել, իսկ մէկին — սպանել... այդպիսի չարութիւն աններելի է:

— Միթէ սուլթանը քի՞չ զափթի ունի, — հարցրեց Մօկրան:

— Շատ է, թէ քիչ — բանը այդ չէ, պատասխանեց փաշան: — Լաւ է դու մտածիր, թէ ինչպէս որդուդ ազատես, որին ես այնքան ժամանակ թոյլ չեմ տալ բժշկել, մինչև որ նա չըպատասխանի աղայի առաջարկած հարցերին: Զանըմ, հասկանո՞ւմ ես, հարցրեց փաշան ժրպտելով:

Նա ծափ տուեց և ներս մանող զափթիին հրամայեց տանել Մօկրային բանա՛ որդու մօտ:

Ոստիկանատանը, ուր մի ժամանակ կտրած գլուխներ էին ընկած, կար մի սննեակ, որ ժամանակաւոր բանտի դեր էր կատարում: Այդ

սենեակի յատակի վերայ պառկած էր Գրագանը պատռտած և արիւնաշաղախ շորերով: Ակններն էր, որ մէկը շտապով՝ առանց լուանալու՝ գլխի, ձեռքերի, կրծքի, ոտների վէրքերը, կապել էր նոցա բրգէ շերտաւոր թաշկինակներով, որ զարհուրելի տեսք էին տալիս նորան: Զարգուած, վերաւորուած դէմքը հաղիւ հազ պահել էր նորա մարդկային կերպարանքը:

Մօկրան կամացուկ մտեցաւ որդուն և նըստաւ նորա կողքին: Նա ակնապիշ նայում էր որդու դէմքին, յետոյ կռայաւ և շնչեց:

— Գրագան

Գրագանը աչքերը փակ պառկած էր: Անկասկած նա լսեց մօր ձայնը, որովհետև նա երեսին մի սարսուռ դրաց: Մի քիչ սպասելուց յետոյ Մօկրան կրկին ասաց.

— Իմ թանկագին զաւակս:

— Մայրիկ... — շնչեց որդին, աչքերը բաց անելով: Այդ բոպէին լուեցան բանաբ մանողների ոտների ձայնը: Մօկրան կռայաւ և կամաց, բայց որոշ կերպով ասաց որդու ականջին.

— Գալիս է աղան և քեզ հարց ու փորձ է անելու. չասես նորան ոչ մի բան, որ կարող է վնասել յանձնաժողովին... լսում ես:

Գրագանը բացեց աչքերը և բերկրութեամբ նայեց Մօկրային: Աղան եկաւ. նորա հետ եկան քեթիկներ և չիբուխներ. — վերջինս փռեց յատակի վերայ հետը բերած գորգը, և աղան

նստաւ նորա վերայ: Նա հրամայեց, որ ծխամորճը բերեն և սկսեց իւր հարց ու փորճը կանխօրէն այսպէս դիմելով Մօկրային.

— Ասա որդուդ, որ ամեն բան ճշմարիտն աւէ, այն ժամանակ հէքիմբաշին նորան կը բըժշկէ... հակառակ դէպքում թո՛ղ սատկի... Գուկնքդ այնպէս ստա նորան, որ հասկանայ:

— Որդի՛ս... — սկսեց Մօկրան. — դու լսեցիր, թէ ինչ ասաց աղան, և յիշում ես, թէ ես ինչ ասացի: Ասա՛ ամեն բան խղճմտանքով և իմացիր, որ արդարագամն Աստուած լսում է քեզ... Մի՛ մոռանար իմ խօսքերը:

— Լաւ է, — ասաց աղան և սկսեց հարց ու փորճը:

Գրագանին բժշկելը անհնարին էր: Փաշան շատ լաւ դիտէր այդ: Բայց նա կամենում էր նորանից մանրամասնութիւնները դուրս բերել այն դադանի ընկերութեան մասին, որ վերջին ժամանակս ծաւալ էր ստանում Բուլղարիայում և սկսում էր անհանգստացնել թուրքաց կառավարութիւնը: Այդ նպատակով կանչեց բանտարկեալի մօրը և պայմանի ձեւով յայտուեց, թէ կալուղ կը լինի ազատել որդուն:

Հարցերից մի քանիսին Գրագանը բողբոջին չէր պատասխանում, իսկ միւսներին պատասխանում էր՝ «չգիտեմ», սակայն երբեմն էլ նա բողբոջին որոշ պատասխան էր տալիս: Այսպէս, օրինակի համար, նա պատասխանեց այն բողբոջ

հարցերին, որ վերաբերում էին Դրագանի արտասահմանում եղած ժամանակին: Երբ նորանից հարցրին, թէ արգելուած հրատարակութիւններն ինչ ճանապարհով էին դալիս Բուլղարիա, նա պատասխանեց. «Կ. Պօլսի վրայով»: Քեաթըրչին դրեց այս պատասխանը: Դրագանը մի քանի համանման ցուցմունք տուեց, բայց պատասխանները, քանի դնում էր, անհասկանալի և անլսելի էին դառնում: Վերջապէս նա դադարեց պատասխանելուց: Աղան հարցրեց մի անգամ, երկու անգամ, նոյն հարցմունքը կրկնեց մայրը և յանկարծ աղաղակեց.

— Դրագան:

Մեռնողը միայն հառաչեց:

— Թո՛ղ այժմ ներս մտնի հեքիմ-բաչին, — ասաց ազան, տալով ծխամորճը չիբուխչուն և տեղից վեր կենալով:

Բժիշկը իսկոյն եկաւ և յայանեց, թէ մեռնելու է:

— Փրկի՛ր դորան, — բացականչեց յուսահատ մայրը:

Մեռածներին ես չեմ կարող յարութիւն տալ:

— Նա դեռ չէ սառել, — ասաց պառաւը, ձեռքը դնելով որդու լանջին:

Բժիշկը ոչինչ չպատասխանեց. այն ժամանակ մայրը՝ դիմելով աղային, խնդրեց.

— Նա իմն է... թող տանեմ, աղա էֆէնդըմ:

— Ա՛ռ, — ասաց ազան հեռանալով:

Պառաւը մենակ մնաց իւր որդու դիակի հետ: Նա վախենում էր հեռանալ, որպէս զի թոյլտուութիւնից յետոյ էլ չարգելեն: Նա նոյնպէս երկիւղ էր կրում օրապահ բանտապետի քմահաճութիւնից, որովհետեւ թուրքերը միշտ պատրաստ են ծաղր ու ծանակի առարկայ շինել զեատուրի դիակը:

Նա շուտով առաւ իւր թաշկինակը, ձգեց որդու դիւխին, յետոյ վեր առաւ նորան և դուրս տարաւ: Փանդարմներից մէկը նկատեց.

— Ծանր է, չես կարող տանել:

— Ո՞վ էր նորան ձեռքերի վերայ տանում, — պատասխանեց պառաւը: Այսպէս նա անցաւ ստիկանատան բակը և, երեւի, քաղաքի միջով էլ կրտանէր այդպէս, եթէ դռան մօտ Նիկօլան չկանգնեցնէր Մօկրային:

— Մօկրա՛, — կանչեց նա:

— Հը, — ձայն տուեց պառաւը:

— Դու պառաւ ես... ես երիտասարդ:

— Նա իմ դաւակա է:

— Իսկ իմ եղբայրը:

Պառաւը կանգնեց: Նիկօլան առաւ դիակը և տարաւ նորան քաղաքի միջով: Հանգուցեալի դուռիսը ընկել էր Նիկօլայի ուսի վերայ, իսկ ձեռներն ու ոտները կախ էին ընկել: Գլուխը ծածկած էր թաշկինակով, և տեսնողը կարող էր կարծել, թէ Նիկօլան մի հիւանդ մարդ է տա-

նում: Ահա այդ էր պատճառը, որ անց ու դարձ  
անողներն այնքան էլ ուշադրութիւն չէին դարձ-  
նում նոցա վերայ: Նիկոլան տուն բերաւ հան-  
գուցեալին և դրեց բազմոցի վերայ: Տանեցի-  
ները ամենքը հաւաքուեցան, եկաւ քոյրը, և  
լաց ու կոծր սկսուեց:

— Կամա՛ց... կամա՛ց... — յորդորում էր տան-  
տիկինը: — Աստուած կանչեց Դրազանին: Նա  
մեռաւ մեր սուրբ գործի համար... նա դնաց  
Աստուծոյ մօտ գանգաւ անելու... Ահա դա երկ-  
րորդն է մեր ընտանիքից:

Նորա խօսքերի մէջ լսվում էլ լաց ու կոծի  
արձագանք, բայց նա աշխատում էր թաղցնել  
վշտի արտաքին նշոյններն և միայն երբեմնակի  
նորա կրծքից դուրս էր թռչում հառաչանք:

— Ո՛հ, իմ բազէ՛ս... իմ զաւակս... — բացա-  
կանչում էր երբեմն-երբեմն մայրը: — Գոնէ, թա-  
ղենք նորան, ինչպէս պատշաճ է:

Նա զբաղուեցաւ թաղումով: Բարկանեան  
թերակզզում կան կանայք, որոնք զբաղվում են  
մեռածներով, նոցա պէտք չէ կանչել — իրանք են  
գալիս: Նորա լողացնում են ննջեցեալին, հազ-  
ցնում և լալիս վերան: Դա հին սովորութեան  
հետքն է: Մօկրան ոչ մի բանով չխափանեց այդ  
սովորութիւնը: Մի ժամից յետոյ Դրազանի մար-  
մինը՝ ձեռքերը ծալած լանջի վերայ, սպիտակ  
սաւանի մէջ փաթաթած, դրած էր կապերտով  
ձածկած գիւղարդի վերայ:

Ամբոխը կամաց-կամաց սկսում էր խմբուիլ  
իւր վերջին հրաժեշտը տալու հանգուցեալին:  
Գալիս էին հարեան աղամարդիկ և կանայք, ու  
էին քաշում, աղօթք անում և փափսում: Նիկո-  
լան, որ համարեա սենեակից դուրս չէր գալիս,  
պատմում էր հանգուցեալի մահուան պատճառը և  
հանգամանքը: Նորան միշտ հարց ու փորձ էին  
անում, և նա պատասխանում էր.

— Թուրքերը սպանեցին նորան, որովհետեւ  
չկամեցաւ նոցա տալ մօտը եղած թղթերը:

— Էդ ի՞նչ թղթեր են եղել:

— Չգիտեմ:

— Իսկ ո՞ւմ հասցէով էին դրած:

— Ռուչուկ, մի որ և է մէկին:

— Գուցէ անգլիացոց, ֆրանսիացոց կամ ու-  
սաց դեսպանի՞ն:

— Կարոյ է լինել... հաստա միայն այն  
կարելի է ասել, որ կարեւոր թղթեր էին. նա  
կուլ տուեց նոցա:

Եկաւ և հաջի Խրիստոյի կինը ազնկայ հետ:  
Նիկոլան նոցա էլ պատմեց եղելութիւնը, առան-  
ձին ուշադրութիւն դարձնելով հանգուցեալի  
ազգասիրական սիրազորութեան վերայ:

Դրազանը, — ասում էր Նիկոլան, — հերոսա-  
կան մահով մեռաւ: Երեսնի չափ զափթի կային.  
Իսկ նա մենակ էր. ուզում էին խլել թղթերը,  
բայց նա շտուեց: Ամեն մի բուլղարացի նոյնը  
պիտի անէր:

Թաղումը շատ հանդիսաւոր էր: Լալկան կանայք բարձրաձայն ողբում էին դիակը դուրս հանելիս և հողին յանձնելիս: Մօկրան պատրաստել էր իւր սլարտիղում ճաշ, և շատ հիւր եկաւ: Երբ նորան մխիթարում էին, նա պատասխանում էր.

Ահա մեր ընտանիքից երկրորդն է գնում Աստուծուն գանգատելու մեր թշնամիներից: Թո՛ղ բազմանան միայն այդ գանգատները, այն ժամանակ դատը մենք կըտանենք:

Յայտնի չէ, թէ որքան էին հասկանում ամենքը այս խօսքերի նշանակութիւնը, — սակայն համարեա ամենքը համամիա էին պառոււին: Բայց կային և այնպիսիները, որոնք լիովին էին հասկանում նորան: Հասկանում էր Նիկօլան, Ստօեանը, Ստանկօն, հասկանում էր և հալի Խրիստօն. սա մինչև անգամ փորձեց պատասխանել:

— Մօկրա, Աստուած քեզ փորձանք ուղարկեց, և մենք ամենքս կարեկից ենք քո վշտին. բայց պէտք չէ ցանկալ, որ միւս բուլղարացի մայրերն էլ դոյն վիճակին երթարկուին:

— Ա՛խ, չէ... ոչ մի մօր այդ ես չեմ կամենում, — պատասխանեց պառուը հառաչելով: — Բայց նոյնպէս չէ կարելի ցանկալ, որ մեր բուլղար երիտասարդութիւնը անշարժութեան դատապարտուած մնայ, ինչպէս առաջ էր, և իւր գլուխը աւելի թանկ գնահատէ, քան թէ հայրե-

նիքը. իմ որդիքս օրինակ եղան... փորձեցին... Այդպիսի բաներ մի անգամից չեն յաջողվում, այլ փորձն է սովորեցնում: Երեխան այն ժամանակ է սովորում կրակի հետ վարուել, երբ այրում է ձեռք: Ամենքը գիտեն այս բանը: Այնուամենայնիւ մեզանից իւրաքանչիւրը սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է կրակի հետ վարուել:

Այսպէս էր խօսում տանտիկինը, յարգելով հիւրերին, և համարեա ոչ ոք չհակաճառեց, թէպէտ դրական մարդկանց մեծամասնութիւնը, որ բազկացած էր վաճառականներից, քաղաքային խորհրդարանի անդամներից, արհեստաւորներից և այլն... սրտով համաձայն չէին նորահետ: Ինչի՞ է պէտք թուրքին ձեռք տալ, քանի որ ուժը նորա կողմն է, — մտածում էին պատուաւոր պարոնները: Այսպէս թէ այնպէս Մօկրայի խօսքերը ի զուր չկորան: Երկու մատաղաւոր հաս, կենսալից երիտասարդների մահը ոչ միայն նոցա համակրութիւնն էր շարժում, այլ և ստիպում էր նոցա փոքր ինչ մտածել: Հիւրերը մտածում էին այդ երիտասարդների մահուան պատճառների վերայ, և նոքա հասկանում էին, որ անարդարութիւն կայ: Այսպէս, ամենաբարեմիա անձինք ակամայ, անգիտակցաբար մտաւոր բողոք սկսեցին այն իշխանութեան դէմ, որ մինչև այժմ նոցա աչքում օրինաւոր էր: Սկսուեց մտքերի ու հասկացողութիւնների մի անորոշ



զիոթ, որ ցոյց էր տալիս, թէ տաճկական մեքենայի մէջ մի բան փշացուել է: Սակայն դրական մարդիկ այնքան էլ չէին գրաււում: Նոքա չէին մտանում իրանց էնաֆը (արհեստը) և կրկին շարունակում էին հաշտ ապրել թուրքերի հետ: Դորա փոխարէն այլ պատկեր էր ներկայացնում երկտասարդութիւնը: Նաւահանգստի մօտ պատահածը ահռելի տպաւորութիւն գործեց նոցա վերայ, իսկ թաղման հարցը աւելի ևս սաստկացրեց այդ աղգեցութիւնը:

— Մօկրա, — ասաց մի օր Նիկոլան իւր արկնոյ, — ես էլ կը կամենայի մի բան անել հայրենիքիս համար, թէպէս նոյն վախճանին արժանանայի, որին և սրգիքդ արժանացան:

— Մենակ դու ի՞նչ կ'անես, — պատասխանեց նա:

— Ես հօ մենակ չեմ: Ինձ նմանները քաղաքում շատ կը լինին:

— Զոր օրինակ, ո՞ւմ աչքի առաջ ունիս:

Օրինակ, թէկուզ Ստօեանին... բացի Ստօեանից...

— Հըմ... — ընդհատեց պառաւը: — Խօսիլ Ստօեանի հետ, մտածեցէք, խորհեցէք, իսկ ես, երբ ժամանակը կը գայ, կ'ասեմ ձեզ: Ես դեռ մի սրգի էլ ունիմ, և առաջօրէն պիտի խորհեմ նորա հետ: Փիլիսոփայութեան գօկաօր է, կ'ուզենայի իմանալ, թէ էդ ինչին հարկաւոր պիտի դայ:

Այդ խօսակցութիւնից յետոյ շուտով եկաւ Մօկրայի մօտ Ստօեանը և սկսեց նորա հետ համարեա մի և նոյն խօսակցութիւնը: Նա սորան էլ նոյնը պատասխանեց և խորհուրդ տուեց ըզդոյշ լինել:

— Թուրքերը այնպիսի մարդիկ ունին, — ասաց Մօկրան, — որ ամեն բան լուծ ևն և տեսնում: Նոքա են լրտեսել իմ Դրագանիս մասին:

Մօկրան սպասում էր երրորդ որդուն և շատ անհանգստանում էր: Ի՞նչ կ'առէ փաշան: Արդեօք ինչպէ՞ս կը վարուի նորա հետ: Որպէս զի իմանայ այս բոլորը, նա վճռեց գնալ փաշայի մօտ: Փաշան, ինչպէս և միշտ, շատ սիրով ընդունեց նորան:

— Նէ՞ վար, նէ եօք:

Սովորական ողջունին պաշտօնական կերպով պատասխանելուց յետոյ Մօկրան ուղղակի սկսեց գործից.

— Ով որ մի անգամ տաք բանից այրուի, միւս անգամ պաղն էլ կը հովացնի, — սկսեց պառաւը: — Այ, ես, փաշա էֆէնդըմ, երկուսին արդէն կորցրի: Ասա՛ ինձ, քո զափթիները երրորդ որդու՞ս էլ կը սպանեն,

— Գիտե՞ս, թէ ինչու սպանեցին մե՞ծ որդու՞դ:

— Գիտեմ, փաշա էֆէնդըմ:

— Գիտե՞ս, թէ ինչու սպանեցին փոքր որդու՞դ:

— Չէ՛, փաշա էֆէնդըմ, չգիտեմ:

— Նա պատկանում էր այն յանձնաժողովին, որ արտասահմանից ուզում է կառավարել Բուլղարիան՝ փաղիչահի տեղ:

— Ա՛հ, — բացականչեց Մօկրան:

— Մի՞թէ դու չգիտէի՞ր այդ:

— Առաջին անգամն եմ լսում:

— Իսկ ես գիտէի: Նս գիտէի, թէ ինչ է կատարվում արտասահմանում, գիտէի նոյնպէս, թէ երբ և ինչպէս պիտի դայ որդիդ: Նա ինքն է մեղաւոր, որ մեռաւ: Ինչո՞ւ էր խառնվում այն դործի մէջ, որ իւր բանը չէ:

— Ճշմարիտ ես ասում, փաշա էֆէնդըմ, — պատասխանեց պառաւը. — դորա համար էլ ես եկայ քեզ հարցնելու: Դու ամեն բանից տեղեկութիւն ունիս, ուրեմն ասա, կարո՞ղ է իմ երրորդ որդիս վերադառնալ և հանդիստ կերպով իւր առևտուրը առաջ տանել... Նս արդէն պառաւել եմ, ինձ համար դժուար է... Երեք որդի ունէի, իսկ այժմ մէկն է մնացել... — Մօկրան արտասուեց:

— Պէլքի (գուցէ), — պատասխանեց փաշան: Նա ծափ տուեց և հրամայեց օգնականին մի ինչ որ թուղթ բերել: Օգնականը մի տետրակ բերաւ: Փաշան սկսեց թերթել, յետոյ հանեց կէս թերթ թուղթ և սկսեց կամաց-կամաց կարդալ:

— Պետք Զօնով... Հէյդէլբերգ... սովորում

է... փիլիսոփայութեան դօկտոր է... հըմ... ոչ մի բանի մէջ խառնուած չէ... փիլիսոփայութեան դօկտոր է... հըմ:

— Էդ ի՞նչ բան է փիլիսոփայութեան դօկտորը, — հարցրեց Մօկրան:

— Դա նշանակում է, թէ քո որդին իմաստուն է: Թո՛ղ ինչքան ուզում է իմաստուն լինի, միայն թէ չխառնուի այն բանի մէջ, որ իւր գործը չէ:

— Ուրեմն զավթիները նորան չե՞ն սպանիլ:

— պարզամտութեամբ հարցրեց պառաւը:

— Մի՛ վախենալ, չեն սպանիլ:

— Բա՞նտ էլ չեն ձգիլ:

— Նորան ոչ մի վատ բան չեն անիլ:

— Քո խօսքը, փաշա էֆէնդըմ, ինձ համար հազար ոսկի մէջ է դիէից թանկ է:

— Ահա իմ խօսքը. ոչ մի վատ բան չեն անիլ նորան:

Երբ Մօկրան տուն վերադարձաւ, հրամայեց, նամակ գրեն Պետարին, որ աներկիւղ տուն գայ: Փաշան էլ իւր կողմից հրամայեց, որ ամենախիստ կերպով նորան նայեն: Մի շաբաթից շոգենաւով եկաւ քսան և հինգ տարեկան մի երիտասարդ, որին դիմաւորելու համար դուրս եկան Մօկրան ու Նիկօլան: Որդին կարողացաւ բարևել նոցա միայն այն ժամանակ, երբ իւր լրեղէններն ու գրպանները մաքսատանը ամենախիստ կերպով քրքրեցին: Գրքերն ու թղթերը

քննելու համար առանձին աստիճանաւոր էր ուղարկուած, որի յոյն լինելը պարզ երեւում էր:

Մեծ անհանգստութեամբ էր սպասում Մօկրան, որ այդ բանը վերջանայ, և վերջացաւ էլ: Նա հրամայեց բեռնակիրներին, որ իրեղէնները կրեն, իսկ ինքը շտապեց սրգու հետ դէպի տուն, որ այնանդ ազատօրէն դրկէ իւր սրգուն, համբուրէ և ուրախութիւնից լաց լինի:

Երբ երիտասարդը ժամանեց իւր ծնողական տունը, առաջին վայրկեանները մայր ու սրգի զբաղուեցան փոխադարձ զգացմունքների արտայայտութեամբ, որ շատ էր կիտուել: Երկարամեայ բաժանմունքից յետոյ ամեն մէկը ուզում էր տեսնել նորան, ուրախանալ նորանով: Ուրախանում էր և մայրը, և քոյրը, և երկու սեռի ծառաներն էլ: Ամենքը ասում էին, որ նա մեծացել է, այրացել և գեղեցկացել: Գա մի սև սև սղամարդ էր, որի դէմքի գծերը եռանդ ու տոկունութիւն էին արտայայտում: Արտաքին տեսքով նա պատկառելի չէր, բայց սրբան աւելի էին ճանաչում նորան, այնքան ևս համակրելի էր դառնում: Երբ ամենքը նորան տեսան, նա էլ նոցա, հարց ու պատասխաններ սկսեցին և միայն ճաշի ժամանակ խօսակցութիւն բաց արին: Հետեւեալ օրը, երբ Պետրը բոլորովին հանգրստացաւ, մայրը հարցրեց սրգուն:

— Ինչպէ՞ս է քո կարծիքը, սրգիս:

— Ի՞նչ բանի մասին, մայրիկ:

— Եղբայրներիդ մասին: Երիտասարդը յոգևոց հանեց և պատասխանեց:

— Նոցա բաժին էր ընկել ամենագիտար բանը— սկսել է բայց ուրիշ կերպ անհնարին է: Ոչինչ չի կարելի անել առանց փորձելու:

Մօկրան համոզուեցաւ, որ սրգին չէ մեղադրում եղբայրներին անյաջողութեան համար և շարունակեց:

— Այժմ մենակ դու ես մնացել ինձ համար:

— Ի՞նչ արած, մայրիկ: Միթէ մէկի պատականութիւնը նոյնը չէ, ինչ որ երեքընը:

— Իմ թանկագին սրգիս, — սրտառուչ կերպով բացականչեց պառաւը, — Աստուած օրհնէ քեզ: Ես ոչ միայն օրհնում եմ, այլ և ոյժս որքան ներէ, կ'օգնեմ քեզ:

Մօր և սրգու այս խօսակցութիւնը միայն մի նախաբան էր. իսկ դարանից յետոյ արդէն սկսում են իրողութիւնները:

Պետրը նախ և առաջ կարգի բերեց իւր առևտրական գործերը. հաշուէ գրքեր մտցրեց և պահեց նոցա օրինակելի կերպով: Թէպէտ նա փիլիսոփայութեան դօկտօր էր, բայց գործը եղբօր պէս չէր տանում, որ սովորել էր վաճառականական ճեմարանում: Այսու ամենայիւ այդ չէր արգելում նորան գնալ ընթերցարան, որին նա մի քանի զին ունեցող զիրք ընծայեց, և ծանօթանալ այն տեղ երիտասարդութեան հետ:

Մայրը միանուագ ծանօթացրեց նորան Ստանկոյի, Ստօեանի և Նիկօլայի՝ որպէս փորձառու և հաւատարիմ մարդկանց հետ: Սակայն Ստանկօն իսկոյն և եթ հրատարուեց գործունէութիւնից, ուստի ստիպուած էին խորհրդակցել և գործել միայն երեքը: Սկզբում նոցա գործունէութիւնը սահմանափակվում էր լոկ արգելուած հրատարակութիւնը ստանալով և տարածելով: Միայն այժմ Նիկօլան բռնեց Ստանկոյի տեղը: Նախկին հովիւը մեծ ճարպիկութեամբ էր կատարում իւր գործը: Մի անգամ՝ Մօկրայի ու Պեօարի ներկայութեամբ բանալով դրքերով լի արկղը, նա այսպէս երազեց.

— Երբ պիտի մենք դրքերի տեղ մեր զինուորներին անց կայնենք, ինչպէս հին յոյները ձիու մէջ անց կացրին նոցա Տրովագա:

— Ինչպէ՞ս թէ ձիու մէջ, — հարցրեց Մօկրան:

Նիկօլան պատմեց նորան հին ձիու պատմութիւնը:

— Դա հեշտ բան չէ, — նկատեց Մօկրան: — Այդպիսի ձի չենք կարող չինել: Աւելի հեշտ կը լինի նոցա Ռուչչուկ բերել մեր ջրհորի միջով, եթէ միայն ցածից կարելի լինի մտնել ջրհորը:

— Ի՞նչ ջրհոր, — հարցրեց Պեօարը:

— Էն, որ պարտիզումն է:

Մօկրան, որ խօսք էր տուել գաղտուկ պահել այդ և ոչ ոքին չասել, պատմեց նոցա, որ

ունին մի ստորերկրեայ անցք, որ մի ժամանակ թաք էին կենում բոլոր թաղի կանայքն ու աղջկերբը:

— Մայրիկ, երբ և իցէ դու եղե՞լ ես այն տեղ:

— Կեանքումս երբէք չեմ եղել:

— Ուրեմն անհրաժեշտ է մի գնալ տեսնել:

Այդպիսի մի ապաստան միշտ կարող է հարկաւոր լինել: Գնանք, Նիկօլա:

Նոքա իսկոյն և եթ գնացին ջրհորը նայելու, մի լապտեր իջեցրին և անմիջապէս նկատեցին մուտքը: Պէտք էր ներս մտնել և բոլորը տեսնել:

— Ես կըմտնեմ, առաջարկեց Նիկօլան:

— Սպասիր, առաջուց պէտք է նայել, արդեօք ամուր են շղթան և նեցուկը:

— Ինձ կըբռնեն:

— Այ, մենք կըփորձենք: Հաւանական է, որ դու աւելի ծանր կը լինիս, քան թէ ջրով լի դոյլը:

Պեօարը սկսեց ցած իջեցնել դոյլը, մէջը ծանր բաներ դնելով: Դուրս եկաւ, որ արձակահամարձակ երկուսն էլ կարող են միասին ցած իջնել:

— Այժմ ի՞նչ ցած իջեցրու, — ասաց Նիկօլան:

— Ցած կ'իջեցնեմ, միայն ներս չմտնես, մինչև չհամոզուես, որ կարելի է մտնել:

— Ո՞վ ինձ կ'արգելէ:

— Գաղբ: Եթէ օգը լաւ է, գնա. իսկ եթէ սչ, այն ժամանակ կարող ես ներս մտնել, բայց դուրս չես գալ:

— Այդ ինչպէս, — տարակուսում էր Նիկոլան: — Սա մի և նոյն նկուղն է, եթէ նկուղում կարելի է շունչ քաշել, այստեղ ինչո՞ւ չէ կարելի:

Պետրը պատմեց օդի յատկութիւններէ մասին և մարդ ուղարկեց մի հրացան, մի թեթև ձող և էլի լապտեր բերելու: Նա հրամայեց, որ առաջ մի քանի անգամ հրացան արձակէ դէպի ներս: Յետոյ ցած իջեցրեց Նիկոլային, երկու լապտեր տալով նորան. մէկը կապած էր երկայն ձողի ծայրից, որ առջևից պիտի տանէր, իսկ միւսը ձեռքին պիտի բռնէր: Պետրը հրամայեց Նիկոլային, որ՝ երբ առաջին լապտերը կըսկսի հանդչել, անմիջապէս յետ դռնայ: Նիկոլան բուրբ ճշտութեամբ կատարեց: Նա դոյլից դուրս եկաւ և իսկոյն անհետացաւ, բայց շուտով վերադարձաւ և այնպիսի արագութեամբ թռաւ դոյլի մէջ, որ քիչ էր մնացել ջրհորը ընկնէր:

— Քաշի՛ր, — աղաղակեց նա:

Երբ Պետրը նորան վեր բարձրացրեց, Նիկոլան քաթանի պէս ճերմակ էր:

— Ի՞նչ եղաւ:

— Հագիւ գնացի:

— Ինչո՞ւ:

— Այն տեղ... այն տեղ... մի ինչ որ աչքեր կան, մըթմըթաց Նիկոլան:

— Ի՞նչ աչքեր:

— Մեծ-մեծ:

— Իսկ լապտերը ս՞էր է:

— Չգեցի:

— Հա՞նգաւ, ինչ է:

— Չէ:

— Այն տեղ կարող են լինել օձեր, խլէղներ, չղջիկներ, աղուէսներ, — սկսեց մի առ մի թուել Պետրը:

— Իսկ աչքե՞ր, — հարցրեց Նիկոլան:

— Դա, երևի, քս աչքիդ է երևցել: Նա յինք: Այժմ դու ինձ ցած իջեցրու, միայն ամուր բռնիր անխը և զգուշութեամբ ցած իջեցրու:

Պետրը ցած իջաւ, մտաւ ստորերկրեայ անցքը և երկար ատեն չէր վերադառնում, այնպէս որ Նիկոլան սկսեց անհանգստանալ: Բայց ահա նա երևեց. յաջողակ վեր բարձրացաւ և սկսեց պատմել:

— Երևելի՛ գիւտ: Այնտեղ մինչև 500 մարդ կարող է տեղաւորուել, բայց նախ քան հերթը մարդկանց կըհասնի, մենք այն տեղ կըպահենք այն ամենը, ինչ որ հանգստութիւն չէ տալիս թուրքերին:

— Ռէվոլվերնե՛րը, — բացականչեց Նիկոլան, որ

համախոհ էր միւսներին՝ այդ զէնքի արտասովոր արժանիքների վերաբերմամբ:

— Ռէվոլյուցիոները և մնացեալ բաները:

— Իսկ դու աչքեր տեսա՞ր:

— Ես պատերին տեսայ ապակու նման բծեր, որոնք արտափայլում էին լապտերի լուսից. երեւի, այդ բծերը դու աչքերի տեղ ես ընդունել: Տեսայ ես այն տեղ չղջիկներ, տեսայ աղուէսներ, որոնք լուսից սկսեցին փախչել, տեսայ դորտեր: Եթէ դու բծերից վախեցար, հապա ինչպէ՞ս կը դարձուրէիր չղջիկներից, դորտերից և աղուէսներից: Դեռ ուզում ես թուրքերի հետ կռուել:

Նիկոլան սաստիկ կոտորուեց:

— Թուրքերը՝ ուրիշ բան է, — մըթմըթաց Նիկոլան, — իսկ այն տեղ, դեռնի տակ, ասես, թէ դադաղի մէջ լինիս... մի ինչ որ բան շրջում էր...

— Օդից է այն տեղ շրջուն լսվում, ինչպէս և ջրհորում: Այդ ստորերկրեայ անցքի գլխաւոր յատկութիւնն ու արժանիքն էլ այն է, որ անընդահատ օդը փոխվում է: Ես մինչև ծայրը գընայի. ելքը ծածկած է հողով և շատ լաւ փակում է նորան ժայռը:

Յետոյ Պետրն ու Նիկոլան գնացին քարէ պարսպի մօտ, որ շինած էր անդունդի երկարութեամբ: Պետրը դիտեց գերբը, մի ինչ որ բանի վերայ մտածեց, խորհեց և վերջապէս ասաց.

— Այստեղ կարելի է վեր բարձրացնող մեքենայ շինել և հախարակի միջոցով ամից ինչ որ

ուղենաս ներս քաշել: Մաքսանենգները կարող են ամից այս տեղ բերել արկղներն և իրենք էլ չեն իմանալ, թէ բաներն ինչ եղան:

— Իսկ թուրքերը, — նկատեց Նիկոլան:

— Այս ամիը անմատչելի են համարում. այստեղ մինչև անդամ պահապան չկայ և երբէք էլ չի լինիլ: Հիանալի գիււտ է: Բայց թող ոչ ոք չիմանայ այս բանը, բացի մեզանից և մօրիցս:

— Մի՛ վախենալ, ոչ ոք չի իմանալ, — հաւատացրեց Նիկոլան:

— Թող թուրքերը, որքան կամենում են, հըսկողութիւն ունենան մեր տան վերայ, նոքա երբէք չեն կարծիլ, որ մենք այսպիսի ապաստան ունինք:

Նա կրկին սկսեց նայել: Առաւ ծոցի տետրակը, նկարեց, հաշուեց, դրեց, չափեց, յետոյ, երբ տուն եկաւ, նկարեց վեր բարձրացնելու մեքենան, որոշեց չափը և մաս մաս պատուիրեց զանազան փարպեաների, որպէս զի սոքա չհասկանան, թէ ինչ են շինում: Ակներև է, որ եղբայրների օրինակը Պետրին զգուշութիւն էր սովորեցրել և նա խոյս էր տալիս այն ամենից, ինչ որ գէթ սակաւիկ կասկածանքի տեղիք կարող էր տալ:

Երբ Ռուչչուկում, այսպէս ասած, ստորերկրեայ նախապատրաստութիւններ էին տեսնում, Բաղկանեան թերակղզում սկսում էին երեւան գալ անդային նշոյլներ, որոնք ցոյց էին տալիս տաճկական կայսրութեան տկարութիւնը: Կամ այս սլաւոնական ազգն էր զէնք բարձրացնում, կամ այն: Այս բոլորն ազգում էր բուլղարներէ վերայ, մի կողմից անհանգստութեամբ սպասելով, միւս կողմից—գաղանի ընկերութիւններ կազմակերպելով: Ի հարկէ, Ռուչչուկն էլ միւսներէից յետ չմնաց. այստեղ էլ շարժում կար, այստեղ էլ կար ընկերութեան սաղմը, որ բազկացած էր Պետարից, Ստոեանից և Նիկոլայից:

Նիկոլան նամանաւանդ յուզվում էր: Նորան թւում էր, թէ իրենց ընկերութեան բոլոր գործունէութիւնը կրեայի քայլերով է առաջ գնում: Ստոեանը գնաց Բուքարեշտ, ծանօթացաւ այնտեղ յեղափոխականների աւելի յայտնի գործիչների հետ և աշխատեց արտասահմանի հրատարակութիւնները մեծ քանակութեամբ անց կացնել, այսինքն՝ ոչ թէ փոքրիկ կապոցներով, ինչպէս մինչև այժմ, որ բաւականութիւն էր տալիս Ռուչչուկի և շրջակայքի պահանջներին, այլ ամբողջ արկղներով: Այժմ գեանափոր անցքը մեծ ծառայութիւն էր կատարում: Չկնորսը գիշերով

ափն էր բերում, հանում էր արկղը մակոյկից և կապում էր նորան երկաթէ ճանկին, որ նոյնպէս կապուած էր թոկից: Երբ ձկնորսը հեռանում էր, թոկը քաշում էին, արկղը բերում օփը և ապա վեր բարձրացնում, իսկ անդունդի կիսում արկղը կորչում էր: Ամեն բան կարգին դնում էր: Արդելուած հրատարակութիւնից ահագին քանակութիւն տարածվում էր քաղաքներում, գիւղերում և աւաններում: Այնու ամենայնիւ յանձնաժողովը դանդաղ գործունէութիւն էր համարում այս և առաջարկեց դիմել «առաքելութեան»: Այս առաջարկութիւնը Ստոեանը բերեց Ռուչչուկ և մի և նոյն ժամանակ յայտնեց, թէ Ռուսիայում առաքելութիւնն արդէն մեծ շարժման մէջ է: Դորա համար էլ պիտի ժողովուէին խորհրդակցելու: Ըստ երևութիւն ամենայրմարն էր հաւաքուել Մոկրայի տանը, բայց Պետարը ընդդիմացաւ:

— Ես միայն այն ժամանակ համաձայն կըլինիմ, որ մեր տանը հաւաքուեն,—ասում էր նա,—եթէ չգտնուի մի այնպիսի բնակարան, որին ոչ ոք չէ հսկում:

—Թերևս ինձ մօտ կարելի լինի ժողովուել.—առաջարկեց Ստոեանը,—ես առանձին սենեակ ունիմ հաջի Խրիստոյի տանը:

—Բայց չի՞ կարելի պարտիզում,—հարցրեց Նիկոլան:

— Պարտիզում՝ չի կարելի, — պատասխանեց Ստօեանը,

— Մենք հօ այն տե՞ղ խորհրդակցեցինք Ստանկոյի հետ:

— Այն ժամանակ միայն երեք հոգի էինք, իսկ այժմ որքան մարդ կը հաւաքուի:

Նիկօլան սկսեց մի առ մի թուել և եօթը մարդ համարեց:

— Թո՞ղ ամեն մէկը առանձին դայ, իբրև թէ գործի համար:

Ստօեանը նշանակեց օրն ու ժամը, իսկ Նիկօլան իմաց տուեց բոլորին, որոնց վճռել էին հրաւիրել: Հաւաքուելու համար նշանակած տեղը նորա սրտովն էր. նա յոյս ունէր, գուցէ և հարևանցի, տեսնել իլենկային: Մեծ անհամբերութեամբ սպասում էր նշանակած օրին և առաջինն էլ նա եկաւ այն տեղ, մինչև անգամ Ստօեանը տուն չէր վերադարձել:

— Տա՞նն է Ստօեանը, — հարցրեց նա իրեն պատահած ազախին:

— Չէ, դեռ չէ եկել:

— Ես կըսպասեմ նորան:

Ազախինը բաց արեց այն տան դուռը, ուր նա վերջին անգամ խօսեց իլենկայի հետ, և դուռը բաց թողեց: Երիտասարդը նայում էր դէպի բակը: Դռան մօտից մի քանի մարդ անցան, իսկ նա, օրիորդը, չէր անցնում... Յանկարծ նա երևեց դռան մէջ:

— Ա՛... — զարմացմամբ բացականչեց իլենկան, տեսնելով Նիկօլային:

— Ես եմ, — սկսեց Նիկօլան բոլորովին չփոթուած:

— Տեսնում եմ, — պատասխանեց օրիորդը մի այնպիսի ժպտով, որից Նիկօլան ամբողջապէս բորբոքուեց: — Գործի համար ե՞ս եկել, թէ այնպէս:

— Ես եկել եմ Ստօեանի մօտ:

— Կարծեմ, նա տանը չէ:

Ոչինչ, ես կըսպասեմ, որովհետև կարևոր գործ ունիմ նորա հետ:

— Նա երևի չուտով կըգայ:

Օրիորդը պիտի հեռանար, որովհետև Նիկօլան նորա մօտ չէր եկել: Սակայն նա չէր հեռանում. մի ինչ որ բան բռնում էր նորան:

— Ես լսել եմ, թէ դու թողել ես դերձակին, — սկսեց օրիորդը և ինքն իրեն հաւատացնում էր մտքի մէջ, թէ միայն այս բանն է կամենում հարցնել Նիկօլայից:

— Այո, թողեցի նորան:

— Աւելի առևտո՞ւրն է քեզ դուր գալիս:

— Ինձ համար մէկ է, թէ ինչ տեղ հաց կը ճարեմ. դերձակի, թէ հիւսնի մօտ, կօշկակարի, թէ դարբնի մօտ, այդ մէկ է ինձ համար, միայն թէ սոված չմեռնիմ:

— Իսկ ամենից շատ ի՞նչ ես հաւանում:

Ի՞նչ կ'ուզենայիր լինել:

— Մի ժամանակ... ես ուզում էի... պօր լինել:



— Կատակ ես անում, — պատասխանեց Իլեն-  
կան:

— Չէ, կատակ չեմ անում... յիշում ես, այն  
կիրակի օրը, երբ ես եկայ տեղեկութիւն ստա-  
նալու քեզանից քաղցրաւենու կտարած սկահի  
մասին: Հէնց այն ժամանակ այս տեղից դուրս  
եկայ, նստայ Դանուբի ափին, տեսայ պորեր...  
և ես սաստիկ փափագում էի պոր լինել:

— Դորանից ի՞նչ կը լինէր որ:

— Լաւ բան կը լինէր: Ես կըթռչէի, կըզայի  
քեզ մօտ: Դու պարտիզում կընստէիր, ես ցած  
կ'իջնէի քեզ մօտ, կողքիդ կըկանգնէի և կընա-  
յէի աչքիդ մէջ: Դու ինձ պորիս հօ չէի՞ր քշել:  
Օրիորդը լսում էր և նայում Նիկոլային,  
երբ սա վերջին խօսքերն էր արտասանում:

— Հին ժամանակներն այդպիսի բաներ լի-  
նում էին, — շարունակեց Նիկոլան:

— Ինչպէ՞ս թէ լինում էին, — հարցրեց Ի-  
լենկան:

— Այ, մի ոմն Իւպիտէր պոր էր դառնում  
և թռչում էր դալիս թագուհու մօտ, որի անու-  
նը Լէդա էր:

— Իսկ յետո՞յ:

— Եւ նա... — Նիկոլան ընդմիջեց: — Դա հե-  
քիւթ է:

— Ոչինչ, պատմիր ինձ այդ հեքիւթը, —  
պնդում էր Իլենկան:

— Գուցէ մի ուրիշ անգամ: Ես կարգացել  
եմ այդ, և այժմ չեմ յիշում:

— Ուրեմն տուր ինձ այդ գիրքը, ես ինքս  
կըկարգամ:

— Իսկ այդ գիրքը ֆրանսերէն է:

— Ա... — օրիորդը ուսերը վեր քաշեց: — Ես  
կըկամենայի սովորել ֆրանսերէն լեզուն:

— Ես քեզ կըսովորեցնէի, բայց ես ինքս էլ  
թոյլ գիտեմ այդ լեզուն:

— Սովորեցրո՛ւ, փոյթ չէ:

— Ժամանակ չունիմ: Այժմ ես շատ զբաղ-  
մունք ունիմ և ընթերցարանում էլ հազիւ եմ  
լինում: Իսկ շուտով, երևի, գործը աւելի կը-  
շատանայ:

— Ի՞նչ գործ, — հարցրեց Իլենկան:

— Հըմ... ի՞նչ գործ... Գուցէ բուլլար զին-  
ուոր դառնամ:

Իլենկան մի բան էր ուզում ասել, բայց  
ոչինչ չասաց, յանկարծ շուռ եկաւ և շտապելով  
հեռացաւ: Նիկոլան բոլորովին չկարողացաւ հաս-  
կանալ, թէ ինչն ստիպեց նորան այդպէս շտապ  
հեռանալ: Դորանից յետոյ շուտով Ստօեանը ե-  
կաւ: Միթէ՞ սա այդպէս վախեցրեց օրիորդին:  
Նիկոլան թերևս հարցնէր դորա մասին Ստօեա-  
նին, բայց սորա հետ խորհուրդի եկաւ մի ու-  
րիշ հրաւիրուած երիտասարդ:

— Դու արդէն այստե՞ղ ես, — հարցրեց Ստօ-

եանը նիկօլային. — շտապել ես, եղբայր, — և չըստասեղով պատասխանին՝ սանդուղքով վեր բարձրացաւ: նորա երեքը մի սենեակ մտան, որ ոչ մի բանով աչքի չէ ընկնում. պատերի տեղ պահարաններ էին, սոցա մօտ բազմոցներ, իսկ յատակին խօիր էր փռած: Այնու ամենայնիւ սենեակում մի սեղան կար և երկու աթոռ: Ստօեանը սօփորել էր այս կահ-կարասիքին. Բուքարեշտում, ուստի անհրաժեշտ բան էր համարում դոցա: Նա նստեցրեց հիւրերին թախտի վերայ, իսկ ինքը աթոռի: Նստած շնորհներս — մտան հրաւիրուածներից երկուսը. նոցանից յետոյ էլի մէկը, վերջապէս եկաւ Պեօտը, և այսպէս բոլորը ներկայ էին: Պեօտը բաց արեց նիստը՝ հրաւիրելով Ստօեանին, որ պատմէ, թէ ինչ է լսել Բուքարեշտում:

Ահա, թէ ինչ լսեցի, — սկսեց երիտասարդը: — Ասում են, թէ անհրաժեշտ է ապստամբութեան պատրաստուել և այնպէս անել, որ մի օր նա ծագի ամբողջ Բուլղարիայում, Ռումելիայում և Վալեդօնիայում: Դորա համար պէտք է, որ իւրաքանչիւր բուլղարացի իմանայ այդ և նշանակած ժամանակին պատրաստ լինի:

— Իսկ ե՞րբ կըլնի այդ, — ընդհատեց նիկօլան:

— Ժամանակը դեռ կարող կը լինինք նշանակել: Առաջ պէտք է պատրաստուել, այսինքն

բոլորին, բոլորին, թէ զիւղերում և թէ քաղաքներում իմաց տալ:

— Նամակներ ուղարկել ամենուրեք, — նորից ընդհատեց նիկօլան:

Պեօտը զսպեց նիկօլային, իսկ Ստօեանը շարունակեց.

— Սկզբում այդպէս էլ մտածում էին անել, բայց մեզանում գրել-կարդալ իմացողները շատ քիչ են, իսկ ամեն մի իմացող էլ յուսալի չէ. կան այնպիսիներն, որ կարդացածով իսկոյն կը վաղեն մուգիւրին լրտեսելու:

Իրաւ է. — նկատեց նիկօլան:

Դորա համար էլ վճռեցին «առաքեալներ» ուղարկել:

— Բացի դրանից վճռված է երաշխաւորուել, որ նորա հաւատարիմ կըլինին մեր գործին, — աւելացրեց Պեօտը:

Այո՛, — շարունակեց Ստօեանը, — վճռուած է երգում տալ որոշ ձևով. За народните горски чети. Ահաւասիկ կանոնադրութիւնը, — ցոյց տուեց Ստօեանը, հանելով ծոցից մի գրոտած թուղթ և տակը կնիքներով վաւերացրած:

— Կարդա՛... — ասացին մի քանիսը:

Ստօեանը սկսեց կարդալ ժողովրդի ապստամբութեան կազմակերպութեան կանոնադրութիւնը, որ պիտի ծագէր զօրապետների և բայբալտարներին առաջնորդութեան ներքոյ: Կանոնադրութիւնը բաղկացած էր տասն և վեց

պրակներից: Ամեն մի համայնք զօրք պիտի ներկայացնէր, հետևաբար և զօրապետ ու բայրակատար պիտի ունենար: Այսպէս, նախապատրաստական գործերի էութիւնն այն էր, որ իւրաքանչիւր համայնք երկու մարդ ունենար, որոնք յանձն առնէին վերոյիշեալ պաշտօններն և որոնց կարելի լինէր հաւատալ այդ պաշտօնները: Այս բոլորը տեսականապէս շատ հեշտ իրադրութեի էր թւում: Խորհրդին ներկայ եղողները սաստիկ վրդովուած էին կանոնադրութիւնը կարգալուծելու, և նոցա յուզմունքը ևս աւելի սաստկացաւ, երբ Ստօեանը կարգաց երդման բովանդակութիւնը.

«Արդարադատ Տէր, երդվում եմ խաչով և սուրբ աւետարանով, որ կրկատարեմ իմ բոլոր սրբազան պարտականութիւններն, ինչ որ ինձ վերայ դրած են թէ բերանացի և թէ կանոնադրութեան մէջ կարգացած. թո՛ղ պայծառ արեւը վկայ լինի իմ երդման, իսկ քաջ զինուորները թո՛ղ պատժեն ինձ սրաբերան դանակներով իմ իւրաքանչիւր մասնութեանս համար»:

— Ես ա՛յժմ իսկ երդում կուտեմ, — բացականչեց Նիկոլան:

— Ե՛ս էլ... ե՛ս էլ... — կրկնեցին միւսները:

— Լաւ, — ասաց Պետրը. — ես և Ստօեանը երդուել ենք, ուստի մենք կարող ենք ձեզ երդմանեցնել. պէտք է միայն խաչ և աւետարան դանակ... Խաչը հեշտ է գտնել, իսկ աւետարան

Ստանկօն կգտնէ... Մենք կըզնանք գերեզմանատուն, և այնտեղ՝ մեր նահատակների դագաղների մօտ ձեզ կ'երգմանեցնենք... Իսկ առ այժմ պէտք է խորհել առաքելութեան մասին:

— Էլ ի՞նչ խօսելու բան կայ, — բացականչեց Նիկոլան. — ես գնում եմ:

Ես էլ կըզնամ... ես էլ, — ազազակում էին մէկը միւսից յետոյ հաւաքուածները:

Միայն Պետրը չի կարող գնալ, — նկատեց Ստօեանը, որովհետեւ թէ վաչան, թէ աղան և թէ բորոր թուրքերը հետևում, հսկում են նորան:

— Ի հարկէ, ի հարկէ, — ընդունեցին ամենքը:

— Բացի գրանից, — նկատեց Նիկոլան, — հօ ամենքս չենք կարող հեռանալ Ռուչչուկից, որովհետեւ այս տեղ էլ քիչ գործ չի լինիլ:

Այսպէս դատելով, նա աչքի առաջ ունէր ստորերկրեայ անցքը, որի գոյութեան մասին ոչ ոք չգիտէր, բացի իրենից և Պետրից:

— Թող ձեր ասածը լինի, — սկսեց Պետրը, — թոյլ տուէք, որ ձեզ մի նկատողութիւն անեմ. դուք ամենքդ էլ կամենում էք առաքեալ լինել, բայց ամենքդ էլ կարո՞ղ կը լինիք կատարել այդ գործը:

— Ինչպէ՞ս թէ ամենքս կարող կը լինինք, — հակաճառեց մէկը, — այդ տեղ ի՞նչ դժուար բան կայ:

— Գու ի՞նչ տեղ ես ծնուել,— հարցրեց Պետրը հակաճառողին:

— Այստեղ... Ռուշչուկում:

— Նշանակում է քաղաքում... իսկ ինչ տե՞ղ ես կրթուել:

— Նոյնպէս քաղաքում:

— Ուրեմն դու չես կարող ոչ բան շինել, ոչ էլ խօսք առնել գիւղացիներից... իսկ դո՛ւ,— հարցրեց նա երկրորդին: Գուրս եկաւ, որ երկրորդն էլ, երրորդն էլ, չորրորդն էլ կրթուած էին քաղաքում: Հերթը հասաւ Նիկօլային:

— Ես ծնուել եմ քաղաքում,— ասաց նա,— բայց մանկութիւնից ոչխար եմ արածել և միշտ ապրել եմ գիւղացիների շրջանում:

— Իսկ դո՞ւ, Ստօեան:

— Ես ծնուել եմ գիւղում, կրթուել եմ մեխանէում, և եթէ գիւղացու շոր հագնեմ, այն ժամանակ ոչ ոք չի իմանալ, որ ես սովորել եմ Բուքարեշտում:

— Ուրեմն դուք երկուսդ միայն կարող էք «առաքեալ» լինել, մանաւանդ որ առ ժամանակ պէտք է միայն փորձել... իսկ այդ փորձից ամեն բան կախուած կը լինի... Եթէ ամեն բան յաջող լինի, այն ժամանակ աւելի համարձակ կըսկսենք կազմակերպել կանոնադրութեան հիման վերայ... յիշ՞ում էք կանոնադրութիւնը:

— Յիշ՞ում ենք, յիշում:

Վաղը արեւածագին եկէք գերեզմանատուն, իսկ այժմ Տէր ընդ ձեզ, դնացէք տուն:

Նորա սկսեցին ցրուել: Նիկօլան այնքան էր գրաւուել խորհրդի ժամանակ եղածով, որ մուռացել էր մինչև անգամ իրենկային: Նա շուտ շուտ ցած իջաւ սանդուղքից և արագ արագ հեռացաւ: Մի քանի հարիւր քայլ անելուց յետոյ նա յիշեց օրիորդին կամ, աւելի լաւ ասած, մըտաբերեց, թէ ինչպէս օրիորդը շտապով հեռացաւ և չկարողացաւ հասկանալ, թէ ինչու էր այդքան շտապում: Նա շատ էր փափագում լուծել այս հանելուկը, սակայն այդ էլ շուտով մոռացաւ, կարծես թէ յետաձգում էր մինչև աւելի բարեյաջող ժամանակ: Նա այժմ ուրիշ բանի վերայ էր մտածում: Նորա երևակայութեան մէջ այժմ ամենուրեք Բուլղարիայում ապստամբում էին, մեղմ քամին տատանում էր դրօշակները... Երիտասարդի հոգին լցուած էր սքանչելի ցնորքներով, և նա կամենում էր մէկին մասնակից անել դորան, արտայայտել իւր զգացմունքը: Բայց ո՞ւմ է թէ կարողանար մէկի առաջ թափել իւր թաթաղուն և զեզուն սրտի զգացմունքները, նա շատ երջանիկ կրկնէր:

Նա ուզում էր խօսել Պետրի հետ: Սակայն Պետրը նորան մի տարօրինակ մարդ էր երևում: Ստօեանից վերադառնալով, սա նստեց հաշուէգրքերի մօտ և սկսեց հաշուել կարծես թէ բո-

լորրովին բան չէր պատահել: Նստած հաշվում էր իրեն համար, գրում և յանկարծ կանչեց.

— Նիկո՛ւլա:

— Ի՞նչ է:

— Կշտի՞ր խանութի բոլոր ճարպը, իմ հաշիւներս ինչ որ է խառնուել են:

Հրաման տուեց և նորից նստեց գրելու, առես թէ բան չի եղել: Նիկոլան սկսեց կշռել ճարպը, բայց բան չէր գուրս գալիս. միշտ հաշիւը կորցնում էր: Նա կշռում էր, կրկին նորից էր կշռում... և յանկարծ մէկը եկաւ պղպեղ դնելու... Նիկոլան նորան շաքար տուեց պղպեղի փոխարէն: Եկողը գնաց և Նիկոլան նորից սկսեց կշռել այդ թշուառ ճարպը: Սակայն Պետրը այդ միջոցին իւր բանն էր անում, կարծես թէ ոչինչ չէր պատահել: Նորա գործը խանգարեց աստիճանադրներից մէկը, որ ներս մտաւ խանութ, Արիստարխի-բէյը, որ աչքի պաշտօն էր կատարում: այդ պաշտօնը գրաւիչ չէ, բայց խիստ անհրաժեշտ է այնպիսի տէրութիւնների համար, ինչպէս թուրքացն է: Նիկոլան նորան տեսնելով սեղմեց պոռչները, իսկ Պետրը սիրալիր բարևեց, նսանցրեց կողքին, սուրճ բերել տուեց, ծխամորճ առաջարկեց և խօսակցութիւն բաց արեց,

— Ինչ էք կարծում ի՞նչ բանի մասին. յեղափոխականների մասին...:

— Դու ծանօթ ես նորա անդամների հետ, — հարցրեց Արիստարխի-բէյը:

— Այո՛, ծանօթ եմ: Ես ծանօթացայ նոցա հետ Բուքարեշտում, — պատասխանեց Պետրը անփոյթ կերպով, կարծես թէ այդ յանձնաժողովը բոլորովին չէր հետաքրքրում նորան:

— Նորա, անտարակոյս, առաջարկեցի՞ն քեզ անդամ գրուել:

— Ի հարկէ: Ինչպէս չառաջարկէին, քանի որ եղբայրներին շնորհիւ մենք յայտնի եղանք: Բայց առ միշտ փողով աղատուեցայ նոցանից:

— Շա՞տ առան քեզանից:

— Հինգ դուկատ:

— Հրմ... Շատ չէ: Ինձանից աւելի շատ առան: Երկար ժամանակ հարկ էի վճարում նոցա, և նորա բան չէին հասկանում. յանկարծ — խաթա՛յ... մի օր նամակս նոցա ձեռն է ընկնում. դորանով էլ վերջացաւ մեր մտերմութիւնը: Եթէ այդ յիմար դէպքը չլինէր, ես անպատճառ յանձնաժողովի անդամ կ'ընտրուէի:

— Արժէ՞ որ, — անփոյթ կերպով նկատեց Պետրը:

— Սակայն Կ. Պօլսում այդ բանի վերայ շատ լուրջ կերպով են նայում:

— Գուցէ անհրաժեշտ են համարում ուրիշներին հաւատացնել այդ ցանցար բաների լրջութիւնը:

— Ի հարկէ, — պատասխանեց յոյնը, — քաղաքականութեան մէջ այդպիսի բաներ լինում են,

երբեմն ճանճը փրկ են շինում... Կարդացե՞լ էք նոցա լրագրի վերջին համարը:

— Ի՞նչ տեղից են առնեմ,— պատասխանեց Պետրը ուսերը վեր քաշելով:

— Ահա ասիկ ես քեզ ցոյց տամ,— և այս խօսքերն արտասանելիս Արիստարխի-բէյը հանեց ծոցի գրպանից լրագրի մի օրինակը: Պետրը առաւ լրագիրը և սկսեց աչքի անց կացնել...

Դեռ նոր էին քաշել ստորերկրեայ անցքը մի արկըղ լի այս համարով: Պետրը մի վայրկեան անգամ ինքն իրեն չկորցրեց և չչփոթուեց:

— Ուզո՞ւմ ես կարդալ,— հարցրեց յոյնը:

— Ուրախութեամբ: — Նա թեթեւ կերպով թերթեց համարը և, տալով Արիստարխի-բէյին, նկատեց. — Եւ ինչպէս չէ զգուեցնում նրանց միևնոյն բանը գրել: Երբէք ոչինչ նոր բան չի լինում: Միշտ ծամում են ֆրանսիական և գերմանական լրագրների գրածը: Նոքա կարծում են, թէ գրում են. բայց իսկապէս նոքա արտագրում են: Այս ձե՞զ են ուղարկել դատարան,— հարցրեց Պետրը:

Յոյնը փոքր ինչ կոտորուեց: — Արդարև, դատարան ուղարկում են, — ասաց նա, — բայց այս օրինակն այն տեղից չէ:

— Դու ի՞նքզ ես ստանում:

— Չէ, բայց ես կ'ուզենայի անմիջապէս ստանալ:

— Դիմիր խմբագրութեան:

— Չէ, չեմ կամենում գործ ունենալ նոցա հետ:

Պետրը հասկացաւ, հասկացաւ և Նիկոլան, որ այդ տեղ կանգնած էր, թէ ինչ էր ուզում Արիստարխի-բէյը: Նա յոյս ունէր ստանալ Պետրից այս կամ այն տեղեկութիւնը, սակայն փիլիսոփայութեան դօկտօրը ականջը սուր էր պահում և ոչ մի աննշան սխալանք չէր անում, թէ և շատ սիրալիր էր վարվում յոյնի հետ: Նա հասկացրեց, որ այժմ շատ դժուր ունի, որովհետև ստիպուած է բոլոր գործերը կարգի բերել, սակայն այնքան էլ չէր շեշտում այդ հարցը, այնպէս որ չէր կարելի կարծել, թէ նա միայն ցոյց է տալիս, որ գործի տէր է: Նիկոլան հիանում էր իւր ատրոջ սառնասրտութիւնից, և այդ օրինակի ազդեցութեան ներքոյ ինքն էլ սկսեց պըղպեղ տալ նոցա, որոնք պըղպեղ էին պահանջում, իսկ որոնք շաքարի համար էին դալիս, նոցա էլ շաքար էր կշռում և տալիս: Նորա մտքերն հաւասարակշռութիւն էին ստանում, և երեկոյեան նա արդէն հանգստացել էր: Իրիկնադէմին Պետրը գնաց խանութից, իսկ երբ արևը մայր մտաւ, Նիկոլան էլ ծածկեց պատուհանների փակեղները, դուռը շինեց, փողը հաւաքեց և գնաց տուն ընթրելու: Նա ընթրում էր Մօկրայի, Անկայի, Պետրի և միւս տանեցիկների հետ: Ճաշից յետոյ նոքա տաճկական սովորութեամբ, ամենքը հանգստութիւն էին առնում: Այս հանգստութիւնն անուանում են ըրահաթ. այդ ժամանակ տղամարդիկ՝ ծխամորձ ծխելով և ռախի

խմելով, ծաղապատիկ նստած նիրհում են. իսկ կանայք գնում են զրուցելու: Տղամարդիկ այստեղ Պետրոսն ու Նիկողոսն էին. ծխամորճի փոխարէն նորա ծխախոտ էին ծխում, ռախի չէին խմում, և Մօկրան սովորաբար նոյա հետ էր մընում: Երեկոյեան ըստ հաթի ժամանակ նորա, անտարակոյս, խօսում էին այն բանի մասին, ինչ որ նոյա աւելի էր հետաքրքրում: Այդ օր Պետրը առաջինը սկսեց խօսակցութիւնը:

— Իրատես, մայրիկ, յանձնաժողովից կարգադրութիւն է եկել «առաքեալներ» դէս ու դէն ուղարկելու:

— Ի՞նչ առաքեալներ, — հարցրեց Մօկրան:

Պետրը հասկացրեց բանի էութիւնը:

— Իա մի և նոյն բանն է, ինչ որ Բաչօ-Կիրօն էր սկսել:

— Ո՞վ է այդ Բաչօ-Կիրօն, — իւր կողմից էլ Պետրը հարցրեց:

— Միթէ դու նորա մասին չե՞ս լսել:

— Չէ:

— Բաչօ-Կիրօն գիւղացու շորով թափառում է ամեն տեղ և պատմում Բուլղարիայի մասին:

Բաչօ-Կիրօն (պատմական անձնաւորութիւն է) առաջ ուսուցիչ է եղել, բայց հայրենիքին ծառայելու բուն բաղձանքի ազդեցութեան ներքոյ նա թողնում է ուսուցչական պաշտօնը և

«ծխամորճը ատամների մէջ, տոպրակը ուսին, գիւղացու շորով» գիւղից գիւղ է պտտում,

քաղաքից քաղաք և դրդում ժողովուրդը: Նա պտտել էր համայն Բուլղարիան, Ռումելիան, Թրակիան, Մակեդոնիան, եղել էր Բէլգրադում, ուր տեսնուել էր նախարարների նախագահի հետ. եղել էր Բուքարեշտում, ուր յարաբերութիւն էր ունեցել յեղափոխականների յանձնաժողովի հետ. եղել էր Կ. Պօլսում, ուր հիւր էր եղել Ալաօկէյկովի մօտ: Տոպրակը նորա դիւանատունն էր. այն տեղ նա պահում էր սեպհական թղթերն, որոնց մեծ մասը բաղկացած էր ոտանաւորներից, որ նա գրում էր բուլղարերէն և տաճկերէն: Այդ ոտանաւորներում նա այն միտքն էր յայտնում, թէ իւրաքանչիւր բուլղարացի արիւն պիտի թափէ իւր հայրենիքի համար:

Նա լաւ բանաստեղծ չէր, բայց չափազանց նշանաւոր անձնաւորութիւն էր: Նա Բուլղարիոյ անկախ լինելու վերածնութեան դաղափարի մարմնացեալ անսահման հաւատարմութիւն էր ներկայացնում: Այս իսկ անձնաւորութեան մասին Մօկրան պատմեց որդուն և Նիկողոսին:

— Պէտք է այնպէս անել, ինչպէս նա արաւ, — նկատեց Նիկողոսն, — հագնել գիւղացու շոր և ճանապարհ ընկնել:

Պետրոսն ու Մօկրան համախոհ էին նորան: Խօսակցութիւնն էլի մի քանի րոպէ տևեց և ա-

պա նորա ցրուեցան: Գնալիս Պետրն ասաց Նի-  
կոլային, թէ աւետարան արդէն կայ:

Հետեւեալ օրը, երբ արեգակի նշոյլները ըս-  
կսեցին ոսկէզօծել արեւելքում Գանուբի մակերե-  
ւոյթը, քրիստոնեաների գերեզմանատանը եօթը  
մարդ երևեցին, որոնք բոլորովին չէին նմանում  
ապստամբների: Բուլղարացիները խոյս էին տա-  
լիս միջնադարեան ձևականութիւններից ու զա-  
նազան ծէսերից: Նոքա ոչ թիկնոց էին գործ ա-  
ծում, ոչ էլ մի ուրիշ նշան. իրենց չէին շրջապա-  
տում միստիկականութեամբ, որ վերջերքում ու-  
մանտիկականութեան փոխուեցաւ, թէպէտ նոքա  
էլ միշտ չէին կարող բացատրել իրենց հաւատը  
գէպի յառաջադիմութիւն: Նոքա հաւատում էին  
իրենց ձեռնարկած գործի արդարութեանը, հա-  
ւատում էին, որ ճշմարտութիւնը յաղթող կը-  
հանդիսանայ, և առաջ էին գնում, չիմանալով,  
թէ հետեւեալը ինչ պիտի լինի: Արշալուսին եօթը  
մարդ եկաւ գերեզմանատուն. այդ այն մարդիկն  
էին, որ երեկ խորհրդակցում էին Ստեփանի բը-  
նակարանում: Նոքա մօտեցան Դրագանի գերեզ-  
մանին, որ դեռ արօտով չէր ծածկուել: Կար մի  
գերեզմանաքար, որ պիտի արձանագրուէր, երբ  
Ստանկօն պատրաստէր տապանադիրը: Ստանկօն  
կամենում էր ոտանաւորով յարգել երիտասարդի  
սիշատակը, բայց չէր յաջողում: Թերեւս այդ  
գժուար չլինէր Բաշօ-Կիրոյին, բայց Ստանկօն  
որքան էլ մտածում էր, կրկին բան չէր գուրս

գալիս, ուստի և գերեզմանաքարը մնացել էր  
առանց արձանագրութեան: Պետրը այդ քարի  
վերայ դրեց խաչն ու աւետարանը: Երգում կե-  
րան հինգ հոգի: Նոքա շարքով կանգնեցին գէ-  
պի արևելք և արեգակի առաջ երգուեցան խա-  
չով և սուրբ աւետարանով այն բովանդակու-  
թեամբ, որ պարզ ու որոշակի կարգաց նոցա  
Պետրը: Այդ անպաճոյճ ծէսը զերծ չէր հան-  
դիսաւորութիւնից: Երբ երգման թուղթը կար-  
գաց, վերջացրեց, երգողներից խրաքանչիւրը  
երեսը խաչակրեց և մօտեցաւ խաչն ու աւե-  
տարանը համբուրելու, իսկ հեռացաւ համոզուած  
լինելով, որ իւր մէջ մի փոփոխութիւն եղաւ:

Ամենքն այդ վայրկեանին գտնվում էին մի  
խորհրդաւոր տպաւորութեան ներքոյ. ոչ մէկը  
չէր իշխում մի խօսքով անգամ ընդհատել այդ  
հանդիսաւոր լուսթիւնը: Յայտնի չէ, թէ որքան  
կըտէէր այդ լուսթիւնը, եթէ Մօկրան անսպա-  
սելի կերպով չգար գերեզմանատուն: Նա արագ  
քայլերով մօտեցաւ որդու գերեզմանին և շուա-  
րած նայեց երիտասարդներին:

— Ի՞նչ էք շինում այս տեղ:

— Սոքա երգուեցան, — պատասխանեց Պետրը,  
ակնարկելով երգուեալների վերայ:

— Հա... չեմ հարցնիլ, թէ ինչու համար...

գիտեմ: Աստուած օգնէ ձեզ:

— Դո՞ւ ինչու ես եկել այստեղ, մայրիկ, —  
հարցրեց որդին:



— Ես ամեն պռաւօտ դալիս եմ:— Նա հոգ-  
ւոց հանեց, նայեց տապանաքարին և տեսաւ  
նորա վերայ խաչ ու աւետարան: Մօտեցաւ,  
խաչակնքեց երեսը, համբուրեց խաչը, համբու-  
րեց աւետարանը, շտկուեցաւ և ձեռքերը խա-  
չածե ծալելով լանջին, շնչեց:

— Ես այս տեղ խօսում եմ որդուս հետ:  
Սպանեցին մի որդուս, սպանեցին և միւսին...  
Որդեակս, աղօթքս Աստուծուն հաղորդիր: Ես  
աղօթում եմ Բուրջարիայի մասին, որի համար  
դուք երկուսդ էլ թափեցիք ձեր երիտասարդ-  
արիւնը: Տէր Աստուած, մի մոռանալ այդ դո-  
հերը: Որդիքս... իմ անգի՛ն դաւակներս:

Նորա ձայնը դողդոջիւն էր, բայց ինքը չէր  
լալիս: Նա լռեց իւր յուզմունքը ծածկելու հա-  
մար, իսկ յետոյ դարձաւ երիտասարդներին.

— Դուք շատ լաւ արիք, որ Դրագանի գե-  
րեզմանի վերայ երդուեցաք... Նա կը հաղորդէ  
Աստուծուն ձեր երդումը, որ կը դատէ ձեզ և  
կը պատուհասէ, եթէ մոռանաք ձեր երդումը:  
Այժմ գնացէք, Տէր ընդ ձեզ. թողէք ինձ մենակ:

Երիտասարդները մօտեցան պռաւին, համ-  
բուրեցին նորա ձեռը և հեռացան. իսկ նա խա-  
չակնքեց իւրաքանչիւրին:

Սրեգակի թեքուած ճառագայթները, ոս-  
կէզօծելով առաւօտեան ցողը և տերևներին կա-  
խուած կաթիլները, լուսաւորում էին այս սրը-  
տառու չ տեսարանը: Կաթիլներն աղամանգի

պէս էին փայլում: Գերեզմանոցի վերայ թռչկո-  
տում էր մի արտուտիկ, իսկ Դանուբի վերայ և  
նորա միւս կողմում գորշ մէդ էր փռուած: Պետա-  
րը ամենից վերջը մօտեցաւ մօրը: Սա երկու  
ձեռքով բռնեց սրդու գլուխը և մեղմ, բայց  
յուզուած ձայով շնչեց:

— Օ... դլուխդ... սա գլուխ է... Աստուած  
կը մեղքանայ ինձ... կը մեղքանայ թշուառ որ-  
բին... Բայց թո՛ղ կատարուի նորա սուրբ կամ-  
քը... Որդի՛ս, զգոյշ կաց...— Նա խաչակնքեց և  
իւր որդուն. սա էլ հեռացաւ:

Միւս օրը Նիկիոյան գիւղացու շորով գնաց  
Ծումլա տանող ճանապարհով: Ոչ ոք նորան ար-  
գելք չեղաւ, ոչ ոք չբռնեց: Այլ էր Ստօեանի  
դրութիւնը: Կապուած լինելով հաջի Խրիստոյի  
հետ, նա լիովին աղատ չէր: Նա հեշտ կարող  
էր գնալ Բուքարեշտ, որովհետև դորա համար  
շատ ժամանակ չէր հարկաւոր և միշտ կարելի  
էր առևտրական գործերով մի առիթ գտնել:  
Հաջի Խրիստօն զգուշացնում էր նորան, բայց  
առանձին հսկողութիւն չէր բանեցնում: Սակայն  
այժմ, երբ Ստօեանը յայտնեց, թէ երկար ժա-  
մանակով է գնում և գնում է ո՛չ Բուքարեշտ,  
ո՛չ էլ առևտրական գործերով, հաջի Խրիստօն  
անհրաժեշտ համարեց խօսել նորա հետ:

— Մի՛ յիմարանալ, — սկսեց նա. — ուրիշների  
պէս դու էլ միայն մի գլուխ ունիս:



— Այդ ես գիտեմ, — պատասխանեց երիտա-  
սարգը: —

— Իսկ եթէ կորցնե՞ս նորան:

— Մենք յաւիտենական չենք... Երկու մահ  
չի լինում, իսկ մէկից խոյս չենք տալ:

— Ի հարկէ, — պատասխանեց հաջի Խրիստոն  
և փոքր ինչ մտածելուց յետոյ աւելացրեց. —  
Իմացի՛ր, որ իմ մահից յետոյ կըմնայ էսնափ,  
նորա հետ էլ Իլենկան... Հասկանո՞ւմ ես:

Ստօեանը նայեց իրեն հետ խօսողի աչքին:

— Ի՞նչ է: Գնո՞ւմ ես, — հարցրեց հաջի Խր-  
իստոն:

— Այո՛, գնում եմ, բայց կըվերադառնամ:

— Վերադարձի՛ր թէ չէ ինքզ մեզաւոր կը-  
լինիս, եթէ քո տեղն ուրիշը բռնէ: Պեօտը դրա-  
կան մարդ է, նա իւր բանը գիտէ:


Այս բոլորը չէր կարող բռնել Ստօեանին և  
չբռնեց: Նորա գնալու օրը Իլենկան կէսօրին  
այցելեց Սնկային: Նորա առաջին հարցերից մէ-  
կը եղաւ Նիկօլայի մասին:

— Ո՞ւր է գնացել:

— Չգիտեմ, գնացել է մի տեղ:

— Կըվերադառնա՞յ:

— Չգիտեմ. գուցէ վերադառնայ:



... Գ. և յարգմի մաս կէսայսի  
... Գ. և յարգմի մաս կէսայսի

Ստօեանի ու Նիկօլայի Ռուշչուկից անհե-  
տանալուց յետոյ անցաւ մի քանի ամիս: Մեզ  
հետաքրքրող քաղաքական ու հասարակական  
յարաբերութիւններից, ըստ երևոյթին, ոչինչ  
չփոխուեց: Նոցա կարելի է համեմատել, օրինա-  
կի համար, Գանուբի հետ, որ միայն հասում է  
և հասում: Նորա միատեսակ մակերևոյթը փայ-  
լում է արեգակի տակ, այնտեղ արտափայլում  
է երկինքը, բայց ո՞վ գիտէ, թէ ինչ է լինում  
յատակի վերայ: Գուցէ այնտեղ առանձին հո-  
սանքներ են գոյանում, թերևս աւագը լցնո՞ւմ է  
տաշտը:

Սօկրան այժմ անտեսական գործերով էր  
զբաղուած, Պեօտը առևտրական գործերի մէջ  
էր խորասուզուած, հաջի Խրիստոյի կեանքն էլ  
անցնում էր իւր սովորական ընթացքով, և մի-  
այն նա, ով որ կամենար առանձնապէս հետա-  
մուտ լինել փոփոխութեան, կարող էր նկատել,  
որ Իլենկան սովորականից շատ էր սկսել մտա-  
ծել: Օրիորդների մտախոհութեան մէջ մի ա-  
ռանձին բան չկայ — միթէ նորա մտածելու բան  
չունի՞ն: Ամեն մի օրիորդի համար իւր ապա-  
գան հանելուկ է և այն՝ խիստ հետաքրքրական:  
Ուստի բանն այն չէ, որ Իլենկան մտածութիւն-  
ների մէջ էր խորասուզվում, այլ այն՝ որ ասո-

վորականից շատ էր մտածում: Բայց այս փոփոխութեան վերայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում. ոչ հայրը, ոչ մայրը, ոչ էլ Վեօլկան, որ նորան մեծացրել էր: Օրիորդը ոչ ոքի բան չէր ասում իւր մտատանջութեան մասին և միայն (ահա այս «միայնը» կարող է այդ հարցով հետաքրքրուողին) ցոյց տալ ճշմարիտ շաւիղը հանդիպելով Անկային կամ ծնողներին, Մօկրայի մօտ մի կամ ուրիշ տեղ, աշխատում էր իս օսք բանալ Նիկօլայի մասին և նա այս անում էր շատ ճարպիկ կերպով: Այսպէս, օրինակի համար, նա մի անգամ ասաց Անկային.

— Հայրս էլ քեց Ստօեանին, ինչպէս և Պեօտը Նիկօլային:

— Մի՞թէ Պեօտը քե՞լ է Նիկօլային, — պատասխանեց Անկան:

— Ես լսել եմ, որ Նիկօլան խանութում ապրանք էր գողանում:

— Ի՞նչ ցանցար բաներ ես խօսում, — բացականչեց Անկան բարկացած:

— Ես այդպէս եմ լսել:

— Սո՛ւտ է: Մայրս լիովին հաւատում էր նորան, և նա երբէք չէ շահուել մեր մի փարայով: Այդ բոլորը սուտ է: Չէ... չէ... Նիկօլան խիստ լաւ մարդ է:

— Ի՞նչ սա լաւ, — հարցրեց Իլենկան:

— Այո՛, շատ լաւ, չափազանց լաւ է... ինչպէս շաքար... և այլն:

— Այնպէս էլ քա՞ղցր է: — Այո՛, քաղցր է և վառվռուն, ինչպէս կրակ:

— Ինչ որ է՝ դու շատ ես գովում նորան, — նկատեց Իլենկան այնպիսի մի եղանակով, ասես թէ մի բանի վերայ ակնարկում լինէր:

— Ես չեմ գովում, այլ պարզ ասում եմ, թէ ինչպիսի մարդ է նա: Սակայն նորան ի՞նչ իմ գովասանքը կամ պարտաւանքը:

Անկան, որի վերայ սաստիկ ազդել էին և քայքայել իրենց պատահած անբաղդութիւնները, վճռել էր մտնել կուսանոց, դորա համար էլ Իլենկան մեծ նշանակութիւն էր տալիս այն բոլորին, ինչ որ Անկան ասում էր Նիկօլայի մասին: Նորա կարծիքը ազատ էր կողմնապահութիւնից: Իլենկան կարողացաւ պատմել տալ իրեն այն մարդու մասին, որի վերայ Անկան քիչ բան կարող էր պատմել: Նա գիտէր, որ տէրերը գոհ են նորանից. նոքա միասին էին ընթրում. նա լսում էր այն խօսակցութիւնները, որ տեղի էին ունենում նորա, եղբօր և մօր մէջ, իսկ Անկան չէր մասնակցում այդ խօսակցութիւններին, որովհետեւ ուրիշ գործով էր զբաղուած լինում: Նա միշտ մտածում էր Ռուսմանիայի մի կուսասանոցի մասին, ուր միշտ պատրաստվում էր գլխաւոր և վաղուց արդէն գնացած կրիկներ, եթէ ամեն բան իրենից կախուած լինէր: Մայրն ու

եղբայրը չէին դիմադրում նորա մտադրութեանը, բայց խորհուրդ էին տալիս.

— Սպասիր, մտածիր լաւ, որ յետոյ չփոշմանես:

Անկան համաձայն էր ծնողներին, ապրում էր տանը, բայց միշտ պաս պահելով և աղօթքներով պատրաստում էր իւր անձը վանական կեանքի համար: Հարևանները նորան սուրբ էին համարում. հոգևոր տէրը ընդունում էր գրացիների կարծիքը, իսկ փաշան՝ Անկայի ցանկութիւնը Մօկրայի ազգեցութեան վերագրելով, այդ բանը առհաւապէս էր համարում ընտանեաց բարեմտութեան, թէ և այն տեղից երկու ապստամբներ էին դուրս եկել: Եւ արդարև, Պետրը գրաւուած էր իւր առևտրով, իսկ Անկան կենդանի դիմում էր դէպի գերեզման: Այսպիսի մարդիկ չեն կարող որ և է նախատելի գործով պարապել: Բայց իրօք ուրիշ բան էր լինում:

Մեզ ծանօթ հինգ դաւադրողները չէին քրնում. նոքա վերածնութիւն էին քարոզում, ցրտում ու տարածում էին ահագին քանակութեամբ արդեւուած հրատարակութիւնները: Այժմ այդ հրատարակութիւնները ոչ միայն մնում էին ընթերցարանում, այլ և երևում էին ամեն տեսակ խանութներում, սրճարաններում և մասնաւոր տներում, այնպէս որ ոչ միայն բուլղարների, այլ և յանկարծակի ումանացիների, յոյների և տաճիկների ձեռն էր

ընկնում: Ի գուր էր Արիստարխի-բէյը ճիզը թափում հետամուտ լինելու, թէ այդ բոլորը ինչպէս է կատարվում: «Արդեւուածը» ման էր գալիս, պտտվում էր աննկատելի ճանապարհներով: Չերբակալութիւններ էին տեղի ունենում, բայց առանց հետեանքի, որովհետև ձերբակալուածները վերջ ի վերջոյ նոյնքան էլ մեղաւոր էին դուրս գալիս, որքան և ինքը փաշան: Հօնա իրեն մօտ էլ գտնում էր արդեւուածը: Այս բոլորը անհանգստութիւն էր պատճառում իշխանութեան և հիւպատոսներին: Սոցա մանաւանդ վախեցրեց նոցա հրաւերներից մէկը, որ դրած էր կօսմօպօլիտական ոգւով: Հիւպատոսներից մէկը՝ ստանալով այդ թերթը, շտապում է փաշայի մօտ և, ցոյց տալով նորան corpus delicti, հարցնում է.

— Արդեօք դուք տեսե՞լ էք այս, ձերդ գերազանցութիւն:

Փաշան հանեց բարձի տակից մի օրինակ և ցոյց տուեց նորան:

— Այդ ի՞նչ է նշանակում, — հարցրեց քաղաքակրթուած տէրութեան ներկայացուցիչը:

— Որ մենք քաղաքակրթվում ենք, — պատասխանեց փաշան:

— Այո՛, բայց հօ այդպէս չէ կարելի:

— Իսկ Բերլինում դուրս պէս բան սկի չի՞ լինում:

Հիւպատոսը փոքր ինչ շփոթուեց և մի քիչ մտածելուց յետոյ պատասխանեց.

— Եթէ Ռուշչուկում բռնենք թելի ծայրը, այն ժամանակ թերևս այդ թելով կարելի լինի հասնել կծկին Բերլինում:

— Աւելի լաւ չի՞ լինիլ ընդհակառակը, — պատասխանեց փաշան ժպտելով, — Բերլինում որոնել այն թելի ծայրը, որի կծիկը գլորուելով Տաճկաստան է ընկել:

— Ահ, ձերդ գերազանցութիւն, դուք խառնում էք քաղաքական շահերը հասարակական կարգապահութեան հարցերի հետ:

— Քանի եւրոպական քաղաքականութիւնը մեզ հանդիստ էր թողնում, մեզանում ոչինչ չէր սպառնում հասարակական կարգապահութեան:

— Դա նշանակում է, որ դուք ոչ մի միջոց չէք ուզում գործ դնել:

— Ընդհակառակը, ես միայն նկատողութիւն արի այն դերի առթիւ, որ մենք միշտ պատրաստ ենք խաղալու, երբ հարց կըծադէ հասարակական կարգապահութեան մասին:

— Այս բանն այնքան էլ ձեզ է վերաբերում, որքան և ուրիշներին:

Փաշան միայն ուսերը վեր քաշեց:

— Կարգացէք, ձերդ գերազանցութիւն, — բացականչեց հիւպատոսը, մեկնելով լրագիրը և մատով ցոյց տալով: — Ազատութիւն, ֆէդերա-

ցիա, հասարակապետութիւն... կատարեալ լեհական ըմբոստութիւն է:

— Ում ըմբոստ գործն էլ լինի, այդ մեզ համար մի և նոյնն է: Այս բանից բուլղարները բոլորովին բան չեն հասկանում, և մենք շատ հեշտութեամբ կարող ենք կարգ պահպանել: Մէկին կախել կամ մի որ և է բուլղարի գլուխը ցցի վերայ բարձրացնել ցոյց տալու համար, այն ժամանակ խաղաղութիւն կըտիրէ: Ռուշչուկում մենք մի արժանահաւատ ընտանիք ունինք և այդ շնորհիւ այն բանի, որ նորա անդամներից մէկը իւր գլուխը տուեց ցոյց տալու համար: Այո, լինում են ընդհանրութիւններ, երբ անհրաժեշտ են այդ տեսակ ցոյցեր:

— Իսկական ժամանակն է... — շարունակեց հիւպատոսը:

— Շատ յարմար է, — ընդհատեց փաշան, — մեր խոնարհ հպատակներին վախեցնելու համար... Ես արդէն պարտ ու պաշտած կարգադրութիւններ արել եմ... հրամայել եմ, որ ամեն տեղ խուզարկեն... Այժմ քաղաքներում, գիւղերում, աւաններում, սարերում, անտառներում և դաշտերում, մի խօսքով, ամեն տեղ բռնում են յանձնաժողովի անդամներին:

— Նորա ի՞նչ պիտի անեն դաշտում:

— Ոչինչ, — պատասխանեց փաշան: — Պէտք է միայն տպաւորութիւն գործել... բաւական է, եթէ յանձնաժողովի անդամներից մէկին ձերբակա-

լեն, և ժողովուրդը կը հասկանայ, որ դաւադրութեան մասնակցողներին հետամուտ ենք լինում, ինչպէս գողերի ու աւազակների: Գլխատել միշտ կարելի է, պէտք է միայն դատապարտել, մեղադրել, որ բռնուածը յանձնաժողովի անդամ է:

— Այդպէս է, բայց ապացոյցներ են պէտք:

— Ապացոյցներ էլ կը գտնուին, թէպէտ բոլորովին աւելորդ են: Բայց որովհետեւ մենք այժմ քաղաքակրթում ենք, այդ պատճառով ես յանձնեցի Արիստարխի-բէյին դատի ու քննութեան նախագիծը մշակել... Ես անպատճառ բոյոյ հիւպատոսարաններին հրաւէր կ'ուղարկեմ այդ դատին ներկայ լինելու... Լիայոյս եմ, — շարունակեց նա կծու կերպով, — որ ներկայացումը յաջող կը լինի:

— Բայց հօ դուք դեռ դերասան չունի՞ք:

— Իմ կարգադրիչ Արիստարխի-բէյը գտել է արդէն մի քանի մարդ:

Արդարեւ, համայն Բուլղարիայում զօրքեր էին նշանակուած, որոնք բազկացած էին այնպիսի խմբերից, որոնցից մէկին պատահեց Ստոեանը կրիվենայում: Միլեազիմը, ինչպէս մենք տեսանք, չէր էլ կարծում, որ առջևը կանգնած է յանձնաժողովի անդամներից մէկը գիւղացու շորերով: Ստոեանը շորերը փոխեց, գիշերից մեխանէում և լուսաբացին փողոց դուրս եկաւ, ուր ընկուզենու տակ քնած էին սուլթանի զինուորները: Քնած էր մինչև անգամ պահապան զին-

ուորը: Ծագող արևը ոչինչ տպաւորութիւն չէր գործում թէ սորա և թէ քնած ընկերների վերայ: Մէկը ալ կողքին էր պառկել, միւսը — ձախ, երրորդը քիթը գետինն էր խրել, և ամենքը մրափած էին: Միլեազիմը պառկած էր մէջքի վերայ և վեր ցցած քթից զանազան ձայներ էր հանում՝ մերթ աղիողորմ, մերթ հանդիսաւոր, կամ խուլ-խրխուալի, կամ սուլոցի պէս զիլ:

— Միթէ սոքա մարդի՞կ են, — մտածեց Ստոեանը, հեռուից նայելով այդ պատկերին:

— Մենք էլ իսկ այդպէս ենք քնած ժամանակը, — պատասխանեց Պէտոն:

— Բանն այն չէ, թէ ինչպէս են քնել:

— Ապա՞, — հարցրեց մեխանէլին:

— Գիտէք, մեզ կարելի է համեմատել գաղանների հետ, սուլթանը մեզ որսում է... իսկ սոքա... ի՞նչ է սա...

— Ի հարկէ շներ են...

— Չեռս քոր է դալիս. սիրտս ասում է, ա՛ն թրերը, հէնց իրենց զէնքով կոտորի դոցա:

— Եւ ի՞նչ կըլինէր դորանից:

— Եօթը թրքով պակաս կըլինէր աշխարհս:

— Չի կարելի, եղբայր, իմ տանը անել այդ:

— Չի կարելի, թող կարելի չլինի: Սակայն ես այնպէս միայն ասացի: Թող քնեն իրենց համար այդ կտրիճները, բայց ես պիտի մտածեմ, թէ ինչպէս Ռուչչուկ գնամ:

Պէտօն գլուխը թօթափեց և ասաց.—  
Եթէ այստեղ հսկում են, Ռուչչուկում էլ պահա-  
պաններ կըլինին կանգնած քաղաքի դուռնքի  
մօտ:

— Բայց դուք է այնտեղ էլ այնպէս են հըս-  
կում, ինչպէս այստեղ:

Պէտօն պատասխանեց գլխի շարժումով և  
յետոյ ասաց.— Մի քանի ժամից յետոյ այստեղ  
պիտի դայ նամակաբերը, նորա հետ էլ կըզնաս,  
իսկ առ այժմ հեռացիր միլեազիմի աչքեց, գնա  
մի տեղ:

— Կըզնամ գիւղը:

— Գնա՛:

— Գրօժդանը տա՞նն է, — հարցրեց երիտա-  
սարդը:

— Տանն է Գիտե՞ս, նա պսակուած է:

— Գիտեմ, Բալկանային է առել:

— Այո, և այժմ ահա թէ ինչ տեղ է բը-  
նակվում, — ասաց ծերունին, մասնացոյց անելով  
գիւղի ծայրին գանուող մի խրճիթի վերայ:

— Այն տեղ առաջ հօ Ստեփանն էր բնակ-  
վում, — նկատեց Ստեփանը:

— Հա, բնակվում էր, բայց նա ծախեց  
խրճիթը Գրօժդանին, իսկ ինքը գնաց, տեղա-  
ւորուեց Բէլաեա գետի միւս ափին:

Այդ միջոցին ընկուզենու տակ մըթմըթոց  
լսուեց. բարբաջում էր միլեազիմը, քնի մէջ ի-  
րեն պաշարած ճանճերին քշելով: Նորա աւելի

էին անհանգստացնում նորան, քան թէ աչքին  
խփող արևի լոյսը: Ճանճերը անընդհատ ման էին  
գալիս նորա երեսին և մանաւանդ սիրել էին  
նորա քթածակերի շրջակայքը. ի դուր էր նա  
քնի մէջ, բարկանում— ճանճերը թռչում էին  
և նորից նստում. վերջապէս միլեազիմը մըթմըթ-  
թաց և թօթափեց գլուխը— ճանճերը փախան:  
Այդ մըթմըթոցն էր, որ գրաւեց խօսողների ու-  
շադրութիւնը:

— Արթնանում է, — ասաց Ստեփանը:

— Դեռ չէ, բայց շուտով կըզարթնի: Անիծ-  
ուած ճանճերը չեն թողնում, որ քնի: Դէ՛,  
գնա՛. Տէր ընդ քեզ:

Ստեփանը շուռ եկաւ և առանց շտապելու  
անցաւ այն տարածութիւնը, որ բաժանում էր  
նորան այն խրճիթից, ուր պիտի գնար: Տան  
չեմքին նորան դիմաւորեցին անն տէրերը՝ եր-  
կունն էլ գեռ ևս երիտասարդ: Մարդը կըլինէր  
երեսուն տարեկան, իսկ կինը մօտաւորապէս քը-  
սան և հինգ: Շատ լաւ գոյգ էր. երկունն էլ  
գեղեցիկ էին, մանաւանդ կինը, որ գիւղական  
գեղեցկութեան տիպար էր ներկայացնում: Նո-  
րա վայելչակազմ, թարմ, առոյգ կերպարանքը  
դուր էր գալիս իւրաքանչիւրին, ով որ նայում էր  
նորան: Ստեփանը բարեկեց տիկնաջ, որպէս վա-  
ղուցուայ ծանօթի:

— Ի՞նչ լաւ բան կայ ձեր կողմերում:

— Ամեն բան հին է, — պատասխանեց Գրոթ-  
դանը: —

— Էնքան էլ հին չէ, — պատասխանեց Ստո-  
եանը: — Առաջ Կրիստոսը պահապաններ չէին  
նշանակում: —

— Սատանան տանէ նոցա, — նկատեց տան-  
տիկինը: — Այսօր մեր հերթն է նոցա կերակրելու: —

— Բայց կամենում էք ազատուել նոցանից:  
— Թո՛ղ գնան, ուր որ ուզում են: —

— Բողոքովին գնային, այնպէս չէ՞, — հարցրեց  
Ստեանը: —

— Լաց չէի լինիլ, թէ կուզ բողոքովին չլինէին:  
— Մինչև անգամ եթէ Բուլղարիայից գնային: —

— Բուլղարիայի՞ց, — կրկնեց տիկինը, չհաս-  
կանալով, թէ բանը ինչու մն է: —

— Մեր ամբողջ հայրենիքից, — աւելացրեց  
Ստեանը և սկսեց հասկացնել, թէ ինչ բան է  
Բուլղարիան: Նա որոշեց սահմանները, տուեց  
սարերի, գետերի, քաղաքների, գիւղերի անուն-  
ները. խօսեց, պատմեց, թէ որքան տարածու-  
թեան, ժողովրդի մասին, իսկ երիտասարդ կի-  
նը լսում էր նորան և երբեմն միայն զար-  
մանում: —

— Պա՛... պա՛... —

— Տեսնում էք ուրեմն, — շարունակեց Ստո-  
եանը. — եթէ ժողովուրդը խօսքը մի անի, շատ  
հեշտ կարող է վռնդել տաճիկներին: — Այս բո-  
լորը մտնում էր նորա քարոզութեան ծրագրի

մէջ, որ նա անում էր իւր «առաքելութեան» ժա-  
մանակ և այնպէս ճարպիկ կերպով, որ առանց  
դժուարութեան համոզեց նոցա, թէ ոչ միայն  
անհրաժեշտ է արտաքսել տաճիկներին, այլ և  
լստ չափու կարողութեան պէտք է անել, իրա-  
դործել: — Պէտք է միայն կամենալ, — վերջացրեց  
նա, — եթէ ուզենանք և միասին սկսենք, ամեն  
բան կ'անենք: —

Ստեանի ճառը չափազանց հետաքրքրեց  
Գրոթդանին և Բալկանային: Նորա գրաւուած  
լուծ էին, մի՛նչ դեռ ժամանակը անցնում էր:  
Յանկարծ տանտիկինը յիշեց, որ այսօր իրենց  
հերթն է ղինուորներին կերակրելու: —

— Ա՛խ, արդէն ժամանակ է կերակուր պատ-  
րաստելու, — բացականչեց նա: — Նիզամների հա-  
մար մի դառը մորթիր, — ասաց նա մարդուն, —  
իսկ ես կը գնամ ջուր բերելու: —

— Իսկ ես կընստեմ ձեզ մօտ, — ասաց Ստո-  
եանը. — նոր միայն նոցանից հեռացայ և չէի կա-  
մենալ, որ նոքա իմանան, թէ ես ինչ տեղ եմ: —

— Նիստ վառարանի մօտ, — ասաց Գրոթդանը: —

Մարդը գնաց դառը մորթելու, կինը — ջուր  
բերելու: Սա մի տասը րոպէից վերադարձաւ և  
հազիւ հազ ստքը շեմքը դրեց, ասաց Ստեա-  
նին. — կարծեմ, տաճիկներից մէկը մեր խրճիթը  
պիտի մտնի: Եթէ դայ, գնա այն տեղ. — և նա  
յոյց տուեց ձողի վերայ կախուած շորերը: — Այս  
շորերի և պատի արանքում կարելի է թաք կե-



նալ:—Տանտիկինը այս խօսքերը արտասանեց թէ չէ, շեմքում երևեց Գրօթդանը և ասաց. — մի տաճիկ է դալիս:

Ստօեանը տեղից վեր կացաւ և թազնուեցաւ շորերի մէջ: Դորանից յետոյ իսկոյն ներս մտաւ վերոյիշեալ հիւրը: Դա միլեազիմն էր: Նա գալիս էր ծխամորճը ձեռին բռնած և ուէլօլփէրը գօտիի մէջ խրած: Մի բոպէ շեմքում կանգ առնելով, նա աչքի անց կացրեց սենեակը, ներս մտաւ և նստաւ այն տեղ, ուր դեռ նոր Ստօեանն էր նստած:

— Խօշ գետրդի, — բարևեց տաճիկը:

— Սափառ գելդի, — պատասխանեց Գրօթդանը:

Տաճիկը լցրեց ծխամորճը, կպրեց և մի քիչ լռելուց յետոյ ասաց Գրօթդանին. — գնա՛, դուրսը կանգնիր, որ ոչ ոք ներս չմտնի: Եթէ դու, ջանմ, մէկին ներս թողնես, — աւելացրեց նա սիրալիր ժպտելով, — տեսնո՞ւմ ես... — Նա ցոյց տուեց գօտիի մէջ ցցուած ատրճաւնակը:

Գրօթդանը երեսը շուռ տուեց և դէպի դուռը ուղղեց քայլերը: Բալկանան հետեց նորան:

— Սաս... — կանչեց միլեազիմը: — Դու մնա այս տեղ, իմ տատրակս, — ասաց դահիճը Բալկանային, — կերակուր պատրաստիր:

— Բայց... ես... — սկսեց խօսել շփոթուած կինը. — էֆէնդըմ:



— Ի՞նչ է:

— Ես պիտի գնամ:

— Ինչո՞ւ համար:

— Իմ հերթն է ձեզ համար կերակուր պատրաստելու:

— Հէնց դորա համար էլ մնա... այս տեղ... վառարանի մօտ... ահա այս տեղ, — ասաց նա, մատնացոյց անելով տեղը: — Դու կը պատրաստես, իսկ ես կընայեմ: — Նա յետ նայեց, տեսաւ, որ Գրօթդանը հեռացել է: Միլեազիմը սկսեց ծխել: Բալկանան կանգնած էր խրճիթի մէջտեղում և աչքի տակով նայում էր շորերի վերայ, ուր Ստօեանն էր թազնուել:

— Ի՞նչ ես կանգնել, — փաղաքշարար հարցրեց միլեազիմը: — Դու քո բանդ տես, իսկ ես իմը:

Երիտասարդ կինը հառաչեց և ապա սիրտ առնելով սկսեց.

— Թո՛ղ, էֆէնդըմ, քո վատ դիտաւորութիւնները:

— Դիտե՞ս, աղաւնեակս, իմ դիտաւորութիւնները:

— Ինքդ դիտես, էֆէնդըմ:

— Իմացիր, սիրուն կին, որ ես մտադիր եմ գնտակ արձակել մարդուդ ճակատին, եթէ ընդդիմանաս իմ կամքին:

— Տէ՛ր իմ Աստուած, — ոգւոց հանեց երիտասարդ կինը:

— Տեսնո՞ւմ ես... Ես մտադիր չեմ հեռանալ այս տեղից, մինչև որ քեզ չգրկեմ: Լաւ է, մօտեցիր վառարանին և մի՛ ընդդիմանար: Հասկանո՞ւմ ես:

Միլեազիմի խօսքերում նշմարելի էր այն անընկճելի կամքը, որ տաճիկները գիտեն մեզմ կերպով արտայայտել: Բալկանան շատ լաւ գիտէր, որ ամեն մի ընդդիմադրութիւն ապարդիւն կըլինի: Ինչու համար որ եկել էր միլեազիմը, շատ սուփորական պահանջ էր համարվում, և այդպիսի դիպուածներում միակ միջոցն էր առաջուց փախչել ազատուելու համար, որովհետև մարդու գնացած կանայք զուրկ էին որ և է պաշտպանութիւնից ընդդէմ տաճկաց բռնաբարութեանց: Բալկանան առաջուց չէր թաղնուել, ուստի պիտի հպատակուէր: Բացի դորանից, տաճկական և առ հասարակ արևելեան սովորութիւնները չեն թոյլատրում որ և է ընդդիմադրութիւն այն կնկայ կողմից, որ այսպէս կամ այնպէս ընկել է այր մարդու ձեռքը: Այսպէս, Աստուածաշնչի կանայքը չեն ընդդիմանում մարդու կամքին: Պատուիրանքները այր մարդուն են արդելում «ցանկալ» կնոջ: Դորա համար էլ արևելքում փակում են կանանց: Զրկուած լինելով որ և է նախաձեռնութիւնից, այս էակները ինքեանք չեն կարողանում ընդդիմադրել մարդկանց «ցանկութեան», որից կարող են պաշտպանել նոցա միակ քարէ պատերը, ամրոց-

կէ

ները, արգելանոցները, բայց ոչ թէ նոցա լայն ու կոծր: Ահա թէ ինչու Բալկանան, որին թողեց ամուսինը, ոչ մի միջոց չէր գտնում ընդդիմանալու միլեազիմի «ցանկութեան»: Նորան արդելում էր միայն Ստոեանի ներկայութիւնը: Բայց ի՞նչ անէր նա: Մատնել Ստոեանին— նա վախնում էր: Այդ պատճառով նա միայն հառաչեց և մօտեցաւ վառարանին: Երբ երիտասարդ կինը մօտեցաւ վառարանին, տաճիկը շփեց նորա ոտները և համբուրեց: Բալկանան իւր բանն էր անում, առանց ուշադրութիւն դարձնելու նորա վերայ: Միլեազիմը կրկնում էր, շարունակում և աւելացնում իւր փաղաքջանքը... Նստում էր, ծխում և նորից ապա սկսում էր փաղաքջել գեղլուկ գեղեցկուհուն: Վերջապէս գրկեց իրանը, մօտ քաշեց, ծխամորձը մի կողմը գրեց և... յանկարծ տաճկին երկու ուժեղ ձեռք բռնեց, և նա կնոջ հետ միասին յատակ գլորուեց: Այս բոլորը մի ակնթարթում կատարուեց: Բալկանան վեր թռաւ, աչքերը ձեռներով ծածկեց և խրճիթից դուրս վազեց: Միլեազիմը թաւալում էր յատակի վերայ, իսկ Ստոեանը, իւր ծնկներով նորա կուրծքը ճնշելով, խեղդում էր նորան, որքան ուժը պատում էր:

Այդ միջոցին Գրօժդանը հանգիստ կերպով մաշկում էր նոր մորթած գառը, որ կախուած էր սիւնի մէջ մտքրած փայտէ գամից: Տեսնելով,

որ կինը՝ երեսը ձեռներով ծածկած, դուրս վազեց խրճիթից, նա կանչեց.

— Բայկանա:

— Ա՛խ—բացականչեց գեղջկուհին, ձեռները վերցնելով երեսից:

— Ի՞նչ է,— հանգիստ հարցրեց ամուսինը:

— Սոսեանը...

— Ի՞նչ է Սոսեանը...

— Չգիտեմ... Ա՛խ:

— Տաճիկը տեսա՞ւ Սոսեանին,— վախեցած հարցրեց Գրոժդանը:

— Ախ... չէ'...

— Դէ որ չտեսաւ, փառք Ասատուծոյ,— նկատեց հանգստացած ամուսինը:

— Սոսեանը տեսաւ տաճկին:

— Չարմանալի բան չկայ... Չէ որ նա կանգնած էր շորերի յետև: Ի՞նչ արած. չէր կարելի նորան դուրս հանել:

— Նա ինքը դուրս եկաւ:

— Ի՞նքը դուրս եկաւ,— հարցրեց անհանգիստ կերպով ամուսինը:

— Հէնց որ տաճիկը ինձ գրկեց, նա դուրս թռաւ...

— Եւ արգելե՞ց տաճկին,— դուչեց գիւղացին, ձեռքից բաց թողնելով գառը:

— Արգելեց:

— Վա՛յ... վա՛յ... մեղ... դէ... յետո՛յ...

— Չգիտեմ, ես դուրս վազեցի, իսկ նո-

քա այն տեղ են... — Նա մատնացոյց արաւ դուռը:

— Այն տե՛ղ,— կրկնեց Գրոժդանը և մի քանի քայլ արաւ դէպի դուռը: — Այն տեղ ձայն չկայ... ծպտուն չկայ... — Նա էլի մի քանի քայլ արաւ և նայեց կնոջ վերայ, որ շուարած և սառած կանգնած էր սեան մօտ: Նորա հայեացքը տարակուսանք և երկիւղ էր արտայայտում: — Ինչո՞ւ համար այն տեղ ձայն չկայ... — տարակուսում էր Գրոժդանը:

Խաղաղութեան պարզ ու բնական պատճառը այն էր, որ քանի ամուսինները խօսում էին, Սոսեանը խեղդեց տաճկին: Ի դուր էր միլեադիւմը պտոյաներ անում իրեն ճնշող ճնկների տակ: Սոսեանը առանց մի խօսք ասելու, առիւծի կատաղութեամբ սեղմում էր նորա կոկորդը, և միայն այն ժամանակ ձեռքը բարձրացրեց, երբ զոհն այլ ևս չէր շարժվում:

— Ա՛ա... — բացականչեց նա, գիակի մօտ կանգնելով. — երեկ ես ստիպուած էի արջի պէս պար գալ քո առջև. իսկ այսօր դու կամեցար մեր կին-մարդը անարգել... Ա՛, շա՛ն որդի...

Գրոժդանը լսում էր այս խօսքերի արձագանքը և կարծում, թէ սենեակում խօսում են: Նա մի քիչ հանգստացաւ և մօտեցաւ դռան, կարծես թէ ուզում էր լսել: Դուռը բաց էր: Թէկն ընկնելով դռան շրջանակին, նա ճեղքից ներս նայեց և տեսաւ, որ միլեադիւմը պառկած

է, իսկ Ստօեանը՝ կողքին կանգնած: Գրօժդանը զարմացաւ: Նայեց կնոջը, որ կանգնած էր մի և նոյն դրութեան մէջ, և ուսերը վեր քաշեց: Գրօժդանը չէր իմանում, թէ ինչ անէր: Ստօեանը կանչեց նորան:

— Գրօժդան, տեսնո՞ւմ ես:

Գիւղացին բան չէր հասկանում: Նա կանգնած էր դռան մէջ և չէր վստահանում չեմքը անցնել:

— Ես խեղդեցի տաճկին:

— Հ՞ր... — սարսափեց գիւղացին:

— Այո՛, ես խեղդեցի նորան... ես չթողի, որ նա անարգէ քո կնոջը:

Գրօժդանը սառած մնաց:

— Մարդ տեսա՞ւ, որ նա քո խրճիթն է մտնում:

Այս հարցին, որ, ակներև է, առաջարկուած էր նորա համար, որպէս զի միջոցներ գտնէին եղելութեան պատասխանատուութիւնը հեռացնելու, գիւղացին ոչինչ չպատասխանեց. նա միայն ասաց կնոջը.

— Նա սպանեց տաճկին:

Բալկանան ճիչ արձակեց, յուսահատ ձայնով աղաղակեց և ձեռներով երեսը ծեծելով՝ վազեց դէպի գիւղը:

— Վա՛յ մեզ, — աղաղակեց Գրօժդանը և նոյնպէս վազեց դէպի գիւղը:

Ստօեանը դուրս վազեց դէպի փողոց և մի

քանի անգամ գոչեց. — կանգնի՛ր, — ոչ Գրօժդանըն էր լսում նորան, ոչ էլ Բալկանան: Նա ձեռքը թօթափեց, յետ դարձաւ, նայեց խրճիթի չորս կողմը, յետոյ հայեացքը ուղղեց դէպի մեխանէն: Այդ միջոցին նորա դէմքն ու կերպարանքը վհատութիւն էին արտայայտում: Վերջ ի վերջոյ նա գլխարկը դրաւ ու դուրս եկաւ բակը: Այստեղ նա նայեց շուրջը, արագ դնաց դէպի դաշտը և շուտով անհետացաւ բլրակի ետևը: Մինչ այդ Գրօժդանի և Բալկանայի դռուում գոչիւններն ահագին դղրդոց հանեցին գիւղում: Տներին դուրս էին դալիս կանայք և իսկոյն թաք կենում, իսկ տղամարդիկ շուարած նայում էին իրենց շուրջը և կրկին բան չէին կարողանում հասկանալ: Հինդերորդ թէ վեցերորդ խրճիթի մօտ Բալկանան կանգնեց, և երբ նորան շրջապատեցին, ասաց.

— Վա՛յ մեզ, Ստօեանը սպանեց տաճկին:

Վազեց, եկաւ Գրօժդանը և կրկնեց. — Վա՛յ մեզ, Ստօեանը սպանեց տաճկին:

Ամենքը սարսափեցին, երբ լսեցին այս լուրը: Սկսեցին մօտենալ և ուրիշ հարևանները. եկաւ չորբաջին:

— Ի՞նչ... ինչպէ՞ս... ինչտե՞ղ... — հարցրեց նա:

Գրօժդանը պատմեց, թէ ինչպէս եկաւ միլեազիմը, ինչպէս հրամայեց դուրս գնալ, ինչպէս մնաց կնոջ հետ: Եւ նա այս բոլորը պատ-

մում էր հանգիստ, կարծես, թէ այդպէս էլ պիտի լինէր: Միակ յանցաւորը Ստեանն էր:

—Ո՞ր Ստեաննը,—հարցրեց մէկը:

—Մեխանէշի Պէտոյի որդին:

—Ի՞նչ տեղից նա դուրս եկաւ:

—Չգիտեմ... Մեզ մօտ հիւր եկաւ. նստաւ վառարանի մօտ, իսկ երբ տաճիկը եկաւ, նա մտաւ շորերի մէջ:

Այժմ անհնար էր այլ ևս ծածկել եղելութիւնը: Չորբաջին ինքն էլ չգիտէր, ինչ անէր: Բայց հօ պէտք էր մի բան վճռել: Չորբաջին վճռեց կապել Գրօթդանին և ուղարկել Սիստօվոյի բանար. բայց նախապէս պէտք էր գնալ մեխանէն Ստեանին ձերբակալելու: Չորբաջին, նորա կանչած մարդիկը և կաշկանդուած Գրօթդանը դիմեցին դէպի մեխանէն: Հասնելով Գրօթդանի խրճիթը, չորբաջին և մի քանի գիւղացի ներս նայեցին: Յատակի վերայ ընկած էր միլեազիմի դիակը, բերանը բաց, աչքերը նայնպէս, իսկ լեզուն դուրս էր ցցուած: Գիւղացիները յետ քաշուեցան: Առաջ գնացին: Մեխանէի առաջ պահապան էր կանգնած, իսկ դռան շեմքում—Պէտօն:

—Այդ ի՞նչ է նշանակում,—հարցրեց Պէտօն, դառնալով չորբաջիին և ցոյց տալով կաշկանդուած Գրօթդանի վերայ:

—Ո՞ւր է Ստեաննը,—հարցրեց չորբաջին:

—Ի՞նչ Ստեանն: Եթէ իմ որդուս էք կամենում, նա այս տեղ չէ եղել: Ես նորան չեմ տեսել:—Պէտօն պատասխանեց բարձր ձայնով, այնպէս որ նորա խօսքերը լսուեցին և կանանց սենեակում:

—Ինչո՞ւ էք կամենում Ստեանին,—նորից հարցրեց մեխանէշին:

Չորբաջին պատմեց եղելութիւնը:

—Ստեաննը այստեղ չէ եղել. բոլոր նիզամները կարող են երաշխաւոր լինել ասածիս, իսկ նոքա երեկուանից այս տեղ են: Եթէ Ստեանն եղել է շրջակայքում, ես դորա համար պատասխանատու չեմ, բայց ինձ մօտ չէ եկել:

Չինուորներին յայտնած այս լուրը առանձին տպաւորութիւն չգործեց: Տասնապետը գնաց Գրօթդանի խրճիթը, վաւերացրեց սպանութեան դէպքը և յետ եկաւ: Նոյնը կրկնեցին և մի քանի զինուոր: Որովհետև նիզամները հաստատեցին Պէտոյի խօսքերը, ուստի չորբաջին ստիպուած էր միայն յանցաւորի հետ գնալ Սիստօվօ:

XI.

Նախընթաց գլխում նկարագրած եղելութիւններից մի քանի օր յետոյ Ռուչչուկի վալին իրեն յատուկ հպարտութեամբ և հանդարտութեամբ ընդունեց իւր այցելուներին: Նախ և

առաջ հրաւիրուած էր այն «բարեկամ՝ տէրութեան» հիւպատոսը, որ մանաւանդ հետաքրքրւում էր Բուլղարիայի շարժումներով: Փաշան շատ սրտաբաց ընդունեց նորան: Սովորական ողջոյններից յետոյ խօսակցութիւն սկսուեց մի և նոյն նիւթի մասին, որի առթիւ խօսել էր և հիւպատոսը մի քանի շաբաթ առաջ, իսկ այժմ նա չսկսեց, այլ փաշան.

— Ս, յժմ մենք բաւականաչափ նիւթ ունինք դատի համար, — ասաց վալին:

— Յանձնաժողովի անդամներից քանի՞ն են, — հարցրեց հիւպատոսը:

— Ոչ մէկը:

— Այդ ի՞նչ նիւթ է որ:

— Նա բաղկացած է նմաններից, — պատասխանեց փաշան: — Մենք այնպիսի մարդիկ ունինք, որոնց կարելի է կախել յանձնաժողովի անդամների փոխարէն, եթէ քննութիւնից մենք չկարողանանք իմանալ աւելի խոշոր գործիչներին... Մենք, տեսնում էք, քաղաքակրթւում ենք և սկսում ենք գործադրել արդարադատութեան մէջ հաւանականութեան օրէնքը:

— Բայց երկիւղալի չէ՞ գործադրել արդարադատութեան մէջ այդ օրէնքը:

— Եւրոպական ձևով ամեն մի դատավճիռ, որ ունի իւր մօտիւրը, կը հեռացնէ ամեն մի վտանգ:

Հիւպատոսը թողեց այս հարցը և դարձաւ ուրիշին: — Քանի՞ մարդ է ձերբակալուած:

— Երեք:

— Քիչ է:

Փաշան ծափ տուեց և հարցրեց ներս մտնող օրապահ օգնականին. — Արիստարխի-բէյը արդէն եկե՞լ է դատարան:

— Եկել է, փաշա էֆէնդըմ:

— Կանչեցէք նորան այս տեղ:

Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ Արիստարխի-բէյը, բարևեց և խոնարհ կանգնեց, յարգանքով սպասելով հրամանը լսելու:

— Չէ՞ կարելի երեքից աւելի ձերբակալել, — հարցրեց փաշան:

— Կարելի է, — եղաւ պատասխանը:

— Այնպիսիներին, որոնք կարողանային աչքի ընկնել գործի ժամանակ:

— Ամեն մի բուլղարացի կարող կըլինի աչքի ընկնել գործի ժամանակ:

— Ի հարկէ, բայց պէտք են ճշմարտութեան մօտ ապացոյցներ:

— Ապացոյցներ շատ կան:

— Ո՞ւմ դէմ:

Արիստարխի-բէյը տուեց մի քանի մարդու անուն, ի միջի այլոց և հաջի Խրիստոյինը:

— Հա՛... — դարձաւ փաշան:

— Նորա տան վերայ հսկե՞լ էք...

— Շատ լաւ... — և դառնալով հիւպատոսին, աւելացրեց. խոշոր ձուկ է:

— Ես նորան ճանաչում եմ, — պատասխանեց

հիւպատոսը:— Հազիւ թէ նա մասնակցութիւն ունենայ որ և է ապօրինի գործի:

— Բայց կարող է գործի ժամանակ աչքի ընկել, որ իւր օգուտը կ'ունենայ:

Ի՞նչ է եղել: Առանց դժուարութեան կարելի է իմանալ, որ գործի գլխաւոր կէտը միւլեպիմի սպանութիւնը պիտի լինի:

Գրօթգանից հեռանալուց յետոյ Ստօեանի դրութիւնն աննախանձելի էր: Տուն վերադառնալու մասին բոլորովին պէտք էլ չէր մտածել, իսկ գիւղում մնալը— նոյնպէս վտանգաւոր էր: Նա սկսեց անբաւականութիւն յայտնել ինքն իրեն, որ այդպէս տաքացաւ. նա հօ միայն պաշտպանեց այն մարդկանց, որոնք չէին զգում, թէ ինչ անարգանքի են ենթարկւում: Արժէ՞ր, որ նա իւր անձը վտանգի ենթարկէր այդպիսի մարդոց համար... Նա արհամարհանք զգաց դէպի իւր երկրացիները: Նա զայրացաւ նոցա վերայ: Սակայն մտածեց և, հանգստանալով, ուրիշ կերպ սկսեց վերաբերուել եղբւրթեանը:

«Ինչ՞ով են նոքա մեղաւոր», — մտածեց Ստօեանը:— Հինգ դարու ստրկութիւնը չէր կարող խոր հետքեր չթողնել նոցա վերայ, մանաւանդ որ այդ հինգ դարու ընթացքում ժողովուրդը լիովին գտնվում էր մտաւոր անգործութեան մէջ: Նա, այդ ժողովուրդը, լռիկ-մնջիկ հպատակուել է տաճիկներին և չէ մտածել իւր վերայ. այդ պատճառով էլ տաճիկները ինչ որ

կամեցել են, այն էլ արել են բուլղարների հետ, և սոքա ընտելացել են ամեն բանի, որպէս անհրաժեշտ ու օրինաւոր բանի: Ի՞նչով են նոքա մեղաւոր»:

Ստօեանը ինքն իրեն մի հարց տուեց. ինչո՞ւ ինքը այդպէս զայրացաւ, վրդովուեց միւլեպիմի վարմունքից: Պատասխանը ինքն իրեն առաջ եկաւ. պատուաճանաչութիւնը նա համարեց որպէս ուսման և լուսաւորութեան հետեւանք:

Սակայն այս բոլոր խորհրդածութիւնները բոլորովին չթեթեացրին նորա նեղ դրութիւնը: Նա գտնվում էր դաշտերի, մարգագետինների, անտառների մէջ, որոնք ծածկում էին Ռուչչուկի շրջակայքի բլուրները, ուր բուլղարների, չերքէսների ու տաճիկների դիւղերն ու աւաններն են: Նա չէր հասկանում, որ ամենուրեք իրեն պիտի վնասեն: Ստօեանը հաշուեց, որ քսան և չորս ժամից առաջ լուրը չի հասնիլ ընդհանրութեան, որ իրեն կարողանան կալանաւորել, հետեւաբար նա մի օր ժամանակ ունէր, և եթէ այդ ժամանակամիջոցում նա կարողանայ անցնել Դանուբի միւս կողմը, այն ժամանակ վտանգից խոյս տըռած կըլինի: Ետտ հեշտ կերպով կարելի էր այդ իրագործել, եթէ միայն կարողանար վերադառնալ հայրենական մեխանէն, որովհետև Պէտօն շատ ձկնորսներ էր ճանաչում և միշտ յարաբերութիւն ունէր նոցա հետ: Սակայն մեխանէ վերադառնալու մասին մտածելն աւելորդ էր. վը-

տանգի կենթարկէր ոչ միայն իւր, այլ և հօր կեանքը: 1867 և 1868 թ. դէպքերի ժամանակ տաճկական կառավարութիւնը կախել և արտօրել էր տալիս ոչ միայն նոցա, որոնք անմիջապէս մասնակցում էին ապստամբութեան, այլ և նոցա, որոնք տեղ ու կերակուր էին տալիս: Մեխանէում ուրիշ մարդկանցից ոչ ոք չտեսաւ Ստօեանին, և այս հանգամանքը արդարացնում էր նորա հօրը, որի հասկացողութեան վերայ որդին միշտ մտաւհանում էր: Դորա համար էլ պէտք չէր փորձել: Այս խորհրդածութիւններից յետոյ մեր յանցաւորը իւր քայլերը ուղղեց դէպի Դանուբի ափը, մտաւ եղեգների մէջ և ըստ պատեց մի բարեբաստիկ դէպքի: Սակայն դէպք չէր ներկայանում: Ստօեանը տեսնում էր, ինչպէս գետի վրայից անցնում էին կամ շոգենաւեր, կամ առադաստաւոր նաւեր, կամ նաւակներ, կամ ձկնորսական մակոյկներ, սակայն դուքաբոյրն էլ շատ հեռու էին: Պէտք էր մի քանի օր սպասել, որ մի յարմար դէպք ներկայանար: Թերևս Ստօեանը սպասէր, բայց նա առաջին իսկ օրը երեկոյեան նկատեց, որ սահմանի վերայ մեծ շարժումն կայ: Հետեւաբար ոչ մի կասկածանք չէր կարող լինել, որ սկսել էին նորան օրոնել: Հասաւ գիշերը, որ և հաստատեց նորա երկիւղը. սահմանի պահակների թիւը կրկնապատկուած էր: Նա դուրս եկաւ եղեգների միջից և քայլերը ուղղեց դէպի ճանապարհը և չհասած

ստիպուեցաւ պառկել առաջին պատահած փոսում, որովհետև ճանապարհով չերքէս պահապաններ էին անցնում: Գուցէ դուքա չէին էլ որոնում նորան, բայց «վախկոտ գոյը իւր ստուերից կրվախենայ»: Երբ չերքէսները անցան, նա էլ անցաւ ճանապարհի միւս կողմը, հասաւ անտառը և, այս տեղ յարմար տեղ գտնելուց յետոյ, պառկեց քնելու:

«La nuit porte conseil» — միթարեց նա իրեն: Սակայն շուտով չքնեց. նա երկար մտածեց և վերջ ի վերջոյ այն եղբակցութեան հասաւ, որ ամենադիւրինն է խառնուել մարդկանց մէջ: Ամբօխի մէջ անհատը կորչում է, — բայց ոչ ամեն մի ամբօխի մէջ: Պէտք է որ և անհատը, և ամբօխը միատեսակ լինին: Գիւղում Ստօեանի անձնաւորութիւնն այնքան ժամանակ էր միատեսակ, քանի որ նա գիւղացու հագուստով էր շրջում:

— Ինչո՞ւ ես հանեցի այդ շորերը, — ցաւելով յիշում էր նա:

Սակայն բան չէր կարելի անել: Մենք տեսանք, որ նա առաւօտեան, ոչ մի վտանգ չնախագուշակելով, վճռեց վերադառնալ Ռուչչուկ և այն տեղ անհետանալ մարդկանց մէջ, իսկ յետոյ՝ երբ դէպք կը պատահի — գնալ ժուրժեվօ: Ի նկատ առնելով իւր հանգամանքը, այս ծրագիրը նա ամենայարմարն համարեց: Ամենից դժուարը Ռուչչուկ քնկնելն էր, — մի քաղաք, որ



խրամներով ու մարտկոցներով է պատած, ուր թնդանօթներ էին դրած և պահապաններ կանգնած, որոնք հսկում էին բոլոր ելքն ու մուտքը: Բայց, մտածեց նա, այս բոլոր դժուարութիւններն անյալթելի չեն: Այսպէս մտածելով, Ստեանը ննջեց: Մի տարօրինակ ձայն լսուեց անտառում, որ և արթնացրեց նորան: Քամի չէ՞ հօ: Ձէ, քամի չէ:

Նա սկսեց ականջ դնել և այժմ որոշում էր. ճիւղեր էին կոտրատվում, քայլերի ձայներ էին լսվում, խօսակցութիւն և ժամանակ առ ժամանակ մի բարձր ձայն, որ հրաման էր յիշեցնում:

— Սա ի՞նչ բան է:

Նա ցատկեց, էլի ականջ դրեց և լիովին համոզուեցաւ, որ այս բոլոր աղմուկը անասու լցուած մարդիկ են բարձրացնում: Ով որ իմանում է, ինչպէս և Ստեանը, Փիլիպպոս Տօբիի, Պանայօտ Խիտովի, Ստեփան Կարաջիի և հաջի Գիմիարիի պատմութիւնը, կարող է հեշտութեամբ հասկանալ, որ դժբա կարանաւորելու համար են շրջում:

Ստեանը սարսուռ զգաց: Նորա սիրտը ճրմլուեց. սակայն շուտով այս առաջին զգացումը տեղի տուեց իմացականութեան, թէ ինքը միայն իւր կեանքը պիտի զոհէ, որ առանց այն էլ մազից է կախուած, և նա յանկարծ ուժ ու քաջութիւն զգաց: Նա նայեց ուէվօլվէրին, մի փոքր մտածեց, յիշեց իրեն ծանօթ տեղերն և քայլե-

բն ուղղեց դէպի խրամի այն կողմը, ուր դէպի Լօմ հոսող գետակն էր: Ստեանը շատ զգոյշ էր առաջ դնում. նայում էր չորս կողմը, իսկ գրկխաւորապէս աշխատում էր շէղուել իւր ուղղութիւնից: Շուտով համոզուեցաւ, որ իրեն չըրջապատել են: Այսպիսի գիպուածներում, որքան մեծ է շղթան, այնքան լայն են նորա օղակները, հետևաբար աւելի դիւրին է փախուստ տալը: Նա խկոյն հասկացաւ, որ ըստ անգամ պէտք չէ կորցնել և արագ-արագ առաջ գնաց: Մի քանի տասնեակ քայլ անելուց յետոյ՝ պատահեց մի բուլղար գիւղացու, որ տեսնելով Ստեանին խկոյն փայտը բարձրացրեց և կամեցաւ գոչել, բայց հէնց որ Ստեանը ուէվօլվէրը ցոյց տուեց, գիւղացին փայտը ցած իջեցրեց և բերանը փակեց:

— Այս ի՞նչ բան է, — կամացուկ հարցրեց Ստեանը, ուէվօլվէրի բերանը գիւղացուն ուղղելով:

— Մեզ ուղարկել են Ստեան կրիվենովին որոնելու, — պատասխանեց գիւղացին:

— Գնա՛, Տէր ընդ քեզ, — ասաց Ստեանը, անցնելով գիւղացու մօտից:

— Տէր ընդ քեզ, — կամաց պատասխանեց գիւղացին:

Դորանից հեռանալով, Ստեանը շապով գնաց դէպի խրամը: Նա գնում էր կածանով և յանկարծ պատահեց Սիստովոյի զափթիկների ազային:

— Դո՛ւր (կանգնի՛ր), — գոչեց ազան, ձախ ձեռքը մեկնելով Ստեփանի կրծքին, իսկ աջը տանելով դէպի ատրճանակը:

Լսուեց ատրճանակի ձայն... Ազան դռուաց, ձեռքերը պարզեց, կարծես կամենալով մի բանից բռնուել և տապալուեց մէջքի վերայ:

Ստեփանը սկսեց վազել: Նորա դրուժիւնը աւելի ևս վատացաւ, երբ երկրորդ սպանութիւնն էլ գործեց: Այժմ Ստեփանը փախչում էր, որքան ոյժը պատում էր, և յանկարծ մտածեց, որ իւր յետեից գալիս են, փնտուում են, և այժմ աւելի շուտ կըբռնեն, քանի որ յայտնի է, թէ որ կողմն է ուղղել իւր քայլերը: Հէնց որ այս միտքը ծագեց նորա գլխում, իսկոյն շուտ տուեց դէպի մի այլ կողմ, մտաւ մացառների մէջ և կամենում էր նոցա հովանաւորութեան ներքոյ այնպէս անցնել անտառը, որպէս զի գնար հակառակ կողմը, ուր հաւանորէն նոքա պիտի չըգնային: Այսպիսով նա մտենում էր կրիվենային:

Մի քանի րոպէից նա սկսեց դանդաղ քայլերով գնալ, բայց կրկին առաջ էր գնում. ժամանակ առ ժամանակ յետ էր նայում, ականջ էր դնում, կանգ էր առնում և նորից առաջ գընում: Վերջապէս, երբ բոլորովին համոզուեցաւ, որ հետևողները դէպի հակառակ կողմը գնացին, նա մի քիչ հանդստութիւն առաւ, նորից սկսեց իւր ճանապարհը, բայց այս անգամ արդէն բոլորովին դանդաղ քայլերով: Մտենալով գիւղին,

նա հեռուից պատեց նորա շուրջը, պատահեց մի ստուերախիտ և սաղարթաշատ սօսի, բարձրացաւ նորա վերայ և թաք կացաւ վերևում, տերևախիտ ճիւղերի մէջ: Այժմ նորա առաջ սփռուվում էր մի ընդարձակ տեսարան: Նա տեսնում էր, թէ ինչպէս Դանուբը փայլում է, իսկ նորա միւս կողմում տարածվում է կանաչազարդ գետինը, տեսնում էր դաշտեր, բլուրներ, անտառներ և սոցանից բարձր Սիստովոյի մինարէթները. տեսնում էր այս տեղ ու այն տեղ փռուած գիւղերը, Եանտրայի ափը և վերջապէս հեռում կրիվենան, ուր նա տեսնում էր և հօր մեխանէն:

«Տեսնես, ի՞նչ եղաւ հօրս, մօրս, տատիս և քրոջս հետ», — մտածեց նա:

Այս հարցը տանջում էր նորան: Շատ հաւանական էր, որ հայրը կալանաւորուած էր. նոյնպէս հաւանական էր, որ Ստեփանի յետեից ընկած բաշիբուզուկները, չերքէսները, կատաղած լինելով իրենց անյաջողութիւնից, կը յարձակուեն մօրը, քրոջ և տատի վերայ և պատառ պատառ կ'անեն նոցա: Նա մանաւանդ նա անհանգստանում էր, մտածելով իւր գեղեցիկ քրոջ մասին, որ մի համեղ պատառ էր մուսուլմանների համար: Լարուած ուշադրութիւնով նա նայում էր մեխանէի կողմը, յուսալով, որ կարող կըլինի մի բան տեսնել, որի հիման վերայ զանազան ենթադրութիւններ կը կարողանայ նաել. սակայն ոչինչ չէր կարողանում նշմարել: Մեխա-

նէն իւր տեղումն էր, բազում հաւեր էին ման  
 դալիս. մեխանէի մօտից գնացող-եկողներ էին  
 անց ու դարձ անում: Ստօեանը նայում էր հօր  
 վերայ յետին կողմից, ուստի չէր տեսնում, կանգ-  
 նա՞ծ է պահապան, թէ ոչ: Եթէ իմանար, թէ  
 նիղամները գնացել են, այն ժամանակ կարող էր  
 գիշերով մօտենալ մեխանէին, տեղեկանալ, որ  
 ինչ է եղել, ինչ չէ եղել: Ահա թէ ինչու մեր  
 յանցաւորը նախ և առաջ կամենում էր իմանալ,  
 պահապան թեղե՞լ են, թէ ոչ: Նա տերևները  
 այս ու այն կողմն տարաւ, իւր տեսողութիւնը  
 լարել և վերջապէս նիղակի փայլ նկատեց: Այդ-  
 նշանակում էր, թէ նիղամները մնացել են: Կարճ  
 միջոցից նա նկատեց մի կանացի կերպարանք, որ  
 դուրս էր գալիս յետևի դռնից: «Տա՛տա», շշըն-  
 ջեց նա: Այսպէս Ստօեանը իմացաւ, որ պահա-  
 պանը կանգնած է և տատն էլ տանն է: Սորա  
 այնպիսի փաստեր էին, որոնց հիման վերայ կա-  
 րելի էր ենթադրութիւններ անել. եթէ տան-  
 տէրը չկայ էլ, նորան կարող է փոխարինել պա-  
 ռաւը, հետևաբար և ունեցած-չունեցածը տեղն  
 է, չեն կողոպտել: Բայց ի՞նչ է պատահել ծը-  
 նողներին:

Կարելի էր ենթադրել, որ հօրը ձերբակա-  
 լել էին, բայց կարող էին և չձերբակալել. յա-  
 մենայն գէպս կարելի էր ասել, որ անսպասելի  
 կերպով ասպատակ չեն գործել, հետևաբար և  
 ժամանակ կար մօր ու քրոջ մասին մտածելու:

Շուտով Ստօեանը նկատեց, որ մեխանէն առա-  
 ջուայ պէս բան է անում: Նա մի քանի ձիաւոր  
 չերքէսներ տեսաւ, որոնք կանգնած էին մեխա-  
 նէի մօտ, ցած իջան, առ ժամանակ մնացին մե-  
 խանէում և կրկին շարունակեցին իրենց ճանա-  
 պարհը: Բացի դորանից նա տեսաւ, ինչպէս մի  
 քանի չերքէս թափառում, շրջում էին դաշտե-  
 րում:

«Նորա ինձ են որոնում», մտածեց Ստօեա-  
 նը:

Այս բոլոր գիտողութիւնները սակաւ ինչ  
 հանգստացրին նորան ընտանիքի վերաբերմամբ,  
 և նա սկսեց աւելի ազատ կերպով մտածել իւր  
 դրութեան մասին, որ աւելի ծանրանում էր և  
 բացի դորանից երկրորդ օրն էր արդէն, որ բան  
 չէր կերել: Սով զգալը շատ անախորժ էր թը-  
 ւում նորան: Մեխանէում, ի հարկէ, նորան կը-  
 կերակրէին, բայց այնտեղ գնալն էլ վտանգա-  
 ւոր էր:

Նա նայեց դէպի գիւղը: Ըստ երևութին,  
 Կրիվենայում ոչինչ արտասովոր բան չէր կա-  
 տարվում: Գիւղացիները գնում գալիս էին, ասես  
 թէ ոչ մի բան չէր եղել: Ստօեանը ճանաչում  
 էր իւրաքանչիւրին... Նա վճռեց սպասել մինչև  
 երեկոյ և ապա գնալ ուղղակի Չորբաջիի մօտ:

Ասածն արաւ: Հէնց որ մթնեց, նա ցած  
 իջաւ և գնաց դէպի գիւղը: Չորբաջիի ընտանի-  
 քը սաստիկ վախեցաւ, երբ տեսաւ նորան. ե-

բախաներն ու երիտասարդները փախան. խրճիթում մնաց միայն պառաւը, որ Բուլղարիայում միշտ տան ներկայացուցիչն է լինում, երբ մի աղմուկ, խռովութիւն է պատահում: Ստօեանը իւր տուած առաջին հարցերին պատասխան ստացաւ՝ «չգիտեմ... չգիտեմ...»

Երիտասարդը հարցրեց՝ ո՞ւր է չորբաջին, ո՞ւր է մեխանէջին, ի՞նչ կայ ինչ չկայ, գիւղում:  
— Չգիտեմ:

Ստօեանը հանգստացրեց, մեղմացրեց ձայնը և հաղիւ հազ կարողացաւ մի քանի բան իմանալ:

— Գու մի՛ վախենալ ինձանից, — ասաց երիտասարդը. — Ես ինչպէս եկայ, այնպէս էլ կը գնամ:

— Գնա՛, խնդրեմ, — պատասխանեց պառաւը:

— Միայն ասա՛, ի՞նչ տեղ է չորբաջին:

— Սխտովոյում:

— Իսկ իմ հա՞յրը:

— Հա՞յրդ, — հարցրեց պառաւը:

— Այո՛, հայրս, մեխանէջի Պէտօն:

— Սխտովոյումն է:

— Իսկ մայրս ու քոյրս:

— Սխտովոյում:

— Ի՞նչ է, նորա բանտօ՞ւմն են:

— Սխտովոյում:

Ստօեանը տեսաւ, որ պառաւը կպել է այս խօսքից և չէ կամենում բաց թողնել Փորձելու համար նա հարցրեց.

— Ի՞նչ տեղ է ձեր հացը:

— Սխտովոյում, — պատասխանեց պառաւը: Այն ժամանակ Ստօեանը բարկացկոտ ձայնով գոչեց.

— Էս բոպէիս հաց և ուտելու բան տուր ինձ:

Պառաւը տուեց նորան բաւական մեծ կըտոր հաց, մի քանի գլուխ սոխ, պանիր և էլի մի քանի բան: Ստօեանը այս բոլորը փաթածեց թաշկինակի մէջ և գնաց: Գիւղում բան չունէր: Նա անցաւ Գրօժդանի խրճիթի մօտից, որ դատարկ էր: Վերստին նա դաշտում ապաստան պիտի որոնէր և գիշերէր:

Անցեալ գիշերուայ անցքերը ստիպում էին զգոյշ լինել, իսկ լարուած ուշադրութիւնը գըրգռում էր նորան: Նա ողջ գիշերը գնաց և վերջապէս հասաւ բերդի մարտկոցին: Դեռ չէր լուսացել. արևելքում երկինքը դեռ նոր էր սկսում շառագունել: Ստօեանը սկսեց գիտել մարտկոցը: Առաջ նա ոչինչ չէր նշմարում, բայց շուտով նրկատեց մի պահանոց, մօտեցաւ և տեսաւ, որ այնտեղ զինուոր կայ նստած:

— Ընա պէտք է ման դայ, բայց նստած է իրեն համար», — մտածեց Ստօեանը: — «Գուցէ նա քնած է»:

Նա էլի մօտեցաւ և համոզուեց, որ պահապանը քնած է: Արշալոյսն երևելուն պէս Ստօեանը նկատեց խրամի մօտ մի քանի տնակներ:

բայց պահապաններ չկային: «Փորձեմ», — մտածեց նա, իջաւ և սկսեց յարմար տեղ որոնել պատնէշը բարձրանալու համար:

Թուրքերը շատ անինամ կերպով են պահում իրենց բերդերը խաղաղութեան ժամանակ, նոքա նորոգում և կարկատում են նոցա, երբ պատերազմի վտանգ է սպառնում: Ահա այդ պատճառով էլ Ստոեանը առանց դժուարութեան իջաւ խրամը, շուտով իրեն համար մի տեղ գտաւ, ուր ազիւսներ էին վայր ընկած, սողալով վեր բարձրացաւ պատնէշի վերայ, և դուրս եկաւ ուղիղ այն տեղ, ուր պահապանի պահանջն էր: Փոքր ինչ գլուխը վեր բարձրացնելով՝ Ստոեանը նայեց պահապանին, տեսաւ որ նա քնած է և հրացանն էլ դրած է պահանոցի մօտ: Մեր թափառականը սողաց պահապանի մօտ և մի վայրկեան կանգ առաւ: Այդ րոպէին նորա գլխում մի մտք ծագեց. գործած սպանութիւնների թիւն աւելացնել էլի մէկով: Իւր գլխում տեղի ունեցած հոգեբանական երևոյթի շնորհիւ նա գտնվում էր երեքուն կէտի վերայ, որից բռնուիլը հեշտ չէր: Հօ նա տաճիկներին պատերազմ կանչեց, հետեաբար և պատերազմող կողմերից մէկն էլ ինքն էր, ուստի իրաւացի էր համարում ամեն կերպ զնասել թշնամիներին, մանաւանդ որ նոքա մի և նոյն ժամանակ իրենց և պատերազմող և դատաւոր էին համարում, և հաւանական է, որ չէին մեղքա-

նալ: «Այժմ թշնամիս իմ ձեռքս է, — մտածեց նա. — ես կարող եմ իւր սեպհական հրացանի սուլինով նորան շանսառակ անել. հօ ոչ մի հիմք չկա՞յ նորան խնայելու համար... Սակայն նա չսպանեց զինուորին, միայն առաւ հրացանը, պտտեց պահանոցի շորս կողմը, կամեցաւ կոտրել և դէն ձգել նորան. այս դիտաւորութեանը խոչնդոտ եղաւ մի ուրիշ պահապան: Ստոեանը ցած իջնելով հողակոյտի ներքին կողմից, յանկարծակի մի ձայն լսեց:

— Դո՛ւր (կանգնի՛ր):

Մի ակնթարթում նա հրացանը վայր ձգեց և դէպի քաղաք վազեց՝ շինութիւնը սլոտյտ տալով: Նա կարծում էր, որ այդ շինութիւնը իրեն կըծածկէր նոցա աչքից: Սակայն մարդիկ արդէն մօտ էին, շինութիւնն անցնելուց յետոյ ազատուելու նա երկու միջոց ունէր. կամ պիտի փոզրցում պատի մօտ դրած տակառի մէջ թաք կենար, կամ գնչուների մօտակայ վրաններում: Վրանների տակից երևում էին քնած գնչուների բորիկ ոտները, իսկ պարիսպի մօտ կանգնած էր մի կապած էջ: Վրա՞ն թէ տակառ: Առանց երկար ու բարակ մտածելու նա թռաւ տակառը և նստաւ: Զինուորները վաղէ վաղ եկան նայեցին փողոցը և սկսեցին հայհոյել:

— Լրտե՛ս... անպիտանը... փախաւ... կա՛ց, մենք կըբռնենք քեզ:

Գնչուներն արթնացան. նոցանից մէկը դուրս եկաւ վրանից ու կանգնեց:

— Դու շտեպար, — հարցրեց նիզամներից մէկը: — Ո՞ւմ:

— Ու՞մ, երևի լրտես էր կամ կօմիտաշի:

— Ձէ՛, շտեպայ, — պատասխանեց գնչուհին:

Պառաւր վեր կացաւ, աչքի տակովը մի նայեց նիզամներին, որոնք յիշոցներ էին տալիս, թքում էին, անիծում էին և վերջապէս վերագարձան իրենց տեղը:

Մի փոքր սպասելուց յետոյ Ստօեանը դուրս եկաւ տակառից և արագ արագ անցաւ զարմացած գնչուների մօտից: Թերևս նա կանգնէր նոցա մօտ, բայց սոքա այն գնչուներն էին, որոնք երեք օր առաջ կրիվենայում պարում էին տաճիկների առաջ, ուր և ինքը արջի գերը էր կատարում: Երիտասարդը ճանաչեց նոցա, դորա համար էլ չկանգնեց: Նա հազիւ մի յիսուն քայլ արաւ, պառաւ գնչուն, առանց մի խօսք ասելու ընկերներին, գնաց Ստօեանի յետևից: Ստօեանը գնում էր առջևից — գնչուհին յետևից: Դեռ բոլորովին չէր լուսացել. դատարկ փողոցներով երկու մարդ էր գնում, սրոնցից մէկը փախչում էր, իսկ միւսը հետամուտ լինում նորան. սա գնում էր, բայց չէր հասնում նորան, և միայն որպէս մի չարագուշակ ստուեր հետևում էր բաւական տարածութիւն հեռու մնալով: Ստօեանը չէր տեսնում և մինչև անգամ

չէր ենթադրում, որ գնչուհին գալիս է յետևիցը: Պառաւր բոբիկ ստներով գնում էր, առանց մի ձայն, մի ծպտուն հանելու: Նա ձեռքին բռնած ունէր մի փայտ, բայց չէր կրթնում նորան. երևի, երկիւղ էր կրում, որ փայտի ձայնը կարող էր գրաւել փախչողի ուշադրութիւնը:

Անցնելով մի քանի փողոց՝ Ստօեանը եկաւ բուլղարների թաղը և, ենթադրելով, որ իրեն ոչ ոք չէ նկատել, կանգնեց հաջի Խրիստոյի դարպասի առջև: Նա կարծում էր, որ այս տունը իւր ամենաանվտանգ ապաստանը կըլինի, մանաւանդ որ նա չէր կամենում երկար մնալ այնտեղ: Դիւսաւորապէս միջոց պիտի որոնէր Դանուբը անցնելու: Նա բոլորովին չէր երկմտում, որ այս դէպքում հաջի Խրիստոն կ'օգնէր: Ստօեանը յոյս էր տածում և հաջի Խրիստիցայի ու իլենկայի վերայ, որ շատ հեշտ էր իւրացնում նոր գաղափարները և որի սիրտը լի էր հայրենասիրական զգացումով: Այսպէս նա յոյս ունէր, որ եռանդագին օգնութիւն, գոնէ սրտաբայ ընդունելութիւն կըտեսնէ:

Դարպասը փակ էր, որովհետև դեռ կանուխ էր: Նա դուռը ծեծեց, մի քիչ սպասեց, կամեցաւ նորից բաղխել և ահա լսեց քայլերի ձայն: Դուռը բացուեցաւ:

— Բարով եկար, — խորին կերպով բարևեց նորան ձիապանը և նորից փակեց դարպասը:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ, — հարցրեց Ստօե-  
եանը:

— Փառք Աստուծու, ամեն բան լաւ է:

— Հաջի Խրիստօն վե՞ր է կացել:

— Երևի: Արդէն լոյս-ցերեկ է:

Որովհետեւ բուրգար հասարակութեան մէջ  
ընդունուած չէ, որ առաջուց յայտնեն, թէ ով  
է եկել, դորա համար էլ Ստօեանն ուղղակի  
գնաց առաջին հարկը, դէպի իւր նախկին սեն-  
եակը: Նա չէր կասկածում, որ կարող էր այդ-  
տեղ մնալ, որովհետեւ իւր բացակայութիւնն  
աւելի շուտով արձակուրդի բնաւորութիւն ու-  
նէր, քան թէ հրաժարման: Այդ պատճառով,  
երբ նա մտաւ իւր սենեակը, դիտմամբ սկսեց  
ազմուկ հանել, որպէս զի իմաց տար իւր ներ-  
կայութիւնը:

«Եթէ հաջի Խրիստօն դարթնել է, — մտածեց  
երիտասարդը, — կրկին նա անկողնից վեր կացած  
չի լինիլ, իսկ ես կ'ուղենայի շուտով տեսնուել  
նորա հետ»: Դորա համար Ստօեանը սկսեց ման  
գալ, հազալ... և վերջապէս կարողացաւ տան  
տիկնոջ ուշադրութիւնը դարձնել իւր վերայ: Հա-  
ջի Խրիստիցան դուռը բաց արեց, ներս նայեց, բա-  
ցականչեց և փախաւ: Դորանից յետոյ իսկոյն  
հաջի Խրիստօն եկաւ, որ, ինչպէս երևում էր,  
նոր էր վեր կացել և, խալաթը վերան ձգելով,  
շտապել էր գալ: Նորա դէմքը սարսափ և զայ-  
րոյթ էր արտայայտում:

— Թշուառակա՛ն, ինչո՞ւ համար ես եկել  
այս տեղ, բացականչեց նա:

Ստօեանը բոլորովին շփոթուեց:

— Ի՞նչ ես կամենում, — հարցրեց զժնեայ  
տանտէրը:

— Ես եկել եմ... ես եկել եմ... — մըթմը-  
թաց երիտասարդը:

— Դու տաճի՞կ ես սպանել:

— Այո, սպանել եմ:

— Եւ համարձակվո՞ւմ ես մտնել իմ տունը:  
Ես աւելորդ արիւն չունիմ... ես չեմ ուղում  
արիւն թափել... Չէ՛... ես... ես... — նա գունա-  
տուեց և դողդոջուն ձայնով արտասանեց. — ես  
կըմտանեմ քեզ ժանդարմներին:

Ստօեանը չկարողացաւ պատասխանել, ներս  
վազեց հաջի Խրիստիցան և դեռ չեմքից սկսեց  
աղաղակել:

— Թշուա՛ռ մարդ, ա՛հ, թշուա՛ռ, մենք քեզ  
պահեցինք, ինչպէս հարգատ դաւակի... —

— Ժանդարմներին պէտք է նորան... — ընդ-  
հատեց հաջի Խրիստօն, — ժանդարմներին: Գնում  
եմ նոցա կանչելու... — և նա գնաց դէպի դու-  
ռը, բայց այնտեղ արդէն կանգնած էր իւրն-  
կան:

— Չէ՛, չե՛ս գնալ... — այնպիսի մի վստահ  
ձայնով դոչեց օրիորդը, որ հաջի Խրիստօն կանգ-  
նեց և տարակուսանքով նայեց նորան: — Չէ՛, հայ-

րիկ, դու չե՞ս գնալ,—կրկնեց Իլենկան.—դու այդպիսի ցածուծիւն չե՞ս անիլ:

—Բայց նա ինձ հօ կըթշուառացնէ,—պատասխանեց հայրը:—Եթէ իմանան, որ ես իմ տանը նորան տեղ եմ տուել, ինձ կըկախեն:

—Ի՞նչպէս կարող են իմանալ այդ,—հարցրեց օրիորդը:

—Քեզ ո՞վ տեսաւ,—հարցրեց տանտիկինը:

—Բացի Ստեփանից ոչ ոք չէ տեսել,—պատասխանեց Ստեփանը:

—Ստեփանը ոչ ոքի բան չի ասիլ,—նկատեց Իլենկան:

—Ուրեմն թող հէնց էս րոպէիս հեռանայ,—չարունակեց հաջի Խրիստօն,—[Թ՛ղ էս րոպէիս հեռանայ, խկոյն և եթ: Գնա՛... կորի՛ր... մոռացիր, որ իմ տունս մտար... Գնա՛...]

Ստեփանը համոզուեց, որ ստիպուած է թողնել իւր բոլորովին անվտանգ համարած ապաստանը: Քանի մարդիկ չէին երեւում փողոցում, պէտք էր շուտով հեռանալ: Առանց մի խօսք ասելու նա դուրս եկաւ և միայն լսեց, որ յետևից ասում են.

—Բարի՛ ճանապարհ:

Իլենկայի այս բարեմաղթութիւնը սաստիկ ազդեց նորա վերայ:

—Բարի՛ ճանապարհ,—կրկնեցին ազլկանից յետոյ ծնողները:

Ստեփանը շտապ շտապ սանդուղքներից

ցած իջաւ, ծռեց դէպի ձախ, գնաց և ոչ մի անգամ յետ չնայեց: Նորանից մի յիսուն քայլ հեռու հետևում էր գնչուհին:

Նորա դրութիւնը նորից վատացաւ: Այժմ նա աչքի առաջ երկու ապաստան ունէր. կամ Մօկրայի տունը, կամ Ստանկոյի բնակարանը: Ստանկոյի բնակարանը գնալ նորան աւելի յարմար էր թուում նախ այն պատճառով, որ մօտ էր և ապա՝ որ հեզ ու խոնարհ Ստանկոյին ոչ ոք ոչ մի բանում չէր կասկածում: Ստեփանը փողոցում ոչ ոքի չհանդիպեց: Նա մատեցաւ ուսումնարանին, և բախտիցը դուռը բաց էր. մտաւ առաջին խրճիթը և հէնց այդտեղ պատահեց Ստանկոյին:

—Ես համարեա թէ սպասում էի քեզ,—ասաց ուսուցիչը բարեւրուց յետոյ:

—Ես պիտի թաք կենամ:

—Գիտեմ, գիտեմ... Տաճիկները քեզ ողջ քաղաքում որոնում են, մէկէլ օրը խուզարկեցին հաջի Խրիստոյին և հարց ու փորձի կանչեցին նորան: Ափսոս, որ Պետրը քաղաքում չէ: Նա քեզ Ռուսմանիա ճանապարհ կըձգէր... Մնա՛ ինձ մօտ մինչև երեկոյ, մինչև որ մի բան կըմտածենք... գնանք:

Նա տարաւ Ստեփանին նկուղը և առաջուց ցոյց տուեց ծածուկ դուռը, որ տանում էր դէպի աների մէջ գանուող անցքը:

Այս անցքի մասին տաճիկները բան չեն ի-



մանում... նա տանում է—գիտես... դէպի  
Մօկրայի պարտէզը... Նիսա հանդարտ, իսկ ես  
իմաց կըտամ Մօկրային: Եթէ նորա տունը լինի  
քո ապաստանը, չգնաս բակի միջով, այլ ցանկի  
վրայից թռիր պարտէզ:

Մտանկօն էլի մի քանի հարց տուեց Ստօ-  
եանին, խօսեցին. նա գնաց, իսկ Ստօեանը պառ-  
կեց քնելու:

Գնչուհին երկար ժամանակ մնաց տան առ-  
ջև—նա սպասում էր. վերջապէս հեռացաւ և  
ուզղակի ուտիկանատուն գնաց:

XII.

Քաղաքակրթուած երկիրները պահպանել  
են անքաղաքակիրթ երկրների մի քանի սովորու-  
թիւնները, որ բարոյականութեան կողմից նշանա-  
ւոր չեն: Այդ սովորութիւնների կարգին է  
պատկանում և յանցաւորին ցոյց տալու կամ բռն-  
ներու համար վարձատրութիւն խոստանալը: Այդ  
բանը առանց որ և է վարձատրութեան պիտի  
կատարուի: Այդպիսի վարձատրութիւնների ան-  
հրաժեշտութիւնը պարզ ցոյց է տալիս կառա-  
վարութեան և հասարակութեան անհամերաշ-  
խութիւնը: Այդպիսի սովորութիւն անգլիացիներ-  
ըր դործ են դնում իւրանգացիների գէմ, փո-  
խարինելով տաճիկներից, որոնք ոչ միայն ահա-

գին քանակութեամբ լրտեսներ ու պաշտօնա-  
կան մատնիչներ են պահում, այլ և քաջալերում  
են մասնաւոր ամբաստանութիւնները: Երբ Ստօ-  
եանը աղային սպանեց և կարողացաւ թաք կե-  
նոր, այն ժամանակ Ռուշչուկի վալին թմբակա-  
հարութեամբ հրամայեց բոլորին և իւրաքան-  
չիւրին, թէ ով որ կենդանի կըբերէ կամ ցոյց  
կըտայ, թէ ինչ տեղ է թաղնուել Ստօեանը, որ  
կրիվենայում սպանել է միլեազիմին և անտա-  
ռում աղային,— հազար զրուշ վարձատրութիւն  
կտանայ: Այդ լուրը ամենուրեք տարածուեց և  
ահա, թէ ինչու գնչուհին հետամուտ էր լինում  
Ստօեանին:

Գնչուհին նորան չէր ճանչում, բայց նա  
հասկացաւ, երբ սա մեխանէում արջի դեր էր  
կատարում, որ գիւղական շորերը նորա յատուկ  
շորերը չէին: Այն մարդիկը, որոնք իրենց օրուայ  
պարէնը դանազան տեսակ խորամանկութիւննե-  
րով են ճարում, շատ շատ լաւ ենթադրութիւն-  
ներ անելու ընդունակութիւն են ձեռք բերում:  
Հէնց որ գնչուհին իմացաւ, թէ միլեազիմին  
սպանել են, իսկոյն աշխատեց մտաբերել կեղծ  
գիւղացու աչքերի և դէմքի արտայայտութիւնը,  
այնպէս որ՝ երբ նա իմացաւ, թէ վարձատրու-  
թիւն պիտի տրուի, եթէ սպանողին ցոյց տան,  
կարողացաւ պարզ երևակայել այդ անձնաւո-  
րութիւնը: Զինուորների հեռանալուց յետոյ, երբ  
երիտասարդը դուրս թռաւ տակաւից, գնչու-

հին սալչած մնաց աչքերի և դէմքի արտայայտութիւնից և սկսեց հետեւել Ստօեանին: Նա սպասեց հաջի Խրիստոյի տան առաջ, սպասեց և ուսումնարանի առաջ և վերջապէս վճռեց, թէ նա մնալու է այնտեղ և ուղղակի ուստիկանատուն դնաց: Փաշան քնած էր, իսկ բակում դեռ նոր էին սկսել ցերեկուայ շարժումները: Յածում, ուր ուստիկանութեան դիւանատունն էր և ժանդարմների բնակարանը, զափթիւները սուրճ էին իմում և նարդիլէ քաշում: Գնչուհին դիմեց նոցա:

— Ի՞նչ ես ուզում, — հարցրեց ժանդարմներից մէկը:

— Գործ ունիմ իրեն փաշայի հետ:

— Փաշան քնած է:

— Ի՞նչ է, — հարցրեց գնչուհին և իսկոյն շարունակեց երգելով. — Ախ, ջանմ, վե՛ր կաց: վազի՛ր, վազի՛ր շուտով և վերկացրու փաշային... թո՛ղ վեր կենայ տեղից և լսէ ինձ:

— Հա՛... հա՛... հա՛, — ծիծաղեցին զափթիւնները:

— Շտապի՛ր, ջանմ, — պնդում էր գնչուհին: — Յետոյ էլ ժամանակ կունենաս նարդիլէ քաշելու:

— Ի՞նչ ես ուզում փաշայից:

— Ես նորա ականջին այնպիսի մի բան պիտի ասեմ, որ ոչ ոք նորան չի ասիլ:

— Ի՞նչ բան է որ:

— Այնպիսի բան է, աղաւնեակս, որ նա ինձ վարաներ կըբաշխէ:

— Երևի, մի զրուշ կըտայ:

— Չէ... հազար:

— Է՛հէ՞, — հարցրեց զափթիւն:

— Գուցէ դու գտե՞լ ես Ստօեան կրիվենովի հետքը:

— Ես իրեն փաշային կ'ասեմ, — պատասխանեց պառաւը, մի քիչ շփոթուելով, որ գաղտնիքը յայտնուեցաւ:

— Ի՛նչ պէտք չէ փաշայի մօտ գնալ... Տարմեզ... Ի՞նչ տեղ է նա:

— Իսկ իմ հազար՞ը զրուշս:

— Ուրեմն դու ուզում ես առաջ հազար զրուշ ստանալ, — նկատեց զափթիւն: — Ի՛նչ տարմեզ ցոյց տուր, թէ ինչ տեղ է նա, որ կալանաւորենք:

Գնչուհին չէր իմանում, թէ ինչ անէր:

— Ես ամեն բան կըպատմեմ... փաշա էֆէնդիին:

— Ասա և աղային... — պատասխանեց զափթիւններից մէկը: — Իսկ եթէ չասես, այն ժամանակ դու գիտես:

Զափթիւն վեր կացաւ, գնաց գրասենեակը և շուտով վերադառնալով կրկին նստեց իւր տեղը:

Գնչուհին գլխակոր կանգնած էր: Եկաւ մի գէր, պատկառելի մարդ՝ կոճկելով իւր նշանա-

զգեսաւը: Նա մի քանի խօսք արտասանեց, իսկոյն և եթ շարուեցան մի քանի կարգ՝ քսանի չափ զափթի, որոնք զինուած էին սուսերներով ու ուէփօլէրներով: Երբ վաշտը պատրաստ էր, պատկառելի մարդը կոճակեց իւր նշանազգեսաւը, առաւ զէնքը և զիմելով գնչուհուն, հրամայական ձայնով ասաց. — «Տա՛ր»:

— Լաւ, ջանձ... — պատասխանեց պառաւը լալկան ձայնով: — Բայց ինչո՞ւ համար ես չտեսայ վաշտային:

— Դեռ կրտեանես, իսկ առ այժմ դեանք:

Պառաւը հագաց, կուշ եկաւ և կրթներով իւր երկայն վայտին՝ առաջ ընկաւ: Կորա յետեւից գնում էր ազան: Գնչուհին չէր շատապուժ և մինչև անգամ կանգնում էր, կարծես թէ ճանապարհը հաստատ չէր իմանում: անընդհատ հազում էր և ողւոց հանում: Վերջապէս, կարծես, իմացաւ, սկսեց արագ գնալ և կանգնեց:

— Ահա այս տեղ է... — ասաց նա, աչքով մի հասարակ տուն ցոյց տալով:

— Այս տե՞ղ... — հարցրեց ազան: — Սա հօռսուսնարա՞նն է: — Նա հարցական հայեացք ձրգեց զափթիների վերայ:

— Հօ Ստանկօն ոչ մի բանում կասկածելի չէ՞:

— Մինչև այժմ ոչ մի բանում... — պատասխանեց մի զափթի:

— Հապա ինչպէ՞ս անենք, — կրկնեց նա հարցը:

— Ինչ և իցէ նա ռայեա է:

— Այնպէս խոնարհ, այնպէս սուս է:

— Դորքա բոլորը հեզ ու խոնարհ են:

— Դու համոզուա՞ծ ես, որ Ստօեան կրիվե-նովը այս տեղ է, — հարցրեց նա գնչուհուն:

— Ինքս տեսայ, որ ներս մտաւ և դուրս չեկաւ, ինչպէս հաջի Խրիստոյի տանից:

— Նա եղա՞ւ հաջի Խրիստոյի մօտ:

— Ամենից առաջ գնաց հաջի Խրիստոյի մօտ, իսկ նորանից եկաւ այս տեղ:

— Դէ՛հ, որ այդպէս է, գնում ենք, — ասաց ազան, դառնալով զափթիներին և բաց արաւ ուսուսնարանի դռները:

Ազայի և զափթիների երեւելը խանգարեց դասարանի պարապմունքը, որ արդէն սկսուած էր: Երեխաները կարգով նստած էին գետնին՝ քարէգրիչն ու քարէտախտակը բռնած, իսկ Ստանկօն կաւիճով գրում էր տախտակի վերայ և վանկ-վանկ կարգում բարձր ձայնով: Աշակերտներն ու աշակերտուհիները կրկնում էին իւրաքանչիւր տառի անունը և այսպիսով ազմուկ էին հանում: Ստանկօն գրեց «բարի»:

— Բէ-ա-բա... — արտասանեց Ստանկօն:

— Բէ... — կրկնեցին մանուկները և յանկարծ կանգ առան:

Լուսթիւն տիրեց: Մի քանի տանեակ աչքեր յառած էին ազայի վերայ, որ չեմքը անց-

նելով՝ նայեց մանուկներին և ապա դառնալով Ստանկոյին, խիստ ձայնով ասաց.

— Մասնի՛ր ինձ Ստեան կրիվենովին, կոմիտա՛լի:

Ստանկոն բուրբուրով շշփոթուեց: Նա մօտեցաւ դռան, որ տանում էր դէպի հարեան սենեակը, մի քիչ բաց արեց և գոչեց.

— Գնա՛, Ստեան:

Յետոյ փակելով այս դուռը, նա հանդիստ կանգնեց նորա առաջ:

— Բա՛ց այս դուռը, — ասաց աղան:

— Սպասի՛ր, ջանմ... — պատասխանեց Ստանկոն, ձեռքը մեկնելով: — Մի քիչ սպասի՛ր:

Աղան՝ զարմացած Ստանկոյի սառնասրտութեան վերայ, կանգնեց. բայց խիտ խելքի եկաւ և մի քայլ առաջ գնաց:

— Կանգնի՛ր, — պնդում էր Ստանկոն:

— Ի՞նչ է, — հարցրեց աղան:

— Մի՛ անհանգստացնիլ մարդուն... նա ողջ գիշերը չէ քնել:

— Հէ՛... — անհամբերութեամբ արտասանեց աղան և նորից մի քայլ առաջ գնաց:

— Կանգնի՛ր, ես ինքս կրբանամ դուռը, — ասաց Ստանկոն, տեղից չշարժուելով:

Աղան նորից կանգ առաւ և նշան տուեց զափթիններին, որ դուռը բանան:

— Մի փոքր ևս սպասեցէք, — համոզում էր նոցա Ստանկոն:

— Ի՞նչու սպասել, — նորից հարցրեց աղան:

— Իսկ ես ձեզ ասում եմ, սպասեցէք, ձեզ համար աւելի լաւ կըլինի, — սառնասրտութեամբ պնդում էր Ստանկոն, կամենալով, — ավներև էր, — աւելի երկար բռնել ժանդարմներին:

— Ինչո՞ւ մեզ համար աւելի լաւ կըլինի, — հարցրեց շուարած աղան:

— Ի դուր միայն կըկորցնէք ձեզ: Այդ կոմիտա՛լին եթէր ուէվոլէր ունի, եթէ ոչ աւելի:

Չապախները խիտն և եթ կանգ առան:

— Ճշմարիտ է, ես չեմ համարել, — շարունակեց Ստանկոն, — բայց մէկը այս տեղ տեսայ, միւսը այս տեղ, երրորդը այս տեղ... — նա մտաւ խրում էր իւր գօտին, ցոյց տալով, թէ ինչպէս էին Ստեանի երևակայական ուէվոլէրները: Այդ ժամանակ տաճիկները նայում էին, լըսում, և նոցանից ոչ մէկը չէր շարժվում, իսկ Ստանկոն շարունակում էր. — այս տեղ չորրորդը, այս տեղ հինգերորդը, այս տեղ վեցերորդը, այս տեղ իններորդը և այլն...

— Սոս... դ՛ուր, — կանչեց աղան:

— Մի քիչ սպասի՛ր, աղա՛՛ էֆէնդըմ, թող համարեմ վերջացնեմ. մէկը այս տեղ, միւսը այս տեղ, երրորդը այս տեղ:

— Առա՛ջ գնացէք, — հրամայեց աղան զապախներին:

Սակայն զապախները այնքան էլ չէին շտա-

պում: նոցանից իւրաքանչիւրը հանեց ուէփօլվէ-  
րը և սկսեց դիտել:

Նոքա գննեցին իրենց ուէփօլվէրներն և պա-  
տեանից հանեցին թրերը. ամենից առաջ գըտ-  
նուողը աջ ձեռքով ուէփօլվէրը բռնեց, իսկ ձա-  
խով թուրը, յետոյ փոխեց՝ թուրը աջ ձեռքով  
բռնեց, իսկ ձախով ուէփօլվէրը և առաջ գնաց:  
Սակայն Ստանկոյն կրկին հնար գտաւ էլի մի բո-  
ւպէ նոցա պահելու:

— Ինչպէ՞ս դու պիտի բռնես կօմիտալիին,

— հարցրեց նա ժանդարմին:

Զապտին մի վայրկեան կանգ առաւ: Յետոյ  
համարձակ գնաց դէպի դուռը, դէն քաշեց  
Ստանկոյին, բացեց և մտաւ կողքի սենեակը:  
Այս տեղ վառարանի առաջ նստած էր մի կին,  
մէջքը դարձրած դէպի ներս մանողները, իսկ նո-  
րան փաթաթուել էին հինգ մանուկ: Կինը յետ  
չնայեց, իսկ զափթիները միմեանց յետեից ներս  
մտան, մինչև որ լցրին ամբողջ սենեակը: Ի  
հարկէ, բացի կնիկանից ու երեխաներից աւելի  
ոչ ոք չկար: Ժանդարմները նայեցին իրենց չորս  
կողմը և նոցանից մէկը նկատեց, որ դէպի նը-  
կուղը տանող մի դուռ կայ, բաց արեց և անց  
կացաւ շեմքը: Նորան հեռուեց երկրորդը, երրոր-  
դը, չորրորդը և այլն... Նկուղից դէպի բակ տա-  
նող դուռը բաց էր. նոքա նայում էին չորս կող-  
մը և առաջ գնում, ամուր բռնելով իրենց թրե-  
րն ու ուէփօլվէրները: Բակում նոքա մի քանի

բան տեսան, ինչպէս՝ աւել, աղբ, թի և այլն...  
Ժանդարմները դիտեցին բակի քարէ պարիսպը:  
Նա հին էր և տեղ-տեղ փուլ եկած: Պատի մի  
կողմից պարտէզ էր, միւս կողմից—գրացու տու-  
նը, երրորդ կողմից—բակը: Զապտինները նայե-  
ցին, գննեցին, հեթադրութիւններ արին, և վեր-  
ջապէս նոցանից մէկը գնաց աղային մի բան զե-  
կուցանելու:

Ազան, որ իւր մօտ մի քանի մարդ էր թու-  
ղել, լսեց նորա զեկուցումը, պատուիրեց, որ  
հսկեն Ստանկոյին, և ապա ինքը գնաց բակը,  
ամեն բան աչքի անց կացրեց և հրամայեց վե-  
րադառնալ:

— Իսկ այս անպիտանին, — ասաց նա, մատ-  
նացոյց անելով Ստանկոյին, — կապեցէք և բանտ  
դրէք:

Նորա հրամանը իսկոյն և եթ կատարեցին:

Հէնց որ ժանդարմները կապկպոտած Ստան-  
կոյին ուսումնարանից դուրս հանեցին, փողո-  
ցում կանգնած գնչուհին իսկոյն մօտեցաւ աղա-  
ւին:

— Ազա էֆէնդըմ, — սկսեց նա, — միթէ ե՞ս  
չբերի ձեզ այս տեղ:

— Ի՞նչ անենք:

— Դորա համար ինձ մի բան պէտք է տալ:

— Մենք չբռնեցինք Ստօեան կրկննովին:

— Բայց հօ նորա տեղ ուրիշին բռնեցիք:

— Ուրիշի համար մենք չենք խոստացել հա-  
զար զրուշ:

— Բայց ո՞րքան:

— Ոչինչ:

— Իսկ ես ման եկայ, ման եկայ, բերի ձեզ,  
ոտներս ջարդեցի... ես միայն մտածում էի,  
ինչպէս ձեզ օգնեմ: Ա՛խ, բախտ չունիմ... — ար-  
տասուեց պառաւը: — Եթէ դուք ոչ ոքի չբռնէիք...  
բայց հօ մէկին գոնէ կալանաւորեցիք... եթէ  
նորան չէ, գոնէ միւսին: Կարող էք սորան կա-  
խել, դազուխ անց կացնել: Եթէ մէկի համար  
խոստանում էք հազար զրուշ, միւսի համար կա-  
րելի է հարիւր տալ:

Աղան թքեց մի կողմը:

— Գուցէ հարիւրը շա՞տ շատ է, — շարունա-  
կեց գնչուհին. — գոնէ յիսուն, եթէ յիսունն էլ  
շատ է, գոնէ տասը, եթէ տասն էլ շատ է, հինգ...  
եթէ ոչ հինգ, ինչքա՞ն:

Աղան ոչինչ չպատասխանեց: Եկան ուտիկա-  
նատուն: Ստանկոյին տարան բանար: Աղան զը-  
նաց ոստիկանատան զրասենեակը, ուր տեսաւ  
Արիստարխի-բէյին, որ նոր էր եկել և, նստած  
թախտի վերայ, ինչ որ թղթեր էր թերթում:

Արիստարխի-բէյը, որին նշանակել էին քըն-  
նութիւն անելու, ինքն էլ չէր իմանում, թէ ինչ  
անէր: Աղան նստաւ նորա մօտ և սկսեց իւր ար-  
շաւանքի մասին պատմել:

— Հա՛... — ուրախացաւ քննիչը: — Ո՞ւր է այդ  
գնչուհին:

— Մնաց բազում:

— Պէտք է կանչել նորան:

Աղայի հրամանով իսկոյն նորան ներս կան-  
չեցին:

— Ե՞րբ և ի՞նչ տեղ դու պատահեցիր կօ-  
միտաջիւն, — նսխ և առաջ հարցրեց քննիչը:

— Նա տակառից դուրս թռաւ, — պատաս-  
խանեց գնչուհին:

— Ի՞նչ տակառից:

Գնչուհին պատմեց բոլորը և վերջին էլ  
խնդրեց, որ իրեն վարձատրեն:

— Տեսնենք, — պատասխանեց Արիստարխի-  
բէյը:

— Նա հինգ զրուշ է ուզում, — նկատեց ա-  
ղան:

— Եթէ ոչ նորա, գոնէ ուրիշի մօտ ես ձեզ  
տարայ:

— Տեսնենք, իսկ առ այժմ գնա՛, Տէրը քեզ  
հետ:

— Ինչպէ՞ս, ջանմ, դու ինձ թողնում ես  
դատարկ ձեռքով:

Բէյը գրպանից մի զրուշ հանեց և տուեց  
գնչուհուն: Պառաւը չէր իմանում, թէ ինչպէս  
իւր շնորհակալութիւնը յայտնէր այդպիսի առա-  
տաձեռնութեան համար:

— Տե՛ս, էլի իմաց աուր, եթէ մի բան նըկատես:

Պառաւը գնաց:

— Բերե՞լ են արդէն Կրիվենայից մեխանէշիին, — հարցրեց Արիստարխի-բէյը:

— Այսօր առաւօտեան նորան բերին:

— Պէտք է ձերբակալել հաջի Խրիստոյին:

— Էլ ոչ ոքի՞:

— Կրտսնները:

— Յարմար կըլինէր, եթէ աւելի շատ կալանաւորէինք, յետոյ կարելի կըլինի մի քանիսներին բաց թողնել:

— Ի հարկէ, իսկ այժմ մենք կըսկսենք սրունել կոմիտէտը, և այն ժամանակ քիչ չի լինիլ կասկածելիների թիւը:

— Ինչպիսի՞ կասկածելիների, — հարցրեց աղան:

— Այնպիսիների, որոնք յօնքի տակից են նայում, կակաղում են, շատ են խօսում, լռում են և... — բէյը գժուարանում էր համապատասխան ոճեր գտնել:

Աղան շարունակեց.

— Որոնք փող ունին:

— Այո, ի հարկէ... այդպիսիները վտանգաւոր են:

— Ափտոս, որ Պետարին չէ կարելի քաշել:

— Ի՛նչ արած:

— Ինչո՞ւ համար են արգելել նորան ձեռտալ:

— Քաղաքականութիւն է, — պատասխանեց Արիստարխի-բէյը, աւելի իւր թղթերով զբաղուելով:

Անցաւ կէս ժամ:

— Թող այստեղ բերեն Կրիվենայի մեխանէշիին, — շնչեց Արիստարխի-բէյը:

Աղան հրաման տուեց, և շուտով լսուեց շղթաների զնդզնդոց, և դրասնեակը բերին Պէտոյին: Նորա զէմքը չէր արապայտում ոչ վըհատութիւն, ոչ էլ արամութիւն: Նա դալիս էր ժանդարմի հետ. Արիստարխի-բէյը նշան արաւ, որ կանգնեն սենեակի մէջ տեղում:

— Անունդ ի՞նչ է:

— Յայտնի է — Պէտո. այդպէս էլ կոչում են ինձ մարդիկ:

— Իսկ հօ՞րդ անունն ինչ էր:

— Ինչի՞դ է պէտք: Ահա երեսուն տարի է, որ հայրս պառկած է խօնաւ գետնում:

— Բայց ինչպէ՞ս էին նորան անուանում, — նորից հարցրեց Արիստարխի-բէյը, որի կողքին դրադիրը նստած արձանագրում էր:

— Եթէ դու անպատճառ կամենում ես իմանալ, ծածկելու կարիք չունիմ: Հօրս անունը Կիր-Գիցա էր:

— Ինչտե՞ղ էր նա ծնուել:

— Չգիտեմ: Գիտեմ միայն, որ նա այս տեղացի չէր, այլ պսակուել էր այս տեղ և մեխանէշ կառուցել:

—Նա ցինցա՞ր էր:

—Հա՛, ցինցար էր... Հօ դա ամօթ չէ:

—Ի հարկէ, դա ամօթ չէ. ամօթ է, որ դու, ցինցար, յարաբերութիւն ունիս Բուլղարիայի հետ, որ ապստամբութիւն ու դաւադրութիւն է խորհում:

—Ես ոչ ոքի հետ յարաբերութիւն չունիմ, ես միայն իմ էսնափոփն եմ պարապած:

—Գու միայն էսնափոփը չես պարապած. քո որդին մի սպայ է սպանել, երբ սա իւր պաշտօնն է կատարելիս եղել:

—Գիտեմ, որ սպայ սպանել են, բայց չգիտեմ, թէ ով է սպանել և ինչու:

—Նորան սպանել է որդիդ, Սոսեանը:

—Այդ օրը ես որդուս երեսն էլ չեմ տեսել:

—Այդ սչինչ, դու տեսել ես նորան նախընթաց օրը:

—Նախընթաց օրն էլ չեմ տեսել:

—Ապա ինչպէ՞ս է նա եղել Գրօփանի խըրճիթում:

—Ասա՛ ինձ, այն ժամանակ ես էլ կ'իմանամ:

—Ձէ, դո՛ւ ինձ ասա:

—Ես միայն մի բան կարող եմ ասել. — չըզիտեմ:

—Լաւ է թող խորամանկութիւններդ:

—Աւելի լաւ է՝ դո՛ւ թող:

—Վերջին անգամ ե՛րբ ես տեսել որդուդ:

—Ես տեսել եմ նորան վեց ամիս առաջ, երբ նա Վիդզին գնաց:

—Ինչո՞ւ համար նա գնաց այն տեղ:

—Ես չեմ հարցրել նորան: Իմ Սոսեանը առևտրական գործի մէջ էր. իսկ առևտրի մասին չեն հարցնում:

—Գրօփանը կ'ասէ քո երեսիդ, որ առաւօտեան քո որդիդ եկել է նորա մօտ և սպանել միլեադիմին:

—Իսկ վեց զինուոր կ'ասեն Գրօփանի երեսին, որ ողջ օրը ոչ ոք չէ մտել իմ մեխանէն: Մի քրիստոնեայ Գրօփանի գէմ՝ ես վեց մուտու՛ման զինուոր ունիմ... Որի՞ վկայութիւնն աւելի կարևոր է:

—Այտեղ մի ինչ որ խառը բան կայ, — ասաց Արիտարխի-բէյը, — բայց ես բոլորը կը պարզեմ:

—Պարզի՛ր, ջանմ, պարզի՛ր, — պատասխանեց Պէտօն: — Այն ժամանակ թերևս պարզուի, որ անպիտաններից մէկը իմ որդու անունն է տուել:

—Սըս... — աղաղակեց բէյը. — Ի դուր տեղը յիմար-յիմար դուրս մի՛ տալ. ինձ չես խաբիլ:

—Ես յիմար-յիմար դուրս չեմ տալիս:

—Մենք դեռ կըխօսենք քեզ հետ:

—Կըխօսենք — կըխօսենք:

Մեխանէջիին բանտ տարան, իսկ նորան տեղ հաջի Խրիստոյին բերին: Բոլորովին իրար հակառակ էին պահում իրենց այս բանտարկուածներ:



ըր: Արչափ առաջինը հանդիսա էր ու համար-  
 ձակ, այնչափ երկրորդը երկչոտ էր ու վհատ:  
 Կարծես թէ սա մինչև անգամ այն մի բանի  
 ժամուայ ընթացքում, որ անց էր կացրել բան-  
 ասում, վատել էր, թէպէս սուքերին կապանքներ  
 չկային: Նա ներս մտաւ, կանգնեց և խորը հա-  
 առչեց: Արիստարխի-բէյը սովորական հարցեր  
 առաջարկեց նորան. ի՞նչ է անունը, ե՞րբ և ինչ-  
 ան՞ո՞ղ է ծնուել, ինչո՞վ է պարագում և այլն:  
 Հաջի Խրիստոն պատասխանեց լալկան ձայնով, որ  
 բոլորովին վայել չէր մի պատկառելի, ունևոր  
 մարդու, և անընդհատ հառաչում էր ու լալիս  
 իւր անբախտութեան վերայ:

— Ի՞նչ դո՞ւս էր ծառայում Սասեան Կրիփե-  
 նովը:

— Այո՛, ծառայում էր... Առայ ես նորան,  
 որ փորձանք դայ զլիսիս. ինքս էլ չեմ իմանում,  
 թէ ինչո՞ւ առայ:

— Ի՞նչ կարող ես ասել նորա մասին:

— Միայն մի բան, որ այժմ ես չէի առնիլ  
 նորան, մինչև անգամ եթէ ծնկաչոք աղաչէր:

— Բայց դու նորանից դո՞՞հ էիր:

— Ա՛հ... չէ՛...:

— Ի՞նչ բանի համար կարող ես նորան կըշ-  
 տամբել:

— Ինչ բանի համար... Ամեն բանի համար:  
 Ա՞՞վ է մեղաւորը, եթէ ոչ նա:

— Ինչո՞ւ համար դու այսօր նորան տեղ ես  
 տուել տանդ:

Այդ անսպասելի հարցը կայծակնահար ա-  
 րաւ հաջի Խրիստոյին, բայց մի և նոյն ժամա-  
 նակ ողևորեց նորան: Մի մի ժամանակ երկիւղը  
 զարմանալի անվեհերութիւն է ներշնչում մարդու:

— Ինչպէս ես նորան տե՞ղ եմ տուել տանս:  
 Թո՛ղ կրակի բոցը ինձ ոչնչացնէ, թո՛ղ ջուրը ինձ  
 խեղդէ, գեախնը ճեղքուի սաներիս տակ, եթէ  
 տեղ եմ տուել: Թո՛ղ իմ աչքերը կուրանան, եթէ  
 ես նորան տեսել եմ:

— Ուրեմն դու նորան չե՞ս տեսել:

— Չէ, չեմ տեսել:

— Կըտեսնենք, — ասաց Արիստարխի-բէյը,  
 քննիչի սուր և թափանցիկ հայեացք ձգելով հա-  
 յի Խրիստոյի վերայ: — Իսկ ես քեզ ասում եմ, որ  
 դու տեսել ես նորան և չես մասնել: Մենք դո-  
 րա մասին գեռ կըխօսենք. միայն տես, քո բանը  
 լաւ չի լինիլ, եթէ շուտով չվերջացնենք այս բո-  
 լորը: Մտածիր և դուր տեղը ժամանակ մի կոր-  
 ցնիլ:

Ի՞էյը դարձաւ աղային և խնդրեց, որ նա-  
 խապէս կաշկանդեն հաջի Խրիստոյին և բանա  
 տանեն: — Եւ ոչ ոքի չթողնէք նորա մօտ, — աւե-  
 լացրեց նա: — Հաջին ախ ու վախ էր քաշում,  
 հառաչում, երդվում, բայց էլի տարան:

Նորա տեղը բռնեց Ստանկօն, որի դէմքը  
 անդորրութիւն և հեզութիւն էր արտայայտու-  
 մէ:

— Անունդ ի՞նչ է:

Բոլոր առաջին հարցերին Ստանկոն պատասխանեց համարձակ և կարգին, և նորա պատասխանների բնակորութիւնը չփոխուեց, երբ աւելի նշանակութիւն ունեցող հարցեր արուեցան:

— Դու թագցրե՞լ ես տանդ Ստոեանին:

— Չէ, — պատասխանեց Ստանկոն:

— Խաբո՞ւմ ես:

— Ես միայն պաշտպանվում եմ, էֆէնդըմ:

— Այդ տեսակ պաշտպանութիւնից բան չի դուրս գալ, որովհետեւ ամեն բան ինձ յայտնի է:

— Եթէ ամեն բան քեզ յայտնի է, էլ ինձ հարց ու փորձ մի՛ անիլ:

— Ես հարց ու փորձ եմ անում, բարիդ կամենալով: Եթէ դու խոստովանես, այն ժամանակ այն պատիժը, որին պիտի ենթարկուիս յանցաւորին թագցնելու համար, կարելի է մեղմացնել, որովհետեւ ճշմարտութեան համար էլ վարձատրում են:

— Ի՞նչ ճշմարտութիւն ես կամենում, — հեզնորէն հարցրեց Ստանկոն:

— Ես կամենում եմ, որ դու ինձ ասես, թէ քեզանից ո՞ւր գնաց Ստոեանը:

— Ո՞ր Ստոեանը:

— Ստոեան Կրիվենով. դու՞ հօ նորան ճանաչո՞ւմ ես:

— Ճանաչում եմ, բայց չգիտեմ, թէ ինչ տեղ է:

— Իսկ դու նորան թագցրե՞լ ես տանդ:

— Չէ:

— Չափթիւները լսել են, թէ ինչպէս դու ազդակել ես դռնում: «Ստոեան»:

— Իմ մեծ որդուս անունը Ստոեան է:

— Ուրեմն դու ասում ես, թէ չե՞ս թագցրել Ստոեան Կրիվենովին:

— Չէ, չեմ թագցրել:

Ստանկոն արամբանական ճարպիկութեամբ էր պատասխանում: Որովհետեւ Արիստարխի բէյը հարցնում էր նորան, արդեօք թագցրե՞լ է Ստոեանին իւր բնակարանում, նա պատասխանում էր «չէ», որովհետեւ Ստոեանը ինքն էր թագնուել նորա մօտ: Եթէ հարցը ուրիշ կերպ առաջարկուած լինէր, այսինքն՝ եթէ հարցնէին. թագնուե՞լ է նորա մօտ Ստոեանը, նա նոյնպէս կը պատասխանէր՝ «ոչ», որովհետեւ ինքն էր թագցրել Ստոեանին: Այսպէս թէ այնպէս Ստանկոն պարտական չէր համարում իրեն ճշմարիտ ասելու այն կառավարութեան, որ չգիտէր ճշմարտութիւն ասած բանդ:

Կ, նորան ստիպեցին պատասխանել — պատասխանեց, բայց ճշմարտութիւնը անկարելի էր համարում, որովհետեւ իւր սրտաբացութիւնով կարող էր շատ շատերին վրասել: Նա գիտէր, որ իւր կեանքը վտանգի է ենթարկում. գիտէր նոյնպէս, որ պատիժը կարող են մեղմացնել, բայց պատիժ մեղմացնելու համար այնպիսի միջոցնե-

րի պիտի դիմէր, որոնցից փրաւորուած կըլինէր իւր հայրենասիրական զգացումը, բարոյականութիւնը: Այո՛, շնորհիւ այն պայմանների, որոնց մէջ նա գտնուում էր, նորա մէջ երկու տեսակ բարոյականութիւն մշակուեցան, որ միշտ էլ չէին հաշտուում իրար հետ: Ահա՛ թէ տաճկական կառավարութիւնը որպիսի երեւոյթներ էր յառաջացնում:

— Ուրեմն դու պնդում ես, թէ Ստոեանին չե՞ս թագցրել, — փերստին հարցրեց Արիստարխի-բէյը:

— Չէ՛, — վճռողաբար պատասխանեց ուսուցիչը:

Այս վճռողականութիւնը տատանեց քննիչի կարծիքը: Գուցէ գնչուհին ստե՞լ է: Գուցէ տակառի բոլոր պատմութիւնը շինծո՞ւ է: Գնչուհուն չէր կարելի հաւատ ընծայել, մտնաւանդ որ երկու դատապարտուածներն էլ լիովին հերքեցին գնչուհու խօսքերը: Պէտք էր գտնել մի այնպիսի ցուցմունք, որ բոլորովին արժանահաւատ լինէր:

Ստանկոյից յետոյ Գրօժգանին բերին: Քննիչը սորա հետ նազ ու տուզ չարաւ: Փիւղացին ինչպէս Սիստոփոյում, նոյնպէս և այս տեղ ամեն բան պատմեց պարզ, առանց որ և է դադանի դիտաւորութեան: Բայց Արիստարխի-բէյի համար անհրաժեշտ էր փոխել արձանագրութեան մէջ ցուցմունքներից մի քանիսը:

— Քս կինը կերակու՞ր պիտի պատրաստէր զինուորները համար, — հարցրեց քննիչը:

— Այո՛, — պատասխանեց փիւղացին:

— Ձե՞ր հերթն էր:

— Այո՛, մեր հերթն էր:

— Գորա՞ համար էր միլեազիմը եկել քեզ մօտ:

— Չգիտեմ, դորա համար էր, թէ ոչ:

— Իսկ հերթը գիտե՞ս:

— Գիտեմ:

— Եթէ հերթը գիտես, հեռաբար գիտես, թէ ինչու էր միլեազիմը եկել քեզ մօտ: Մէկը միւսի հետ կապուած է: Հօ ճի՞շդ է:

— Ճի՞շդ է:

— Ուրեմն միլեազիմը պաշտօնական պատականութեամբ էր եկել քեզ մօտ: Այդպէ՞ս է:

— Այդպէս է:

Այս ցուցմունքը գրագիրը մտցրեց արձանագրութեան մէջ:

— Գու գառը մաշկու՞մ էիր:

Գրօժգանը ամեն բան հաստատում էր:

— Որքա՞ն տարածութիւն կըլինի քո խրճիթի դռան և այն սեան մէջ, որի մօտ դու գառն էիր մաշկում:

— Տասը քայլ կըլինի:

— Ուրեմն դու լսո՞ւմ էիր, ինչպէս նա սպանում էր միլեազիմին:

— Չէ, չէի լսում:

— Ինչպէ՞ս, դու չէի՛ր լսում, — աղաղակեց  
բէյը:

— Լս... լս... լսում էի, — պատասխանեց վա-  
խեցած գիւղացին:

— Ուրեմն դու խօ՞սք էի՛ր կապել սպանողի  
հետ:

— Ոչ, ոչ, ոչ...

— Ինչպէ՞ս թէ ոչ, — նորից բացականչեց քրն-  
նիչը. — դու խօսու՞մ էի՛ր Ստօեանի հետ Բուլղա-  
արիայի մասին, Տաճկաստանի մասին... դու թաղց-  
րի՞ր նորան շորերի մէջ:

— Այո՛, — պատասխանեց գիւղացին երկչոտ  
կերպով:

— Ուրեմն դու ինչպէ՞ս ես համարձակվում  
հերքել, որ պայմանաւորուած չէք եղել: Խոստու-  
վանի՛ր, — սպառնալեօք գոչեց քրնիչը. — խօ՞սք էիք  
կապել:

— Խօ... խօսք... է... ինք կ... կ... ապել:

— Լաւ է, որ խոստովանում ես: Այդպէս էլ  
կըզրենք, որ դու կամաւ խոստովանեցիր:

Ահա այսպէս էր Արիստարիսի-բէյը նիւթ  
հաւաքում ապագայ գործի համար և ահա թէ  
ինչպէս նա յարմարուեցաւ Ռուչչուկի վիլայէթի  
քաղաքակրթուած վալիի հրահանգին՝ քննութիւ-  
նը եւրոպական ձևով կատարելու: Այո՛, Տաճ-  
կաստանը այդ ժամանակ քաղաքակրթուեցաւ:

Ստօեանի գործի քննութիւնը անհանդատու-  
թիւն պատճառեց Ռուչչուկի բնակիչներին, մա-  
նաւանդ տեղական բուլղարներին: Գնչուհին մի-  
ակ լրտեսը չէր, նոքա աւելի շատ էին, ուստի խու-  
զարկութիւններն ու ձերբակալութիւնները վա-  
րակման բնաւորութիւն էին ստացել: Այս թըշ-  
ուառութեան ենթարկուեցան մինչև անգամ այն-  
պիսի ընտանիքներ, որոնց կառավարութիւնը ոչ  
մի բանում չէր կարող մեղադրել: Ըստ մեծի մասին  
ձերբակալուածներին միայն հարց ու փորձ էին ա-  
նում՝ և բաց թողնում: Բայց մի քանիսին բանտարկե-  
ցին և մինչև անգամ առանձին սենեակում պահեցին:

Նորա կալանաւորուելը վախեցրեց կնոջը,  
աղջկան և բոլոր տանեցիներին: Ձերբակալող ժան-  
դարմները պատճառը չբացատրեցին, բայց այդ-  
յայտնի էր տիկնոջը, աղջկան և Ստեփանին, մը-  
նացեալ ծառաները բան չէին իմանում: Հէնց որ  
հաջի Խրիստոյին տարան, կինը սկսեց աղաչել  
Ստեփանին, որ գաղտնիքը ոչ ոքի չասէ:

— Հարիւր զրուշ կըստանաս, միայն լռիր:

— Ես առանց փողի էլ կըլռեմ:

Անպայման հերքել եղելութիւնը — աղաա-  
ուելու միակ միջոցն էր, և արդարև դա ամե-  
նալաւ ձևն էր. այդ հանդամանքն էլ ի նկատի  
18

ունէր հաջի Խրիստոն և վճռեց ոչինչ չասել, եթէ մինչև անդամ ինքը Ստօեանը երեսին ասէր, թէ մի կէս ժամով մտել էր նորա մօտ: Վաճառականը մտածում էր և աղօթում միայն, որ Ստօեանին չբռնեն, և հաւատում էր, որ Նախախրնամութիւնը թոյլ չի տալ, որ կորչի մի այնպիսի հարուստ վաճառական, մի այնպիսի պատկառելի մարդ և հարսնացու աղջկայ հայր, որպիսին ինքն է: Նա մտաբերեց տաճարներին աւրած նուիրատուութիւնները, մէջլիսի ժամանակ արած իւր ճառարխօսութիւնները և այն, որ փաշային յայտնի է իւր բարեմիտ լինելը. միով բանիւ, նա հաւատում էր Ամենաբարձրեալի արդարութեանը: Այնու ամենայնիւ միայնութիւնը ճնշում էր նորան, մանաւանդ որ չգիտէր, թէ որքան է տեւիլ այդ տանջանքը:

Անցաւ և երրորդ օրը, եկաւ չորրորդը. հաջի Խրիստոն աղօթում էր, երբ Արիստարխի-բէյը ներս մտաւ:

— Հը՞, ի՞նչ է, լաւ մտածեցիր՞, — մեղմօրէն հարցրեց նա վաճառականին:

— Ես մտածում եմ միայն իմ թշուառութեանս վերայ: Չարակամներից մէկը լրբօրէն ամբաստանած, զրպարտած կըլինի ինձ, — լալկան ձայնով ասաց հաջի Խրիստոն, բարձրացնելով իւր շղթայակապ ձեռները:

— Բանն այն չէ, թէ ով է ամբաստանել, ալ՞ որ ամբաստանութիւնը ճիշդ է:

— Չէ, սուտ է:

— Սըս... — ընդհատեց Արիստարխի-բէյը: — Մի՛ հերքել, մենք այժմ մենակ ենք, և եթէ կամենում ես, կարող եմ պատմել քեզ ամեն բան, թէ ինչպէս է եղել:

— Ես կըկամենայի իմանալ, թէ ո՞վ է իմ սխերիմ թշնամին:

— Բանը այդ չէ... Ստօեանը եկել է քեզ մօտ, իսկ դու սպառնացել ես, որ կըմտնես, բայց կինդ ու աղջիկդ սկսել են աղաչել, և դու հրամայել էս, որ հեռանայ:

Վաճառականը երկիւղից և զարմանքից սառած մնաց:

— Տեսնո՞ւմ ես, որ ես ամեն բան գիտեմ, — շարունակեց բէյը, — հօ հոգին սուրբը չէ յայտնել ինձ այդ բոլորը: Հետևաբար լաւ է խոստովանիր: Հերքելով միայն քեզ կըմխասես:

— Ա՛խ, ես կըխոստովանէի, եթէ մեղաւոր լինէի:

— Նախ և առաջ մեղաւոր ես, որ Ստօեանին չմտնեցիր, յետոյ... —

— Տէր իմ, Աստուած. էլի ի՞նչ:

— Մի՛ անհանգստանալ, մենք կըխօսենք առանձին, երես առ երես. և որպէս զի դու աւելի համարձակ լինիս, ես մի հարց կ'առաջարկեմ. կամենո՞ւմ ես վճարել:

Այս հարցմունքը ուշքի բերեց վաճառականին:

— Ինչքան է պէտք:

— Եթէ կամենում ես հէնց վաղը դուրս գալ բանտից, հարիւր մէջիդիէ տուր. իսկ եթէ կամենում ես, որ քեզ դատապարտելուց ազատեմ, տուր էլի հարիւր:

— Հարիւր և հարիւր, էդ կ'անի երկու հարիւր... հըմ,— մտածեց հաջի Խրիստօն:

— Երևի, դու կեանքդ աւելի՞ թանկ ես գնահատում... Հը... ինձ համար մէկ է, ես նորա համար մի փորա էլ չեմ տալ, բայց դու անշուշտ աւելի գնահատում կըլինիս:

— Ինչ արած, աղատիր:

— Բանտից և դատապարտութիւնից, հասկանում ես:

— Հասկանում եմ. ուրեմն ինձանից էլ բան չեն պահանջիլ:

— Էդ նշանակում է, որ դու այլ ևս չես դատուիլ, ոչ կախաղանի կը դատապարտուիս, ոչ էլ բանտ նստելու, բայց քեզ որպէս վկայ կը կանչեն:

— Ինչ վկայեմ ես, — հարցրեց վաճառականը:

— Որ Ստօեանը Ռուշչուկում դաւադրութիւն է կազմակերպել:

— Ախր ես ոչ մի տեղեկութիւն չունիմ:

— Ունիս թէ չունիս — մէկ է: Ստօեանը բռնակլում էր քո տանը. մտաբերիր, թէ ինչ բանի մասին էր խօսում, ով էր լինում նորա մօտ, ում հետ էր ծանօթութիւն պահպանում, իսկ

առաւել ևս, թէ ինչ երիտասարդներ և երբ էին հաւաքվում նորա մօտ:

— Ինչի՞ մասին էր խօսում... Խօսում էր Բուլղարիայի մասին, նորա պատմութեան մասին:

— Գա շատ կարևոր է, — նկատեց Արիստարխի-բէյը: — Ուրեմն նա խօսում էր Բուլղարիայի և նորա պատմութեան մասին... հըմ... Ո՞ւմ հետ էր ծանօթանում:

— Ամենքի հետ:

— Իսկ ո՞վ էր լինում նորա մօտ:

Հաջի Խրիստօն մտաբերեց:

— Մի անգամ, — սկսեց նա, — եկաւ Ստանկօն և էլի մի ուրիշ երիտասարդ, որին ես պատահում էի ընթերցարանում, բայց չեմ իմանում, թէ ով է: Երկրորդ անգամ նորա մօտ մի բանի մարդ եկաւ, բայց նոցա չտեսայ, — կարծեմ, սօքա միայն մի ժամ նստան:

— Ստանկօն նոցա՞ հետ էր:

— Չգիտեմ. այն ժամանակ ես տանը չէի:

— Քեզ ո՞վ ասաց այդ:

— Ազջիկս:

— Ուրեմն նա գիտէ:

— Երևի, գիտէ:

— Հըմ... այ մենք ինչպէս կ'անենք. ես թոյլ կըտամ, որ կինդ ու աղջիկդ այցելեն քեզ. դու հարցրո՞ւ, թէ ովքեր էին եղել Ստօեանի մօտ. առաւօտեան ձերոնք կրկին կըզան քեզ

մօտ, իսկ յետոյ ես կըմտնեմ, և եթէ ասեա Ստօեանի հիւրերի անուններն և խոստանաս տալ հարկաւոր ցուցմունքները, այն ժամանակ ազատ կըլինիս:

— Եւ Ստօեանին թաղցնելու մասին այլ ևս խօսք չի՞ լինիլ:

— Եթէ անունները չտաս, կըմնաս բան տու՞մ. իսկ եթէ չես կամենում դատապարտուել, վկայ եղիր. բայց եթէ հարկաւոր ցուցմունքները չտաս, յանցաւոր, կըլինիս: Հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ, էֆէնդըմ:

— Այժմ, ինչպէս ուզում ես, արա՛ւ:

Արիստարիսի-բէյը հեռացաւ, իսկ հաջի Խը-րիստօն մտածում էր իւր մօտալուս ազատու-թեան և այն երկու պայմանների մասին, որ ա-ռաջարկեց քննիչը. դոցանից մէկը շատ անա-խորժ էր նորան, իսկ միւսը— շատ դիւրին իրա-դործելի: Նորա համար շատ անախորժ էր մտա-ծել, որ երկու հարիւր մէջիցիէ պիտի հատու-ցանէ: Երկու հարիւր: Չէ որ դա մի պատկա-ռելի դումար է: Նա ափսոսում էր այդ փողը, բայց մխիթարում էր իրեն, որ ինքը երկու հա-րիւրից էլ աւելի արժէ: Երկրորդ պայմանի մա-սին մի վայրկեան անգամ չէր կասկածում, չէր էլ մտածում, որ մի քանի մարդու կեանք պի-տի վտանգի ենթարկէր, և նա, որի ազգանու-նը տուեց, արդէն կորած էր: Սակայն նա հա-մողուած չէր, որ կինը իմանում կըլինի այդ ե-

րիտասարդների ազգանունը. դա մի և նոյն բանն է, մտածում էր նա, Իլենկան հօ հաւա-նականօրէն գիտէ: Նա սպասում էր իւրայիննե-րին. վերջապէս սորա էլ եկան: Մօտաւորապէս կէսօրին բանտի դուռը բացուեցաւ, և ներս մը-տան երկու կին: Սրտառուչ էր դոցա տեսալ-ցութիւնը: Կինն ու աղջիկը լաց եղան, տեսնե-լով, որ նորա ոտներն ու ձեռները շղթայակապ են: Հաջի Խրիստոյի կինը հառաչում էր և ախ ու վախ քաշում, և վերջապէս հարցրեց. — Ինչո՞ւ համար են քեզ կալանաւորել:

— Ամեն բանի պատճառը Ստօեանն է:— Եւ վաճառականը պատմեց բոլորը:

Կինը զայբացաւ Ստօեանի վերայ:— Ի՛նչ կա-րիք ունէր, որ նա մեր դիւխն այս ցաւը բերեց: Փո՛ւչ, անպիտա՛ն: Նա քեզ էլ, Ստանկոյին էլ թշուառացրեց: Քեզ որ կալանաւորեցին, Իլեն-կան իսկոյն վազեց Մօկրայի մօտ և այն տեղ ի-մացաւ, որ Ստանկոյին էլ կալանաւորել են: Այ-ժըմ ժանդարմները փողոցում ման են գալիս, մտնում են տները և ամեն տեղ ձերբակալու-թիւններ անում: Չերբակալել են արդէն հա-րիւր մարդ, դուցէ և մինչև հազար, — նա սկսեց անուններ տալ և թուեց մինչև տասը մարդու անուն:

— Պա՛հ... պա՛հ... — զարմացաւ հաջի Խրիս-տօն:

— Եւ ինչո՞վ կը վերջանայ այս բոլորը: Տէր Աստուած... կ'արձակե՞ն քեզ երբ և իցէ:

— Ինձ վաղը կ'արձակեն, — պատասխանեց հաջին, որ մինչև այդ ժամանակ կնոջ շատախօսութեան պատճառով չկարողացաւ նորութիւնը յայտնել:

— Վա՛ղը, — բացականչեց ուրախացած կինը: — Ինչո՞ւ այսօր չէ:

— Սուս, թող ես պատմեմ:

— Աւելի լաւ կը լինէր, եթէ դու այսօր գալիր, — շարունակեց անդադար կինը:

— Լաւ է, բայց չէ կարելի: Առաջուց երկու պայման պէտք է կատարել:

— Ի՞նչ պայման:

— Երկու հարիւր մէջիդիէ տալ:

— Տէր ի՞մ Աստուած, — սարսափեց կինը: — Երկու հարիւր մէջիդիէ: Ինչո՞ւ համար:

— Որ ինձ բաց թողնեն:

— Քեզ բաց թողնելու համար երկու հարիւր մէջիդիէ են նշանակում, իսկ Ստօեանին բռնելու համար միայն ո՞ւրթը: Ա՞յդ ինչպէս: Դա անկարելի է:

— Ստօեանը ուրիշ մարդ է, ես ուրիշ:

— Դու ուրի՞շ... Դու ի՞նչ ես որ:

— Դէ ի հարկէ... ինչպէ՞ս կարելի է ինձ համեմատել Ստօեանի հետ:

— Բայց կրկին բոլորի պատճառը Ստօեանն է: — Ո՛հ... — դու չեց հաջի Խրիստոսիցան, ձեռքը բարձրացնելով, — եթէ իմանայի, թէ ինչտեղ է

նա... ես ինքս կը մասնէի նորան ժանդարմներին:

— Մայրի՛կ, ի՞նչ ասացիր, — շշնջեց Իլենկան:

— Ի հարկէ կը մասնէի, — կրկնեց մոլեգնած մայրը: — Ես կը կամենայի, որ թուրքերը նորան սաղ-սաղ մորթէին:

— Ա՛խ, թշուառութի՛ւն է, թշուառութիւն... — յոգւոց հանեց հաջի Խրիստոն:

— Եւ ամեն բանի պատճառը նա է:

— Դէ՛հ, ինչ արած. Աստուած նորան կը պատժէ այն բոլորի համար, ինչ որ նա մեր գլխին բերեց:

— Իսկ ես կը կամենայի, որ առաջ թուրքերը նորան պատժէին: Ո՛հ եթէ իմանայի, թէ ինչ տեղ է:

— Երևի, արդէն գնացել է Ռուսմանիա:

Երբ հաջի Խրիստոն արտասանում էր այս խօսքերը, Իլենկայի աչքերն այնպէս էին ցոլում, ինչպէս ցոլում են այն մարդու աչքերը, որ սովոր է ճշմարիտ խօսելու և առաջին անգամ սուտը բռնում են: Նա շփոթուեց. աչքերը ցած ուղղեց և ակներև էր, որ աշխատում էր իրեն զսպել: Վերջապէս հառաչեց. նա հասաւ իւր նպատակին: Հայրն ու մայրը՝ զբաղուած լինելով խօսակցութիւնով, ուշադրութիւն չէին դարձնում նորա վերայ: Այդ միջոցին հաջի Խրիստոն յանձնարարեց կնոջը ստանալ սարաֆից անհրաժեշտ գումարը:



—Այսօր և եթ կըզնամ փողը ստանալու,—  
պատասխանեց կինը:

—Գնա վաղը և ոչ այսօր: Եթէ այսօր գը-  
նաս, նա այսօրուայ տոկոսը դուրս կըգայ, հաս-  
կանո՞ւմ ես: Բայց գնա վաղը, ստացիր փողը և  
ուղղակի եկ այստեղ:

—Եւ քեզ իսկո՞յն բաց կըթողնեն:

—Ձէ... դեռ մի պայման էլ կայ...

—Էլի՞ փող...—վախեցաւ կինը:

—Սըս...— նորին մեծութիւնը գլուխը ցա-  
ծից վեր թօթափեց (այս շարժմունքը Տաճկաս-  
տանում բացասական նշան է):

—Ապա ի՞նչ:

—Ոչինչ... Պէտք է միայն այն երիտասարդ-  
ները ազգանունը տալ, որոնք մի անգամ եկել  
էին Ստոեանի մօտ: Ես չեմ ձանաչում նոցա,  
տանը չեմ եղել:

—Ես էլ տանը չեմ եղել—պատասխանեց  
կինը, հարցական հայեացք ձգելով աղջկայ  
վերայ:

Իլենկան ուսերը վեր քաշեց:

—Ինչո՞ւ են կամենում իմանալ,—հարցրեց  
Խրիստիցան:

—Մի ինչ որ դաւադրութիւն կայ,—պա-  
տասխանեց մարդը:—Դուրս է գալիս, որ Ստո-  
եանը յանձնաժողովի անդամ է:

—Ա՛խ, անպիտան... մեր տանը դաւադրու-

թիւնով էր պարապում: Այդ է, որ նորա աչքե-  
րը ինձ դուր չէին գալիս. ո՞վ էր գալիս նորա  
մօտ:

—Մի անգամ Ստանկոն եկաւ, նորա հետ  
էլ մի լակոտ:

—Էն որ սկահը կտարեց: Ո՞հ, ես նորան  
ցոյց կըտայի:

—Նոցա անունը տուի, իսկ միւսներին չեմ  
ձանաչում:

—Իլենկա,—դարձաւ աղջկան հաջի Խրիս-  
տիցան:

Աղջիկը լսում էր մօրը:

—Դու տա՞նն էիր:

—Այո, ես տանն էի:

—Եւ տեսա՞ր:

—Այո, տեսայ... բայց... մոռացել եմ,—աւե-  
լացրեց աղջիկը:

—Մոռացե՞լ ես... դա անկարելի է:

—Ձէ, չեմ յիշում, մայրիկ...—պատասխա-  
նեց օրիորդը հեզ, բայց մի և նոյն ժամանակ  
վճռողական ձայնով:

—Ինչպէ՞ս...—հարցրեց դարմացած հաջի  
Խրիստիցան:

—Մոռացել եմ:

—Յիշի՛ր:

—Ձեմ կարողանում մտաբերել:

—Դու անպատճա՛ռ պիտի մտաբերես...

Դորանից է կախուած հօրդ վիճակը:

Իլենկան ախ քաշեց։  
 — Եթէ դու չմտաբերես, Աստուած գիտէ, թէ հայրդ որքան ժամանակ բանտում կընստի։  
 — Իլենկա, — սկսեց հայրը։ Աղջիկը նայեց հօր վերայ, և նորա աչերը կարեկցութիւն ու տրտմութիւն էին արտայայտում։

— Աստուած գիտէ, — շարունակեց հաջի Խրիստիցան, — բաց կըթողնեն նորան բանտից. թերևս միւսները հետ Աքէա ուղարկեն... բայց դուցէ և կախեն...

— Այո՛, ինձ կըդատեն, իսկ եթէ ես ազգանունները տամ, ինձ միայն որպէս վկայ կըկանչեն։

Օրիորդը նորից նայեց հօր վերայ, և այս անգամ էլ նորա աչքերը կարեկցութիւն էին արտայայտում։ Կարծես թէ նա ուզում էր մի բան ասել, բայց չասաց։

— Յիշիր, իննդրում եմ, — աղաչեց հայրը։

— Յիշիր, — աղաղակեց մայրը, բարկացած նայելով աղջկան։ Իլենկան գլխակոր կանգնած էր, բայց բան չէր պատասխանում։ Մայրը բռունցքներով վերան յարձակուեց։

— Ձեռ մի՛ տալ նորան, — ասաց մարդը։ — Նա... կըմտաբերէ... Դեռ ժամանակ կայ... մինչև էգուց։

— Յետաձգելու ժամանակ չէ՛. պէտք է ազատես հօրդ։

— Հօրն էլ, մօրն էլ, իրեն էլ։ Նա մեր մի-

ակ դուստրն է, մենք այնպիսի մեծ կարողութիւն նորա համար ենք դիզել. ի՞նչ կըլինի այդ հարստութիւնը, եթէ ինձ աքսորեն։ Բայց աքսորը ամենամեղմ պատիժն է դաւադիրներին թաղցնելու համար։ Եթէ ես չըմասնեմ բուն դաւադրութիւն կազմողներին, ինձ էլ նոցանից կըհամարեն։ Դու միայն լաւ մտածիր ամեն բանի վերայ և մտաբերիր...

— Նա կըմտաբերէ, կըմտաբերէ, — նկատեց մայրը։

— Ի հարկէ, մինչև էգուց կըմտաբերէ, — վաւերացրեց հաջի Խրիստօն. — նա բարի աղջիկ է։ — Այս խօսքերն ասելիս նա մեկնեց իւր շղթայած ձեռքերը, դրկեց աղջկան և համբուրեց։ Երբ զրնգզրնգացին հօր շղթաները, երբ իլենկան լսեց նորա փաքչական ձայնը, յանկարծ հեկեկաց։

Հաջի Խրիստիցան նոյնպէս սկսեց լաց լինել։

— Նա կըմտաբերէ, կըմտաբերէ, — կրկնում էր մայրը արտասուարից ձայնով։ — Եթէ չմտաբերէ, թշուառ, ցած աղջիկ կըլինի, անարժան այն հօրը, որ այդպիսի կարողութիւն է հաւաքել իւր աղջկայ համար։ Ա՛խ, Ստօեան, Ստօեան, իսկ մենք դեռ ուզում էինք այդ անպիտանին տալ մեր աղջիկը։

— Ի՞նչ ասացիր։ Թուրքերը դորա մասին բան չեն իմանում, թող գլխի չընկնեն։ Եւ լաւ

է այդ մուռանանք: Իսկ այժմ գնացէք, Տէր ընդ ձեզ... գնացէք... մինչև վաղը: Այժմ Իլենկայից կախուած կըլինի՝ էգուց ինձ կ'արձակեն, թէ ոչ, և Աստուած գիտէ, թէ որքան ժամանակ կըպահեն:

Մայր ու աղջիկ մի փոքր հանգստացան, մնաս բարեաւ ասացին բանտարկուածին և գուրս եկան:

Վերագարձին հաջի Խրիստիցան այնպէս էր շտապում, որ Իլենկան հազիւ էր հասնում ձորը: Նա շտապում էր, որովհետև կամենում էր տանը քննել, իմանալ, թէ ով էր եղել Ստեանի մօտ: Մինչ մայրը հարց ու փորձ էր անում ծառաներին, Իլենկան նստած իւր սենեակուժ լայիս էր: Այր ու կին ծառաներին հարց ու փորձ անելուց երևեց, որ նոցանից ոչ ոք բան չէ կարող ասել Ստեանի մօտ եղած ժողովի մասին: Յայտնի եղաւ միայն, որ մի օր Իլենկան բոլոր ծառաներին դէս ու դէն էր ուղարկել:

— Դու ո՞ւր էիր գնացել, — հարցրեց տանտիրինը Ստեփանին:

— Օրիորդը ուղարկել էր ինձ իմանալու, թէ շողենաւը երբ պիտի դաշ: Ես մինչև անգամ ասացի օրիորդին, որ այսօր շողենաւ չի գալիս. իսկ նա պատասխանեց, թէ գերմանականը չի գալիս, այլ անգլիականը: «Գնա՛, — ասում է, — նաւահանգիստ և սպասիր, մինչև որ շողենաւը կըգայ»: Երկու ժամ կանգնեցի այն-

տեղ, տեսայ, որ շողենաւը չէ գալիս, վերագարձայ:

Համարեա այսպիսի նպատակներով հեռացրուած էին բոլոր ծառաները:

— Նա դիտմամբ է արել այս, որ ծածկէ դաւակիցներին, — գլխի ընկաւ հաջի Խրիստիցան և վաղեց աղջկայ մօտ:

— Ասա՛, ով կար Ստեանի մօտ ժողովում:

— Մայրի՛կ, մոռացել եմ, — պատասխանեց դուստրը:

— Խաբո՛ւմ ես, խաբո՛ւմ... Դու բոլոր ծառաներին տանից հեռացրել էիր:

Իլենկան բան չպատասխանեց:

— Ի՞նչ է, դո՞ւ չէիր հեռացրել ծառաներին:

— Այո, ես էի հեռացրել բոլորին:

— Ինչո՞ւ:

Աղջիկը լուռ էր:

— Ամօ՛թ... նախատի՛նք... Բոլոր ծառաները յիշում են, թէ ինչպէս դու նոցա տանից հեռացրել ես, զանազան տեղ ուղարկել, բայց ոչ ոք չգիտէ, որ այս տեղ դաւաճաններ են հաւաքուել: Ամենքը գիտեն միայն, որ դու տանն ես եղել, տանն է եղել և Ստեանը: Գնա, հաւատացրու նոցա, թէ դու պղծութիւնն չես արել Ստեանի հետ, քանի որ տանը մարդ չէ եղել:

Իլենկան գունատուեց և նախատինքով նայեց մօր վերայ:

— Գնա՛, գնա՛ նոցա մօտ, — գոչեց սըրա-  
մըտած հաջի Խրիստիցան, — ապացուցի՛ր, որ  
դու չես խախտել կուսուլթիւնդ:

— Ի՞նչ էք ասում, մայրիկ, — հառաչեց օրի-  
որդը:

Մայրը չարացած նայեց աղջկան և յետոյ  
կտրուկ ձայնով ասաց. — Համեցէք՝ աղափի՛ր  
հօրդ և հանի՛ր վրայիցդ արատը: Ասա՛, ով էր  
եկել Ստօեանի մօտ: Հայրդ տուել է մէկի ա-  
նունը, դու էլ մնացեալներինը ասա, և այն ժամա-  
նակ ամեն բան կըզրատուի... Վերջապէս խղճա՛  
թէ հօրդ և թէ քեզ:

— Դու չես հաւատալ, մայրիկ, թէ որքան  
ցաւալի է ինձ լսել այդ բոլորը:

— Ասա ազգանունները և ամեն բան կար-  
գին կըլինի:

Իլենկան աչքերը փակեց և ձեռներով ծած-  
կեց երեսը:

— Ասա՛ ազգանունները, — ազաչում էր մայրը:  
Իլենկան լուռ էր: Մայրը նստաւ կողքին,  
բռնեց նորա ձեռը և սկսեց համոզել փաղաքչա-  
կան խօսքերով. — Ես ինձ: Ես գիտեմ, թէ դու  
ինչու ես կամակորուլթիւն անում: Մեղաւորը  
մենք ենք, հայրդ և ես... Մենք Ստօեանին ի  
նկատի ունէինք քեզ համար և քեզ էլ յայտնե-  
ցինք այդ, դու էլ սիրեցիր նորան:

— Ե՞ս, սիրեցի՞ Ստօեանին... Ձէ՛, — գոչեց  
օրիորդը, մի կողմ քաշուելով մօրից. յետոյ՝ տես-

ներով, որ մայրը զարմացած աչքը չէ հեռաց-  
նում իրենից, իլենկան բոլորովին հանգիստ  
կերպով կրկնեց. — չէ, ես չեմ սիրում Ստօեանին:

— Ապա ինչո՞ւ այդքան կամակորուլթիւն ես  
ցոյց տալիս, — հարց ու փորձ արեց մայրը, չհաս-  
կանալով դործի զօրութիւնը:

— Ես չեմ ուզում... ես չեմ կարող թշուա-  
ռացնել այն մարդկանց, որոնք...

— Ի՞նչ, ի՞նչ ես ասում, — աղաղակեց հաջի  
Խրիստիցան:

— Որոնք իրենց կեանքը վտանգի են են-  
թարկում Բուլղարիայի համար...

— Եւ դորա համար ուզում ես թշուառաց-  
նել հօ՞րդ, որ իւր կեանքը նուիրել է քեզ հա-  
մար այդպիսի հարստութիւն պատրաստելու:  
Ուրեմն քո կարծիքով Բուլղարիան աւելի՞ արժէ,  
քան թէ կարողութիւնը: Այդպէս ուրեմն այդ  
յիմարութեան պատճառով, որի համար քեզ ոչ  
ոք մի փարա չի տալ, դու կամենում ես մոռա-  
նա՞լ ազնիւ դստեր պարտականութիւնները: Ախ,  
դու յիմար... Ախ, դու փուչ... — գոռում էր  
մայրը, աւելի և աւելի բորբոքուելով: — Բայց...  
կ'ասե՞ս դու ինձ այն տխմարների ազգա-  
նունները, որոնք ազնիւ, խաղաղ մարդկանց  
հանգստութիւն չեն տալիս: Կ'ասե՞ս դու ինձ  
նոցա ազգանունները, որոնց հետ յարաբերու-  
թիւն ունէիր: Այո՛, երևի, միայն Ստօեանը  
չէ եղել... երևի, մի տասը, քսան մարդ է եղել

քեզ մօտ... Աստուած գիտէ, թէ որքան... Ախ, գարշելի՛...

Հաջի Խրիստիցան բոլորովին կատաղեց: Սղմած բռունցքներով, բարկացայտ աչքերով նա վաղեց աղջկայ մօտ և հայհոյեց նորան ամենակեղտոտ խօսքերով:

— Լեզուդ կապուե՞լ է ինչ... հա՞... կըխօսե՞ս, թէ չէ... Ես կըստիպե՛մ: Ո՞վ կար ժողովում,— աղաղակեց նա, ապտակ տալով աղջկան:

Ապտակի ձայնը լսուեց սենեակում, բայց Իլենկան ոչ մի խօսք չարտասանեց. նա տեղիցը չչարժուեց և միայն կշտամբական հայեացք ձգեց մօր վերայ:

— Ո՞վ կար ժողովում,— կրկին աղաղակեց մայրը, կրկին խփելով աղջկան: Օրիորդը չէր պատասխանում:

— Ո՞վ կար... ո՞վ... ո՞վ կար... — աղաղակում էր մայրը: Մոլեգնած հաջի Խրիստիցան վեցեօթ հարուած տուեց աղջկան:

— Ի՞նչ է, կ'ասե՞ս:

Աղջիկը նորից լուռ ու մունջ նայեց մօր վերայ, և այս հայեացքը կատաղեցրեց հաջի Խրիստիցային. նա բռնեց աղջկայ մազերից և քարշելով բազմոցից՝ քարշպրտեց յատակի վերայ մըթմըթալով. — Հ'ը... չե՞ս ասիլ...

Իլենկան ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չըտուեց, թէպէտ մայրը մազերից բռնած քար-

շում էր նորան յատակի վերայ և ոտներով ծեծում: Կարելի էր կարծել, թէ դա կենդանի էակ չէ, այլ մարդու հասակով շինած մի խաղալիկ, որի վերայ մոլեգնած կինը կամենում էր թափել իւր բոլոր մաղձը: Ժամանակ առ ժամանակ աղջիկը խուլ հառաչանք էր արձակում, իսկ մայրը խեղդուկ ձայնով կրկնում էր. «Ձե՞ս ասիլ... չե՞ս ասիլ... Այս գարշելի տեսարանը, Աստուած գիտէ, թէ որքան ժամանակ կըտուէր, եթէ չընդհատէր նորան Մօկրայի անսպասելի գալը:

— Աստուած իմ, այս ի՞նչ է,— բացականչեց Մօկրան, սենեակը մտնելով:

Հաջի Խրիստիցան ձեռները բաց թողեց:

— Պատժօ՞ւմ ես աղջկանդ... սովորեցնօ՞ւմ ես... — սկսեց Մօկրան: — Իսկ ես կարծում էի, զո՞նչի (հարևան), թէ դու այժմ ուրիշ բանով զբաղուած կըլինիս:

— Ձի լը... սս... սում... — հեւալով պատասխանեց տանտիկինը:

Իլենկան վեր կացաւ և նստաւ բազմոցի վերայ՝ իւր առաջուայ տեղում: Նորա այսերը շիկնած էին, ականջները կարմրած, խառնացրիւ մազերը ծածկում էին ճակատը, արձակուած ծամերը ընկել էին ուսերի վերայ, իսկ պատառոտած շորը մերկացրել էր լանջը: Յատակի վերայ ցիր ու ցան էին եղած բուստեր, ոսկէ փողեր, որ առաջ զարգարում էին նորա կուսական գլուխն ու պարանոցը:

Քաղաքալարութեան բնածին զգացման ազդեցութեան ներքոյ, որ չէ թոյլատրում ուրիշներին միջամուխ լինել ընտանեկան գործերի մէջ, Մօկրան չհարցրեց, թէ ինչ է այդ հարուածները պատճառը:

— Անժամանակ եկայ, — ասաց նա. — ներեցէք, ես կըզնամ:

— Չէ, չէ... դոնչի, մի՛ գնալ, — հեւալով պատասխանեց հաջի Խրիստիցան. — մնա՛... մի՛ մտածիր դու... էլ... — Նա այնպէս շուտ-շուտ էր շունչ քաշում, որ ստիպուած էր փոքր ինչ լռել: — Ա՛յ, դու ինքդ մտածիր, — շարունակեց նա: — Սորա խօսքից (նա ցոյց տուեց աղջկայ վերայ) է կախուած հօր բանտից ազատուիլը, իսկ նա լըռում է: Կամակորութիւն է անում — թէկուզ գլուխը ջարդիր... այնքան յամառացել է, որ այդ բանին հասցրեց ինձ... Հը՞... Ի՞նչ կ'ասես:

Մօկրան նայեց Իլենկային, որ կարծես թէ ինքը խոստովանում էր իւր յանցանքը:

— Ահա այս տե՛ղ, մեր տա՛նը, — շարունակեց տանտիկինը, — մի ամիս առաջ ապստամբութեան ներ են հաւաքուել Ստօեանի մօտ, որոնց նա ճանաչում է:

— Եւ ի՞նչ, — հարցրեց հիւրը, հայեացքը մօրից աղջկայ վերայ ձգելով:

— Թո՛ղ նա միայն ապստամբութեան ներքին տրայ, և հօրը բանտից իսկոյն կ'արձակեն:

Մօկրան կրկին նայեց Իլենկային և հարցրեց. — Եւ նա չէ՞ կամենում անունները տալ:

— Չէ կամենում... — պնդեց զայրագնած տանտիկինը:

— Գուցէ նա մոռացել է... հը՞... —

— Մոռացե՛լ է... նա ասում է, թէ մոռացել է, բայց սո՛ւտ է: Նա խաբում է:

— Ինչո՞ւ համար է խաբում: Պատահում է...

որ մարդ չէ կարողանում մտաբերել: Այդպիսի ժամանակ պէտք է աւետարանի տակ կանգնել և խնդրել քահանային, որ օրհնած ջրով սրսկէ, թէ չէ՛ բան չի դուրս գալ... Այդ ոչ միայն մեզ կանանցս է պատահում, այլ և քահանաներին: Ա՛յ, Շու՛մլայում աւագ քահանան սկսում է օրհներգութիւն կարգալ և յանկարծ մոռանում է... Նայում է գրքին... Ը... Ը... Ը և ոչ մի բառ չէ կարողանում կարդալ: Ի՞նչ զարմանալու բան կայ, որ աղջիկը մոռացել է:

Տանտիկինը չիմացաւ, թէ ինչ պատասխանէ:

— Եթէ նա անհնազանդ է — այդ վատ է, շատ վատ. իսկ եթէ ասում է... թէ մոռացել է... դա պատահում է: Ժամանակ տուէք, որ մտաբերէ: Երբեմն մարդ մի բան մոռանում է և ոչ մի կերպ չէ կարողանում մտաբերել. բայց և պատահում է, որ մոռանում է, յետոյ առանց որ և է պատճառի մտաբերում է... Ինձ հետ ահա որպիսի դէպք եղաւ, ես մոռացել էի եղբօրս անունը... մոռանա՛լ եղբօր անունը: Կտուած

բան չէ այդ: Բայց մոռացել էի... իսկ քեզ, զոն-  
չի, այդպիսի բան չէ՞ պատահել:

— Եղել է, որ ես էլ եմ մոռացել, — պատաս-  
խանեց տանտիկինը, — բայց ես կըմտաբերէի, եթէ  
այդ հարկաւոր լինէր հօրս ազատելու համար:  
Չէ՞ որ հայրն է... հայրն է բանտում:

— Ես ընցի, որ քեզ թոյլատրել են տես-  
նուելու, — ընդհատեց Մօկրան:

— Այո՛, թոյլատրեցին:

— Ես դորա համար էլ եկել եմ, որ իմա-  
նում, թէ ինչ կայ այն տեղ, ինչ չկայ:

— Ի՞նչ պիտի լինի որ... Հաջի Խրիստօն չըզ-  
թայակապ է:

— Է՛հ... Այդ դեռ մեծ դժբաղդութիւն չէ...  
Ինչ ուզում է, թող լինի, քանի որ քեզ թոյլ են  
տուել նորա հետ տեսնուելու — նշանակում է, որ  
չուտով նորան կ'արձակեն:

— Նորան վաղը կ'արձակէին, եթէ էս աղջի-  
կը չխառնէր, — պատասխանեց հաջի Խրիստիցան:

— Թող միայն դաւակիցները անունները տայ, իս-  
կոյն և եթ դատուելու տեղ միայն վկայ կըլինի:

— Վկա՞յ... Պս... — արտասանեց արհամար-  
հանքով Մօկրան: — Այդպիսի պատիժները լաւ  
չեն...

— Հօ աւելի լաւ է, քան թէ բանտում նըս-  
տել:

— Չէ, կախազանից էլ վատ է:  
Իլենկան այնպէս նայեց հիւրի վերայ, կար-

ծեա թէ կամենում էր իւր անկեղծ շնորհակա-  
լիքը յայտնել նորան:

— Այնու ամենայնիւ մի՛ վախենալ, — շարու-  
նակեց Մօկրան, — բան չեն անիլ նորան... նա  
փողով կ'ազատուի:

— Առանց այն էլ փողով պիտի դուրս գայ,  
լալագին պատասխանեց տանտիկինը:

— Եթէ ափսոսում էք փողը, մի՛ վճարէք:

— Ի՞նչ է, կ'հրամայես, որ կախազան գնայ:

— Եթէ հաջի Խրիստոյին կախեն, շուտ կը  
գայ այն ժամանակը, երբ բուլղարներին չեն կա-  
խիլ նորա համար, որ նոքա բուլղար են:

Հաջի Խրիստիցան լիովին չհասկացաւ հիւ-  
րին, իսկ իլենկան շատ լաւ հասկացաւ ասածը:  
Նա կրկին դժուր թեամբ նայեց Մօկային և ըս-  
կսեց ուղղել իւր շորը, իսկ այդ միջոցին Մօկ-  
րան ապացուցանում էր տանտիկնոջ, որ մարդուն  
ոչ մի վտանգ չէ սպառնում, որ վերջ ի վերջոյ նա  
կարող է կաշառքով ազատուել. փող հօ շատ ունի:

— Փարա, փարա... — ասում էր նա: — Ով որ  
քո մարդու պէս ընդունակ է փող վաստակելու,  
նա շուտով կըհարստանայ: Ի՞նչ բան է նորա  
համար հազար կամ երկու հազար մէջլիդիէն: Գու-  
քո մարդու վերայ այդքան էլ մի՛ մտածիլ: Նա  
խոշոր ձուկ է: Մի քիչ կըարորեն և բանը կը-  
վերջանայ:

Տանտիկինը դժգոհ էր Մօկրայի արհամար-  
հական խօսքերից հաջի Խրիստոյի մասին, բայց

Մօկրան դիտմամբ էր այդպէս խօսում: Նա ուզում էր գործը ցոյց տալ այնպէս, ինչպէս իրօք էր և կամենում էր հանդստացնել իլենկային, որի ձեռքումն էր ապստամբուողների անվտանգ լինելը:

XIV.

Մտօեանի բանը լաւ էր գնում. կոյր բախտը օգնեց նորան Մտանկոյի բնակարանից դուրս գալու: Նա արդէն պատրաստուել էր քնելու, երբ լսեց. «Հեռացի՛ր, Մտօեան»: Իսկոյն և եթ նա վազեց բակը, ցանկի վերայից թռաւ և աննկատելի հասաւ Մօկրայի պարտիզի պարսպին: Այդ քարէ պատը բաւական բարձր էր և վերայից ապակիներ էին ցցուած, ուստի և դժուար էր միւս կողմը անց կենալ: Մակայն այն մարդը, որ իւր կեանքն է փրկում, այդ խոչընդոտին էլ կը յաղթի: Նա բռնուեց ցցուած ապակիի կտորներէից, բոլորովին ուշադրութիւն չդարձնելով, որ մատները կտրատվում են: Վիրաւորուած, արիւն նազանդ, պատառոտած շորերով թռաւ պարտէզ և ընկաւ մորի խիտ թփերի մէջ, որ տնկուած էին պատի մօտ: Այս թփերում նա շատ լաւ կարող էր թաղնուել: Ոչ տանեցիները, ոչ էլ ուրիշները կարող էին նկատել: Նորա համար

մանաւանդ կարևոր էր, որ տանեցիները չնկատէին. նա անձամբ չէր ճանաչում ծառաներին և հասկացողութիւն չուներ, թէ որին կարելի էր հաւատ ընծայել, որին ոչ: Իսկ այստեղ մորի թփերը շատ լաւ ծածկում էին նորան, թէ և ինքը կարող էր նկատել ուրիշներին: Յարմար տեղ ընտրելուց յետոյ՝ նա նստաւ և սկսեց ըստ պատել Պեօտրին, Մօկրային կամ Անկային, որոնց ինքը ճանաչում էր և նոքա էլ սորան:

Ասում են, թէ սպասելը կրճատում է ժամերի թիւը: Բայց Մտօեանին թւում էր, թէ ժամերը անվերջ են տևում: Իրաւ է, նորա քունը սաստիկ տանում էր, բայց վախենում էր քնել և մի և նոյն ժամանակ ոյժ չունէր, որ քունը փախցնէր: Փորձեց մտածել, բայց մտածելն էլ չխանդարեց աչքերը փակելուն, և նա լաւ զգում էր, որ եթէ մի անգամ գոնէ արտեանունքը խփուին, կըքնի: Պէտք էր մի ուրիշ բանով զբաղուել: Սկսեց դիտել մօրենու տերեւներն ու սստերը, և համեմատել ուրիշ ծառերի հետ: Այս դիտողութիւնից առաջացաւ մի հարց. արդեօք չէ՞ կարելի պատուաստել զանազան բոյսեր: Իսկ այդ հարցերից յետոյ նա սկսեց մտածել իլենկայի վերայ: — Ափսո՞ս, — հողուոց հանեց, — ինձ համար նա կորաւ:

Մտածել մի էակի մասին, որ ընդունակ է երջանկացնել միւսի կեանքը, մի արտասովոր բաւականութիւն է պատճառում մարդու. այդ պատ-



ճառով էլ Ստօեանը չմտածեց զանազան բոյսեր պատուաստելու վերայ, այլ Իլենկային նուիրեց իւր ուշն ու միտքը: Այս մտքերը կամաց-կամաց սկսեցին երեւակայական պատկերների փոխուել, և նա կարծում էր, թէ մտածում է, բայց իրօք քնած էր:

Մարդու քունը կարող է ամեն մի վտանգաւոր փորձանքի ժամանակ: Մարդս երբեմն քնում է և այն ժամանակ, երբ զենդակները կարկառի պէս տեղում են, երբ զէնքերը շառաչում են, և այդ պատճառով էլ ոչինչ զարմանալի բան չկայ, որ յոգնած երիտասարդը այնպէս խոր քնեց իւր տաք, հանդիստ տեղում, որ չէր լսում թփերի շրջիւնը, երբ մի կանացի դէմք անցնելու ճանապարհ էր բաց անում նոցա մէջ: Դա Անկան էր:

—Ո՛հ, սա նա է...— շնչեց օրիորդը, մի անգամից ճանաչելով Ստօեանին: Նա աւելի ևս մօտեցաւ և նայեց նորան: Նայեց, և մի անհասկանալի զօրութիւն բեւեռեց նորա հայեացքը Ստօեանի վերայ: Նա չէր կարողանում աչքը հեռացնել նորա դէմքից, որ հանդարտ շունչ էր քաշում, նորա անշարժ կերպարանքից, այդ երիտասարդից, որի կեանքը մազից էր կախուած: Հաւանական կարող է լինել, որ այս հանգամանքը նպաստեց Անկային չկշտանալ այդ երիտասարդի վերայ նայելուց, որ առաջ ոչ մի տըպաւորութիւն չէր անում նորա վերայ: Նա մի

քնքոյշ կարեկցութիւն զգաց, և որքան չաս էր նայում Ստօեանի վերայ, այնքան էլ զարգանում էր և աճում այդ զգացմունքը: Սկսեց մտածել Ստօեանին ազատելու միջոցների մասին: Նա պաշարաստ էր այդ միջոցին փախստականին ծածկել իւր լանջով, այնպէս ծածկել, որ բացի իրենից ոչ ոք չտեսներ:

Ոչ մայրն էր տանը, ոչ էլ եղբայրը: Մօկրան դնացել էր խանութ, իսկ եղբայրը առևտրական դործերով հեռացել էր, դորա համար էլ Ստօեանի միակ հովանաւորը և պատասխանատուն օրիորդն էր: Շնորհիւ այն պայմանների, որոնցով նա կրթուած և մեծացած էր, օրիորդը լիապէս հասկանում էր, թէ որքան կարևոր է իւր պատասխանատուութիւնը և հովանաւորութիւնը, ուստի անյապաղ սկսեց խնամք տանել երիտասարդին անվտանգ պահելու մասին: Նախ և առաջ այնպէս պէտք էր անել, որ ծառաները պարտէզ չգային, և այդ նպատակին հասնելու համար Անկան այնպիսի յանձնարարութիւններ տուեց ծառաներին, որոնք ոչինչ յարաբերութիւն չունէին պարտիզի հետ: Յետոյ նա շտապով մի նոր սենեակ պատրաստեց նորա համար, եկաւ պարտէզ, նստաւ այնպիսի մի տեղ, ուսկից կարող էր տեսնել այն թփերը, ուր քնած էր կօմիտաջին: Նա աչքը չէր պոկում այդ թփերից և նայելով նոցա վերայ, անձնատուր եղաւ իւր սովորական մտածմունքին՝ կուսանո-

ցին, բայց շուտով նորա մտածմունքները փոխուեցան՝ կուսանոցի խցերից անցան դէպի նորապսակների տնտեսութիւնը: Նորա երեւակայութեան ստեղծած պատկերը մշուշապատ էր, այնպէս որ Անկան դրականապէս չէր կարող ասել, ինքը այդ տեղ դեր է խաղում, թէ ոչ: Այսպէս թէ այնպէս օրիորդն ինքն իրեն ասաց. «ես ինքքս հոգս կըքաչեմ նորա մասին... ինքս», և այս վճիռը այնպիսի բաւականութիւն պատճառեց նորան, որ եթէ ասէին. «գնա՛ այս բոլորէիս կուսաստան, իսկ եթէ չգնաս, մտքիցդ հանի՛ր այդ» — նա չէր կարողանալ երկուսից մէկը վճռել և կրմտածէր:

Օրիորդը իւր խնամատարութիւնը պիտի սկսէր Ստօեանին նորա համար պատրաստած սենեակը տանելով: Դա հեշտ բան չէր, որովհետեւ այնպէս պէտք էր արած, որ ծառաներից ոչ ոք չտեսնէր նորան պարտէզն անցնելիս: Ի՞նչ արած: Կարելի էր, ի հարկէ, ծառաներին հեռացնել պարտիզից, բայց կարող էր լինել և մի անակընկալ դէպք: Կարելի էր սպասել, մինչև որ գիշերը կ'հասնէր, բայց այդ դէպքում էլ նա ողջ օրը պիտի նայէր թփերին և միջոց չէր ունենալ Ստօեանի համար կերակուր պատրաստելու: «Երևի, նա շատ քաղցած է», ասաց ինքքն իրեն Անկան և սկսեց մտածել կերակրի մասին: Բայց ինչպէ՞ս նորան սենեակ տանեմ: Այս հարցով նա զբաղուեց և վերջապէս վճռեց: Ան-

կան շատ ուրախացաւ իւր մտածածի վերայ և քիչ էր մնացել, որ ծափահարէր: Ոչ ոք, երևի, Ստօեանին չի ճանաչիլ, եթէ նա կնկայ շոր հագնի: Իսկոյն տուն վազեց, առաւ իւր ծածկոցն ու քողը, որոնցով սովորաբար փողոց էր դուրս գալիս, կապեց և գաղտուկ պարտէզ վազեց, որ մարդ չտեսնէ: Նա իւր քայլերն ուղղեց դէպի այն կողմը, ուր քնած էր Ստօեանը և կամենում էր կապոցը նորա մօտ դնել: «Տեսնես, քնած է, թէ արթուն», — մտածեց օրիորդը: Նա նորից կանգ առաւ, նորից մի քանի քայլ առաջ գնաց, յետ նայեց, նորից կանգնեց և վերջապէս մօտեցաւ թփին, բայց չհամարձակուեց ճիւղերը շարժել: Նա կանգնած լսում էր և վերջապէս վստահացաւ մտնել թփերի մէջ:

— Այս ի՞նչ է նշանակում... ոչ ոք չկայ... ո՞ւր է գնացել... — Նա վախեցաւ և տխրեց: Նա չէր կարողանում հասկանալ, թէ ուր գնացած կըլինի Ստօեանը: Չէ՞ որ օրիորդը աչքը չէր հեռացնում թփերից: Ո՞ւր է նա...

Այնպէս անսպասելի կերպով նա դուրս եկաւ Անկայի առաջ, որ սա մինչև անգամ բացականչեց. — ա՛խ:

— Կամաց, — շշնջեց Ստօեանը, — ես սպասում էի Մօկրային, Պեօտրին կամ քեզ, որ ձեզանից ապաստան խնդրեմ:

— Ա՛ռ, — ասաց օրիորդը, տալով կապոցը: Ստօեանը առաւ կապոցը, նայեց, քակեց,

տեսա՛ւ մի չարսաւ և հարցրեց. «Սա ի՞նչ է»:  
Օրիորդը այնպէս շփոթուեց, որ բոլորովին  
բան չկարողացաւ պատասխանել, իսկ Ստեփանը  
հարցրեց. — «Ի՞նչ համար է սա»:

— Հա, քեզ համար է:

— Հըմ... պէտք է հագնե՞մ:

— Այո՛, — շշնջեց Անկան, — չհամարձակուելով  
աչերը վեր բարձրացնել:

— Իսկ միրուքս ու բեխերս ի՞նչ անեմ, —  
կատակի ձևով հարցրեց երիտասարդը:

Ինչպէս յայտնի է, կատակը սիրտ է տալիս  
երկչոտներին և մեղմացնում է բարկացած օրի-  
որդներին: Այս դէպքում էլ ազդեցութիւնը նո-  
բանում երևեց, որ Անկան նայեց Ստեփանին:

— Բայց քողի տակից բեխերս դուրս կը  
ցցուեն, — նկատեց Ստեփանը և սկսեց գլուխը  
քողով փաթաթել, որ կանայք դորձ են ամում  
ճաճկաստանում երեսը ծածկելու համար: Նա  
չկարողացաւ լաւ փաթաթել, և մի անճոռնի  
բան դուրս եկաւ, որ տղամարդի շորերի հետ  
միասին շատ ծիծաղելի էր:

— Հ՞ը, ինչպէ՞ս է... — հարցրեց Ստեփանը:

Անկան նայեց Ստեփանին և հրհռաց:

— Այժմ վրաս կըձգեմ չարսաւը:

— Ձէ՛, չէ՛, — բողոքեց օրիորդը:

— Ինչո՞ւ:

— Քողը ուրիշ կերպ պէտք է կապել:

Ստեփանը յետ արաւ քողը և նորից սկսեց  
փաթաթել:

— Ձէ, այդպէս չէ:

— Նախ և առաջ պէտք է ծալել, ինչպէս  
հարկն է:

— Ինչպէ՞ս. այսպէ՞ս:

— Ա՛հ, չէ, այդպէ՛ս չէ:

— Խնդրեմ, ինքդ ծալես:

Անկան ծալեց և տուեց Ստեփանին:

— Ինչպէ՞ս ապա կապեմ, — հարցրեց երի-  
տասարդը:

— Գնում են գլխին, յետոյ ծնօտի տակով  
անց կացնում և յետ տանում:

Ստեփանը գլուխը մօտեցրեց, և օրիորդը  
սկզբում անհաստատ, յետոյ աւելի համարձակ  
կապեց քողը իւր բոլոր կանոններով: Քողի ծալ-  
քերի տակ կորան բեխերն ու միրուքը, այն-  
պէս որ միայն երևում էին աչքերը, ճակատը և  
քթի վերին մասը:

— Ի՞նչ է, այժմ լա՞ւ է:

— Այո, կարելի է այդպէս թողնել. ա՛ռ  
ծածկոցը: — Անկան տուեց նորան մի երկայն սև  
ծածկոց (միայն տաճիկ կանայք կարող են կրել  
դոյնդոյն ծածկոց), որ նա իսկոյն ձգեց վերան,  
և այժմ, եթէ վարտիկն ու կօշիկները չլինէին,  
որ երևում էին ծածկոցի տակից, կարելի էր  
կնկայ տեղ ընդունել:

— Գնա՛նք, — ասաց նա:

— Սպասիր, — պատասխանեց Անկան. — սպասիր, մինչև որ ես գնամ... — և նա վազեց դէպի տուն, որ ծառաներին հեռացնէ: Մէկին հրամայեց, որ քայտաբերէ, երկրորդին ապրէշումի ուղարկեց և այն... Վերջինին էլ հեռացնելուց յետոյ նա պարտէզ վերադարձաւ:

Ստոեանը կարծում էր, թէ քաղաքի միջից պիտի անցնէ, ուստի ուշադրութիւն դարձնելով վարտիկի ու կոշիկների վերայ, նա ենթադրեց, թէ Անկան, երևի, գնաց հողաթափ և կնկայ վարտիկ բերելու:

— Ինչո՞ւ համար նա այդ քողի ու ծածկոցի հետ չբերաւ, — մտածեց Ստոեանը:

Անկան ճիշդ այն ժամանակ վերադարձաւ, երբ Ստոեանը իրեն վերոյիշեալ հարցը առաջարկեց. առանց մտնելու թփերի մէջ օրիորդը կանչեց. «Գնա՛նք»:

Ստոեանը դուրս եկաւ թփերից:

— Գնանք շուտով... — և օրիորդը առաջ վազեց:

Թէպէտ Ստոեանն այդ նոր շորերով ազատ չէր կարողանում ման դալ, բայց կրկին յետ չէր մնում իւր առաջնորդից: Նորա վազէ-վազ անցան պարտէզը, յետոյ բակը, էլի մի փոքրիկ բակ և այն տեղից ծածկապատ սանդուղներով վեր ելան, մտան նախասենեակը, յետոյ սենեակը, և այս տեղ Անկան բաց արաւ մի պահարան և ասաց. «Գնա՛ այն տեղ»:

տաւ պահարանը, որի յետին պատը բարձրացրած և նեցուկ էր տուած, գնաց այդ անկիւնը. յետոյ Անկան առաւ փայտը, պատը ցած իջաւ, և մեր երիտասարդը մնաց մի սենեակում, որի երկարութիւնը տասը քայլ կըլինէր, իսկ լայնութիւնը — չորս: Մի նեղ և բարձր պատուհան լուսաւորում էր այդ սենեակը, որ սնդուկի էր նըմանութիւն բերում: Այս տեղ կար անկողին, կային մանր-մունր իրեղէններ և մի պատի մօտ մի փոքր սանդուղք: Անկիւններից մինում յատակը կարելի էր բարձրացնել. այդ անցքի մէջ գնում էին սանդուղքը և գնում բակը, որ միացած էր ստորերկրեայ անցքի հետ: Այդ բոլոր գաղանիքը գեղեցիկ սեռի համար էր, որի ներկայացուցիչները հարկաւոր դէպքում կարող էին թագնուել:

Ընկնելով այդ տեղ՝ Ստոեանը սկսեց մի առ մի զննել սենեակը, մի քանի անգամ անց ու դարձ արաւ, նստաւ անկողնի վերայ և ինքն իրեն հարցրեց. «Ի՞նչ անեմ այժմ»:

Դեռ չկարողացաւ ինքն իրեն պատասխան տալ, յանկարծ մի նոր դէպք ընդհատեց նորա մտքերի ընթացքը: Պատի մի անցքից ներս իջաւ մի սկուտեղ, վերան քաղցրաւենի, շուր և սուրճ Ստոեանը վեր կացաւ, մօտեցաւ սկուտեղին և պատի միւս կողմում նկատեց Անկայի դէմքը: Երիտասարդը քաղցրաւենու համը տեսաւ, վրա-

յից շուր խմեց, առաւ սուրճը, շնորհակալ եղաւ  
և հարցրեց.

— Ասա՛ ինձ, Անկա, ինչո՞ւ համար դու ե-  
կար թփերի մօտ՝ հետդ ծածկոցն ու քողը ա-  
ռած:

— Որ քեզ ոչ ոք չճանաչէր, երբ պարտիզից  
պիտի անցնէինք:

— Քեզ ո՞վ ասաց, որ ես պարտիզումն եմ:

— Ոչ ոք:

— Չէ՞ որ դու ինձ համար բերիր քողն ու  
ծածկոցը:

— Հա, քեզ համար, սրովհետեւ քեզ մատ-  
նելու համար պարզեւ են խոստացել:

Ստօեանը տեղեկութիւն չունէր, որ իւր գը-  
լուխը գնահատուած է:

— Պարզե՞ւ են խոստացել իմ գլխի համար:

— Մինչև անգամ մեծ պարզեւ — հազար զը-  
րուչ:

— Չգիտէի... չգիտէի...

— Այո՛, հազար զրուչ են խոստանում, —  
կրկնեց օրիորդը և հեռացաւ:

Ստօեանը կրկին մենակ մնաց, նորից սկսեց  
մտածել, նորից ցած իջաւ սկուտեղը և լսուե-  
ցաւ Անկայի ձայնը.

— Համեցէք, — հրաւիրեց օրիորդը, առաջար-  
կելով նախաճաշիկ, որ բազկացած էր ապուխ-  
տից, երչիկից, խաւեարից, պանրից, ձիթապ-  
տուղից, հացից և մի շիշ գինուց: Ստօեանը ա-

ռաւ և ուզեց խօսակցութիւն բանալ, բայց ոչ  
ոք չկար. օրիորդը իսկոյն հեռացել էր: Սկսեց  
ուտել: Երկու օր քաղցած մնալուց և այն ան-  
նշան պաշարից յետոյ, որ նա ստացաւ կրիվենա-  
յում, օրիորդի բերածը մի արտասույժը համե-  
ղութիւն սնէր, և ինչ որ սկուտեղում կար, բո-  
լորն էլ կերաւ: Յետոյ նա դրեց սկուտեղը մի  
անկիւնում, պառկեց և սպասեց Անկայի դալուն:  
Փամերն անցնում էին. նա նայում էր այն անց-  
քին, ուսիկց կերակուր էր ստանում, բայց ոչ  
ոքի չէր տեսնում: Առ այժմ չէր տխրում, բայց  
զգում էր, որ եթէ երկար տեւի այդ դրութիւ-  
նը, սարսափելի տխուր կլլինի: Վեր կացաւ, նո-  
րից պառկեց, ծանօթացաւ իւր նոր բնակարանի  
բոլոր մանրամասնութիւնների հետ, համոզուեց,  
որ պէտք է խորին լռութիւն պահպանել, որպէս  
զի չզրաւի ծառաների ուշադրութիւնը և վերջ  
ի վերջոյ ասաց.

— Կարելի է խելագարուել, եթէ մի քանի  
օր մնալու լինիմ այս տեղ... Ինչո՞ւ Անկան չէ  
գալիս:

Միայն երեկոյեան եկաւ — ոչ թէ Անկան,  
այլ Մօկրան:

— Բարեւ ես եկել, — ողջունեց նա Ստօեանին:

— Մօկրա, — հարցրեց նա, — երկա՞ր պիտի  
մնամ այս տեղ:

— Մինչև որ Պետրը գայ... մի քանի օր:  
Գուրս-գալ քեզ անկարելի է, սրովհետեւ ամեն

տեղ քեզ են որոնում: Ձերբակալել են արդէն հաջի Խրիստոյին, Ստանկոյին, Պետկային, Գէորգին, Մարկոյին:

— Ինչպէ՞ս են իմացել իմ մասին, — զարմանում էր Ստանկոն:

— Ակներև է, որ նոքա հետևել են քեզ և չգիտեն միայն, թէ Ստանկոյից ուր ես գնացել...

— Չարմանալի է... շատ զարմանալի:

— Երևի, մէկը քեզ նկատել է:

— Ես միայն չների... պատահեցի... Միթէ հաջի Խրիստոյից են իմացել... Բայց նա էլ չգիտէր, թէ իրանից ուր եմ գնում:

— Մի խօսքով տաճիկները հետևել են քեզ մինչև Ստանկոյի տունը, իսկ յետոյ կորցրել են... Ամեն տեղ քեզ են որոնում. հաւանական է, որ այս տեղ էլ գան, բայց խուզարկելու ժամանակ ես նոցա կ'օգնեմ մինչև անդամ... Միայն ազմուկ չհանես, հանգիստ նստիր... Այս տեղ դու ոչ մի բանի կարօտութիւն չես ունենալ:

Այս ասելով Մօկրան հեռացաւ, իսկ ապա շուտով մօտեցաւ անցքին Անկան և կերակուր բերաւ:

— Առաւօտեան ես մոռացայ բերել քեզ համար ծխախոտ. ահա քեզ ծխախոտ էլ, թուղթ էլ, լուցկի էլ:

— Շատ շնորհակալ եմ, բայց ես չեմ ծխում:

— Գուցէ նարգիլէ կամենաս:

— Չէ, չէ, բայց...

Նա կամեցաւ մի բան հարցնել, սակայն Անկան խնդրեց առաւօտեան բերած սկուտեղը, առաւ և հեռացաւ:

Ստօեանը լաւ կերաւ, յատակը բարձրացրեց, սանդուղը դրեց, որ գիշերը դուրս գայ օդ ծածելու, և կամենում էր պառկել քնելու, բայց յանկարծ լսեց.

— Ստօեան, — կանչեց նորան Անկան:

— Հը՞, — հարցրեց նա մօտենալով անցքին:

— Տո՛ւր ինձ սկուտեղը:

Ստօեանը առաւ սկուտեղը և մօտեցաւ անցքին:

— Բան չի՞ հարկաւոր, — հարցրեց օրիորդը:

— Միայն մարդու ձայն է հարկաւոր ինձ... Գու գալիս ես և իսկոյն, կարծես, բորոտից յետ ես փախչում:

— Ե՞ս... — հարցրեց օրիորդը. — Ե՞ս... չե՛մ փախչում:

— Քեզ հետ չի կարելի մինչև անգամ փոքր ինչ խօսել:

— Խօսի՛ր:

— Ի՞նչ լուր կայ հաջի Խրիստոյից:

— Մայրս նոցա մօտ էր: Հաջին բանտումն է, իսկ տանը լաց են լինում... և քեզ անիծում:

— Չեմ հասկանում, թէ տաճիկները ինչպէս են իմացել, որ ես եղել եմ նոցա տանը: Չլինի՞

Թէ ինքը հաջի Խրիստոն անզգուշաբար բերնից խօսք է դուրս թողել կամ թէ Ստեփանը:

— Չեմ իմանում, — պատասխանեց օրիորդը:

— Չէ՞ կարելի իմանալ այդ:

— Լաւ, կը հարցնեմ... կը հարցնեմ Իլենկային:

— Հա՛, երևի, Իլենկան իմանում է. երբ նորա հետ խօսելու լինիս, խնդրիր, որ որոնէ իմ սենեակում մի թղթի կտոր, որ դրել եմ պահարանի դռան ճեղքում: Այ կողմի երկրորդ պահարանը... Հաջի Խրիստոն այնպէս անսպասելի կերպով ինձ արտաքսեց, որ ես չկարողացայ առնել այդ թղթի կտորը: Վա՛յ, եթէ նա տաճիկներին ձեռքն ընկնի:

— Այդ ինչպէս, — հարցրեց Անկան. — այն ժամանակ պէտք է ասել Իլենկային, որ դու մեզ մօտ ես:

— Ասե՛լ... հը՛մ... ի՞նչ ես կարծում:

— Հօ նա կարող է հարցնել, թէ ես ինչ տեղից գիտեմ այդ թղթի մասին:

— Այո, երևի, պէտք կը լինի ասելը:

— Ես կը ստիպեմ նորան երդուել...

— Հա... Իսկ Ստանկոյից անդեկութիւն չունի՞ս:

— Խեղճ կինը շատ է դարդ անում:

— Եթէ տաճիկները սպանեն Ստանկոյին կամ կախեն, ես չեմ ներիլ ինձ կնոջ և որդկերանց օրբութիւնը:

— Աստուած չի վերաւորիլ ոչ նորան, ոչ էլ որդկերանց... Նա քեզ ևս ազատեց:

— Խե՛ղճ, խե՛ղճ Ստանկօ:

— Աղօթիր նորա համար և ապաւինիր Աստուծուն: Առանց նորա կամքին մի մաղ անգամ չի ընկնիլ Ստանկոյի գլխից: — Ով որ լսէր, ինչպէս Անկան արտաստնեց այս խօսքերը, առանց դժուարութեան կ'հասկանար, որ օրիորդը պատրաստուած էր կուսանոց մտնելու. իսկ եթէ այժմ նա ստիպուած լինէր գնալու, դուցէ գնար, բայց կ'ախտսէր, որ հրաժարուած է այս կեանքից:

Ստեփանը լաւ քնեց, իսկ հետեւալ օրը չորս անգամ խօսեց Անկայի հետ: Վերջին անգամ՝ սա այն թուղթը բերաւ, որի համար Ստեփանը անհանդատանում էր: Գա այն հաշուի ընդօրինակութիւնն էր, որ ուղարկուած էր Բուքարեշտի յանձնաժողովին Ռուչչուկի ընկերութեան հաստատման և երդման մասին: Այդ թուղթը այն կարևորութիւնն ունէր, որ այն անգ շնանակած էր յանձնաժողովի հաստատութեան ամիսն ու թիւը, նոյնպէս և ապստամբողների անուանց գլխատառերը: Այս վկայաթուղթը Ստեփանը լուցկիով այրեց և ջերմ շնորհակալութիւն յայտնեց Անկային բերելու համար:

— Ծնորհակալ եմ... շատ շնորհակալ... դու խիղճս հանդատացրիր:

— Գոհ եղի՛ր Աստուծուց:

—Որ քեզ ինձ մօտ ուղարկեց...

Այս խօսքերը այնպիսի մեծ հաճոյք պատ-  
ճառեցին Անկային, որպիսին նա երբէք չէր ըզ-  
գացել:

XY.

Արիստարխի-բէյը եռանդով էր քննութիւնն  
առաջ տանում: Կասկածելիների թիւը խիստ  
շատ դուրս եկաւ: Զախթիները էլ չէին նայում.  
ամէն մէկին կալանաւորում էին քաղաքներում,  
իսկ գաւառներում չեքքէսները և առ հասարակ  
մուսուլմանները գիւղական պահապաններն էին,  
որոնք ամէն մէկին, ով որ կասկածելի էր թը-  
ւում, կապում էին և բերում ոստիկանատուն:  
Օրը մի քանի անգամ բերում էին այսպիսի կաս-  
կածելիների խմբեր և իւրաքանչիւր անգամ որ  
և է մէկին բանտ էին ձգում: Այդ դէպքերում  
ոչ մի նշանակութիւն չունէին ապացոյցները: Բա-  
նը նրանում է, որ կառավարութիւնը այդ «հը-  
րէչային գործի» շնորհիւ կամենում էր ցոյց տալ  
Եւրոպային եւրոպական կառավարութիւններից  
մէկի «խորամանկութիւնները», որ շատ էր հե-  
տաքրքրվում Բ. Գոան հպատակների վիճակով:  
Գորա համար էլ գործը սկսուած էր յայտնի նը

պատակով և կատարվում էր շատ մեծ կողմնա-  
պահութեամբ և աչառութեամբ: Գործի գլխա-  
ւոր կենտրոնը պիտի լինէր Ստոեանի մօտ եղած  
ժողովը, որին մասնակից եղածների անունները  
իլենկան չէր ուզում տալ: Այդ պատճառով էլ  
Արիստարխի-բէյը անպատճառ կամենում էր ի-  
մանալ հաւաքուածների անունները:

—Ի՞նչ է,—հարցրեց քննիչը հաջի Խրիստո-  
յին, երբ երկրորդ անգամ եկաւ:

—Ահա, համարիր,—պատասխանեց արգել-  
ուածը, տալով ոսկով լի տոպրակը:

—Քեզ պէս ազնիւ վաճառականի խօսքին  
էլ կարելի է հաւատալ: Գու համարե՞լ ես:

—Համարել եմ:

—Ուրեմն ճիշտ է: Դէհ, ա՞յժմ...

Հաջի Խրիստոն ուսերը վեր քաշեց:

—Ազգանունները,—վերջացրեց քննիչը:

—Ես միայն երկուսին գիտեմ. Ստոեանին  
և Ստանկոյին. երրորդին չեմ իմանում, թէ ինչ-  
պէս են կոչում, իսկ եթէ ես տեսնեմ, կըճա-  
նաչեմ:

—Գու առաջին ժողովի մասին ես խօսում...  
պարտիզում եղածի: Ես հրամայել եմ, որ ար-  
ձանագրութեան մէջ այդպէս էլ վերնագրեն.  
«ժողով պարտիզում», իսկ այժմ պատմիր երկ-  
րորդի մասին՝ սենեակում...

—Բան չեմ իմանում, էֆէնդըմ-բէյ:

—Հօ կինդ ու աղջիկդ եղա՞ն քեզ մօտ:



— Այո, եղան, բայց նորա էլ բան չեն իմանում:

— Իսկ ծառաներդ:

— Ծառաներս նոյնպէս բան չեն իմանում:

— Հը՛մ... գիտե՞ս, այժմ՝ ես սկսում եմ կասկածել, որ դու էլ խառնուած ես այդ գործում:

— Թող պատուով դետինը և ես կործանուեմ, եթէ որ և է մասնակցութիւն ունիմ այդ բանում: Ահա, Աստուած վկայ...

— Զուր տեղը մի՛, երգուիլ,— կանգնեցրեց նորան բէյը.— ես լիովին հաւատացած եմ, որ դու ոչ մի պարսաւելի գործի չես մասնակցիլ, մանաւանդ որ ես առանց քեզ չէի էլ իմանալ, որ պարտիզում ժողովուել են, այնու ամենայնիւ կասկածելի է:

— Ի՞նչ անեմ,— լաց եղաւ հաջի Խրիստօն:— Ինչպէ՞ս ասեմ այն, ինչ որ չեմ իմանում:

— Իմացի՛ր:

— Մի՞թէ բանտում նստած կարելի՞ է իմանալ:

— Հը՛մ... ուրեմն դու կամենում ես, որ քեզ արձակե՞մ: Լաւ:

Հաջի Խրիստօն ուրախացաւ և գոհ նայեց քննիչին:

— Բայց ես քեզ կ'արձակեմ հետեւեալ պայմանով. դու էլի հարիւր մէջիդիէ կըտաս և անդեկութիւն կ'հաւաքես:

— Որ այդպէս է, ուղարկիր ինձ մօտ կընկանս:

— Ինչո՞ւ համար:

— Որ գնայ փող բերելու:

— Դու ինքդ կ'առնես: Ես հօ հաւատում եմ քեզ... դու կարգին և ազնիւ մարդ ես. քեզ այժմ և եթ բաց կը թողնեն, միայն պիտի պատմեմ, թէ ապագայում ինչպէս պէտք է վարուես:

— Ինչպէ՞ս,— հարցրեց ուրախացած վաճառականը:

— Նախ և առաջ զգոյշ պէտք է լինես. Պարզ ոչ ոքի հարց ու փորձ մի՛ անիլ, բայց այնպէս՝ աննկատելի կերպով և անշուշտ հայրենասէր քեզ պիտի ներկայացնես: Բանա նստելունկատելի կերպով կըթեթեացնէ գործդ: Տխմարները մինչև հիմայ էլ ասում են. «Տե՛ս, թէ ինչ մարդ դուրս եկաւ հաջի Խրիստօն... Իսկ ինչ էր երևում, ինչպէս խոնարհ էր»: Ահա՛, դու էլ բաց կերպով խօսակցութիւն սկսիր մէկի, միւսի հետ, իսկ ես այդ միջոցին կըխուզարկեմ քեզ: Գուցէ մի բան էլ գանուի այն սենեակում, ինչ տեղ Ստօեանն էր բնակվում:

— Խուզարկութիւնը ե՞րբ կըլինի:

— Ա՛յ, այս օրերս: Ստօեանի սենեակում այժմ մարդ բնակվում է:

— Ոչ ոք:

— Նայի՛ր հա, որ ոչ ոք բան ձեռ չտայ այն

սենեակում: Այժմ ես կըհրամայեմ, որ քեզ կանչեն հարց ու փորձի, իսկ յետոյ կըզնաս տուն:

Հաջի Խրիստոն երկար չսպասեց: Արիստարխի-բէյի զնալուց մի կէս ժամ յետոյ ներս մտաւ մի զաւիթի և տարաւ բանտարկեալին քննութիւն անողների մասնաժողովը: Այստեղ Արիստարխի-բէյը աղայի, քարտուղարի, գրագրի և օտարազգի հիւպատոսների մի քանի թարգմանների ներկայութեամբ սկսեց հարց ու փորձ անել: Նախ և առաջ նա հետաքրքրուեց պարտիզում տեղի ունեցած ժողովով:

—Ո՞վ կար այդ ժողովում:

—Ստօեանը, Ստանկոն և էլի մի երիտասարդ:

—Իսկ դու չէի՞ր խորհրդակցում նոցա հետ:

—Չէ, չէի խորհրդակցում:

—Ապա ինչպէ՞ս դու իմացար, որ ժողով է եղել:

—Ես պատուհանից տեսայ նոցա:

—Ինչո՞ւ դու նոցա ազգանունները իսկոյն չասացիր:

—Ես այժմ միայն մտաբերեցի:

—Այն ժամանակ, երբ քեզ ասացին, —յանդիմանեց քննիչը:—Լաւ. իսկ երկրորդ ժողովին ո՞վ էր մասնակից:

—Այդ ժամանակ ես տանը չէի:

—Բայց դու լսեցիր նորա մասին:

—Այո, լսեցի, բայց ուշադրութիւն չդարձրի:

—Գիտե՞ս, որ դաւադիրները դիմակաւորուած էին:

Այս հարցը ազդեցութիւն արաւ: Օտար պետութիւնների թարգմանները զարմացած նայեցին Արիստարխի-բէյի վերայ, որ պատասխանեց նոցա դէմքի արտայայտութեամբ. «Տեսնո՞ւմ էք, բանը ինչ տեղ է հասնում», — իսկ հաջի Խրիստոն այդ միջոցին պատասխանեց.

—Կարծեմ... չգիտեմ... ես տանը չեմ եղել, իսկ Ստօեանին ես դրական մարդ էի համարում:

—Ա՛յ, տեսնո՞ւմ ես, որքան խաբուսիկ է արտաքին տեսքը, — խրատեց քննիչը. — պէտք է ենթադրել, որ այսույետ զգուշութեամբ կ'ընտրես քեզ համար օգնականներ: Քեզ մօտ ծառայողի շնորհիւ այնքան, ըստ երևութին, կասկածելի ապացոյցներ են հաւաքուել քո դէմ, որ քիչ է մնում յանցաւորների շարքը ընկնես: Բայց որովհետեւ մանրազնին քննութիւնը ցոյց տուեց, որ դու անձամբ մասնակից չես եղել ապօրինի դործերին, և բացի դորանից ինկատի առնելով քո օրինակելի կեանքը և այն հանգամանքը, որ սուլթանի կառավարութիւնը չէ կամենում հալածել ու և իցէ առանց հիմնական պատճառների, ազատում եմ քեզ դատապարտութիւնից՝ սակայն այն պայմանով, որ միշտ գաս հարց ու փորձի, երբ պահանջեն և բացի դորանից, պիտի

աշխատես պարզել այն մութ յանցաւոր գործերը, որոնց անկասելի հետեւանքը սպանութիւններ են եղել:

Այս ճառը, որ նա արտասանեց օտարազգի հիւպատոսներէի հասցէին, դուր եկաւ թարգմաններին, որոնք ի նշան հաւանութեան գլուխները շարժեցին: Արխատարխի-բէյը հրամայեց, որ իսկոյն հաջի Խրիստոյի կապանքները հանեն և իւր կողքին նստան նստեցրեց:

— Դու, երեի, տուն ես շտապում, — ասաց նա մեղմօրէն: — Դու ուզում ես կնոջը և աղջկանդ տեսնել: Այդ բոլորն ես շատ լաւ եմ հասկանում, բայց կարճ միջոցից ինձ պէտք կը լինիս:

Հաջի Խրիստոն նստաւ բազմոցի վերայ. նորա համար սուրճ և ծխամորճ բերին, իսկ Արխատարխի-բէյը բացատրեց օտարազգի ներկայացուցիչներին դաւադիրներէի դիմակ գործածելը:

— Նոքա շատ հասարակ կերպով են անում: Փողոցով առանց դիմակի են անցնում և միայն տուն մտնելիս են հագնում, որպէս զի ծառաները չճանչեն: Այդպիսով այդ պարտնները չափազանց դժուարացնում են քննութիւնը, բայց մենք արդէն հետքը գտել ենք:

Այս բացատրութեան ժամանակ բերին Ստանկոյին:

Արխատարխի-բէյը վեր առաւ մի գրոտած թերթ և դառնալով կալանաւորին հարցրեց.

— Այս ինչ թուականի մայիսի վեցին եղե՞լ ես հաջի Խրիստոյի պարտիզում:

— Չգիտեմ, այդ երբ է եղել, բայց ես արդարեւ եղել եմ հաջի Խրիստոյի պարտիզում:

— Երե՞ք հոգի էիք այն տեղ:

— Այո, երեք հոգի:

— Ասա ինձ նոցա անունները, որոնք քեզ հետ այն տեղ էին:

— Ես չեմ կարող ասել:

— Ինչո՞ւ:

— Եթէ այն տեղ եղածները կարող են ենթարկուել հալածանքի, ես պատրաստ եմ միայն ինձ համար պատասխան տալ, իսկ ուրիշներին ես չեմ կարող թշուառութեան մէջ ձգել: Ես խիղճ ունիմ:

— Սակայն խիղճդ քեզ չէ արգելել մասնակից լինել յանցանքի:

— Ինչ որ դու, բէյ, յանցանք ես անուանում, մարդիկ առաքինութիւն են կոչում:

— Դու մոռանում ես, որ կին ունիս, երեխայք, որոնք շնորհակալ չեն լինիլ քեզանից առաքինութեան վերայ ունեցած հայեացքիդ համար:

— Կարող է լինել, որ ընտանիքս կարօտութեան մէջ կը մնայ, բայց կինս չի ամաչիլ իւր մարդու և որդիքս — իրենց հօր համար... Լրտես լինել չեմ կարող, ուստի նեղութիւն մի՛ քաշէք այնպիսի հարցեր առաջարկելու, որոնց պատաս-

խաները լրտեսութեան, մատնութեան պէս բան կը լինէր:

Հաջի Խրիստոն աչքերը վայր ու վեր էր տանում: Նա կուչ էր դալիս, դէմքը կնճռոտում և ոչ մի կերպ չէր կարողանում ծխամործից ծուխը դուրս հանել:

—Քո ընկերներից մէկը,— շարունակեց կարգալ բէյը,— Ստեանն է եղել,— և դառնալով Հաջի Խրիստոյին հարցրեց.— Ճիշդ չէ՞:

— Ճիշդ է, ճիշդ.— պնդեց շփոթուած վկան:

— Տեսնում ես, որ քո առաքինութիւնը քեզ շատ չի օգնիլ... Հաջի Խրիստոյի պէս պատկառելի և յարգելի մարդիկ ուրիշ կերպ են նայում իրերի վերայ:

— Այդ գուցէ այն պատճառով է,— պատասխանեց Ստանկօն,— որ հաջի Խրիստոն իւր կարողութիւնը փրկելու համար կարող է խիղճը կորցնել. իսկ ես կարողութիւն չունիմ և խնայում եմ խիղճս:

Արիստարխի-բէյը մի հայեացք ձգեց օտարազգի հիւպատոսների վերայ, կարծես, ասում լինէր նոցա. «Լսեցէ՛ք, լսեցէ՛ք»: Հաջի Խրիստոն այնպէս ուժգին ներս քաշեց ծխամործից մուխը, որ փղձկուեց, և ափով բերանը ծածկելով հազաց, իսկ քննութիւնը շարունակվում էր: Արիստարխի-բէյը էլ չհարցրեց այն ժողովի մասին, որ տեղի էր ունեցել սենեակում, որովհետև հաւատացած էր, որ ոչինչ պատասխան չի ստա-

նալ: Բայց Ստանկօն էլ մասնակից չէր այդ ժողովին:

Ստանկոյին տարան, իսկ նորանից յետոյ սկսեցին հարց ու փորձ անել մի խումբ երկտասարդների. այդ բանը Արիստարխի-բէյը սարքել էր այն նպատակով, որ ցոյց տար հաջի Խրիստոյին բանտարկուածներին և համոզուէր, թէ դոցա մէջ չէ այն երրորդ անձնաւորութիւնը, որ եղել էր ժողովում:

Սոցա երկար ու բարակ հարց ու փորձ չէին անում. երբ մի նոր անձնաւորութիւն էին ներս բերում, քննիչը ուշի ուշով նայում էր հաջի Խրիստոյին, որ գլխի շարժումով բացասում էր: Քննութիւնը վերջանալու վրայ էր, երբ յայտնեցին բէյին, թէ չեքքէսները մի կասկածելի մարդ են բերել: Դէպո՞հ բէյը ձեռքով արաւ ու ասաց. «Թո՛ղ ներս բերեն»:

Ներս մտան երկու չեքքէս, հրելով մի երկտասարդի: Արիստարխի-բէյը չնայեց հաջի Խրիստոյի վերայ, երբ սորան ներս բերին, մինչ դեռ այս անգամ վկայի աչքերը վառուեցան. ի մեծ դարմանս նորա՝ այս երկտասարդը այն երրորդ անձնաւորութիւնն էր: Բայց քննիչը ու շաղբութիւն չէր դարձնում հաջի Խրիստոյի վերայ և միայն դժգոհութեամբ լսում էր չեքքէսներին, թէ ինչպէս իրենց բերած ջունաբէտը (անպիտանը) անից տուն էր պատում:

— Ի՞նչ կայ որ դորանում:

—Ոչինչ,—պատասխանեց չերքէսներէց մէկը.— Նունաբէտը ման էր գալիս, պտտում էր...

—Իսկ երբ սորան հարցրի,—ընդհատեց երկրորդ չերքէտը,—նա կակաղեց:

—Դո՞ւ ով ես,—հարցրեց երիտասարդին Արիստարխի-բէյը:

—Ես չչ... չօբ... բբան եմ:

—Ա՛, կակաղ է,—նկատեց բէյը:—Ի՞նչ տեղացի ես:

—Կկկ... կկկ... կկկ... կկկ:—Նա հազիւ հաղարտասանեց. կիշկայեց:

—Երեւի, հովի՞ւ ես:

—Աայո՛:


—Թողէք դորան... դուրս արէք,—հրամայեց քննիչը և դիմելով չերքէսներին, խրատեց.— մի՛ բերէք այնպիսի մարդիկ, որոնց հետ միայն ժամանակ է կորչում... առանց դորան էլ ես շատ բան ունիմ... ասել եմ ձեզ, որ կասկածելիներին բռնեցէք... արտասովորներին... Իսկ դա ի՞նչ կասկածելի է որ:

—Նա սովորականներից չէ,—պատասխանեց չերքէսներից մէկը:

—Երբ նա սկսեց իւր «չչ...», ես թուրս բռնեցի և ուղեցի գլուխը կտրել:

—Նորա գլուխը երկու փարա էլ չարժէ,—ասաց բէյը:

—Մենք նորա մօտ քսան եօթը զրուշ գտանք,—ասաց երկրորդ չերքէտը:



—Հըմ...—զարմացաւ բէյը և ժպտեց:

—Բացի դորանից ահա և,—շարունակեց չերքէտը, ծոցից հանելով մի ծալած թուղթ և տալով բէյին, որ նայեց թերթին և հարցրեց չերքէսներին.

—Այս թուղթը նորա մօտ գտար:

—Այո, նորա մօտ:

—Հա՛յդա...—գոչեց քննիչը զափթիներին.— վաղեցէք, այս տեղ բերէք նորան:

Փանդարմները վաղեցին, իսկ Արիստարխի-բէյը թուղթը ցոյց տուեց թարգմաններին և ասաց.

—Սա մի հրաւիրաթուղթ է խմբեր կազմակերպելու համար, որ կոչվում է չէթա: Ինչպէս տեսնում էք, գործը բարդվում է, բայց մի և նոյն ժամանակ և պարզվում է... Այժմ մեր ձեռքումն է դաղտնի կառավարութեան գործակալը:

—Էֆէնդըմ,—սկսեց հաջի Խրիստոն:

—Հը՞... տօ՞ւն ես կամենում գնալ,—նորա խօսքը կտրեց քննիչը:—Ես դիտմամբ քեզ պահեցի, որ համողութեամբ, թէ մենք քննութեան ժամանակ բռնութիւն գործ չենք դնում: Ինքդ անձամբ փորձեցիր մեր յարաբերութիւնները, մեղմութիւնը, թէ և քո դէմ հաւանելի շատ ասպացոյցներ կային: Այժմ գնա, Տէր ընդ քեզ:

Օտար հիւպատոսարանների ներկայացուցիչ

ները մնացին. նորա սպասում էին, որ դադանի կառավարութեան գործակալին բերեն:

Երկար սպասելուց յետոյ եկաւ Ժանդարմներէց մէկը, միւսը, երրորդը, չորրորդը, բայց գործակալը չկար նոցա հետ. իւրաքանչիւրը նոցանից մի և նոյն բանն էր ասում:—Տեսան, ինչպէս մէկը գնաց ոստիկանատնից... դուրս եկաւ և կորաւ:

Ժանդարմները կարծում էին, թէ նա մի հըրաշքով թագնուել է, բայց այդ տեղ ոչ մի հըրաշք չկար: Քննիչը հրամայեց հովուին բաց թողնել, որովհետև չգիտէր, թէ մօտն այդպիսի թուղթ են դաւել. այդ պատճառով էլ հովուը չէր հաւատում, որ արդէն աղատուել է, ուստի շտապել էր շուտով թաք կենալ: Տաճկական քաղաքներում այդ դժուար բան չէ: Ոստիկանատնից մի քանի տասնեակ քայլ հեռու, մի մեծ փողոցի անկիւնում մի քարէ պարիսպ կար, իսկ պարսպի մէջ մի անցք, որից շները դուրս ուներս էին սողում: Մեր հովուը մտաւ այդ անցքը և շուտով լսեց, ինչպէս Ժանդարմները ոստիկանատնից վազելով, դոչում էին.

—Ո՞ւր գնաց ջունարէտը:

Եթէ զափթիներէից մէկը նայէր այդ ծակը, անտարակոյս, կընկատէր հովուին, բայց նոքա զանազան կողմեր ցիր ու ցան եղան. հովուը մընաց այնտեղ, մինչև որ զափթիները վերադարձան, և այն ժամանակ միայն դուրս եկաւ իւր

ապաստանից և հանգիստ գնաց քաղաք, աշխատելով աղմկալի փողոցներով գնալ: Մօկրայի խանութը շուկայումն էր: Չգոյշ կերպով նա առաջուց մի նայեց դէպի այն կողմը, յետոյ համարձակ ներս մտաւ և դիմեց Մօկրային.

—Ես եմ, Մօկրա:

—Բարև, որդիս, —պատասխանեց նա:

—Չերբէսները բռնեցին ինձ և բերան... Բայց ես հեռացայ...

—Փառք Աստուծոյ, որ դու կարողացար գլուխդ գողանալ տաճիկներէ ձեռից... Այդպիսի գողութեան համար Աստուած քեզ չի պատժիլ: Սակայն գողը նա չէ, ով որ գողանում է, այլ նա, ով որ գողացածը չէ կարողանում պահել:

—Ես էլ դորս մասին եմ մտածում, որ մի կերպ գլուխս թագցնեմ:

—Դու լսե՞լ ես, թէ ինչ է լինում այս տեղ:

—Մի քիչ իմացել եմ: Լսել եմ, որ Ստոեանի համար հազար զրուշ են խոստացել, որ մի թուրք է խեղդել, միւսին սպանել:

—Հը՞մ... Ի՞նչ արած: Մէկին մի բան է պատահում, միւսին մի ուրիշ բան: Բայց բանն այդ չէ, այլ՝ որ քեզ մի կերպ թագցնենք:

—Ինչո՞ւ: Միթէ ե՞ս էլ եմ կասկածելի:

—Պէտք է թագցնել այն պատճառով, որ այժմ բոլորին կասկածում են և ձերբակալում... Եթէ նկատէին, որ դու մի քանի ամիս կորել էիր՝ բանտից չէիր պրծնիլ: Այժմ ժամանակը վատ է:

նոցա աչքին պէտք չէ երևել. իսկ յետոյ կտրելի է կրկին դուրս գալ:

— Հեռանալը դժուար չէ, բայց ինչպէ՞ս եւ ջրհորը գնամ:

— Պետարը այժմ չկայ. նա մի քանի օրից յետոյ կը վերադառնայ:

— Իսկ ես ի՞նչ անեմ սուր ժամանակ:

— Նախ և առաջ պառկիր՝ այն տեղ, այն տապալկների ետևում: Կէօրին ես կը գնամ՝ և կը փակեմ խանութը, իսկ մի ժամից կը վերադառնամ և քեզ կը տանեմ:

Արովհետև մինչև տասն և երկու ժամը քիչ էր մտում, ուստի և Մօկրայի նախագիծը շուտով իրագործուեց: Մօկրան գնաց և մի ժամից շուտ վերադարձաւ, ձեռին մի կապոց, որ նա ձգեց տապալկների ետևը:

— Ա, փոխիր շորերդ, — ասաց նա այն տեղ թաք կացածին, — և գնա տուն:

Կապոցում կանացի շորեր էին: Այդ բանը զարմացրեց երիտասարդին, բայց նա առանց տատանուելու հագաւ այդ շորերը: Մօկրան քողը այնպէս կապեց, որ բեխերը բոլորովին չէին երևում և ասաց. «Գնա՛ տուն»: Փողոցում ոչ ոք չէր կարող իմանալ, որ կնկայ շորերով այժմ այն մարդըն է գնում, որին այսօր առաւօտեան չերքէսները, ինչպէս շան, թոկով կապած տանում էին: Նորան ոչ ոք չկանգնեցրեց, և այդպէս անցաւ երկրորդ, երրորդ և չորրորդ փողոցը, ձուկ գէ-

պի բուլղարների թաղը և մտաւ Մօկրայի տունը: Տան շեմքում նորան սպասում էր Անկան:

— Գնանք, — ասաց սա:

Երկրորդ յարկում օրիորդը կանգ առաւ և կամացուկ ասաց. «Գուր կը մնաս ընդունարանում, իսկ ես կ'աշխատեմ շուտով ճանապարհ ձգել Իլենկային, որ այժմ միայն եկաւ ինձ մօտ»:

— Հաջի Խրիստոյե՞նց Իլենկային:

— Այո՛, հաջի Խրիստոյի աղջկան:

— Նա հօ չի՞ խառնում: չի՞ մատնիլ:

— Կարծո՞ւմ ես:

— Նա բոլորովին չի խառնիլ ինձ, ընդհակառակը... Տար ինձ նորա մօտ. հետաքրքրական է, արդեօք կը ճանաչէ՞ ինձ: Անկան առաջ գնաց և կարճ միջոցից երիտասարդին սենեակ տարաւ: Այս տեղ բաղմոցի վերայ նստած էր Իլենկան: Մի անձանօթ կնկայ ներս մտնելը նորան չզարմացրեց, բայց այնքան էլ ախորժելի չէր, որովհետև նա կամենում էր խօսել այն պայմանների մասին, որոնց շնորհիւ հայրը բանտից ազատուեցաւ, կամենում էր ազատ խօսել իւր ընկերուհի Անկայի հետ, այդ պատճառով նա դժգոհ էր, որ մի անձանօթ անձնաւորութիւններս մտաւ, քաշուեց մի անկիւն և յօնքերը կիտեց: Կարծեցեալ կինը նստաւ նոյն բաղմոցի միւս ծայրին: Սկզբում ամենքն էլ լուռ էին. վերջապէս Անկան շրթունքները կը ծոտելով, հարցրեց Իլենկային.

—Վերջացրի՞ր քո թաշկինակների նկարները:

—Ձէ, ես միայն սկսել եմ, — չոր ու ցամաք պատասխանեց իլենկան:

— Իսկ ես վարագոյրներն եմ սկսել:

— Ո՞ր պատուհաններինը:

— Ընդունարանի:

— Ես էլ էի մտածում այդ, բայց...

— Ես ուզում եմ հողաթավներ գործել, — սկսեց կարծեցեալ կինը:

Անձանօթի ձայնը լսելով, իլենկան վեր թըռաւ: Նա նայեց նորեկ կնկայ վերայ, և նորա աչքերը սկսեցին զարմանք և սարսափ արտայայտել: Այդպիսի աչքերով երևոյթներ լի վերայ են նայում. իլենկան յօնքերը կիսեց, կնճռեց և վերջ ի վերջոյ նայեց Անկային, որ շուռ էր եկել և թաշկինակով բերանը բռնել. ակներև էր, որ նա աշխատում էր ծիծաղը բռնել: Այդ ժամանակ իլենկայի գլխում մի հարց յղացաւ, երբ նկատեց, որ քողի տակից բերի ծայրը գուրս է ցցուել:

— Իսկ ես մտածում էի... — սկսեց անձանօթ կինը:

— Ա՛խ, — բացականչեց իլենկան և ակամայառաջ եկաւ:

— Իսկ ես... — սկսեց նորից անձանօթ կինը:

— Ի՞նչ... — ընդհատեց իլենկան: — Ի՞նչ... Նիկոլան ես...

Նիկոլան ուզում էր բոլորովին հանել վերայից քողը, բայց իլենկան բռնեց երկու ձեռիցը և նայեց աչքերին: Նա նայում էր, իսկ աչքերը լցվում էին բերկրութեամբ, և արցունքներ էին թափվում:

— Ի՞նչ... դ՞ու՛ր... — կրկնեց իլենկան:

— Ես քեզ վերայ էի մտածում, — ասաց Նիկոլան:

— Բայց մի՞թէ ես քեզ վերայ չէի մտածում, — պատասխանեց իլենկան: — Ա՛հ, ի՛նչ լաւ բան արիր, որ այժմ եկար: — Նա շեշտեց «այժմ» խօսքը: — Ո՛հ, որքան տխուր է, որքան ծանր: Ո՛հ... — հառաչեց օրիորդը:

Գուցէ Նիկոլայի շորերն էին խրախուսում իլենկային: Նա մտեցաւ Նիկոլային և մեկնեց իւր ձեռք: Նորա արցունքը, ծիծաղը, արտմուծիւնը՝ այս բոլորը այնպիսի բերկրութիւն պատճառեցին մեր երիտասարդին, որ չէր կամենում խօսել, այլ միայն նայել, նայել և համբուրել ու համբուրել: Նիկոլան չէր իմանում իլենկայի սրամաղբութեան պատճառը և օրիորդի յուզմունքը իւր ներկայութեանն էր վերագրում, ուստի և զարմանալի չէ, որ օրիորդի զգացումները այդքան լարուած էին, իսկ շնորհակալուածիւնը այն աստիճանի էր հասել, որ նա չէր վարանիլ այդ սիրասուն աղջկայ համար կրակի մէջ նետուիլ, որ այդչափ սրտաբաց էր: Նիկոլան ստից մինչև գլուխ բորբոքուած էր և այդ



երևում էր նորան գէտքից ու աչքերից: Նայում էր Իլենկային, բռնել էր ձեռքը և լռել, իսկ լռուել էր այն պատճառով, որ չէր կարողանում այդ բոպէին զգացածը խօսքերով արտայայտել: Մի նոր, անձանթ բան էր զգում նա: Առաջ Իլենկային շատ էր հաւանում, բոլոր պատահած աղջկերանցից շատ, և նորան հաւանում էր, որպէս մի սիրուն, չքնաղ, ցանկալի, բայց և այնպէս անմատչելի առարկայի, և նորան տիրելը կամ մտանայլը անկարելի էր համարում, — եթէ միայն մտանայլ չհամարենք այն մտածութիւնները, որոնց մէջ Նիկոլայն մի անգամ խորատուղուած էր Դանուբի ափին: Իլենկան հարուստ հաջի Խրիստոյի աղջիկը, բոլորովին անմատչելի էր թուում նորան: Եւ ահա այն անմատչելի առարկան ինքն է մտանում, ժպտում, ծիծաղում, գանգատվում: Յանկարծ Նիկոլայի գլխում մի նոր միտք ծագեց. «ինչո՞ւ է նա տիրում, քանի որ ես այսպեղ եմ», — և իսկոյն խօսեց.

— Մի՛ տիրիլ... ես հօ այսպեղ եմ... Ահա, ես եկել եմ: Փառք Աստուծոյ, որ սրժայ չերքէսների ձեռքից, սրժնք ինձ բռնեցին և թողով կապած տարան... ուղիղ քննիչի մօտ: Ես այն տեղ հաջի Խրիստոյին տեսայ:

— Դու տեսա՞ր նորան... — սարսափելով հարցրեց Իլենկան:

— Այո, տեսայ. նա նստած էր բազմոցի վերայ Արիստարխի-բէյի կողքին:

— Նա՞... հայրս տեսա՞ւ քեզ...

— Տեսաւ, բայց չճանաչեց:

— Ա՛խ, — հառաչեց օրիորդը: — Նա չճանաչեց... ես ինքս էլ չճանաչեցի: Բայց վայ, եթէ ճանաչէր... Որ այդպէս է, գնա՛... գնա՛... Մի բոպէ մի մնալ այս տեղ... գնա՛ Ռումանիա... միայն որ դու օտար երկրում կարօտութիւն չունենաս... Սպասիր մի քիչ, իսկոյն կը վերադառնամ... — այս ասելով նա ձեռք քաշեց Նիկոլայից և վեր կացաւ տեղից:

Անկան մունջ ահանատեա էր սիրահարուած զոյգի այս տեսարանին: Նա նայում էր և հասկանում նոցա զգացմունքը: Իրեն Աստուծուն նուիրող օրիորդի սիրաբը լցուեցաւ սրտառուչ զգացմունքով և նախանձով: Նա թէ և չէր կամենում մտածել իւր մասին, բայց էլի մտածում էր, և երբ Իլենկան վեր կացաւ, Անկան ասաց. «ինչըրեմ, մի՛ գնալ»:

— Ես այժմ կը վերադառնամ:

— Չէ, մի՛ գնալ:

— Ինչո՞ւ:

— Այնպէս... մի՛ գնալ:

Անկան ինքն էլ չէր կարող բացատրել իրեն, թէ ինչու չէ ուզում, որ նա գնայ. իսկ բանն այն էր, որ նա ամոստում էր աչքից կորցնել այդ կենդանի տեսարանը, որով հիանում էր, որից աչք չէր կարողանում հեռայնել. նա ուզում

էր նայել և անվերջ նայել այդ սիրահարուած զոյգի վերայ:

— Պէտք է շուտով Ռուսմանիա անց կացնել, — պատասխանեց Իլենկան, ակնարկելով Նիկօլային:

— Պետքը այսօր կամ վաղը կըզայ և երկուսին էլ կըճանապարհէ:

— Իսկ մինչև Պետքի դա՞լը:

— Մի՛ անհանդստանալ... Ինչ տեղ նա է, այն տեղ Նիկօլայի համար էլ տեղ կըլինի:

— Ո՞ւր մասին էք խօսում: Ո՞վ է, — հարցրեց Նիկօլան:

— Ստօեանը:

— Ստօեանը, — բացականչեց նա:

— Սը՛ս... — ընդհատեց նորան Անկան և յիշեցրեց, որ անհրաժեշտ է զգոյշ լինել, որպէս զի ծառաները չիմանան և թագցնել Նիկօլային իրեն համար պատրաստած ապաստանում: Նա խսկոյն մօտեցաւ դռան, նայեց, ականջ դըրաւ, վերադարձաւ և բաց արաւ պահարանի դուռը:

— Իլենկա... — ասաց օրիորդը, մատը վեր բարձրացնելով, — նայի՛ր, ոչ ոքի մի խօսք անդամ...:

— Անկա... — կշտամբելով պատասխանեց Իլենկան: — Չէ որ դու ինձ ճանաչում ես... Մօկրան վկայ էր... Ես միայն կըկամենայի հաւատալ, որ նա ապահով տեղ է:

— Ի՞նչ վտանգ կարող է սպառնալ նորան այս ապաստանում:

— Իմ հայրը, — շնչեց օրիորդը:

— Ի՞նչ... — հարցրեց Անկան:

— Իմ հայրս գիտէ, որ դուք այս ծածկանաւունը ունիք:

— Ուրեմն ի՞նչ... Միթէ նա կըմտանի՞:

— Աստուած իմ, — յուսահատութեամբ բացականչեց օրիորդը: — Հայրս: Ի՞նչ արած: Չէ՛...:

— աշխատեց համոզել իրեն: — հայրս չի մատնել... չէ, նա չի մտանիլ:

— Նա հօ չգիտէ... — նկատեց Անկան:

— Եթէ իմանար էլ, եթէ տեսնէր էլ, կըկին չէր մատնիլ:

XVI.

Նիկօլայի և Ստօեանի միմեանց անսպասելի կերպով պատահելը կարող էր մասամբ վտանգաւոր լինել. այդպէս միմեանց պատահելիս կարող էին տեղի ունենալ բարձրաճայն խօսակցութիւններ, որոնցից ծառաները կարող էին գլխի ընկնել, որ տանը թագցրած մարդիկ կան: Մարդիկ չափազանց հետաքրքիր են, խսկ նոցա լեզուն շատախօս: Սակայն վտանգը հեռացրած էր, որովհետև Անկան՝ Մօկրայի պատուէրի համա-

ձայն, նախապէս իմաց էր տուել Ստօեանին, թէ Նիկօլան եկել է: Այս նորութիւնը և տրտմեցրեց և ուրախացրեց Ստօեանին: Նա ուրախ էր, որ Նիկօլան ազատուել է թուրքերի ձեռից, բայց անախորժ էր, որ Նիկօլան ականատես պիտի լինէր Անկայի հետ տեսակցութիւն ունենալիս: Իսկ այդ տեսակցութիւններն այժմ այնքան բաւակա- նութիւն էին պատճառում Ստօեանին, որ Անկա- յին սալասելը կարծում էր նորա ժամանակը և տանելի էր դարձնում միայնակութիւնը: Բայց ինչ արած: Պատը բարձրացաւ, — Նիկօլան կա- նացի շորերով ներս մտաւ, և պատը կրկին ցած իջաւ: Այդ ըսպէին Ստօեանը իսպառ մոռացաւ Անկային. նա սեղմեց ընկերի ձեռը և ասաց.

— Բարով եկար: Ես էլ նոյնպէս կնկայ շո- րով եկայ... էհէ... — շարունակեց նա, նայելով ծածկոցի տակը. — բայց ես չէի հագել ո՛չ շաւ- վար, ոչ էլ փափուճ: Այժմ կատարեալ կին ես:

— Ամբողջ քաղաքը անցայ այս շորով:

— Իսկ ես միայն պարտէզը... թփերից մին- չ և տուն:

Այսպէս սկսուեց նոցա խօսակցութիւնը: Ստօ- եանը Նիկօլային պատմեց իւր արկածների ման- րամասնութիւնները, Նիկօլան էլ — Ստօեանին: Նու- ցանից մէկը զնացել էր դէպի Վիդդինի, իսկ միւսը — Վառնայի կողմերը, և այժմ նոքա պատ- մում էին միմեանց իրենց ճանապարհորդութիւ- նը, որի նպատակն էր զարթեցնել բուլղաքններին

հինգ դարու լետարգիկական քնից: Երիտասարդ- ները ճանապարհին պատմում էին «չէթաների», ազատութեան մասին և բացատրում էին, որ այդ ազատութիւնը կարելի է ձեռք բերել զէնքով: Ժողովուրդը լսում էր և հաւանում: Մի քանի տեղ նոքա պատահում էին այնպիսի անձնաւորու- թիւնների, որոնք շատ շուտով ազդեցութեան տակ էին ընկնում, թուուցիկ կերպով լսում էին այս կամ այն խօսքը և իւրացում նոր մտքերը. մի քանի տեղ ընկերութիւններ էին կազմակերպ- վում, և այսպիսով ընդլայնանում էր ժողովրդ- դական կազմակերպութիւնը, իսկ ստուարութեան տրամադրութիւնը որոշելու համար բաւական է Գրօժդանի խրճիթում պատահած Ստօեանի դէպ- քը: Ստօեանը մանրամասնաբար պատմեց այդ դէպքը:

— Ինքս էլ, ճշմարիտ, չեմ իմանում, թէ ինչ մտածեմ, — շարունակեց նա հառաչելով. — Գրօժ- դանը լսեց ինձ և, կարծես, հասկացաւ... բայց թոյլ տուեց, որ իւր կնոջն անարգեն: Ի՞նչ է մեր արածը. քարով չե՞նք տալիս մեր գլուխը:

— Բայց հօ խեղդեցիր այդ լիտին:

— Այո, բայց ոչ թէ ես, այլ Գրօժդանը պի- տի խեղդէր նորան: Քանի որ այդ բոլոր Գրօժ- դանները լիովին չըմբռնեն տաճկական լծի ամ- բողջ նախաախնքը, բան չի դուրս գալ: — Ստօեա- նը հառաչեց:

— Ինչպէ՞ս կարող են զգալ, եթէ մէկը ցոյց  
չտայ նոցա այդ, — պատասխանեց Նիկոլան: — Իսկ  
ո՞վ պիտի ցոյց տայ: Միթէ մենք յետ պիտի  
կանգնենք:

— Չէ, մենք չենք կարող յետ կանգնել, պէտք  
է չօկսէինք, իսկ քանի որ սկսել ենք, պէտք է ա-  
ռաջ տանենք, որքան ոյժ կայ: Ես ամենից լաւ  
հասկացայ իմ խնդիրը, երբ ծնկներովս ճնշում էի  
տաճիկ միլեադիմի կուրծքը և ձեռներովս սեղ-  
մում էի նորա կոկորդը: Նորա խրխուոցը ինձ հա-  
մար Բուլղարիայի հանդիսաւոր օրհներգութեան  
պէս էր: Այն ժամանակ ևս ոչ իմ մասին էի մը-  
տածում, ոչ էլ ուրիշի:

— Ինձ հետ, — հառաչեց Նիկոլան, — երբէք  
այդպիսի բան չէ պատահել: Պատեցի Դօբրու-  
ջան, եղայ Տուլցում, Բաբադաղում, Վառնայում,  
Շումլայում, գիւղից գիւղ գնացի, բայց ոչ ոք  
ձեռ չտուաւ. միայն վերադառնալիս չէրքէսներ  
կպան ինձ, խլեցին փողս, մեր վերջին շրջաբե-  
րականը և թոկով կապած, շան պէս, քաշեցին,  
բերան քննութիւն անող յանձնաժողովի մօտ,  
ուր Արիստարխի-բէյի կողքին նստած էր և հաջի  
Խրիստօն:

— Հաջի Խրիստօն նստած էր Արիստարխի-  
բէյի կողքին, — հարցրեց զարմացած Ստօեանը:

— Ի՞նչ զարմանալի բան կայ որ:

— Նա բանտումն էր:

— Ինչո՞ւ համար է ընկել այնտեղ:

— Որովհետև ինձ չէր մատնել:

— Ա՛յ, որքա՛ն համարձակ է:

— Նա կը մատնէր, եթէ Իլենկան չլինէր:

— Իլենկա: Ա՛... Իլենկա, — բացականչեց

հիացած Նիկոլան: — Գիտես, թէ ինչ եմ մտա-  
ծում. եթէ Իլենկան դար գիւղ և հրամայէր  
գիւղացիներին խմբեր կազմել, — չգիտեմ, ճշմա-  
րիտ, կը լինէր գոնէ մէկը, որ չսէր նորան:

— Հաղիւ թէ, — կասկածեց Ստօեանը:

— Ես ինձանով եմ դատում, ես էլ հօ գիւ-  
ղացի եմ:

— Միայն սանտրուած... Ո՛հ, եթէ բոլոր  
գիւղացիները քեզ պէս յղկուած լինէին:

Մեր երիտասարդներն այսպիսի խօսակցու-  
թեամբ էին զբաղուած իրենց ապաստանում, և  
միայն երբեմն երբեմն Անկայի դալուստը, որ  
կերակուր ու նորութիւններ էր բերում, ընդ-  
հատում էր նոցա խօսակցութիւնը: Ի միջի այ-  
լոց նա յայտնեց նոցա, թէ ինչու քննիչների  
յանձնաժողովում հաջի Խրիստօն նստած է եղել  
Արիստարխի-բէյի կողքին:

— Առաջ նա դատապարտւում էր և բան-  
տում նստած էր, իսկ այժմ վկայ է: Նա պատ-  
մել է ձեր ժողովի մասին, որ տեղի է ունեցել  
պարտիզում:

— Ի՞նչ ժողով է եղել պարտիզում, — ընդ-  
հատեց Նիկոլան:

— Երևի այն, երբ դու կոտրեցիր քաղցրա-

ւենու սկահը, — պատասխանեց Ստօեանը և հարցրեց. — էլի ի՞նչ:

— Պատմել է և քո սենեակում տեղի ունեցած ժողովի մասին:

— Ա՛... — բացականչեց Ստօեանը:

— Բայց նա չգիտէ, թէ ով է եղել այնտեղ, — պատասխանեց օրիորդը:

— Կ'իմանայ և վերջ ի վերջոյ կը պատմէ, իսկ այն ժամանակ շատ մարդ կը կորչի:

— Չէ, նա չի պատմի, — նկատեց Նիկօլան:

— Ինչի՞ց գիտես:

— Իլենկան այդպէս ասաց:

— Միթէ այդ նորանից է կախուած:

— Այո, նորանից, — հաստատեց Անկան, — որովհետեւ մենակ նա գիտէ, թէ ովքեր էին ներկայ եղել այդ ժողովին: Դորա առթիւ ահագին ազմուկ է եղել արդէն հաջի Խրիստոյի տանը: Մայրը ծեծել է Իլենկային, մաղերից քաշել է, քարշարտել է յատակի վերայ:

— Անպիտան — բացականչեց Նիկօլան: — Անպիտան, — նորից կրկնեց նա և, դառնալով Ստօեանին, շարունակեց. — ա՛յ, տեսնում ես, պէտք չէ Գրօժգաններ որոնել աղտեղութիւնների պատահելու համար: Հաջի Խրիստօն ինձանից էլ լաւ է սանտրուած, բայց եթէ Իլենկան չլինէր... Չե՞մ կարող տեսնել Իլենկային, — հարցրեց նա Անկայից:

— Կարելի է, բայց ոչ այսօր: Նա ուղում

էր դալ և կը գայ էլ, միայն այսօր արդէն ուչ է:

— Իսկ ես կ'ուզենայի նորան մի խօսք ասել:

— Նա կը գայ...

— Բայց, — ընդհատեց Նիկօլան, ձեռները վեր բարձրացնելով և իւր շորերին նայելով. — չե՞մ կարող շորերս փոխել: (Նա դեռ կանացի շորերով էր): — Նա խանութում թողի գիւղացու շորերս — ինչպէ՞ս անէինք, որ ստանայի:

— Սպասիր մի փոքր, մինչև որ մայրս գայ, — պատասխանեց օրիորդը:

Շուտով եկաւ և Մօկրան, նա հետը չէր բերել Նիկօլայի գիւղական շորերը, այլ բերել էր նորա համար Պեօարիներ: Նա խօսում էր, կատակ էր անում, օրուայ նորութիւններն էր յայտնում, որ ստացել էր ոստիկանատնից և որոնցից կարելի էր եզրակացնել, թէ բանտարկեալներից մի քանիսը ուրբան են վերաւորուած: Ստօեանին հետաքրքրում էր հօր վիճակը:

— Նորան ոչինչ չեն անիլ, — ասաց Մօկրան: — Մեխանէլին իրան լաւ է պահում. «ես բան չգիտեմ, տեղեկութիւն չունիմ», — ահա բոլորը. նորա վկաները շատ լաւ են — տաճիկներ են: Նա միայն հպարտանում էր իւր հաւտարութեամբ, և այդ ապացուցանում է նորանով, որ ահա քառասուն տարի է ինչ որ սուրճ է պատրաստում, և բացի դրանից ոչ մի բանից տեղեկութիւն չունի, բան չգիտէ... Ա՛յ որոնց բաներն են վատ... — Այդ ժամանակ Մօկրան տուեց մի

քանի մարդկանց անուն, որոնք ոչ մի բանում մեղաւոր չէին, բայց պատասխանելիս շփոթուել են և իրենց փորձանքի մէջ ենձգել։ Նոցա թուում կային այնպիսիները, որոնք հասարակութեան մէջ ապստամբակիցների դեր էին խաղում, թէ և երբէք ոչ մի դործի չեն մասնակցել։ Հարց ու փորձից երևել է, որ իբր թէ դոքա շատ վտանգաւոր են, և մեծ պատիժ է սպառնում նոցա։ Բայց ամենից շատը հասել է Ստանկոյին և Գրոժգանին։ Սոքա անմիջապէս յարաբերութիւն ունէին Ստեանի դործի հետ։

— Ես պէտք է Ստանկոյի տեղ լինէի, ասաց Ստեանը զայրացած։

— Այդ էր պակաս, — պատասխանեց Մօկրան. — Ստանկոյին էլ օգուտ չէիր տալ, քեզ էլ կըջնասէիր։ Թո՛ղ նա իւր տեղում մնայ, դու էլ քո տեղում։ Երբ իմ որդիքս կորան, ես չմտածեցի էլ անգամ, որ նոցա տեղը մի ուրիշը պիտի լինէր։ Իւրաքանչիւրն իւր տեղն ունի։ Եթէ տաճիկները քեզ բռնէին, այն ժամանակ ուրիշ բան է։ Բայց քանի որ կարողացել ես փախչել, աշխատիր, որ նոքա յիշեն քեզ։ Այժմ քո խըղճմտանքը քեզ նոր պարտականութիւն պիտի թելադրէ, մեզք չունիս, հասկանո՞ւմ ես։

Մօկրայի խօսքերը երիտասարդութեան համար երկու զոհի կտակն էին։ Ռուշչուկի բնակիչները յիշում էին մէկի գլուխը, որ ցցուած էր ձողի վերայ, իսկ երկրորդի թաղումից դեռ շատ ժամանակ չէր անցել։ Երիտասարդները շատ էին

գնահատում պառաւի խօսքերը. նորա ասածը սուրբ էր։ Այդ պատճառով էլ նորա խօսքերը փոքր ինչ հանգստացրին Ստեանին, թէպէտ նա կրկին ցաւում էր, մեղքանում Ստանկոյին և նորա որդոց։

— Գուցէ Աստուած ազատէ նորան վտանգից, — ասաց նա։

— Հաղիւ թէ, — պատասխանեց Մօկրան։

— Ինչո՞ւ։

— Նա շատ է խօսում։

— Ինչպէս... շատ է խօսում։

— Ճմարտութիւնը նա տաճիկների երեսոյն է տալիս։

— Նա՞, որ միշտ այնպէս լուռ էր։

— Նա այնքան լռեց, քանի որ պէտք չէր խօսել. իսկ այժմ ճմարտութիւնը նոցա երեսոյն է տալիս այնպէս հանգիստ կերպով, ինչպէս ասում են, կարծես, թէ սրճարանում խօսում լինի։

— Ինչպէ՞ս ես այդ բոլորը իմանում, Մօկրա։

— Վկաներից և տաճիկ ժանդարմներից, որոնք գալիս են խանութս։ Ես նոցա մատուցակ (խմիչք) եմ տալիս, նոքա էլ պատմում են։

Ստեանը հառաչեց։

— Եթէ ես Ստանկոյի տեղ լինէի, — ասաց Նիկօլան, — էնքան բան կ'ասէի տաճիկներին։

Գիշերը Ստեանն ու Նիկօլան սանդուղքով վայր իջան և դնացին պարտէզ փոքր ինչ օդ

ծծելու: Նիկոլան ուշի ուշով նայեց ջրհորը:  
 — Ո՞ւր ես այդպէս ակնապիշ նայում,—  
 հարցրեց Ստօեանը:  
 — Նայում եմ տեսնեմ, ամեն բան կարգին է:  
 — Ի՞նչ է որ:  
 — Այնպէս,— պատասխանեց Նիկոլան, չկա-  
 մենարով յայտնել դաղանիքը առանց Գնօտրի  
 թոյլառութեան, և յանկարծ խօսք բաց արեց  
 Իլենկայի մասին.— չե՛մ կարողանում չմտածել  
 այդ աղջկայ վերայ:  
 — Դո՞ւր է գալիս քեզ:  
 — Ա՛խ,— բացականչեց Նիկոլան:— Ես նորա  
 համար... նորա համար... Չգիտեմ, ինչ բան  
 այդպէս կապեց ինձ նորա հետ, բայց պատ-  
 րաստ եմ նորա յետևից աշխարհիս ծայրը գնա-  
 լու:  
 — Բայց նա իմը պիտի լինէր,— նկատեց  
 Ստօեանը:  
 — Ապա ի՞նչ եղաւ,— հարցրեց անհանրգս-  
 տութեամբ Նիկոլան:  
 — Բուլղարիան մեզ անջատեց:  
 — Ուրեմն դու Բուլղարիայի՞ համար հրա-  
 ժարուեցար նորանից:  
 — Ոչ թէ հրաժարուեցայ... Ո՛չ ես նորանից  
 հրաժարուեցայ, ոչ էլ նա ինձանից. բայց նորա  
 հայրն ու մայրը հեռացրին ինձ, երբ ես թողի  
 վաճառականութիւնը և միացայ յանձնաժողովին:

— Ես թոյլ չէի տալ, որ ինձ հեռացնեն,—  
 լրջութեամբ ասաց Նիկոլան:  
 — Ի՞նչ կ'անէիր:  
 — Ի՞նչ... հըմ... Միթէ չե՞ն պսակվում ա-  
 ռանց ծնողաց համաձայնութեան: Ես... ես...—  
 նա ուզում էր ասել, «եթէ ես քո տեղ լինէի,  
 հնար կը գտնէի». բայց նա գերադասում էր, որ  
 Ստօեանի տեղ ինքը լինէր և իրեն համար հնար  
 գտնէր, այդ պատճառով էլ չկարողացաւ ար-  
 տայայտել իւր միտքը:  
 — Եւ... և...— աւելացրեց Ստօեանը. Իլեն-  
 կան չէր մօտենում ինձ:  
 — Նա քեզ չէ՞ր ուզում,— վրայ բերեց Նի-  
 կոլան:  
 — Չգիտեմ... նա ինձանից չէր փախչում...  
 սակայն...— Եւ նա ձեռքը թափ տուեց:  
 — Դու հօ՞ չէիր կռուիլ ինձ հետ նորա հա-  
 մար:  
 — Չգիտեմ,— պատասխանեց Ստօեանը, որ,  
 ակներև էր, չէր կամենում իւր զգացմունքները  
 թափել Նիկոլայի առաջ:  
 Թէ և լուսընկայ գիշեր չէր, կրկին նա նպաս-  
 տում էր այդ տեսակ գեղմունքի: Աստեղալից  
 երկինքը միշտ ազդում է սիրահարուածների վե-  
 րայ: Երկու երիտասարդն էլ սիրահարուած էին,  
 միայն նոցանից մէկը չէր կարողանում որոշել իւր  
 զգացմունքը, եթէ կամենար խօսքերով արտա-  
 յայտել. միւսը շատ լաւ էր հասկանում իւր դը-

բութիւնը, ուստի և լուռ էր: Նորա ման էին գալիս, խօսում, յանկարծ կանգնեցան և սկսեցին ականջ դնել: Այնպէս թուեց նոցա, թէ մէկը դուռը ծեծում է:

— Այս ի՞նչ բան է, — հարցրին երկուսը միաժամանակ:

Գանի որ նորա ականջ էին դնում, պարտիզում մի սալիտակ կերպարանք երևեց, որ անցնելով նոցա մօտից, շշնջեց. «Զափթիներ», և իսկոյն անհետացաւ:

— Անկա, — շշնջեց Ստեանը:

— Գնանք, — ասաց Նիկոլան: — Այժմ կ'իմանաս, թէ ինչու էի դիտում ջրհորը: Նայիր լաւ, թէ ինչ եմ անում, յետոյ մի և նոյն բանն էլ ինքդ արա: — Մօտենալով ջրհորին, նա նստաւ վանդակի մէջ և ցած իջաւ՝ բռնուելով միւս շղթայից: Ես ձայն կ'տամ, երբ պէտք է նստես:

Նիկոլան ցած իջաւ, իսկ Ստեանը նայեց ջրհորի մէջ: Շուտով վեր բարձրացաւ դատարկ դոյլը և լսուեց ձայնը. — Նի՛սա և ամուր բռնուիր: Ստեանը մի քիչ սարսուռ զգաց, որ պիտի իջնէ այդ մռայլ անդունդը, սակայն ուրիշ ելք չկար. յետոյ սիրտ առնելով նա նստաւ: Սմբողջ մարմինը սարսուռ զգաց, և նա սկսեց ցած իջնել, կամաց-կամաց բռնելով մերթ այս, մերթ այն շղթան: Նիկոլայի ձայնը ցածից խրախուսում էր նորան. — Համարձակ, միայն շղթան ամուր բռնուիր և քիչ-քիչ բաց թող:

Դոյլը աւելի և աւելի խորն էր իջնում և յանկարծ դէպի մի կողմը թեքուեց: Ստեանը զգաց, որ Նիկոլան բռնել է և լսեց. — Դո՛ւրս աւրի: — Նորա խօլ խաւարի մէջ էին գտնվում:

— Թո՛ղ այժմ հաւաքեն համայն Տաճկաստանի զափթիներին, մի և նոյն բանն է՝ մեզ չեն գտնիլ: Լուցկի ունի՞ս:

— Ոչ մի հատ:

— Գնանք մի կերպ:

Ստեանը հետևեց Նիկոլային: Նորա շուտով հասան խորշը, ուր և նստան:

— Ինչո՞ւ համար են եկել Մօկրայի մօտ, — հարցրեց Նիկոլան:

Եւ իրաւ, ոչինչ չէր լինիլ, եթէ հաշի Խրիստօն չլինէր: Այդ երեկոյ նորա մօտ եկաւ Արիստարխի-բէյը պայմանաւորած խուզարկութիւնն անելու: Նա եռանդով խուզարկեց Ստեանի սենեակը, բայց բան չգտաւ, իսկ յետոյ, որպէս հիւր, զնաց միւսաֆիրլըլը: Տան աէրերը մեծ ջանքով հիւրասիրեցին նորան: Նորա հետ կար մի պատկառելի աղա և էլ մի ոստիկանական պաշտօնեայ: Զափթիները դուրսը սպասում էին և մաստիկա խմում, իսկ հիւրերին անընդհատ միրգ, բաղջրաւենի, լիքեօր, հրուշակ, միով բանիւ, ամեն տեսակ անուշեղէն էին բերում, որ տաճիկները շատ են սիրում: Հիւրերը զրուցեցին այլ և այլ բաներից և վերջապէս դարձան «օրուսայ չարիքին»:



— Իսկապէս ես բան չգիտեմ, — ասաց հաջի Խրիստօն, — բայց...

— Ի՞նչ է.

— Գուցէ ես ասէի, եթէ...

— Ի հարկէ, ի հարկէ, — համոզում էր բէյը, գլխի ընկնելով, որ հաջի Խրիստօն կամենում է, որ դադարնիքը պահեն: — Ինչ որ ինձ ասում են, անհետ կորչում է:

— Ես մի աղջիկ ունիմ, — հառաչելով ասաց հաջի Խրիստօն, — և տարաբաղբաբար նա սիրահարուած է Սոսեանի վերայ... Անտարակոյս, դա առանց հետևանքի կըմնայ, որովհետև ես երբէք աղջկանս չեմ տալ մի այդպիսի անպիտանի: Բայց նա, ինչ որ է, սկսել է շուտ-շուտ գնալ Մօկրայի տունը: Առաջ երեք ամիսը մի անգամ էր գնում, իսկ այժմ օրը երեք անգամ է վազում:

— Հարցրե՞լ ես, թէ ինչու է գնում:

— Ես էլ եմ հարցրել, կինս էլ, բայց ինքդ էլ գիտես, էֆէնդըմ, որ այդպիսի դիպուածներում...

— Հա, ի հարկէ, նա չի ասիլ, թէ կուզ ծեծես էլ:

— Ի հարկէ:

— Հըմ... — մտածեց բէյը: — Դա շատ կարեւոր ցուցմունք է:

— Բայց մեր աներում այնպէս կարելի է թաք կենալ, որ մարդ չի գտնիլ:

— Այժմ այդպիսի տեղեր չկան, ինչպէս առաջ էր:

— Դարձեալ: Բայց Մօկրայի տանը կայ մի այնպիսի տեղ, որ իսկ և իսկ իմի նման է:

— Յոյց տուր:

— Գնանք, էֆէնդըմ:

Հաջի Խրիստօն տարաւ մի սենեակ, որի մօտ գտնվում էր այնպիսի մի ծածկատեղի, որպիսին էր Անկայի սենեակին կիցը: Տան տէրը ցոյց տրւեց, ինչպէս պատը բարձրանում է, և ինչպէս յատակը վեր բարձրացնելով, կարելի է դուրս գալ: Պատմեց, թէ ինչպէս կարելի է այդ պատանից պարտէզ գնալ և նոյնպէս դէպի բակը: Կողքի սենեակից Իլենկան տեսնում էր այդ բոլորը: Նա չէր հասկանում, թէ ինչու են այդպէս նայում, և կարծում էր, թէ խուզարկութեան շարունակութիւնն է. նա բոլորովին չէր անհանդուստանալ, եթէ չլսէր, որ Մօկրայի մասին են խօսում: Որ հայրը քննիչի ներկայութեամբ յիշեց նորա անունը, այդ անհանդուստացրեց նորան, և երկիւղը աւելի ևս սաստկացրեց և վրդովեց նորան այն պատճառով, որ նա միջոց չունէր իմաց տալու երիտասարդներին նոցա սպառնացող վտանգի մասին: «Սակայն, — մտածեց Իլենկան, — գուցէ ես սխալվում եմ, գուցէ այս բոլորը նոցա չէ վերաբերում: Վերջապէս նա հաւատացրեց իրեն, որ Նախախնամութիւնը կ'պաշտպանէ երիտասարդներին, որով

հետև ողջ դիշերը աղօթել էր: Սակայն Արխատարխի-բէյը վերադարձաւ միւսափիրըղը և աղայի հետ սկսեցին խորհել, թէ ինչպէս խուզարկեն Մօկրային: Աղան հրամայեց՝ զափթիներին՝ պարտէզն ու տունն այնպէս շրջապատեն, որ մուկ անգամ աննկատելի չկարողանայ անցնել: Նոքա կըրկին մի մի սրուակ chartreuse խմեցին, մի քանի կտոր նուռ կերան և ճանապարհ ընկան: Տունը արդէն խիստ պաշարուած էր: Աղան առանց վախենալու, դուռը ծեծեց, որովհետև լիովին համոզուած էր, որ եթէ մէկը թագնուել է այն տեղ, աշուշտ կ'ըռնեն:

Մօկրան՝ լսելով առաջին հարուածը՝ զարթեցրեց Անկային և ասաց. «Շուտով վե՛ր կաց և ասա՛ Ստոեանին ու Նիկօլային, որ զափթիներ են եկել»: Անկան իսկոյն և եթ թժուաւ տեղից և միայն մի կոփտով դնաց թաք կայսածների մօտ: Տեսնելով, որ սենեակում չեն, նա սանդուղներով ցած իջաւ, վազեց պարտէզ, արտասանեց «զափթիներ» խօսքը և նոյն ճանապարհով վերադարձաւ, վեր քաշեց սանդուղը, հաւաքեց անկողինը և այդպիսով ոչնչացրեց այն բոլոր հետքերը, որոնք կարող էին ցոյց տալ, թէ այդ տեղ մարդ կայ: Յետոյ նոյնպէս արագ գալով իւր սենեակը, պառկեց քնելու: Նա իսկոյն լսեց զափթիների ծանր քայլերի ձայնը և հասկացաւ, որ գնում են դէպի այն անցքը, որ տանում է դէպի յատակի ծածուկ մուտքը: Նորա սիրտը ճըմ-

լուեց: Տանն էլ քայլեր էին լսվում և խօսակցութիւն: Մի անձանիօթ ձայն ասում էր.

— Մեզ յայտնել են, գուցէ դա առանց որ և է հիմքի է, բայց դու մեզ մի՛ մեղադրել: մենք կ'խուզարկենք, որ ամաչայնենք ամբաստանողին:

— Հետաքրքրական է, թէ ո՞վ է այդ բանասարկուն, — հարցրեց Մօկրան:

— Ամբաստանողի անունը չեմ կարող ասել, բայց կրկին պէտք է խուզարկել:

— Որոնի՛ր, էֆէնդըմ, ինքս քեզ կ'օգնեմ:

Քայլերը մօտենում էին և վերջապէս կողքի սենեակում լուռեց.

— Ո՞ւր էք գնում, էֆէնդըմ, — հարցրեց Մօկրան:

— Այս տեղ, — պատասխանեց մի աղամարդի՛ ձայն:

— Այն աեղ աղջիկս է քնած, ջահել աղջիկ է:

— Թո՛ղ ծածկուի:

— Անկա՛, — կանչեց Մօկրան:

— Մայրի՛կ, — պատասխանեց օրիորդը վախեցած ձայնով:

— Ծածկուի՛ր, աղամարդիկ են գալիս:

Սենեակը մտան Արխատարխի-բէյը, աղան և մի քանի զափթի, բոլորն էլ ձեռներին լապտեր բռնած: Աղան մատով ցոյց տուեց պահարանի դուռը, որի պատը վեր էր բարձրանում և զափթիներին հրամայեց այնտեղ գնալ: Այդ բանը

զարմացրեց Մօկրային, բայց իսկոյն ուշքի եկաւ: Քանի որ զափթիւներից մէկը բաց էր անուժ դուռը, Մօկրան ասաց Արիստարխի-բէյին:

— Հէնց ես էի ուզում ցոյց տալ քեզ այդ սենեակը:

— Ա՛... — զարմացաւ բէյը:

Չափթիւները պատը բարձրացրին, փնտռեցին և բան չգտան:

— Ոչի՞նչ, — կասկածեց բէյը:

— Ոչինչ, — կրկնեցին տաճիկները:

— Շօրեր հօ չկա՞ն:

— Կայ մի չարսաւ, քող, շալվար, փափուճ և հողաթափ:

Այդ այն շորերն էին, որոնցով Ստօեանը անցաւ պարտէզը, իսկ Նիկօլան — քաղաքը:

— Չկա՞յ արդեօք ծխախոտ, քսակ և այլ այսպիսի բաներ, — հարց ու փորձ արեց Արիստարխի-բէյը:

— Ոչինչ չկայ, — պատասխանեցին զափթիւները:

— Աորէք էս տեղից, ուրիշ տեղ որոնեցէք, — հրամայեց բէյը և ինքը վերադարձաւ ընդունարանը: Նորա կողքին նստաւ աղան և քարտուղարը: Նոքա նայեցին միմեանց վերայ և ուսերը վեր քաշեցին:

— Տեսնենք, կ'բերեն պարտիզից կամ բակից. — սկսեց աղան, — բայց վատ չէր լինիլ, եթէ մի բանով հիւրասիրէին մեզ:

Այն ընդունարանը, ուր նոքա նստած էին, լաւաւորուած էր միայն մի քանի լապտերով: Շուտով Մօկրան բերաւ մատուցարանի վերայ երկու փոքր արծաթէ աշտանակ, մի շիշ, սրուակներ և հրուշակներ:

— Մաշալլա՛, — բացականչեց աղան ի նշան հաւանութեան:

— Ներեցէք ինձ, — ասաց Մօկրան, սկուտեղը աղայի և բէյի մէջ տեղը դնելով: — Դուք գիշերն էք գալիս, բայց ես էլ կամենում եմ հիւրասիրել ձեզ: Ահա բերում եմ, ինչ որ կայ, սպացուցանելու, թէ որչափ ուրախ եմ, ձեզ իմ տանը տեսնելով: Խնդրեմ, անուշ անէք:

— Յոյս ունիմ, որ մեզ չե՞ս մեղադրիլ գիշերը գալու համար, — հարցրեց բէյը:

— Աստուա՛ծ աղատէ:

— Մենք միայն քեզ չենք խուղարկում: Ժամանակն այնպէս է, — բէյը հոգւոց հանեց. — կեղծ մատնութիւնները կարկտի պէս են թափվում: Եթէ Բուլղարիայում այնքան զինուոր լինէր, որքան լրատուններ, այն ժամանակ փառչա՛հին դժուար կըլինէր կառավարել: Նոր մենք հաջի Խրիստոյի մօտ էինք:

— Չէ՞ որ նա բանտ նստաւ, — նկատեց Մօկրան:

— Մէկը միւսին չէ վրասում:

Մօկրան նայեց Արիստարխի-բէյի աչքին և սկսեց հիւրասիրել. — Խնդրեմ, համեցէք, անուշ

արէք, մի՛ մերժէք:—Հիւրասէր տանտիկնոջ պարտականութիւնը կատարելուց յետոյ նա հեռացաւ: Մտնելով կողքի սենեակը, դուռը փակեց, պատի մօտով գնաց, բացեց պահարաներից մէկի դուռը և սկսեց ականջ դնել: Հէնց որ նա գնաց, Արիստարխի-բէյը առաւ շիշը և բարձրաձայն կարգաց. «Lacrimae Christi»:

—Ա՛յ քեզ հաջի Խրիստօ,—ասաց աղան.— նորա պատճառով ի դուր անհանգստացրինք Մօկրային:

—Այնքան էլ զուր չէ, ահա՛ տե՛ս,—բէյը դարձրեց շիշը դէպ ճրագը և աղայի ուշադրութիւնը դարձրեց դիմու հիանալի գոյնի վերայ, որ ճաշակի տէր մարդիկ շատ են գնահատում: Ճառագայթները բեկվում էին այնտեղ, ինչպէս ավասի մէջ:—Տեսնո՞ւմ ես:

—Տեսնում եմ... Ֆրանսիական արտղների մի տեսակը կըլինի:

—Չէ, արագ չէ, այլ շարօպ է, որ ասվում է «Քրիստոսի արցունք»: Ուղը՞ւմ ես համը տեսնել:

Այո, պէք է համը տեսնել իմանալու, թէ որպիսի արցունք էր թափում Քրիստոս:—Արիստարխի-բէյը ածեց, աղան խմեց, պօօշներն էլ լպտեց. համը բերանում մնաց:

Մօկրան այլ ևս ականջ չգրեց և կամացուկ հեռացաւ:

Աստիճանաւորները ներսը գինի էին խմում, իսկ զափթիւնները դուրսը որոնում էին: Թէ սորա և թէ նորա վերջացրին իրենց բանը: Գինին խըմեցին, զափթիւններն էլ ման եկան բոլոր անկիւնները, անցքերը, պարտէզը, մինչև անգամ նա յեցին ջրհորը, բայց բան չգտան: Այս բոլորը մի քանի ժամ տևեց, այնպէս որ կէս գիշերից անց էր, երբ դատարկ չլի տեղ լիքը եկաւ: Բէյն ու աղան օգային համբոյր տուին Մօկրային, երբ նոր շիշ բերաւ, որովհետև աստիճանաւորների լեզուն արդէն հալից քնկել էր: Իսկ երբ մի քիչ յետոյ գլխաւոր ժանդարմներից մէկն եկաւ յայտնելու գործի դրութիւնը, տեսաւ սեղանի վերայ վառած ճրագները, չվերջացրած գինու շիշը, կիսով չափ լցրած սրուակները, իսկ բազմոցի վերայ քնած աստիճանաւորներին, նա ոչ ոքի չկարողացաւ զեկուցումն տալ: Զափթին կանգնեց, հազաց, մի քանի անգամ արտասանեց՝ «էֆէնդըմ», վերջապէս մօտեցաւ սեղանին, դատարկեց սրուակներից մէկը, պօօշները լպտեց, բէյը և սրուակներից մէկը, խմեց միւս սրուակի մնացորդը և այդպէս շարունակեց: Կարծես թէ բանը դորանով էլ պիտի վերջանար և հաւանական է, որ իրեն էլ այդպէս էր թւում, որովհետև շուտ եկաւ և գնաց դէպի դուռը: Բայց իսկոյն նա էլի սեղանի մօտ եկաւ, առաւ շիշը, բերնին տարաւ և քաշեց գլուխը, մինչև որ վերջացրեց մնացածը, հաւաքեց անուշեղէններն և ապա

դուրս եկաւ: Դուրս դալով իրեն սպասող ընկեր-  
ների մօտ, ասաց թէ «հրամայած է սպասել»:



Սպասելու հրամանը ստանալով, կարգ ու  
խաղաղութիւն պահպանող տաճիկները հաւաք-  
ուեցան դարպասի մօտ: Մի քանիսները մնացին  
բակում, միւսները դուրս եկան փողոց և նստո-  
ւեցին: Երկար ու բարակ խուզարկութիւն ա-  
նելուց յետոյ ամենքն էլ հանգստանալ էին ու-  
զում: Տաճիկներին աւելի հեշտ է հանգստանալ,  
քան թէ ուրիշներին: Արևմտքի մարդուն նստե-  
լու համար հարկաւոր է գոնէ նստարան կամ  
քար. իսկ արևելցին ուղղակի նստում է գետ-  
նին, ինչ աեղ որ կանգնած է. հողը, գետինը  
փոխարինում է նորա համար և նստարան և ան-  
կողին. այդպէս էլ զափթիները շարուեցին տան  
մօտ թէ փողոցում և թէ բակում: Ոմանք ծխա-  
մորճն էին լցնում, ոմանք արդէն ծխում էին և  
սպասում: Վերջապէս մէկը նիրհեց և քնեց. նո-  
րա օրինակին հետևեց երկրորդը, երրորդը, և  
չուտով քնի հրեշտակը տարածեց իւր թևերը  
զափթիների վաշտի վերայ, և լսվում էր միայն  
մրափոցի խրխուզը: Առաջնորդները քնած էին  
ընդունարանում, ստորագրեալներն էլ բակում,

իսկ տանը—ծառաները: Երկար ժամանակ Անկան  
անհանգստանում էր և չէր կարողանում քնել, բայց  
վերջապէս քունը նորան էլ յաղթեց: Ամբողջ տա-  
նը միայն Մօկրան չէր քնած: Նա ոչ միայն քը-  
նած չէր, այլ և դիտում էր ամեն բան: Պտտեց  
բակը, նայեց զափթիներին, եկաւ ընդունարան  
և, վեր առնելով ճրագը, դիտեց Արիստարխի-  
բէյին, աղային և քարտուղարին: Առաջին եր-  
կուսին դիտելուց ոչ մի հետևանք չեղաւ, իսկ  
քարտուղարի կողքին Մօկրան թուղթ տեսաւ.  
առաւ, նայեց և ի հարկէ ոչինչ չկարողացաւ ու-  
րոշել, որովհետև կարդալ—գրել չգիտէր: Սակայն  
նա հասկանում էր, որ քարտուղարը սլիտի ար-  
ձանագրէ, ինչ որ կատարվում է խուզարկու-  
թեան և հարց ու փորձի ժամանակ, ուստի և  
հասկացաւ, որ այդ թղթում գրած պէտք է լի-  
նի, թէ ինչ է արել Արիստարխիբէյը այս գի-  
շեր: Այդ պատճառով առաւ թուղթը, գնաց  
Անկային զարթեցրեց և տալով ասաց. «կարդա,  
տես, ի՞նչ է գրած»:

- Չեմ կարողանում, մայրիկ,—պատասխա-  
նեց օրիորդը, նայելով թղթին:
- Տաճիկերէ՞ն է գրած:
- Չէ, ֆրանսերէն:
- Ստօեանը հօ գիտէ՞ ֆրանսերէն:
- Ո՞ւր է նա,—հարցրեց աղջիկը:
- Ո՞ւր է...—նա անվտանգ է... Միայն դըժ-  
ուար է նորա մօտ գնալը: Սակայն կըփորձեմ:

Մօկրան գիտէր իւր ջրհորի գաղանիքը, բայց ինքը երբէք ցած չէր իջել: Այժմ նորա ձեռքին այնպիսի թուղթ էր, որը կարգալուց գուցէ կարելի լինէր նախազգուշացնել այն մարդոց, որոնց վտանգ էր սպառնում: Ի նկատի ունենալով անհրաժեշտութիւնը, նա վճռեց փորձել:

— Դու մնա այս տեղ և մի՛ քնիլ, — ասաց նա Անկային, — իսկ ես կը գնամ և շուտով կը վերադառնամ: Տաճիկները խոր քնած են, և ես կարծում եմ, որ մինչև վերադառնալս չեն դարթնիլ:

Մօկրան առաւ մի լապտեր, մի շիշ օղի, հաց և գնաց դէպի ջրհորը, նա կապեց շղթայից լապտերը և ցած իջաւ: Ստօեանն ու Նիկօլան այնպիսի մթութեան մէջ էին, որ ոչ մի աչք չէր կարող նկատել: Նոքա նստած խորհում էին:

— Բայց երկա՞ր մենք պիտի մնանք այս տեղ, — հարցրեց Ստօեանը:

— Մինչև որ Պեօտըը գայ, — պատասխանեց Նիկօլան:

Ստօեանը հարց ու փորձ էր անում ստորերկրեայ անցքի նշանակութեան մասին, թէ ով է շինել, ինչպէս է Նիկօլան իմացել այդ — և այդպէս նա աշխատում էր անց կայնել ժամանակը: Նիկօլան ամեն բան չպատմեց ընկերին: Նա չկամեցաւ իւր ընկերին ծանրաբեռնել այնպիսի տեղեկութիւններով, որոնք չէին վերաբերում իւր անձնական գործունէութեան: Այդ պատճառով էլ նա չտարաւ ընկերին մինչև ստորեր-

կրեայ անցքի միւս ծայրը: Նա համոզուած էր, որ Պեօտըը հէնց որ վերադառնայ կ. Պօլսից, անյապաղ հոգ կըտանէ իրենց մասին և այդ խորհրդածութիւնները նա յայտնեց Ստօեանին:

— Չարար եօք (ֆրաս չունի), ասաց Նիկօլան: — Բայց որ մութ է, ա՛յ, բան չենք կարող անել... Իսկ երբ դուրս գանք, ամեն բան լուսաւոր կըլինի:

— Ինչո՞ւ մենք չվերադարձանք մեր նախկին սպաստանը, — հարցրեց Ստօեանը:

— Որովհետև բախում կարող էինք պատահել զափթիկներին:

— Իսկ եթէ իսկոյն Անկայի յետևից վազէի՞նք:

— Այժմ բան չէ կարելի անել պէտք է ըստպասել. գուցէ աւելի շուտ լոյս տեսնենք, քան թէ սպասում ենք... — Այս խօսքերը արտասանելիս լոյս երևեց: Ստօեանն ու Նիկօլան առաջ վազեցին և պատահեցան Մօկրային:

— Մի րոպէով եկայ քեզ մօտ:

— Ի՞նչ է եղել:

— Շատ զափթիկներ են եկել. ողջ գիշերը ման եկան, ամեն տեղ որոնեցին և այժմ քնած են: Ահա ձեզ լապտեր, հաց, օղի, բայց պէտք է կարգալ այս թուղթը, — և նա տուեց թուղթը Ստօեանին:

Լոյսը առաջին նուագ այնպէս շլացրեց Ստօեանին, որ նա ոչինչ չկարողացաւ ջնկել. բայց

չուսով նորա աչքերն ընտելացան լուսին, և նա սկսեց կարգաւ և բացատրել: Դա հաջի Խրիստոյի և Մօկրայի մօտ եղած խուզարկութիւնների համառօտ արձանագրութիւնն էր: Խուզարկութեան մասին ոչինչ հետաքրքրական բան չըկար ասած. բայց կային նկատողութիւններ հաջի Խրիստոյի ցուցմունքների մասին. այն տեղ նըշանակած էր՝ «Հաջի Խրիստօն կասկածում է որ Ստօեան կրիվենովը թաղնուել է Մօկրայի մօտ, որովհետև հաջի Խրիստոյի աղջիկը, որ սիրահարուած է Ստօեանի վրայ, օրը երեք անգամ վազում է Մօկրայի տունը»:

Նիկօլան խոր հառաչեց, լսելով այս խօսքերը, իսկ Մօկրան դառնալով Ստօեանին ասաց.

—Որ իլենկան սիրահարուել է քեզ վերայ, այդ տեղ վատ բան չկայ: Ճշմարտն ասած, ես ուզում էի, որ Պետրը պսակուէր նորա հետ, բայց եթէ նա գերադատում է քեզ, այն ժամանակ Պետրը թող ուրիշը գտնէ: Վատը այն է, որ հաջի Խրիստօն այդպիսի բաներ է պատմում տաճիկներին: Չէ որ Սրիստարխի-բէյը ուղղակի գնաց այն տեղ, ուր դուք թաք էիք կացել... դա վատ բան է... Լաւ է, որ մենք գիտենք այդ... Առ այժմ մնաք բարով, գնամ. ես շտապում եմ:

Նիկօլան առաւ լսպտերը և առաջ գնաց Մօկրան նստաւ դոյլի մէջ, և առանց որ և է արկածի վեր բարձրացրին: Նա վազելով անցաւ

պարտէզն և թուղթը բերաւ, դրեց այն տեղ, ինչ տեղից առել էր: Ամեն բան յաջողակ անցաւ: Սակայն արձանագրութեան այն կտորը, ուր խօսվում էր իլենկայի և հաջի Խրիստոյի մասին, սաստիկ ազդեցութիւն ունեցաւ գետնի տակ: Հաջի Խրիստոյի վարձուները զայրացրեց Ստօեանին:

—Եւ ինչո՞ւ համար է նա ամեն բան ասում,—բարկանում էր նա:—Թող ինձ չխնայէր, թէ չէ աղջկան... հարազատ աղջկան խառնում է... Անպիտան:

Նիկօլան բան չէր ասում. նա յօնքերը կիտած նստել էր, արմունկները ծնկներին յենած, ձեռներով գլուխը բռնած և կարծես թէ այդպէս քարացած մնացել էր: Լապտերի հետ միասին գետնին դրած էր մի շիշ և հաց: Ստօեանը առաւ շիշը, խմեց և կամեցաւ տալ Նիկօլային, բայց սա չուղեց:

—Խմի՛ր, եղբայր: Այս տեղ խոնաւ է,—հրաւիրեց Ստօեանը:

Նիկօլան չպատասխանեց. իսկ Ստօեանը մի պատառ հաց կտրեց և աշխատեց աւելի լաւ տեղաւորուել: Մի քանի անգամ նա խօսակցութիւն սկսեց ընկերի հետ, բայց պատասխան չստացաւ. այս լուրթիւնը նորան զարմացրեց:

—Ի՞նչ եղաւ, հիւանդ հօ չե՞ս,—հարցրեց Ստօեանը:

Նիկօլան լուռ էր և անշարժ:

—Գուցէ դու քնած ես, ես էլ եմ ուզում:

— Զարմանալի չէ. նա բաւական շատ օղի խըմեց: Ընտրեց մի հարթ քար, գլխի տակը դրեց բարձի տեղ, պառկեց, ոտները մեկնեց և քնեց: Այժմ միայն Նիկօլան գլուխը վեր բարձրացրեց և սկսեց նախատել քնածին.— Ինչո՞ւ դու առաջ ինձ չասացիր, որ նա քեզ է սիրում: Ինչո՞ւ համար գլխիս օյին էիր խողում:

Նա տեղից վեր կացաւ և գնաց դէպի արտաքին մուտքը: Այս տեղ նա թէկն ընկաւ ապառաժին, որ ծածկում էր գեանափորի մուտքը, և երկար մնաց այդպէս: Արևելքում սկսում էր երևիլ արշալոյսը: Նոր զարթնած թռչունները տեղերից շարժվում էին: Առաւօտեան մառախուղի մէջ լսվում էր միայն վայրենի բազերի թռչելը, սագերի կողկողը, որոնք գիշերուայ արշաւանքից վերադառնում էին դէպի Գանուբի ճահիճներն ու դաշտերը, ուր նորա ամեն ինչ ոչնչացնում են: Ստորև փայլում էր Գանուբը, իսկ նորա միւս կողմում տարածուած էին անհուն ճահիճներ, ուր երևում էին սպիտակ պօրերի և հաւալուսների երամակները: Գետի մակերևոյթի վերայ սրընթաց ձկնկուլներ էին թռչում, մի քանիսները մագիլներով ձուկ բռնած: Ափին, կանգնած էին, որպէս պահապաններ, արագիլներ. իսկ մերթ այս տեղ, մերթ այն տեղ ճահիճ էին իջնում տառեխներ: Շուտով դուրս եկաւ մեծ, փառահեղ արեգակը և պայծառ կերպով լուսաւորեց Նիկօլայի առջև սփռուած

պատկերը: Բայց նա այժմ բան չունէր պատկերների հետ: Նա նայում էր և ոչինչ չէր տես. նու՛ւմ: Նա բարկանում էր իւր ընկերի և մաերիմի վերայ, և այնչափ էր խորասուզուած նա այս բարկութեան մէջ, որ ուշագրութիւն չէր դարձնում, թէ ինչ էր լինում երկնքում, երկրում, օդում և ջրում: Եթէ մէկը հարցնէր նորան՝ ծագե՞լ է արեգակը, նա հաւանորէն չէր իմանալ, թէ ինչ պատասխանէր: Սիրահարուածները ուրիշ մահկանացուների պէս չեն նայում աշխարհիս վերայ: Նոցա աշխարհը, երբ իրենց ընտրածի աչքին չեն նայում, ներսից դուրս չէ գալիս: Նորա կատարեալ եսականներ են դառնում. տեսնում են—միայն իրենց, մտածում են—միայն իրենց մասին:

«Օրիորդը սորան է սիրում,—մտածում էր Նիկօլան,—սորա համար օրը երեք անգամ գալիս է Մօկրայի մօտ, իսկ Մօկրան ուզում է, որ Պետօրը պսակուէ նորա հետ... Ինչպէ՞ս օրիորդը... Իսկ ես ի՞նչ... Ինչո՞ւ համար նա ինձ այնպէս ընդունեց... Ինչո՞ւ էր կամենում տալ ինձ իւր թանկագին իրեղէնները»:

Իեղճ Նիկօլան չէր կարողանում միաւորել այս բոլոր մտքերը, իւր բոլոր զգացումները: Մի և նոյն ժամանակ նա բարկանում էր, զայրանում, նախանձում և ոչ մի կերպ չէր կարողանում որոշել, պարզել իրեն, թէ ինչ է լինում իւր հետ և իւր շուրջը: Նա մտքով տեսնում էր



Իլենկային, և սորա պատկերը այնքան տիրեւ էր Նիկոլայի երեսակայութեան, որ նա սկսեց վայրենի նախազօծեր երազել: «Ստօեանը խեղդեց միւնազիմին, — մտածում էր նա, — իսկ եթէ ես էլ խեղդէի՞ Ստօեանին»: Նա հաշիւ չէր տալիս իրեն, չէր զանազանում իւր ծրագիրը միլեազիմի հետ պատահած անցքից: Նա կրկին դարձաւ այն նախնական մարդը, որ քաղաքակիրթ երկրում ջէնտրլմէնի էր փոխուել, միշտ պատրաստ լինելով զրկել կեանքից իւր մերձաւորին, ընկերին և մինչև անգամ հարազատեղբօրը կնկայ համար մենամարտութեան հրաւրելով: Նիկոլան իրեն սաստիկ անպատուած էր համարում Ստօեանի կողմից, որովհետև Իլենկան սորան էր սիրում:

Արեգակը աւելի և աւելի առաջ էր գալիս: Մէզը արդէն ցրուել էր, առաւօտեան շարժմունքը արդէն հանդարտուել էր, և իննը ժամի մօտ էր, երբ Նիկոլան լսեց գեանափորից իրեն հասնող խօսակցութեան արձագանքը: Նա յետ դարձաւ և նայեց գեանափորի խորքը: Չայնը, քանի գնում էր, մօտենում էր, և վերջապէս մթութեան միջից երևեց Պեօտրը և ապա՝ Ստօեանը: Նիկոլան չչարժուեց: Պեօտրը բարևեց նորան, իսկ Նիկոլան մի ինչ որ բան մըրթմըրթաց պատասխանի տեղ:

— Ես առաւօտեան եկայ Վառնայից, — սկսեց Պեօտրը, — և գալիս եմ ձեզ ազատելու ոչ-բա-

բելական գերութիւնից: Այս ընդէիս հեռագիր տուի ժուրժեմօ, բայց անհրաժեշտ է, որ գետնափորում մնաք...

— Եթէ միայն լոյս և ուտելիք կայ, — նկատեց Ստօեանը, այն ժամանակ ոչինչ: Երբ ես այստեղ ընկայ, սկզբում ինձ համար անտանելի էր, բայց քոյրովին բան չէր երևում... չէի կարծում, որ խաւարը կարող է այդպէս անախորժ աղղեցութիւն ունենալ... Քանի Մօկրան չէր եկել, ես չէի իմանում, թէ ինչ անեմ:

— Հէնց այս գիշեր ես ձեզ միւս ավր անցկացնել կըստամ: —

— Միայն ոչ ինձ, — դատան կերպով ընդհատեց Նիկոլան: —

— Ուրեմն դու չե՞ս ուղում:

— Թող Ստօեանը գնայ, ինչպէս ուզում է, իսկ ես մնում եմ Ռուչչուկում:

— Ուրեմն հաւանե՞լ ես գեանափորը, — հանար արեց Պեօտրը:

— Գեանափորից ես դուրս կըգամ:

— Յետո՞յ:

— Ոչինչ:

— Միայն մեր գլխին մի թշուառութիւն կըբերես:

— Ոչ ոքի գլխին թշուառութիւն չեմ բերիլ, ինքս ամեն բան կ'անեմ:

— Տաճիկները կ'որոնեն քեզ և կըզանեն:

Նիկոլան բան չպատասխանեց:

—Աւելի լաւ է՝ Ստօեանի հետ դնալ:  
 —Ես չեմ ուզում Ստօեանի հետ դնալ,—  
 ընդհատեց Նիկօլան: Չէ՛... ում հետ ուզում էք,  
 բայց ոչ Ստօեանի:

—Այդ ի՞նչ է նշանակում,—հարցրեց Ստօեանը:—Ինչո՞ւ եմ ես բեղ վերաւորել:

—Գորա մասին դեռ կըխօսենք մենք, իսկ այժմ... մի՛ խօսիլ հեռս, թէ չէ, —նա ցոյց տուեց բռունցքը:

—Ա՛յ բեղ օյին,—բացականչեց Պեօտը:—Այժմ, երբ հերցոգովրացիները կուզում են տաճիկների դէմ. այժմ, երբ մենք պիտի մտածենք Բուլղարիայի մասին. այժմ, երբ մենք էլ զէնք պիտի բարձրացնենք մեր իրաւունքները ձեռք բերելու համար. այժմ, երբ մեր մէջ երկպառակութեան ստուերն անգամ պիտի չլինի... այժմ բուլղարացին բուլղարացուն բռունցք է սպառնում... Ա՛խ, Նիկօ՛լա...—բարկացաւ Պեօտը: Նիկօլան խելքի եկաւ, ձեռները ցած թողեց և բերանը բաց նայեց Պեօտին:

—Չեմ հասկանում, չեմ էլ կարողանում հասկանալ, թէ ինչ է պատահել,—սկսեց Ստօեանը:

—Երևի, դու նորան նեղացրել ես...—նկատեց Պեօտը:

—Ինչպէ՞ս. երկուսս նստած էինք գաղտնի սենեակում, մի քանի ժամ ման եկանք պարտիզում, ցած իջանք ջրհորը և մինչև անգամ այս

դետնափորում շատ լաւ էինք... Գունս տարաւ, քնեցի, մինչև որ դու վեր կացրիր ինձ. իսկ այժմ... ահա՛ (նա մատով ցոյց տուեց Նիկօլայի վերայ), առանց որ և է պատճառի:

—Առանց պատ... ճա... ուի... արտասանեց Նիկօլան ատամների միջից:

—Հօ բան չե՞ս ասել նորան:

—Ես ի՞նչ կարող եմ ասել:

—Բանն այն չէ, թէ ինչ է ասել ինձ,—դարձաւ Նիկօլան Պեօտին,—այլ այն է, թէ ինչ չէ ասել:

—Ի՞նչ,—հարցրեց Պեօտը:—Ասա, բանն ինչու՞մն է, բացատրեցէք միմեանց, հաշտուեցէք և միասին կըզնաք տաճիկներին ծեծելու:

—Ա՛...—պատասխանեց Նիկօլան, — ձեռք վեր բարձրացնելով:—Տաճիկներին կոտորելու ես կը գնամ, և Աստուած տայ, որ նորա ինձ սպանեն. իսկ Ստօեանի հետ հաշտուել չեմ կամենում... թող տաճկական զնտակները մեզ դատեն:

—Ի՞նչ է ձեր դատը:

Նիկօլան ախ քաշեց:—Ես ոչ կըմտածեմ, ոչ էլ կը խօսեմ նորա մասին... Բայց նորա համար միայն չեմ կուռում Ստօեանի հետ, որ նա էլ դնում է տաճիկներին ջարդելու:

—Ուրեմն դու չես մնալ Ռուշչուկում:

—Ուղարկիր, ուր որ ուզում ես:  
 —Բանը իմ ուղերս չէ, այլ թէ ինչ է հար-

կաւոր: Չեզանից մէկը շրջել է արեւելեան Բուլ-  
 զարիան, իսկ միւսը—արեւմտեանը, երկուսդ էլ  
 տեղեկութիւններ յազար էք հաւա-  
 քել, որ պէտք է համեմատել նոյնպէս ձեռք  
 բերած տեղեկութիւնների հետ ժողովրդական  
 պատերազմի նախագիծը կազմելու համար...  
 Այժմ ձեր տէրը դուք չէք... Քանի որ դուք չէք  
 ընկել տաճիկների ձեռքը, ձեզանից ոչ մէկը  
 իրաւունք չունի իւր գլուխը վտանգի ենթարկե-  
 լու, ուր օգտաւէտ տեղեկութիւններ կան ժո-  
 ղովուած: Երբ կըզնաք պատերազմ, այն ժա-  
 մանակ դուք գիտէք:

—Քնանք պատերազմ... հա՛... հա՛...—դո-  
 չեց Նիկոլան և ընկաւ Պետրի գլխիկը:

—Չեռդ տո՛ւր նորան,—ասաց Պետրը՝  
 ցոյց աւելնելով Ստեանին, երբ Նիկոլայի առաջին  
 բերկրանքն անցաւ:

—Նորա՞ն... չէ՛... իմ ու նորա մէջ կանգ-  
 նած է... է՛հ... չեմ ասիլ... Եթէ մենք երկուսս  
 էլ ողջ և առողջ մնանք, պատերազմը վերջանա-  
 լուց յետոյ ես կըխօսեմ նորա հետ... ատրճա-  
 նակները ձեռներիս կըկանգնենք միմեանց դէմ  
 և այնքան կ'արձակենք, մինչև որ մեզանից մէկն  
 այնպէս վայր ընկնի, որ այլ ևս վեր չկենայ:

—Ա՛յ քեզ բան,—բացականչեց Ստեանը,  
 իսկ յետոյ թեթեւ հեզնութեամբ շարունակեց.  
 —բայց նախ քան միմեանց վերայ ատրճանակ  
 արձակելը՝ ասա՛, բանը ինչու՞մն է:

—Կ'ասեմ... կ'ասեմ... իւր ժամանակին քեզ  
 կ'ասեմ:

—Իսկ առ այժմ նստէք այստեղ և աշխա-  
 տեցէք միմեանց միտը չուտել,—հանաք արաւ  
 Պետրը:—Անկան ձեզ համար կերակուր է պատ-  
 րաստել և հետո ուղարկել: Սակայն ես էլի կը-  
 դամ, որովհետև մի քանի յանձնարարութիւններ  
 ունիմ անելու: Մնաք բարով:

—Քնաս բարով,—պատասխանեցին Ստե-  
 անն ու Նիկոլան: Նիկոլան մնաց տեղում, իսկ  
 Ստեանը ճանապարհ ձգեց Պետրին:

—Ի՞նչ ես արել նորան,—հարցրեց սա:

—Ճշմարիտ՝ չգիտեմ... Մտաբերում եմ մեր  
 բոլոր խօսակցութիւնը և բոլորովին չեմ կարո-  
 դանում հասկանալ:

—Հըմ... «cherchez la femme»... Կանանց  
 մասին հօ չէ՞ք խօսել:

—Խօսել ենք... բայց այդ պարտիզումն էր...  
 յետոյ մենք ցած իջանք ջրհորը, և Նիկոլան բո-  
 լորովին հանգիստ և մտերմաբար պատմեց ինձ  
 դետնափորի մասին... քնելուց առաջ նա տա-  
 րօրինակ թուեց ինձ. ոչ օղի կամեցաւ խմել, ոչ  
 էլ հարցերիս պատասխանեց... Բայց ես ուշադ-  
 րութիւն չդարձրի դորա վերայ... ինքս քնել էի  
 ուզում, կտրժեցի թէ նա էլ նիրհում է:

—Հապա տեսնես ի՞նչ է պատահել:

Այդ հարցը այնպէս էլ մնաց առանց պա-  
 տասխանի: Ստեանը Պետրին ճանապարհ դրեց

իսկ ինքը վերադարձաւ իւր տեղը, ուր առաջ քնած էր։ Այստեղ էր կերակուրներով զամբիւղը, որոնց ունակնութիւնը ու քանակութիւնը ապացուցանում էր դարսողի մեծ հոգատարութիւնը։ Նա ուզեց կանչել Նիկոլային, բայց մարդ ինչպէս բան ուտի մի այդպիսի ընկերի հետ, որի յարաբերութիւններն այնքան լարուած էին։ Սկսեց մենակ ուտել, բայց վճռեց զսպել իւր ախորժակը, որպէս զի կէսը իւր ընկերի համար մնայ. կուշտ ու պինդ կերաւ, և ոչ թէ կէսը, այլ երեք քառորդը մնաց. բայց Նիկոլայն կրկին չեկաւ։ Անդործ լինելուց Ստոեանը ճրագը վառեց, որից մի քանի հաս կար զամբիւղում, զընաց գետնափորը նայելու։ Նա զայրանում էր, որ հնազիտութեամբ չէր պարապել, այն ժամանակ քարերի ձևից, շինուածքի տեսքից և միաւորիչ նիւթերի որպիսութիւնից կարող էր եզրակացնել, թէ այս շինութիւնն որ դարու գործ էր։ Մի բանում միայն նա համոզուած էր—որ տաճիկները չեն շինել այդ. տաճիկները սէր չունին քարէ շինութիւնների հետ, և այս հանդամանքը կարող է ապացոյց լինել, որ մինչև անգամ իրենց տէրութեան ամենածաղկեալ վիճակի ժամանակ նոքա չէին հաւատում, որ իրենց ստեղծած քաղաքական հաստատութիւնները ա՛մուր կըլինին։ Նոքա մի վայրկեանում տէրութիւն էին ստեղծում և, որպէս այդ գործի մասնագէտներ, ուրիշներից աւելի լաւ էին հասկա-

նում նորա էոթիւնը։ Ահա թէ ինչու հաստատօրէն կարելի է ասել, որ տաճիկները չէին շինիլ այդպիսի հիմնական ստորերկրեայ ծածկատուն։ Ստոեանն էլ այս բանում համոզուած էր։ Նա զննում էր սլատերը, որոնում էր արձանագրութիւններ, և նորան թւում էր, թէ մի բան է տեսնում մամուի տակ, բայց շուտով համոզուեց, որ ոչ պատերի, ոչ սիւների վերայ արձանագրութիւն չկայ։ Նա միայն մի քանի տեղ գտաւ, ուր խարոյկներ են եղել, տեսաւ ոսկրներ, որոնք պարզ ցոյց էին տալիս, թէ մի ժամանակ այս տեղ ապրել են։ Նորա ձեռն ընկաւ մի կոտրած պոյս, ճիշտ այնպիսին, որպիսին տաճիկները գործ են ածում։ Ոսկրներն ոչխարների և դառների էին, բայց ամենից շատ կային թռչունների. բայցի դորանից, բաւական փետուրներ էին ցրուած։ Մանաւանդ նորան հետաքրքրում էին բադերի, սագերի, հաւերի գլուխներն ու թևերը, որոնք, ակներև էր, նոր էին ընկել այդ տեղ։ «Ինչպէ՞ս են սոքա այս տեղ ընկել»,— հարցնում էր նա իրեն և պատասխան չէր գրանում. և զարմանալի չէ—նա որսորդ չէր, ուտի և չէր հասկանում, որ այդ տեղ աղուէտներ են ապրել, որոնք փախել են այն ժամանակ, երբ Պետրն ու Նիկոլայն նոյա անհանգստացրել են։ Նիկոլայն այս ամենը կըբացատրէր, բայց այժմ նորա հետ խօսելու հնար չկար։ Երկար թափառելուց յետոյ Ստոեանը եկաւ այն տեղ, ուր

ապտերն ու դամբիւղն էին, և համազուեց, որ  
Նիկիօլան մօտեցել էր: Պաշարի կէսն էր արդէն  
մնացել, իսկ գինին պրծել էր:

— Չայրոյթը, ինչպէս երևում է, կրկնապատ-  
կում էր նորա ախորժակն ու ծարաւը, — նկա-  
տեց Ստօեանը: — Բայց, երևի, արդէն ուշ է, —  
շարունակեց նա:

Դրսի մուտքից հեշտութեամբ կարելի էր  
իմանալ ժամանակը, որովհետև ժայռից ամեն  
բան կարելի էր տեսնել: Բայց Ստօեանը կար-  
ծում էր, թէ Նիկիօլան այն տեղ կանգնած է և  
այդ պատճառով չկամեցաւ գնալ այն կողմը,  
այլ եկաւ դէպի ջրհորի մուտքը, որ երկնքին նա-  
յիւ Շուտով հասաւ ջրհորին: Ճրագը մի տեղ  
դնելով, նա զգուշութեամբ մօտեցաւ ծայրին և  
պատից բռնուելով, գլուխը դուրս ցցեց: Նա տե-  
սաւ պարզ երկինքը, ուսկից կարելի էր եզրա-  
կացնել, որ արևը մայր չէր մտել, բայց մի և  
նոյն ժամանակ նա տեսաւ և մի քանի աստղ,  
որոնք փայլում էին, թէ և մռայլ: «Աստղեր», —  
զարմացաւ Ստօեանը: — Ի՞նչ է նշանակում...  
Այսօր ինձ վիճակուած է հրաջքներ տեսնել:  
Աստուած դիտէ, թէ ինչու Նիկիօլան է բարկա-  
ցել, իսկ ցերեկով աստղեր են երևում»: Այս  
երևոյթը, որ նա չէր հասկանում, սաստիկ զար-  
մացրեց և հետաքրքրեց նորան: Մի քանի ան-  
գամ նա գլուխը դուրս ցցեց և միշտ էլ նոր-նոր  
աստղեր տեսաւ. վերջապէս, նա մի ուրիշ նոր

բան տեսաւ. ջրհորի վերևում մի կանացի դէմը  
երևեց, որի աչերն դէպի խորուտքն էին նայում:  
Ստօեանը իսկոյն թաք կացաւ, բայց շուտով էլի  
նայեց և ճանաչեց Անկային:

— Էդ դո՞ւ ես, — հարցրեց նա:

— Ստօեան... — վերևից մի մեղմ ձայն եկաւ:

— Ի հարկէ... ես եմ:

— Եւ ես... ես... — պատասխանեց օրիորդը:

— Այժմ ես քեզ տեսնում եմ և ճանաչում...  
Ուրեմն դու եկե՞լ ես:

— Քսան անգամ ես եկած կըլինեմ... Հը՞,  
ինչպէ՞ս ես այդ տեղ:

— Ոչինչ, վատ չէ... Բայց կըզերազասէի  
դեմնի վերայ լինել, քան թէ տակը:

— Գուցէ մի բանի կարօտութի՞ւն ունիս:

— Քեզ եմ կարօտում, քեզ, — ասաց նա շեշ-  
տելով:

Անկան մի կարծ միջոց լուեց և ապա կան-  
չեց. — լսիր, Ստօեան, դու գնում ես Ռումա-  
նիա... ես էլ եմ պատրաստվում:

— Ե՞րբ, ինչո՞ւ:

— Չգիտեմ, թէ երբ: Դու հարցնում ես,  
թէ ինչո՞ւ... կու... կուսանոց, — այնպէս կամաց  
արտասանեց, որ Ստօեանը չլսեց վերջին խօսքը:

— Ի՞նչ ասացիր, — հարցրեց Ստօեանը:

— Կու... — լրկին այնպէս պատասխանեց, որ  
ներքևում բան չլսուեց:

— Բարձր ասա՛, որ այն տեղ կարողանամ գտնել քեզ:

— Ռուսներն այժմ դու ինձ չես տեսնիլ:

— Ինչո՞ւ:

— Կուսանոց:

— Կուսանոց ես ուզում գնալ:

— Այո, ուզում եմ:

— Հրաժարու՛ի՛ր, խնդրեմ, այդ մտքից, հրաժարու՛ի՛ր: Մնա՛ Բուլղարիայում, մինչև որ ես կը վերադառնամ:

— Իսկ դու շո՞ւա կը վերադառնաս, — հարցրեց օրիորդը:

— Կաշխատեմ՝ շտապել, — վճռողաբար պատասխանեց Ստեփանը:

— Շո՞ւա վերադարձիր, ո՞հ, շուտ վերադարձիր: — Անկան շուռ եկաւ, և մի կարճ միջոց նորա դէմքը չէր երևում, յետոյ կրկին երեւեց:

— Ինչո՞ւ դու շուռ եկար:

— Կարծեցի, թէ մարդ է գալիս:

— Իսկ այժմ մարդ չկա՞յ:

— Ոչ ոք:

— Ասա՛ ինձ, այժմ գիշերէ, թէ ցերեկ:

— Յերեկ է, — պատասխանեց Անկան:

— Բայց նայի՛ր երկնքին:

Անկան վեր նայեց և նորից կռացաւ:

— Ասողեր տեսա՞ր:

— Չէ... արևը դեռ մայր չէ մտել, ի՞նչ ասողեր:

— Ապա ես ինչո՞ւ եմ տեսնում: Գուցէ արեգակը մայր է մտել:

— Հաստատ եմ ասում՝ չէ: Նա արդարև արևմուտքումն է, բայց դեռ մայր չէ մտել:

— Ափսոս, — հառաչեց Ստեփանը: — Իսկ պարտիզում ոչ ո՞ք չկայ:

— Ոչ ոք չկայ, — պատասխանեց օրիորդը, նախելով շուրջը:

— Լաւ նայի՛ր — մարդ չկա՞յ:

— Ոչ ոք չկայ:

Ստեփանը քաշեց դատարկ դոյլը, նստաւ և վեր բարձրացաւ: Չարմացած օրիորդը նայում էր, թէ ինչպէս էր նա բարձրանում: Վերջապէս երկուսի գլուխները հաւասարուեցան. այն ժամանակ օրիորդը մի փոքր յետ քաշուեց և բացականչեց. — Տէ՛ր իմ Աստուած:

— Կամաց, — շնչեց երիտասարդը: — Լսի՛ր, ես վեր բարձրացայ, որ ասեմ, թէ քեզ սիրում եմ... սիրում...

Անկան ձեռներն այնպէս մեկնեց, կարծես, բարբոսի կամենում էր անձնատուր լինիլ նորան, բայց շուտով խելքի եկաւ:

— Քեզ կարող են տեսնել, — ասաց նա:

— Ասածիս պատասխանիր, և ես իսկոյն ցած կ'ընեմ:

— Ես քեզ կը պատասխանեմ, բայց... — նա նայեց շուրջը, աչքերը ցած ձգեց և շնչեց. — Ես էլ քեզ եմ սիրում:

— Եւ կըստասե՞ս ինձ: —

— Այո՛, — պատասխանեց նա և նորից յետ նայեց: —

Յանկարծ մէկը կանչեց. «Ա՛նկա»:

— Յած իջի՛ր, — ասաց օրիորդը: —

— Կռացիր, համբուրիր ինձ վերջին անգամ:

Օրիորդը կռացաւ, և երիտասարդները համբուրուեցան: Այդ ընդմէջին նորից լսուեցաւ Անկային կանչող ձայնը. բայց նա թեք ընկած ջրհորին՝ նայում էր, թէ ինչպէս էր ցած իջնում՝ Ստեանը: Նա դուրս եկաւ դռնից և աղաղակեց՝ «մնա՛ս բարով»: Միայն դորանից յետոյ օրիորդը հեռացաւ:

Ստեանն էլ գնաց, բայց շուտով վերադարձաւ, կրկին գնաց և կրկին վերադարձաւ. մի քանի անգամ նա այդպէս գնաց ու յետ եկաւ, բայց Անկան չկար: Նորա տեղ Ստեանն ասողերն էր դիտում, որ, քանի գնում էր, աւելի լուսավառւում էին և վերջապէս փայլեցին արտասովոր լուսով: Եթէ նորա միտքը ամբողջապէս զբաղուած չլինէր Անկայով, ի հարկէ, կը հասկանար, թէ ինչու ցերեկով ջրհորից ասողերն երևում, իսկ դիշերը աւելի սաստիկ են փայլում: Սակայն այժմ նա նայում էր ասողերին, իսկ մտածում օրիորդի վերայ: Նա Ստեանի համար ամենապայծառ և լուսատու մոլորակն էր, նա նորա երկրային դրախտն էր:

— Ինչո՞ւ չէր գալիս, — նեղանում էր մեր

երիտասարդը: Նա հասկացաւ, որ արդէն դիշեր է, և սկսեց դուրս գալու ծրագիրը պատրաստել, որպէս զի մի քանի բողբոջ այն հասարակութեան մէջ լինի, ուր փայլում էր իւր ասողը: Բայց չըյաջողուեց իրազործել այդ մտադրութիւնը: Նորան խանդարեց Պետրը, որ ցած էր իջել հեռագիրների ծրարներով և կարևոր հետաքրքրական լուրեր բերելով:

— Ո՞ւր է Նիկօլան, — նախ և առաջ հարցրեց Պետրը:

— Ես նորան չեմ տեսել, — պատասխանեց Ստեանը:

— Յուսով եմ, որ այլ ևս չի նեղանալ, եթէ իմանայ այն, ինչ որ եկել եմ յայտնելու:

— Ի՞նչ է:

— Այդ ես ձեզ երկուսիդ կ'ասեմ, իսկ քեզ կ'ասեմ, որ քիչ էր մնացել քո պատճառով գաղտնիքը յայտնուէր:

— Մի՞թէ մէկը տեսե՞լ է:

— Մեր պառաւ Տըռնան:

— Նա չի ասիլ:

— Բարեբաղդաբար այդ պառաւը լաւ չէ տեսնում, և մենք կարողացանք համոզել նորան, թէ ջրհորում մարդ չկայ, և թէ այդ աչքին երևել է, և բանը նորանով վերջացաւ, որ մայրս Անկային հայհոյեց, բայց չէ՞ որ ուրիշները կարող էին տեսնել. ճշմարիտն ասած, ես քեզանից այդ չէ՛ի սպասում, — կշտամբեց Պետրը:

Նորա մտեցան Նիկոլային, որ կանգնած էր գեանափորի արտաքին մուտքի մօտ:

— Գիտե՞ս թէ ինչ է եղել, — ասաց Պետարը Նիկոլային: — Երևի, այսուհետև էլ դու չես բարկանալ Ստօեանի վերայ: Սերբիան պատերազմ է յայտնել Տաճկաստանին:

— Սերբիա՞ն... Տաճկաստանի՞ն... — բացականչեցին միասին Ստօեանն ու Նիկոլան:

Այս բացականչութեան մէջ արտայայտուեցաւ մի աննկարագրելի բերկրանք. նա ստիպեց մէկին մոռանալ Անկային, միւսին — Իլենկային: Ի՞նչ չէին մոռանալ նորա այսպիսի լուր ստանալուց յետոյ:

XVIII.

Այն գիշերը, երբ ծնողական տունը խուզարկեցին, Իլենկան չարչարուելով, տանջուելով անց կացրեց: Այսպէս ուրեմն նորա հայրը ցոյց տուեց դադանի սենեակը, և նորան թուեց, թէ լսեց Մօկրայի անունը: Երևի կրգնան այնտեղ էլ խուզարկութիւն անելու և կրբռնեն երիտասարդներին, որոնց, անկասկած, շուտով էլ կը դիտատեն: Ազջիկը աշխատեց իրեն համոզել, որ հայրը չտուեց Մօկրայի անունը, որ այդ միայն թուեց իրեն, բայց դա յուսալի միտարութիւն չէր: Նորա մտքը այժմ ամբողջապէս այդ հարցով էր զբաղուած:

— Ի՞նչ անեմ, եթէ նորան բռնեն: Այս հարցի պատասխանը Իլենկայի համար ոչ թէ սոսկ խօսքեր ներկայացան, այլ մի անհուն սև անդունդ, ուր պիտի ընկնէր նա: Նորա մարմինը սարսուռ էր զգում, թէպէտ փաթաթուած էր տաք վերմակի մէջ. երբեմն էլ տաքացնում էր — այդ ժամանակ մատաղահաս ազջիկը դէն էր ձգում վերմակը և ոտաբոբիկ մօտենում էր պատուհանին, բայց էր անում և լրտում — արդեօք գիշերային խաղաղ միջոցին մի որ և է ձայն չի հասնիլ ականջին, որ հնար տար լուծելու հանելուկը, այն հանելուկը, որ օրիորդի համար կեանքի խնդիր էր: Գիշերուայ լուծութեան մէջ երբեմն-երբեմն լսվում էր պահապանի թխթխոցը. մի-մի տեղ էլ շներն էին հաջում կամ կատուները խեղճ կերպով մլաւում. հեռուից՝ տաճիկների թաղից աղաղակի ձայներ էին դալիս: Այս բոլորը տեղի էր տալիս տրամագին խորհրդածութիւնների, որոնք մանաւանդ ճմլում էին օրիորդի սիրտը, որովհետև նա ըստիպուած էր իւր հարազատ հօրն ու մօրը դատապարտել: Նա հեռացաւ պատուհանից և նորից պառկեց. լաւ ծածկուեց, կուչ եկաւ և աչքերը փակեց. այդ ժամանակ, ինչպէս սովորաբար լինում է, նորան սկսեցին դանազան բաներ երևել: Նա տեսաւ Նիկոլային, որի դէմքը նարնջի ֆոն ունէր և որքան մօտենում էր, այնքան էլ փոխվում էր այդ ֆոնի գոյնը: Օրիորդը սա-



կաւ ինչ հանդատացաւ, բայց կրկին չկարողացաւ քնել. աչքը բաց է անուժ թէ չէ, իսկոյն տեսիլը անհետանում է: Ողջ գիշերը այս դուռ-թեան մէջ անց կացրեց:

Հէնց որ լուսացաւ, իլենկան վեր կացաւ, հագնուեց և գնաց: Տանից դուրս դալու համար նա կամ ընդունարանից պիտի անցնէր, կամ ձընողների ննջարանից: Օրիորդը նախագասեց ընդունարանից անցնել, չկարծելով, որ այդպէս վաղ այն տեղ մարդու կը պատահի: Որչափ էր նորա զարմանքը, երբ տեսաւ հօրը: Հաջի խրիստոն նստած էր բազմոցի վերայ. նորա առջև դրած էր մի սկուտեղ և դատարկ թաս, նոյնպէս և նարգիլէ. մի ձեռին բռնած ունէր նարգիլէի չիբուխը, իսկ միւսով—վարդարանը (թէ դեբէհը): Իլենկան կանգնած մնաց դռան մէջ. նա ինքն էլ չէր իմանում—գնար, թէ յետ դառնար: Հաջի խրիստոն նայեց աղջկան և ասաց.

—Դու արդէն վե՞ր ես կացել... այդպէս վաղ... ո՞ւր էիր ուզում գնալ:

—Մօկրային, — պատասխանեց աղջիկը:

—Մի՛ գնալ այն տեղ... Այն տեղ... Աստուած գիտէ, թէ ինչ է լինում:

Իլենկան յետ դարձաւ և կամենում էր գընալ, բայց հայրը կանգնեցրեց:

—Կա՛ց, — ասաց հայրը քնքշաբար, — նիստ կողքիս:

—Ե՞ս... — սկսեց աղջիկը և ծամծամեց... — ես բան պիտի անեմ:

—Եթէ գնայիր, հօ բան չէիր անելու... Ե՛կ այս տեղ... ես ուզում եմ խօսել քեզ հետ:

Իլենկան պիտի հնազանդուէր: Նա նստաւ հօր կողքին, որ հետևեալ խօսակցութիւնը ըսկսեց.

—Ողջ գիշերը ինձ տանջում էին այն մըտքերը, որ պատճառեցին ինձ այդ դէլիխանւլընէրը (խեերը), որոնք առաջ չկային մեր հայրենիքում... — Հաջի խրիստոն հառաչեց: — Ի՞նչ տեղից դուրս եկան: Մեծ անբախտութիւն է դոցա երևան դալը, իսկ երևան են դալիս նորա համար, որ մեր երիտասարդները սկսել են գընալ արտասահման սովորելու: Բայց մենք կարծում էինք, թէ արտասահմանի ուսումից մեղօգուտ կը լինի. դուրս եկաւ, որ թոյն է... Դորա մասին ես ողջ գիշերը մտածել եմ և ուզում եմ քեզ հետ խօսել, զաւակս, որովհետև դու էլ վարակուած ես այդ վնասակար թոյնով:

Իլենկան աչքերը վայր ձգեց և միայն հազաց:

—Ես դեռ յիշում եմ այն ժամանակները, — շարունակեց հաջի խրիստոն, — երբ մեր մէջ իմաստուններ չկային. այն ժամանակ մենք հանդիսս էինք ապրում... Տաճիկների հետ մենք այն ժամանակ կարողանում էինք եօլայ գնալ, թէպէտ ոչ լրագիր, ոչ գիրք կարդալ գիտէինք, ոչ էլ փրանսերէն էինք խօսում... Եւ յանկարծ

ամենքս կամեցանք լուսաւորուել, այո՛, ամենքս ուզեցինք. ես ինքս նուիրատուութիւններ արի ուսումնարանի, գրադարանի համար... այ ինչ... Բայց բանտն ու շղթաները այդ յիմարութիւնները գլխիցս հանեցին. այժմ ուսումնարանի ու գրադարանի համար ոչ միայն մի փարա չեմ տալ, այլ և կըզնամ փաշայի մօտ, ծնկաչոք կ'ազաչեմ, կըպագատեմ, որ հրամայէ բոլոր գըրքերն ու լրագիրներն այրել, իսկ արտասահմանում սովորածներին հայրենիքից քշել... Այո՛, համայնական Խորհրդի ժամանակ ես կըբացատրեմ, որ այդ բոլորը պէտք է իրագործել՝ վընասակար թոյնը հեռացնելու նպատակով, և նոյն էլ փաշային կ'ասեմ:

— Իսկ մարդիկ ի՞նչ կ'ասեն, — նկատեց իւրենկան:

— Ես ի՞նչ բան ունիմ նոցա հետ: Նոքա յիմարութիւն են անում. իսկ ճշմարտութիւնն հօ պէտք է ասել... ինձ էլ հօ գործի մէջ խառնեցին. ես էլ քեզ ուզում էի տալ Ստօեանին, որովհետեւ Բուքարեշտումն է ուսել և ալաֆրանկա է հագնւում... Նորա պատճառով ինձ բանտում երեք օր պահեցին և, որպէս աւազակի, ձեռներս ու ոտներս շղթայեցին. նորա պատճառով ես ստիպուեցայ չորս հարիւր մէլիգիէ ծախսել, և ութ հարիւր էլ պիտի մսխեմ, որպէս զի կարողանամ իշխանաւորների տրամագրութիւնը ձեռք բերել... Ահա՛, թէ նա ինչ ա-

րաւ: Եթէ տունս հրդեհ ընկնէր, կրկին ես աւելի քիչ փնաս կըստանայի: Հազա՛ր... երկու հարիւր մէլիգիէ: Եւ այս բոլորը նա խից քեզանից, որովհետեւ ես ինքս մի փարա էլ չեմ տանելու գերեզման, բոլորը քեզ եմ թողնելու, բայց այժմ այն չի՛ մնալ, ինչ որ ես մսխեցի այդ անպիտանի պատճառով: Ինքդ ասա՛, զարհուրելի չէ՞ այդ բոլորը... արժանի չէ՞ այդ գարշելին, որ չէկ երկաթով դաղեն և պատառ պատառ անեն:

— Միթէ նա գիտակցաբա՞ր փնասեց քեզ, — արտասանեց իւրենկան:

— Բանն այդ չէ, թէ գիտակցաբար կամ անգիտակցաբար փնասեց. դորանից ես օգուտ չունեմ. բայց եթէ նա չարութիւնից չէ արել, այն ժամանակ աւելի վատ, որովհետեւ դորանից պարզ երևում է, որ մեր հասարակութիւնը վարակուած է, հիւանդ է, եթէ մենք անգիտակցաբար միմեանց փնասում ենք, և պէտք է բուժել մեր ախտը... Գորա համար էլ ես խօսում եմ քեզ հետ... Ես ուզում եմ քեզ համոզել թէ վատ ես անում, որ հրաժարվում ես Ստօեանի ընկերակիցների անունները տալուց: — Նա լուեց, սպասելով աղջկայ պատասխանին, բայց աղջիկը լուռ էր:

— Նոքա բոլորն էլ Ստօեանի պէս գարշելիներ են, և եթէ նոցա չհեռացնես, մեզ կըփնասեն, ինչպէս Ստօեանը:

Այս բոլորը ոչինչ ազդեցութիւն չունեցաւ  
Իլենկայի վերայ:

— Դու հօ սիրո՞ւմ ես հօրդ, — սկսեց հաջի  
Խրիստօն մեղմ ձայնով:

— Այո՛... — հառաչեց Իլենկան:

— Երևի, աւելի շատ Սոսեանին ես սիրում,  
որ այդքան վնաս տուեց թէ ինձ և թէ քեզ:

— Ես արդէն խօսել եմ դորա մասին մօրս  
հետ:

— Դու դեռ բաւական չես, որ մայրդ քիչ  
ծեծեց քեզ... բաւական է յիմարութիւն անես...  
Եթէ մայրդ ծեծում է — ասա շնորհակալութիւն...  
դորանից իմ վիճակս էր կախուած... Որ դու  
չկամեցար ասել, ինչ որ քեզանից հարցնում էին...  
ես ստիպուեցայ երկու հարիւր մէջիգիէ վճա-  
րել և բացի դորանից պարտաւորուեցայ իմա-  
նալ անուճները: Եթէ ես չկատարեմ պարտաւո-  
րութիւնս, ինձ նորից բանտ կը դնեն... Խղճա՛ ինձ,  
բանտը ինձ կըսպանէ:

— Չէ, չի սպանիլ, — պատասխանեց Իլեն-  
կան և ուղեց վեր կենալ:

— Ի՞նչ է, կ'ասե՞ս, — հարցրեց հաջի Խրիս-  
տօն:

— Ես տաճիկներին կ'ասեմ, ինչ որ միայն  
գիտեմ... Թո՛ղ քեզ հանգիստ թողնեն: Ես նո-  
ցա կը պատմեմ, ինչպէս բոլորին տանից հեռա-  
ցրի, որպէս զի բացի ինձանից ոչ ոք չտեսնէր  
սպստամբակիցներին, այն ժամանակ... Թո՛ղ ինձ

հարց ու փորձ անեն: — Ես այնպէս հաստատ ա-  
սաց այս խօսքերը, որ կասկածել չէր կարելի,  
թէ պատրաստ էր խօսքից անմիջապէս գործի  
գիմելու:

— Յիմա՛ր, նոքա քեզ հարց ու փորձ չեն  
անիլ... այլ կըտան զափթիներին, որ անարգեն...  
Մի՛ մոռանալ, որ դու ռայեա ես և աղջիկ...  
Տաճիկների աչքում քո խօսքը ոչ մի նշանակու-  
թիւն չէ կարող ունենալ: Ես եմ քո տեղ պա-  
տասխանատու, և ոչ թէ դու. ուղում ես վնաս-  
ել ինձ — վնասի՛ր:

— Ես չեմ ուղում քեզ վնասել, բայց չեմ էլ  
ուղում վնասել նոցա, որոնք փողից էլ սուրբ և  
թանգ բան ունին:

— Փուչ են բոլորն էլ, — արհամարհանքով  
պատասխանեց հաջի Խրիստօն, — որոնք մի զրուշ  
չունին գրպանում:

— Ստանկօն արդարև աղքատ է, բայց Սոս-  
եանը փող ունի:

Երբ Իլենկան Ստանկոյի անունը տուեց,  
հայրն աչքը գոցեց, իսկ երբ արտասանեց Սոս-  
եանի անունը, նա շփոթուեց և չիմացաւ, թէ  
ինչ պատասխանէր, որովհետև յայտնի էր, որ  
սարաֆների մօտ Սոսեանի հայրը քիչ փող չէր  
թողել. և այդ փողն էր, որ ստիպում էր հօրը  
աղջկան Սոսեանին տալ:

Իլենկան վերադարձաւ իւր սենեակը, հա-  
նեց վրան ձգած շորերը և սկսեց գործել: Նա

չթողեց տանից գնալու իւր մտադրութիւնը, բայց վճռեց փոքր ինչ ուշ գնալ, որ չասէ, թէ ուր է գնում: Դորա համար էլ սպասեց, մինչև որ միւսաֆիրլըում մարդ չլինի: Նա երկար չըսպասեց. հաջի Խրիստոն շուտով գնաց, և Իլինկան նորից ձգելով իւր վերնազգեստը, դուրս եկաւ: Նա արագ-արագ էր գնում, և մի քանի րոպէից յետոյ արդէն Մօկրայի դարպասի մօտ էր: Օրիորդը դարմացաւ և վախեցաւ տեսածից. պատի տակ և դարպասի մօտ զափթիներ էին քնած: Նա կանգնեց և ուզեց յետ դառնալ, բայց նկատեց, որ նոցանից իւրաքանչիւրը և ամենքը միասին խոր քնի մէջ են ընկղմուած: Այդ հանգամանքը քաջալերեց նորան, և նա իսկոյն ներս վազեց: Բակում մի և նոյն տեսարանն էր. զափթիները զանազան դրութեան մէջ քնած էին: Օրիորդը վազէ վազ անցաւ բակը, սանդուղներով վեր բարձրացաւ, գնաց ընդունարան և այն տեղ էլ պատահեց քնածների: Բազմոցի մի կողմում պառկած էր Արիստարխի-բէյը և խրխուում. բազմոցի միւս կողմում քնած էր հաստ ազան. իսկ նոցա մէջ տեղում անխռով քնած էր քարտուղարը: Իլինկան շտապեց հեռանալ քնածներից. նա հանդարտ, բայց արագ քայլերով առաջ գնաց: Թշնամիների բանակի այս խոր քունը բաւական հանգստացրեց նորան: Իսկապէս նա բան չգիտէր, բայց կարծում էր, որ եթէ Ստօեանին և Նիկօլային գտած լինէին, հասա-

րակական ապահովութեան այդ վերահասունները չէին քնիլ. քնածները յանցանք չեն գործում, — մտածեց օրիորդը: Բացի դորանից, սրուակներն ու շիշերը պարզ ցոյց էին տալիս, թէ ինչով էին պարապած քննիչն ու ժանդարմների գլխաւորը: Անցաւ ընդունարանը, անցաւ կողքի սենեակը և մտաւ Անկայի ննջարանը:

— Ա՛նկա, այդ ի՞նչ է լինում ձեր տանը:

Դեռ անկողնում գտնուող Անկան ուրախ ժպիտով ընդունեց հիւրին:

— Աւելի լաւ է, ասա թէ ինչ եղաւ: Նոր միայն գնացին:

— Ո՞վ:

— Զափթիները:

— Նորա դեռ չեն գնացել:

— Ինչպէ՞ս թէ չեն գնացել:

— Այժմ միայն ես նոցա տեսայ փոզոցում, բակում և ընդունարանում:

— Ապա ինչո՞ւ ձայն չկայ:

— Ամենքն էլ քնած են:

— Ես չգիտէի, — պատասխանեց Անկան, — Մայրս ինձ զարթեցրեց, մի ինչ որ ֆրանսերէն գրած թուղթ տուեց, և հրամայեց, որ չքնեմ, ինքս էլ չգիտեմ, թէ ինչու:

— Ո՞ւր է մայրդ:

— Զգիտեմ... նա ասաց, թէ շուտով կրվորողառնայ:

— Իսկ... նոքա՞:

— Չգիտեմ, թէ նոցա բանը ինչպէս եղաւ...  
Չափթիւները հէնց որ ներս մտան, ուղղակի գը-  
նացին այն տեղ, ինչ տեղ նոքա թագնուել էին:

— Իսկ յետո՞յ...— հարցրեց Իլենկան վախե-  
ցած ձայնով.

— Նոքա այն տեղ չէին:

— Փա՛ռք Աստուծոյ:

— Նոքա պարտիզումն էին, ես նոցա զգու-  
շացրի... և թաք կացան.

— Ինչո՞ւ համար զափթիւները մնացին:

— Նոքա որոնում էին:

— Գուցէ դեռ էլի պիտի որոնեն, — նկատեց  
Իլենկան: — Լա՞ւ տեղ են նոքա:

— Չգիտեմ, — պատասխանեց Անկան: — Կար-  
ծեմ մայրս Փրանսերէն գրած թուղթն առաւ  
և դնաց նոցա մօտ... Մի փոքր սպասիր, նա կը  
վերադառնայ և ամենը մեզ կը պատմէ:

— Դէ հիմայ սիրտս թեթեացաւ, — ասաց  
Իլենկան, նստելով բազմոցի վերայ: — Եթէ իմա-  
նայիր, թէ ինչպէս եմ գիշերս անց կացրել...  
Տէ՛ր Աստուած, ողջ գիշերը չեմ քնել:

— Իսկ ես շատ քիչ եմ քնել:

— Դու հօ ամեն բան գիտէիր... Իսկ ես գի-  
տէի միայն, որ զափթիւները եկել են ձեզ մօտ,  
և նոքա այնպիսի տեղ են թագնուել, որի մա-  
սին զափթիւները իմացել են:

— Մի՞թէ նոցա մէկը ասել է, — հարցրեց  
Անկան:

— Մի մի՛ հարցնիլ, — աղաչեց Իլենկան:

Մօկրայի գալը ընդահատեց օրիորդների խօ-  
սակցութիւնը: Պառաւը լաւ արամադրութեամբ  
էր վերադարձել և տեսնելով Իլենկային շատ  
դարմասցաւ:

— Ինչո՞ւ այդպէս վաղ ես եկել... շուտ ես  
վեր կենում:

— Ես գիշերը կը գայի, եթէ կարելի լինէր...

Ուզում էի իմաց տալ ձեզ:

— Ուրեմն դու գիտէի՞ր:

— Այո, գիտէի:

— Ինչո՞ւ այդիկ... մի՛ նեղանալ... ամեն մէ-  
կը ընդունակ չէ բարին որոշել չարից... Ուրեմն  
դու գիտէիր... Իսկ տեսա՞ր, ինչպէս նոքա քնել  
են... Բայց լաւ էլ շարչարուեցան... Ողջ գիշե-  
րը ման եկան, ամեն մի ծակ ու ծուկ մտան,  
ամբողջ պարտէզը ոտնակոխ արին, ամեն մի  
թուփ նայեցան, թփեր կտորատեցին... Մի խօս-  
քով մեծ եռանդով էին որոնում:

— Իսկ... նոքա լա՞ւ տեղ են, — հարցրեց Ի-  
լենկան:

— Նոքա այժմ այնպէս են թագնուել, — աս-  
ես, թէ գետնի տակը մտած լինին:

— Մօկրան զնայ ծառաներին վեր կացնելու,  
իսկ օրիորդները սկսեցին պատմել միմեանց խու-  
զարկութեան մանրամասնութիւնները, որ այդ

գիշեր տեղի ունեցաւ ծնողական տներում: Անկան պատմեց, թէ ինչպէս անկողնից վեր թռաւ և միայն գիշերուայ շորով վազեց պարտէզ: Նա ցոյց տուեց, թէ ինչպէս ոտները տեղ տեղ կլտրուել էին:— Բայց ես այդ չգրագի էլ,— աւելացրեց նա:— Ոսներս այն ժամանակ սկսեցին ցաւել, երբ անկողին մտայ:

— Ուրեմն դու միայն գիշերուան շորով վազեցիր նոցա մօտ,— հարց ու փորձ արաւ Իլենկան:

— Ես դորա վերայ ուշադրութիւն էլ չդարձարի... ես միայն մտածում էի, որ նոցա իմաց տամ:

«Ես էլ այդպէս կ'անէի»,— մտածեց Իլենկան:

Երբ Մօկրան զարթեցրեց ծառաներին, սուքա վեր կացան, վեր կացաւ ապա զափթիներին մէկը, միւսը, երրորդը: Նոքա վեր էին թռչում, աչքերը տրորում, հազում և մի տեղ համախըմբւում: Նոցանից իւրաքանչիւրը զգում էր իւր յանցանքը. ինչպէ՞ս կարելի է քնել պաշտօնական պարտականութիւնը կատարելիս: Իրաւ է, որ հրամայեցին սպասել, բայց չհրամայեցին, որ քնեն: Նոքա յանցաւոր էին, որովհետեւ չէին կարող արդարանալ, և ինչպէ՞ս արդարանան: Ասեն թէ աղան հարբած էր,— անկարելի է...

«Չէ... փայտից չենք աղատուիլ»,— մտածում էին նոքա: Ամենից վատը երկու տասնապետի

դրութիւնն էր. հաստատ կարելի էր ասել, որ դոքա գանից խոյս չէին տալ: Իսկ մի այդպիսի սպասելիք շատ անախորժ էր մինչև անգամ տաճիկների համար, որոնք ընդունակ են հաշտուել ճակատագրի հետ: Բայց ինչպէ՞ս հաշտուէին ծեծ ուտելու հետ: Ահա թէ ինչու բոլոր զափթիները ախրադէմ էին, երբ Մօկրան մօտեցաւ նոցա: Նա նայեց և հարցրեց.

— Ի՞նչ է եղել, սիրելի բարեկամներ... Փորներդ հօ չե՞ն ցաւում... Գուցէ ցաւո՞ւմ են. գուցէ խակ պտո՞ւղ էք կերել պարտիզում... Ասացէք ինձ:

— Չէ,— պատասխանեց նա, որ ընդունարանում գինի էր խմել.— մենք ոչ մի պտուղ չենք կերել:

— Ուրեմն ձեր փորը չի՞ ցաւում:

— Չէ, չի ցաւում:

— Ապա ի՞նչ է եղել: Ասացէք... Թերևս ես կարողանամ ձեզ օգնել:

— Չէ, դու բան չես կարող անել:

— Չէ որ, սիրելիս, ես պառաւ եմ,— սկսեց Մօկրան.— ես ոչ միայն հիւանդ ու թեան, այլ և արտմութեան դէմ դեղ գիտեմ... Եթէ ձեր ոչ մի բանը չէ ցաւում, ուրեմն դուք տխո՞ւր էք... Գուցէ դուք ցաւո՞ւմ էք, որ ինձ մօտ մարդ չկարողացար բռնել:

— Չէ, բանը այդ չէ— պատասխանեց տասնապետը:

— Ապա ի՞նչ է:

— Մենք քնել ենք, իսկ քնել մեզ չէին հրաժայել:

— Եւ դուք այժմ ծեծի՞ց էք վախենում:

— Ի հարկէ, — պատասխանեց դժգոհ զայն: —

— Եթէ Ալլահն այդպէս է կամենում, ի հարկէ, բան չի կարելի անել. բայց գուցէ Ալլահն ուրիշ կերպ է վճռել և կամենում է իմ միջոցով յայտնել ձեզ իւր կամքը:

— Հը՞... — զարմացան մի քանիսը:

— Գուցէ Ալլահը կամենում է, որ դուք ազային ասէք, թէ բոլոր ժամանակը որոնում էիք և այժմ էլ որոնում էք և հարցնէք նորան՝ կըհրամայէ՞ արդեօք մի ուրիշ տեղ էլ որոնել:

Զափթիները նայեցան միմեանց և շարժեցին գլուխները ի նշան հաւանութեան:

— Այո, — շարունակեց Մօկրան. — երևի, այդպէս էլ կամենում է Ալլահը: — Ուրեմն դուք ցրուեցէք և որոնեցէք, ինչ որ կամենում էք: Պարտէզ գնացողները կըտեսնեն այն տեղ մի ջրհոր և կարող են նամազ անել, ինչպէս պահանջում է օրէնքը... Եւ Ալլահն էլ գոհ կըլինի, և աղան էլ բան չի ասիլ: Դէ՛հ ինչպէ՞ս է:

— Խե՛ղօք կին ես, — ասաց տասնապետը:

— Չէ որ ես ձեզ սիրում եմ, զափթիներ, սիրելիքս... Միթէ դուք չգիտէ՞ք այդ: Իմ խա՛նութում ձեզ համար առանձին սենեակ կայ և

այն տեղ էլ այնպիսի մաստիկա, որ ինքը սուլթանը լպստում է խմելիս... Ճիշդ չէ՞:

— Ճիշդ է, ճիշդ, — պատասխանեցին մի քանիսը:

— Այսպէս ուրեմն դուք վնասուեցէք, իսկ ես կըզնամ աղայի մօտ:

Զափթիները ցրուեցան դէպի ախոսները, յարդանոցները, թռչնանոցը և ամեն մի անկիւն. մի քանիսը պարտէզ գնացին, իսկ Մօկրան զընաց ընդունարան: Արձանագրութիւնը անելուց յետոյ՝ այս տեղ ոչ մի բան չէր փոխուել: Աստիճանաւորները քնած էին: Նա նայեց նոցա վերայ վայրենի ատելութեամբ, բայց և իսկոյն նորա դէմքը փոխուեց և կարեկցական արտայայտութիւն ստացաւ: Նա մտածում էր. «Ի՞նչ անեմ դոցա հետ»: Ամենից հեշտը՝ պէտք էր զարթեցնել, և նորա տեղ շատերը այդպէս կ'անէին: Բայց զարթեցնել աստիճանաւորներին նըշանակում է անպատուել և գրգռել նոցա իւր դէմ. բարձր դիրք ունեցող մարդիկ չեն սիրում այդպէս վիրաւորուել: Պէտք էր աշխատել, որ իրենք զարթնէին, բայց նոքա էլ ամենախորքնով էին քնած. եթէ շատ էլ քնեն, կրկին կարող են ամօթահար լինել, որովհետեւ փաշան կարող է մարդ ուղարկել իմանալու, թէ ազան ու բէյն ինչպէս են խուզարկութիւն անում: Նոքա ի հարկէ յանցանքը Մօկրայի վերայ կըձգէին. ո՞ր աստիճանաւորը կ'ասէ, թէ ինքն է մեղա-

ւոր: Եւ Մօկրան, որի տանը աստիճանաւորները քնել էին, դատի կըկանչուէր: Ահա թէ ինչու էր պէտք, որ նոքա իրենք զարթնէին և այն էլ շուտով, որովհետև արեգակը արդէն ծագել էր, իսկ փաշան շուտ է վեր կենում և իսկոյն կանչում է աղային:

Մօկրան նայում էր քնածների վերայ և մըտածում: Ի՞նչ անեմ, որ զարթնեն: Քարտուղարը կուչ եկած քնել էր, աղան փնչում էր և խրխուում մէջքի վերայ պառկած: Արիստարխի-բէյը կողքի վերայ էր պառկած բերանը փակ և նոյնպէս խրխուում էր ու փնչում քիթը բազմոցին դէմ տուած: Մօկրան գնաց և շուտով վերագարծաւ և մի ինչ որ փոշի ցանելով Արիստարխի-բէյի քիթի տակ՝ իսկոյն դուրս եկաւ: Մի քանի վայրկեանից յետոյ Արիստարխի-բէյը վեր թռաւ և բարձր փռչտաց մի անգամ, երկու անգամ, նա մի քիչ հանգստացաւ, երրորդ անգամն էլ փռչտաց, յետոյ չորրորդ անգամն էլ: Նա հանեց գրպանից թաշկինակը և սկսեց սասաիկ խնչել: Խնչեց և նորից փռչտաց: Քանի որ Արիստարխի-բէյը փռչտում էր, քարտուղարը առաջ մի աչքը բաց արեց, յետոյ միւսը, հազաց, նստաւ բազմոցի վերայ, վեր առաւ թուղթը և բռնեց իւր նախկին դիրքը:

Իէյի բարձրաձայն փռչտալը ոչ մի ազդեցութիւն չունեցաւ աղայի վերայ: Երևի, սորա

փնչոյն ու խուփոցը ամեն ինչ խլացնում էր. նա խոր քնած էր:

Արիստարխի-բէյը քիթը կարգի բերելուց յետոյ՝ յօնքերը կիտեց բխիւերն ու մօրուքը սրեց, բարձր հազաց, նայեց չորս կողմը, ժամացոյցին և հարցրեց.

— Ի՞նչ է, որոնս՞ում են:

— Ինքդ գիտես, էֆէնդըմ, — պատասխանեց քարտուղարը:

— Վեր կացրու դորան, — ասաց բէյը, — ակնարկելով աղային: — Ի՞նչ է քնել խուզարկութեան ժամանակ:

Քարտուղարը մատով շարժեց աղային և ասաց. — էֆէնդըմ: — Նա չէր շարժվում: — էֆէնդըմ, — կրկնեց քարտուղարը:

Աղան մեռածի պէս էր:

— Շարժի՛ր դորան, — խորհուրդ տուեց Արիստարխի-բէյը:

Քարտուղարը սկսեց տրորել, բայց հետեւանքն այն եղաւ, որ աղան ձգուեց, մի ինչ որ բան մթմթաց և, կարծես աւելի թունդ քնեց:

— Կանչեմ զավթիներին, — ասաց քարտուղարը:

— Չէ, զավթիներին մի՛ կանչիլ, դուրսէ չկան էլ նոքա. և այդ վատ կըլինի, — նկատեց բէյը, — սակայն գնա՛ տես, թէ ինչ են անում. յետոյ էլ գնա Մօկրայի մօտ և խնդրիր մի քիչ քթախոտ: Թէ-



պէտ ես քնած չէի, բայց առանց քթախտախտ  
այնպէս էի փռչտում, որ կարող էի զարթնել  
ամենախոր քնից, և կարծում եմ, որ թունդ  
քթախտախտ կ'արթնացնէ դորան:

Քարտուղարը վեր կացաւ, իսկ բէյը ճանա-  
պարհ դրեց նորան, ասելով՝ «միայն թունդ քը-  
թախտախտ խնդրիր»: Քարտուղարը շուտով վերա-  
դարձաւ:

— Ապա զափթինե՞րը:

— Այս տեղ են, — պատասխանեց քարտու-  
ղարը:

— Ի՞նչ են անում. դուցէ քնած են:

— Չէ, էֆէնդըմ, նոքա որոնում են:

— Հըմ... դա լաւ է: Իսկ քթախտախտը:

— Իերեկ եմ:

— Ա՞ծի՛ր դորա քիթը:

Քարտուղարը սկսեց. նա կուացաւ, մի փոքր  
քթախտախտ առաւ մատներով և մօտեցրեց աղայի  
քիթին, որ ներս քաշեց, բայց առանց հետևանքի:

— Ելի՛ կոխիր, — ասաց բէյը:

Քարտուղարը մէկ էլ մօտեցրեց, — և յանկարծ  
յետ թռաւ. անսպասելի կերպով փռչտաց և  
բոլոր քթախտախտ թռաւ քարտուղարի աչքի մէջ:  
Աղան զարթնեց, վեր թռաւ, նստաւ բազմոցի  
վերայ և՝ ձեռներով գլուխը բռնելով, սկսեց  
ճիշտ այնպէս փռչտալ, ինչպէս մի քիչ առաջ  
քննիչն էր փռչտում, իսկ այդ միջոցին քարտու-

ղարը վազում էր սենեակում, հանաչում և աչ-  
քերը արորում:

Թէ և Արիստարխի-բէյը ուզում էր իրեն  
լուրջ պահել, բայց չկարողացաւ զսպել՝ ծիծա-  
ղը: Այդպէս՝ աստիճանաւորներից մէկը ծիծա-  
ղում էր, միւսը փռչտում, երրորդը հանաչում.  
այդ դրութիւնը մի քանի վայրկեան տևեց և,  
վերջապէս, ամենքն էլ նորից լրջացան: Նոքա  
բռնեցին իրենց տեղերը և Արիստարխի-բէյը հարց-  
րեց աղային.

— Հրամայեցի՞ր զափթիներին, որ հեռա-  
նան:

— Չէ:

— Գուցէ ժամանակ է խուզարկութեանը  
վերջ դնելու:

— Տեսնենք որ ժամն է, — և այս խօսքերն  
ասելիս, նա նայեց իւր ժամացոյցին: — Ե՛... փռ-  
չան... ես պիտի շտապեմ ստիկանատուն:

— Բայց պէտք է նախ լսել խուզարկու-  
թեան մասին արած արձանագրութիւնը, — նկա-  
տեց բէյը: Այս նկատողութիւնը ստիպեց աղային  
սպասել, որ արդէն վեր էր կացել: Մի քանի  
անգամ նա ծափահարեց. սանդուղքներից ստի  
ձայն եկաւ — ներս մտաւ ասանապետը, բարեկեց  
և կանգնեց դռան մօտ:

— Հ՞ը, ի՞նչ է, — հարցրեց աղան:

— Ամեն տեղ փնտռեցինք, այժմ էլ փրնա-

ուում ենք, մինչև անգամ ջրհորը նայեցանք,  
ամեն մի անկիւն պատեցինք:

— Մի բան գտա՞ք:

— Գոմէջներ, կովեր, ձիեր, խոզեր, հաւեր...

— Իսկ կոմիտաջիներ, — հարցրեց աղան:

— Չսեսանք:

Քարտուղարը բոլորը արձանագրեց: Ներս  
մտաւ Մօկրան և սև սուրճ բերեց:

— Հէ՛յ... — բացականչեց աղան, գառնալով  
տամնապետին: — Զափթիներին հաւաքիր և գնա-  
ցէք ոստիկանատուն:

Մօկրան սուրճը մօտեցրեց բէյին, յետոյ  
տարաւ աղային:

— Չէ, — ասաց աղան, սկուտեղը իրենից հե-  
ռացնելով և տեղիցը վեր կենալով: — Ես այնքան  
զործ ունիմ, որ սուրճ խմելու ժամանակ չկայ:

Մօկրան սկսեց հիւրասիրել քարտուղարին:

— Նա էլ նոյնպէս ժամանակ չունի, — ասաց  
բէյը, — շուտով գնա կառավարութիւն, և պատ-  
րաստիր արձանագրութիւնը, որ ես պիտի ներ-  
կայացնեմ:

— Աղան ու քարտուղարը գնացին, իսկ  
Մօկրան հարցրեց բէյին. — նարգիլէ չէ՞ք կամե-  
նալ, էֆէնդըմ:

— Լաւ, բե՛ր:

Մօկրան գնաց և իսկոյն բերաւ նարգիլէն:  
Երբ նա տուեց, Արիստարխի բէյը ասաց.

— Նիստ մօտս, խօսենք:

— Միթէ ես ջահե՞լ եմ, որ հետս խօսես,  
— պատասխանեց պառաւը նստելով:

— Զրուցում են և պառաւների հետ:

— Ասա՛, ես շուում եմ:

— Կըսկսեմ նորանից, ինչ որ կարող է հա-  
մողել քեզ իմ խօսքերի անկեղծութիւնն ու  
բարեկամական լինելը:

— Ի՞նչ է... — հարցրեց Մօկրան:

— Յիսուն մէջիդիէ:

— Ինչո՞ւ համար:

— Ես կարող էի հարիւր խնդրել, բայց միայն  
յիսունն եմ խնդրում, նախ՝ որ ցոյց տամ, թէ չեմ  
կամենում կողոպտել քեզ, իսկ ասպա՛ս որ խրախու-  
սեմ քեզ, որպէս զի դու կարողանաս այնպէս համար-  
ձակ խօսել, ինչպէս իւրաքանչիւր փող աուողը:

— Իսկ ինչո՞ւ համար պիտի վախենամ: Ա-  
ռանց այդ էլ ես համարձակ կըխօսեմ, և ահա  
ինչ կ'ասեմ քեզ, էֆէնդըմ. — ես կըրամ յիսուն  
մէջիդիէ, բայց զիտե՞ս, թէ ինչու համար:

— Ինչո՞ւ համար, — հարցրեց բէյը:

— Իմացիր:

— Որ խուզարկութիւն չանեմ քեզ մօտ:

— Չէ... Որքան ուղում ես որոնիր. բան  
չես գտնիլ:

— Որ Պետրիօն գործի մէջ չխառնեմ:

— Փորձիր նորան խառնել... Որդուս համար  
եւ բոլորովին հանդիստ եմ:

— Ապա ինչո՞ւ համար:

— Առաջ դու ասա, թէ ինչ էիր ուզում առաջարկել ինձ:

— Ես ուզում էի ասել, որ յայտնես, թէ ինչ տեղ է Ստեանն կրիվենովը, որովհետեւ ես համոզուած եմ, որ դու դիտես, թէ ինչ տեղ է նա: Յիսուսն մէջիդիէի համար նախ ես չեմ ասիլ, թէ քեզանից իմացայ Ստեանն ուր լինելը. ապա՝ ես կը պաշտպանեմ Պետրին ոչ թէ փաշայի պէս քաղաքականութիւնից, որ նա կարող է շատ հեշտ կերպով փոխել, այլ նորա համար, որ կաշառուած կը լինեմ Հասկանում ես:

— Ես հասկանում եմ, միայն այժմ էլ դու աշխատիր ինձ հասկանալ. երկու խոստմունքք էլ, որ ուզում ես ծախել ինձ, պէտք չեն: Ստեանն ուր լինելը ես չեմ յայտնիլ. իսկ Պետրի համար ես լիովին հանգիստ եմ. բայց եթէ դու ուզում ես ստանալ յիսուսն մէջիդիէ, բեր ինձ մօտ Ստանկոյին:

— Ինչպէս ուզում ես: Ուզում ես ստանալ յիսուսն մէջիդիէ—բեր Ստանկոյին. իսկ հակառակ դէպքում մի փարա էլ չեմ տալ:

XIX.

Առաւօտեան Պետրը եկաւ և ամենից առաջ գնաց խանութ, ուր պատահեց մօրը: Այն տեղ շատ մարդ կար, որովհետեւ երկարատե

խուզարկութեան լուրը տարածուել էր ամբողջ քաղաքում, և շատ հետաքրքրուողներ եկան, որոնք կամեցան մի բան իմանալ. այդ պատճառով էլ Մօկրան կարողացաւ միայն յայտնել որդուն, թէ խուզարկութիւնը առանց հետեանքի վերջացաւ: Պետրը տուն գնաց:

— Խուզարկութիւն եղաւ, — յայտնեց Անկան եղբօրը, հէնց որ տեսաւ սորան:

— Դիտեմ, — պատասխանեց Պետրը:

— Դու տեսա՞ր մայրիկին:

— Ես նոր խանութումն էի:

— Բայց նոքա, երևի, քաղցած են:

— Էդ ովքե՞ր են չնոքա, — հարցրեց Պետրը:

— Ինչպէ՞ս թէ ովքեր... Ստեանն ու Նիկօլան:

— Այդ ի՞նչ է նշանակում... ինչո՞ւ համար մի անգամից նոցա մասին մտածեցիր:

— Մի թէ մայրիկը բան չասա՞ց քեզ նոցա մասին:

Խանութում շատ մարդ կար:

— Մեզ մօտ հէնց նոցա էին որոնում:

— Ուրեմն նոքա մեզ մօտ էին թագնուել:

— Այո, նոքա գաղտնի սենեակումն էին... —

և Անկան եղբւրթիւնը պատմեց եղբօրը: Կ. Պօլսի լրագիրներից Պետրը գիտէր, որ ձերբակալութիւններ են տեղի ունենում, բայց չգիտէր մանրամասնութիւնները, որ քոյրը պատմեց: Նա ազա-

հուժեամբ լսեց, և երբ քոյրը վերջացրեց՝ ասաց:  
 — Ի՞նչ յարմար բան եղաւ... Ես հէնց մաս-  
 ծում էի, թէ ով գնայ Ռուսմանիա... Ո՞ւր են նորա:  
 ...Ջրհորումը, երկմտութեամբ պատասխանեց  
 Անկան:

— Ա՛յ, — բացականչեց Պետարը:  
 Պետարի բացականչութիւնը հաստատեց Ան-  
 կայի կասկածը: — Գնա նոցա մօտ, — ասաց քոյրը:  
 — Իսկ ես կերակուր կը պատրաստեմ:

— Միայն շտապիր, ես փաշայի մօտ պիտի  
 գնամ խօսելու ինձ արած յանձնարարութիւն-  
 ների մասին:

Ուտելեղէն պատրաստելը շատ ժամանակ  
 չը իլեց: Պետարը առաւ զամբիւղը և Անկային  
 կանչեց իւր հետ պարտէճ գնալու, որ կանդնէ  
 և հսկէ, մինչև որ ցած կ'իջնէ, մանաւանդ երբ  
 կը բարձրանայ: Այսպէս օրիորդը իմացաւ բոլոր  
 գաղանիքը: Անկան այժմ աչքը չէր հեռացնում  
 Ջրհորից: Նա մնաց պարտիզում մինչև անգամ  
 այն ժամանակ, երբ Իլենկան երկու անգամ ի-  
 րենց մօտ եկաւ: Իլենկայի առաջին այցելութեան  
 ժամանակ Պետարը պարտէզ եկաւ:

— Փառք Աստուծոյ, պարտականութիւնս  
 կատարեցի, — ասաց նա, նստելով օրիորդների  
 մօտ. — փաշայի մօտից եմ դալիս:

— Երկու օրիորդն էլ հարցական հայեառք ձը-  
 դեցին վերան:

— Ինչպէս քաղաքավար, ինչպէս հիւրասէր

մարդ է... բացի դորանից՝ յիմար էլ չէ: Եթէ  
 մարդ չիմանայ թէ ում հետ դործ ունի, կա-  
 րող է հաւատալ նորա խօսքերի անկեղծու-  
 թեանը:

— Ի՞նչ բանի մասին էր խօսում... դաւադ-  
 րողների մասին չէ՞ր... — հարցրեց Անկան:

— Չէ, նոցա մասին մի խօսք էլ չասաց: Նա  
 շատ խօսեց լուսաւորութեան մասին:

— Ա՛... — զարմացաւ Իլենկան:

— Ի՞նչ է... — հարցրեց Պետարը, զարմացած  
 այդ բացականչութիւնից:

— Նորա համար դարմացայ, բացատրեց Ի-  
 լենկան, — որ ես էլ այսօր ստիպուեցայ շատ  
 բան լսել լուսաւորութեան մասին:

— Ի՞նչ լսեցիր:

— Թէ լուսաւորութիւնը, — պատասխանեց օ-  
 րիորդը կարմրելով, — մլասակար է, թոյն է, որ  
 եկել է մեզ մօտ արտասահմանից, թէ աւելի  
 լաւ էր և հանգիստ, քանի որ լուսաւորութիւն  
 չէր տարածուել մեր մէջ:

— Փաշան այդ կարծիքը չունի: Մասամբ  
 կարելի է նորա հետ համաձայնել: Նա լուսա-  
 ւորութիւնը համեմատում է ծխելու հետ, երբ  
 առաջին անգամ ծխում ենք, յաճախակի մեր  
 գլուխը պտոյտ է գալիս... երկրորդ անգամ  
 մեր գլուխը աւելի քիչ է պտտվում, յետոյ ա-  
 ւելի ևս քիչ, վերջապէս սովորում ենք ծխել և  
 մինչև անգամ բաւականութիւն էլ ենք ստա-

նում: նա իրաւ է ասում, որ հարեանցի լուսաւորութիւնից մեր գլուխը պտտվում է:

— Բայց ճիշտ է, որ պէտք է փակել ուսումնարանները և ընթերցարանները, այրել գրքերն ու լրագիրները և արտաքսել ամենքին, որոնք ուսում են ստացել արտասահմանում:

— Այդ ո՞վ էր քեզ քարոզում:

— Ես այդպէս լսեցի, — պատասխանեց օրինորդը՝ չիչխելով նայել Պետրի վերայ:

— Մի այդպիսի միջոց, ի հարկէ, կրբուժէր մեր գլուխը պտոյտ գալուց և մի և նոյն ժամանակ անասուն կըդարձնէր մեզ: Բայց որպէս զի անասնական դրութիւնից դուրս գանք, պէտք է մի փոքր էլ տանել գլխի պտոյտ գալը: Փաշան այդպէս էլ ասում է և նա իրաւացի է: Միայն նա սխալվում է, երբ, նորա կարծիքով, գլխի պտոյտ գալը անցնի, բուլղարները տաճկաց սուլթանի ամենահաւատարիմ հպատակները կըլինին: Նա մինչև անգամ ինձ պատիւ տուեց և օրինակ բերեց: Ի հարկէ ես լսեցի:

— Ի՞նչ լեզուով էիք խօսում, — հարցրեց Անկան, երևի կամենալով հպարտանալ իւր եղբոր գիտութիւնով:

— Ֆրանսերէն:

— Դու նորան *monsieur* էի՞ր ասում:

— Չէ, ես ասում էի *excellence*.

— Ուրեմն նա՞ էր քեզ ասում *monsieur*.

— Չէ, նա անդադար ասում էր՝ *mon doc-*

*teur*... Այո, նա արտաքին փայլ ունի, ուստի և ուրիշներից վտանգաւոր է:

Իլենկայի ներկայութեամբ Ստեանի ու Նիկոլայի մասին խօսակցութիւն չեղաւ: Սակայն Պետրն էլ երկար չմնաց պարտիզում: Նա եկաւ միայն մի քիչ խօսելու գեղեցիկ օրիորդի հետ: Երիտասարդները առ հասարակ սիրում են այսպիսի ընկերութիւն: Անտարակոյս Պետրն էլ չէր շտապիլ, եթէ նամակներ գրելու և հեռագիր պատրաստելու չլինէր, որ նա երեկ բերեց ստորերկրեայ բնակարանը:

Այդ իսկ գիշեր Պետրը իւր շինած մեքենայով ցած իջեցրեց նաւակի մէջ առաջ Ստեանին և ապա Նիկոլային: Անկան ակննատես էր այդ տեսարանին: Պատի մօտ կանգնած՝ նա աշխատում էր տեսնել երիտասարդներին. բայց նկատելի էր միայն Դանուբի աղօտ փայլը, աստղերի արտացոլումը ջրի մէջ և ստուերները. նաւակը չէր կարողանում տեսնել: Ականջ էր դրնում, բայց չէր կարողանում լսել: Ափին զարնուող կոհակները խլացնում էին թիակների շըրըպպոցը, և բացի դորանից մեքենան էլ մի քիչ ճրճուում էր:

— Չէ որ ես անիւներին իւղ քսեցի, — զարմանում էր Պետրը, — էլ ի՞նչու են ճրճուում: Պէտք է էլի նայել:

Երբ բոլորը վերջացրեց, թօկը վեր քաշեց և ասաց.

— Առաջին անգամն եմ այսպէս մարդ ուղարկում, և փառք Աստուծոյ՝ յաջող է:— Նա հանեց մեքենայի մի քանի մասերը և ասաց քրոջը. — գնանք:

— Գնա, — պատասխանեց: օրիորդը, — ես մի քիչ էլ կը նայեմ: դուցէ տեսնեմ նոցա:

— Յածից դեռ կարող էիր տեսնել, — ասաց Պեօարը և առնելով մեքենայի հանած մասերը, գնաց:

Անկան մնաց նայելու, թէպէտ չէր լարում իւր տեսողութիւնը, բայց տեսնում էր... Ի հարկէ, նորան թւում էր, թէ տեսնում է Դանուբի ալիքներում սահող մակոյկը: Նա մինչև անգամ հոգու աչքերով տեսնում էր մակոյկի մէջ նըստած երիտասարդին, որի հետ նոյնպէս անակընկալ պատահեց, ինչպէս ծովի մէջ ալեկոծուողին պատահաբար մօտենում է ազատարար տախտակը: Անկային թւում էր, թէ ալիքների շրջիւնի միջից իւր ալանջին հասնում է նորա ձայնը. «սպասի՛ր, սպասի՛ր ինձ»: Ո՛հ, նա կըսպասի: Բայց կըզգայ: Դորա մասին նա մտածում էր և մինչև անգամ չէր կասկածում, որ այժմ, երբ իւր բոլոր մտքերը կենտրոնացած են նորա վերայ, նորա մտածմունքներն իրեն՝ օրիորդի հետ կապ չունին: Դա օրիորդի առաջին սէրն էր, որ ստիպեց կուսանոց մտնելու մաքից հրաժարուել, մինչդեռ փոքր ինչ առաջ՝ եղբայրների մահից յետոյ, նորա համար կուսանոցը միակ ապաս-

տանն էր: Անկան երկար նայեց դէպի այն կողմը, ուր սահում էր երիտասարդներին տանող նաւակը: Նա խնդրում էր Աստուծոց, որ իրադործուի իւր սիրածի ցանկութիւնը և շուտով վերադառնայ, և երազում էր, թէ գեանափութում ոչ միայն նորա հետ կարող էր միշտ ապրել, այլ և երջանիկ կը լինէր: Ո՛հ, սիրոյ եսականութիւն:

Մինչ Անկան այն տեղ երազում էր, Մօկրան պատմում էր որդուն Արիստարխի-բէյի հետ կապած պայմանի մասին. — Յիսուն մէջիդիէյով համաձայնեց ազատել Ստանկոյին և բերել մեղ մօտ»:

— Ի՛նչ է ասել, — նկատեց Պեօարը:

— Նա յիմար մարդ չէ. տեսնում է, որ աւելի չեմ տալ, իսկ նա ոչինչ հարկաւորութիւն չունի Ստանկոյին կախելու: Դորա համար էլ նա մտածեց, որ լաւ է մի բան ստանայ, քան թէ ոչինչ:

— Միթէ Ստանկոյին անպատճա՞ռ պիտի կախեն:

— Մարդ չունին կախելու, իսկ ի նկատի ունենալով սերբիական պատերազմը, և առ հասարակ բոլոր դժուարութիւնները, նոքա գոնէ երկուսին պիտի կախեն: Դորա համար էլ նշանակել են Գրօփանին ու Ստանկոյին: Կայ մի երբորդն էլ, մի ինչ որ Դումիտրի, որ հարբած ձիով պատում է տաճիկների թաղը և աղաղա-

կում, թէ տաճկաց տիրապետութիւնն արդէն վերջացել է: Եթէ նոքա կարողանային կալանաւորել Ստեփանի մօտ կայացած ժողովի մասնակցողներին, այն ժամանակ քաց կըթողնէին Գրօփեանին, Ստանկոյին և Դումիարիին, և նոքա եօթը մարդ կ'ունենային կախելու:

— Ի՞նչ ժողովի մասին է խօսքդ, — հարցրեց Պեօտրը:

Այն, երբ դուք վճռեցիք երդուել: — Հա... բացականչեց Պեօտրը. — ուրեմն նոքա տեղեկութիւն ունին այդ ժողովից:

— Գիտեն, հաջի Խրիստօն է պատմել:

— Իսկ մասնակցողների անունը չէ՞ տուել:

— Անունները միայն Իլենկան գիտէ, իսկ սա էլ յամառացել է և չէ ուզում ասել... — Մօկրան պատմեց իւր որդուն այն անցքը և տեսարանը, որին ինքն ականատես էր: — Այո, մայրը քարշում էր նորան յատակի վերայ՝ մազերից բռնած:

— Լա՛ւ աղջիկ է, — ասաց Պեօտրը:

— Եթէ նա չլինէր, ամեն բան կ'իմանային: Ծնողներն այժմ էլ հանգստութիւն չեն տալիս նորան. իսկ եթէ նա մի կերպ սխալուէր, այն ժամանակ տաճիկները թէ և չէին բռնիլ Ստեփանին ու Նիկօլային, բայց կըկալանաւորէին — և նա չորս մարդու անուն տուեց:

— Ինձ էլ, — աւելացրեց Պեօտրը: — Բայց

եթէ ինձ և ուրիշներին չբռնեն, այն ժամանակ Ստանկօն մեր տեղ պիտի տուժի:

— Նա չի տուժիլ, — պատասխանեց Մօկրան: — Ես արդէն պայման եմ կապել Արիստարխի-բէյի հետ:

— Դա հօ մի փուճ մարդ է:

— Գիտեմ, գիտիմ, նա շատ խորամանկ կերպով է բանը սարքել,

— Ի՞նչ էր որ, — հարցրեց Պեօտրը:

— Նա համաձայնեց արձակել Ստանկոյին յիսուն ոսկով, որպէս զի քեզ հետ միասին մեր տանը կալանաւորէ նորան, և այդպիսով ոչ թէ յիսուն, այլ հինգ հարիւր մէջիդէ ստանայ: Նա ջրհորի մասին բան չգիտէ, ուր մենք Ստանկօյին կըպահենք. հէնց որ նա գայ, այն ժամանակ թօ՛ղ որոնէ՛ որքան սիրտը ուզում է: Նա խելօք է, բայց ես էլ յիմար չեմ: Ահա թէ ինչ ասացի Արիստարխի-բէյին, — շարունակեց նա, — թէ դու մեր պայմանի մասին բան չգիտես, թէ ես չեմ ուզում ասել քեզ այդ, դորա համար էլ, եթէ նա քեզ դիմի և ձանձրացնէ, լաւ ընդգիմացիր:

Անտարակոյս. — պատասխանեց Պեօտրը:

— Նա անշուշտ կըգայ մեզ մօտ:

— Այո՛, այո՛... բայց այժմ նորա մասին ես չեմ մտածում:

— Ապա՞...

— Իլենկայի... Չէի սպասում նորանից այդ-

պիտի հաստատակամութիւն: Կեցցէ՛ օրիորդ:

Մօկրան մտածում էր արձանագրութեան այն կտորի մասին, որ զայրացրեց Նիկոլային Ստօեանի դէմ, բայց բան չսասց: Պառաւը շատ էր փափագում պսակել Պեօտրին Իլենկայի հետ, բայց իւր այդ ցանկութիւնը չէր արտայայտում, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ աղջկայ ծնողները նշանակել էին նորան Ստօեանի համար: Սակայն հանգամանքներն այժմ այնպէս էին, որ Մօկրայի փափագը կարող էր իրագործուել: Ի՞նչ կարիք կար ասելու, որ աղջիկը Ստօեանին էր սիրում: Բայց ի՞նչ բան է որ սէրը: Մօկրան չէր կարողանում երևակայել, որ ժամանակով Իլենկան Պեօտրին չի սիրի: Աչքից հեռացածը մտքից էլ է ընկնում, մտածեց նա: Թող միայն նորա լաւ ճանաչեն միմեանց: Պեօտրը արդէն ուշագործիւն դարձրեց նորա վերայ և հաւանեց—դա լաւ նշան է: Ի հարկէ, դադանի գործունէութեան պատճառով, որին մասնակից էր և Պեօտրը, պսակուելու հարցը դեռ անտեղի էր: Այդ ի նկատի ունենալով, Մօկրան նամանաւանդ աշխատում էր հեռացնել որդուն Արիստարխի-բէյի հետ պայման կապելուց:

Տեղական իշխանաւորները կարծում էին, թէ Պեօտրը անտարբեր է դէպի քաղաքական հարցերը, և մի և նոյն կարծիքն էլ մայրն էր յայտնում: Նորան մի բանի համար էին կասկա-

ծում, բայց նա շատ լաւ քողարկում էր բոլորը շահախնդրական նախագծերով: Ոմանք ասում էին, թէ Պեօտրը աշխատում է արտօնութիւն ստանալ Ռուչչուկից մինչև Տրոնոփօ կամ Վիդգինից մինչև Սօֆիա երկաթուղի շինելու. միւսները ենթադրում էին, թէ Պեօտրը կամենում է կազմակերպել մի ընկերութիւն՝ ոսկրներից զանազան առարկաներ շինելու. ոմանք էլ ասում էին, թէ նա մտադիր է դործարան բանալու: Արդարև Պեօտրը յաճախակի խօսում էր այսպիսի բաների մասին և տեղեկութիւն էր հաւաքում երկրի հարստութեան, հաւասարապէս և նոցանից շահուելու միջոցների մասին. այս հարցերը հետաքրքրում էին նորան և մի և նոյն ժամանակ դիմակ էին, որով նա ծածկվում էր այնպիսի մարդկանցից, ինչպէս հաջի Խրիստօն և աստիճանաւորներն էին: Փաշան շատ էր գնահատում Պեօտրին, և թէպէտ կասկածում էր, որ նա բուն բուլղարացի է, բայց յարաբերութիւնները կրկին լաւ էին:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով, Մօկրան յայտնեց որդուն Ստանկոյի մասին տեղի ունեցած բանակցութիւնը, բայց կամենում էր անկախօրէն անել բոլորը: Արիստարխի-բէյն էլ իւր կողմից աշխատում էր խառնել Պեօտրին այս գործի մէջ. մի քանի անգամ նա ակնարկներ արաւ և վերջ ի վերջոյ ուղղակի ասաց.



— Ստանկոյի ազատուելուն համար որքա՞ն կըտայիր:

— Ո՛չ մի փարա, — պատասխանեց Պեօտրը:

— Չէ որ նախկին ուսուցիչդ է: Նա է քեզ կարդալ-գրել սովորեցրել:

Այո՛, բացի դորանից՝ նա լաւ մարդ է, — պատասխանեց Պեօտրը. — ես մեղքանում եմ նորան, բայց...

— Յիմա՛ր է, — շարունակեց Արիստարխի-բէյը:

— Չեմ ասիլ, — նա յիմար չէր երևում աչքիս:

— Իսկ ես ասում եմ, որ նա յիմա՛ր է, — առանձին շեշտով կրկնեց քննիչը: Պեօտրը երկար ու բարակ հարց ու փորձ չարաւ իւր խօսակցին այդպիսի կարծիք ունենալուն համար, իսկ Արիստարխի-բէյը բացատրեց Մօկրային, թէ ինչու Ստանկոյին յիմար է համարում:

— Չեր Ստանկօն չեղած յիմար է, — ասաց մի անգամ քննիչը, նստելով տանտիկնոջ կողքին խանութի յետեւը գանուող սենեակում:

— Ի՞նչ է որ:

— Բանտի դուռը բաց էր. նա կարող էր գնալ, բայց չգնաց:

— Ի՞նչու համար:

— Ինչո՞ւ համար... վախենում է: — և դորա համար էլ կախաղան կըգնայ:

— Հըմ... նա երբէք համարձակ չէ եղել,

բայց ես բոլորովին չէի սպասում, որ նա վախենայ անխուսափելի մահից փախչել:

— Ա՛յ, տեսնում ես:

— Չե՞մ կարող խօսել նորա հետ:

— Որքան կամիս: Քննութիւնը վերջացած է, և բանտարկեալներին կարելի է տեսնել:

— Իսկ ե՞րբ:

Արիստարխի-բէյը ժամանակ նշանակեց և թոյլառութեան թուղթ գրեց: Այդ երեկոյեան էր: Մօկրան գնաց բանա: Նորան ծանօթ հին բանտապետը ընդունեց մի խորհրդաւոր ժպիտով և, չնայելով մինչև անգամ Արիստարխի-բէյի թոյլառութեան, թողեց նորան մի առանձին սենեակ, ուր Ստանկօն էր: Մօկրան բարեկեց բանտարկուածին: Ստանկօն սովորական խօսքերով բարեկեց և ապա ասաց.

— Լաւ արիր, որ եկար: Այստեղ ինձ հանգիստ չեն տալիս ամեն տեսակ յիմար առաջարկութիւններով. առաջ տանջում էին հարց ու փորձ անելով, իսկ այժմ բանտից քեզ մօտ են քշում:

— Բայց դու ինչո՞ւ համար չես դալիս:

— Որովհետև յետեւիցս զափթիւները կըդան և յետ կըբերեն ինձ, և բացի դորանից Պեօտրին էլ կըկալանաւորեն:

— Կարծ՞ում ես, որ նոքա այդպէս կ'անեն:

— Ի հարկէ... Միթէ՞ Արիստարխի-բէյը կարող է ուրիշ կերպ անել:

— Ես դորա մասին մտածեցի և դորա համար էլ հէնց եկայ խնդրելու քեզ, որ համարձակ բանտից մեզ մօտ գաս: Մենք այնպիսի տեղ ունինք, որ տաճիկները երբէք չեն գտնիլ քեզ:

— Իսկ յետո՞ ինչ կը լինի, — հարցրեց Ստանկօն:

— Այսօր կը գաս, իսկ վաղը արդէն Ռուսմանիայում կը լինիս:

Ստանկօն մի փոքր մտածեց և հարցրեց.

— Ի՞նչ պիտի անեմ այնտեղ:

— Ինչ որ ուրիշներն են անում:

— Ուրիշները ինձ օրինակ չեն. նոցանից չատերը գնում են որպէս «առաքեալ», միւսները զինուոր են դառնում, ուրիշներն էլ գրում են և տպում: Ես ոչ «առաքեալ» կարող եմ դառնալ, ոչ զինուոր, ոչ էլ գրել: Ռուսմանիայում ես մարդ չեմ կարող սովորեցնել, և կը խլեմ ուրիշների հացը, որոնք առանց այն էլ կիսասով են ապրում:

— Դու ստիպուած չես լինիլ ուրիշներին հաց մուրալ, — ասաց Մօկրան:

— Ասա ինձ, որքա՞ն ես վճարել ինձ համար:

— Բան չեմ վճարել:

— Բայց որքա՞ն ես խոստացել:

— Այդ քո բանը չէ:

— Բանն այն է, որ ինձ համար մսխելի փողը կարելի է ուրիշ բանի վերայ ծախսել, իսկ

ես մի և նոյն բանն է կորած եմ. ես չեմ կարող ոչ Ռուսչուկում և ոչ Բուլղարիայում մնալ, իսկ Ռուսմանիայում ես անելու բան չունիմ: Իմ կեանքը երեք փարա էլ չարժէ:

— Իսկ որդի՞քդ, չէ՞ որ դու նոցա հայրն ես:

— Այդպէս է, բայց ես նոցա համար էլ նոյնքան անօգտակար եմ, որքան և ուրիշների համար, — պատասխանեց Ստանկօն: — Թողէ՛ք ինձ, թողէ՛ք, որ վերջին ծառայութիւնս մատուցանեմ հայրենիքիս, որին ծառայելու ես ընդունակ եմ:

— Ի՞նչ ծառայութիւն, — հարցրեց Մօկրան:

— Արիւնս թափեմ նորա համար:

Մօկրան սառած մնաց, Ստանկօն շարունակեց.

— Լինում են ըսպէսներ, երբ մարդ պիտի ծառայէ հայենիքին թէ կեանքով և թէ մահով: Մէկը այս է անում, միւսը — այն: Ես էլ կեանքովս փոքր ինչ ծառայեցի, բայց այժմ իմ դերը վերջացած է. ես այլ ևս չեմ կարող կեանքովս ծառայել. և եթէ ես կենդանի մնամ, ինձ կարելի է հարցնել. «ինչո՞ւ դու խոյս տուիր մահից»: Այն ժամանակ ես կ'ամաչեմ:

— Ա՛խ, Ստա՛կօ, Ստա՛նկօ, բացական չեց Մօկրան:

— Այո՛, ամօթ կը լինի ինձ:

— Մի՛թէ դու չես մեղքանում կնոջդ ու զաւակներիդ:

—Ինչո՞վ կարող եմ նոցա օգնել: Իմ կեանքը անօգուտ է նոցա համար, իսկ մահս...

—Աւելի անօգուտ է, —ընդհատեց Մօկրան:

—Իսկ յիշատակը, —պատասխանեց Ստանկօն: —Եթէ տաճիկները ինձ ազատեն մի յայտնի գումարի համար, որդիքս կասեն՝, թէ ւմեր հայրը մուրացկան է»։ Իսկ եթէ ինձ կախեն, այն ժամանակ որդիքս կ'ասեն. «մեր հայրը հայրենիքի համար մեռաւ»: Այո՛ Մօկրա, ես մտածում եմ որդոցս մասին: Ես ամեն բանի վերայ մտածել եմ և կըտեսնես, որ քեզանից լաւ եմ վճռել: Որքեմն լաւ է դու քո փողը ուրիշ նպատակով գործ ածիր: Դու, երեւի, հասկանո՞ւմ ես ինձ:

—Այո, հասկանում եմ, —պատասխանեց Մօկրան:

—Ուրեմն չընդիմանանք Աստուծոյ կամքին:

—Չընդիմանանք, —համաձայնեց պառաւը:

—Կնոջս իւր երկու երեխայոց հետ առ քեզ մօտ: Նա պէտքական կըլինի քեզ: Երեխաներից մէկին թող առնէ եղբայրս, միւսին —քորս. մեծ որդիս կարող է մտնել մի վարպետի մօտ արհեստ սովորելու կամ ծառայելու: Մեղանում գեռ սոված չեն մեռնում և միշտ էլ կըգտնուին մարդիկ, որոնք կըխնամեն որբերին:

—Ստանկօ, Ստանկօ, —զարմացաւ Մօկրան:

—Եթէ տաճիկները ինձ ազատեն, և ես կարող լինեմ վերադառնալ ուսումնարան, այն

ժամանակ ուրախութեամբ կըվերադառնամ: Իսկ փախուստը կըսպանէ ինձ, և ես չեմ ուզում ի զուր տեղը կորչել: Մահը կեանք է արտադրում: Եթէ քո որդիքը չլինէին, որ երկուսն էլ մեռան, մեզ մօտ Ռուչչուկում խաղաղ կը լինէր և հանգիստ, ինչպէս գերեզմանում: Բայց դու ինքդ էլ...

—Իրաւ ես, իրաւ, —ընդհատեց Մօկրան: —Սակայն իմ որդիքս այդպէս հաստատ մահուան անձնատուր չեղան, ինչպէս դու ես անում: —Ախ, Ստանկօ, —նա հառաչեց, յետոյ առաւ, համբուրեց նորա գլուխը և ճակատը: —Որդե՛ակըս:

—Մայրի՛կս, —պատասխանեց Ստանկօն, որի աչքերը արտասուելից էին:

—Աստուած կ'ընդունի քո զոհը, —արտասուաթոր աչերով ասաց պառաւը. —նա շատ մաքուր է:

—Ես տալիս եմ հայրենիքս այն, ինչ որ կարող եմ տալ, և տաճիկներին չեմ զրկում Աստուծուն մի անգամ ևս վիրաւորելու միջոցից:

Մօկրան կրկին համբուրեց Ստանկօյին և արտասուքը զսպելով արագ դուրս եկաւ բանտից: Դռան մօտ նա պատահեց բանտապետին:

—Ի՞նչ է, —հարցրեց տեսուչը. —այս գիշեր՞ը:

Մօկրան մի ոսկէ դրամ տուեց նորան և կամաց հարցրեց. —ճի՞շտ է, որ զափթիկները սպասում են Ստանկօյին:

— Ինչպէ՞ս ես ամեն բան իմանում, — բացականչեց տեսուչը:

— Նորա երեկուանի՞ց են սպասում:

— Այո, բայց ինչպէ՞ս ես իմանում այդ բոլորը:

— Ինքդ այս բոլորէիս ասացիր:

— Ուրեմն դու ինձանից էլ խորամանկ ես: Միայն, խնդրեմ, մարդու բան մի՛ ստիչ:

— Մի վախենալ, մենք հին ծանօթներ ենք: Ի հարկէ, Մօկրան յայանեց Պետրին Ստանկոյի դիտաւորութիւնը:

— Ափսոս մարդ, — ասաց Պետրը: — Ի՛նչ բընաւորութեան տէր է: Այդպիսի բնաւորութիւնների երևան գալը մեր մէջ ապացուցանում է, որ Բուլղարիոյ ազատութեան գաղափարը խոր արմատ է ձգել: Դեռ նոր յղացաւ այդ գաղափարը, արդէն կան այնպիսի մարդիկ, որոնք նորա համար աներկբայ մահի դէմ են գնում: Ծաղիկը բացուած է... Աստուած տայ, որ պատուհներն էլ շուտով հասունանան:

Ձէ կարելի ասել, թէ պառաւր որքան հասկացաւ որդուն, բայց այս խօսակցութեան ժամանակ ներկայ գտնուող Անկան ու Իլենկան հասկացան նորան և երկար լռում էին, ինչպէս նա պատմում էր ժողովրդի վերածնութիւնը Պետրը աշխատում էր արտայայտել իւր միտքը դիւրամատչելի ձևով և յաճող կերպով յառաջ էր բերում զանազան կտորներ բանաստեղծների

գործերից: Նա ասաց Լիւբէն ԿարաՎելովի ստանաւորները, որոնք օրիորդներին վերացական գատողութիւններից ազդու երևեցին: Հայրենասիրական ստանաւորները, որոնք երգում են ազատութիւն և պատրաստականութիւն զոհուելու նորա համար, բացատրում էին օրիորդներին Ստանկոյի վարմունքը: Իլենկան լսելով Ստանկոյի մասին, աւելի ևս վշտացաւ, որովհետև նորան յայանի էր, թէ որքան իւր հայրը վատթարացրեց խեղճ վարժապետի դրութիւնը: Սակայն դատավճռի մասին պէս-պէս լուրեր էին պտտվում, ասում էին, թէ Կ. Պօլսից հեռագիր կայ, որով հրամայում են մեղմայնել գատավճիռը: Այսպիսի դէպքերում սովորաբար մխիթարիչ լուրեր են երևան գալիս: Ամենքը սպասում էին և տեսան: Դատավճիռը յայտնուեցաւ: Ամենքի վերայ նա սրտածակիկ ապաւորութիւն թողեց: Ինքը հաջի Խրիստոն գունատուեց և մրթմրթաց. — Ստանկօ, Ստանկօ: — Իլենկան վաղեց Անկայի մօտ և, ընկնելով բազմոցի վերայ, հեծկլտաց. նա չէր վստահանում լալ իւր ծնողների տանը: Մօկրան ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել, շրթունքները դողդողում էին, և նա կարծես աղօթում էր: Պետրը տխուր էր և մռայլ:

Հետեւեալ առաւօտ իրագործուեցաւ մահուան գատավճիռը: Ռուչչուկի բուլղարներէ համար դա՛ ընդհանուր սուգի օր էր: Ողջ քաղաքը հաւաքուեց հրապարակում, որ վերջին

անդամ նայի հեղ ու համեստ մարդու վերայ։ Ռումանացիներ, եկան և մահմեդականներ, սոքա հետաքրքրութիւնից էին եկել։ ուզում էին տեսնել, թէ ինչպէս պիտի կախեն, տեսնել նոյնպէս և այն մարդկանց, որոնք ամենամեծ յանցաւորներ էին համարվում։ Յանցանքի այս նոր տեսակը նա մանաւանդ սարսափելի էր համարվում իւր նորութիւնով։ Ամբոխի կատաղութիւնը ևս աւելի սաստկացաւ, երբ նա հասկացաւ, որ իւր մէջ է կայանում նոր յանցանքի պատճառը։ Ամենքը աշխատում էին պատճառը օտար պետութիւններին վերագրել, բայց դա խղճի հանգստութեան համար էին հնարել, որպէս զի իրենցից հեռացնեն ժողովրդի մի քանի դարերի սարկութեան պատասխանատուութիւնը, — այն սարկութեան, որ տաճիկները «պատմական անհրաժեշտութիւն» և Ալլահի կամքն էին համարում։ Եւ յանկարծ ապստամբակիցները սկսել են մերժել այդ անհրաժեշտութիւնը, ընդդիմանալ Ալլահի կամքին։

Բերին երեք յանցաւորներին — Գումիտրին, Գրօժդանին և Ստանկոյին։ Սոքա դալիս էին զինուորներով շրջապատուած. զինուորական երաժիշտները նուազում էին։ Առաջից դալիս էր հեծելագօրքը, որ հրապարակում ճանապարհ էր բաց անում. յետոյ դալիս էին հետևակները։ Չափիները պատեցին այն շրջանը, ուր երեք կախաղան կար շինած։ Գումիտրին և Գրօժ-

դանին զինուորներ էին բռնել, որովհետև չէին կարողանում գալ. Ստանկոն մենակ էր դալիս, իսկ և իսկ այնպէս, ինչպէս մի ժամանակ ուսումնարանից ընթերցարան էր գնում։ Նա նոյնպէս մի փոքր կաղում էր և բարևում ժողովրդին։ Ըստ սովորականին նորա աչքերը հեղութիւն և խոնարհութիւն էին արտայայտում։ Կարծես, այդ մարդը միշտ պատրաստ էր ամեն մէկին լսելու, ամենի առաջ խոնարհուելու, մինչ գեռ տաճիկների առաջ չէր խոնարհվում։ Այդ բոպէին Ստանկոյին տեսող բուլղարացին հառաչում էր. ամբոխի մէջ մերթ այս տեղ, մերթ այն տեղ խուլ հառաչանքներ էին լսվում, և այդ առանձին հառաչանքները անշուշտ ընդհանուր բարձր լաց ու կոծի կը փոխուէր, եթէ զափթիւները չգսպէին բնական զգացմունքների երևան գալը, որ հակակառավարչական մի ցոյց էր համարվում։

Կախաղանների տեսարանը զանազան ազդեցութիւն ունեցաւ դատապարտեալների վերայ։ Գումիտրին, որ մի առոյգ երիտասարդ էր և մի քանի անգամ յաղթել էր փէշլեփաններին (ըմբիշ), կատաղեց։ Նա այս ու այն կողմն էր նետում իրեն, տաճիկներին հայհոյում էր և աղաղակում։ Գրօժդանն ինքն էլ չէր իմանում, թէ ինչ է լինում իւր հետ և չորս կողմում. նա, ասես, մեռածի պէս էր կանգնել, և նորա շարժմունքները անկախօրէն

էին լինում: Ստանկօն բոլորովին չփոխուեց: Նա միայն հաղիւ շարժում էր շրթուները և հաւանական է, որ աղօթում էր այդ ժամանակ. նա աչքը ձգեց ամբօխի վերայ և գլխի մի շարժումով, կարծես, իւր մնաս բարեաւն ասաց ամբօխին: Մի վայրկեան նորա և Պեօտրի, որ նոյնպէս ամբօխի մէջ էր և ձիւնի պէս ճերմակ, աչքերը հանդիպեցան, և Պեօտրը հաղիւ զօպեց իւր արցունքները: Ստանկօն ժպտեց և այդ նորա վերջին ժպտան եղաւ:

Արդարագատութիւնը բաւականութիւն ըստացաւ: Երեք կախաղանից երեք դիակ էին կախուած, որոնք սկզբում ճօճվում էին, իսկ յետոյ ճօճուել էլ դադարեցան:

Կախուածների մարմինը տաճիկները չեն ծածկում: Նոքա այդպիսով ցոյց են տալիս ճգնաժամի ցնցումները, և կախելուց յետոյ իսկոյն չեն հանում դիակը. ընդհակառակը՝ թողնում են ընդհանուրին վախեցնելու համար և մահուան դատաւճիռն էլ կախում են լանջից:

Երեք օր Դումիտրիի, Գրօժդանի և Ստանկօյի դիակները մնացին կախաղանի վերայ, և իւրաքանչիւրի կրծքից կախուած էր դատաւճիռը: Նոյնից առաջինի վերայ գրած էր, թէ Դումիտրին ակներև ապստամբ էր, թէ նորան դանակը ձեռին են բռնել, երբ ձիով գնալիս մուլեգնաբար դատապարտելի խօսքեր է արտասանել, երկրորդում — թէ Գրօժդանը կօմիտալիի հետ

մասնակից է եղել սպայի սպանութեան, երբ սա իւր պաշտօնական պարտականութիւնն է կատարելիս եղել. երրորդում — թէ Ստանկօն անդամ էր այն յանձնաժողովի, որ յարաբերութիւն ունի Տաճկաստանի թշնամիների հետ, որոնք աշխատում են խլել սուլթանից Ալլահից յանձնուած նահանգները: Դատաւճիռը մի կողմից բուլղարերէն էր գրած, միւս կողմից տաճկերէն: Տաճիկները դալիս էին, կարգում դատաւճիռը և ողջօրը լցվում սրճարանում, որ մահապարտութեան տեղին դէմ ու դէմ էր: Բուլղարները նոյնպէս մտտենում էին, բայց չէին կարգում դատաւճիռը. նոքա հանում էին դիւտարիկները և աղօթում երեք անմեղ տեղը դատապարտուածների. համար, որոնց տաճիկները յանցաւոր էին ասում, իսկ բուլղարները — զոհ:

XX.

Յանցաւորները զոհ են: Հետեաբար նախանձելի չէին այն ժամանակուայ Տաճկաստանի գործերը, եթէ բնիկները այդքան տարբերվում էին միմեանցից իրականութիւնները գնահատելու կողից: Ինչ որ մի քանիսը առաքինութիւն էին համարում, միւսները յանցանք էին համարում: Դոքա պարզ կերպով ապացուցանում են

այն սկզբունքների խախուտ լինելը, որոնց վերայ հիմնուած էր այն ժամանակուայ Տաճկաստանի ներքին բարեկարգութիւնը:

Միւսներին վախեցնելու նպատակով տաճիկներին Ռուշչուկում արած գլխատու թիւնները ոչինչ ազդեցութիւն չունեցան այդ կողմից, միայն ընդհանուրի դայրոյթը շարժեցին և մարդկանց իրարու դէմ գռգռեցին: Տաճիկները նախում էին քրիստոնեաների—իսկ քրիստոնեաները աւելի ևս տաճիկներին վերայ—որպէս թշնամիների վերայ: Շատ հեշտ կերպով կարելի էր այդ բոլորը նախազգուշացնել. պէտք էր միայն Ստանկոյի ազատել և թոյլ տալ նորան, որ շարունակէ երեխաների հետ պարապելը: Բայց տաճիկները պիտի «վախեցնէին»: տաճիկների կառավարելու եղանակի անհրաժեշտ հետևանքն էր այդ, և տաճիկները չէին կարող խօսքից յետ կանգնել և չկանգնեցին էլ:—Այժմ ամենքը վախենում են մեզանից, —ասում էին նոքա.— տեսէք, թէ ուրիշները որքան հեզ են:

Արդարև, ամեն բան խաղաղուեց, բայց այդ մի այնպիսի խաղաղութիւն էր, որ աիրում է, տեղի է ունենում միայն մի ծանր հարուածից յետոյ, որ ոչ թէ սպանում, այլ խլացնում է: Մանաւանդ այնպիսիները վախեցան, որոնց համար ձեռնտու էր վախենալը. վախեցան նոյնպէս և նոքա, որոնք պատրաստ էին ամեն տեսակ կարգերի հետ հաշտուել և, ինչպէս էլ որ

լինի, պահպանել նոցա: Այդպիսիներից էր և Իլենկայի հայրը: Խիղճը մի փոքր տանջում էր նորան Ստանկոյի մահուան համար, բայց նա աշխատում էր ոչ թէ իրեն մեղաւոր համարել, այլ այն շարժումը, որ կատարվում էր նորա աչքի առաջ: Ստանկոն անշուշտ զոհ պէտք է դնար այդ շարժման: Հալի Խրիստոն իրեն արժանահաւաստ դատաւոր էր համարում այս հարցի վերաբերմամբ, որովհետև իրեն էլ հասաւ: Չէ՛ որ ինքն էլ բանտ նստաւ: Չէ՛ որ իրեն էլ կապկպեցին: Եւ որքան փող նա պէտք է հաւուցանէր... Մօտենում էր մէջլիսի ժամանակը, որին նա պիտի մասնակցէր: Բնակիչները, բաժանուած դաւանութիւններով, պիտի ուղարկէին այնտեղ իրենց ընտրած ներկայացուցիչներին, և բացի դուրանից, ներկայ պիտի լինէին—տաճիկների մուֆտին, քրիստոնեաների եպիսկոպոսը ու առաջնորդը և հրէաների բարբին: Կանոնադրութեան հիման վերայ վերոյիշեալ անդամները հաւասար իրաւունք ունէին, իսկ իրօք—ուրիշ կերպ էր լինում: Քրիստոնեաներն ու հրէաները, թէև մուսուլմաններից անհամեմատ շատ էին, բայց միշտ հպատակվում էին և լուռ ու մունջ ընդունում էին այն առաջարկութիւնները, որ անում էր մի որ և է տաճիկ կամ կառավարութեան ներկայացուցիչը, որ մի և նոյն ժամանակ մէջլիսի նախագահն էր: Այսպէս, աիրապետող բնակիչների ներկայացուց-

իչները քննում ու վճռում էին հարցերը, իսկ միւս պատկառելի բնիկները կարծում էին միայն, թէ իրենք էլ են վճռում—սակայն իրօք միայն ներկայ էին գտնվում, իսկ վճռում էին ուրիշները:

Ահա մի այդպիսի ժողովի էր պատրաստվում հաջի Խրիստոն: Նիստը պիտի բացուէր շորքը քաղաքի օրուանից: Նախընթաց կիրակէ օրը, երբ ժողովուրդը դուրս էր գալիս եկեղեցուց, հաջի Խրիստոն կանգնեց եկեղեցու դռան մօտ և, տեսնելով Մօկրային ու Անկային, ձօնեցաւ և բարեկեց նոցա: Սորա էլ նորան բարեկեցին:

—Ես կըգայի քեզ մօտ, Մօկրա, եթէ հաւատացած լինէի, որ ինձ լաւ կ'ընդունես,—ասաց հաջի Խրիստոն:

—Մի՞թէ երբ և իցէ լսել նս, որ ես հիւրերիս վատ եմ ընդունել,—պատասխանեց Մօկրան:—Խնդրեմ, համեցէք...եկ:

—Բայց Պետարը տանը կըլինի՞:

—Կարծեմ, նա տանն է:

Նորա միասին գնացին: Մօկրան տարաւ նորան ընդունարան և խնդրեց, որ նստի, իսկ ինքը գնաց:

Մի քանի րոպէից յետոյ եկաւ Պետարը: Ինչպէս տան տէր, նորա պարտականութիւնն էր խօսակցութիւնով զբաղեցնել հիւրին: Նախ և առաջ պէտք էր, ինչպէս ընդունուած է, ողջունել հիւրի գալը. յետոյ Անկան բերաւ քաղցրա-

ւենի և շուր, սե սուրճ, իսկ ապա՝ ծխամորճ, և երբ կապտագոյն մուխը սկսեց բարձրանալ երկու նստածների գլխի վերայ—պատկառելի բուլղարացու վերայ, որ ահագին կարճ բաձկոն ունէր, գլխին ֆէս, մէջքին կապած լայն գօտի, և երիտասարդի վերայ, որ հագին եւրոպական շորեր ունէր,—միայն այդ ժամանակ հաջի Խրիստոն սկսեց խօսել:

—Ես եկել եմ խնդրելու, որ դու գրես ինձ համար...

—Ի՞նչ բան,—հարցրեց Պետարը:

—Մի այնպիսի բան, որ համարեա քո դէմ է ուղղած, բայց դու կըհասկանաս ինձ, որովհետեւ թէպէտ և արտասահմանումն ես սովորել, բայց պատկառելի, հանդարտ մարդ ես դուրս եկել... Ամենքը այդ տեսնում են և ըստ արժանոյն գնահատում են քեզ: Դու օգուտ քաղեցիր եղբայրներիդ օրինակից, և քեզ չվարակեց այն ախտը, որով վարակուած է մեր երիտասարդութիւնը:

—Հ'ըմ...—մրթմրթաց Պետարը:—Ի՞նչ բանի մասին ես խօսում, հաջի Խրիստո:

—Որ դու գրես... Դու ինձանից լաւ կարող ես գրել, նոյնպէս շատ շատերից:

—Բայց ի՞նչ պէտք է գրել:

—Ահա ինչ... Շուտով ժողով պիտի լինի, և ես կամենում եմ մի քանի խօսք ասել այդ նպովեալ մեր լուսաւորութեան մասին,—[Թո՛ղ



բոլորովին չըլինի: Պէտք է, ժամանակ է վերջ  
տալ այն բանին, որից մեր երիտասարդութիւնը  
միայն փչանում է:

— Եթէ ուզում ես ինքդ խօսել, ի՞նչ կարիք  
կայ, որ ես գրեմ:

— Ահաւասիկ, թէ ինչ կարիք կայ: Նախ և  
առաջ այդ բոլորը մազբաթի (գանգատի) ձևով  
պէտք է ներկայացնել, իսկ ապա՝ անհրաժեշտ  
է, որ մեր գանգատը ներկայացնենք փաշային  
կամ իրեն սուլթանին, որպէս խնդիրք ամենա-  
խոնարհ հպատակներից: Անտարակոյս, որ քե-  
զանից լաւ ոչ ոք չի գրի... Թո՛ղ մի անգամ  
ընդ միշտ ազատեն նոքա մեզ այդ անիծեալ  
լուսաւորութիւնից... Թո՛ղ մի կերպ կարգի ձը-  
գեն մեր ուսումնարաններն ու ընթերցարան-  
ները...

— Արդեօք չփակե՞ր նոցա, — վերայ բերեց  
Պետրը:

— Այո՛, այո՛... Նոքա չե՞ն բոլոր չարիքների  
պատճառը: Այնտեղ ոչ ոք փարա չէ ձեռք բե-  
րել, իսկ նոցա պատճառով քանի մարդ սու-  
ժեց: — Նա խոր հառաչեց և շարունակեց. — Քիչ  
էր մնում, որ ես ողբայի Ստանկոյի վիճակը...  
Իսկ Ստոեանը քի՞չ չարիք հասցրեց ինձ: Ստան-  
կոյին ի՞նչ բան փչացրեց, — ուսումնարանը: Ի՞նչ  
բան ստիպեց Ստոեանին թողնել վաճառակա-  
նութիւնը և յիմար բաներով զբաղուել, — ի հար-  
կէ ուսումնարանը: Արտասահմանում ուսում ա-

ռածներից միայն դու ազատ մնացիր, ուրեմն  
դու էլ գրիր այդ խնդրագիրը. իսկ երբ փաշան  
իմանայ, որ դու ես գրել — անկասկած քեզ կը-  
վարձատրէ:

Պետրը մտածմունքի մէջ ընկաւ: Նա մտա-  
ծում էր, թէ ինչպէս ազատուէր այս առաջար-  
կութիւնից և մի և նոյն ժամանակ այնպէս ա-  
նէր, որ հաջի Խրիստոն չվիրաւորուէր, որի լաւ  
տրամադրութիւնը նա կամենում էր պահպանել,  
ի միջի այլոց և այն պատճառով, որ լաւ վարա-  
գոյր կարող էր լինել: Մինչ Պետրը խորհում էր,  
հաջի Խրիստոն այսպէս շարունակեց իւր խօսակ-  
ցութիւնը.

— Եթէ սուլթանը ընդունի մեր խնդիրը,  
այն ժամանակ մեր հայրենիքում կըտիրէ նախ-  
կին խաղաղութիւնը, իսկ սա ամենից կարևորն  
է մեզ երկուսիս համար. ինձ համար — որով-  
հետև ես ծեր եմ, իսկ քեզ համար — որովհետև  
դու երիտասարդ ես: Այնպէս էլ դուրս է գա-  
լիս: Ես կարողութիւն ունիմ, որ հետո, անաս-  
րակոյս, գերեզման չեմ աանիլ, ահա ես էլ  
ուզում եմ նորան աղջկանս հետ տալ և համոզ-  
ուած լինել, որ Աստուծոյ տուած հարստութիւ-  
թիւնը չի կորչիլ... Այդպէս համոզուած լինե-  
լու համար խաղաղութիւն է պէտք:

Իս բաւական պարզ ակնարկ էր: Պետրը  
կարող էր կարծել, թէ իրեն նա փեսայ է ընտ-  
րել, մանաւանդ որ յարգելի պարոնը՝ ասելով

Թէ ծերին անհրաժեշտ է խաղաղութիւն, չասաց, թէ ինչու նոյնն էլ երիտասարդին է պէտք: Հարցի այս երկրորդ կողմին նա չկաւ, բաւականանալով միայն աղջկայ անունը տալով: Պետորը հեշտութեամբ կարող էր հասկանալ հարցի երկրորդ մասի պատճառաբանութիւնը, բայց նա սպասեց, իսկ այդ միջոցին հաջի Խրիստոն ճառախօսեց. — Ոոպէս զի հաստատ լինի թէ իմ, թէ քո, թէ բոլոր գիւղացիների և թէ առ հասարակ մեր հայրենիքի խաղաղութիւնը, գրիւր այդ բանը, որքան կարելի է լաւ:

Պետորը լսեց, գլուխը շարժեց և ապա պատասխանեց.

— Այդ բանը ես չեմ կարող անել:

— Ա՛յ քեզ... — դարմացաւ հաջի Խրիստոն:

— Այո՛, չեմ համարձակուիլ:

— Անկարելի՛ է:

— Անկարելի է թւում, բայց իրօք կարելի է:

— Ի՞նչ հօ գրել գիտես:

Այո՛, ես գրում եմ բուլղարերէն, ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն, իսկ տաճկերէն գրել չեմ իմանում:

— Զարար ե՛՛ք, — բացականչեց հաջի Խրիստոն. — գրիր ֆրանսերէն, այն ժամանակ փաշան էլ, սուլթանն էլ կը հասկանան:

— Ի՞նչ է, այդ խնդիրքը միայն քո կողմից պիտի լինի:

— Չէ՛, բոլոր ժողովի կողմից:

— Մի՛ թէ ժողովում կը հասկանան ֆրանսերէն գրած խնդիրքը:

Այս հարցը մի փոքր ոտիպեց հաջի Խրիստոյին մտածել, բայց նա իսկոյն պատասխանեց. — Ի՞նչ մի և նոյն բանն է, կը հասկանան, թէ ոչ: Ես կը պատմեմ, թէ բանը ինչու մն է, և հաւատացած եմ, որ ամենքը առանց բացառութեան կատորագրեն:

— Կրկին ես խնդիրք գրել չեմ իմանում:

— Այդ ի՞նչ պէս, — նորից դարմացաւ հաջի Խրիստոն: — Խնդիրքը ա՛յ այսպէս են գրում, — նա մատով ցոյց տուեց ափի վերայ:

— Ամեն մէկն էլ չի կարող այդպէս խնդիրք գրել: Հրամայեցէք դերձակին կօշիկներ կարել, իսկ կօշկակարին — վարտիկ կը կարողանա՞ն. ես հօ խնդիրք գրել չե՞մ սովորել:

Վերջին փաստը համոզեց հաջի Խրիստոյին: Նա շարժեց գլուխը, տրորեց ճակատը և հարցրեց. — Ի՞նչ անենք ապա:

— Մէջլիսում ասա՛, ինչ որ կամենում ես. այն տեղ գրագիր կայ, նա կը գրէ բոլորը աճկերէն, ինչպէս հարկն է, և դա իմ խնդիրքից անհամեմատ լաւ կը կըլինի:

— Այո, ճշմարիտ ես ասում, — համաձայնեց հաջի Խրիստոն, յետոյ հառաչեց և նորից սկսեց ապացուցանել, թէ ինչու են անհրաժեշտ այդպիսի միջոցներ: Նա օրինակ բերեց սերբիական պատերազմը, խօսեց այն լուրերի մասին, թէ

ինչ է Ռուսաստանի դիտաւորութիւնը և վերջապէս Ստանկոյի մահուան առթիւ խօսք բաց արեց. այս բոլորը նա հաւաստի ապացոյց էր համարում իւր յայտնած հայեացքների վերաբերմամբ:

— Ես լսել եմ, — նկատեց Պետարը, — որ Ստանկոյին չէին դիտատիլ, եթէ լսած չլինէին մի ինչ որ ժողովի մասին:

Ի հարկ է... իմ պարտիզում տեղի ունեցած ժողովի մասին:

— Ինչպէ՞ս ապա իմացան:

— Ես պատմեցի... Այն տեղ եղել է Ստանկոն, Ստոեանը և մի ուրիշը:

— Ինչպէ՞ս, հաջի Խրիստո, խիղճը չտանջեց, որ նոցա մատնեցիր, — նկատեց Պետարը, ակներև կշտամբելով նորան:

— Ինչպէս խիղճս ինձ չտանջեց... Ուրեմն նոքա կարող էին հաւաքուել իմ պարտիզում, իսկ իմ խիղճս պիտի տանջէր ինձ, թոյլ չալիտի տար, որ մատնեմ նոցա: Հօ ինձ էլ մեղաւորում էին, իբր թէ թաղցրել եմ Ստոեանին. եթէ չասէի, ես մեղաւոր դուրս կըզայի և ինձ Աքէա կուղարկէին:

Պետարը ի նկատի առաւ այս միամիտ բացատրութիւնը և չփորձեց անգամ պատասխանել: Հաջի Խրիստոն մի փոքր էլ խօսեց և վերջապէս գնաց: Հօրից յետոյ աղջիկը եկաւ: Իլենկան յաճախ էր գալիս Մօկրայի տունը. օր էր պա-

տահում, որ նա մի քանի անգամ էր գալիս, որպէս զի մի բան իմանար նոցա մասին: Նոքա — նշանակում էր Ստոեանն ու Նիկօլան: Սկզբում անորոշ տեղեկութիւններ էին ստացվում, բայց վերջապէս ճշգրիտ լուր հասաւ, թէ նոքա անփորձ տեղ են հասել:

Պետարը Բուքարեյտ պիտի գնար, բայց առանձին չէր շտապում, կամենալով բանը այնպէս սարքել, որ տեղական իշխանութիւնը չկարողանար կասկածել նորան: Այդ իսկ ճանապարհորդութան մասին էր նա այժմ խօսում իլենկայի հետ:

— Վերջապէս ե՞րբ, — հարցրեց օրիորդը:

— Երբ որ յարմար առիթ կըգտնեմ:

— Ահա՛ երկու շաբաթ է, որ մի և նոյն պատասխանն եմ լսում:

— Մի՞թէ դու կըկամենայիր, որ վերադառնալուց տաճիկները ինձ ձերբակալէին:

— Ա՛խ, չէ, — պատասխանեց իլենկան:

— Համբերիր մի փոքր, — համոզեց Պետարը:

— Լաւ, կ'աշխատեմ համբերութեան պաշար հաւաքել:

Մինչ նա վարժում էր իւր համբերութիւնը, հայրը խորհրդարանում ճառախօսութիւն էր անում: Տաճիկները շատ դարմացան, երբ նա խօսելու իրաւունք խնդրեց: Նոքա նայեցին միմեանց, ուսերը վեր բարձրացրին, իսկ մէկը մինչև անգամ ասաց.

— Եթէ ուայան էլ սկսում է խօսել, էլ մենք, երևի, չպիտի գանք այս տեղ: —

Այնու ամենայնիւ նախագահը թոյլ տուեց հաջի Խրիստոյին խօսելու: —

— Ի՞նչ կ'ասես, — հարցրեց նորան: —

— Ես կ'ամենում եմ ասել, — սկսեց հաջի Խրիստոն, — որ այն բոլոր թշուառութիւնները պատճառը, — որ վերջին ժամանակներս մեր գլխին գալիս են, լուսաւորութիւնն է: —

— Ուրեմն ի՞նչ, — հարցրեց նախագահը: —

— Մեզ ի՞նչի են պէտք ուսումնարաններ, ընթերցարաններ, գրքեր և լրագիրներ: —

— Մաշալլահ, մաշալլահ, — հաւանեցին տաճիկները: —

— Մեզ ի՞նչի են պէտք աւաֆրանկա մարդիկ: —

— Ճիշտ է, լա՛ւ ասացիր: —

— Գրե՛նք փաղիշահին, — Աստուած երկար կեանք և ամեն տեսակ բարօրութիւն պարգևէ նորան, — և ուղերձ ներկայացնենք, ասենք, թէ մենք, նորա ամենահաւատարիմ հպատակներս, խոնարհաբար խնդրում ենք՝ բարեհաճի հրամայել՝ որ փակեն բոլոր ուսումնարանները և գրադարանները, այրեն բոլոր լրագիրները և գրքերը և արգելեն, որ մեր որդիներանց արտասահման շուղարկենք: Միայն այսպէս վերստին կըտիրապետէ այն խաղաղութիւնը, որից մենք միշտ օգուտ էինք քաղում, քանի դեռ լուսաւորու-

թիւնով չէինք վարակուել... Հէնց որ այդ ախտը մեզ մօտ եկաւ, իսկոյն մեր տունը սկսեց քանդուել: Թո՛ղ քարտուղարը այս բոլորը արձանագրէ խնդիրքի մէջ, մենք ամենքս կըդնենք մեր կնիքը և նորա հետ կըգնանք փաշայի մօտ, որ նա մեր ուղերձը փաղիշահին ուղարկէ: Թո՛ղ մեզ՝ անբաղդ ուայաներիս պաշտպանէ լուսաւորութիւնից ամենաերջանիկ, ամենահզօր և ամենախմաստուն, ամենապայծառափայլ, ամենամեծահոգի փաղիշահը, ինչպէս հաւը ուրուրից պաշտպանում է իւր ճուտերին: —

— Մաշալլահ, մաշալլահ, — հաւանեցին տաճիկները: —

— Ճիշտ է ասում, լաւ է ասում, — կրկնեցին հրէաներն ու քրիստոնեաները: —

Տեսնելով, որ առաջարկութիւնը ընդհանուրի համակրութիւնը վայելեց, մնաց միայն յանձնել քարտուղարին, որ նա գրէ այդ խընդրագիրը, որին ոչ ոք հակառակ չէր: Մէկը միայն անբաւական էր, որ մի այդպիսի լաւ առաջարկութիւն քրիստոնեայ արաւ և ոչ տաճիկ, այդ պատճառով էլ նա խնդրեց, որ արգելուի ուսուցիչներին առաջարկութիւններ անելը: Սակայն հաջի Խրիստոյին նախագահը պաշտպանեց: —

— Ինչո՞վ է նա մեղաւոր, — ասաց նախագահը, — որ լաւ բան է մտածել: —

Բայց տաճիկը համաձայն չէր: —

— Եթէ նա իւր միտքը ինձ յայտնած լինէր,

ես էլ մի քանի բան կ'աւելացնէի, և բոլոր առաջարկութիւնը կարող էր աւելի լաւ լինել:

— Ինչ՞ կ'աւելացնէիր:

— Ես կ'աւելացնէի, թէ խնդրենք փառիշահին, որ նա բարեհաճի հրամայել՝ կտրել բոլոր ռայեաների լեզուն, որոնք կը համարձակուին մի ուրիշ լեզու խօսել, բացի տաճկերէնից: Եթէ ռայաները խօսէին միայն տաճկերէն, այն ժամանակ ուսումնարանները էլ կարիք չէին ունենալ, գիրք էլ չէին կարգալ, արտասահման էլ չէին գնալ: Ես մինչև անգամ ա՛յ ինչ կ'առաջարկեմ, — շարունակեց հռետորը մի փոքր մտածելուց յետոյ, — բոլոր ռայեաների լեզուն կտրել, առանց լեզուի մարդ կարող է ապրել, բան անել և հարկ տալ: Այն ժամանակ ամեն բան միանգամից կը հանդարտուէր, երեխաները տաճկերէն կը սովորէին, այնպէս որ՝ երբ այժմեան սերունդը մեռնէր, համայն Տաճկաստանում միայն տաճկաց լեզուն կը մնար:

— Հըմ... դա վատ չէր լինիլ, — նկատեց նախագահը:

— Վատ չէր լինիլ, — կրկնեց տաճիկներից մէկը, որի հետ համաձայն եղաւ երկրորդը, երրորդը և չորրորդը. յանկարծ մէկը պատ առխանեց.

— Ի՞նչպէս կտրել լեզուները: Դա հեշտ բան չէ:

— Ոչինչ գոյաւոր բան էլ չկայ, — պնդեց առաջարկութիւն անողը: — Պէտք է միայն ամեն մի սան-

ջակ մի մի գունդ գորք ուղարկել. թո՛ղ զինուորները գիւղից գիւղ գնան, կտրատեն և շների առաջ ձգեն:

Տաք վիճաբանութիւն սկսուեց, միայն քրքրիստոնեաները և հրէաները լուռ էին: Այդ հարցի վերաբերմամբ ընդհանուր հաւանութիւն չկայացաւ, իսկ այդ միջոցին քարտուղարը արդէն պատրաստել էր ուղերձը. խորհրդարանի անդամները գրին իրենց կնիքը և յանձնեցին նախագահին փաշային ներկայացնելու համար:

Այս նիստը նշանաւոր եղաւ նորանով, որ ռայեան համարձակուեց առաջարկութիւն անել:

Հալի Խրիստոն գոհ մնաց, որ կարողացաւ մի ծառայութիւն անել իւր հայրենիքին: Նա իւր բանը արաւ, իսկ մնացածը իրենից չէր կախուած:

Մի քանի օրից յետոյ Պետարը հրաւէր ստացաւ փաշայի մօտ գնալու: Փաշան մեծ սիրով ընդունեց նորան և իսկոյն ցոյց տուեց բազմաթիւ կնիքներով ծածկուած այդ թուղթը:

— Ես այդտեղ բան չունիմ, ձերդ գերագանցութիւն:

— Իսկ բովանդակութիւնը գիտե՞ս:

— Դիտեմ: Հեղինակը պատիւ արաւ ինձ և առաջարկեց, որ ես գրեմ:

— Դու, ի հարկէ, մերժեցի՞ր:

— Անկասկած:

— Դու ինձ շատ պարտաւորեցրած կըլինէիր, եթէ խորհուրդ տայիր, որ չանէր:

— Ափսոս, որ ես գլխի չընկայ:

—Ուրեմն դու չե՞ս ասել, որ չանի:

—Չեմ էլ մտածել:

Բայց հօ քեզ համար անախորժ էր տեսնել մի այսպիսի խոշոր յիմարութիւն, որ առաջարկում է քո պատկառելի համաքաղաքացիներից մէկը:

—Չէ որ պատկառելի մարդկանց արտօնութիւններից մէկն էլ յիմարութիւնն է:

Տեսնում եմ, սիրելի դօկտօր, որ դու շատ կծու լեզու ունիս,—նկատեց փաշան:—Քո կծու լեզուդ ինձ բանի մէջ է ձգել:

—Ինչպէ՞ս:

—Հաջի Խրիստօյի յիմարութիւնը վարակել է մէջլիսի բոլոր անդամներին և անպատուել է այս տեղի բոլոր նշանաւոր մարդկանց: Այդ ընդհանուր յիմարութիւնը վերաւորել է և ինձ, որ ըովհետև այժմ չի կարելի այս թուղթը մահուգի տակ դնել, պէտք է ուղարկել Կ. Պօլիս և այնտեղ կ'իմանան, որ ինձ յանձնած երկրում ընտրուած ներկայացուցիչների ժողովը միայն յիմարներից է կազմուած: Չէ՞ որ այստեղ ստորագրուածները ամբողջապէս նշանաւոր մարդիկ են: Տուէք նոցա ազատութիւն, և նոքա մի յիմարութիւնից յետոյ միւսը կ'անեն: Լսել ես, պ. դօկտօր, լեզուների մասին:

—Չէ', ձերդ գերազանցութիւն, —պատասխանեց Պետրը:

Առաջարկութեան էութիւնը պատմելուց յետոյ փաշան այսպէս շարունակեց.

—Ժողովը չէ ընդունել այդ առաջարկութիւնը, բայց կասկած չկայ, որ նա սերիչ կերպ յարութիւն կ'առնի... Մուսուլմանները սաստիկ զրդուած են քրիստոնեաների դէմ, այնպէս որ՝ նոքա հաստատ կ'աշխատեն լեզուները կրտրելու տեղ մի ուրիշ աւելի քիչ արմատական, բայց նոյնպէս սարսափելի միջոց գտնել:

—Այո, բանը վատ է...—նկատեց Պետրը:

Ահա այսպէս, —ընդհատեց փաշան, — ես քեզ կանչեցի, պ. դօկտօր, նորա համար, որ մի ծառայութիւն անես ինձ:

—Պատրաստ եմ, ձերդ գերազանցութիւն:

—Համաձա՞յն ես Բուքարեշտ գնալու:

—Համեցէք:

—Եւ տեսնել այն տեղ մասնաժողովի անդամներին:

—Ինչպէ՞ս:

—Հօ դու լա՞ւ յարաբերութիւն ունիս մասնաժողովի անդամների հետ:

—Այնքան էլ չէ:

—Ես ուզում եմ քո միջոցով յանձնարարութիւն անել նոցա... Համաձա՞յն ես:

Եթէ միայն կարող եմ կատարել այդ յանձնարարութիւնը:

—Բանն այն է, որ ես կամենում եմ յայտնել մասնաժողովին իմ սեպհական խօսքերը ճշ-

տուժեամբ, բայց հաւատարիմ մարդ է պէտք ահա բոլորը:

— Ես կարող եմ կատարել այդ:

— Ինձ յայտնեցին, թէ յանձնաժողովը պատարաստվում է ապստամբութիւն սկսելու... Յայտնիր նոցա իմ խորհուրդը. լաւ է թողնեն այդ միտքը... Թո՛ղ Սերբիայում կադրակերպեն բուլղարական լէգիոններ, թո՛ղ դուարձանան հրաւէրներով և մանիֆէստներով, թո՛ղ կապեր հաստատեն քաղաքական դործիչների հետ, բայց թո՛ղ չփորձեն Բուլղարիայում ապստամբութիւն սկսել. հակառակ դէպքում, — փաշան սկսեց լուրջ խօսել և իւրաքանչիւր խօսքը առանձին արտասանել, — նոքա կստիպեն, որ տէրութիւնը դիմէ ամենավճռական և խիստ միջոցների... Ամեն տեղ, ուր միայն կրօնական ապստամբութեան նշոյլներ երևել, չերքէտներ ու բաշիբուզուկներ կ'ուղարկենք և թոյլ կըտանք, որ արեան մէջ լողան:

Վերջին խօսքերը արտասանելիս փաշայի աչքերը վառուեցին, ինչպէս գիշակեր դադանի աչքերը: Նա, կարծես, մի վագր էր, որ քաղաքակրթութեամբ մարդու կերպարանք էր ստացել:

Պետրը լուռ նայում էր նորան: Փաշան ուշքի եկաւ. նորա աչքերը կորցրին իրենց վայրենի փայլը, և հարցրեց.

— Համաձա՞յն ես իմ խնդիրը կատարելու:

— Ուրախութեամբ, ձերդ գերազանցութիւնս

— Ես չեմ պահանջում, որ դու բանակցութիւն անես նոցա հետ. ես կամենում եմ միայն, որ նախադգուշացնես այդ պարոններին, թէ իմ խօսքերը վճռական են և խսկութեամբ կ'իրագործուին... Թո՛ղ ուրեմն մեղքանան խեղճ ժողովրդին, եթէ վստահանում են իրենց նորա պաշտպանը անուանել... Թո՛ղ վարժուեն Սերբիայում: Թո՛ղ այն տեղ բանակներ կազմակերպեն — այդ աւելի խելօք և մեծահոգի կըլինի... Ասա՛ նոցա այդ ոչ թէ քո, այլ իմ կողմից... Կարծեմ, ես ոչինչ անկարելի բան չեմ՝ պահանջում:

— Ի հարկէ, — պատասխանեց Պետրը:

— Ահա՛, այս է իմ բոլոր կամեցածս: Երբ վերադառնաս և կամենաս տեսնել ինձ, ես շատ ուրախ կըլինիմ, չեմ էլ հարցնիլ քո առաքելութեան հետեւանքի մասին: Ես չեմ ուզում, որ դու կարծես, թէ կամենում եմ՝ քեզանից բան իմանալ յանձնաժողովի մասին: Առանց այդ էլ ես ճշգրիտ տեղեկութիւններ եմ ստանում այդ պարոնների ընկերներից:

Փաշայի վերջին խօսքերը ճնշող ազդեցութիւն ունեցան Պետրի վերայ: Փաշան պարզ ասում էր, թէ յանձնաժողովի անդամների մէջ լրտեսներ կան, որոնք տեղեկութիւն են տալիս կառավարութեան յեղափոխականների բոլոր գործերի ու դիտաւորութիւնների մասին: Յանձնաժողովի աչքի ընկնող հայրենասէրներին ու ան-

դամներին Պետարը ճանաչում էր, և փաշայից վերադառնալուց յետոյ բոլորովին մի առ մի սկսեց յիշել և ամեն մի անձնաւորութեան մասին ինքն իրեն ասում էր. «սա չէ... չէ՛, դա անկարելի է»:

Այնու ամենայնիւ Պետարը չկարողացաւ ազատուել կասկածներից և տարակուսանքներից:

— Ի՞նչ նոր բան կայ...— հարցրեց նորան մայրը, երբ տուն վերադարձաւ:

— Բանը վատ է, մայրիկ, վատ է...— պատասխանեց Պետարը և պատմեց փաշայի բոլոր խօսակցութիւնը:

— Հրմ... հրմ...— մըթմըթաց պառաւր:

— Եթէ մեր մէջ մատնիչներ կան, այն ժամանակ դուցէ լաւ է ապաւինել Աստուծոյ կամքին, և գոնէ այս անգամ հրաժարուել գործունէութիւնից:

— Մի՛ ասիլ այդ, որդիս— պատասխանեց մայրը:

— Ի՞նչ կըլինի դորա հետեանքը:

— Գիտե՞ս, — հարցրեց պառաւր, — թէ ինչու է քեզ ուղարկում Բուքարեշտ:

— Նա ուզում է նախազգուշացնել նոցա:

— Չէ՛... Նա շատ լաւ գիտէ, որ իւր նախազգուշութիւնը ոչ մի ազդեցութիւն չի ունենալ. նոքա հօ ճանաչում են թուրքերին... Փաշան ոչ մի նոր բան չի ասել... Թուրքերը քիչ չեն մէջ տեղ ձգել բաշիբուզուկներին և չէրքէսներին:

— Ուրեմն ի՞նչ է կամենում:

— Որդիս, դու թուրքերին դեռ չես ճանաչում... Փաշան քեզ ուղարկում է, որ դու կըրկնես նորա վերջին խօսքերը: Նա չի ուզում նախազգուշացնել, այլ նոցա ականջը ձգել իւր վերջին խօսքերը, որպէս զի պառակտութիւն ցանէ նոցա մէջ... Եթէ նոքա լսէին փաշայի խօսքերը, ամեն մէկը միւսին կըկասկածէր. «սա է լրտեսը»... հասկան՞ում ես:

— Կարող է լինել...— պատասխանեց Պետարը:

— Թուրքերին դու դեռ չես ճանաչում... Ես շատ եմ ապրել նոցա մէջ և շատ բան եմ քաշել նոցանից... Նոքա սովորեցրին ինձ ժպտել այն ժամանակ, երբ սիրտս պատուվում էր վըշտից... Դու նոր միայն ասացիր. «լաւ է ապաւինել Աստուծոյ կամքին»... Չէ որ առաջ ինքդ էիր ասում, թէ մեր պապերը և հայրերը հինգ հարիւր տարի ապաւինեցին Աստուծոյ կամքին և մի բան էլ չտեսան... Իսկ այժմ, երբ Սերբիան... Սակայն ինձ պառաւիս ի՞նչ վայել է խառնուել այդպիսի գործերի մէջ... Ես արդէն կորցրի երկու որդիս, այժմ միայն դու ես մնացել... բայց չէի կամենալ, որ դու փաշայի որոգայթների մէջ ընկնես: Նա ուզում է յանձնաժողովը նախազգուշացնել, իսկ ես քեզ եմ զգուշացնում: Փաշան այդ նախազգուշութիւնը միայն նորա համար է հնարել, որ իբրև թէ անսպասելի կերպով է ասում քեզ այն, ինչ որ ինքը ամենակարևորն է համարում:



Պետորը մտածմունքի մէջ ընկաւ...

Այժմ արդէն բոլորովին կարիք չկար ծածկելու Բուքարեշտ գնալու դիտաւորութիւնը: Շուտով օրիորդներն էլ իմացան այդ:

— Գնում ես, — հարցրեց Իլենկան:

— Գնում եմ, — պատասխանեց Պետորը:

— Ե՞րբ:

— Մի ժամից:

— Ա՛խ, — բացականչեց օրիորդը, կամենալով հեռանալ. — ինչպէ՞ս ես հասնում:

— Եւ հրաժեշտ չե՞ս տալ ինձ:

— Կըտամ, երբ կը վերադառնամ, — պատասխանեց օրիորդը:

— Ի՞նչ է եղել, — հարցրեց Անկային եղբայրը:

Անկան ուսերը վեր քաշեց:

Պետորը սկսեց բաները կապել: Կապեց շորերը, մի քանի ձեռք սպիտակեղէն և մի քանի հարկաւոր իրեղէններ, իսկ երբ կամենում էր փակել գզրոցը, Իլենկան ներս վաղեց: Տեսնելով Պետորին, նա բացականչեց. — Փա՛ռք Աստուծոյ, — և տուեց նորան մի փոքրիկ կապոց: Պետորը առաջտապով այդ փաթաթած ծրարը, որ իսկոյն բացուեցաւ: Միջի բանը զարմացրեց Պետորին: Նա հարցական հայեացք ձգեց Իլենկայի վերայ, կարմրեց և աչքերը ցած ձգեց:

— Այս ի՞նչ է:

— Իա... դա... — շնչեց օրիորդը:

— Գինդ, չլթայ, մատանիներ, մարգարիտներ, — համարեց Պետորը, դիտելով այդ թանկագին ծրարը: Իլենկան բան չէր խօսում,

— Ի՞նչ անեմ:

— Յանձնել, պատասխանեց օրիորդը:

— Ո՞ւմ:

Այս հարցը չփոթեց նորան: Նա չէր վստահանում աչքերը վեր բարձրացնել, չէր համարձակվում մի խօսք ասել, վերջապէս հառաչեց և ասաց. «նորան»:

— Ո՞ւմ, — նորից հարցրեց Պետորը:

— Նոցա, — աւելի բարձր պատասխանեց օրիորդը:

— Նոցա՞, երևի յանձնաժողովին:

Իլենկան կշտամբանօք նայեց Պետորին, որ այդ միջոցին դիտում էր թանկագին իրեղէնները և ապա շարունակեց.

— Այս տեղ կայ ոսկի, արմաղ, մարգարիտադա բաւական կը հարստացնէ նոցա՝ դուժարը, ուր իւրաքանչիւրը ձգում է իւր լուժան և ուր ուղարկում են կողմնակի մարդիկ: Յանձնե՞մ այս բոլորը յանձնաժողովին որպէս մասնաւոր տուրք, թէ նոցանից մէկի անձնական տնօրինութեան յանձնեմ:

— Յանձնեցէք մէկի անձնական տնօրինութեան, — պատասխանեց Իլենկան:

— Իսկապէս ո՞ւմ յանձնեմ:

Առաջին հարցին Իլենկան հեշտութեամբ

պատասխանեց, իսկ երկրորդին՝ կակմարով:

— Ստօեանի՞ն տամ, — հարցրեց Պեօտրը, նայելով նորան:

— Չէ:

— Ստօեանին չտա՞մ, — նորից հարցրեց նա.

— ուրեմն հաւանական է, որ նիկօլային:

— Այո, պատասխանեց օրիորդը:

— Նիկօլային, — կրկնեց Պեօտրը: — Լաւ: Վկաների ներկայութեամբ ես կը յանձնեմ նորան:

Պեօտրը զարմացաւ, որ նիկօլային են յանձնում այս թանկագին իրերը տնօրինելու: Նա բոլորովին չէր կասկածում այդ մարդու ազնուութեան մասին, բայց հաւատացած էր, որ նա ոսկու, ալմազների և մարգարիտների մասին հասկացողութիւն չունի. նա ասաց այդ բանը իլենկային, իսկ սա միայն հառաչեց:

Անկան նոյնպէս հետեւեց իլենկայի օրինակին և շուտով վերադարձաւ մի ծրար ձեռին:

— Հ՛ը, — բացականչեց Պեօտրը. — դո՞ւ էլ:

— Տուր, այո՛:

— Ո՞ւմ:

— Ստօեանին:

— Այ, այդ լաւ է: Ես երկուսին միասին կը յանձնեմ ձեր ընծաները: Ստօեանը դեռ ևս այս բաներից հասկացողութիւն ունի: Գուցէ այժմ նորա հաշտուեն:

Գնալուց առաջ Պեօտրի արտասանած վերջին խօսքերը զարմացրին օրիորդներին: «Գուցէ այժմ հաշտուեն»... Ուրեմն Ստօեանն ու Նիկօլան խռով են:

— Միթէ նոքա բարկան՞ում են միմեանց վերայ, — հարցրեց Անկային իլենկան:

— Ես ոչինչ չգիտեմ և մինչև օրս էլ ոչինչ չեմ լսել դորա մասին:

— Իսկ դու տեսա՞ր նոցա, երբ միասին էին:

— Այո՛, տեսայ. նոքա ամբողջ օրը միասին անց կացրին, երեկոյեան զբօսնեցին պարալիում՝ և երկուսն էլ միասին թաք կացան:

— Եւ խռով չէին:

— Նոքա շատ հաշտ էին միմեանց հետ:

— Հապա ի՞նչ կարող է լինել նոցա խռովութեան առիթը:

Այսպիսի հարց կարող էր առաջարկել իրեն և Անկան:

Այս հարցը ծագեց Անկայի գլխում, չնայելով, որ նա ինքը ներկայ էր, երբ իլենկան ու Նիկօլան միմեանց պատահեցին և համոզուած էր, որ նոքա սիրում են միմեանց: Սակայն մտաբերելով մանրամասնութիւնները, ինչպէս նոքա

պատահեցին, նա սկսեց համոզուել, որ միայն  
 Իլենկան էր անկասկած սիրահարուած երևում.  
 Իսկ Նիկոլան աւելի շուտով դարմացած էր, քան  
 թէ սիրահարուած: Բացի դրանից՝ նա յիշեց,  
 որ արձանագրութեան մէջ ասած էր, թէ Ի-  
 լենկան սիրում է Ստօեանին: Երբ Անկան սկսեց  
 իւր տեսակէտից քննադատել այդ բոլորը, յղա-  
 ցաւ մի նոր ենթադրութիւն, որ ինքն իրեն ան-  
 գամ չէր իշխում խօսքով արտասանել: Այդ են-  
 թադրութիւնը հետեւեալ հարցի ձևն էր ստա-  
 նում. արդեօք Իլենկան մի և նոյն ժամանակ  
 երկուսին էլ չէ սիրում: Արդեօք նա նոցա առաջ  
 չէ՞ կոտորաւում: Անկան մերթ հեռացնում էր  
 գլխից այդ մտածմունքը, մերթ վերստին անձ-  
 նատուր լինում նորան, և բոլորովին չէր կարո-  
 ղանում բացատրել իրեն, թէ ինչու Իլենկան  
 այդքան երկար տատանւում էր, մինչև որ ասաց,  
 թէ ում համար են այդ ընծաները:

«Ինչո՞ւ ես մի անգամից ասացի.— Ստօեա-  
 նին»: Իլենկան մի փոքր ուրիշ կերպ էր մտա-  
 ծում: Նա ոչ մի բանում չէր կասկածում Անկա-  
 յին. բայց մտաբերելով հանգամանքները և բո-  
 լոր մանրամասնութիւնները, չէր կարողանում  
 մեկնել իրեն, թէ ինչու Անկան թոյլ չէր տա-  
 լիս, որ ինքն էլ ծառայութիւն մատուցանէր ե-  
 րիտասարդներին, երբ նոքա նստած էին գաղտ-  
 նի սենեակում: Ինչո՞ւ նա այդպէս վարուեց:

Սէրը կասկածոտ է, շատ կասկածոտ: Սիրոյ

պատճառով խռովում են եղբայրներ, քոյրեր,  
 մտերիմներ և ընկերուհիներ: Իլենկան ու Անկան  
 դեռ չէին խռովել, բայց նոցանից իւրաքանչիւրը  
 մտածում էր, թէ ինչ է պատճառը, որ Նիկոլան  
 ու Ստօեանը անհաշտ են իրար հետ. այդ հան-  
 գամանքը սառցրեց երկու ընկերուհիների յա-  
 րաբերութիւնները, և այդ արտայայտե-  
 ցաւ նորանով, որ Իլենկան Պեօտրի գնալուց յե-  
 տայ միայն երրորդ օրը եկաւ Անկայի մօտ:

— Պեօտրը չէ՞ վերադարձել:

— Չէ դեռ:

— Ե՞րբ կը վերադառնայ:

— Չգիտեմ:

Այս հարցերի մէջ երևում էր այն թեթեւ  
 սառնութիւնը, որ շող ամառից յետոյ ձմեռուայ  
 դաժանութիւնն է գուշակում: Անկան հարցրեց.  
 առո՞ղջ է հաջի Խրիստիցան:

— Երեկ մայրս տկար էր, պատասխանեց  
 Իլենկան:

— Իսկ այսօ՞ր:

— Այսօր, փառք Աստուծոյ, աւելի լաւ է:

— Ի՞նչ էր պատահել:

— Կողքն էր ցաւում:

— Ես լսել եմ, որ հաջի Խրիստոն շատ գոհ է:

— Ա՛խ, — հառաչեց Իլենկան: — Ուղերձը ար-  
 դէն ուղարկուած է Պօլիս: Ի՞նչ է ասում դորա-  
 մասին Պեօտրը:

— Բան չի ասում: Իսկ մայրս հաւատաց-

նում է, որ սուլթանին խնդրելը մի և նոյն բանն է, թէ պատի հետ խօսել:

— Կարող է լինել, որ այդ բոլորը առանց հետեանքի կանցնի:

— Գուցէ Հաւանական է, որ սուլթանը աւելի շուտով կընդունի Մուստաֆա-բէյի խնդրքը:

— Լեզուների՞ մասին, — հարցրեց Իլենկան: Այ ուրախ կըլինէի: Ասում են, թէ այն ժամանակ բոլոր կանանց ու աղջկերանց լեզուները կըկտրեն:

— Ոչ բոլորինը: Ասում են, թէ չեն կտրիլ նոցանը, որոնք հարեմ կըգնան:

— Մեզանից ո՞վ կըհամաձայնի այդ անել:

Մուստաֆա-բէյի նախագծի մասին այդ ժամանակ խօսում էին ո՛չ միայն քաղաքում, այլ և ամբողջ գաւառում: Այդ պատճառով էլ մեր օրիորդները շատ էին դատողութիւն անում այդ բնաբանի առթիւ. յետոյ նոր հարց յարուցին, որ ոչինչ կապ չունէր երկու փախըստականների հետ: Նոցա խօսակցութիւնը սաստիկ կենդանութիւն էր ստանում, որ պարզ կերպով ապացուցանում էր, թէ որքան անախօրժ կը լինի, եթէ Մուստաֆա-բէյի առաջարկութիւնը իրագործուի. բայց ուրիշ ոչինչ չէր կարելի եզրակացնել այդ խօսակցութիւնից: Ամբողջ մի ժամ օրիորդներից և ոչ մէկը չարտասանեց ո՛չ Ստեանի, ո՛չ էլ Նիկօլայի անուն:

ներ: Վերջին ժամանակներս այդ բանը բոլորովին տեղի չէր ունենում:

Իլենկան միայն չորրորդ օրը նորից եկաւ Մօկրայի տունը: Առաջ նա օրը երեք անգամ էր գնում-գալիս — իսկ այժմ ամբողջ շաբաթը միայն երկու անգամ: այն էլ նորա համար եկաւ, որ իմացել էր, թէ Պետրը վերագարձել է: Այդ օրը հաջի Խրիստօն տղային նաւահանգիստ էր ուղարկել մի ինչ որ բան բերելու: Տղան եկաւ և ասաց, թէ այն տեղ տեսաւ Պետրին: Իլենկան իսկոյն և եթ պատրաստուեց և շտապով գնաց Մօկրայի մօտ: Այնպէս պատահեց, որ երբ օրիորդը մօտենում էր դարպասին մի կողմից, Պետրն էլ՝ ճանապարհորդական պայուսակը մի ձեռին և միւս ձեռին ամպհովանին, մօտեցաւ միւս կողմից: Նորա միմեանց պատահեցին դարպասի մօտ, միասին բակը մտան և ապա սանդուղքներով վեր բարձրացան: Անցնելով յետոյ ընդունարանը, մտան մի սենեակ, ուր նոցա դիմաւորեց Անկան: Երբեմն Իլենկան կանգնում էր, բայց Պետրը ստիպում էր առաջ գնալ: Պատահելով Անկային, նոքա կանգ առան: Պետրը պայուսակն ու ամպհովանին դրեց պատի մօտ, գլխարկը հանեց և դառնալով օրիորդներին ասաց:

— Բերել եմ ձեզ բարեներ, շատ ու շատ բարեներ: Տեսայ Ստեանին, տեսայ և Նիկօլային: Մէկին տուի քո ընծան, միւսին — քոնը:

Նա ցոյց տուեց առաջ Իլենկայի վերայ, յետոյ Անկայի:

— Իմը Ստօեանի՞ն տուիր, — հարցրեց վերջինը:

— Ստօեանի՞ն. չէ՛, Նիկօլային:

Անկան ոչինչ չսասց. բայց զէմբից երևում էր, որ այս լուրը նորան այնքան էլ դուր չեկաւ, ինչպէս և Իլենկային: Պետարը նայեց նոցա և ասաց.

— Սակայն դա մի և նոյնն է: Ստօեանը բուրբ տուեց դրամարկղին, Նիկօլան էլ մի և նոյնն արաւ, այնպէս որ ձեր արմաղները, մարդարիտներն ու մասանինները այժմ ատրճանակներ, վառօդ և գնդակ են դարձել:

Երկու օրիորդներն էլ հառաչեցին: Ակներև էր, որ նոցա վրդովում էր այն երիտասարդների վիճակը, որոնց նուրիբել էին իրենց սրտերը: Պետարը գլխի չընկաւ, թէ բանը ինչու՞ն է, երբ Իլենկան պատուիրեց այդ թանկագին իրեղէնները Նիկօլային յանձնել, իսկ Անկան — Ստօեանին: Նորա ուշ ու միտքը այդ ժամանակ ուրիշ տեղ էր և դորա պատճառը Իլենկայի ներկայութիւնն էր: Պետարը կասկածու՞մ էր, որ օրիորդի սիրտը բռնուած է: Այնու ամենայնիւ այնպէս էր նայում նորան, որ դժուար չէր հասկանալ, թէ ինչու նորա ուշն ու միտքը տեղը չէր: Սակայն նա աշխատում էր զսպել իրեն. նա ոչ ումանտիկ էր, ոչ էլ լովէլաս: Իլենկան շատ

էր դուր դայիս նորան թէ՛ տեսքով և թէ՛ այն ներքին յատկութիւններով, որ մարդու բարոյական կողմն են կազմում: Կրկին նա մի տեսակ անորոշ դրութեան մէջ էր և միշտ պատրաստ էր կամ հեռանալ, կամ ձեռք մեկնել, նայած թէ նա ինչպէս կրվճոէ այն հանելուկ հարցը, որ կոչւում է աղջկայ սէր: Շատ հանելուկ հարցերից այդ հարցը ամենամութն է. օրիորդների սէրը կամ շատ խախուտ է լինում, կամ ապառաժի պէս կարծր ու անյողոյ սղո: Ինչպէ՞ս նա պիտի վճռէր այդ հարցը: Նա այնքանը միայն գիտէր, որ Իլենկան իւր հայրենասիրական յամառութեամբ, որ անշուշտ նա չէր կարող ժառանգած լինել կամ հօրից, կամ մօրից, չորս մարդ և իրեն մահից աղատեց: Այդ պատճառով նա շատ էր գնահատում այդ աղջկան. գնահատում էր, յարգում և մինչև անգամ սիրում, եթէ ուզում էր, բայց այն սիրով, ուր մեծ յարգանք կայ:

Օրիորդները իրենց ընծաների վիճակի մասին անզեկութիւն ստանալուց յետոյ լուռ էին: Նոցա զէմբիքը Պետարին կշտամբանք էին արտայայտում, որ նա ըստ պատկանելոյն չէր հասցրել ընծաները: Ոչ մէկը չէր փտտահանում յայտնել իւր գժգոհութիւնը, և երկուսն էլ լուռ էին:

— Դուք ինձ չէր հարցնում, — սկսեց Պետարը: — Ինչու չէր հարցնում, — սկսեց Պետարը:

ըր, — թէ ինչ է անում Ստօեանը, ինչ է անում Նիկօլան:

Երկուսն էլ հարցական հայեացք ձգեցին նորա վերայ:

— Մէկը արդէն գնացել է, իսկ միւսն էլ շուտով պիտի գնայ:

— Ե՞րբ, — հարցրին երկուսը միասին:

— Ստօեանը գնացել է Սերբիա... Այն տեղ բուլղարական բանակներ են կազմակերպում... Նոքա պիտի կռուեն:

— Իսկ Նիկօլա՞ն, — հարցրեց Անկան, որ ուզում էր ծածկել այդ լուրերից ստացած տպաւորութիւնը:

— Նիկօլան դեռ չէ գնացել:

— Ինչպէ՞ս այդ... — անկապ մրթմրթաց Անկան:

— Միթէ դու զօրք չե՞ս տեսել:


— Տաճկաց ասկէրների պէս:

— Հա... բայց բուլղարացոց զօրքը ուրիշ կերպ հագնուած կըլինի:

Պետրը սկսեց պատմել նշանազգեստների և սպառազինութիւնների մասին. նա պատմեց դրօշակի մասին, որ հիւսել էին բուլղարուհիք, և ուրիշ մանրամասնութիւնների մասին, որ կարող էին հետաքրքրել օրիորդներին: Իլենկան լսեց և վերջապէս հարցրեց.

— Նիկօլան և՞ս պիտի կռուի:

— Ի հարկէ, — պատասխանեց Պետրը:



— Ինչո՞ւ նա դեռ չէ գնացել Սերբիա, — հարցրեց Իլենկան:

— Իսկ դու եղա՞ր այն տեղ, — ընդհատեց Անկան:

— Եղայ և մինչև անգամ կըմնայի էլ, եթէ ուրիշ պարագմունք չունենայի: Գուցէ հերթը ինձ էլ հասնի:

— Ես հերթի չէի սպասիլ, — ասաց Անկան. — ես... ես... եթէ աղամարդ լինէի... Տէ՛ր Աստուած, ինչո՞ւ ոչ Իլիան, ոչ Դրագանը այնքան չապրեցին, որ այդ բոպէն տեսնէին: Ինչո՞ւ ես աղամարդ չեմ:

— Կարող ես և իբրև կին օգտակար լինել:

— Ի՞նչ բանի:

— Զոկի՛ր հին շորեր, պատրաստիր վերակապներ:

— Ինչպէ՞ս ապա այդ կըհասնի մերօնց:

— Կուղարկենք Կլադովա:

— Ի՞նչ տեղ է այդ Կլադովան:

— Սերբիայում, — պատասխանեց Պետրը:

— Ի՞նչ տեղ է, — հարցրեց Իլենկան, որ այդ միջոցին աւելի լսում էր, քան թէ խօսում:

— Դանուբի վերեւերում:

— Սիստովոյից է՞ն կողմը:

— Հա, հա, — պատասխանեց Պետրը. — որ Դանուբի մօտով գնալու լինենք, պէտք է անցնել Սիստովօ, Ռագովա, Լօմ-Պալանկա և Ռագուեվաց:

— Ուրեմն հեռու է:  
 — Երկու օր պէտք է շոգենաւով գնալ, բայց կարելի է երկաթուղիով աւելի շուտով տեղ հասնել Ռուսաստանի վրայոյ:

— Իսկ նորա՞ ինչպէս են գնացել:  
 — Երկաթուղիով:

— Նորա շապո՞ւմ էին:  
 — Չէ, բանը այդ չէ: Նորա վախենում էին որ Գանուբի մօտ տաճիկները կըձերբակալեն:

— Մի՞թէ տաճիկները կարող էին չթողնել նոցա, ի՞նչ են նոցա համար տաճիկները:

Պետրը բացատրեց քրոջ, թէ ինչո՞ւ է դա՝ նազանվում տաճկաց կաղմակերպուած, և բազմաթիւ զօրքը դեռ ևս նոր կաղմուող բանակներից: Նա բացատրեց նորան, թէ ինչու՞մն է կայանում զօրքի ոյժը և վերջացրեց այսպէս. «Նոցա կը սպանեն և կըվիրաւորեն»:

Այս խօսքերը զարմացրին և վրդովեցին օրիորդներին: Երեի, նորա այնպէս էին կարծում, թէ բուլղար զինուորներին բան չի լինիլ թէ՛ սրբից, թէ՛ գնդակից, և յանկարծ բանից դուրս է դալիս, որ այդպէս չէ: Այդ բանը վախեցրեց նոցա և մի և նոյն ժամանակ հետաքրքրեց: Նորա սկսեցին հարց ու փորձ անել Պետարին, այնպէս որ խօսակցութիւնը երկարեց և աւելի ևս կըտևէր, եթէ իմաց չտային, որ ընդունարանում հիւր է սպասում:

— Ո՞ւր է, — հարցրեց Պետարը:

— Արիստարխի-բէյը:  
 Պետարը յօնքերը կիսեց, բայց և այնպէս գնաց և սիրով ընդունեց իւր թշնամուն:

Երբ սուրճ ու ծխածորճ բերին, բէյը հեղնօրէն հարցրեց.

— Ի՞նչ լուր կայ... Ե՞րբ կըլինի բուլղարացւոց հանրասետութիւնը:

— Գորա մասին ես բողբոլին տեղեկութիւն չունիմ, — պատասխանեց Պետարը:

— Դուք հօ տեսաք այն պարոններին, որոնք նմանում են լեհական «ժօնդին» և մի և նոյն ժամանակ յոյս են դնում Ռուսաստանի օգնութեան վերայ:

— Այո՛, ես նոցա բոլորին տեսայ:

— Ինչպէ՞ս են նոցա գործերը:

— Ո՞ր կողմից:

— Ես ուզում էի հարցնել ստացել են նորա տասն և եօթը ֆունտը, որ տարել է նոցա համար...

Պետարը ոչինչ չպատասխանեց:

— Որ տարել է նոցա համար... — կրկնեց բէյը, կարծես թէ կամենալով մտաբերել ազգանունը:

— Մի ինչ որ այդպիսի բան լսել եմ, բայց էդ բաները ինձ չեն հետաքրքրում... Փաշան յանձնարարեց ինձ, որ զգուշացնեմ նոցա, ևս էլ զգուշացրի — և ահա այժմ վերադարձել եմ:

Հը՛մ...--մրթմրթաց բէյը սրելով բէխե-  
րըն ու միրուքը:—Նոքա լէգիոններ են կազմա-  
կերպում... ունի՞ն նոքա գոնէ հարիւր կամաւոր  
զինուոր:

—Հազարների մասին են երազում:

—Քաղցր երազներ են: Աւելի ևս դառն կը  
լինի իրականութիւնը... Մինչև անգամ նոքա  
խմբեր են պատրաստում:

—Ի՞նչ խմբեր:

—Տօտիի, հաջի Դիմիտրիի, Կարալիի պէս:

—Քայց ես դորա մասին բան չեմ լսել...  
Գուցէ:

Ակներև էր, որ Արիստարխի-բէյը եկել էր  
Պետարից բան-ման իմանալու: Այդ պատճառով  
էլ նա լէգիոնների հարցը բարձրացրեց և ակ-  
նարկեց տասն և եօթ ֆունտի մասին... Սակայն  
Պետարը շատ զգոյշ էր և բերնից ոչ մի խօսք  
դուրս չէր թողնում: Նա միայն այն լուրը հա-  
ղորդեց, որի համար, հաւանական է, եկել էր  
Արիստարխի-բէյը: Այդ լուրը սխալ էր հուշեան  
կողմից և ճիշտ արտաքին կողմից:

—Խռովում են,—յայտնեց Պետարը:

Այս ասելով նա աչքի առաջ ունէր այն ա-  
նընդհատ վէճերն ու բանակցութիւններն, որոնք  
անխուսափելի են կենտրոնական վարչութեան  
մէջ, որ շտապով կազմակերպուած էր այնպիսի  
մարդկանցից, որոնք տեղեկութիւններ էին հա-  
ւաքում դանազան աղբիւրներից և ստիպուած

էին ղեկավարել այն բոլոր գաղտնի գործերը,  
որոնք կատարվում են հակառակ և առանց տաճ-  
կական կառավարութեան կամքի:

—Կասկածո՞ւմ են միմեանց,— հարցրեց բէյը:

—Կարծեմ... հաւանական է:

—Ի՞նչ բանում են կասկածում միմեանց:

—Ես այնքան էլ հարց ու փորձ չարի:

Դորանով էլ վերջացաւ Պետարի համարա-  
տուութիւնը: Իսկական հաշիւը նա մօրը յայտ-  
նեց: Մօրից ոչինչ գաղտնի չէր պահում: Յայտ-  
նեց նորան և Ստօեանի ու Նիկօլայի խռովու-  
թիւնը, և մայրը ամենից առաջ հարցրեց.

—Ինչո՞ւ համար են վիճել:

—Դա նոցա գաղտնիքն է... Չգիտեմ և մին-  
չև անգամ հասկանալ չեմ կարողանում... Երբ  
ես ընծաները յանձնում էի նոցա, նկատեցի, որ  
Նիկօլան այնպէս նայեց Ստօեանին, կարծես թէ  
կամենում էր յարձակուել վերան:

—Նոքա դեռ կը ծեծուեն էլ:

—Չէ, նոքա արդէն հեռացել են: Ստօեանը  
գնացել է Սերբիա, իսկ Նիկօլան կը գնայ Բալ-  
կան:

—Նոքա որպէս չէ՞թա կը գնան:

—Չէ, նկատել են, որ Ռուսականից եկող  
չէթաներին ամբոխը չէ միանում, այլ սպասում  
է, թէ որ կողմը կը յաղթի, և բանը նորանով  
կը վերջանայ, որ չէթաներին կը շարդեն, իսկ ժո-  
ղովուրդը տեղից չի շարժուիլ: Սերբիական



յանձնաժողովում վճռել են առանց չէթաների ժողովուրդը սուքի կանգնեցնել:

— Համա՞յն Բուլղարիայում:

— Անտարակոյս դա շատ լաւ կըլինէր, բայց անկարելի է: Լրաբերները ման են եկել, և նոցա հաւաքած տեղեկութիւնները հիման վերայ յանձնաժողովը եղբակացել է, որ եթէ մի տեղ յաջողուի սուքի կանգնեցնել ամբողջ, այն ժամանակ ամբողջ Բուլղարիան կ'ապստամբի: Մի տեղ պէտք է կրակ տալ, և երբ կրակը կըբորբորուի, այն ժամանակ հրդեհը ամենուրեք կը տարածուի: Գորանով էլ բանը վճռել են:

— Իսկ եթէ չյաջողուի:

— Այն ժամանակ կըլինի այն, ինչ որ վաշան յանձնեց ինձ ասելու նոցա:

— Այդպիսի դէպքերում տաճիկները կատակ չեն անում:

— Ի՞նչ արած... Մի բան պէտք է անել, թէ չէ՝ ոչինչ չի լինիլ: Փորձեցին յոյները, փորձեց Մօնտենէզրան (Սև սարը), փորձեց Սերբիան, այժմ էլ հերցոգովինցիներն են փորձում. մի՞թէ միայն մենք պիտի սպասենք: Ինչո՞վ մենք վատ ենք յոյներից, սերբիացիներից, սելեւոնեցիներից և հերցոգովինցիներից: Կըյաջողուի—լաւ, իսկ եթէ չի յաջողուիլ, այն ժամանակ Բուլղարիան այնպիսի տառապանքներ կըկրէ, որից բոլոր աշխարհը կըստարսափի: Եւ եթէ մեզ ոչ ոք չպաշտպանէ, այն ժամանակ այդ տառապանքներին

կ'ենթարկուին ապագայ սերունդները և նորա կըշարժուեն: Ան հրաժեշտ է մի սարսափելի հարուստ, որ ժողովուրդը զարթնի հինգ դարու քնից:

— Գու ճիշտ ես ասում, որդիս, ճիշտ,—պատասխանեց մայրը:—Քնելով բան չենք չինիլ, պէտք է արթնանալ... Այո՛, կեանքումս շատ բան փոխուեց: Հաջի Խրիստօն դոհ չէ այդ փոփոխութիւններից, բայց հաւանաբար դորա պատճառը այն կըլինի, որ նա որդի չի ունեցել, որոնք իրենց կեանքը զոհած լինէին: Քո եղբայրներդ մեռան, և ես օրհնում եմ նոցա: Պէտք է զարթնել... Ի՞նչ տեղ կըսկտի ապստամբութիւնը:

— Բալկանների էն միւս կողմում:

— Ինչո՞ւ Ռուչչուկում չէ. ինչո՞ւ մեր կողմից չէ:

— Ռուչչուկում տաճիկ զօրքը շատ է: Այստեղ շատ տաճիկ կայ, իսկ մենք սակաւաթիւ ենք: Այստեղ տեղը բաց է, և ամենուրեք տաճիկների և չերքէսների շէներ են: Այստեղ ժողովուրդը աւելի քնկոտ է, քան թէ այնտեղ. այստեղ սկսելու անընդունակ են, իսկ այնտեղ լեռներում, կարելի է յոյս դնել և հայդուկների վերայ: Լրաբերները ամենալաւ տեղեկութիւններն են բերել Բալկանների էն կողմից, իսկ Ստօեանը, Նիկօլան և ուրիշները, որոնք զնայել են Դանուբի մօտով, շատ բան էլ չեն կարողա-

ցել անել: Ահաւասիկ, մայրիկ, թէ ինչ գրու-  
թեան մէջ են մեր գործերը:

— Իսկ լրտեսների մասին ի՞նչ է լսվում,—  
հարցրեց պառաւը:

— Ոչինչ, նոցա թիւը այն տեղ շատ մեծ է,  
բայց իսկոյն ճանաչում են: Լրտեսները լսում  
են այն, ինչ որ ամենքը գիտեն: Նորա յայտ-  
նել են այժմ բանակների մասին, ուր ցանկա-  
ցողները ազատ գնում են երկաթուղիով:

Մօկրան «բանակ» խօսքը չհասկացաւ: Պե-  
տորը բացատրեց նորան:

— Ինչո՞ւ համար են մի և նոյն ժամանակ  
պատրաստում ապստամբութիւն և բանակներ:

— Բանակները ծածկում են ապստամբու-  
թիւնը:

— Ուրեմն մենք պէտք է սպասե՞նք մեր  
հերթին:

— Այո՛:

— Բայց չէ՞ որ այդպիսի ժամանակ ձեռքերը  
ժալած չէ կարելի նստել:

— Եթէ ես կարողանայի նոցա խնդրածի կէսը  
կատարել, այն ժամանակ հանգստութիւն չէի  
ունենալ:

— Ի՞նչ են խնդրում:

— Խնդրում են, որ ես յայտնեմ այն բոլոր  
կարգադրութիւնները, որ Պօլսից գալիս են այս  
տեղի ոստիկանատունը և այն բոլորը, ինչ որ

այս տեղի ոստիկանատունը յայտնում է Պօլիս և  
ինչ որ ինքը ձեռնարկում է:

— Ես կըստանամ այդ բոլոր տեղեկութիւն-  
ները:

— Արիստարխի-բէյի՞ց:

— Չէ, նա շատ փող կըխնդրէ, մինչ դեռ  
այն տեղ կան այնպիսիները, որոնց կարելի է  
աննշան գումարով գնել. բացի դորանից՝ խա-  
նութում մաստիկա կայ, որի շնորհիւ շատ բան  
կարելի է իմանալ: Թող որ ես անեմ այդ բանը.  
Ես կ'իմանամ բոլորը, ինչ որ տեղի կ'ունենայ:  
Բայց աւելի ի՞նչ բանի մասին պէտք է հար-  
ցնել:

— Լրտեսների մասին:

— Լաւ: Նոցա մասին ես քեթիբիներէից ու  
չիրուխչիներից կ'իմանամ. այդ իմ բանս է: Ելի՞  
ինչ:

— Ես պիտի տեսնեմ կրիվենացի մելխանէջի  
Պէտոյին, որ բարև անեմ որդուց և խօսեմ յանձ-  
նաժողովի յանձնարարութեամբ: Բանն այն է,  
որ կարելի լինի Բալկաններից մարդկանց անվը-  
տանդ Ռումանիա տեղափոխել: Պէտոյի մելխա-  
նէն այնպիսի տեղ է գտնվում, ուր շատ հեշտ  
կերպով կարելի է անցնել Դանուբը. ինքը Պէ-  
տոն ապացուցեց վերջին գործի ժամանակ, որ շատ  
լաւ կարողանում է տաճիկների հետ եօլա գնալ:

— Պէ՛տօ.— պառաւը մտածմունքի մէջ ըն-  
կաւ: — Ամենից լաւն է նորա հետ այս տեղ խօ-

սել, բայց նա անդից շուտով շարժուողը չէ: Ճար  
չկայ, ես ինքս կըզնամ նորա մօտ: — Ստօեանը ինձ ասաց, թէ կարելի է յոյս  
դնել իւր բրոջ վերայ, թէ նա կարող է շատ  
բան անել և հօրն էլ կըդբդի:

— Տեսնե՛նք. ազջիկ է, — յոյս դնել չի կարելի:

— Իսկ Իլենկան, — Իսկոյն վրայ բերեց Պե-  
օտրը:

— Իլենկան... ա՛... դա ուրիշ բան է:  
Այդպիսի Իլենկաններ շատ չես գտնիլ: Այ, երբ  
ամեն բան կըհանդարտուի, — պառաւը անքերը  
վեր բարձրացրեց, — այն ժամանակ կըլինդրեմ  
Աստուծուն, որ ձեզ պսակեմ:

— Ա՛խ, մայրիկ, — բացականչեց Պեօտրը, —  
կարծեմ, նորա սիրաը արդէն ազատ չէ, և ես  
չեմ տիրել նորան:

— Ազվկայ սիրաը գիւրափոփոխ է, որդիս.  
այսօր նա լաւին կըհաւանի, վաղը աւելի լաւին:  
Մինչև որ աղջկան կնիկ չտանն, նա ազատ կա-  
րող է ընտրել: Եթէ նա ընտրելու լինի Ստօեա-  
նին կամ քեզ...:

Ես թոյլ չէի տալ այդ:

— Ի՞նչու: — Որ ես Ստօեանի հակառակօրբը լինեմ...  
Դա ցածու թիւն կըլինէր իմ կողմից, մանա-  
ւանդ որ Ստօեանն այստեղ չէ: Ինչպէս՝  
նա այս տեղ չէ, նա կեանքը վտանգի է են-  
թարկում, Բուլղարիայի համար կռւում է, իսկ

եւս պիտի խլե՞մ նորանից այն սիրաը, որ նո-  
րան է պատկանում:

— Նա առանց քեզ յաղթեց նորա սրտին, դու  
էլ առանց նորան կը յաղթես. սակայն դա ո՛չ  
քեզանից է կախուած և ոչ էլ նորանից: Հաջի Խրիս-  
տօն Իլենկային չի տալ Ստօեանին, թէ և նա ոտից  
մինչև գլու լսողի շինէր նորան և Իլենկան էլ գժուէր  
նորա համար. այդ պատճառով, եթէ դու չկամե-  
նաս յաղթել նորա սրտին, բանը կարող է այնպէս  
վերջանալ, որ ոչ դու կըտիրես այդ սրտին, ոչ  
էլ նա. Աստուած գիտէ, թէ ում կըտան, և այն  
ժամանակ ոչ Ստօեանը դո՛հ կըլինի, ոչ էլ դու:

Պեօտրը ոչինչ չկարողացաւ պատասխանել,  
բայց մօր դատողութիւնը չհամոզեց նորան: Նա  
բոլորովին չփոխեց իւր յարաբերութիւնը գէպի  
Իլենկան. նորա հետ մտերմաբար էր վարվում,  
և միայն այդքան: Երբ Իլենկան ուշադրութիւն  
չէր դարձնում նորա վերայ, նա նայում էր նո-  
րան, և այդ ժամանակ Պեօտրի աչքերը աւելի քան  
մտերմութիւն էին արտայայտում: Բայց նա երբէք  
թոյլ չէր տալիս, որ մի խօսքով, մի շարժումով  
մտերմութիւնից աւելի բան արտայայտէր: Նա  
երբէք իւր սէրը ցոյց չէր տուել ոչ նորան, ո՛չ էլ  
ուրիշին, միայն մայրն էր բացառութիւն կազ-  
մում: Սակայն Սօկրան, որ զբաղուած էր առե-  
տրական և քաղաքական գործերով, ժամանակ  
չունէր որդու համար աշխատելու: Պէտք է նկա-  
տած, որ Իլենկան այժմ շատ սակաւ էր գալիս

նոցա տունը, և աւելի յաճախ լինում էր այն ժամանակ, երբ ոչ Մօկրան էր տանը լինում, ոչ էլ Պետրը:

Առիթ բերելով առևտրական գործերը՝ Մօկրան Սիստոլօ դնաց, իսկ վերադառնալիս իջաւ Կրիվենայի մեխանէում:

Թէ մեխանէում և թէ նորա շուրջը ոչ մի բան չէր փոխուել: Ինչպէս միլեաղիմի եկած ժամանակը՝ այդ տաճկական գործօն սպայի, որ զրկուեցաւ կեանքից այն ժամանակ, երբ կապտարում էր իւր պաշտօնական պարտականութիւնը, նոյնպէս և այժմ՝ օջախում ածուխ էր վառվում, բուխարու վերայ մի անօթ էր դրած և սրճարանում Պէտօն նիրհում էր: Նա չզարմացաւ, երբ Մօկրան ներս մտաւ, թէ և դա սովորութեան հակառակ էր, որովհետեւ կանայք սրճարան չեն մտնում: Իսկ որովհետեւ բացի իրենից այն տեղ ոչ ոք չկար, ուստի Պէտօն սիրով բարեւեց ներս մտնողին:

— Վաղուց է, որ մենք չենք տեսնուել, — սկսեց Մօկրան:

— Չգիտեմ մինչև անդամ, արդեօք երբ և իցէ տեսնուել ենք միմեանց հետ, — պատասխանեց Պէտօն առանց նայելու:

— Իէ, ապա նայիր ինձ:

Պէտօն նայեց և ասաց. — Այո՛, վաղուց է մենք չենք տեսնուել:

— Որդիդ բարեւում է քեզ:

Մեխանէլի աչքերը կրակ կտրեցին: — Ստօեա՞նը, — հարցրեց նա:

— Գնացել է Սերբիա, բանակումն է և պիտի կռուի:

— Է՛, այդ բոլորը լաւ է, միայն որ կենդանի մնայ: Նա իւր կեանքին զրուշ գին չէ տալիս: Բայց ինչ արած, այդպէս էլ պէտք է, եթէ միայն այդպիսի էսնաֆ է ընտրել:

— Յանձնարարութիւն ունիմ անելու քեզ:

— Ի՞նչ, — հարցրեց մեխանէլին:

— Կօմիտալիները (Պէտօն յօնքերը կիտեց, լսելով այս խօսքերը) այս ճանապարհով պիտի անցնեն Բալկանների միւս կողմը. պիտի օգնես նոցա:

— Հ՞ըմ... միթէ դա անհրաժեշտ է...

— Այո՛, անհրաժեշտ է, — պատասխանեց Մօկրան:

— Բայց չէ՞ կարելի, որ նոքա ուրիշ ճանապարհ ընտրեն:

— Ոմանք ուրիշ ճանապարհով պիտի դնան, իսկ անհրաժեշտ է, որ մի քանիսն էլ այս տեղից անցնեն:

— Քանի՞ հոգի կըլինի:

— Սկզբում մէկը, որ այսօր կամ վաղը կ'անցնէ և թաք կըկենայ եղէգնիների մէջ: Նորան պէտք է սպասել այսօր, վաղը, գուցէ և միւս օր գիշերը:

— Ի՞նչ է, արագիլի պէս ես պիտի կանգ-  
նեմ եղէգների մէջ:

— Ստօեանը ասաց, թէ... քո աղջիկը...

— Ա՛, — գլխի ընկաւ Պէտօն և կանչեց. —  
Մարիյկա: — Ներս մտաւ մեզ արդէն ծանօթ  
աղջիկը և կանգնեց Մօկրայի մօտ, որ նստած  
էր:

— Լսի՛ր, ինչ որ քեզ կ'ասէ Մօկրան, — ասաց  
Պէտօն: — Պէտք է սպասել օրին կօմիտալիներից  
մէկին: — Օրիորդը նայեց հօր վերայ և վերջին  
խօսքերը լսելուց շատ կենդանացաւ: Մօկրան  
պատմեց նորան գործի էութիւնը. պէտք է  
սպասել. երբ գայ յանձնաժողովի գործակատա-  
րը, որոշ պայմանախօսքով պէտք է իմանալ նո-  
րա գալը, պայմանական խօսքերով բանակցու-  
թիւն ունենալ և վերջապէս դուրս բերել նորան  
եղէգների միջից: Այդ բոլորը պէտք է անել  
զգոյշ կերպով, ի նկատի ունենալով, որ սահ-  
մանի վերայ սաստիկ հսկում են: Պայմանական  
խօսակցութիւնը պիտի լինէր գորտի կռնչիւնի  
և բուռի ձայնի պէս: Երբ Մօկրան վերջացրեց  
իւր պատմութիւնը, Պէտօն մազերը վեր բարձ-  
րացրեց և դառնալով Մարիյկային, հրամայելով  
ասաց.

— Նայի՛ր հա, լաւ սովորիր գորտի պէս  
կռնչել և բուռի ձայն հանել: Հասկանո՞ւմ ես:

Օրիորդը դրական պատասխան տուեց:

— Իսկ այժմ, — ասաց Պէտօն, դիմելով Մօկ-

րային. — գնա՛ քն կողմը, նիստ այն տեղ, մի  
բան կեր ու խմիր, և պատմիր մերօնց, ինչ որ  
գիտես Ստօեանի մասին:

Նստելով բուխարու առաջ՝ Մօկրան պատ-  
մեց Ստօեանի տատին, մօրը և քրոջը բոլորը,  
ինչ որ գիտէր նորա մասին, իսկ յետոյ սկսեց  
խօսել պառաւելի հետ, որ չէր կարողանում հաս-  
կանալ թէ ինչու Ստօեանը թողնց առևտուրը,  
և փոխանակ փարաներ վաստակելու, պսակուե-  
լու և հանգիստ ապրելու, խառնվում է բուլ-  
ղարական գործերի մէջ և դէս ու դէն է թա-  
փառում: Ամենից աւելի բարկացնում էր պա-  
ռաւին միլեաղիմի հետ պատահածը:

— Ինչո՞ւ համար նա խեղդեց միլեաղիմին:  
Ի՞նչ էր պատճառը: Միլեաղիմը գրկում էր կնո-  
ջը: — Պառաւը ուսերը վեր քաշեց: — Ինչո՞ւ հա-  
մար են հարսները: Այդպէս էլ միշտ եղել է, և  
յանկարծ Ստօեանը կամեցել է ամեն բան փոխել:  
Լսո՞ւած բան է դա: — Պառաւը հառաչեց:

XXXII.

Իլենկան այժմ հազիւ էր լինում Մօկրայի  
տանը և միշտ էլ տանը չէր պատահում Պետ-  
րին և մօրը: Մի անգամ նա եկաւ այնպիսի  
ժամանակ, երբ պիտի պատահէր Պետրին, իսկ  
սա դուրս չեկաւ: Անկայի հետ խօսելիս իլեն-

կան անդադար նայում էր դռնին, վերջապէս հարցրեց.

— Պետորը տա՞նն է:

— Տանն է, — պատասխանեց Անկան:

— Ո՞ւր է նա:

— Իւր սենեակում: Սովորաբար այս ժամանակ նա իւր սենեակումն է լինում:

— Ի՞նչ է անում:

— Կարգում է, գրում: Նա այնքան գիրք ունի, ամբողջ պատը գրքերով է ծածկած:

Իլենկան աւելի բան չհարցրեց, մի փոքր էլ նստեց, վեր կացաւ և գնաց, բայց ոչ ծածկոցը ձգեց վերան, ոչ էլ եաշմազը հագաւ, — հետևաբար և փողոց չգնաց: Նա շատ լաւ ծանօթ էր տան հետ, այդ պատճառով էլ այդ սենեակից միւս սենեակ անցնելը չզարմացրեց Անկային: Իլենկան անցաւ կողքի սենեակը, անցաւ հետևեալը, յետոյ մտաւ նախասենեակը և բաց արաւ Պետորի սենեակի դուռը:

Այդ սենեակը նման չէր միւս սենեակներին: Դա մի համեստ և իսկապէս եւրոպական անկիւն էր ամբողջ տան փօնում: Այս սենեակի կահ-կարասիքն էր՝ մի բազմոց, բազկաթոռներ, աթոռներ, մի կլոր սեղան, ուր լրագիրներ կային, ամսագիրներ և ալբոմներ, գրքերով լի պահարան, մի գրասեղան, որ այնպէս էր տեղաւորուած, որ առջևը նստողի վերայ լոյսը ձախ կողմից էր ընկնում: Պատից կախած էին պատկերներ,

քարտէզներ, իսկ բազմոցի կողմից — մի հայելի: Պետորը նստած էր գրասեղանի առաջ: Լսելով, որ սենեակի դուռը բացուեց, նա յետ նայեց, վեր կացաւ, դիմաւորեց Իլենկային կլոր սեղանի մօտ: Օրիորդը նայեց սենեակը և նորա դէմքին մեծ զարմանք արտայայտուեց. — նա մի անսովոր սենեակում էր գտնվում, որ սաստիկ ապշեցրեց նորան: Իլենկան լուռ էր. նա հիանալի էր այդ դուռթեան մէջ, որին վերջ պիտի դնէր առաջին արտասանած խօսքը: Սակայն Պետորը թոյլ չտուեց իրեն երկար զմայլիլ այդ հիանալի օրիորդով և սկսեց խօսեց:

— Բարև, Իլենկա, ուրախ եմ, որ եկար:

Օրիորդը սարսեց և փոքր ինչ վախեցաւ:

— Երևի, դու բան ես ուզում ասել ինձ, — շարունակեց Պետորը:

— Ես ուզում եմ խօսել քեզ հետ, — հազիւ լսելի ձայնով շշնջեց Իլենկան, աչքերը ցած ձգեցով:

— Նախ և առաջ նիստ... նստենք, — հրաւիրեց Պետորը, մօտենալով բազմոցին:

Իլենկան չէր իմանում, թէ ինչ անէր. ընդունե՞լ թէ չընդունել երիտասարդի հրաւերը, որ ձեռով ցոյց էր տալիս մի տարօրինակ բազմոցի վերայ:

— Խնդրեմ, նիստ, — սիրալիբ կերպով հրաւիրեց Պետորը:

Օրիորդը յետ դարձաւ, մի քանի բայլ արաւ,

յանկարծ սաստիկ կարմրեց, մօտեցաւ բազմօցին և նստաւ մի ծայրին: Իսկ կարմրեց նորահամար, որ տեսաւ հայելիի մէջ դրքերի, պատկերների ու աշխարհագրական քարտէզների հետ և իրեն: Իլենկան սովոր էր ծալապատիկ նստել, իսկ այժմ նստած էր ճիշտ ծայրին և շատ անյարմար կերպով. նա չէր իշխում աւելի խորը նստել անձանթ նստարանի վերայ:

— Ինչի՞ մասին ես կամենում խօսել ինձ հետ, — հարցրեց Պետրը:

— Կարմիր խաչի... — պատասխանեց օրիորդը:

— Կարմիր խաչի՞:

— Այո՛, — պատասխանեց իլենկան կախելով իւր հիանալի արտեանունքը:

— Գուցէ դու կամենում ես հարցնել կարմիր խաչի ընկերութեան մասին:

— Չգիտեմ:

— Ուրեմն իսկապէս դու ի՞նչ ես ուզում իմանալ:

Գրաւուած Պետրի սիրալիբ վարմունքից՝ իլենկան պատասխանեց.

— Ուզում եմ իմանալ այն կարմիր խաչի մասին, ուր կանայք խնամք են տանում վիրաւորեալներին համար: Ես մի քանի բան լսել եմ, բայց չեմ իմանում, թէ ինչ բան է:

— Ուրեմն դու կամենում ես, որ ես քեզ պատմեմ:

— Այո՛, պատմիր:

— Ուրախութեամբ:

Պետրը մօտեցաւ գրասեղանին, որոնեց մի տետրակ, նկարներ և իսկոյն յետ եկաւ: Երբ Պետրը որոնում էր տետրակը, իլենկան յարմար կերպով նստաւ: Առաջ նա ձեռքով փորձեց և, տեսնելով, որ ամուր է, աւելի յետ քաշուեց: Պետրը տետրակին նայելով պատմեց շարժական հիւանդանոցների մասին, ցոյց տուեց այս մարդասիրական հիմնարկութեան կառքերի, պատգարակների և ուրիշ պարագաների նկարները. հիմնարկութեան, որ յարմարեցրած է պատերազմի և մի և նոյն ժամանակ ակներև նատերազմի և մի և նոյն ժամանակ ակներև նախադիմադրութեան: Իլենկան լսում էր, նայում և երևում էր, որ այս բոլորը հետաքրքրում էր նորան: Բայց վիրաւորեալների տեղափոխութեան, պատերազմի դաշտում նոցա հաւաքելու մասին պատմածից նա չկարողացաւ հասկանալ, թէ կնոջ դերը ինչ է կարմիր խաչի ընկերութեան մէջ և հարցրեց.

— Իսկ կանայք ինչու են:

— Քեզ հետաքրքրում է, թէ ինչ են անում կանայք շարժական հիւանդանոցներում:

— Այո, — պատասխանեց իլենկան:

— Նոքա օգնում են: Վիրաւորուածները երկար ժամանակ հիւանդ են լինում, իսկ գթութեան քոյրերը հոգս են քաշում նոցա մասին:

— Այդ ի՞նչ բան է գթութեան քոյրը:

—Մի տեսակ կոյսեր են:

—Կոյսեր, — զարմացաւ օրիորդը:

—Այո, մի տեսակ կոյսեր են, բայց նորա խօսք չեն տալիս ամբողջ կեանքը կոյս մնալու, այլ միայն պատերազմի ժամանակ խնամուժ են հիւանդներին:

—Իսկ յետո՞յ:

—Յետոյ վերստին դառնում են իրենց գործին: Գլխովեան քոյրերը մինչև անգամ չեն ձեռնադրվում և չեն էլ հարցնում, թէ ինչ դաւանութիւն ունին. լինում են ուղղափառներ, կաթօլիկներ, բողոքականներ, հրէաներ և մինչև անգամ մահմեդականներ:

—Ո՞ր մահմեդական կինը կը համաձայնի զնալ, — նկատեց Իլենկան:

—Դա արդէն ուրիշ հարց է: Բանը նրանում է, որ կարմիր խաչի ընկերութեան կանոնադրութեան դա հակառակ չէ:

— Ի՞նչ լաւ բան է: Ուրեմն ես էլ, օրինակի համար...

— Ի՞նչ, — հարցրեց Պետրը, երբ Իլենկան ընդհատեց իւր խօսքը:

— Կարո՞ղ էի մտնել կարմիր խաչի ընկերութիւնը:

— Ինչու չէ:

— Ուրեմն աչ... — նա խոր հստաչեց. — աչխատիր, որ ինձ ընդունեն:

Պետրը հարցական հայեացք ձգեց նորա վերայ:

— Աչխատիր, — կրկնեց Իլենկան, իսկ յետոյ հարցրեց. — մերոնք Կլադովա՞ են:

— Կլադովա են, — պատասխանեց Պետրը շփոթուած կերպով:

— Ուղարկիր ինձ Կլադովա:

— Դա հեշտ բան չէ:

— Դու հօ ուղարկեցիր Ստոեանին և...

Կարծես թէ նա մոռացել էր միւսի անունը. իսկ յետոյ Պետրը վրայ բերեց. — Նիկօլային:

— Այո՛, նոցա ուղարկեցիր: Ինձ էլ ուղարկիր, իսկ Ռումանիայում ես ինքս կ'առնեմ երկաթուղու տոմսակ և կըզնամ Կլադովա: Ես ուղում եմ մի բանով օգտակար լինել:

— Դու արդէն եօթը մարդ ես ազատել, դու տուիր քո զարդարանքը, հետևաբար ուրիշներին շատ ես արել:

— Դիցուր... բայց ես կըկամենայի օգտակար լինել Կլադովայում:

— Դա դժուար է գլուխ բերել, շատ դժուար է:

— Դու միայն աչխատիր:

— Ձէ, դա շատ դժուար է: Եթէ դու ուղում ես օգուտ բերել, նոյնը կարող ես այս տեղ անել:

— Ես, տեսնում ես, — սկսեց օրիորդը դող...



դոջուն ձայնով...—ես կ'ասեմ քեզ, թէ ինչու եմ ուզում գնալ կլադովա:

Պետարը կարծեց, թէ իլենկան կասէ, որ սիրում է Ստոեանին:

—Ես ուզում եմ գնալ կլադովա,—շարունակեց նա, նայելով իւր ձեռքերին,—որով... հետե... տանը ապրել... ինձ համար դժուար է... Ես սիրում եմ իմ հօրս ու մօրս, բայց... ես կ'ուզենայի հեռանալ նոցա աչքից, մինչև որ այս բաները կը վերջանան: Ինձ համար այժմ կարմիր խաչից լաւ ապաստան չկայ:

—Ոչ կլադովայում, ոչ էլ Սերբիայի մի ուրիշ տեղում կայ կարմիր խաչի ընկերութիւնը, —պատասխանեց Պետարը:

Իլենկան հարցական հայեացք ձգեց նորա վերայ:

—Չկայ, — կրկնեց նա:—Այդ հիմնարկութիւնը դոյութիւն ունի դաշնադրութեան հիման վերայ, այսինքն՝ պայման ու համաձայնութիւն կայացրած տէրութիւններում, իսկ Սերբիան համաձայնութիւն չէ տուել, և այն տեղ չկայ էլ:

—Մի՞թէ այդ ճիշտ է, —հարցրեց օրիորդը, որ լիովին համոզուած չէր:

—Ես քեզ չեմ խաբում:

—Ուրեմն ես ի՞նչ անեմ,—բացականչեց օրիորդը, նայելով Պետարին: Նոցա հայեացքները պատահեցան: Երբեմն հայեացքների պատահելը շատ մեծ նշանակութիւն է ունենում: Այս

դէպքում դորա նշանակութիւնը արտայայտուեց նորանով, որ իլենկան աչքերը ցած ձգեց և աւայց.—Ափս՛ս:

—Ափս՛ս,—կրկնեց իլենկան, վեր կացաւ և ուզեց գնալ:

Պետարը չէր ուզում թողնել նորան,—չէր կամենում որպէս խաւարի մէջ նստած մի մարդ, որ պատահամբ լուսոյ շառաւիղ է տեսնում և չի կամենում անջատուել:—Սպասի՛ր,—ասաց նա:

Օրիորդը կանգնեց:

—Տեսե՞՛ր ես այս,—հարցրեց նա, բանալով Ռենոսի առաջակողմեան տեսարանների ալբումը:

Բնութեան տեսարանները հետաքրքրեցին իլենկային: Սեղանի մօտ կանգնած՝ նա նայում էր: Պետարը աթոռ բերաւ նորա համար. նա նստաւ, շարունակեց նայել, հարց ու փորձ անել, իսկ Պետարը պատմեց նորան այն աւանդութիւնները, որ վերաբերում էին մի քանի տեղերին:

—Որքա՛ն հետաքրքրական է, որքա՛ն դեղեցիկ է:

—Այդպիսի գեղեցիկ տեսարաններ կան և մեր Բալկաններում, մեր գետերի ափերին, և մեր աւանդութիւնները պակաս գեղեցիկ չեն, բայց մենք մերը չենք կարողանում գնահատել:

—Ի՞նչ է պատճառը,—հարցրեց իլենկան:

—Ստրկութիւնը մեզ կուրացնում է և բռթացնում: Կըզայ ժամանակ, երբ կը վերջանայ այժմեան սկսածը, այն ժամանակ մենք էլ կը-

կարողանանք հպարտանալ ա՛յ այսպիսի բաներով,  
—նա ձեռով ցոյց տուեց այլօմբ:

—Նա արդէն սկսուել է...—կրկնեց Իլեն-  
կան հազիւ լսելի կերպով:

—Այո, սկսուել է...—պատասխանեց Պեօտ-  
րը հառաչելով:

—Ինչո՞ւ դու չես դնում պատերազմելու,  
—հարցրեց Իլենկան:

—Ես ուրախութեամբ կը գնայի, գիտես,  
որ կարելի է ծառայել հայրենիքին և ոչ զէն-  
քով: Ինձ վիճակուած չէ,—շարունակեց նա  
տխրագին,—զինուորական ծառայութիւն:

Օրիորդը բան չպատասխանեց: Առաջին ալ-  
բօմը նայելուց յետոյ նա ձեռը մեկնեց երկ-  
րորդին, ուր գտնվում էին հռչակաւոր նկարիչ-  
ների, մատենագիրների և հնարագէտների լու-  
սանկարները: Պեօտրը մի քանի խօսքով նկարա-  
գրից իւրաքանչիւր անձնաւորութեան բնաւորու-  
թիւնը, և այդ Իլենկայի աչքում բաց արաւ  
խաղաղ աշխատանքի զանազան կողմերը, որ մեծ  
նշանակութիւն ունին մարդկութեան համար:  
Իլենկան մեծ հետաքրքրութեամբ էր նայում եւ-  
րօպացի հռչակաւորների նկարներին, որոնք զա-  
սաւորուած էին կարգով, իւրաքանչիւր ազգու-  
թիւնը առանձին: Նայեց ֆրանսիացիներին, գեր-  
մանացիներին, անգլիացիներին, իտալացիներին  
և երբ այդ կարգի վերջին երեսը թերթեց,  
Պեօտրը ասաց.—Այժմ սլաւոնականներն են:

—Իլենկան նայեց մի սովորական, աչքի  
չընկնող դէմքի լուսանկարի վերայ, որի մտքերն  
խիտ էին, և կարդաց ցածուժ. «Ա. Միցկեվիչ»:

—Սլաւոնական բանաստեղծ է,—բացատրեց  
Պեօտրը:

—Սե՞րբ է:

—Չէ, լեհացի:

—Ինժեներ է:

—Չէ, բանաստեղծ է:

Ազգանունն վերջաւորութիւնը ազգութեան  
կողմից չփոթեցրեց Իլենկային, իսկ Միցկեվիչին  
նա ինժեներ համարեց այն պատճառով, որ այդ  
ժամանակ Տաճկաստանում մի լեհացի լինէր և  
ոչ ինժեներ—հազուագիւտ բան էր:

—Ես չէի կարծիլ, որ սա բանաստեղծ է,—  
նկատեց օրիորդը և շարունակեց նայել միւս  
հռչակաւոր սլաւոնների լուսանկարները:

Սակայն ժամանակը արագ քայլերով անց-  
նում էր. օրիորդը մինչև անգամ չնկատեց, թէ  
ինչպէս մի ժամից աւելի է անցել: Պեօտրը  
նոյնպէս չնկատեց, և նոցանից ոչ ոք չլսեց,  
ինչպէս Անկան ներս մտաւ: Նա դռան շեմքում  
կանգնել էր և զարմացած նայում երիտասարդ-  
ներին, որոնք յավիշտակուած նայում էին այլօմբ:  
Նոքա լաւ ու գեղեցիկ խումբ էին կազմում:  
Իլենկան նստած էր աթոռի վերայ, մի քիչ դէ-  
պի սեղանը կռացած. Պեօտրը կանգնած էր նո-  
րա մօտ, մի ձեռը դրած այն աթոռին, որի վե-

րայ նստած էր Իլենկան, իսկ միւս ձեռով նա թէկն էր տուել սեղանին. նորա կուրծքը մի փոքր կաշուով էր օրիորդի ուսին, իսկ սորա երեսը այնքան մօտ էր Պեօտրի երեսին, որ եթէ սամի քիչ գլուխը ծռէր, կարող էր համբուրել օրիորդին: Երկու անձնաւորութիւնների մօտ լինելը, որոնց տարիքը միասին առած քառասունից շատ չէր աւելանում, արեւելքում կասկածելի երեւոյթների շարքն է ընկնում: Մի փոքր ժամանակ Անկան շուարած կանգնած էր շեմքում, և թէպէտ ոչ մի կասկածելի բան չտեսաւ և չլսեց, կրկին բացականչեց. — Ի՞նչ էք անում:

— Իլենկան վեր թռաւ և կարծես քարացած մնաց: Նա այնպէս վախեցաւ, որ չկարողացաւ տեղից բարձրանալ: Պեօտրը յետ դարձաւ և հարցրեց քրոջը.

— Անկա՛, ի՞նչ ես անում:

— Դու...

— Յոյց եմ տալիս և պատմում մի և նոյնը, ինչ որ քեզ ցոյց տուի:

— Այո... բայց... — նա ի դուր էր աշխատում մի այնպիսի ոճ գտնել, որով կարողանար բացատրել մի այսպիսի tête à tête-ի անտեղի լինելը:

— Նիստ մեզ հետ, — ասաց նորան Պեօտրը. — գուցէ քեզ էլ հետաքրքրէ:

Անկան ուսերը վեր քաշեց. եղբօր ոչ մի ալբոմը երբէք նորան չէր հետաքրքրել: Այդ պատկերները ոչ ներկած էին, ոչ էլ սրբերի

պատկերներ էին: Նորանում կար արեղայական-կուսական կեանքի սաղմը: Սակայն նա այժմ եկել էր եղբօր մօտ գործի համար, նորան դուրս տարաւ և ասաց. — Մի մարդ է կանչում քեզ:

— Ո՞վ է

— Մի ինչ որ գեղջուկ կին է: Ես նորան տարայ ներքեի սենեակը:

— Մնա՛ Իլենկայի հետ

— Ես նորա հետ չեմ մնալ, — պատասխանեց

Անկան

Պեօտրը հասկացաւ բանի էութիւնը, դորա համար էլ չպնդեց, բայց միայն պատասխանեց քրոջը. — Այժմ կըզամ:

Նա շուտով վերագարձաւ իւր սենեակը և ուզում էր յայտնել Իլենկային, որ ստիպուած է հեռանալ, բայց դռան մօտ պատահեց նորան. օրիորդը ինքը առաջինը մնաս բարե ասաց նորան ժպտալով սիրալիբ խօսքով, իսկ ապա գնաց Անկայի մօտ, որ նստած իւր սենեակում, չնայեց մինչև անգամ նորան և չպատասխանեց իւր ընկերուհուն, երբ Իլենկան նորան էլ մնաս բարե ասաց: Այդ պարզ նշանակում էր՝ «մի՛ գալ ինձ ասաց: Անկան Իլենկային եթէ ոչ բոլորովին կուրած, գոնէ սաստիկ անարգուած էր համարում, թէպէտ նորա խիղճը չէր տանջվում համբուրի թեղսութիւնից, որի մասին յիշելը զուարճացնում էր Անկային: Անկան ինքն իրեն ներելու համար հետեւեալ ենթադրութիւնն էր անում.

«Ես միայն մէկին եմ մի անգամ համբու-  
րել, իսկ նա, երևի, երեքին է համբուրել,  
Աստուած գիտէ, քանի անգամ Ստոեանին...  
Նիկոլային... իսկ այժմ էլ Պեօտրին... Ո՛հ, սի-  
հաւիրք»:

Այդ ժամանակ Պեօտրը գնաց ներքևի սեն-  
եակը և տեսաւ անծանօթ գեղջկուհուն:

— Ո՞վ ես:

— Ես Կրիվենացի Պէտրոյից եմ գալիս:

— Մեխանէ՞րից:

— Այո՛, մեխանէրից:

— Գուցէ դու Ստոեանի քո՞յրն ես:

— Այո, Ստոեանի քոյրն եմ և մեխանէջի

աղջիկը:

— Ի՞նչ լաւ բան կայ:

— Կօմիտաջկներից մէկը յաջողակ անցաւ,  
իսկ միւսը այսօր պիտի գայ:

— Եւ ի՞նչ, — հարցրեց Պեօտրը:

— Անցնողն ասաց, թէ նա, որ պիտի գայ,  
պէտք է քեզ տեսնէ: Դու պիտի գաս Կրիվենա,  
հակառակ դէպքում նա կը գայ Ռուչչուկ:

— Նա գիշե՞րը պիտի անց կենայ:

— Այո՛, գիշերը:

— Լաւ: Այնպէս կ'անեմ, որ գիշերը այն  
տեղ լինիմ: Դու կը մնա՞ս մեզ մօտ գիշերելու:

— Չէ՛, ես պիտի վերադառնամ. առանց  
ինձ ոչ ոք նոցա անց չի կացնիլ:

— Գոնէ մի բան կե՛ր:

— Չէ: Հայրս հրամայեց տեսնուել քեզ հետ  
և իսկոյն վերադառնալ:

Օրիորդի ձայնում և դէմքի վերայ այնպիսի  
հպատակութիւն արտայայտուեց, որ Պեօտրը  
չփորձեց էլ բռնել նորան, բայց միայն կրկնեց,  
որ երեկոյեան կը գայ Կրիվենա, և ճանապարհ  
դրեց օրիորդին միշտ դուռը:

Ոտտիկանութեան խիստ հսկողութան պատ-  
ճառով Պեօտրի համար այնքան էլ հեշտ չէր  
Կրիվենա գնալը, Պէտք էր առիթ որոնել: Այդ  
նպատակով նա խանութ գնաց, որ մօր հետ  
խօսի, և առիթը ինքն իրեն ներկայացաւ: Ճա-  
նապարհին նորան պատահեց մի սայլ, ուր բա-  
ցի սայլապանից, նստած էին երեք մարդ և ե-  
րեք շուն: Դոքա իտալական և անգլիական  
դեսպանատների պաշտօնեաներն էին, շները՝  
քերծէներ, իսկ սայլապանը դեսպանատներից մէ-  
կի կաւասն էր: Նոցանից իւրաքանչիւրը ձեռքին  
մի հրացան ունէր և ամէն մէկի ուսից մի մի որ-  
սորդական պայուսակ էր կախած: Ակներև էր,  
որ նոքա որսի էին գնում և պաշար ունեցող  
մարդիկ էին, որովհետև սայլի մէջ դրած էր  
երկու հրացան և երեք պայուսակ:

— Կանգնի՛ր, — ասաց նոցանից մէկը սայլա-  
պանին, երբ տեսաւ Պեօտրին, և դիմելով նո-  
րան շարունակեց. — Նի՛ստ:

— Ո՞ւր էք գնում:

— Դէպի Եանտրայի բերանը:

—Սպասեցէք, մինչև որ ես էլ բաներս հա-  
ւաքեմ:

—Մի լուպէ էլ չենք սպասիլ:

—Բայց չէ որ...

—Առանց հակաճառութիւնների... Ահա քեզ  
երկու հրացան և երեք պայուսակ. ընտրի՛ր...  
նի՛ստ: Մենք յափշտակուած ենք քեզ:

Անկարելի էր ձեռքից բաց թողնել մի այս-  
պիսի լաւ դէպք՝ դորա հմար էլ Պետարը մի լու-  
պէ անգամ շտատանուեց: Նա միայն կամենում  
էր իմաց տալ մօրը, իսկ այդ պարօններին այն-  
քան դուր եկաւ նորան յափշտակելը, որ այդ  
անելուց ևս հրաժարուեցան. նա նստաւ սայլը,  
ձիերն առաջ գնացին. իտալացին որսորդական  
մի երգ սկսեց, իսկ անգլիացին հրացան արձա-  
կեց: Նոքա նախաճաշեցին և քէֆերը տեղն էր:  
Արագընթաց անցան Ռուշչուկը: Պետարը ընկել  
էր ուրախ շրջանի մէջ և միայն ճանապար-  
հին իմացաւ, որ նոքա երեք շաբաթով են  
գնում:

«Ի՞նչ կրկարծէ մայրս», — անհանգստանում  
էր երիտասարդը: Սակայն ճար չկար: Չիերը  
շուտ շուտ էին գնում, ճանապարհորդները եր-  
գում էին, հրացան արձակում, շները հաշում:  
Անցորդները ճանապարհին պատահելով նոցա,  
կանգնում էին և նայում, թէ ինչպէս են մաս-  
խարութիւններ անում Եւրոպայի ներկայացու-  
ցիչները: «Կը լրջանան» — մտածեց Պետարը:

Սակայն այդ ենթադրութիւնը ճիշտ դուրս  
չեկաւ: Ի հարկէ, Եւրոպայի ներկայացուցիչները  
պիտի լրջանային, բայց նոցանից իւրաքանչիւրը  
հեան ունէր մի շիշ կօնեակ fine champagne:  
Նոքա իրանք խմում էին և ստիպում, որ Պետա-  
րըն էլ խմէր, այնպէս որ չհարբելու համար նա  
ստիպուած էր խորամանկութեան դիմել: Նա  
չիչը դնում էր բերանին, բայց չէր խմում:

Պետարի բանը լաւ էր գնում այդ օրը. մին-  
չև անգամ այդ պարօնների գրութիւնը նպաս-  
տեց նորան: Սկզբում նոքա ուզում էին ուղղակի  
Սիստովօ գնալ և այնտեղ գիշերել, բայց դա  
անկարելի եղաւ: Իտալացին և անգլիական դես-  
պանատան քարտուղարը կարող էին գնալ, իսկ  
միւս անգլիացուն տեղ հասցնել անկարելի էր:  
Արդէն երկու անգամ նա սայլից ընկել էր բա-  
ւական լաւ վիրաւորուել, այնպէս որ ստիպուած  
էին կամաց կամաց գնալ, մինչև անգամ տեղ  
տեղ էլ կանգնել նստելու տեղը դրստելու հա-  
մար: Անգլիացին օգուտ էր քաղում կանգնելուց,  
որ շիշը դուրսը քաշէր: Այդ պատճառով որ-  
սորդները հազիւ կրիվենա հասան, Երբ մօտե-  
նում էին, նոցա մի սայլ հասաւ, ուր մի քանի  
մարդ կար նստած, ի միջի այլոց և Մարիկան:  
Պետարը թեթեւ կերպով բարեւեց նորան, իսկ  
նա չպատասխանեց:

Կրիվենայում դեսպանատան կաւարը հրա-  
մայեց կանչել չորբաջիին, որ հիւրերին տեղա-

ւորէ ամենայարմար բնակարանում: Նորա իրենք չէին կարողանում սայլից ցած իջնել: պէտք էր նոցա տանել: Իտալացին շարունակեց երգել իւր խռպոտ ձայնով, մինչև որ քնեց: Միայն Պետարը շորերը չհանեց: Նա պառկեց մինչև որ ամեն բան հանդարտուեց, յետոյ վեր կացաւ և գնաց մեխանէն: Մեխանէն մութ էր, և դուռը փակ:

Պետարը դուռը ծեծեց: Լսուեցին քայլեր, և դռան յետևից մի տղամարդու ձայն հարցրեց. — ո՞վ է:

— Ռուչչուկից եկուոր:

— Ի՞նչ եկուոր:

— Այն, որին կանչել է տուել Պէտօն:

Պէտօն դուռը բացեց և դուրս եկաւ:

— Մարիյկան վերադարձա՞ւ:

— Վերադարձաւ... — Նա բարձր ձայնով հաղաց:

Իսկոյն դուրս եկան մի կին ու մի տղամարդ: Տղամարդը Պետարին մի կողմը տարաւ և սկսեց նորա հետ կամացուկ խօսել: Վերջապէս Պետարը հարցրեց.

— Ի՞նչ եղաւ Նիկօլան:

— Նա ուզում էր ինձ հետ անցնել, բայց բանն այնպէս եղաւ, որ մնաց: Այնու ամենայնիւ նա այսօր կ'անցնի, և մենք իսկոյն ճանապարհ ենք ընկնում:

Մարիյկան անցաւ խօսողների մօտից և անհետացաւ գիշերային մթութեան մէջ: Պետարը

նայեց դէպի այն կողմը, ուր Մարիյկան գնաց. նորա ընկերը մի և նոյնն արաւ: Պէտօն գնաց ընկնուզենու մօտ, Երեքն էլ, առանց խօսք տալու, — սկսեցին լսել և սպասել: Խաղաղ, թէ և մութ գիշերը նպաստում էր ամեն մի ձայն լսելու: Արեւմտքում կիտուած ամպերը անձրև էին գուշակում, թերևս և փոթորիկ: Առ այժմ դեռ բնութեան մէջ խաղաղութիւն էր տիրում, որ սովորաբար տեղի է ունենում փոթորիկից առաջ: Դանուբի ավերից լսվում էր գորտերի կռնչիւն, և Պետարը, որին յայտնի էր այդ պայմանական նշանը, ինքն իրեն հարցրեց. ինչպէ՞ս իմանամ այն կռնչիւնը, որի միջոցով պէտք է խօսակցել: Անցաւ մօտաւորապէս կէս ժամ:

Ո՞հ, — բացականչեց Պէտօն:

— Ի՞նչ է, — հարցրեց Պետարը մօտենալով նորան.

— Գնացէք սրճարանը, երբ նա գայ, միայն ճրագ մի վառէք: Խօսեցէք, որքան ուզում էք, իսկ ես ու Մարիյկան կը հսկենք այս տեղ:

Ճիշտ այդ միջոցին բուռի ձայն լսուեց, որ կրկնուեց միախառնուելով գորտի կռնչիւնի հետ: Այդպիսի մի խառն ձայն՝ փոքր ինչ ուրիշ կերպ լսուեց կրկին ու կրկին: Արեւմտքում որոտաց, և այդ բոպէին երկու մարդ երեւեցան, որոնք մօտենում էին ճանապարհին:

— Պետար, — հարցրեց մի տղամարդ:

— Նիկօլա՞, — պատասխանեց Պետարը:

Երեք դաւադրողները սրճարան գնացին, իսկ Պէտօն ու Մարիկյան մնացին հսկելու: Կոմիտաջիները մնացին սրճարանում կէս ժամի չափ. երբ նորա դուրս եկան մեխանէից, Պէտօն հարցրեց. — Հ՞ր, ի՞նչ է.

— Գն՞ում ենք, — ասաց առաջին եկողը:

— Տէր ընդ ձեզ, ասաց Պէտօն և դիմելով աղջկան, շարունակեց. — դնա հաց ու բախի բեր, որպէս զի ինձ ոչ ոք չնախատէ, որ մի կտոր հաց չտուի:

Մարիկյան դուրս բերեց պաշարով լի մի տոպրակ, որ առաջուց պատրաստած էր և, որպէս ճանապարհ ցոյց տուող, առաջ ընկաւ:

— Մի քիչ մեղ ճանապարհ դիր, — ասաց Նիկօլան Պետօրին, — ես ուզում եմ մի քանի բան էլ ասել քեզ իմ կողմից:

Երբ նորա փոքր ինչ յետ մնացին, Նիկօլան հարցրեց.

— Ուզո՞ւմ ես իմանալ, թէ ինչու ես ու Ստօեանը...

— Անկասկած, այդ ինձ հետաքրքրում է, — ընդհատեց Պետօրը: — Խռով լինել մի ընկերի հետ, որի հետ միասին պիտի գործես, մինչև անգամ յանցանք է:

— Ինձ էլ այդպէս է թւում, պատասխանեց Նիկօլան

— Ապա ինչո՞ւ այդպէս է: Ի՞նչու դու չհաշտուեցիր նորա հետ:

— Որովհետև մեր մէջ...

— Ինչ բան է:

Հարցրու ոչ թէ «ինչ», այլ ով է...

— Ո՞վ է:

— Իլենկան: Նա՛ է կանգնած մեր մէջ, նա: Թէ ինչպէս եղաւ այդ, ես չգիտեմ: Հէնց որ նա կանգնեց իմ ու նորա մէջ տեղ, այնպէս զայրացայ Ստօեանի վերայ, այնպէս սկսեցի առեւ նորան, որ ուզում էի հէնց այնտեղ, այն ստորերկրեայ օթևանում խեղդել նորան այնպէս, ինչպէս նա միլեազիմին խեղդեց: Այո՛... — Նիկօլան խոր հառաչեց:

— Իսկ եթէ աղջիկը նորան է սիրում, — նկատեց Պետօրը կարճ միջոցից յետոյ:

— Չգիտեմ... Բանն էլ այդ է, որ ես չգիտեմ... Ինձ այնպէս է թւում, թէ նա ինձ է սիրում: Այդ համոզմունքով ես իջայ ջրհորը, և միայն դեանի տակ տեսայ, որ կարող է լինել, ես սխալվում եմ: Չգիտեմ... Բայց եթէ նա նորան է սիրում... եթէ նա սիրում է նորան (Նիկօլայի ձայնը դողդողում էր) — ես միայն մեռած կը տամ նորան... Չէ՛, Իլենկան չէ կարող... նա չըպիտի սիրի Ստօեանին:

XXIII.

Պետօրի անսպասելի անհետանալը սաստիկ անհանգստացնում էր Մօկրային: Նա չէր կարո-

դանում հասկանալ, թէ ինչու որդին չիմացրեց, որ հեռանում է: Նախ և առաջ նորանում խօսում էր մայրական սիրոյ զգացմունքը...

«Տէ՛ր Աստուած,— մտածեց նա,— դա արդէն երրորդն է... և... վերջինը...»

Յետոյ նա սկսեց մտածել, թէ ուր գնացած կը լինի: Անկան յայտնել էր նորան, թէ մի գեղջուկ կին էր եկել, և Մօկրան, յիշելով Մարիյկային, հասկացաւ, որ Պետրը գնացած կը լինի այնտեղ: Բայց աղջիկն ասաց, թէ եղբայրը գնաց տան շորով, և մինչև անգամ առանց վերարկուի: Չբրբակալած չլինի՞ն նորան: Այժմ ամեն բան կարելի է,— մտածեց Մօկրան:— Տաճիկները ձերբակալած կըլինին նորան և լռում: Կ'իմանամ ես այդ,— մխիթարում էր իրեն պառաւը, յոյս դնելով, որ ոստիկանատանը ծանօթներ ունի:

Նա հրամայեց Անկային, որ ոչ ծառաների, ոչ էլ մի ուրիշ մարդու առաջ չյայտնէ իւր անհանգստութիւնը Պետրի անհետանալու առթիւ:

— Կարծես թէ դու բոլորովին չես դարմանում, — սովորեցրեց պառաւը Անկային, և նա լիովին յարմարեցնում էր իւր զգացմունքը շրջապատողների հետ. ոչ ոքին չէր հարցնում Պետրի մասին, և միայն առաձին ուշադրութեամբ զրուցում էր այն պաշտօնեաների հետ, որոնք գալիս էին նորա խանութը մաստիկա խմելու: Իսկա-

պէս նա շատ էր անհանգստանում և միշտ ինքն իրեն հարցնում էր, թէ ինչ եղաւ նա:

Պետրի անհետանալուց մի օր անցած Անկան ընթրիքից յետոյ ասաց մօրը.

— Գուցէ միայն նա գիտէ, թէ ինչ է եղել: — Ո՞վ:

— Նա այժմ չի իշխիլ գալ մեզ մօտ: — Այդ ո՞վ:

— Հաջի Խրիստօյի աղջիկը: — Իլենկա՞ն:

— Այո, նա: — Ինչո՞ւ նա չպիտի իշխի գալ մեզ մօտ:

— Որովհետեւ ես նորան բռնեցի Պետրի հետ միասին սենեակում:

— Ի՞նչ կայ որ:

— Ինչպէ՞ս թէ ինչ կայ որ... նոքա միասին նստած էին մօտ երեք ժամ, գուցէ և աւելի:

Նա եկաւ ինձ մօտ, մի քիչ նստաւ, դուրս եկաւ իմ սենեակից և կորաւ... ես զարմացայ, թէ նա ի՞նչ է անում...

Գեղջուկ կինը եկաւ — ես գնում եմ Պետրի սենեակը և տեսնում այն տեղ իլենկային... Աչքիս չէի հաւատում... Երևի, Պետրը նորան մի բան էր ասել, որ այդքան երկար նստել էին խօսում... Երբ նա վերադարձաւ Բուքարեշտից և պատմում էր բուլղա-

րական լէգիոնների մասին, շատ լաւ եմ յիշում, իլենկան հարցրեց, թէ ինքը ինչու չէ գնում կռուելու:



Մօկրան լսեց այդ բոլոր մեղադրանքը և ուրախացաւ, որ Պետրը այդքան մօտեցել է Իլենկային: Լաւ ճանաչելով իւր որդուն, նա համոզուած էր, որ որդին օրիորդի վերաբերմամբ իրեն ոչ մի աւելորդ բան թոյլ չի տալ, այդ պատճառով էլ ոչ մի նշանակութիւն չտուեց աղջկայ խօսքերին: Սակայն միւս կողմից նորան յայտնի էր օրիորդի վառ հայրենասիրութիւնը, և պառաւր մտածեց, որ Իլենկան նորա համար է այնքան երկար մնացել Պետրի հետ, որպէս զի ուղարկէ նորան պատերազմի դաշտը. այդ պատճառով էլ նա կարծում էր, թէ Իլենկան կարող կըլինի մի քանի տեղեկութիւն առ Պետրի անհետանալու մասին:

«Ես կըհարցնեմ նորան»,—մտածեց Մօկրան:

Պէտք էր դնալ հաջի Խրիստոյի մօտ, բայց հօր ու մօր մօտ աւելորդ էր հարցնելը և մինչև անգամ պէտք չէր ասել, թէ Պետրը չկայ, անհետացել է: Մօկրան դնաց հարևանների մօտ և մի ժամի չափ խօսեց այնտեղ տանտիկնոջ հետ. իսկ երբ սա սկսեց պատմել իւր հիւանդութեան մասին, որ յաճախ տանջում էր նորան, Մօկրան այնպէս հետաքրքրուեց, որ կարծես խօսակցութիւնը իւր ցաւի մասին էր:

—Սկսվում է՞,—հարցրեց Մօկրան:

—Ո՛հ, դեռ ինչպէս է բռնում, ջանմ... Մի մի ժամանակ այնպէս է բռնում, որ կարծես թէ

իսկոյն պիտի տրաքուեմ:

—Ախ՛, խեղճ, խեղճ:

—Այո՛, —ախ ու վախ էր քաշում տանտիկինը և գլուխը շարժում:

—Բայց ես ճար ունիմ քո հիւանդութեան դէմ,—ասաց Մօկրան:—Ինձ համար մի հունգարացի բժիշկ է նշանակել:

—Գոնէ մի քիչ տուէք ինձ այդ դեղից:

—Կըտամ... ինչո՞ւ չտալ: Ա՛յ ինչ,—ասաց Մօկրան, տեղից վեր կենալով.—ուղարկիր ինձ հետ Իլենկային. նա այժմ և եթէ կըբերէ: Իսկ յետոյ ես գնալու եմ խանութ և միայն երեկոյեան պիտի վերադառնամ. դու ինչու այդ միջոցին զուր տեղը պիտի տանջուիս:

—Եւ ի՞նչ տեղից այդ ցաւը պատահեց ինձ. կարծես թէ երկնքից ընկաւ,—հառաչում էր տանտիկինը. յետոյ դիմելով աղջկան՝ ասաց.—գնա:

Քանի որ գնում էին, Մօկրան բան չասաց Իլենկային. իսկ տանը նա տարաւ նորան Պետրի սենեակը: Օրիորդը կանգնեց դռան մօտ, կարծես թէ երկիւղ էր կրում անցնել այդ շէմքը:

—Նե՛րս եկ,—ասաց Մօկրան.— Պետրը տանը չէ:—Երբ Իլենկան ներս մտաւ, պառաւր դռնը փակեց և հարցրեց.—գիտես որ Պետրը անհետացել է:

—Անհետացե՞լ է,—զարմացաւ Իլենկան:

—Ահա երրորդ օրն է, որ նա չկայ:

—Ո՞ւր է:

—Արդեօք չգիտե՞ս, չես կարող իմանալ:

—Չէ՛,—ասաց օրիորդը, ուսերը վեր քաշելով:

—Խօսե՞լ ես դո՛ւ նորա հետ պատերազմի մասին:

—Խօսել եմ,—ասաց Իլենկան և բոլորովին վառուեց:

—Իսկ չես ամաչեցրել նորան, որ չէ գնում պատերազմելու:

—Չէ,—պատասխանեց նա հաստատ:—Ես նորան չեմ ամաչեցրել:

—Լա՞ւ ես յիշում ձեր խօսակցութիւնը:

—Ես հարցրի նորան, թէ ինչու կլաղովայում չէ, իսկ նա պատասխանեց ինձ,—ինչու՞ւ յետոյ, երբ այս ցոյց տուեց (նա մատնացոյց արաւ ալքոմը), ես այլ ևս չհամարձակուեցայ հարցնել նորան:

—Ինչո՞ւ,—հարցրեց Մօկրան:

—Որովհետև զինուորականներից էլ օգտակար մարդիկ կան:

—Ուրեմն ի՞նչ տեղ է որդիս,—դառնադէտ կերպով բացականչեց Մօկրան: Նա նայեց Իլենկային, և նորա աչքերում ցոլաց ոչ այն զգացմունքը, որով նա ծածկում էր իրեն տաճիկների ներկայութեամբ, այլ մայրական վշտի, դառնութեան և երկիւղի զգացմունքը:

Ես թշուա՞ռ եմ,—բացականչեց նա սրտապատառ ձայնով:

—Մօկրա...—սկսեց Իլենկան, մօտենալով պառաւին:

—Դա արդէն երրորդն է, երրորդը...—և նորա աչքերից արտասուք թափուեց, Իլենկան նոյնպէս լաց եղաւ: Մօկրան հէնց որ տեսաւ Իլենկայի արտասուքը, իսկոյն ուշքի եկաւ, հառաչեց և ասաց. «Ժամանակ է դորժ սկսելու», ուզում էր գնալ, բայց մտաբերելով, թէ ինչու է հետը բերել Իլենկային, կանգնեց:—Մի փոքր սպասիր, ես այս բոպէիս մօրդ համար դեղ կը բերեմ,—ասաց նա:

Մօկրան շուտով վերադարձաւ, ձեռին մի փոքրիկ ծրար, տուեց Իլենկային և ասաց, թէ ինչպէս մայրը պիտի ընդունի այդ դեղը: Նորա միասին դուրս եկան Պեօտրի սենեակից, և Մօկրան հարցրեց. «Ձե՞ս ուզում գնալ Անկայի մօտ»:

—Չէ՛, Մօկրա, չեմ գնալ:

Պառաւը լռեց:

Պեօտրի անհետանալը յիշեցնում էր պառաւին այն ճանապարհը, որով մեծ որդին գնաց, ուր և իւր գլուխը դրեց: Նա արդէն երեւակայում էր իւր վերջին որդու գլուխը զաղուխի անց կացրած և քաղաքի պարիսպի մօտ ցցած. նա տանջվում էր, սարսափում այդ մտքից. սակայն նա իմանում էր ծածկել իւր զգացումները, և ոչ ոք չէր կարող իմանալ նորա արտաքին տեսքից, թէ ինչպէս էր տանջվում: Նա կատակ

էր անուամ տաճիկներէ հետ և բոլորովին չչփոթուեց, երբ նորա մօտ եկաւ Արիստարիս-բէյը և ասաց.

—Որդիդ իրեն լաւ է պահուած, Մօկրա:

—Երևի, ուրիշներէց վատ չէ...:

Ո՞վ կարող էր սպասել նորանից մի այդպիսի բան:

—Միշտ կարելի է նորանից ամեն բան սպասել...:

Նորա սիրաւ ճմլվում էր: Նա գլխի ընկաւ, որ տաճիկները մի բան իմացել են, հետեաբար կարելի է հարցնել, ուստի և շարունակեց.—

Սակայն ես ինքս էլ չգիտեմ, թէ ուր է նա:

—Ուրեմն քեզ իմա՞ց էլ չի տուել:

—Չէ... ինչ՞ու, նա հօ փոքր չէ:

—Սիստովոյի գայմագամը մեզ իմաց է տրուել նորա և ընկերների մասին:

Մօկրան սրտածաք եղաւ. նա մտաբերեց, որ Սիստովոյի մօտերըում հաջի Գիմիտրին ապստամբութիւնն է սկսել:

—Կատարեալ խելագարութիւնն է,— շարունակեց բէյը.— երեք օր շարունակ հարբել... մէկը քիչ է մնացել, որ խեղդուի, միւսը վիրաւորուորուել է... Երբ փաշան իմացաւ, որ քո որդին էլ մասնակցում է այդ ընկերութեան, ասաց.

«Աֆֆէրիմ մեր դօկտոր, աւելի լաւ ապացոյց պէտք չէ, որ նա սուլթանի հաւատարիմ հպատակն է»:

վերջին խօսքերը շատ զարմացրին Մօկրային: Բէյը խօսում էր մի ինչ որ հարբած և մի և նոյն ժամանակ հաւատարիմ ընկերութեան մասին: Նորա որդին էլ մասնակցում էր խմբին: Այդ ի՞նչ է նշանակում: Նա չէր կարողանում որոշ եզրակացութիւն անել, որովհետև չէր հասկանում, թէ ինչու համար Սիստովոյի գայմագամը ծանուցել է այս տեղի ոստիկանութեան: Մի խօսքով այդ բոլորից միայն մի բան էր երևում: Գայմոյսն էր, որ նորա համար մեծ նշանակութիւն ունէր: Նա սպասում էր, թէ ինչպէս կը լուծուի այդ հանելուկը, և բանը պարզուեց միայն հինգերորդ օրը երեկոյեան՝ շատ ուշ:

Մօկրան նստած բազմոցի վերայ գուլպայ էր գործում և մտածում Պետրի մասին: Յանկարծ գիշերուայ այդ լուութեան ժամանակ հրացան արձակեցին ուղիղ նորա տան առաջ:

—Տէր Աստուած,— աղաղակեց Մօկրան, վեր թռչելով բազմոցից:

Նոյնպէս աղաղակեց և վեր թռաւ Անկան, որ նստած էր մօր կողքին:

Առաջին պայթիւնից յետոյ լսուեց երկրորդը, իսկ ապա և երրորդը:

—Չիւնի՞ թէ Ստօեանն է...— բացականչեց Անկան:

—Ի՞նչ ես ասում...— հանգստացրեց նորան մայրը:

— Զօրքով եկած կրլինի կլադովայից... — շարունակեց Անկան բերկրալի ձայնով:

— Լուի՛ր, — աղաղակեց մայրը, ինքն էլ չիմանալով, թէ ինչ է նշանակում այդ:

Ծառաները ներս վազեցին, բայց այդ միջոցին լսուեց չորրորդ, հինգերորդ, վեցերորդ պայթիւնը: Լսվում էր, որ փողոցում մի տեսակ իրարանցում կար, և մի և նոյն ժամանակ ըսկըսեցին սաստիկ բաղխել դարպասը:

Մօկրան յանկարծ փոխուեց: Կարելի էր կարծել, թէ դա կին չէ, այլ առաջնորդ, որ անակնկալ յարձակման ժամանակ հրամաններ է տալիս զօրքին: Նա դիմեց ծառաներին.

— Գնացէ՛ք դարպասի մօտ. փոքր դուռը շղթայեցէ՛ք. միայն մերօնց ներս թողէք... Ժանդարմների համար ես դուռը կըբանամ: Մերօնց բոլորին պարտէ՛ղ ուղարկեցէք... իսկ դո՛ւ, — շարունակեց նա, դառնալով Անկային, երբ ծառաները դուրս գնացին. — կանգնիր պարտիզի մուտքի մօտ և բոլորին ուղարկիր դէպի ջրհորը: Ես ինքս այն տեղ կըկանգնեմ:

Այս կարգադրութիւնը անելուց յետոյ Մօկրան առաւ լապտեր, լուցիկ և պարտէ՛ղ դադեց: Մի քանի վայրկեանից յետով ամենքն արդէն իրենց տեղումն էին. ծառաները հաւաքուել էին դարպասի մօտ. Անկան կանգնած էր պարտիզի մուտքի մօտ. տանտիկինն էլ կանգնած էր ջրհորի մօտ:

Մեր Կոստան, ձգելով փոքր դռան շղթան, մի քիչ բաց արեց և հարցրեց. — Ո՞վ է:

— Ես եմ, — պատասխանեց նորան մի ձայն, որից նա ճանաչեց Պետրին:

Կոստան ներս թողեց, և ամենքն իսկոյն աղաղակեցին. — պարտէ՛ղ, պարտէ՛ղ:

— Ինչո՞ւ, — հարցրեց Պետրը:

— Խանումը այնպէս հրամայեց, որ ամենքը պարտէ՛ղ գնան:

— Բացի ինձանից ոչ ոք չի դալու այս տեղ:

— Պարտէ՛ղ, պարտէ՛ղ, — պնդում էին ծառաները, վախեցած նոր պայթիւններից, որ լսվում էին փողոցից: — Խանումն է հրամայել:

Պետրը իւր քայլերը դէպի պարտէ՛ղ ուղղեց և մուտքի մօտ Անկային պատահեց. ճանաչելով եղբօրը՝ նա շուարած մնաց:

— Ի՞նչ է նշանակում այս բոլորը... — հարցրեց Պետրը:

— Այնպէս հրացան են արձակում, որ մենք կարծեցինք, թէ մերօնք են եկել կլադովայից:

Ո՞ւր է մայրիկը:

— Զրհօրի մօտ է:

Գիտուար չէ երևակայել, թէ որքան ուրախացաւ Մօկրան, երբ տեսաւ որդուն: Պետրը պատմեց նորան, թէ ինչպէս և ինչ եղաւ, և մայրը հանգստացաւ, թէ և հրացան արձակելը շարունակում էին: Սակայն քանի գնում պայթիւնները հեռուից էին լսվում, և վերջի

վերջոյ դադարեցին: Ընթրիքի ժամանակ Պետրը պատմեց, թէ ինչպէս դնաց, ինչ արաւ այդ միջոցին և ինչպէս վերադարձաւ: Շատ խմելուց որսը յաջող չէր: Նսպաստակների, կաքաւների և ուրիշ թռչունների տեղ ոչխար, հորթ, այծ շուն, հաւ, ընտանի բազ և սագ էին սպանում և քիչ էր մնացել, որ մի քանի մարդ էլ սպանէին: Վերջապէս ուրախ որսորդները Ռուչչուկ վերադարձան և, երբ Պետրը իրենց տան առջև ցած պիտի իջնէր, սկսեցին հրացան արձակել: Եկաւ ոստիկանութիւնը. հետեակ և ձիաւոր ժանդարմները դիմեցին դէպի այն կողմը, ուսկից հրացանների ձայնն էր դալիս, և դուրս եկան սայլի դէմ, որի մէջ գանուող մարդիկը, բաց չառնելով և սայլապանին, հարբած էին: Բանից դուրս եկաւ, որ կառապանը գետպանատան կառան էր, իսկ պարոնները իտալական և անգլիական հիւպատոսարաններից էին: Միջազգային դաշնագրութեան հիման վերայ այդ մարդկանց անձնաւորութեան ձեռ տալ չէ կարելի, և եթէ կառապանը հարբած չլինէր, ժանդարմները պէտք է հեռանային: Բայց որովհետև հիւպատոսարանի կաւասը հրաժարվում էր կառավարելուց, այդ պատճառով ժանդարմները տարան սայլը առաջ անգլիացոց հիւպատոսարանը, իսկ ապա իտալացոցը: Մինչդեռ ժանդարմները՝ ձիերու երասանակը բռնած տանում էին, մեր պարոնները զուարճանում էին հրա-

ցան արձակելով և հանգստացան միայն տանը, ուր նոցա ձեռքի վերայ ներս տարան:

— Ի՞նչ է, նոքա զնացի՞ն, — հարցրեց պառաւը:

— Գնացին, — պատասխանեց Պետրը: Դորանով էլ վերջացաւ նոցա խօսակցութիւնը յանձնաժողովի գործակալների մասին:

Ի հարկէ, ոչ ոք էլ չմտածեց բաւարարութիւն տալու այն ֆլամների համար, որ պատճառեցին բնիկներին հիւպատոսարանի պաշտօնեաները: Վիրաւորուածներին թոյլատրուած էր... բժշկուել, իսկ նոքա, որոնց ոչխարներն, հորթերն և այլն... սպանուած էին... իրաւունք ունէին... սղբալու իրենց կորուստը: Տաճիկները միշտ ուրախանում էին, երբ օտարազգիները անպատվում էին իրենց տեղական բնակիչների առաջ, և ի հարկէ եւրոպական տէրութիւնները ոչինչ չէին իմանում դորա մասին, որովհետև հիւպատոսարանի մարդիկը, հաղիւ էր պատահում, որ լաւ, կարգաւորեալ մարդիկ լինէին:

Այս դէպքում անգլիական և իտալական հիւպատոսարանները Պետրին օգուտ տուին, որովհետև վերոյիշեալ որսից յետոյ այլ ևս ոստիկանութիւնը չէր հսկում թէ՛ նորա, թէ՛ նոցա տան վերայ: Փաշան անձամբ յայտնեց այդ Պետրին:

— Պ. դօկտոր, մինչև այժմ մենք ձեզ հաւատ չէինք ընծայում: Թէ և ես մեծ յարգան-

քով էի վերաբերվում դէպի ձեզ, որին դուք լիովին արժանի էք, այնու ամենայնիւ ես մտածում էի. grattez le Bulgare, vous y trouverez un Russe. Իսկ այժմ անտնում եմ, որ սխալուած էի:

— Ես դորանով բոլորովին չեմ հպարտանում, ձերդ գերազանցութիւն,— նկատեց Պետրը:

— Ի՞նչ է որ... Une folie -- պատասխանեց փաշան. — երիտասարդութիւնն ունի իւր իրաւունքները:

Եւ այդ ժամանակից փաշան կարգաւորեալ մարդ էր համարում Պետրին:

Իսկ այդ լիովին կարգին մարդը շարունակում էր իւր «յանցաւոր» գործերը: Մօկրայի յարաբերութիւնների շնորհիւ նա այնպիսի տեղեկութիւններ էր հասցնում Բուքարեշտ, որոնց տարածուիլը ապշեցնում էր փաշային և Արխատարխի-բէյին. բացի դորանից՝ նա մասնակցում էր տեղական յանձնաժողովին, միջոցներ և խորհուրդ էր տալիս և առհասարակ գործօն անդամներին մէկն էր. մի խօսքով, ստորերկրեայ աշխատութիւն էր անում: Բուլղարիայում այդպիսի վարպետներ առաջ եկան տաճկական կառավարութեան լծի ազդեցութեան ներքոյ, իսկ ճնշողական միջոցները—ինչպէս՝ աքսորները, կախելը, գլուխները զազուխի անցկացնելը—կատարելագործում էին նոցա: Եթէ Պետրի երկու

եղբայրները սպանուած չլինէին, թերևս նա էլ Ստօեանի ու Նիկօլայի պէս գործէր. բայց տաճիկները իրենք կրթեցին և պատրաստեցին կատարելագործուած ներքին թշնամիներին:

Իլենկային չափազանց զարմացնում էր Պետրի անհետանալը. մանաւանդ որ Մօկրան էլ հարցրեց. արդեօք նորա ազգեցութեան ներքոյ Պետրը պատերազմ չէ՞ դնացել: Ինքը Իլենկան այդ բանի մասին չէր էլ մտածել, բայց երբ նորան հարցրին, նա աշխատեց մտաբերել բոլոր խօսակցութիւնը և հասաւ այն եզրակացութեան, որ Պետրի վերայ կարող էր ազդած լինել կարմիր խաչի ընկերութիւն մտնելու ցանկութիւնը:

«Եթէ ես օրիորդ տեղովս կամեցայ պատերազմ գնալ, գուցէ նա տղամարդ տեղովը ամաչեց, որ տանն է մնում»: Այսպիսի եզրակացութեան հասաւ Իլենկան և ինքն իրեն տասց. «Ափսո՛ս... շա՛տ ափսոս»...

Նիկօլայի մասին նա երբէք դեռ չէր ասել ափսոս: Նա հաւատացած էր, որ Նիկօլան կլագովայում է, և յաճախակի մտածում էր նորա մասին: Նա երևակայում էր նորան նշանազգեստը հագին, փետրաւոր գլխարկը գլխին, թուրը կողքին, ատրճանակն ու ռէվօլվէրը գօտիի մէջ: Նա երազում էր նորա հերոսական սխրագործութիւնները և ուրախանում էր նորա քաջութեան համար: Բայց նա երբէք չէր մտածում՝ «ափսոս է նա»: Սակայն Պետրին նա շատ էր

ափսոսում: Նա պատրաստ էր շատ բան գոհել, միայն որ նա վերադառնար, և եթէ Նիկոլան այստեղ լինէր, կ'ասէր նորան.—գնա՛, որոնի՛ր Պետրին և բեր այս տեղ, իսկ առանց նորան մի՛ վերադառնալ:

Դժուար չէ այդ պատճառով երեակայել, թէ որչափ նա ուրախացաւ, երբ իմացաւ, որ Պետրը վերադարձել է: Չնայելով, որ Անկան թթուած դէմք էր շինում, Իլենկան նորից գնաց նորա մօտ, և ընտրեց այնպիսի ժամանակ, երբ նա հաւատացած էր, որ Պետրը տանը կը լինի: Բայց գալ այն ժամանակ, երբ Պետրը տանն է, դա դեռ չէ նշանակում, որ կը տեսնուի նորա հետ: Քանի անգամ նա դուրս չէր եկել օրիորդի մօտ, թէ և տանն էր: Նա շատ է յափշտակուած գրքերով: Եթէ գրքերը չլինէին... Այժմ էլ նա հաւատացած չէր, որ կը տեսնէ Պետրին, բայց կրկին գնաց:

Մօկրայի տան դարպասն անցնելիս Իլենկան մտաբերեց, որ ուզում էր հարցնել Կոստայից այն գառի մասին, որ առանց պոչի էր ծնուել: Իւր ժամանակին այդ գառի մասին շատ էին խօսում ամբողջ թաղում, իսկ այժմ՝ ամենքն արդէն մոռացութեան էին տուել նորան: Յանկարծ Իլենկան յիշեց և ուզեց իմանալ, թէ ինչ եղաւ այդ գառը: Գորա համար էլ նա ոչ թէ սանդուղքներով վեր բարձրացաւ, այլ ուղղակի դէպի գոմը գնաց. բայց որովհետև ինքը չգիտէր, թէ

ինչ տեղ է Կոստան, սկսեց կանչել.—Կոստա... Կոստա...

Իլենկան մի փոքր սպասեց, իսկ Կոստան չեկաւ: «Աստուած նորա հետ, միւս անգամ կը հարցնեմ սնպոչ գառան մասին», ասաց ինքն իրեն օրիորդը և սանդուղքներով վեր բարձրացաւ և այդ միջոցին տեսաւ բակի միւս կողմում աղախնին, որ բրինձ էր լուանում:

—Ինչ տե՞ղ է Կոստան,—աղաղակեց Իլենկան:

—Կոստան տանը չէ. նա գնացել է ջրաղաց:

Այժմ հաստատ կարելի է ասել, որ Պետրը, եթէ միայն չէր խլացել, գիտէր, որ Իլենկան եկել է:

Օրիորդը սանդուղքներով դանդաղ վեր բարձրացաւ. անցաւ Պետրի դռան մօտից և հազաց: Իսկոյն նորա ետեւից դուռը բացուեց և երևեց Պետրը: Օրիորդը լսեց և տեսաւ այդ, բայց այնպէս արաւ, կարծես թէ չէ նկատում և սկսեց շուտ-շուտ գնալ: Գալով Անկայի սենեակը, նա բարևեց նորան, ձգեց ծածկոցը և եաշմաղը. հագիւ նա նստաւ, ներս մտաւ Պետրը: Իլենկան իբր թէ զարմացաւ:

—Ա՛... Ես լսեցի, որ դու այս տեղ չես:

—Արդարև, ես այս տեղ չէի, բայց եկայ:

—Ո՛ւր էիր գնացել:

—Մօտ էի, եանտրայի շրջակայքում:

Նա պատմեց, թէ ինչպէս նորան յափշտա-

կեցին և ստիպեցին մասնակից լինել մի այնպիսի զուարճութեան, որ ինքք բոլորովին չէ սիրում:

— Ուրեմն դու որսի գնալ չե՞ս սիրում:

— Գաղաններ սպանել չեմ սիրում, իսկ թռչուններ ուտել սիրում եմ, բայց գերադասում եմ նոցա աղատ ու հանգիստ թողնել:

— Սակայն դու երկար էիր որսում:

— Հինգ օր... Իսկապէս ես կօմէդիա էի խաղում: Իսկ ընկերներս, եթէ ուղենային էլ, չէին կարող որսալ:

— Ձէ՞ին կարող, — դարմացաւ Իլենկան:

— Հանդամանքները չէին նպաստում որսին:

— Չափազանց շատ էին խմում, — նկատեց Անկան, որ չէր հասկանում, թէ ինչու եղբայրը այդքան խնայում է իտալացիներին և անգլիացիներին: — Նոքա հարբած գնացին, հարբած էլ վերադարձան:

— Աղմկով վերադարձան, — նկատեց Պետրը:

— Մենք ինքներս լսեցինք հրացանաձողութիւնները, — նկատեց Իլենկան:

— Իսկ մենք ինչպէ՞ս վախեցանք... Ես կարծեցի, թէ մերոնք են եկել Կլադովայից:

— Ինչպէ՞ս կարելի էր մի այդպիսի ենթադրութիւն անել, — դարմացաւ Պետրը: — Կլադովան ո՛ւր, Ռուչչուկը ո՛ւր: Բացի դորանից՝ մի թէ հե՞շտ բան է ամբողջ մտնելը:

— Ես ի՛նչ բան ունիմ ամբողջ հետ: Վա-

խից քիչ էր մնացել, որ մեռնէի, երբ լսեցի առաջին պայթիւնը. իսկ երբ սկսեցին ձեռել մեր դուռը, կարծեցի թէ մերոնք են եկել:

— Մերոնք արդէն Կլադովայում չեն...

Օրիորդները հետաքրքրութեամբ նայեցին Պետրին, որ շարունակեց. — Նոքա գնացել են:

— Ինչո՞ւ են գնացել:

— Ինչպէ՞ս թէ ինչու... պատերազմելու...

Պատերազմը երբէք մի տեղ չի լինում:

— Տաճիկներն էլ են գնում, — հարցրեց Անկան:

— Նոքա էլ են գնում, — պատասխանեց Պետրը ժպտելով:

— Ուրեմն նոքա հեռանո՞ւմ են:

— Միշտ էլ չէ: Տաճիկները վատ չեն կրօնավում:

— Բայց մերոնցից լաւ չէ. ես կ'ուղենայի իմանալ, նոքա ե՞րբ կըգան այստեղ և ո՞ր դռնից կըմտնեն:

— Աւելի լաւ է դու հարցնէիր, թէ ի՞նչ ճանապարհով կարող են գալ:

— Ես գիտեմ. շոգենաւով Գանուբ գետով, կամ Ռուժանիայի երկաթուղիով:

— Գնանք իմ սենեակը, ես ցոյց կըտամ ձեզ քարտէղի վերայ ճանապարհը, — ասաց Պետրը կամենալով խօսակցութեանը լուրջ կերպարանք տալ: — Գնա՛նք, կրկնեց նա, գիմելով օրիորդներին. — կընայենք և կըխորհենք:



Անկան մի փոքր տատանվում էր, բայց վերջապէս վեր կացաւ, Իլենկան էլ նորան հետևեց։ Մի բոպէից նոքա կանգնած էին եւրոպական ճաճկաստանի քարտէզի առաջ։ Նախ և առաջ Պետրը ցոյց տուեց նոցա Ռուչչուկը, որ նա վերջին կէտն էր համարում, ի նկատի առնելով լեռները, գետերն ու սահմանները։ Յետոյ ցոյց տուեց Բալկաններին, Դանուբին, Սև ծովին և Սերբիական սահմանի մէջ տեղում դանուոյ Բուլղարիան։ Դորանից յետոյ նա պատմեց Ռումանիոյ մասին, թէ դա օտար երկիր է, որի սահմանները չէ կարող անցնել ո՛չ սերբիական, ո՛չ տաճկական, ո՛չ էլ բուլղարական զօրքը։ Նա որոշեց Սերբիայի և Ռումանիոյ մէջ դանուոյ տարածութիւնը և ցոյց տուեց այն խոչընդոտները, որոնց պիտի յաղթէ այս ուղղութեամբ գընալ կամեցող զօրքը։ Ակներև էր, որ նորա մեկնութիւնը արտուրթիւն պատճառեց օրիորդներին։

— Այդ ինչպէ՞ս, — հարցրեց Անկան. — ուրեմն չե՞ն գալ մեզ մօտ։

— Հազիւ թէ։

— Ապա ի՞նչ կարելի է սպասել։

— Ահալա սիկ տեսէք... — Պետրը ցոյց տուեց լեռնաշղթան, որ սկսում էր ծովեզրից և կորչում Սերբիայում։ — Ահա մեր բնական ամրոցը։ Եթէ մենք կարողանանք բռնել այդ տեղը և այդտեղ շարդել տաճիկներին մի քանի անգամ, այն ժամանակ կ'ապստամբեն և դրացի ազգերը.

կ'ապստամբեն նոքա, որոնք բնակվում են Թունջայի և Մարիցայի մօտ. կ'ապստամբենք և մենք, և եթէ միահամուռ գործելու լինենք, — կ'ազատենք մեր Բուլղարիան։ Ահա թէ՛ ինչ կարելի է սպասել։

Աղջկերքը մտախօհ նայում էին քարտէզին։

— Եթէ այդպէս է, ապա ինչ՞ու մերոնք լէգիոններ են կանգնեցրել, — հարցրեց Անկան։

— Որովհետև պատերազմական գործեր իմացող մարդիկ են մեզ անհրաժեշտ։ Տաճիկները մեզ չեն ընդունում իրենց զօրքի մէջ։

— Ա՞յ մեծ բան, ամեն մէկը կարող է կրճուել։

— Ո՛չ, ամեն մէկը չէ կարող, — պատասխանեց Պետրը. — մինչև անգամ ամեն մէկը չի կարողանում իւր բռունցքներին տիրել... Լսե՞լ ես անգլիական բօքսէրներին մասին։

Բանից դուրս եկաւ, որ Անկան չէր լսել դոցա մասին։ Պետրը առաւ մի մեծ պատկերազարդ գիրք և որոնեց այն տեղ բօքսէրներին, որոնք ներկայացրած էին զանազան դիրքով։

— Ահա տեսնում ես, այս բանն էլ պէտք է սովորել. պատերազմական գործերը ուսումնասիրելու համար զանազան մարզարաններ կան, որ մենք չենք ունեցել և չկան էլ։ Ահա մերոնք էլ սովորում են լէգիոններում։

— Իսկ դու եղե՞լ ես զինուորական ուսումնարանում, — հարցրեց Անկան...

— Այո՛, եղել եմ:

— Դորա համար էլ չես գնացել պատերազմ:  
— շարունակեց քոյրը:

Իլենկան այնպէս նայեց Պետրին, որ կարծես ուզում էր ասել. «այժմ հասկանում եմ»:

Պետրը ոչինչ չսպաստասխանեց Անկային, որ սկսել էր հարց ու փորձ անել եղբորը լէգիոնների վիճակի մասին, բայց նա քիչ բան կարողացաւ պատասխանել: Անկան նորա համար էր հետաքրքրվում լէգիոնների վիճակով, որ Ստեփանն այն տեղ էր: Այժմ նա յոյսը պիտի կտրէր Ռուչչուկում նորան շուտով տեսնելուց, այդ պատճառով էլ կամենում էր իմանալ նորա վիճակը:

Անկան սկզբում կարծում էր, թէ Ստեփանը իսկոյն կը յաղթի և կըզայ պսակուելու: Այժմ համոզուեցաւ, որ այդ բոլորը ցնորք է, որ իրականութիւնը այդպէս չէ. սակայն ինչ արած:

Իլենկան կանգնած քարտէզի առաջ ուշադրութեամբ զննում էր Բայկանները: Նա շատ հարցեր էր ուզում առաջարկել Պետրին, բայց Անկայի ներկայութիւնը արգելում էր նորան: Վերջապէս Անկան զնաց, նա էլ ստիպուեցաւ հեռանալ: Իլենկան որ հեռացաւ, իսկոյն Պետրըն էլ դուրս եկաւ և, օգուտ քաղելով այն հանդամանքից, որ մի քիչ յետ էր մնացել, շրջնւեց օրիորդին.

— Նիկոլան բարևում է քեզ:

Իլենկան նայեց նորան և ժպտեց:

XXIV.

1877 և 1878 թուականները նշանաւոր ժամանակ էին բուլղարների համար: Նոյնպէս արագ սկսեց բարախել այն մարդկանց կեանքի երակը, որոնք չէին իմանում, թէ ինչ ուղղութիւն բռնեն, ինչպէս և այն մարդկանցը, որոնք վերջին տասը տարին պարապած էին նորանով, ինչ որ պատուաւոր և պատկառելի մարդիկ խելագարութիւն էին համարում: Այդ գործունէութեան արդիւնքը եղաւ բուլղարական ապստամբութիւնը: Նա ծագեց պարզ ու որոշ նպատակով, բայց չափազանց չմտածած գործ էր: Չմտածած լինելը ապացուցեց, որ ժողովուրդը կենդանի է, մտածում է իւր մասին և թէ նորա մէջ երևան են եկել այնպիսի ցանկութիւններ, որ նա պատրաստ է շատ թանգ գնով գրնել. իւր ցանկութիւնները ժողովուրդը կամեցաւ զնել ունեցածով — արիւնովը:

Բուլղարական ապստամբութեան հետեանքների սարսափելի լուրը անցաւ համայն Եւրոպան:

Փաշայի նախադրուշութիւնը, որ Պետրը Բուքարեշտ տարաւ, դատարկ խօսք չէր: Բ. Դուռը վճռել էր արեան մէջ խեղդել հայրե-

նասիրական ձգտումները և այդ վճիռը նա իրագործեց: Այն տեղերը, ուր այդ ձգտումներն երևան էին դալիս՝ մարդկային սպանդանոց, աւերակ էին դարձել:

Սպանում էին ծերերին ու ջահելներին, կանանց և երեխայոց: Ամբողջ շէներ զիակների կոյտեր էին դարձել, որոնց կեղեքում էին գիշատիչ գազաններն ու թռչունները: Օսմանեան Բ. Դուան սկզբունքը պահանջում էր խստիւ պատժել անհնազանդներին — և նոքա օրինակելի կերպով պատժուեցան:

Թոյլ արձագանքի պէս Ռուչչուկում կրկնուեցաւ Բարկաններում պատահած անցքերի լուրը: Սկզբում ամեն ինչ հանդարտուեց, բայց յետոյ կանայք սկսեցին կամաց լաց լինել, իսկ տղամարդիկ տխրել և լռել: Երբ Պետրը իւր առանձնասենեակում կարգաց այդ անցքերի լուրը, մեռելի պէս գունատուեց: Նա հաղիւ կարողացաւ ուշքի գալ առաջին տպաւորութիւնից յետոյ. ներս մտաւ Մօկրան և կանգնեց նորա առաջ: Կարճ միջոց նա լուռ էր: Մօկրան նախում էր ուղիղ որդու աչքերին և վերջապէս ասաց.

— Դէ, ի՞նչ է... Անբախտութիւնն չէ:

Պետրը մի բան էր ուզում ասել նորան, բայց մայրը ընդհատեց:

— Ես մի և նոյնն էլ ասացի, երբ զոհուեց մեծ եղբայրդ, երբ սպանուեց և փոքրը: Այն

ժամանակ աւելի փոքր դժբաղդութիւնն էր, իսկ այժմ մեծ... Ի՞նչ արած:

— Մայրիկ, ես ճնշվում եմ, ես սիրտ չունիմ, — հառաչեց Պետրը. — Իմ խիղճը ինձ տանջում է... — Ինչո՞ւ ես Հին Զագօրում չեմ, այլ այս տեղ...:

— Մի՛ ասիլ այդ... քո հերթն էլ կըգայ:

— Կարծո՞ւմ ես:

— Կարելի՞ է ուրիշ կերպ կարծել... Զէ՞ որ կայ արդարադատ Աստուած... Ողբանք նոցա, որոնք կորան, բայց և անհրաժեշտ է կենդանի մնացածների մասին մտածել:

Պետրը կռացաւ դէպի մայրը: Մայրը գըրկեց նորա գլուխը և համբուրեց: Երբ Պետրը կրկին ուղիղ նստաւ աթոռի վերայ, նորա աչքերում արտասուք երևեց:

— Գուցէ աւելի ծանր ժամանակ գայ, — ասաց պառաւը. — Յիշի՛ր, որդիս, որ դու մեծնակ չես: Քո տեղ կայ մեծ եղբայրդ, կայ և փոքրիկը: Անգրագէտ պառաւը այս խօսքերով, թերևս ոչ լիովին գիտակցաբար, արտայայտեց այն արամաբանական օրէնքը, որի համաձայն կատարվում են քաղաքական անցքերը:

Սակայն ամենքն էլ այդպէս չէին մտածում: Մօկրան հաղիւ դուրս եկաւ որդու սենեակից, Իլենկան ներս վազեց: Այս անգամ աղջիկը ուղղակի մտաւ Պետրի սենեակը: Նա գունատ էր և շփոթուած: Պետրը վեր կացաւ: Օրիորդը

կանգնեց և դողդոջուն ձայնով արտասանեց.

— Ուղե՛րձ... —

1868 թ. այդ խօսքը մի տեսակ երկիւղ էր ձգում ազնիւ մարդկանց վերայ: Այն ժամանակ բնակիչները պիտի «յօժար կամքով» շնորհակալութեան ուղերձ տային հաջի Իմիարիի խումբը ոչնչացնելու համար: Իսկ ա՞յժմ ինչու համար պիտի շնորհակալ լինէին: Հարիւրաւոր անգէն մարդկանց կոտորելու համար:

— Ուղե՛րձ... — կրկնեց Իլենկան. — հայրս...

Հայրս գալիս է քեզ մօտ... նա այժմ կը գայ, — և այս ասելով աղջիկը գնաց Անկայի մօտ:

Ուղերձ գրելը նա մանաւանդ սուր կերպարանք էր ստանում այն պատճառով, որ առաջուայ լուսաւորուած, քաղաքավար նահանգապետին հրաւիրել էին նոր պաշտօնի համար. նորա տեղը բռնել էր մի կոպիտ բռնակալ: Առաջինը կ'ակնարկէր, թէ «անհրաժեշտ է մի կամաւոր ուղերձ», իսկ սա ուղղակի պահանջում էր և հրամայում: Որովհետեւ հաջի Խրիստօն՝ ուսումնարանները ոչնչացնելու մասին գրած ամենախոնարհ ուղերձի հեղինակը գրաւել էր ընդհանուրի ուշադրութիւնը, այդ պատճառով էլ փաշան նորա մօտ ուղարկեց իւր օգնականին, հրամայելով, որ «կամաւոր» ուղերձ գրեն և ստորագրութիւններ հաւաքեն: Հաջի Խրիստօն պատրաստ էր մի այդպիսի բան անելու: Նոր անցքերի մասին ստացած լուրերը այն-

քան էին անհանդստացնում նորան և վախեցնում, որ նա միակ փրկութիւնը տաճիկների առաջ ծունկ չորքէն և «յանցաւորների» հետ համերաշխութիւն ունենալուց լիովին հրաժարուելն. էր համարում այդ հիման վերայ նա ուղարկած հրամանի մէջ տեսնում էր միայն իշխանութեան ռանձին տրամադրութիւնը, և ուրախութեամբ յանձնառու եղաւ ուղերձ գրելու և ստորագրութիւններ հաւաքելու:

— Լաւ, էֆէնդըմ, — պատասխանեց նա օգնականին. — խորհրդի առաջին և եթ նիստին ես կ'առաջարկեմ:

— Չէ՛, — պատասխանեց օգնականը. — նիստին ներկայ են լինում տաճիկներ և երբայեցիք, որոնք չեն ապստամբում. նոքա փաղիչահին հաւատարիմ են: Միայն դուք, բուլղարներդ էք ապստամբում, դուք էլ ձեր մէջ կազմեցէք ուղերձը: Դու առաւօտեան գրիր, իսկ կէսօրին կը գայ քեզ մօտ զափթիւնների իւզբաչին և կ'օգնէ կամաւոր ստորագրութիւններ հաւաքելու:

Ահա թէ ինչ էր հաջի Խրիստօյի այցելութեան նպատակը, որի մասին ասաց Իլենկան:

Պետտը ընդունեց իւր հիւրին ընդունարանում: Չսպասելով մինչև անգամ սուրճի, հաջի Խրիստօն դիմեց գործին և պատմելով էութիւնը, աւելացրեց. — գրի՛ր:

— Չէ՛, — պատասխանեց Պետտը. — ես այդ չեմ անիլ:

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ ես ինքս էլ մասնակցել եմ բաղկանեան դէպքերին:

Հաջի Խրիստոն զարմացաւ, սչքերը չուեց և մըթմըթաց. — Իսկ ես ուզում էի... տալ քեզ Իլենկային և իմ բոլոր կարողութիւնը:

— Շնորհակալ եմ քո ցանկութիւնների համար, բայց...

— Բայց եթէ, — ընդհատեց հաջին, — ուղերձը դրես և ինքդ էլ ստորագրես, դորանով դու ազատ կըլինիս ամեն տեսակ վտանգից: Ամեն բան լաւ կըլիերջանայ, և ես էլ աղջիկս քեզ կըտամ, միայն խնամէխօսներ ուղարկիր... Ես ու կինս արդէն այդպէս էլ վճռել ենք... Հ՞ը... Ի՞նչ կ'ասես:

— Ոչ կըզրեմ, ոչ էլ կըստորագրեմ:

— Գիտե՞ս, թէ որքան փող կըտամ:

— Չէ, չգիտեմ:

— Քսան հազար մէջիդիէ, — ընդհատեց հաջի Խրիստոն:

— Դա չի կարող փոխել իմ վճիռը:

— Ի՞նչ է, աւելի՞ ես ուզում:

— Ոչ մի գումարով ես չեմ գրիլ մի այդպիսի ուղերձ և չեմ էլ ստորագրիլ:

— Առանց քեզ էլ կըզրեն, — պատասխանեց հաջի Խրիստոն: — Բայց ի՞նչ կ'անես, երբ ես ու իւզբաշին գանք քեզ մօտ, որ ստորագրես: Չէ՞ որ ինքդ քեզ կըմնասես, եթէ չստորագրես:

— Դարձեալ չեմ ստորագրիլ:

— Դա քո վերջի՞ն խօսքն է:

— Այո՛, վերջինն է:

— Հա՛, — ասաց հաջի Խրիստոն, տեղից վեր կենալով: — Գոնէ չես ասիլ, որ բարիդ չեմ կամեցել:

Այս խօսակցութիւնը հաջին պատմեց իւր կնոջն ու Իլենկային և դառնալով սորան, աւելացրեց.

— Յիմա՞ր չէ նա, որ ոչ քեզ է ուզում, ոչ էլ փարա:

— Այլ ևս մի՛ դնալ Մօկրայի մօտ, որովհետեւ այդ տան գլխին արդէն որոտ է հաւաքուել:

Կէս ժամից յետոյ աղջիկը արդէն Մօկրայի խանութին կից սենեակումն էր, կամացուկ յայտնեց նորան Պետրին սպառնացող վտանգը և շարունակեց, որ հարկաւոր դէպքում կարող է նոսրան թագցնել: Մօկրան ուշադրութեամբ լսեց նորան և յետոյ հարցրեց. — Ի՞նչ տեղ կարող ես թագցնել նորան:

— Մեր ծածուկ սենեակում: Մեզ չեն խուզարկիլ և ես ինքս կըտանեմ նորան:

— Գուցէ առանց դորան էլ բանը անցնի, — պատասխանեց Մօկրան:

Եւ արդարեւ, մի առ ժամանակ, քանի որ Ռուսաստանը պատերազմ չէր յայտնել Տաճկաստանին, աւելորդ էր այդպիսի միջոցների դիմելը: Հէնց որ պատերազմ յայտնուեցաւ, իսկոյն և եթ սկսեցին ձերբակալել փոքր ի շատէ կասկածելիներին, իսկ նախ և առաջ կասկածելիներին, իսկ նախ և առաջ կասկածելի էին համարվում նորա, որոնք հրաժարվում էին «կամաւոր» ուղերձ ստորագրելուց:

Առաջին անգամ մի քանի մարդ ձերբակալեցին, իսկ յետոյ ոչ ոքի: Կասկածելի մարդիկ խոյս էին տալիս ոստիկանութիւնից և կորչում էին, Աստուած գիտէ թէ ուր: Դեռ նոր երևում էր... իսկ այժմ չկայ:

Պետտրին չէր կարելի ձերբակալել միայն նորա համար, որ նա հրաժարվում էր «կամաւոր ուղերձը» ստորագրելուց, որովհետև նա կապեր ունէր զանազան հիւպատոսարանների հետ. այդ պատճառով Արխատարխի-բէյը խստիւ հրամայեց, որ հսկեն Պետտրին, ինքն էլ հսկում էր և ականջ դնում խօսակցութիւններին. բայց ոչինչ չկարողացաւ բաց անել: Մօկրայի ստացած տեղեկութիւնները ոստիկանատան մի քանի անձնաւորութիւնից նոյն ոստիկանութեան գործերը անհետեանք էին թողնում: Արխատարխի-բէյը կասկածում էր, թէ Պետտրն է թագցնում այն մարդկանց, որոնց ոստիկանութիւնը որոնում է. բայց ոչ մի ապացոյց չկարողացաւ գրանել: Թէ և քաղաքի դրուների մօտ և Դանուբի

ափին սաստիկ հսկողութիւն կար, այնու ամենայնիւ, կարծես թէ կասկածելիները գետին էին մտնում. իսկ յետոյ դուրս եկաւ, որ բուլղարական այն վաշտերում են, որոնք կազմակերպուած էին ռուսաց զօրքի հովանաւորութեան ներքոյ: Նորա արդարեւ գետնի տակ էին կորչում: Հաւանական է, որ երբէք Մօկրայի ստորերկրեայ անցքիցն այնքան մարդ չէր անց կացել, ինչպէս ոստիկանութեան այդ ձերբակալութիւնների ժամանակ: Այդ տեղից ոչ միայն մարդիկ էին անց կենում, այլ և պաշտպանուելու համար զանազան տեսակ բաներ: Տաճիկները չէին կարողանում հասկանալ, թէ ինչպէ՞ս կարող են լինել այդպիսի չարագործութիւններ: Թէ՛ քաղաքական և թէ՛ զինուորական իշխանութիւնները հաւատացած էին, որ այդ բոլորը մի ճարպիկ և հմուտ մարդ է կառավարում. «հաւանական է, որ Պետտրը լինի»: Սակայն միւս կողմից Պետտրը այժմ երբէք չէր լինում ոստիկանատանը. նա ոչ մի պաշտօն չունէր. երբեմն միայն տեսնում էին նորան սրճարանում զանազան հիւպատոսարանների պաշտօնեաների հետ:

Քանի որ ռումանիական ափի կողմից չէին փորձել ուժակոծել Ռուչչուկը, ջրհորը իւր ստորերկրեայ անցքով մեծ դեր էր կատարում: Այդ փորձը ոչ մի հետեանք չունեցաւ, միայն դրդեց տաճկական ինժեներներին գործել, որոնք յիշեցին, թէ բացի նաւահանգիստ մտնել արգելող

տօրպէղներէից աւելորդ չէր լինիլ կառուցանել Դանուբի ափին մի քանի բատարէա: Հրաման դուրս եկաւ, որ ափը զննեն: Երբ Մօկրան այդ հրամանը յայտնեց Պետարին, սա յօնքերը կիտեց և ասաց.

— Բանը վատ է,

— Ի՞նչ է որ:

— Եթէ ինժեներները կոյր չեն, բատարէան մեր պարտիզում կը շինեն:

— Չեն շինիլ, — պատասխանեց Մօկրան:

— Կըտեսնենք. մասամբ դա կախուած կըլինի նորանից, թէ շտաբը որպիսի ամրութիւն կ'ուզենայ կառուցանել:

Այդ խօսակցութիւնից յետոյ հետեւեալ օրը Մօկրայի բակով անցան վեց սպայ մի քանի ստորագրեալների ուղեկցութեամբ, որոնք ձողեր, արկղներ և արկղիկներ էին տանում: Նոքա զընացին պարտէզ: Պետարը նստած իւր սենեակում պատուհանից դիտում էր, թէ ինչպէս էին չափում և ապա ինչպէս սկսեցին խորհրդակցել: Երկար խորհրդակցեցին և վերջապէս վճռեցին: Սպաներից մէկը մի կողմ քաշուեց, կանգնեց, ոտը դուրս ցցեց, կանչեց զինուորին և հրամայեց մի ցից անկել այն տեղ, ուր նորա ոտն էր դըրած:

— Բանը վատ է, — ասաց Պետարը ինքն իրեն: Յետոյ այդ իսկ սպան հրամայեց զինուորներին ցցեր անկել իւր նշանակած տեղերում և շուտով

պատրաստ էր այն ամրութեան նախագիծը, որ նոքա ուզում էին կանգնեցնել այդ տեղ:

Պետարը ծանր կերպով հառաչեց: Նորա դէմքը անհանգստութիւն էր արտայայտում. նա սկսեց անց ու դարձ անել սենեակում:

— Բանը վատ է, — ասաց նա մօրը մի և նոյն երեկոյ: — Այդ բանի համար շատ հող է հարկաւոր և զինուորները կը բանան մեր ստորերկրեայ անյըր:

— Մենք կ'ասենք, որ բան չէ ինք իմանում դորա մասին: Իսկ եթէ հետքեր լինին, կարելի է ծածկել:

— Այժմ արդէն ուշ է: Ծինութիւնը սկսուել է, և պահապաններ են կանգնեցրած:

Մօկրան շփոթուեց, բայց իսկոյն ուշքի եկաւ և ասաց.

— Ի՞նչ կ'անեն ինձ... Ոչինչ չեմ տեսել... Ոչինչ չեմ լսել, էֆէնդըմ, — ինքն իրեն ներկայացնում էր իւր պատասխանները ըննիչ յանձնաժողովի առաջ: — Բայց դու պէտք է թաք կենաս:

Պետարը ժպտեց, և նորա ժպիտում տարակուսանք էր երևում:

Այո՛, դու պիտի թաք կենաս... զխե՞ս ուր: Հաջի Խրիստօյի տանը:

— Ի՞նչ, — բացականչեց Պետարը. — հաջի Խըրիստօյի տանը:

— Իյենկան քեզ կըտանէ:

Նա պատմեց Պետրին, թէ ինչպէս կ'անեն: Պետրը լուռ լսեց բոլորը: Մօկրան ո՛չ միայն պատմում էր, այլ և աշխատում էր համոզել որդուն, թէ միտք ու նպատակ չկայ դուր տեղը կեանքը վտանգի ենթարկել, քանի որ կարելի է ազատուել առանց մէկին փնասելու:

Հետեւեալ օրը Պետրը բոլորովին դուրս չեկաւ իւր սենեակից և շարունակ դիտում էր, թէ ինչպէս էին բան անում: Երեկոյեան դէմ նա մի առաձին բան նկատեց. յօնքերը կիտեց, վեր կացաւ, առաւ վերարկուն, ասաց Անկային, որ իրեն չսպասեն, համբուրեց նորա ճակատը, դուրս եկաւ և չվերադարձաւ:

Նա ներկայ չէր այն խուզարկութեան, որ սկսեցին Մօկրայի տանը այդ իսկ գիշեր և վերջացրին միւս օրը մօտաւորապէս կէսօրին: Այս անգամ տաճիկները սարսափելի բան արին. յատակն բարձրացրին, պատերը քանդեցին և կալանաւորեցին Պետրի բոլոր գրքերն ու ձեռագիրները: Անկային հարեաները թագցրին, իսկ պառաւին բանտ դրին: Զինուորական դատաստանը քննեց նորան, բայց և այնպէս ոչինչ չկարողացան իմանալ նորանից: Դատաստանը վճռեց Պետրին գնդակահար անել և արքունիք դրաւել նորա կայքը:

Վերջինը կարելի էր իրագործել, և անյապաղ իրագործեցին: Իսկ առաջին կէտը անորոշ ժամանակ յետաձգուեցաւ: Միայն թմբկահարե-

լով յայտնեցին, թէ ով Պետրին կենդանի կամ մեռած բերէ, 25000 շրուշ կստանայ:

Արքունիք գրաւեցին նորա տունը, խանութը և փողը, այնպէս որ Մօկրան հաղիւ հաղ կարողացաւ մի քանի բան պրծացնել, որ և միջոց տուեց պառաւին Անկայի հետ մի փոքրիկ բնակարան վարձելու: Պետրի գլխի համար ոչ ոք չկարողացաւ վարձատրութիւն ստանալ, որովհետեւ բացի Մօկրայից ու Իլենկայից, ոչ ոք չգիտէր, թէ ինչ տեղ է նա:

Մօկրայի պարտիզում յայտնուած ստորերկրեայ անցքը քանդեցին: Հին կամարները դիմամիտով քարուքանդ արին:

Անկան շատ լաց եղաւ: Նա ափսոսում էր հարստութիւնը, դժուարանում էր անջատուել յարմարութիւններից, ափսոսում էր իւր աւերուած յոյսերը. մայրը աշխատում էր մխիթարել նորան, և ամենալաւ մխիթարութիւնն այս էր համարում.

— Տեսնենք... թէ ինչպէս կը վերջանայ այս բոլորը:

— Ես սպասում եմ վերջանալուն, որ կուսանոց գնամ:

Այնու ամենայնիւ բացի սպասելուց նոքա ուրիշ նոր բան չունէին: Ի՞նչ կարող էին անել երկու կին պաշարած ամբողջութեան մէջ:

Նոքա սպասեցին և արժանացան այնպիսի



ուրախութեան, այնպիսի երջանկութեան, որպիսին Մօկրան սպասում էր ծոռների համար: Ուրախութեան չըջանը երկիրդով սկսեց: Անսպասելի կերպով նոցա բնակարանը մտաւ Պեօարը: Մայր ու աղջիկ տեսնելով նորան գունատուեցան:

— Ի՞նչ է արածդ, — բացականչեց Մօկրան:

— Ի՞նչ է որ, — հարցրեց Պեօարը:

— Բո գլուխը 25000 զրուշ են դնահատել:

— Իմ գլուխը այժմ բան չարժէ:

— Ի՞նչ է: Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ մենք... այժմ...

Հետեւեալ խօսքը նա չկարողացաւ արտասանել. բերկրութեան զգացմունքը սեղմում էր նորա կոկորդը. նա ծիծաղել էր ուզում: Նա ուզում էր զսպել իւր բերկրութիւնը, բայց չէր կարողանում և միայն կրկնում էր.

— Մենք այժմ... մենք այժմ... — վերջապէս դուրս պրծաւ — «ազատ ենք», — և նա լաց եղաւ: Վերջապէս մի փոքր հանգստացան: Պեօարը պատմեց մօրն ու քրոջը, որ խաղաղութիւնը կայացած է արդէն, Բուլղարիան ազատ է, որ տաճկական զօրքերը դուրս են գալիս Ռուշչուկից և նոցա տեղ ուռս զօրքեր կը գան:

Մօկրան ձեռքերը տարածեց և բացականչեց.

— Աստուած իմ... Աստուած... որդիքս...

Յետոյ Պեօարը սկսեց պատմել, թէ ինչպէս անց կացրեց ժամանակը հաջի Խրիստօյի տանը:

— Ի՞նչպէս էր հաջի Խրիստօյի տանը, — հարցրեց Անկան:

— Չէր էլ ենթադրում:

— Էդ աղջիկն էր քեզ այդպէս թագցրել... Իսկ երբ դուրս եկար, ի՞նչ ասաց քեզ հաջի Խրիստօն:

— Նա ինձ չտեսաւ... Ես չէի ուզում երեւել նորան նախ Իլենկայի համար, իսկ ապա՝ որովհետեւ նա այժմ զբաղուած է ուռսաց թագաւորին ուղերձ գրելով: Նա և Արիստարխիւբէյն էին պարապած այդ գործով, և այնպէս սկսեցին վիճել իրար հետ, որ չնկատեցին էլ, թէ ինչպէս ես անցայ մուսաֆիրը ի կողքի սենեակը, որի դուռը բաց էր:

— Տե՛ս, թէ մեր բաներից ինչ է մնացել, — ասաց Մօկրան և աչքով ու մատով ցոյց տուեց սենեակը:

— Գիտեմ, գիտեմ... Ի՞նչ արած... Կ'աշխատենք և մի կերպ կ'ապրենք:

— Այժմ հօ մեզ պիտի վերադարձնեն այն բսլօրը, ինչ որ տաճիկները խլեցին, — նկատեց Անկան:

— Ի՞նչ կարող են մեզ վերադարձնել... Աւերակ դարձրած տօ՛ւնն ու գետինը... իսկ մնացածը... կորաւ:

— Ա՛խ, թշուառ եմ ես, — ախ ու վախ էր անում աղջիկը. — այժմ ինձ մնում է միայն կուսաստան գնալ:

—Շուտով մեր զօրքը կը գայ,—ասաց Պետրը իբր պատասխան բրոջը:

—Ե՞րբ:

—Զգիտեմ:

Անկան մտածմունքի մէջ խորասուզուեց և իւր բոլոր ուշադրութիւնը կենտրոնացրեց ձեռին բռնած հիւսուածքի վերայ, իսկ Պետրը խօսակցութիւն սկսեց մօր հետ գործերի առթիւ: Նոցա այնպէս էր թւում, թէ պատերազմից յետոյ գործերը լաւ պիտի գնան: Մօկրան հետը մի քիչ փող էր տարել, Պետրն էլ քիչ ու միչ առել էր: Վճռեցին այդ փողով մի խանութ վարձել աւելի բանուկ փողոցներից մէկում և մանր բաներով ծախս անել:

—Ես ամսոսում եմ մեր խանութը,—հառաչեց Մօկրան:

—Իսկ ես ամսոսում եմ գրքերս:

—Բայց Բուրդարիան ազատ է:

—Իրաւացի ես,—պատասխանեց Պետրը.— դա ամենից կարևորն է:

—Իսկ մեր զօրքը,—հարցրեց Անկան,— նոյնն է, ինչ որ կը լաւ տրայումն էր:

—Զգիտեմ... գուցէ... երևի, նոցանից մէկը մնացած կը լինի:

Անկան կրկին մտածմունքի մէջ ընկաւ և այլ ևս ուշադրութիւն չդարձրեց մօր ու եղբոր խօսակցութեան վերայ:

Պետրը քաղաք գնաց, որ մի խանութ վար-

ձէ իրենց գումարի համեմատ: Վերջապէս մի քանի օրից յետոյ նա մի տեղ գտաւ, ապրանք գնեց և սկսեց առուտուր անել: Քանի որ նա զբաղուած էր իրեն գործը կարգի բերելով, կառավարութեան շրջաններում զանազան փոփոխութիւններ եղան: Տաճկական զօրքերին ու իշխանութեան փոխարինեցին ոռւս զօրքերն ու իշխանութիւնը, մինչև որ տեղական վարչութիւնը կրկազմակերպուի: Ժողովրդական կառավարութեան մասին զանազան լուրեր էին պլատում, բայց դոցանից մէկը աւելի սաստիկ էր կրկնվում. նա վերաբերում էր զօրքին: Ամեն օր մեծ անհամբերութեամբ էին սպասում նորան,—միայն չէին իմանում, թէ որ ճանապարհով պիտի գայ: Վերջապէս նոքա հասան իրենց ցանկացածին: Բնակիչները վճռեցին հանդիսաւոր կերպով ընդունել նոցա: Ժողովուրդը ելաւ առաջը և ցնծութեան ձայներով ողջունեց հետևակ զօրքին, որի առջևից գնում էր ոռւսաց պատերազմական երաժշտութիւնը: Բերկրալից աղաղակները խլացնում էին երաժշտութիւնը: Զօրքը կանոնաւոր կերպով խումբ-խումբ առաջ էր գնում. նոցա առջևից տանում էին արձակած դրօշակը, որի յետքից գնում էր մի սպայ՝ աջ ուսին դրած մերկացրած սուրը: Ամբօխը շրջապատեց հինգ դարուց յետոյ յարութիւն առնող այդ զօրքին, որ ազգի ազատութիւնն էր վկայում և ուղեկցեց

նորան դէպի քաղաքի հրապարակը: Չէ կարելի նկարագրել ընդհանուր ուրախութիւնը, որ աւելի սաստկացաւ երկարատե սպասելուց:

Հրապարակում հաւաքուած էր քաղաքային խորհուրդը ամբողջապէս. նորա մօտ խմբուած էին կանայք: Քաղաքային խորհրդի անդամների առաջ կանգնած էր հաջի Խրիստօն. կանանց մէջ էին նորա կիներ, Իլենկան, Մօկրան և Անկան: Պետօրը նոյնպէս ամբոխի մէջ էր, բայց նա առաջ չէր ընկնում: Բոլորովին առանձին էր կանգնած պլաց-կոմէնդանտը շտաբի հետ: Երբ վաշտը մօտեցաւ հրապարակի կենտրոնին, նորա հրամանատար սպան թուրը վեր բարձրացրեց և հրամայեց. «կանգնե՛լ»:

Ամբոխի մէջ լսուեց մէկի բացականչութիւնը. «Ստօեան»: Հաջի Խրիստիցան և Իլենկան կրկնեցին նոյնը, կրկնեց նոյնպէս և հաջի Խրիստօն. կրկնեց մի առանձին բերկրութեամբ Անկան, աշխատելով տեսնել Ստօեանին:

Ստօեանը պատիւ տուեց պլաց-կոմէնդանտին, ներկայացրեց ռապօրտ, իսկ ապա հրամայեց, որ ցրուեն: Հէնց որ սկսեցին ցրուել, բնակիչները սկսեցին իրենց մօտ հրաւիրել զինուորներին:

Հաջի Խրիստօն վաղեց Ստօեանի մօտ և բացականչեց.

— Դու իմն ես... Ես քեզ ոչ ոքի չեմ առլ...

Դու ինձ մօտ պիտի դաս:

— Մօկրա... — սկսել էր Ստօեանը:

— Ի՛նչ Մօկրա... Այժմ նա քեզ հիւրասիրել էլ չէ կարող... Ես քեզ չեմ թողնիլ:

Ճար չկար: Ստօեանը ընդունեց հաջի Խրիստօյի հրաւերը: Նա գնաց հաջի Խրիստիցայի և Իլենկայի հետ և հարցրեց Մօկրայի մասին:

— Ամեն բան կորցրեց, — պատասխանեց հաջին: — Ինքն է մեղաւոր: Տաճիկները նորա պարտիզում մի ինչ որ ստորերկրեայ անցք գտան, մի քանի յիմար բաներ... խլեցին կայքը, իսկ Պետօրին վճռեցին դնտակահարել:

Ուրեմն նորան սպանեցին. — բացականչեց Ստօեանը:

— Չէ... թաք կացաւ... ճշմարիտն ասած, չգիտեմ, թէ ինչպէս: Նորա զլուխը 25000 դրուշ էին դնահատել: Զարմանալի է, որ ոչ ոք չյափշտակուեց... Այնու ամենայնիւ նա թաք կացաւ և այժմ խանութ ունի, որ ապրանքով միասին հինգ հարիւր դրուշ էլ չարժէ:

Միւս բնակիչներն ուրիշ զինուորներ էին տանում իրենց մօտ:

Նոցանից մէկը միայն, այն է դրօշակակիրը, ոչ մի հրաւեր չէր ընդունում և անդադար հարցնում էր Մօկրայի ու Պետօրի մասին:

— Մօկրա՛, Մօկրա՛, — սկսեց կանչել ամբոխի մէջ:

Մօկրան գուրս եկաւ առաջ:

— Ահա Մօկրան, — ցոյց տուեց մի մարդ:

Դրօշակակիրը ողջունեց Մօկրային և ասաց.  
— Ես նամակ ունիմ Պետրին յանձնելու... Ես  
պիտի յանձնեմ նորան նամակը և խօսեմ հետը:

— Լաւ է դու առաջ գնա մէկի մօտ, որ  
կարող է աւելի լաւ հիւրասիրել քեզ, իսկ յետոյ  
արի խանութ, Պետրը այն տեղ կըլինի, կըխօ-  
սես հետը և կը տաս նամակը:

Դրօշակակիրը սաստիկ զարմացած նայեց  
Մօկրային և ասաց.

— Նիկօլան պատմում էր, թէ դու հար-  
ուստ ես, թէ դու տուն, փող և խանութ ու-  
նիս:

— Այդ բոլորը կար, իսկ այժմ — ոչ:

— Ուրեմն առ նամակը, իսկ յետոյ կըգամ  
խօսելու:

Այս ասելով նա ծոցից մի կեղտոտած ծը-  
րար հանեց և տուեց Մօկրային:

Կարճ միջոցից այդ նամակը Պետրի ձեռին  
էր, որ բացեց, կարդաց և տխրեց:

— Նիկօլայից է, — ասաց նա, — Գաբրովից...  
հիւանդանոցից գրած: Նամակը երեք ամիս ա-  
ռաջ է գրած... Երևի, խեղճ Նիկօլան մեռել է:  
Մօկրան ու Անկան ախ քաջեցին... — Ի՞նչ է  
գրում, — հարցրեց մայրը:

— Նա յանձնարարում է ինձ այն, ինչ որ ես  
չեմ կարող իրագործել: Հրամայում է ասել  
Իլենկային, որ նա մարդու չգնայ Ստօեանին,

թէ չէ Նիկօլան դագաղումն էլ հանդատութիւն  
չի ունենալ:

— Ինչո՞ւ չես կարող կատարել այդ յանձ-  
նարարութիւնը, — հարցրեց Անկան, կարծես, ան-  
հանդատանում լինէր:

— Որովհետև դա անհեթեթ բան է, պա-  
տասխանեց Պետրը:

— Չմտածես էլ դորա մասին, — բացական-  
չեց մայրը. — այդ քո գործը չէ... Ստօեանը ար-  
ժանացել է Իլենկայի պէս պարգևի, թո՛ղ պը-  
սակուեն, եթէ միայն իրենք ուզում են և ծնող-  
ները թոյլ են տալիս:

— Ա՛խ, թոյլ կըտան, թոյլ կըտան, — հառա-  
չեց Անկան:

Մօկրան ու Պետրը տարակուսանքով նա-  
յեցին միմեանց վերայ, իսկ յետոյ Մօկրան ա-  
սաց. «սպասի՛ր, դեռ մի փոքր սպասի՛ր»:

Եկաւ դրօշակակիրը և պատմեց մանրամաս-  
նութիւնները Նիկօլայի մասին: Նիկօլան անց է  
կենում Բալիանները, այնտեղ մասնակցում է  
ապստամբութեան և տաճիկներից թաք կենալու  
համար այնքան թափառում է դէս ու դէն,  
մինչև որ մտնում է բուլղարական վաշտը. որ-  
պէս կամաւոր շինուոր, որ կազմակերպուել էր  
ռուսաց զօրքին կից: Նա շատ լաւ շինուոր է լինում:  
Մի քանի անգամ վերք ստացած լինելով Շիպ-  
կայի մօտ, նա պառկում է հիւանդանոցում: Այն  
տեղ նա պառկած է եղել դրօշակակրի կողքին,

որ նոյնպէս վերք էր ստացել Շիպկայի մօտ: Նիկօլան նամակը գրել էր մահից երկու օր առաջ:

— Նա աչքիս առաջ մեռաւ, — ասաց պատմողը և մահից առաջ սաստիկ խնդրեց, որ նամակը յանձնեմ Պետարին:

— Պատահօ՞ւմ էին նա ու Ստեանը, — հարցրեց Պետարը:

— Մենք ամենքս մի խմբի մէջ էինք:

Հէնց որ դրօշակակիրը վերջացրեց իւր պատմութիւնը, շեմքում երևեց և Ստեանը: Տեսնելով նորան Անկան՝ գունատուեց:

Պետարն ու Մօկրան բերկրութեամբ ընդունեցին Ստեանին, իսկ նա սոցա բարևելուց յետոյ մօտեցաւ Անկային և բարձր ձայնով հարցրեց. «Ի՞նչ սպասօւմ էիր»:

Անկան ուշաթափ ընկաւ...

Լոյսը բացուեցաւ: Բուլղարիայի համար եկաւ պայծառ օրը...

*Handwritten note in Armenian: Գրքի մասին:*



Վ Ե Ր Զ





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

« Ազգային գրադարան



NL0329429

16004

891.85

6-24